Յուրաքանչյուր ազգային լեզվի բառապաշարում կարելի է մատնանշել շերտեր, որոնք լեզվի մեջ մուտք են գործել տարբեր ժամանակահատվածներում՝ վաղնջական ժամանակնե-րից մինչև նոր և նորագույն ժամանակները։ Նման շերտերը, որոնք կազմում են տվյալ լեզվի բաղադրիչ տարրերը և, միաժամանակ, առանձնահատկությունը, յուրաքանչյուր դարա-շրջանում, կախված քաղաքակրթական ընդհանուր մակարդակից և տվյալ դարաշրջանին հատուկ գաղափարագեղագիտական գերիշխող նկրտումներից, սկսում են հանդես գալ տարբեր՝ նորիմաստ դրսևորումներով։

Լեզուն որպես կազմավորիչ-ձևավորիչ նշանակություն ունեցող իրակություն, առկա-յացել է տվյալ էթնոսի առաջացման ամենանախնական փուլերում և այդ առումով ընկղմված է առասպելաբանական ժամանակների մեջ, երբ ստեղծվում էին առասպելները (միֆերը)՝ որպես պատմություններ աստվածների մասին։ Ուստի, բայրոնյան միֆոլոգեմա-յին լեզվաշերտերն առավել համակողմանիորեն ներկայացնելու և բնութագրելու նպատա-կով դիտարկենք վերոնշյալ գործերը՝ լեզվառձական ու լեզվաբանաստեղծական մանրա-մասն վերլուծությամբ։

Նախ «Մանֆրեդ» դրամայի¹ և դրա հայերեն թարգմանության մասին։ «Մանֆրեդ» դրամատիկական պոեմը Ջ. Բայրոնը մտահղացել է որպես «արգելյալ» կամ «անիծյալ» մտա-ծումների ազատականացում կամ արտահայտություն։ Այն կարծես նոր՝ բայրոնյան դարա-շրջանի «արգելյալ» պտուղն է, որն անպայման ուզում է ճաշակել ռոմանտիկ բանաստեղծը՝ տոգորված անհատի, «ես»-ի ազատագրման և նոր «մտավոր տարածքների» հայտնաբերման անկասելի կրքով։ Դա, փաստորեն, կլասիցիստական ու լուսավորչական քարացածության

դեմ ուղղված գործ էր, գորշ միջավայրի և կրոնական ու սոցիալ-քառայական գաղափարայնությամբ դիմակավորված հասարակարգի քննադատություն: «Մանֆրեդ», ինչպես «Գայենն» ու Բայրոնի մյուս գործերը, ռոմանտիզմի ուղղության արտահայտությունն էին, որոնք հաստատում էին մարդ-անհատի ազատությունը և ողբերգությունը՝ ի գին ազատության:

Բայրոնի լեզվի առանձնահատկությունները առաջին հերթին պայմանավորված են մարդ էակի հոգեկան սկզբով: «Հոգեկանի նախասկիզբը»- նշում է Հ. Էդոյանը,- ներկա է ռոմանտիզմի բոլոր դրսևորումներում, իսկ լիրիկան դրված է բոլոր ժանրերի հիմքում: Տեղի է ունենում էպիկական ժանրերի լիրիկականացում, XVIII դարի «չոր արձակի» պոետականացում, այսպես ասած՝ մարմնի հոգեկանացում..., իրադարձությունները ծավալվում են հոգեկան նկարագրի կողմ իրականության մեջ, կոմպոզիցիան ներքուստ կազմակերպում է միֆի սկզբունքներով, երբ բառի իմաստաբանական սլաքը արտաքին ձևից (բառիմաստից) թերվում է ներքինը: Լեզուն վերակառուցվում է լիրիկական հիմքի վրա, դառնում մարդու հոգեկառուցվածքի համարժեք լեզվակառուցվածք...» [4, 138-139]:

Ասվածը՝ ռոմանտիկականի կապը առասպելականի հետ, լեզվի փոխաբերական մակարդակը, բառիմաստի ներքին-հոգեբանական կամ սուբյեկտիվ բովանդակության ձեռքբերումը, լեզվի վերակառուցումը հոգեկան-ապրումնային-քնարական հենքի վրա, այս ամենը մեծապես բնորոշ են «Մանֆրեդ» դրամայի լեզվին, որտեղ կարելի է առանձնացնել և դիտարկել այնպիսի լեզվառձական շերտեր ու միջոցներ, ինչպիսիք են արքեստիպի նշանակություն ունեցող դիցույթները, այլուզիաները, փոխաբերությունը, փոխանունությունը, մակդիրը, զանազան դարձույթները (չափազանցություն, նվազույթ, շրջասույթ, դիմառնություն կամ անձնավորում, ճարտասանական բացականչություն, ճարտասանական հարց և այլն): Իհարկե, նշյալ լեզվաշերտերի քննությունն ինքնանպատակ չէ, այլ միտված է դիտարկելու բայրոնյան լեզուն և՛ որպես ինտերտեքստ, և՛ տեքստ, միաժամանակ՝ գուգադրական համեմատության մեջ դնելով հայերեն թարգմանությունը բնագրի հետ: Այս ամբողջ ուսումնասիրությունը կատարվում է լեզվաբանաստեղծական վերլուծության մեթոդով², որով բացահայտվում է այն հատկանշական կապը, որն առկա է գեղարվեստական տեքստի լեզվառձական միավորների և գեղարվեստական ստեղծագործության պոետիկայի, ավելի ստույգ՝ արտահայտության լեզվական կերպի և ստեղծագործական ոգու միջև: Հնդհանրապես, լեզվաբանաստեղծությունը ("linguopoetics") եզրույթով վերաբերում է բանասիրական հետազոտության այն բնագավառին, որի նպատակն է բնութագրել տվյալ գրողի լեզուն և լեզվաարտահայտչական միջոցները որպես գաղափարագեղագիտական որոշակի միտումների և դարաշրջանի ոգու արտահայտություն: Այլ կերպ ասած՝ լեզվառձական այնպիսի արտահայտություն կամ մարմնավորում, որի մեջ ազգային լեզուն (օրինակ՝ անգլերենը կամ հայերենը) ի հայտ է գալիս յուրահատուկ երանգավորմամբ, բառերի, բառակապակցությունների իմաստային ու հնչեղանգային նոր, թարմ կիրառումներով: Յու. Լոտմանի դիտարկումը, թե յուրաքանչյուր գեղարվեստական երկ հնարավոր է հետազոտել երկու առումով՝ որպես գրողի անհատականությունը արտացոլող լեզվառձական յուրօրինակ կառույց և որպես ընդհանուր մշակույթի բաղադրիչ [17, 20], վերաբերում է ոչ միայն տվյալ երկի գեղարվեստական կողմին, այլ նաև լեզվին, քանի որ ամեն մի գեղարվեստական կամ գեղագիտական դիրքորոշում նախ և առաջ ունի իր լեզվական դրսևորումը: Ուստի, խոսել տվյալ գրողի լեզվի մասին, նշանակում է խոսել մեծ ընդհանրության բաղադրատարրի մասին, որը, որպես այդպիսին, իր մեջ ներառում է այդ մեծն ու ընդհանուրը՝ անցկացրած ստեղծագործողի հոգևոր պրիզմայի միջով: Ասվածը հատկապես վերաբերում է Բայրոնի «Մանֆրեդ» և «Դոն Ժուան» դրամաներին, որոնք օժտված են ոչ այնքան էպիկականությամբ, որքան քնարականությամբ, իսկ դա յուրահատուկ երանգ է հաղորդում բայրոնյան լեզվին, լեզվառձական ու լեզվաարտահայտչական տարբեր միջոցներին և առանձին վերցրած՝ բառերին: Բայրոնյան նշյալ գործերի լեզվաշերտերում քննելիս առաջնորդվել ենք տեսական կարևոր նշա-

նակություն ունեցող մի քանի հարցադրումներով՝ առանցքային դարձնելով միֆոլոգեմային կիրառությունները, դրանց լեզվաբանաստեղծական արժեքը տվյալ երկի և ազգամշակութային իրողությունների ողջ համատեքստում, անշուշտ եթե տվյալ դիցույթի, դարձվածքի կամ մակդիրավորման տեսակի և ազգամշակութային համայնի միջև առկա է կարևոր իրողություն, որը քննարկման նյութ է դարձել ոչ միայն լեզվաբանների, այլև մշակութաբանների, ազգագրագետների ու բնագրագետների համար: Բերենք դիցույթների և մակդիրավորումների որոշ օրինակներ Բայրոնի «Մանֆրեդից»՝ զուգահեռելով բնագիրը հայերեն թարգմանության հետ [1]:

1) “Where the *Mermaid* is decking her green hair” – «Ուր *ծովահարսն* է պճնում», 2) “To the *Spirit of Ocean*/ Thy wishes unfold” – «Հայտնիք *նզուն օվկիանի*», 3) “The *star* which rules thy *destiny*” – «*Ճակատագրի* քո *Աստղը*» (տիեզերաբանական դիցույթ), 4) “A *wandering mass of shapeless flame*” – «Մի *բոց անձրև, շրջմոլիկ*» («Շրջմոլիկ հուրը» տարածված դիցույթ է տարբեր առասպելներում, հեթիաթներում և կրոններում): 5) “The *Promethean spark*” – «*Պրոմեթեյան կայծը*», 6) “And *for ever* shalt thou dwell/ In the *spirit of this spell*” – «Եվ այս *նզին թուլչության*/ կիշխե վրադ *հավիտյան*»: «Թուլչության ոգին» միֆոլոգեմ է, որն առկա է տարբեր ժողովուրդների առասպելներում և հավատալիքներում, ինչպես նաև հունահռոմեական առասպելներում, 7) “*Serpent smile*” – «*Ժպտիդ օձային*»: 8) “*Thy shut soul’s hypocrisy*” – «*հոգուդ հրեշային*»:

Մեկ այլ՝ ստվար բազմություն են կազմում հեղինակային սուբյեկտիվ մակդիրավորումները³, օրինակ՝

“From thy *own heart* I then did wring / The *black blood* in its *blackest spring*.”

«*Սև աղբյուրից քո սրտի / Սեփ սև արյուն* ծորեցի» (արար 1-ին, տեսարան 1-ին):

Այստեղ ունենք միանգամից մի քանի ուշագրավ երևույթ, նախ՝ հնչառագիտական (ֆոնոտալիստիկ) մակարդակում Մասեիյանը, հարազատ մնալով բնագրի “The black blood in its blackest spring” բառակապակցության արտասանությանը և պահպանելով *բաղաձայնույթը* (ալիտերացիա), իսկ քերականական մակարդակում՝ ածականի համեմատության գերադրական աստիճանը (blackest), թարգմանում է՝ «սեփ սև» կապակցությամբ: Այսպիսով, անվանի թարգմանիչը հրաշալիորեն միավորում է երկու տարբեր լեզվական երևույթներ, որոնք լեզվառձական մակարդակում զուգորդում է *կրկնություն* կամ *կրկնաբերություն* բանադարձման⁴ հետ: Արդյունքում ունենք փայլուն թարգմանություն կամ նմուշ:

“From thy *own smile* I snatch’d the snake, / For there it coil’d as in a brake;”

«Բռն *չար ժպտից* կորզեցի / Իժը՝ այնտեղ գալարված» (արար 1-ին, տեսարան 1-ին):

Այս օրինակը ուշագրավ է մի քանի առումով. ա) հարազատ մնալով բնագրի ոճին՝ Մասեիյանը պահպանել է «կրկնաբերություն» բանադարձումը՝ որպես շարահյուսական կառույց, բ) “own smile” բառակապակցությունը թարգմանվել է որպես «չար ժպիտ»: Ընդհանրապես, բայրոնյան զուգորդությունները, լինելով յուրօրինակ կտրուկ, հաճախ միտված են վերաճելու *օսքիմոթունի*՝ («չար ժպիտ»), իսկ փոխաբերությունները («... կորզեցի իժը այնտեղ գալարված») իրենց մեջ հաճախ կրում են առասպելական կամ աստվածաշնչյան նախատիպեր (օձի, իժի նախատիպը Աստվածաշնչում, օր.՝ Մտնդ. 3: 1-15, Հայտն. 12:9, հունահռոմեական առասպելներում և այլն): Այնուհետև, պետք է ասել, որ մասեիյանական այս թարգմանությունը, խոսքի մոգական հնչերանգով և հատկապես «կորզեցի» (snatch’d) բառի նուրբ ու ճշգրիտ ստորոգումով խիստ հարազատ է բնագրին, նաև՝ ավելի բանաստեղծական:

“Stain not our *pure vales* with thy *guilty blood*.”

«Մի սրբապղծիք մեր *սուրբ ձորերը մեղքոտ արյունով*» (արար 1-ին, տեսարան 1-ին):

Այստեղ նախևառաջ ուշադրություն է գրավում “pure vales” բառակապակցության թարգմանությունը՝ «սուրբ ձորեր» (ոչ թե «մաքուր», «անաղարտ», այլ հենց «սուրբ», որը, մեր համոզմամբ, լեզվառձական առումով շատ ավելի ճիշտ է արտացոլում հեղինակային վերա-

բերմունքը): Այլ կերպ ասած, այս օրինակում քերականական **որոշիչ** թարգմանչի կողմից վերածվել է **մակդիրի** դարձույթ (տրուպ), որի կիրառությունը, ինչպես հայտնի է, փոխաբերական իմաստ է հաղորդում ողջ ասույթին, և ուրեմն, լեզվաոճական առումով այն միանգամայն արդարացված է: Ապա, “guilty blood” միֆոլոգեմային կապակցությունը Մասեիանը թարգմանել է «մեղքոտ արյուն»՝ նկատի ունենալով, որ հայերենում «մեղավոր արյուն»-ը չի հնչում: «Արյունը» որպես դիցույթ առկա է և՛ հունահռոմեական առասպելներում, և՛ Աստվածաշնչում՝ որպես արքետիպային-սակրալ հասկացություն:

“And **a magic voice** and **verse**”

«Մի **ձայն** ու **հանգ մոգային**» (արար 1-ին, տեսարան 1-ին):

Այս օրինակում բնագրի “magic” նախադաս մակդիրը Մասեիանը թարգմանել է «մոգային» (թերևս, ավելի ճիշտ կլիներ արդի հայերենի «մոգական» ձևը: Հավանաբար, թարգմանիչը նախընտրել է «մոգային» բառը, որովհետև այն ավելի բանաստեղծական է հնչում):

Ինչպես տեսնում ենք Բայրոնի պոեզիայում հանդիպող հունահռոմեական դիցույթները՝ «դատարկված» առասպելական պլոմեններից և օժտված սիմվոլիկ գործառույթով, լեզվաոճական որոշակի միավոր են դարձել: Այսպես, «Դոն Ժուան» պոեմի կամ չափածո վեպի հետևյալ ութնյակում (octave).

And if I laugh at any mortal thing,

‘T is that I may not weep; and if I weep,

‘T is that our nature cannot always bring

Itself to apathy, for we must steep

Our hearts first in the depths of **Lethe’s** spring,

Ere what we least wish to behold will sleep:

Thetis baptized her mortal son in **Styx**:

A mortal mother would on Lethe fix [20, Don Juan, IV-IV].

Ով անսիրտ մարդիկ, ծիծաղում եմ ես,

Որ դուք չտեսնեք արցունքս երբեք,

Ես հառաչում եմ ահեղ հողմի պես,

Քանզի սիրտ ունեմ խենթ ու վշտաբեկ:

Ով վիշտն է ուզում մոռանալ հավերժ,

Թող գնա դեպի **Լեթան** խստամբեր,

Թեդիսն Ստիքսում կնքեց իր որդուն,

Բայց ինձ Լեթան է հիմա կախարդում [IV-4, էջ 154]:

Մոռացության «Լեթա» գետը, Ներեուհի «Թեդիսը» (Թետիս), ստորերկրյա «Ստիգս» (Ստիքս) գետը, որպես ավանդական դիցույթներ, պատմամշակութային զգալի ժամանակահատվածում ձեռք են բերել գեղագիտական-խորհրդանշանային արժեք՝ ժամանակին ձևակառույց գիտակցվելով որպես միֆոլոգեմ: Ուստի կարելի է նշել, որ բառերը (=միֆոլոգեմները), ինչպես նաև կայուն մակդիրներով օժտված բառակապակցությունները, ժամանակի ընթացքում ձևակառույց մնալով և ընկալվելով որպես միֆոլոգեմներ, նոր ժամանակներին հատուկ հասարակական ու անհատական գիտակցության մեջ, «գրկվելով» (եւպես կամ առերևույթ) իրենց վաղնջական-միֆոլոգեմային բովանդակությունից ու գործառույթից, վեր են ածվում պարզապես բառերի ու բառակապակցությունների, իսկ լեզվաոճական մակարդակում՝ պատկերավորման միջոցների և, ուրեմն, սկսում են դիտարկվել ոչ այնքան իրենց առասպելաբանական նշանակությամբ, որքան իրենց խորհրդանշանային-գեղագիտական իմաստառումով ու արժեքով:

Այլ կերպ ասած, վերը նշված դարձույթների և արքետիպերի մեջ ժամանակակից մարդը փնտրում է ոչ թե ծիսական, կրոնական կամ այլևայլ պլոմետային տարրեր, այլ իր

գաղափարներին ու գեղագիտական ընկալումներին համապատասխան խորհրդանիշ-բառեր, ինչպես, օրինակ, հետևյալ ութնյակում.

But droop not: **Fortune** at your time of life,
Although a female moderately fickle,
Will hardly leave you (as she's not your wife)
For any length of days in such a pickle.
To strive, too, with our **fate** were such a strife
As if the corn-sheaf should oppose the **sickle**.
Men are the sport of circumstances, when
The circumstances seem the sport of men [V-XVII, p. 794].
Բայց մի վիատվեք: Թեև **Ֆորտունան**
Հավերժ փոփոխվող կին է քնքշագին,
Բայց ձեր տարիքում ձեզ չի լքի նա,
Մանավանդ, որ նա չի եղել ձեզ կին:
Պետք չէ մեր **բախտին** հակառակ գնալ,
Ի՞նչ կանի հասկը տուրսայր **մանգաղին**,
Մարդը ուզում է խաղալ բախտի հետ,
Բայց ինքն է բախտի խաղալիքն հավետ [V-17, էջ 187]:

Հայերեն թարգմանությունում պահպանվել է «**Ֆորտունա**»-ն (երջանիկ դիպվածի և հաջողության հռոմեական աստվածուհու **լատիներեն** անվանումը), որով այն «ամրագրվել» է հայերենի ընդհանուր բառապաշարում, դարձել շրջանառու բառ-եզրույթ՝ երբեմն գործածվելով իր պաշտամունքային մակդիր-մականունների հետ, ինչպես՝ Ֆորտունա Պրիվատա (ընտանիքի հովանավորուհի), Ֆորտունա Վիկտորիս (հաղթանակի աստվածուհի, որով այն միաձուլվում է Վիկտորիայի հետ) և այլն [տե՛ս 3]:

Յուրօրինակ խտացված հասկացության դարձվածքի կամ լեզվաժողովրդական այլևայլ միջոցների արժեք ունեն հատուկ անունները, որոնցից յուրաքանչյուրը վերաբերում է մարդկային իմացության որևէ ոլորտի կամ բնագավառի.

Ovid's a rake, as half his verses show him,
Anacreon's morals are a still worse sample,
Catullus scarcely has a decent poem,
I don't think **Sappho's** Ode a good example,
Although **Longinus** tells us there is no hymn
Where the sublime soars forth on wings more ample.
But **Virgil's** songs are pure, except that horrid one
Beginning with "Formosum Pastor Corydon" [I – XLII, p. 726].
Ոչ մի պարկեշտ տող **Պատույլ** չունեք,
Վիճելի էր վարքն **Անակրեոնի**,
Յոփ կյանք էր վարում **Նազոն** զվարճասեր,
Վկա՝ տողերը հեղզ ու մեղսալի:
Մաֆոն գրում էր սիրո օղաներ,
Բայց ոչ բոլորին հանձնարարելի,
Մաքուր էր միայն **Վիրգիլի** ոգին,
Բայց նա էլ մի օր տուրք տվեց մեղքին [I – 42, էջ 20]:

Հայերեն թարգմանությունում փոխված են անձնանունների տեղերը, որն, իհարկե, բնագրի «թվարկման ոճ»-ի բնականության հետ համեմատ՝ որոշ արհեստականություն է հաղորդում խոսքի ընդհանուր հոսքին՝ այնուամենայնիվ արտացոլելով ութնյակի բուն իմաստը: Այս ութնյակը (ինչպես և շատերը) կարելի է համարել անձնանունների՝ գաղափա-

րագեղագիտական ու լեզվառճական միտումներին ծառայեցնելու ցայտուն օրինակ, որը ցույց է տալիս, որ նշյալ անունները (Օվիդիոս, Անակրեոն և այլն) կարելի է ընթերցել նաև որպես որոշակի հնչերանգով օժտված լեզվամիջոցներ: Բնարկե, թվարկված անունները դարձույթներ չեն, բայց տվյալ համատեքստում միտված են վերածվելու դարձույթի. դրանց միֆոլոգեմային երանգ է հաղորդում՝ նախ այն հատուկ նշանակությունը, որ տրվում է նրանց անձին ու գործին, և ապա՝ բանաստեղծական այն հնչերանգը, որով արտասանվում են այդ անունները:

Առասպելական պյուծներում առկա բուն միֆոլոգեմները, «բանաստեղծական դարձույթներից» տարբերվում են նրանով, որ եթե առաջինի շուրջը հյուսվել են առասպելական պատմություններ (պյուծներ), ապա բանաստեղծական համատեքստում դարձույթի «հավակնող» անունները կամ հասկացությունները չունեն և չեն կարող ունենալ իրենց շուրջը հյուսված առասպելական պյուծներ, բացառությամբ այն դեպքերի, երբ ինքը գրողն է, իր երևակայությանը և աշխարհգեղացմանը տուրք տալով, ստեղծում նման պյուծներ:

«Դոն Ժուան»-ից բերենք այլ օրինակներ՝ ցույց տալու, որ յուրաքանչյուր դեպքում դարձույթը կամ արքետիպը (=լեզվառճական հարթության վրա՝ բառը կամ բառակապակցությունը) ձեռք է բերում իմաստային ու հնչերանգային (=հուզաարտահայտչական) հավելյալ երանգներ՝ հավաստելով բառի՝ իմանետո կերպով բազմանշանակ լինելը, որը կարող է ռեալ դրսևորումներ ունենալ շարահյուստրեն տարբեր կառույցներում ու ժանրերում:

Շետկյալ օրինակը վկայում է, թե ինչպես է դարձույթը մնում հարաբերականորեն նույնը, այսինքն՝ նույնանում իր արքետիպի հետ.

...There was the Donna Julia, whom to call
Pretty were but to give a feeble notion
Of many *charms* in her as natural
As sweetness to the flower, or *salt to ocean*.
Her zone to Venus, or *his bow to Cupid* [I – LV, p. 727].
... Դոննա Ջուլիան ուրիշ էր սակայն,
Ում քիչ էր կոչել չքնաղ մանկամարդ:
Նրա *թուփանքն* էր այնքան բնական,
Որքան բուրմունքը ծաղկունքին զվարթ,
Որքան *Կուպիդոնի՝ սիրո աղեղը*.
Որքան *օվկիանոսի՝ սպիտակ աղը* [I – 55, էջ 23]:

Այստեղ Կուպիդոնը (լատ.՝ Կուպիդո – ցանկություն), որը հունական առասպելաբանությունում սիրո աստվածության՝ Էրոսի (Էրոտ) լատիներեն անվանումն է, հռոմեական Ամուր անվան հետ, հանդես է գալիս իր ավանդական կերպարանքով՝ նետ ու աղեղով. նրա ոսկեալաք նետերը խոցում են մարդկանց և նույնիսկ աստվածների սրտերը՝ հարուցելով անակնկալ սեր, պատճառելով երջանկություն կամ տառապանք: Դոննա Ջուլիան մեկ համեմատվում է Կուպիդոնի հետ՝ ձեռքին «սիրո աղեղ», մեկ՝ օվկիանոսի աղի հետ: Չնայած այն հանգամանքին, որ Կուպիդոնն իր ավանդական հատկանիշներով (լեզվառճական մակարդակում՝ *նետավոր* կամ *նետաձիգ*, կամ *աղեղնավոր* մակդիրով) հանդերձ, հանդես է գալիս նոր ժամանակների ընկալմամբ, և ուլթյակի ժանրային ձևի մեջ, այնուամենայնիվ, թեկուզ արտաքուստ, այն պահպանում է իր արքետիպային կամ ավանդական (կարծրատիպային) պատկերը՝ Կուպիդոնն իր նետ ու աղեղով:

Եզրակացություն

Շետագոտությունը ցույց է տալիս, որ գեղարվեստական տեքստը, տվյալ դեպքում բայրոնյան բանաստեղծական տեքստը, իրենից ներկայացնում է նաև *ինտերտեքստ* (տեքստային ներթափանցում): Իսկ ինչպես նշում են կառուցվածքային (ստրուկտուրալ) լեզվաբանության ներկայացուցիչները, յուրաքանչյուր տեքստ յուրովի երկխոսություն է այլ տեքստերի

ու նաև ժանրերի հետ: Առավել բնութագրական է, սակայն, Ա. Վելիկանովի այն դիտարկումը, որ «այլ տեքստերը, քիչ թե շատ ճանաչելի ձևով ներկա են ամեն քննարկվող տեքստում» [տե՛ս 7, 272]: Տեքստը կազմող լեզվական միավորների մեջ շատ են հատկապես բուն արքեսիպային և արքեսիպերից սերված լեզվառճական միջոցները (մակդիր, փոխաբերություն, փոխանունություն, համեմատություն, նվագասույթ, չափազանցում և այլն) և դրանցով կազմված դարձվածքները: Դրանք բայրոնյան տեքստում ի հայտ են գալիս և՛ համեմատաբար կայուն կամ ավանդական, և՛ փոփոխված կամ անհատականացված ձևերով: Այս առումով, առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում հունա-հռոմեական առասպելներից ավանդված դարձույթները, որոնք Բայրոնի պոեզիայում հաճախ պահպանում են իրենց արքեսիպային կամ ավանդության ձևը կամ հեռավոր կապը առասպելական անցյալի հետ, երբեմն էլ երևան են գալիս «նոր կեղևի ներքո»՝ կապված ժամանակային փոփոխված ընկալումների հետ: Ամեն դեպքում, նշյալ արքեսիպային-լեզվական միավորները կազմում են բանաստեղծական ընդհանուր բառապաշարի մի սովոր շերտ, որի թարգմանությունը մեկ այլ լեզվով փաստորեն նշանակում է նման լեզվական միավորների դրսևորում լեզվամշակութային այլ իրողության մեջ, և, համապատասխանաբար, իմաստային ու լեզվառճական այլ երանգավորմամբ:

Ծանոթագրություններ

1. «Մանֆրեդ» դրաման կամ դրամատիկական պոեմը (A Dramatic Poem) Ջ. Բայրոնը գրել է 1816-1817 թթ. (առաջին և երկրորդ արարները՝ Շվեյցարիայում, երրորդ արարը՝ Վենետիկում), այսինքն հենց այն շրջանում, երբ բանաստեղծն անձնական ու ստեղծագործական կապեր է հաստատել 1717-ից ի վեր Ս. Ղազար կոզում (Վենետիկին մերձ) հաստատված Մխիթարյան Ուխտի միաբանների հետ: 1816 թ. աշնանը նա այցելում է Մխիթարյաններին և նրանց, հատկապես Հ. Ավգերյանի օգնությամբ, սկսում է սովորել հայերեն: Ինչպես գրում է Խ. Դաշոնցը, Բայրոնը «Ադրիականի փոթորկոտ ջրերը ճեղքելով՝ գնացել է հայոց կղզին, մի ազնիվ նպատակով՝ համակված՝ սովորելու հայոց լեզուն» [2, 174]: «Մանֆրեդը» բնագրով առաջին անգամ հրատարակվել է 1817 թ. ամռանը, հայերեն է թարգմանվել ու հրատարակվել 1913-ին (Թիֆլիս, թրգմ.՝ Տիրայր Վարդապետ) և 1922-ին (Վիեննա, թրգմ.՝ Հովհ. Մասեհյան): Անշուշտ, Տիրայր Վարդապետի թարգմանությունը, կարելի է ասել, սոսկ թարգմանական փորձ է՝ հեռու բնագրի լեզվից ու ոճից: Դրան հակառակ՝ այդ լեզվի ու ոգու ճշգրիտ արտահայտությունն է Հովհ. Մասեհյանի թարգմանությունը:

2. Լեզվաբանաստեղծական վերլուծության մեթոդը, ինչպես նշում են մի շարք հետազոտողներ (Akhmanova O., Zadorova V., 1977 և ուրիշներ) վեր է հանում լեզվի և պոետիկայի դիալեկտիկական՝ կոնկրետ լեզվական դրսևորումները դիտարկելով և բնութագրելով «վերնից» հաշվի առնելով գաղափարագեղագիտական ընդհանուր մթնոլորտը և դրանով իսկ, խուսափելով լեզվառճական «փակ» կամ «ինքն իր մեջ» կատարվող վերլուծությունից կտրված ընդհանուր պոետիկական ոգուց:

3. Այստեղ անպայման պետք է նշել, որ Բայրոնի պոեզիայում շատ են թե՛ ավանդական-միֆոլոգեմային (*շանթաձիգ* Ջևս, *նետաձիգ* Ապոլոն և այլն), թե՛ հեղինակային-սուբյեկտիվ մակդիրավորումները, որոնք առավել ճշգրիտ և համարժեք են թարգմանված «Մանֆրեդի» մասեհյանական թարգմանությունում: Դա բացատրվում է, նախ, «Մանֆրեդի» *սզաս* տաղաչափությամբ, որն, ի տարբերություն իննյակներով («Չայլո չարոլո») կամ ությակներով («Դոն Ժուան») գրված պոեմների, որտեղ թարգմանիչը (Հ. Սևան), բնագրի յուրատիպ հանգավորմամբ պայմանավորված, ապա և ողջ ստեղծագործության կառուցվածքային-տաղաչափական առանձնահատկություններից ելնելով, ինչպես նաև ձևաբովանդակային միասնությունը պահպանելու նպատակով, ստիպված է եղել որոշակիորեն շեղվել բնագրից՝ փոխելով բազմաթիվ մակդիրներ: Այս առումով, իհարկե, Մասեհյանը եղել է շահեկան վիճակում: Հավելենք նաև այն հանգամանքը, որ շնորհիվ իր հզոր ինտուիցիայի, բացառիկ, անուրանալի տաղանդի, նուրբ լեզվագագադության և բարձր պրոֆեսիոնալիզմի,

նրան հաջողվել է պահպանել բայրոնյան ստեղծագործության շունչն ու ոգին և հայ ընթերցողին հաղորդել «Մանֆրեդի» ողջ ուժն ու հմայքը, ընդամին հայերենի վերածելով Բայրոնին բնորոշ լեզվաոճական ու լեզվաարտահայտչական տարաբնույթ միջոցները, մասնավորապես՝ մակդիրավորումները:

4. **Բանադարձումը** խոսքին արտահայտչականություն և պատկերավորություն հաղորդող հատուկ բառակապակցություն կամ շարահյուսական կառույց է (ռուս. Стилистическая фигура, լատ. Figura-կերպ, ձև) [տե՛ս 5, 17]:

5. **Օբյեկտորենը** (նրբաբանություն) ոճական դարձույթ է՝ կառուցված հակիմաստ բառերի հարադրությամբ, օր. Պերճախոս լռություն, դառն երջանկություն, լուսավոր թախիժ և այլն [տե՛ս 5, 74]:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-22>

Գրականություն

1. Բայրոն Ջ. Գ., Երկերի ժողովածու, Երևան, «Հայաստան», 1965, 562 էջ:
2. Դաշտենց Խ., Ջ. Գ. Բայրոնը և հայերը, Երևան, «Հայպետհրատ», 1959, 195 էջ:
3. Դիցարանական բառարան, Երևան, «Լույս» հրատ., 1985, 264 էջ:
4. Էդոյան Հ., Շարժում դեպի հավասարակշռություն, Երևան, «Մարգիս Խաչենց. Փրինսիփս», 2009, 501 էջ:
5. Խլիլաթյան Ֆ. Հ., Ոճաբանական տեքստիների բառարան, Երևան, «Լույս», 1976, 110 էջ:
6. Akhmanova O., Zadornova V. On Linguopoetic Stratification of Literary Texts // Poetica – Tokyo, 1977.
7. Великанов А. В. О языке художественной прозы // Избранные труды. М., «Наука», 2005, 448 с.
8. Винокур Г. О. О языке художественной литературы, М., «Учпедгиз», 1991, 478 с.
9. Гаспарян С. К. Лингвопоэтика образного сравнения. Ереван: изд. ЕГУ, 2008, 180 с.
10. Гюббенет И. В. К вопросу о «Глобальном» вертикальном контексте // Вопросы языкознания, № 6, 1980, с. 23–43.
11. Гюббенет И. В. Основы филологической интерпретации литературно-художественного текста, М.: изд. МГУ, 1991, 205с.
12. Задорнова В.Я. Словесно-художественное произведение на разных языках как предмет лингвопоэтического исследования, Диссертация доктора филологических наук, М., 1992, 479 с.
13. Литвин Ф. А., Многозначность слова в языке и речи. Изд. 2-ое., М., «Комкнига», 2005, 120 с.
14. Lord Byron, Selected Poems, Penguin Books, 2005, 830 pp.
15. Selections from Byron, Progress Publishers, 1975, 520 pp.
16. The Complete Works of Lord Byron, 779 pp.

Лингвостилистические особенности поэзии Дж. Г. Байрона и их проявления в армянских переводах

*Геворгян Гурген,
Хачатрян Анна*

Резюме

Ключевые слова: языковой слой, художественное проявление, языковая личность, мифологема, национальное сознание, духовная направленность, древность

Словарный состав любого языка включает в себя различные пласты, сформировавшиеся в разные исторические эпохи. Их продолжительность и устойчивость зависят от социокультурных, политических и образовательных условий соответствующего времени. В процессе развития такие языковые единицы приобретают новые семантические оттенки, а также интонационно-стилистические особенности.

Поэтическое творчество Дж. Г. Байрона отличается широким использованием мифологем и эпитетов, преимущественно связанных с греко-римской культурной традицией. Вместе с тем, значительное место занимают библейско-христианские мотивы, отражающие духовную направленность и культурный контекст эпохи. Эти мифологемы не только актуализируют исторические и культурные реалии, но и оказывают существенное влияние на язык, образную систему и социально-культурную среду произведений.

Многообразие и насыщенность поэзии Байрона мифологическими образами объясняются универсальностью мифа как формы мышления, не ограниченной рамками конкретного времени. Мифологемы функционируют в поэтическом тексте как устойчивые или свободные словосочетания, приобретающие новые значения и используемые в качестве метафор, метонимий, эпитетов, оксюморонов и других стилистических средств. Эти элементы, в свою очередь, способствуют формированию фразеологических единиц, являющихся важной частью языковой картины мира поэта.

Отдельные лингвисты подчеркивают, что фразеологические конструкции нередко формируются именно посредством указанных выше стилистических приёмов, что ещё раз подчёркивает роль образной системы Байрона в обогащении литературного языка и национального сознания.

Linguostylistic Peculiarities of G.G. Byron's Poetry and Their Manifestations in the Armenian Translations

***Gevorgyan Gurgen,
Khachatryan Anna***

Summary

Key words: *language layer, artistic expression, linguistic identity, mythologeme, national consciousness, spiritual orientation, ancient times*

Every language contains layers of vocabulary that have penetrated into it across different historical periods. These layers may be long-lived or short-lived, depending on their linguistic resilience. Influenced by the political, cultural, and educational contexts of their time, such linguistic elements often gain new shades of meaning and tonal nuances.

In case of Byron, it is worth noting that mythologems are used extensively throughout his work. Basically, they refer to the Greco-Roman events. There are also mythologems of Biblical-Christian character. Such mythologems vividly reflect the realities of the era and significantly influence the language, culture, and social life of the time.

The availability and abundance of mythologems in the poetry of Byron is explained by the fact that myths do not belong to a definite period of time, they embrace quite a wide period of time and, naturally, they find their manifestation in the works of various authors, various times and countries. One can surely state that the mythologems from Greco-Roman origin are stable or free word combinations which acquire new meanings in Byron's poetry, very often as metaphors, metonymies, epithets, oxymorons, and so on, which in their turn contribute to the formation of phraseological units.

Ներկայացվել է	21. 11. 2024 թ.
Գրախոսվել է	10. 02. 2025 թ.
Ընդունվել է տպագրության	05. 06. 2025 թ.

Վերախմաստավորումները միջին գրական հայերենում

Շահվերդյան Թերեզա

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-32>

Հանգուցային բառեր. *լեզվական մակարդակներ, հոմանիշ քերականական կառույցներ, ձևաբանականական ռճաբանություն, շարահյուսական փոխաբերություններ, ժխտական, թերի և լրիվ, միակազմ, երկկազմ, հնչերանգով տարբերվող նախադասությունների վերախմաստավորումներ*

Նախաբան

Հայոց լեզվի պատմության լեզվական բոլոր մակարդակներում՝ հնչյունային, հնչույթային, ձևույթային, բառային, քերականական, տեքստային, կան բազմաթիվ հարցեր, որոնք կարիք ունեն նորովի ուսումնասիրությունների կամ մոտեցումների: Այդ պահանջը ամենից շատ զգացվում է միջին հայերի իրողությունների քննության մեջ, նախ այն պատճառով, որ ինչպիսի շրջանաբաժանմամբ էլ մոտենանք, այդ շրջանը հստակորեն դժվար է տարրոշել: Իհարկե, իշխող կարծիքն այն է, որ միջին հայերենը ընդգրկում է 11-ից 17-րդ դարերի լեզվակայությունը: Սակայն միջին հայերենով ստեղծագործող բազմաթիվ գրողների ստեղծագործությունների մեջ առկա են և՛ գրաբարյան տարրերը, և՛ վաղաշխարհաբարյան:

Վերջին ժամանակներս գիտնականների ուշադրությունը գրավել է լեզվի տարբեր շրջաններում առկա հոմանիշ քերականական կառույցների առկայությունն ու դրանց դիպուկ կիրառությունը:

Հոդվածի բովանդակությունը

Հոմանիշությունն արդի լեզվաբանական ըմբռնմամբ ընդարձակել է իր սահմանները՝ բառային մակարդակից թափանցելով նաև քերականական մակարդակ. այն լեզվական տարբեր ձևային կառույցների միջոցով նույն կամ իմաստով մոտ բովանդակությունն արտահայտելու իրողություն է և դարձել է արդի ռճագիտության առանցքային հարցերից մեկը: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ հոմանիշ լեզվական կաղապարների առկայությունն առաջ է բերում խոսքային այս կամ այն իրադրությանն առավել համապատասխան ձևի լեզվական միավորի ընտրության ու գործածության անհրաժեշտությունը, որն էլ հենց ռճագիտության հետաքրքրության հիմնական առարկան է [տե՛ս 9, 9]:

«Միայն վերջին տասնամյակներում է որոշ հայ լեզվաբանների աշխատություններում առաջադրվել ու հիմնավորվել այն գաղափարը, որ լեզվական հոմանշությունն ամեննիս էլ չի սահմանափակվում բառագիտական մակարդակով, այլ ունի նաև քերականական դրսևորումներ» [9, 8-9]: Օտարագգի գիտնականներն ավելի վաղ են անդրադարձել սույն հարցին և հրատարակել արժեքավոր աշխատություններ [տե՛ս 9, 18-21]:

Հոմանշությանը մասամբ անդրադարձել են նաև մի շարք հայ լեզվաբաններ: Օրինակ՝ Լ. Եզեկյանը գրում է. «Որտեղ հնարավոր է լեզվական միավորների ընտրություն, երկձևություն կամ բազմաձևություն, բնականաբար այնտեղ կան նաև հոմանիշներ կամ հոմանշություն, որոնց ընտրության, կիրառության հարցերով զբաղվում է ռճագիտությունը: Ահա հենց այսբանով էլ հոմանշությունը իրավացիորեն համարվում է ռճաբանության ուսումնասիրության կարևորագույն, հիմնական, առանցքային խնդիր» [3, 197]: Հետևելով Մ. Աբեղյանին ու Լ. Եզեկյանին՝ մենք հոմանշությունը հասկանում ենք լայն առումով՝ նրա մեջ ներառելով ինչպես հոմանիշ, այնպես էլ նույնանիշ լեզվական կառույցներ [9, 30]:

Այս հարցին անդրադարձել է նաև Պողոս Պողոսյանը. «Հոմանշությունն այժմ ըմբռնվում է ոչ միայն իբրև լեքսիկական մեկ միավորի փոխարինելի լինելը մի այլ միավորով, այլև ամեն մի այլ ձևախմաստային միավորի փոխարինելի լինելը ամեն մի այլ ձևա-

իմաստային միավորով, ըստ որում մեկ բառ կարող է փոխարինվել մեկ այլ բառով, մեկ քերականական ձևը՝ այլ քերականական ձևով (ձևաբանական ձևը՝ այլ ձևաբանական ձևով, շարահյուսական ձևը՝ այլ շարահյուսական ձևով) [17, 18-19]: Ուշագրավ դիտարկումներ ունեն նաև Ն. Ա. Պառնասյանը [16, 38], Վ. Դ. Առաքելյանը [2, 23]: Թեև արդի հայերեն լեզվաբանության մեջ «շարահյուսական վերաիմաստավորում» հասկացությունը չի հանդիպում, սակայն խոսվում է շարահյուսական առանձին իրողությունների վերաիմաստավորման, դրանց փոխաբերական կիրառության մասին: Այսպես՝ հայոց լեզվի շարահյուսության վերջին ձեռնարկներից մեկում [15, 41] բառակապակցությունները ստորաբաժանվում են երկու հիմնական խմբի՝ ոչ վերաիմաստավորված և վերաիմաստավորված բառակապակցություններ: Առաջին դեպքում բառակապակցության «... ընդհանուր իմաստի փոխաբերացում չկա. կապակցության յուրաքանչյուր անդամ գործածվում է իր իսկական իմաստով» [15, 41], իսկ վերաիմաստավորված բառակապակցությունների պարագայում գործ ունենք հակառակ իրողության հետ. «...նախ՝ սրանցում բաղադրիչները իրենց իսկական իմաստներով հանդես չեն գալիս, այլ փոխաբերական, ապա՝ բառակապակցության ամբողջական իմաստը բոլորովին չի համընկնում նրա բաղադրիչների իմաստների գումարին» [15, 44]:

Մենք անդրադարձել ենք վերաիմաստավորումներին և՛ գրաբարում, և՛ արդի հայերենում, պարզապես արդի հայերենում գործածել ենք փոխաբերություններ եզրույթը [տե՛ս 9 և 13]:

Այժմ դառնանք միջին հայերենին:

Ինչպես արդեն նշել ենք, վերաիմաստավորումը քերականական բոլոր կարգերում միմյանց նկատմամբ հարադրուցային հակադրության մեջ հանդես եկող քերականական կադապարների՝ մեկը մյուսի փոխարեն հանդես գալու լեզվաոճական հնարավորությունն է: Այն կոչվում է նաև «քերականական փոխաբերություն»: Քերականական վերաիմաստավորումներ տեղի են ունենում և՛ ձևաբանական, և՛ շարահյուսական մակարդակներում: Ըստ էության այն բազմազան հոմանիշ քերականական կառույցների առկայությունն ու դիպուկ կիրառությունն է, որն անհրաժեշտություն է դառնում խոսքային որևէ իրադրության մեջ առավել համապատասխան գործածության համար: Հետաքրքրական են հոմանիշ քերականական կառույցների գործածությունները միջինհայերենյան շրջանի թե՛ գեղարվեստական ստեղծագործություններում, թե՛ պատմագրության մեջ: Ձևաբանական ոճաբանության հետազոտության ոլորտում ավանդաբար հայտնվել են հայերենի այն ձևաբանական կառույցներն ու ձևերը, որոնք թեև նորմատիվ չեն ու հիմնական գործածության արժեք չունեն, սակայն կարող են հանդես գալ խոսքին որոշակի նրբերանգներ հաղորդելու նպատակով: Այսպես՝ գրողները հաճախ են իրենց ստեղծագործություններում գործածում հնացած քերականական ձևեր՝ տվյալ պատմական դարաշրջանն ավելի հարազատ պատկերելու միտումով [տե՛ս 8, 102; 4, 69]:

Ձևաբանական ոճաբանության մեջ մեծ ուշադրություն է դարձվում քերականական կարգերի՝ գոյականների, դերանունների, բայի եղանակային ժամանակաձևերի՝ մեկը մյուսով փոխարինելու դեպքերին: Միջին հայերենում հոգնակին կազմվում էր գրաբարյան - *էար* և - *նէար* մասնիկների պատմական հնչյունափոխությամբ առաջացած - *էր* և - *նէր* հոգնակներով, ինչպես նաև հանդես են գալիս այլ մասնիկներ, որոնց մեջ հիշատակվել է - *ւի* մասնիկը, որով հոգնակի են կազմում հիմնականում մարդու մարմնի մասերի՝ գույգ նշանակությամբ միավանկ անունները՝ աչ - աչ*ւի*, ոտ - ոտ*ւի*, ձեռ - ձեռ*ւի*: Օրինակ՝ խմելի - խմել*ստան*, մայրենի - մայրեն*ստան*: Բարբառներում այդ օրենքը ջնջվել է (հարս - հարս*եստան*, գլուպենի - գլուպեն*եստան*), - *ւտի*-ն նույնպես բաղադրյալ է (*ւտի*)՝ քյոյ - քոյ*ւտի*, տեր - տեր*ւտի*: - *Ան* մասնիկը բացառիկ ձևերով գործածվում է կենդանիների անունների վրա. այն անցել է բարբառներին՝ *ձիան*, *իշան*, *ուլան* [10, 291-292]: Սակայն որոշ

հեղինակներ, ասենք՝ Աղթամարցին, զուգահեռաբար գործածում է գրաբարատիպ *-ք* հոգնակերպը:

– Զի՞ն է, ընդէ՞ր, որդեակք ողբայք տրտմագին: Բազում կրօնատուրք ի թաղումն եկին [ԳԱ]: Բերենք միայն նույն ստեղծագործության օրինակները՝ աշխատանքը չծանրաբեռնելու հանար՝ աստուածութիւնք [29], անձինք [ն. տ], թոչունքն [38], զբանակքն [43], սերովբէք [44], դասք [ն. տ], երջանիկք [ն. տ], գունդքն [ն. տ], քարոզք [ն. տ], եղբարք [57], շրթունք [ն. տ], ակունք [ն. տ], մատունք [ն. տ], ատամունք [ԳԱ]:

Բնչպէս հայտնի է, գրաբարյան *-ք* հոգնակերտ հոլովակազմիչը հետագայում դարձել է ածանց՝ *ոտք, միտք, կամք* և այլն: Միջին հայերենի որոշ աղբյուրներում այն ընկել է՝

Ուներդ [ունքերդ] է բարակ, աչքերդ է գերթ ծով, բերանդ շաքրով լի,

Շտոյայ եմ քեզ անձամբս [ն. տ]:

Գեղարվեստական գրականության մեջ հաճախ հեղինակը առաջին դեմքի դերանուններին փոխարեն գործածում է երկրորդ և երրորդ դեմքի դերանուններ՝ համապատասխան թվով ստորոգյալների հետ, որոնք անպայմանորեն ուղեկցվում են սեփական անվան կոչական հիշատակմամբ:

Այլ չկա *քեզ, Կոստանդին*, կեանք մուրատով,

Երբ ի իւր քաղցր տեսուն հանց կարօտ ես,

Է՛ սուրաթ պայծառ ու պատկեր լուսատես,

Զիմ աչերս ի քո տեսուղ է՞ր կու գատես [ՀԵ]:

Կոստանդին՝, իմ խըրատիս հաւան կացիր *քչ* հեգաբար,

Մի՛ ի գուր հոգօք մաշիլ՝ վասն անցաւոր կենաց համար [ն. տ.]:

Քո ծոցն՝ բեռն-բարխանայ,

Նոր է եկած շաշտարխանայ, գալում եար, է՛յ,

Թող *Նաղաշն իւր* ձեռօքն բանայ,

Նազլու եար, ինսաֆ արա, ամա՛ն, ամա՛ն [ՆՀ]:

Ճարտասանական դիմում

Ֆրբի՛կ, դու է՛ր ես յիմարել:

Զհոգւոյ աչքերդ ես կափուցել:

Սրտի ականջդ ես դու կարել [Ֆր.]:

Զնաբանական մակարդակում կան եղանակաժամանակային ձևերի վերաիմաստավորումներ:

Այգեկցու «Կաթ մեղու պատճառ պատերազմի» առակի մեջ **սպանէ բառաձևը ունի** ներկայի իմաստ, բայց կազմությամբ ո՛չ գրաբար է (սպանանէ), ո՛չ միջին հայերեն (կու սպանէ): Մարուր միջինհայերենյան անկատար անցյալի կազմություն ունի *կու ծախէր* բայը: *խանութին տերն* գոյականական բառակապակցության մեջ խանութին որոշիչը հանդես է եկել *ն* հոդով: Գրաբարում նման գործածություն *ն* հոդը չունի. առաջին անգամ հանդիպում ենք միջին հայերենում, այնտեղից էլ փոխանցվել է բարբառներին և արևմտահայ գրական լեզվին: *Ի մեղրէն* – գրաբարում այս բառը ենթարկվել է *-ՈՒ* հոլովման՝ *մեղր-մեղու*: Սակայն դեռևս գրաբարում կան տարբերակներ՝ *մեղեր, մեղուի* (կրկնակի հոլովիչ՝ *-ՈՒ*, *-Ի*), գործիականը՝ *մեղու, մեղերբ, մեղուա*: Միջին հայերենում ենթարկվում է *-Ե* հոլովման, սակայն բացառականի ձևը՝ *ի մեղրէն*, միջին հայերեն չէ. այն կլինի *ի մեղրէրէն*: Քանի որ *-Ե* հոլովիչը այս բառում չի պահպանվել, պետք է կարծել, որ բացառականը կազմված է ուղղականի հիմքից, իսկ *-Հ*-ն եզակի բացառականի հոլովակազմիչն է և՛ գրաբարում, և՛ միջին հայերենում, և՛ վերջինիս հետ կապված՝ արևմտահայերենում ու *Կ* ճյուղի բարբառներում: Սակայն առակի վերջին նախադասության մեջ Այգեկցին *մեղր* բառը գործածել է *-Ի* հոլովմամբ՝ *վասն կաթ մի մեղրի* համար: Հետաքրքրական կազմություն ունի *գեղիցն էր* բաղադրյալ ստորոգյալի վերադիրը: Սա այն եզակի նմուշներից է, երբ եզակի բացառականը միջին հայերենում

կազմվել է *-ից* ձևությամբ, բայց հիմնականում գրաբարատիպ է՝ *ի ձեր տաննէն, ի քո ծոցէն, լամպէն*: Ինչ մնում է *ի* նախդիրին, ապա Լիանա Հովսեփյանը միջին հայերենին նվիրված իր ուսումնասիրության մեջ գրում է. «Միաժամանակ պետք է նշել, որ արդեն սակավ չեն նաև առանց նախդրի կազմությունները...» [7, 70]: Գրաբարում բացառականի եզակի թվում *-ից* ձև չկա: Միջին հայերենում հանդես է գալիս հազվադեպ. այն հատուկ է արևելահայ աշխարհաբարին» [տե՛ս 12, 101-111]:

Ձևաբանական մակարդակում կան եղանակաժամանակային ձևերի վերաիմաստավորումներ: Հայտնի է, որ միջին հայերենում սահմանականի ներկան և անկատար անցյալը հիմնական կազմվում են *կու-* մասնիկով, բայց գուգահեռաբար «Հայրեններում» հանդիպում ենք նաև *կոյ-*, *-գու*, *-գոյ* մասնիկներով բառաձևերի, ինչպես նաև *կայր* /անկատար անցյալ/և *կայ* /ներկա/ ժամանակաձևերի:

Ջիւրատն իմաստնիցն տուր, Առաւել զքեզ կու սիրէ (Հրն):

Թէ անգէտ ու յիմար մարդուն խրատ տաս րգրեզ կու ատէ (ն. տ):

Ըսաւ, թէ՛ Ի նչ գու լաս, Ի նչ չես լար, Իմ հաւք թևառաք (ն. տ.):

Հրեշտակ յերկրնքօվն անցաւէր գոյ լաս, իմ հաւք թևառաք (ն. տ):

Նրստեալ կայր ու լար Կաքվուկն ի վերայ քարին. – Ա՛յ հաւեր (ն. տ):

Կարուկմ ալ վրայ քարին, Որ կու լար, արցունքն էր պլստոր (ն.տ):

Մահալլովն ի վար կու գի (գայի), Լօք տեսայ դռնակ մ՝ ալ ի բաց (ն. տ):

Կերթամ այն գաղտուկ դռնիկն, Կոյ կանչեմ խաբբիկ մի ալանի (ն. տ):

Նա չէր հանել ու վարել, Յիր ձեռացն ի վեր կայ ու գայր (ն. տ):

Ներկայի ժամանակաձևերը գործածվում են անցյալում կատարվող իրադարձությունների նկարագրության ժամանակ

Իմ մեղքն է խավար կամար, ***Կու բերէ*** կարկուտ հրեղեն,

Քանի ***կու յիշիմ*** ըզնա, ***Կու դողա*** ոսկերքս իմ ամեն

Ձիարդ *բաժանիմ*՝ ի քեն կենդանի. Առանց քո տեսող շունչս ***կու քաղի***,

Ձայնդ է կաքով նըման՝ թէ զիս կոչ ձայնես, Ղաւ ու հաւատ ՚ երդումն, որ ***կու սիրեմ*** քեզ:

Պայմանական եղանակի իմաստը գրաբարում արտահայտվում է ստորադասական եղանակի ապառնիներով, արդի հայերենում՝ *կ-* եղանակիչով, սակայն միջին հայերենում այդ մասնիկով և՛ ներկայի իմաստ է արտահայտվում, և՛ պայմանականի. օրինակ՝ Եւ ի կովտան այլ հարամ արիւն կայ. այնոր Համար որ զդանակն մամիլ ***կասեն***, որ երբ ***կու մորթեն***՝ նա հարամն ***կու երթայ*** և հալալն ***կու մնայ***: Վասն այնոր համար զվայծեղն ***կու ձգեն*** որ հարամ է [ԱԱ]:

Ես քեզ տեսայ նման լուսոյ, զէտ զարեգակն, որ նոր ***կելնու*** Սիրով են վառեալ ի կարմիր թրփին, Կանաչ ու կարմիր տերն ***կու հագնին*** [ԳԱ]:

Միջին հայերենում արդեն գրաբարի անցյալ դերբայից պատմական հնչյունափոխությամբ [եա>ե, լ>ր՝ կարդացեալ>կարդացեր] ձևավորվել էր վաղակատար դերբայը, սակայն բնագրերում այն հանդես է գալիս մի քանի տարբերակով.

Վաղակատար դերբայ- Չարխի դեղին նետով սիրտս ***դրեր ես***:

Շատ ***դրեր ես*** սիրու զընտան:

Եկեր եմ, որ այրիւմ եւ մոծիր դառնամ:

Կամուրջ ***կապեալ ես***, վարդի նման գունով ատլաս ***հագել ես***:

Վեր ***ես գընացել*** քան ըզսիտբար:

Այս օրինակում վաղակատար դերբայի երեք դրսևորում կա՝ ***1.հագել ես, գընացել ես*** [աշխարհաբարյան վաղակատար], ***2. դրեր ես, եկեր եմ*** [միջինհայերենյան], ***կապեալ ես*** [գրաբարյան անցյալ դերբայ՝ վաղակատար-հարակատարի իմաստով]:

Հաստատական և ժխտական նախադասությունների վերաիմաստավորումը

Լեզվի պատմության բոլոր շրջաններում շարահյուսական մակարդակում գուգահեռաբար հանդես են գալիս հաստատական և ժխտական, անդեմ և դիմավոր, թերի և լրիվ, միակցված և երկկազմ նախադասություններ, կազմում հարացուցային գույգեր և վերափմաստավորվում: Միջին հայերենը այդ իմաստով բացառություն չէ:

Գաղտնիք չէ, որ հաստատական նախադասություններով հաստատվում է որևէ իրողություն, հատկանիշ կամ երևույթ, իսկ ժխտական նախադասությունները ժխտական խոնարհման բայով դրանք բացատում են, սակայն ժխտական բովանդակություն ունեցող ամեն մի նախադասություն չէ, որ քերականորեն կարող է համարվել ժխտական նախադասություն [տե՛ս 9, 71 և 13, 160]:

Համեմատաբար պարզ կառուցվածք ունեն այն վերափմաստավորվող նախադասությունները, որոնց կազմում ժխտական բայի կամ մասնիկի հետ միաժամանակ հանդես են գալիս քերականական այնպիսի միավորներ, որոնք հակադրվում են ժխտական բայաձևով ստորոգյալի քերականական իմաստին՝ նրան բովանդակության պլանում հաստատական երանգ վերագրելով:

Գիտեմ, տե՛ր, քեզ չէ դիժար [հեշտ է],
Ազատել գիիվանդս ի ցավեն.
Ես եմ չարաչար հիւանդ,
Իմ կենաց ճարակն է ի քեն [խԿ]:
Հիմիկ դուք ձեզ պէտ արեք,
Թողեք գշարն, գնացե՛ք հետ բարուն.
Չարին ատեցող լերուք [մի՛ սիրեք]
Իսկ մահացածներին թիվ չկար [շատ էին] [Ոսկի]:

Միշտ խոռվության պատճառով չի հարկ լինում կովել, այլ նաև՝ խաղաղությունը անվտանգ պահելու [ն. տ.]: [Միշտ/հաճախ/ խոռվության պատճառով է հարկ լինում կովել, նաև՝ խաղաղությունը անվտանգ պահելու համար]:

Բայց, առանց բացառման քերականական իմաստ արտահայտող նախադրությունները նույնպես ունակ են ծառայելու նմանատիպ ոճական-շարահյուսական վերափմաստավորման գործառնության իրականացմանը:

Բարձր ես ու հաստ, բայց *օգտակար չես* [վնասակար ես] [ն. տ.]: Իսկ ես, թեպետ նվաստ ու տկար, բայց *օգտակար եմ* ոչ միայն հարուստների, այլև աղքատների համար [օգտակար եմ և հարուստների, և աղքատների համար] [ն. տ.]:

Յանդիման կացուցանե՛ առակս, **թե ոչ ոք կարէ ճոխանալ առաց** անփառից և ոչ **բարձրանալ** առանց անարգից [Ամենքն կարեն ճոխանալ փառքով և բարձրանալ հարգանքով] (ԱԱ): Քերականության շարահյուսական մակարդակում հարացուցային գույգ են երկկազմ, միակազմ, թերի նախադասությունները: Երկկազմ նախադասություններում առկա են երկու գլխավոր անդամներն էլ, դրանք երկբևեռ են, միակազմ նախադասություններում առկա են մեկ գլխավոր կամ մեկ գերադաս անդամ: «Պարզ նախադասության կազմության սույն քերականական հարացույցի մաս են կազմում նաև թերի [այդ թվում՝ գեղչված անդամով] նախադասությունները, որոնք հակադրվում են ինչպես միակազմ, այնպես էլ երկկազմ նախադասություններին: Ի տարբերություն վերջին տիպի նախադասությունների՝ թերի նախադասություններում նախադասության մեկ կամ մի քանի անդամներ չեն գործածվում.... Արտահայտության պլանում միաբևեռ են ներկայանում գեղչված գլխավոր անդամ ունեցող թերի նախադասությունները, սակայն բովանդակության պլանում նրանք նույնպես երկկազմ են» [13, 169]: Թերի նախադասությունների գործածությունը տարբեր կերպ է բացատրվում: Մի դեպքում առանձին անդամների գեղչումը պայմանավորում են «խոսքի տնտեսման» օրենքով. «Տնտեսման օրենքը հատուկ է բոլոր լեզուներին. մարդ աշխատում է, ինչքան հնարավոր է, կարճ խոսել՝ խնայել էներգիա և ժամանակ, դրա համար էլ, հատկապես երկխոսու-

թյուններում, չգործածել այնպիսի բառեր ու բառակապակցություններ, որոնք առանց գործածության ել հասկանալի են: Ահա թե ինչու է լեզուն միշտ ձգտում սեղմության ու կարճության» [15, 60] Բացի այդ՝ գեղչումն իրականացնում է նաև ոճական գործառնությունը՝ « ավելի շատ բնորոշ լինելով առօրյա խոսքին, նույնիսկ երկխոսությունից դուրս գեղչումն ասույթին կենդանի խոսքի հնչերանգ ու դինամիզմ է հաղորդում» [13, 170]:

Նախադասության բոլոր անդամները գեղչվում են տարբեր հաճախականությամբ, սովորաբար ամենից շատ գեղչվում է ենթական, որի գեղչումը ոճական արժեք ունի, այն կարող է գեղչվել և՛ արդեն հիշատակված լինելու դեպքում, և՛ առանց հիշատակված լինելու: Ընդ որում՝ առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանուններով ենթակաները կարող են գեղչվել առանց նախապես հիշատակվելու: *Սովուն չեմ կարեր քայլեր, Նա կասեն, թե՛ Գառմ՝ է կերեր* [Հյրն, 45]: Ջուր տուր իմ ծարաւ լերդիս, Քո սիրտու եմ խիստ փափագել [ն. տ.]:

Ստորոգյալը ևս կարող է գեղչվել ամբողջությամբ կամ մասամբ, այն ամենից շատ իրականանում է անհարկի կրկնությունից խուսափելու նպատակով.

Աբիմելք դատեաց գիսրայել ամս երեք. եւ գկնի նորա [դատեաց] [գիսրայել] Թովղա ամս քսան եւ երկու (ՎԱ):

Մերն խնծորով պիտի Ու դրամ-դրամ շեքերով [դիմավոր բայ-ստորոգյալը, *պիտի*-ն եղանակիչ է] [45]:

Մարիկն ալ վաղո՛ւց մեռել, Ու տըղեկն խիստ որբ մընացեր [օժանդակ բայը] (ն. տ):

Ես՝ աչք ու դուն՝ լոյս, հոգի, Առանց լոյս՝ աչքըն խաւարի [հանգույցը] (ն. տ):

Ես՝ ձուկ ու դուն՝ ջուր, հոգի, Առանց ջուր՝ ձուկըն մեռանի [հանգույցը] (ն. տ):

Երկինք ու գետինք վկայ՝ Միրեր եմ ու չեմ մոռանար [հանգույցը] [55]:

Երեսու է կարմիր ու լան, Ի վարդին տերեն ի նման [հանգույցը] [55]:

.... Քո եարն ի մեռե, հերիք (է) որ գընաս,

Սև օրըն ի բերէ վեր քո արևունն (792):

Երկխոսություններում կարող են գեղչվել ամբողջական նախադասություններ՝ հատկապես այն դեպքերում, եթե դրանք արդեն պարունակվում են գրուցակիցներից մեկի խոսքում. օրինակ՝ Ատ վո՛վ է երդիկս եկեր, Որ օտար հողըն կու սողայ. Թե՛ իմն ես՝ նա վա՛ր արի, Թե՛ օտար ծաղիկ՝ նա գընա. –Ո՛չ քուկն եմ՝ ի վար գալու, Ո՛չ օտար ծաղիկ՝ գընալու. Եկեր եմ ի քո սիրտու, Ո՛չ գալու եմ, ո՛չ գնալու (44): Մարմինն ի հողուն ի դուրս Մէկ խօսօք գեղեցիկ վըճարեց, Թ՝ «Ես հող էի՝ Լ ի հող դարձայ» (415): Կարող են գեղչվել նախադասություններ տարբեր անդամներ. «.... ամենահաճախադեպը թերևս երկխոսությունների անքակտելի մաս կազմող հեղինակի խոսքի հանգման (հաղորդման) խնդիրն է:

Ասեն կանայք [ցնա]. «Դու կոչեա զառաջնորդքն մեր, եւ [մեր] դէմ յանդիման վկայեմք նոցա» (ԹՄ): Նա դառն ոգով ասաց [ցնոսա]. «Ո՛վ որդիք, [դուք] լուարուք ինձ. վայ եւ եղուկ է ամենայն մարդկան» (ՎԱ): Այնչափ սուրման հատյց Յովանէսն եւ վճարեց [Յովանէսն] [այնչափ] [սուրման] լման ինձի (Կ-Գ): Կու գան ու կուտան [ինձ] հազար, Չե՛մ առնուր ու քեզ չե՛մ ի տար [նոցա] (75): Զգինդս յականջէս հանին, Զմատանին [ի մատնէս] [հանին] (920) [տե՛ս 6, 177]: Բովանդակության պլանում գեղչված շարահյուսական բոլոր միավորները հեշտությամբ վերականգնվում են, այդ պատճառով արտահայտության պլանում թերի նախադասությունները բովանդակության պլանում ներկայանում են որպես լրիվ նախադասություններ, այսինքն՝ հանդես են գալիս փոխաբերաբար, քերականական կարգում իրենց հարացուցային հակադրության գործառնությամբ:

Ամվանական անդեմ նախադասությունները արտահայտության պլանում միակազմ են, իսկ բովանդակության պլանում վերափմաստավորման արդյունքում հայտնվում են բայի համապատասխան ժամանակի բայաձևերը և գոյականների հետ կազմում են բաղադրյալ ստորոգյալ.

Կարմիր ու ճերմակ երես [ունես, կամ ես], Ամ քանի՞ դուն զիս պիտի երես [46]:

Հա յ իմ նոնֆար ծաղիկ [ես], Որ ծովուն մեջըն կու կենաս

Հայ իմ աղանի [ես], պաթառ, Որ թնիտ թէպրիկն է հազար [55]:

Գիշերս ես ի դուրս ելայ, Շատ աստղունք ու բարկ լուսնկայ [կան] [85]:

Նալաթն յաչեռուղ վերայ [լինի], Զիմ թարկիկն է՝ ր տուրի շուտով [117]:

Անվանական միակազմ նախադասության վերաբերյալ կա այլ կարծիք նա, որ այն կարող է լինել նաև դիմավոր կառույցով. «Անվանական միակազմ նախադասության գերադասանդամն արտահայտվում է անուն կամ անուն+հանգույց կաղապարներով: Հնդգմին անվանական միակազմ նախադասությունները լինում են անդեն և դիմավոր, օրինակ Շաքար ու շիրին շրթունք, Երես լի գունով ծաղկունք, Թուխ աչեր ու կամար ունք (ԿԵ, 161), Լաւ, արև օր էր (ԶՍՕ, 146) 258: Գրիգորիոս՝ դրախտ աստուածազարդ, դիրայարմար քնար, դայեակ մանկութեան եւ դաստիարակ (ՀԵ, 151), [1, 181]:

Կան քերականական ռճավորման երևույթներ, որոնք հատուկ են գրաբարին և միջին հայերենին չեն անցել: Այսպես՝ «...բարդ ստորադասական նախադասությունների փոխարեն հաճախ գործածվում են նախդրավոր դերբայական կառույցներով պարզ նախադասություններ: Այսպես՝ հետևյալ օրինակներում ժամանակի պարագա երկրորդական նախադասության իմաստ արտահայտվել է «նախդիր + անորոշ դերբայ» կաղապարի օգնությամբ. «Քանզի *ի բառնայ* ազգին Արշակունեաց, տիրեցին աշխարհիս Հայոց ազգն Սասանայ պարսկի, որ վարեր զհւր իշխանութիւնն արինաւք մոգուց» (Եղ., 6), [9, 16]:

Դասական գրաբարում ենթակայի հետ մեկտեղ հաճախ հանդես է գալիս դիմավոր բայի գործառնություն իրականացնող, բայց ձևականորեն նման ունակություններից գուրկ անկախ դերբայական միավորը՝ անցյալ և անորոշ դերբայը՝ առանց օժանդակ բայի, թեք հոլովներով դրված ենթակաների հետ, անցյալ դերբայը սեռականով ենթակայի, անորոշը՝ տրականով, հայցականով: Առանց օժանդակ բայի գործածվող այդ դերբայները գրաբարում ձեռք են բերում ինքնուրույնաբար իրենց անդեն ձևային կաղապարով նախադասության ստորոգյալի գործառնություն կատարելու ունակություն: Անշուշտ, քերականորեն դերբայը գուրկ է նման հնարավորությունից. նախադասության ստորոգյալ կարող է դառնալ միայն խոնարհված դիմավոր բայը, սակայն նման դեպքերում գրաբարյան դերբայները կիրառվում են փոխաբերաբար, համապատասխան դիմավոր բայաձևի փոխարեն՝ բովանդակության պլանում արտահայտելով վերջինիս ժամանակային, դիմային և թվային հատկությունները:

Անդեն ստորոգյալներով նախադասություններն արտահայտության պլանում միակազմ են, որովհետև ձևականորեն այստեղ ստորոգման քերականական ակտ չի իրագործվում, այլ անցյալ և անորոշ դերբայների միջոցով ենթակային վերագրվում է ընդհանրապես գործողության հատկանիշ՝ առանց թվի, դեմքի, կերպի, ժամանակի որոշակիացման: «Անցյալ դերբայ + ենթակա» և «անորոշ դերբայ + ենթակա» շարահյուսական կառույցները լիիմաստ երկկազմ նախադասությունների ռճական իմաստ են ստանում, որովհետև ստորոգյալի գործառնությամբ կիրառված դերբայական ձևերը վերաիմաստավորվում են՝ ստանալով ռճական նույն համատեքստում գործառնող մյուս դիմավոր ստորոգյալների քերականական հատկանիշները [տե՛ս 9, 34-35]:

Դիմավոր միակազմ նախադասությունները լեզվի պատմության բոլոր շրջաններում դրսևորել են չնչին տարբերություններ: Օրինակ՝ դիմավոր միակազմ նախադասությունները հաճախ ունենում են ընդհանրական իմաստ, հատկապես այն դեպքերում, երբ գործողություն կատարողը անկարևոր է համարվում: Դրանք գերազանցապես ընդհանուրին ուղղված կոչեր, հրահանգներ են. Երբ *ձուկն ի ջրէն գատի, Այլի ջուր ձգեն*՝ նայ ապրի (45): *Թէ չուգես, որ քուֆր ասես, Ձեռքդ տար* ու սիրտդ բըռնէ (222): *Ատոր արեգակ ասեն, Որ ցայթէ ի սար չի բլուր* (173): *Հաւուն, որ նստած տեսնուս, Մի ձգեր գճեռն քո ի քար: Մի խրտահարեր գատ հաւու, Թ՛ ինչ՝ հազար որ հաւն է օտար* (87): *Ճըշմարիտ և ըղորդ կասեն, Որ կու տայ հոգի մեռածին* (911):

Միջին հայերենում ավելի հաճախադեպ են անորոշ-դիմավոր միակազմ նախադասությունները, որոնց գերադաս անդամն արտահայտված է ասացական (հիմնականում՝ ասել)

բայերի հոգնակի 3-րդ դեմքով. *Եկին ու խապար բերին*՝ «Քո սիրած մորձն զքեզ մոռցաւ» (76): *Կասեն*՝ քո ծոցէդ ի վար Գետ ելեր անուշ կու բխէ (88): Իրավացիորեն նշվում է, որ «անորոշ-դիմավոր միակազմ նախադասություններ հանդիպում են միջին հայերենի գրեթե բոլոր ժանրերի գործերում» [6, 138]: Մի քանի օրինակներ Հայրեններից՝ *Իմ գեղեցիկ վարդս է տարած, Զիս անողորմ է լացուցած* (609), Կաթուկ, դուն ինչո՞ւ կու լաս: *Տարեր են ձագերս ի բնէ: Ձագերս ի բնէ տարին, Ուր է իմ բունս խոռիաթ* (736): *«Տէր, ինձ թողութիւն արայ, Զիս մոլար ձանփով կու տանին»* (910):

Միջին հայերենի միակազմ նախադասությունների մեծամասնությունը վերախմաստավորվում է՝ դրսևորելով երկկազմ նախադասության իմաստ:

Հնչերանգով տարբերվող նախադասությունների վերախմաստավորումը

Միջին հայերենում շարահյուսական ուշագրավ հարացույց են կազմում նաև միմյանցից ըստ հնչերանգի տարբերվող պատմողական, հրամայական, հարցական, բացականչական նախադասությունները: Հայտնի է, որ նրանցից յուրաքանչյուրն ունի քերականական իր դրսևորման առանձնահատկությունն ու կիրառության օրինաչափությունները, սակայն շատ դեպքերում դրանք նույնպես գործածվում են փոխաբերաբար՝ հարացույցի մյուս անդամի շարահյուսական գործառնությով: Դրանց մեջ իրենց գործածման հաճախադեպությամբ ու բազմապիսի կիրառություններով առանձնահատուկ տեղ են գրավում հոետորական նախադասությունները. դրանք արտահայտչական զգալի ներուժ ունեցող շարահյուսական կառույցներ են, որոնք իրականացնում են ռճական տարբեր գործառնություններ: Իսկ հոետորական բացականչական նախադասությունները համեմատաբար վերջերս են դարձել լեզվառճական հետազոտությունների առարկա [տե՛ս 9, 93, 13, 179]: Հոետորական հարցական նախադասությունների մեջ հարցումը բովանդակային պլանում պատասխան չի պահանջում, հարցում կարող են արտահայտել նախադասության թե՛ գլխավոր, թե՛ երկրորդական անդամները:

Ի յերկրի ի՞նչ [ենթակա] *կայ նրման քեզ յօրինակ,*

Ես քանի՞ [որոշիչ] *հառաչ բերեմ, կամ ի սրբոտ կենամ ազար,*

Եվ յերակ գօրն ի դուսայ, հոգօք մաշեմ զիս անդադար.

Ես չունիմ հանգըստութիւն ւ՛ ուրախութեան ինձ չըկայ ճար,

Որ մի պահ հանգիստ առնում, կամ դուրանայ կեանքըս դըժար [ԿԵ]:

Ասէ գնա հայրն.

– Որդեա կ, *ճանաչե՛ս* զիս [ստորոգյալ]:

Պատասխանի ետ.

<....> Դու աճապ քաղցր ու լատի՞ ֆ ես [վերադիր] *խօսելով,*

Որ զշաքար ի քո շըրթանցըդ կու ծախես [ԿԵ]:

– *Զիս յոդ [ձևի պարագա] կարեմ ճանաչել, որ զի՛ս ոչ ճանաչեմ* [2, 516]:

Դու յերկնից լուսեղէնքն ես նըմանակ.... /ԿԵ, 239]: Այսինքն **չեմ ճանաչում**

<....> Ով սըրտով էր սիրելի՛, եղաւ հեռի յիսնէ ւ՛ օտար,

Նա օտարին ի ի՞նչ մեղ [ուղիղ խնդիր], *դընեմ, երբ որ լինիմ յիրմէն ազար [վշտացած]:*

Այսինքն՝ **չեմ կարող մեղադրել** [կարելի էր նաև *մեղ-ը* բայական հարադրության վերադիր համարել, սակայն միջին հայերենի բառարանում *մեղ դնել* հարադրություն չկար] [ԿԵ, 249]:

Է՛ գերի սիրտ լի արեամբ, քանի՞ [չափի պարագա] *կենաս հըրովտ ի վառ,*

Կամ, վանց այս սուտ կենցաղոյս քանի՞ [չափի պարագա] *կենաս դուն թըվաքար....*

[ԿԵ, 250]:

Է՛ր կու սիրես [պատճառի պարագա] *զհայու որդին* [ն. տ.]:

Բերված օրինակների հարցումը ձևային-քերականական է, արդեն իսկ ենթադրվում է պատասխանը, կամ էլ պատասխանի կարիք չի զգացվում:

«Ընդհանրապես հոետորական նախադասությունների առանձնահատկությունն այն է, որ այստեղ գործ ունենք կրկնակի վերախմաստավորման՝ հազվադեպ հանդիպող երևույթի

հետ. քերականական փոխաբերության կիրառման շնորհիվ շարահյուսական կառույցը վերափոխատավորման է ենթարկվում իր երկու չափանիշներով՝ ըստ նախադասության երանգի (հարցական նախադասությունը վերափոխատավորվում է պատմողականի) և ըստ գործողության կամ հատկանշի հաստատման/ծխտման (հաստատական նախադասությունը վերափոխատավորվում է ծխտականի կամ ընդհակառակը)» [9, 180-181]:

Ամ ո՞վ էր հաներ վարեր [ոչ ոք]

Զիր եարուկն, որ ես վարեցի: Բերված հարցական նախադասությունը փոխակերպման արդյունքում մի կողմից դառնում է պատմողական, մյուս կողմից էլ ծխտական. **Ոչ ոք չէր հաներ վարեր**

Զիր եարուկն, որ ես վարեցի:

Երբ դուն հետ ինձ սեր չունիս՝ Յէ՛ր չասիր առաջի օրէ – 54: Երբ դուն հետ ինձ սեր չունիս, առաջի օրէ կու ասեիր: Բերենք մի քանի այլ օրինակներ Հայրեններից

Աշխարհը ծով է անիհուն,

է՛ր կու լինիս [չես կարող] անհոգ ի քուն,

Մեղայ ասա և կաց արթուն.

Յակոբ, զարթի՛ր ի քնոյ մեղաց [2, 61]:

Է՛ր կու սիրես [մի սիրիր] գեայու որդին.

Տես թէ կ'ելնէ մէկ մի կու գա՛յ [չի գա].

Ականջըդ խու՛լ Յովաննէսին [2, 69]:

Է՛ր ես ծնայ որդի մեղաց [չախտի ծնեի],

Խիստ անճարակ ես այս գերիս [4, 183]:

Ո՞վ հարցական դերանունը հոետորական նախադասություններում արտահայտման պլանում հարցման գործառույթ չի իրականացնում, այլ ունի ընդհանրական բնույթ:

Թ'այլ ո՞վ լինի գարնան արժան. [ոչ ոք չի լինի]:

Թէ շատ ուտեն, թէ շատ խըմեն,

Նայ ցանկական ատուր գարնան [2, 181]:

Ո՞վ տեսեր [ոչ ոք] ամառն ձիւն, Որ կու գայ ի վերայ մարդուն – 62

14. Ո՞վ [ոչ ոք] զքեզ ռասմեց է՛ի յերես եհան,

Ակըն սարդեհոն, եաղոթ, կարկեհան [2, 172]:

Հիմայ դու ի գատ ելար, Պէմունաթ, զքեզ ո՞վ տեսեր է [ոչ ոք] – 54

Ընդհանրական բնույթ ունեն նաև ո՞ր, ի՞նչ, ինչպե՞ս, քանի՞, ո՞նց հարցական դերանուններով կազմված նախադասությունները.

Մատնեհաբերուն գո՞րն յիշեմ [ոչ մեկը]

Հառաչս ի յերկինքն ելաւ, Ու յերկնիցն ի վայր կու գար ձիւն – 62

Ազվոր, քեզ ի՞նչ եմ արեր [ոչինչ չեմ արեր], Որ խռով-խռով կու հայիս – 61

Ի՞նչ խրատ կու տաս, է՛ անթառամ վարդ.

Ի՞նչ շահ [ոչ մի չահ] իմ յետին խելացն, երբ առջի անունն արեցի: [26.

Ի՞նչ [ոչինչ] առնեն այս գերիս.

Աջօր-ունօք զըրուցն յայտնեմ [2, 239]:

Զեզ ի՞նչ [այսքան] դատար ես [չեմ դիմանա] դիմանամ,

Երբ դուք ի հալ հանեք զլերունք: [2, 168]

Խն Յովասափն ի՞նչ [ոչինչ] տի [չի] լինի.

Իմ սիրտս է պատառ մի միս, Քո սիրուն ինչպե՞ս [չեմ դիմանա] (դիմանամ) – 685.

Մըտիկ դու ծառին արա, թէ քանի [անչափ, շատ] հունար կա ի նա,

Այն ճիւղն որ զպտուղն ունի, քան զդատարկն ի ցած կու կենայ [2, 73]:

Քանի [անթիվ] կանայս առնեն այրի,

Եւ որքա՞ն **[անթիվ]** որք քրիստոնէի.
Որքա՞ն արիւն **[շատ]** հեղեն յերկրի,
Քանի՞ **[շատ]** առնեն բան խոտելի [4, 169]:
Ո՞նց չես խղճալ **[պետք է խղճալ]** աղամորդուն,
Զե՞ս անհաւատ հետ ջրհտընուն [2, 238]:

Հռետորական նախադասությունները հաճախ կազմվում են եղանակավորիչ բառերի, ամենից շատ՝ **մի՞թե** վերաբերականի օգնությամբ, որի միջոցով կասկածի տակ է առնվում արտաբերվող ասույթի հավաստիությունը: Դրա արդյունքում հռետորական նախադասությունը բովանդակության պլանում վերախմաստավորվում է իր հարացուցային հակադրության տեսքով [տե՛ս 13, 182]:

Միթե՛ կարճե՛ **[չի կարճի]** ըզջափ չարին,
Որ մինչ ցայսօր ընդ մեզ անցին [2, 78]:
Թե՛ շատ, թե՛ քիչ ի յետ ձրգեմ՝
Միթե՛ անցնի **[չի անցնի]** հուրս ի խափան [2, 178]:
Բառնամ բողոք որպէս զայրոս.
Միթե՛ կարեմ հայել**[ոչ կարեմ հայել]** ի լոյս [2, 66]:
Միթե՛ բերող լինի **[չի լինի]** պտղին [2, 66]:
Մի՞ թե՛ դու ի քեզ նըման ես**[քեզ նման չես]** [2, 184]:
«Մի՞ թե՛ մայրն չեբեր զիս» [մայրն եբեր զիս]:
Որ չի դիպել այս տառօսիս [4, 183]:

Հռետորական պատկերավորման միջոցների շարքում ուշադրության արժանի է նաև ճարտասանական դիմումը. այն մարդկանց հիմնականում բացակա մարդկանց, ինչպես նաև երևույթներին դիմելու հատուկ միջոց է: «Մովորական կոչից, դիմումից ճարտասանական դիմումը տարբերվում է նրանով, որ այն ոչ բացահայտ ձևով որոշակի միտք, դատողություն է արտահայտում» [13, 186]:

– **Ո՛վ դու չարեաց ծնունդ**, զքեզ ընդէ՞ր ոչ բժշկես, որ զայլս խոստանաս ողջացուցանել [515] **[դու ցարիքների ծնունդ ես]**: Ընդգծված բառակապակցությունը վերախմաստավորվում է պատմողական նախադասության:

Ո՛վ շեր՝ Վարդան անխելացին, **[խենթ Վարդանը՝ անխելացի]**:
Յիմար իբրև զգերգեսացին.
Երբ խօրօզն զարկար գետին՝
Այրի հաւերն ամէն լացին /ՆՀ]:

Բացականչական նախադասությունների վերախմաստավորում

Միջին հայերենի վերախմաստավորվող շարահյուսական կառույցներից են նաև հռետորական բացականչական նախադասությունները, որոնք խոսքին առանձնակի հուզականություն և արտահայտչականություն են հաղորդում: Դրանք վերախմաստավորման հետևանքով բովանդակային պլանում վերածվում են պատմողական նախադասության՝ առանց հուզական-բացականչական հնչերանգի [տե՛ս 9, 119-120]:

Է՛ աղվոր քաղաք, բարձր ու ամուր բերդ,
Է՛ փունճ մանուշակ, կարմիր վարդի թերթ,

Շատ ես լավեր դու աղամորդու լերդ: [2, 171] **[Աղվոր քաղաք ես, բարձր ու ամուր բերդ ես, շատ ես լավել դու աղամորդու լերդ]:**

Ո՛չ մալն, ո՛չ մուլքն, ո՛չ հազինայ.

Գընա՛ բարեաց առաջք արա.

Զի երագի նըման է սա [4, 196]:

Այս բնագրի ընդգծված հատվածը ավելի շատ հրամանի, հորդորի է նման, քան ցանկության: Ահա նման օրինակներ ևս. **Խորտակե՛ ըզմեր քակողըն**, յարո՛ եղջիւր մեզ փըրկու-

թեան, **Օգնեա՛ ազգից քրիստոնէից**, առ քեզ կարդամք ի նեղութեան [199]:

Որքան դերանվան միջոցով կազմված բացականչական հոետորական նախադասությունների վերախմաստավորման գործընթացն ուղեկցվում է բացականչական հնչերանգի ու հիշատակված դերանվան փոխարեն համապատասխան մակբայի կիրառությամբ. Որքա՛ն արին [շատ] հեղեն յերկրի,

Քանի՞ [շատ] առնեն բան խոտելի [4, 169]:

Է՛ փունճ մանուշակ, կարմիր վարդի թերթ,

Շատ ես լափեր դու աղամորդու լերդ [2, 171] [**Աղվոր քաղաք ես, բարձր ու ամուր բերդ**

ես, շատ ես լափել դու աղամորդու լերդ]:

Ո՛չ մալն, ո՛չ մուլքն, ո՛չ հազինայ.

Գընա՛ բարեաց առաջք արա.

Զի երազի նըման է սա [4, 196]:

Ամփոփում

Այսպիսով՝ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջին հայերենում ևս լայն կիրառություն են ստացել տարբեր բնույթ ունեցող նախադասությունների ոլորտներում գործող քերականական փոխաբերությունների [վերախմաստավորումների] զանազան եղանակներն ու միջոցներ, որոնք լրացուցիչ զգալի իմաստներ են հաղորդում մեր լեզվին:

Հետաքրքրական հարացույց են կազմում միմյանցից ըստ հնչերանգի տարբերվող պատմողական, հրամայական, հարցական, բացականչական նախադասությունները: Նրանցից յուրաքանչյուրն ունի իր քերականական դրսևորման առանձնահատկություններն ու կիրառության օրինաչափությունները, սակայն շատ դեպքերում դրանք նույնպես գործածվում են փոխաբերաբար՝ հարացույց կազմող մյուս անդամի շարահյուսական գործառույթով:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-32>

Գրականություն

1. Աբաջյան Ա., Դիլբարյան Ն., Գրիգորյան Ս., Պարոնյան Ն., Խաչատրյան Ա., Միջին հայերենի ուղեցույց-քրեստոմատիա, Երևան, 1919:
2. Առաքելյան Վ. Դ., Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը, Երևան, 1984, 223 էջ:
3. Եզեկյան Լ. Կ., Հայոց լեզվի ոճագիտություն, Երևան, 2003, 197 էջ:
4. Իշխանյան Ռ. Ա., Արդի հայերենի շարահյուսություն. Պարզ նախադասություն, Երևան, 1986:
5. Խաչատրյան Գ. Կ., Շահվերդյան Թ. Ս., Պետրոսյան Լ. Հ., Գրական հայերենի պատմության դասընթաց, մաս Ա, Երևան, 2018:
6. Խաչատրյան Գ. Կ., Շահվերդյան Թ. Ս., Պետրոսյան Լ. Հ., Գրական հայերենի պատմության դասընթաց, մաս Բ, Երևան, 2018:
7. Հովսեփյան Լ. Ս., Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Երևան, 1975:
8. Մկրտչյան Ռ. Խ., Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն, Երևան, 1963:
9. Շահվերդյան Թ. Ս., Դասական գրաբարի շարահյուսական ոճաբանություն, Երևան, 2007:
10. Շահվերդյան Թ. Ս., Հայոց լեզվի պատմական ձևաբանություն, Երևան, 2021:
11. Շահվերդյան Թ. Ս., Հաստատական և ժխտական նախադասությունների վերախմաստավորումը դասական գրաբարում, «Գիտական աշխատություններ», 8, Գյումրի, 2005:
12. Շահվերդյան Թ. Ս., Հովհաննես Թումանյանի «Մի կաթիլ մեղրը», միջնադարյան

- ժողովրդական բանահյուսության մշակումներ. Միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու՝ նվիրված Հովհաննես Թումանյանի ծննդյան 150-ամյակին, Երևան, 1919:
13. Շահվերդյան Թ. Ս., Ոճագիտություն, ուսումնական ձեռնարկ, Երևան, 2010:
 14. Շահվերդյան Թ. Ս., Պարզ նախադասության կազմության ոճական վերլուծատալ-րույնը գրաբարում, «Լեզու և լեզվաբանություն», Երևան, 2005:
 15. Պապոյան Ա. Հ., Բաղիկյան Խ. Գ., Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Երևան, 2003:
 16. Պառնապյան Ն. Ա, Շարահյուսական համանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1970:
 17. Պողոսյան Պ., Բայի եղանակային ձևերի ոճական կիրառությունները արդի հայերե-նում, Երևան, 1959:

Օգտագործված սկզբնաղբյուրների համառոտագրություններ

ԱԱ – Ամիրդովլաթ Ամասիացի
 ԳԱ – Գրիգորիս Աղթամարցի
 ԽԿ – Խաչատուր Կեչառեցի
 ԿԳ – Կիրակոս Գանձակեցի
 Հլպք – Հայոց լեզվի պատմության քրեստոմատիա
 ՀՀմք – Հայոց հին և միջնադարյան արձակի քրեստոմատիա
 Հյրն – Հայրեններ
 ՄԳ – Մխիթար Գոշ
 ՅԵ – Յովհաննես Երզնկացի
 ՅԹ – Յովհաննես Թլկուրանցի
 ՆՀ – Նաղաշ Հովնաթան
 ՎԱ – Վարդանայ վարդապետի Հաւաքումն պատմութեան
 Ոսկ – Ոսկեփորիկ
 Ֆր – Ֆրիկ

Транспозиция в среднеармянском литературном языке

Шахвердян Тереза

Резюме

Ключевые слова: *уровни языка, синонимичные грамматические конструкции, морфологическая стилистика, синтаксические метафоры, переосмысление отрицательных, неполных и полных, простых и составных (также интонационно различающихся предложений)*

Как морфологическая, так и синтаксическая стилистика среднеармянского языка обладают собственными выразительными и образными системами. Основой подобных языково-стилистических явлений выступает переосмысление грамматических форм, проявляющееся, в частности, в виде грамматической метафоры. Одной из форм реализации данного процесса является использование грамматических синонимов – различающихся по форме языковых структур, передающих идентичное или близкое по значению содержание.

В то время как синонимия традиционно изучается преимущественно на лексическом уровне – через анализ семантической обобщённости и функциональной дифференциации лексических единиц, – в случае грамматической метафоры речь идёт о функционировании

форм в рамках парадигматического противопоставления.

На синтаксическом уровне широкое распространение получило использование неполных, но синонимичных по смыслу конструкций вместо полных двусоставных предложений. В подобных структурах могут опускаться как главные, так и второстепенные члены предложения, при этом их семантическое содержание сохраняется и воспринимается читателем или слушателем в полном объеме.

Утвердительные и отрицательные предложения образуют синтаксическую парадигму, в рамках которой отрицательная конструкция способна выражать утвердительное значение, а утвердительная – передавать оттенок отрицания.

Предметом особого интереса является также интонационно обусловленная парадигма повествовательных, вопросительных, повелительных и восклицательных предложений. Несмотря на различия в грамматическом оформлении и правилах употребления, эти синтаксические конструкции нередко функционируют метафорически, заменяя друг друга и выполняя сходные синтаксические функции.

Transpositions in Middle Literary Armenian

Shahverdyan Tereza

Summary

Key words: *linguistic levels, synonymous grammatical constructions, morphological stylistics, syntactic metaphors, reinterpretations of negative, incomplete and complete, simple and compound, intonationally differentiated sentences*

Both morphological and syntactic stylistics in Middle Armenian exhibit their own distinctive systems of expressive and figurative representation. At the core of these phenomena lies a stylistic-linguistic process known as reinterpretation or grammatical metaphor. One of its manifestations is the effective use of diverse synonymous grammatical units – different formal structures expressing the same or similar semantic content.

Synonymy has predominantly been studied at the lexical level, focusing on the semantic commonalities and functional nuances of synonymous words. In the case of morphological metaphors, grammatical forms are employed within paradigmatic oppositions.

At the syntactic level, incomplete synonymous constructions are often used in place of complete compound sentences. In such cases, although the primary or sometimes even secondary sentence constituents may be absent in the expression plane, their semantic content is fully perceived.

Affirmative and negative sentences form a syntactic paradigm in which negative constructions may convey affirmation, and affirmative ones may imply negation.

Also of interest is the paradigm of declarative, interrogative, imperative, and exclamatory sentences differentiated by intonation. Each possesses unique grammatical features and usage patterns, yet frequently, they function metaphorically – substituting one another in terms of syntactic role.

Ներկայացվել է	31. 01. 2025 թ.
Գրախոսվել է	20. 02. 2025 թ.
Ընդունվել է տպագրության	05. 06. 2025 թ.

Դարձվածային արժեք ունեցող բայաձևեր

Պոդոսյան Ալբերտ

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-45>

***Հանգուցային բառեր և արտահայտություններ.** դարձվածք, փոխաբերություն, ըղձական եղանակ, հարակատար դերբայ, ենթադրական եղանակ, փոխանվանական կիրառություն, ուղիղ իմաստ*

Նախաբան: Ներկա հոդվածում մեր ուսումնասիրության նյութը դարձվածային արժեք ունեցող բայաձևերն են:

Ուսումնասիրության հիմնական նպատակն է գիտականորեն արժևորել առանձին անդամ և դիմավոր բայաձևերի դարձվածային արժեքը:

Հաշվի առնելով վերոնշյալ նյութի հպանցիկ ուսումնասիրությունը՝ մեր առաջադիր խնդիրներն ենք համարել՝

ա) առանձնացնել դարձվածային արժեք ունեցող անդամ և դիմավոր բայաձևեր,

բ) ներկայացնել նման կիրառության դեպքեր:

Հոդվածը դարձվածային արժեք ունեցող բայաձևերը և դրանց կիրառությունները ներկայացնելու փորձ է, որն առայժմ բացակայում է մեր իրականության մեջ:

Թեմայի արդիականությունը դարձվածային արժեք ունեցող առանձին բայաձևերի քննության նկատմամբ հետաքրքրությունն է:

Ստացված տեսական և գործնական արդյունքները կարող են օգտագործվել «Ժամանակակից հայոց լեզու (Դարձվածաբանություն և բառարանագիտություն)» դասընթացի ուսուցման գործընթացում:

Ուսումնասիրության համար կիրառել ենք նկարագրական, վերլուծական, համադրական, երբեմն էլ՝ վիճակագրական մեթոդները:

Հոդվածի բովանդակությունը: Տվյալ լեզվի բառապաշարի հարստացման հիմնական միջոցներից են դարձվածքները, որոնք կարևոր դեր ունեն խոսքը արտահայտիչ, պատկերավոր, դիպուկ դարձնելու, նաև այն կրկնությունից ու միօրինակությունից զերծ պահելու համար:

Հայ լեզվաբանության մեջ դարձվածքի առաջին սահմանումը ձևակերպել է Մ. Աբեղյանը: Նա նշում է. «Ոչ միայն առանձին բառերի նշանակությունն է փոխվում, այլ նաև բառերի կապակցությունների: Դրանք նույնպես սկզբում միայն պատահաբար են առնվում նոր նշանակությամբ, բաց այս վերջինը կրկնվելով՝ դառնում է սովորական: Բառերի այսպիսի նորիմաստ կապակցությունները սովորաբար կոչվում են դարձվածքներ, որոնք, սակայն, մի բառի նշանակություն են ստանում ... » [1, 151]: Հետագայում դարձվածքի իրենց սահմանումը տվեցին Ա. Մուրվալյանը, Ե. Գևորգյանը, Պ. Բեդիրյանը, Խ. Բադիկյանը, Ա. Մարգարյանը, Ա. Մուքիսայանը, Լ. Եզեկյանը, ուրիշներ [7, 15; 4, 23; 3, 5; 2, 17; 6, 301; 9, 296; 5, 197]:

Դարձվածքը կազմող բաղադրիչների նվազագույն քանակի հարցում լեզվաբանների տեսակետները տարբեր են:

1. Դարձվածքը պետք է կազմված լինի առնվազն երկու բաղադրիչներից (Խ. Բադիկյան, Ա. Մուքիսայան, Լ. Եզեկյան) [2, 17; 9, 296; 5, 197]:

2. Դարձվածքը կազմող բաղադրիչների նվազագույն քանակի մասին չի նշվում (Մ. Աբեղյան, Ա. Մուրվալյան, Ե. Գևորգյան) [1, 151; 7, 15; 4, 23]:

Սույն ուսումնասիրության մեջ մեզ հետաքրքրողը երրորդ տեսակետն է, այն է՝ դարձվածքի արժեք կարող են ստանալ նաև մենաբառերը: Հ. Պետրոսյանը գրում է. «...

առանձին բառը հազվադեպ կարող է դարձվածքի արժեք ունենալ» [8, 175]: Լեզվաբանը օրինակներ չի նշում՝ բավարարվելով այսքանով:

Այլ է Պ. Բեդիրյանի կարծիքը: Նա գտնում է, որ «.... կապակցություն–դարձվածքների հսկայական պաշարի կողքին, ունենք նաև բառ–դարձվածքներ, որոնք որոշակի քանակ են կազմում» [3, 6]: Ապա ներկայացվում են նաև օրինակներ *ներողություն և // ներեցե՛ք // կներե՛ք* և կներե՛ք (= ներող կլինե՛ք // ներողություն կանե՛ք), *թքած, խսկց. մեռած, զարգանա՛ս*, արևմտհ. *հո՛ղ(ը)ս* և այլն [3, 7]: Նշենք, որ 1971 թ. հրատարակված իր «Դարձվածաբանական ընդարձակ բառարանում» լեզվաբանը նման օրինակներ բերում է, սակայն 2011թ. հրատարակված «Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանում» նման ոչ մի օրինակ չի նշում: Այսպես՝ *ներողություն* բառով ներկայացվում են հետևյալ դարձվածքները

Ներողություն՝ ն բրդիր (բրդեք) խսկց. – Չսպասե՛ք (չսպասե՛ք), փխրժակիդ քացախ,

Ներողություն՝ ն կաննե (կանեք...) / *Աղտեղ՝ այստեղ արդեն կներես (կներեք)* – չհամաձայնվելու, չընդունելու, բացառելու արտահայտություն է:

«Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարանում» *թքած, մեռած* բառերը ևս հանդիպում են միայն կապակցությունների մեջ, իսկ *զարգանաս, հոգ(ը)ս* բառերով կազմված դարձվածքներ ընդհանրապես չեն հանդիպում:

Ա. Մարգարյանը գտնում է, որ «Բառեր կան, որոնք վերլուծական բարդությունների պես այլաբերական-փոխաբերական իմաստով գործածվելով՝ նույնպես դարձված(ք)ային նշանակություն են ստանում, ինչպես՝ *աղվես* (= խորամանկ, հնարագետ, ճարպիկ, իր շահերը լավ գիտցող մարդ), *ոչխար* (= ինքնուրույն մտածողությունն ինք գուրկ, կուրորեն ուրիշին հետևող մարդ), *օձ* (= ժանտ, նենգ, շատ չար արարած), *դոճուհի* (= սիրային արկածներ որոնող հետամտող մարդ) և այլն» [6, 307]:

Չվիճարկելով հարգարժան լեզվաբանների վերոնշյալ տեսակետները՝ մեր նպատակն է խոսել առանձին բայաձևերի մասին, որոնք որևէ դերբայական ձևում կամ որևէ եղանակի որևէ ժամանակաձևում կարող են դարձվածային արժեք դրսևորել:

Նախ՝ հիշենք, որ «փոխաբերությունը բառի՝ արտահայտության գործածությունն է, ուղղակի իմաստից գատ, այլ որևէ նշանակությամբ» [8, 30]: Սա նշանակում է, որ բայը փոխաբերաբար կարող է գործածվել բոլոր ձևերով (անդեմ և դիմավոր), այլ ոչ թե կոնկրետ դերբայական կամ կոնկրետ եղանակային կամ ժամանակային որևէ ձևում: Կարծում ենք, որ այստեղից պետք է եզրակացնել՝ եթե բայի սոսկ որևէ բայաձև կարող է գործածվել տվյալ նշանակությամբ, սա ոչ թե փոխաբերական իմաստ պետք է դիտել, այլ դերբայական արժեք:

Այսպես՝ *սատկել* բայը, ըստ Էդ. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի» (այսուհետև՝ ԱԲԲ), ունի հետևյալ (ուղիղ և փոխաբերական) իմաստները. 1. *մեռնել* (կենդանիների մասին), 2. *մեռնել* (անարգ.) մեռնել, մահանալ (անարժան՝ չարագործ մարդկանց մասին), 3. փխբ. *չարչարվել, տանջահար լինել*, 4. փխբ. պայթել, պատռվել, ճգնել (մի բանի հասնելու նպատակով):

Ինչպես երևում է, ներկայացված իմաստները արտահայտում են կյանքի ավարտ, տանջանք, չարչարանք (բացառությամբ չորրորդ իմաստի):

Չեղք բերելով դարձվածային արժեք՝ այս բայը կարող է գործածվել բոլորովին այլ նշանակությամբ: Այսպես՝ ըղձական եղանակի ապառնի ժամանակաձևի երկրորդ դեմքով այն արտահայտում է դրական գովաբանական իմաստ, խոսքն ասվում է սիրով: Օրինակ՝ — *Սատկես դու*, — Մուրադը կատակով բամփեց Վարոսի գլխին ու հեռացավ (ՎՀ*): մինչև անգամ Միմոն ծերունին լսեց նրա կանչի այդ խնդրողականությունը, այսինքն որ ողջ-առողջ եկած մի չորս-հինգ տղա էր ու մի կոլխոզ որբեկայրի, լսեց ու գործի վրա չարչարվելով քրթմնջաց «սատկես դու, *սատկես*, որ քեզ պառավել չկա» (ՀՄ*):

Ըղձական եղանակի ապառնի ժամանակի երրորդ դեմքով նշված բայը գործածվում է *ինչ էլ անի, ինչ էլ ուզում է անի* նշանակությամբ: Օրինակ՝ Գարունը բացվի, նորից եմ գնալու

Բաքու փող աշխատելու: Վանի վալին *սատկի* էլ, մեր տնից պետք է փոխով գուրան դուրս գա (Մ*):

Գովաբանական նշանակությամբ կարող է գործածվել վերոնշյալ բայի հարակատար դերբայը: Օրինակ – Տղե րք, վրա տվեք,– գոռաց դարձյալ Վարդգեսը,– տո մեր մշակն է, տո այն *սատկած* Եղիկն է, ձայնից ճանաչեցի, վրա տվեք (Ա*): Բայց այդ *սատկած* Մարիամը, բերնումը ինչ որ գալիս է, դուրս է տալիս... (Բ*):

Նշված իմաստը առավել ցայտուն է արտահայտվում, երբ հարակատարը գործածվում է փոխանվանական կիրառությամբ: Օրինակ՝ *Սատկածը* երեխա բերելուց հետո էլ էնքան լավիկն է դարձել, որ ափսոսս էլ է գալիս... (ՌԴ*): Ինչ դրուստ է՝ դրուստ: Լավ ձեն ունի *սատկածը*: (ՇԹ*): Թթվել ես ոնց հերվա մածուն, Լծի տակ եզդ է արածում. – *Սատկածին* տեսա՛ր: Ես քեզ եմ ասում, էլ Վաչե՛, Կլորիկ գոբանչիդ պաչեմ. – Ա՛յ դու շան փեսա (ՊՄ*):

Մեռնել բայը ԱԲԲ-ում ներկայացված է տասնչորս ուղիղ և փոխաբերական իմաստներով. բոլորն էլ առնչվում են մահանալուն, ապրելուց դադարելուն, վերջանալուն, ավարտվելուն և այլն:

Դարձվածային արժեքով այս բայի հարակատար դերբայը արտահայտում է հեզմանք, հանդիմանություն, դժգոհություն, սակայն դրանց հետ միաժամանակ նաև մտերմական վերաբերմունք, անհանգստություն դիմացինի նկատմամբ: Օրինակ՝ – Այ *մեռած* Բողե ախպեր,– ծաղրել սկսեց Մաղաքը,– ասում ես գիր ու դալամ չգիտես, բայց քյանդիրբազի (լաբախադաց) տակի մասխարի պես հպարտ-հպարտ դվիթը գոտիկդ ես խրել, գլուխն էլ երևացնում, տեսնողներն էլ կասեն փիլիսոփա ես, երկնքիցն աստղեր ես վեր բերում (ՊՊ*): Ախար, այ *մեռած*, քեզ ի՞նչ ունես շառլատանների հետ, քեզ ո՞վ է ասում, որ նրանց հետ խառնվես (ԱՇ*):

Միբով և քնքշությամբ համեմված մտերմական վերաբերմունք կարող է արտահայտել նույն բայի ըղձական եղանակի ապառնի ժամանակի երկրորդ դեմքը: Օրինակ՝ – *Մեռնե՛ս* դու, Մոսի,– լավեց դահիլճից: Մոսիյանը ծիծաղեց՝ մերկացնելով առողջ ու խոշոր ատամները հաստ շուրթերի միջից (ԴԴ*):

Հանդիմանություն և միաժամանակ անհանգստություն, այլ դեպքում՝ սեր և քնքրուշ վերաբերմունք է արտահայտում նշված բայի ըղձական եղանակի ապառնի ժամանակի առաջին դեմքը (և՛ եզակի, և՛ հոգնակի թվով): Օրինակ՝ *Մեռա* գանգեղով, վերցնող չկա... Ո՛ր էիր... (ԱԱ*): – Բարև, Նորա՛ ջան,– ժպտաց Թամրազյանը. – *մեռանք* քեզ սպասելով:– (ԱրՇ*): «Օ՛յ, մայրիկ ջան, ես *մեռա*» ասելով՝ ծիծաղեց... (ՀվՄ*):

Փոխանվանաբար կիրառվելիս հարակատար դերբայը արտահայտում է հիացմունք, զարմանք: Օրինակ՝ «Ինչ էլ քյահլան ձի է ձեռ գցել *մեռածը*»,– առկայծեց ուղեղում (ՌԱ*): Էդ Կուլարը, *մեռածը*, մի քանի հատ էլ թղթերիցը սրա-նրա ձեռն ա գցել, հրեն որը ծածուկ, որն աշկարա կարդում են ու պատմում ոնց որ ես եմ տեսնում, սաղ գեղը հեղափոխվել, բոլշևիկ ա ուզում (ՄԴ*):

Պռճկվել բայը բացակայում է հայերեն բացատրական բառարաններից: Սակայն առօրյա խոսքում, նաև առանձին հեղինակների ստեղծագործություններում գործածվում է այս բայի հարակատար դերբայի ձևը՝ դիմացինի նկատմամբ դրական կամ բացասական վերաբերմունք ցույց տվող դարձվածային արժեքով: Օրինակ՝ Այ *պռճկված* էլի դու ի (ՆԱՀ*): Ա իս, էս ի՛նչ դրախտ ա, ա՛յ *պռճկված* Կլարա, չմեռար, ջակուգիի մեջ էլ մտար (ՀԱՀ*):

Փոխանվանաբար գործածության դեպքում նշված իմաստները առավել ցայտուն են արտահայտվում: Օրինակ՝ Մընել էդ վախտը էն մեկել պարսիկն ա լուս ընկել, էն *պռճկվածը* ... (ՎՄ*): Ընդիան էն պառավն ու իրա *պռճկվածը* ծվծվում են, թե. – Դուս արեք դրան ըստիան, դուս արեք դրան (ՀՇՀ*): Թարսի բան էր՝ էդ *պռճկվածին* տուն բերի, սիրտս կպավ (ՎՄ*):

Սվաղել բայը ԱԲԲ-ում ներկայացված է հետևյալ իմաստներով. 1. սվաղ քսել, սվաղի

շերտով պատել, 2. փխր. շպարի շերտով պատել, չափազանց շատ շպար քսել, 3. փխր. հարթել, համահարթել, 4. փխր. կիպ կայցնել, ծեփել:

Սակայն այն կարող է գործածվել նաև ստեղծված մարդկանց համոզելու, իրականությունը չասելու, այն թաքցնելու, իրականության մասին խոսելուց խուսափելու նշանակությամբ արդեն դարձվածային արժեքով: Օրինակ՝ Ցուցարարները շատ դժգոհ հեռացան Ռ. Նազարյանից: Ըստ նրանց. «Հանձնաժողովի նախագահը հարցը *սկսեց* ու մեզ ճամփու դրեց» (ԱՄ*):

Թքել բայը, իր հիմնական, առաջնային իմաստներից գատ, ունի նաև «արհամարհանքով՝ անարգանքով մերժել» և «արհամարհանքով հրաժարվել՝ ձեռք քաշել» դարձվածային արժեքները, որոնք կարող է դրսևորել ոչ բոլոր ձևերում, այլ միայն ըղձական ու հրամայական, երբեմն՝ պայմանական եղանակներում: Օրինակ՝ Իսկ դու *թքիր* ու դուրս արի, ի՞նչ ես կպել այդ կոմիտեին, ի՞նչ է տալու քեզ (ՄՀ*): Ծեր մարդն էլ ասաց՝ բա դուք հա՛յ էք: *Թքեց* ու գնաց: Հորս ծննդյան օրը ինչո՞ւ փչացրիք: (ԺԱ*): Պողոսն էլ *կթքի* ու վար ու ցանքը կթարգի (ՀՄՀ*):

Նշված բայը դարձվածային իմաստ ունի նաև հարակատարի որոշ գործածություններում՝ «ինչ լինելու է, թող լինի», «ավելի լավ», «ինձ համար միննույնն է» նշանակություններով: Օրինակ՝ *Թքա՛ճ*, ինչ լինում է լինի, վերջիվերջո մարդ է, չէ՞, ստորությունն էլ իր սահմանն ունի, չէ՞, անամոթությունն էլ իր չափն ունի, չէ՞ (ՊԶ*): *Թքած*, ավելի լավ, այսքան վարագի ես ինչպես պիտի ղեկավարեի... (ՊԶ*): Եվ *թքա՛ճ*, որ ձեր առևտրի մեջ միշտ էլ ամեն ինչ լավ է գնում, ու միայն ծախվում է մի խեղճ ու անօգնական ժողովուրդ (ԲՈՒ*):

ԱԲԲ-ում *ներել* բայը ներկայացված է յոթ ուղիղ և փոխաբերական իմաստներով: Մեզ հետաքրքրողը դրանցից մեկն է, այն է՝ հրամայական եղանակով բայը կարող է գործածվել «մեկի ասածը հերքելու կամ ժխտելու քաղաքավարական եղանակ» նշանակությամբ: Կարծում ենք, որ այս դեպքում բայը հանդես է գալիս դերբայական արժեքով: Օրինակ՝ – Զորավա՛ր, *ներեցե՛ք*, մենք քեզի չենք խնդրած Կարս երթալ, ընդհակառակը, խնդրած ենք Կարսեն հեռանալ, – բացատրեցի ես (ՎՊ*): Սակայն *ներեցե՛ք*, այսօրվա եղելությունը ես վարագույրի հետևում չեմ թողնի: (ԱՇ*): – *Ներիր* դու ինձ, բայց այդպիսի հաշիվ անելու մեջ կա ինչ-որ խղճուկ, չնչին բան (ԼՏ*): – Դու ինձ *ներիր*, բայց ես այդ խաղերին դեմ եմ: Ո՞ւր խաբի, ինչո՞ւ խաբի, եղա՛վ (ԺԱ*):

Նշենք, որ մեզ հանդիպած բնագրային այլ օրինակներում վերոնշյալ իմաստով գործածվել են նույն բայի ենթադրական եղանակի ապառնի ժամանակի երկրորդ դեմքի եզակի և հոգնակի ձևերը: Այսպես – Էդ մեկը *կներես*, ուշացել ես, գիտե՞ս, թե ինչ է նշանակում երեք երեխա ոտի կանգնեցնել, տունուտեղի տեր դարձնել (ՎՊ*): *Կներեք*, բայց ինձ թվում է, որ դա պարզունակ մոտեցում է (ԱՄ*):

Կարծում ենք՝ վերոնշյալը բավարար է ասելու, որ ժամանակակից հայերենում առանձին բայաձևեր (անդեմ և դիմավոր) կարող են որոշ գործածություններում դարձվածային արժեք դրսևորել:

Եզրակացություն: Դարձվածքները հայ լեզվաբանների կողմից պատշաճ ուշադրության են արժանացել: Մակայն դարձվածային կապակցություններ կազմող բաղադրիչների նվազագույն քանակի հարցում ուսումնասիրողների կարծիքները տարբեր են: Դրանք կարելի է ներկայացնել երեք խմբով. 1. դարձվածքը պետք է կազմված լինի առնվազն երկու բաղադրիչներից, 2. դարձվածք կազմող բաղադրիչների նվազագույն քանակի հարցը ուշադրության չի արժանացել, 3. դարձվածային միավորի արժեք կարող են դրսևորել նաև առանձին բառեր:

Ներկա հոդվածում մեր ուսումնասիրության նյութը առանձին անդեմ և դիմավոր բայաձևեր են, որոնք որոշ կիրառություններում կարող են ունենալ դարձվածային արժեք: Այդպիսիք ժամանակակից հայերենում շատ չեն, դրանց թիվը երկու–երեք տասնյակից չի անցնում, միգուցե հենց այդ պատճառով էլ դրանք ուսումնասիրողների ուշադրությունից վրի-

պել են: Նման կիրառությունները չպիտի շփոթել փոխաբերության հետ, քանի որ առանձին բայեր դարձվածային արժեք դրսևորում են ոչ բոլոր, այլ առանձին անդեմ կամ դիմավոր ձևերում:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-45>

Գրականություն

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, «Միտք», 1965, 700 էջ:
2. Բաղիկյան Խ., Ժամանակակից հայոց լեզվի դարձվածային միավորները, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1986, 354 էջ:
3. Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, «Լույս» հրատ., 1973, 230 էջ:
4. Գևորգյան Ե., Հայերենի դարձվածքները, Երևան, ԵՊՀ հրատ., 1969, 136 էջ:
5. Եզեկյան Լ., Հայոց լեզու, Երևան, ԵՊՀ հրատ., 2005, 398 էջ:
6. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու (Բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), Երևան, ԵՊՀ հրատ., 1990, 408 էջ:
7. Մուրվալյան Ա., Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1959, 252 էջ:
8. Պետրոսյան Հ., Հայերենագիտական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., 1987, 686 էջ:
9. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու (Հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1999, 352 էջ:

Բառարաններ

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, «Հայաստան» հրատ., Երևան, 1976, 1615 էջ:
2. Բեդիրյան Պ., Դարձվածաբանական բացատրական բառարան, «Լույս» հրատ., Երևան, 1971, 99 էջ:
3. Բեդիրյան Պ., Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան, ԵՊՀ հրատ., Երևան, 2011, 1408 էջ:

Արևակ (հասանելի է 16.01.2025)

Ա* – Ատրպետ, ԱԱ* – Աղասի Այվազյան, ԱՄ* – Առաւօտ, ԱՇ* – Ալեքսանդր Շիրվան-զադե, ԱրՇ* – Արմեն Շեկոյան, ԲՌԻ* – Բագրատ Ուլուբաբյան, ԴԴ* – Դերենիկ Դեմիրճյան, ԺԱ* – Ժիրայր Անանյան, ԼՏ* – Լև Տոլստոյ, ՀՄ* – Հրանտ Մաթևոսյան, ՀվՄ* – Հովհաննես Մելքոնյան, ՄԴ* – Մաթևոս Դարբինյան, ՇԹ* – Շահեն Թաթիկյան, ՊԶ* – Պերճ Զեյթունցյան, ՊՊ* – Պերճ Պողոսյան, ՊՍ* – Պարույր Սևակ, ՌԱ* – Ռաֆայել Աթայան, ՌԴ* – Ռաֆայել Ղազանցյան, Ս* – Սերիինե, ՍՀ* – Սաղաթել Հարությունյան, ՎԹ* – Վահան Թոթովենց, ՎՀ* – Վլադիմիր Հարությունյան, ՎՊ* – Վարդգես Պետրոսյան, Բ* – Բաֆֆի,

Համացանց (հասանելի է 16.01.2025)

ՀԱՀ* – <https://www.hayeli.am/?p=48202&l=am>

ՀԺՀ* – Հայ ժողովրդական հեթիաթներ: Հ. 8. Խմբ.՝ Նազինյան Ա. Մ.: ՀՍՍՀ ԳԱ. հնագիտ. և ազգ. ինս-տ. Երևան: ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1977. էջ 361:

ՀՄՀ* – <https://hetq.am/hy/article/86679>

ՆԱՀ* – <https://www.facebook.com/newsamarm/posts/>

ՎՄ* – Վահագն Մուղնեցյան, Եկվորներ, Երևան, Յավրուհրատ, 2017:

Резюме

Ключевые слова: фразеологизм, переносность, сослагательное наклонение, причастие прошедшего времени, условное наклонение, дейктическое (заместительное) употребление, прямое значение

Материалом исследования в данной статье выступают отдельные безличные и личные формы глаголов, которые в определенных контекстах могут приобретать фразеологическое значение. В современном армянском языке подобные формы встречаются сравнительно редко: их количество, как правило, не превышает двух-трех десятков. Вероятно, именно по этой причине они до сих пор оставались вне поля зрения большинства исследователей.

Следует отметить, что рассматриваемые случаи фразеологизации не следует отождествлять с переносным значением слов. Речь идет не о лексико-семантическом сдвиге в целом, а о формальной и функциональной ограниченности: фразеологическое значение приобретает не глагол в целом, а лишь его отдельные личные или безличные формы.

Фразеология неоднократно становилась предметом исследования армянских лингвистов. Однако до настоящего времени в научной среде сохраняется разногласие по поводу минимального количества компонентов, необходимого для признания языковой единицы фразеологизмом. Условно можно выделить три основных подхода:

1. фразеологическая единица должна состоять как минимум из двух компонентов;
2. вопрос о минимальной компонентной структуре фразеологизма остается открытым и требует дальнейшего изучения;
3. отдельные слова также могут рассматриваться как фразеологические единицы в зависимости от их семантической и функциональной специфики.

Verb Forms with Phraseological Value

Poghosyan Albert

Summary

Key words: phraseologism, metaphor, subjunctive mood, past participle, suppositional mood, pronominal use, direct meaning

In this article, the research material is separate non-finite and finite verb forms, which in certain cases can acquire phraseological meaning. In modern Armenian, such words are rare; their number does not exceed two or three dozen. Perhaps this is why they have escaped the attention of researchers. It should be emphasized that such use of phraseological units should not be confused with a metaphor, since individual verbs acquire phraseological value not in all forms, but only in certain separate non-finite or finite forms.

Phraseology has repeatedly become an object of research for Armenian linguists, but the opinions of researchers regarding the minimum number of components of phraseological units differ. These opinions can be conditionally divided into three groups:

1. Phraseological units must consist of at least two components.
2. The issue of the minimum number of components of phraseological units remains insufficiently studied.
3. Individual words can also be considered as phraseological units.

Ներկայացվել է 24. 01. 2025 թ.

Գրախոսվել է 24. 02. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 05. 06. 2025 թ.

**Էոնեստ Հեմինգուեյի կարճ պատմվածքների երկխոսությունների
թարգմանական համարժեքության խնդրի շուրջ**

Ջադիյան Նինա

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-51>

Հանգուցային բառեր. *հաղորդակցություն, գեղարվեստական տեքստ, գեղարվեստական թարգմանություն, «այսբերգյան տեսություն», խոսքային գործունեություն, բնագիր և թարգմանվածք, գեղագիտական գործառնություն, գրայայան սկզբունքներ (մաքսիմներ)*

Նախաբան

Երկխոսությունը որոշակի մասն է կազմում գեղարվեստական ստեղծագործության՝ անկախ ժանրային տարբերակումից: Դրանում հստակ երևում է խոսողի մտավոր և հուզական վիճակը: Գեղարվեստական երկում երկխոսությունը կրում է երկակի բնույթ: մի կողմից երկխոսական խոսքը ենթադրում է հեղինակի կողմից դրա մշակվածությունը, մյուս կողմից էլ անպայման հենվում է կենդանի խոսակցական լեզվի վրա: Գեղարվեստական տեքստի հեղինակը վերարտադրում է կենդանի խոսակցական լեզուն երկխոսությունների մեջ, որն ինքնին վկայում է, որ այդ վերարտադրումը բացարձակ կրկնությունը չէ այն ամենի, որ կա առտինին ժողովրդախոսական լեզվում: Գեղարվեստական տեքստում երկխոսությունների մեջ խոսակցական լեզուն կատարում է գեղագիտական գործառնություն, դառնում ստեղծագործության ընդհանուր կառույցի, նրա բովանդակության մի անկապտելի տարրը, և ըստ այդմ էլ ենթարկվում փոփոխությունների: Երկխոսությունը բազմազան և դինամիկ է դարձնում գրական ստեղծագործության տեքստային շարադրանքը՝ մասնակիցների ակտիվ խոսքի միջոցով ստեղծելով իրականության խոսույթային զգացողություն: Գեղարվեստական թարգմանության ընթացքում երկխոսությունների համարժեքների ընտրության հարցում անհրաժեշտ է խստորեն հաշվի առնել և կարևորել բնագիր տեքստի համապատասխանությունը թարգմանվածքին: Թարգմանությունը՝ որպես խոսքային հաղորդակցություն և գործունեության տեսակ, բնագրին զուգահեռ պետք է նկարագրի իրականությունը ոչ որպես այդպիսին, այլ բացառապես որպես հեղինակի մտքի և մտածումների արգասիք: Միով բանիվ, գեղարվեստական տեքստը ներկայացնում է աշխարհի որոշակի պատկերը, որը, ինչ խոսք, դրա հեղինակի համար հավաստի է համարվում, բայց և միևնույն միջոցին՝ ոչ բնավ նույնական, մի բան, որ անպայման պետք է հաշվի առնի թարգմանիչը որպես ի գիտություն: Մույն ուսումնասիրության մեջ դիտարկել ենք Էոնեստ Հեմինգուեյի գործերից երկխոսական հատվածներ՝ առավել տեսանելի դարձնելու խնդրո առարկան: Հոդվածում քննության ենք առել նաև մի շարք հայտնի թարգմանաբան-տեսաբանների մոտեցումներ՝ նպատակ ունենալով պարզելու ոլորտի կարևորության անհրաժեշտությունը և նրանց գիտական հետաքրքրվածության աստիճանը: Այս հետազոտության մեջ երկխոսությունը հիմնականում դիտարկել ենք գեղարվեստական տեքստի թարգմանության համարժեքության ծիրում:

Թարգմանությունը՝ որպես խոսքային գործունեության հատուկ տեսակ, հաղորդակցությունը ընդունում է միջնորդավորված կերպով, որը չի սպառվում ու վերջանում լեզվական նշանների ներառող գործողություններով, այլ ընդհակառակն՝ ունի ավելի բարդ կառուցվածք, որում գործում են արտաքին (լեզվական) և ներքին (խորհրդածական) ծածկագրերը: Նրա անհրաժեշտ մասնիկն է համարվում միջնորդի (այն է՝ թարգմանիչ-մեկնողը) առկայությունը, ով սկզբում հանդես է գալիս որպես խոսքն ընդունող և իրականացնում է գեղարվեստական տեքստ հասկացությունը, այսինքն՝ փորձում է բացահայտել իմաստը, այնուհետ իրականացնում է լեզվական վերաճածկագրում: Գեղարվեստական տեքստի թարգմանությունն ունի առավելապես մեկնաբանական բնույթ: Այսպես, վերլուծելով տեքստի իմաստա-

բանական փոխակերպումները, որոնք ծագում են գեղարվեստական խոսքի թարգմանության ժամանակ և կապված չեն միևնույն բնագրի լեզվի և փոխադրված լեզվի համակարգային տարբերությունների հետ, կարելի է ստանալ թարգմանչի անձնական որակների վերաբերյալ համապատասխան պատկերացում: Մեր խնդրո առարկան է Էռնեստ Հեմինգուեյի կարճ պատմվածքներում տեղ գտած երկխոսությունների թարգմանական համարժեքության ուսումնասիրության խնդիրը, որը դիտարկել ենք ներհայեցական վերլուծության տեսանկյունից և հեղինակի ստեղծած գրական հնար «Այսբերգյան տեսության» լույսի ներքո, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ տեքստ-ենթատեքստ հարաբերակցություն: Մեր կատարած թարգմանության ժամանակ աշխատել ենք հետևել համարժեքային առաջնահերթության խնդիրներին:

1. բնագրի տեքստին հարազատություն,
2. ոչ հաճախադեպ հումանիշային թարգմանություն, բառապաշարի յուրահատուկ ընտրություն,
3. համարժեքային միավորի խիստ ընտրություն,
4. մանրամասն նկարագրական մեկնությունից խուսափում,
5. ավելորդաբանությունից խուսափում,
6. հուզական-իմաստային հատկանշի կարևորում,
7. զուտ փոխադրումից խուսափում (քանի որ այդ դեպքում տեքստը կարող է ձեռք բերել նոր հուզական-իմաստային հատկանիշ):

Քանի որ թարգմանությունը իրենից ներկայացնում է համարժեքների փոխանակման մեթոդ, ապա թարգմանիչը պետք է հնարավորինս հեռու լինի բառարանային-դարձվածքային արտաքուստ համընկնումներից և ելնի բացառապես տեքստի բովանդակությունից, գաղափարական ուղղվածությունից, ոճից, և, ինչ խոսք, համարժեքային անհրաժեշտությունից: Որպես թարգմանիչ կարծում եմ՝ խիստ անհրաժեշտ է նախնական աշխատանք ձեռնարկելը, թարգմանության մի շարք կաղապարներ մանրամասն դիտարկելը, նախ՝ թարգմանության փոխանցման կաղապարը, այնուհետև՝ թարգմանության իրադրության կաղապարը: Առաջինը խորհրդածական մի շարք գործողությունների պայմանական նկարագրությունն է, գործողություններ, որոնք թարգմանիչը կատարելով կարող է իրականացնել բնագրային ողջ տեքստում: Սակայն հարկ է նշել, որ դրանք հաճախ կրում են պայմանական բնույթ, քանի որ առավելագույնս չեն արտացոլում թարգմանչի իրական գործողությունները բնագրային տեքստի թարգմանության ստեղծման գործընթացում: Ընդհանրապես նմանօրինակ կաղապարները բացահայտում են թարգմանության լեզվական մեխանիզմի գործառնության առանձնակի կողմեր: Այժմ դիտարկենք միջլեզվական համարժեքության խնդիրը ընդհանուր առմամբ և է. Հեմինգուեյի մի շարք գործերում՝ մասնավորապես: Է. Հեմինգուեյի պատմվածքները, խիստ ու հակիրճ լինելով հանդերձ, աչքի են ընկնում յուրովի պատկերայնությամբ և ըստ այդմ էլ՝ լեզվառճական ընդգծված առանձնահատկություններով, ուստի դրանք մեկնելիս հարկ է առանձնակի ուշադրություն բերել ասելիքի ներքին հուզական հագեցվածությանը՝ ճիշտ համարժեք գտնելու ակնկալությամբ, հատկապես որ հեղինակի ստեղծագործական մտածողությանը բնորոշ է թեմատիկ-գաղափարական հակասականությունը: Նկատի առնելով, որ բնագրի բառային, շարահյուսական արտահայտչամիջոցները ինքնին կազմում են տվյալ հեղինակի գեղարվեստական ձեռագիրն ու կերպը, հնարավորինս պետք է խոր վերլուծության ենթարկելով փորձել տալ թարգմանական-մեկնողական համարժեք տարբերակ: Այստեղ պետք է անպայման հաշվի առնել գեղարվեստական թարգմանության մեջ հայտնի այն դրույթը, ըստ որի՝ տեքստերի թարգմանական հիմքում ընկած է միջլեզվական բառային համեմատություններից ամենաեականը՝ լեզվաբանական համեմատությունը, և անպայման հետևել դրան: Է. Հեմինգուեյի պատմվածքառարկայի թարգմանական համարժեքների որոնման ճանապարհին ի նկատի ենք ունեցել նաև բառային թարգմանական համապատասխանությունները, որոնք դասակարգվում են ըստ հաղորդվող տեղեկու-

թյան ծավալի, այն է՝ 1) լիակատար և 2) մասնակի: Առաջին դեպքում հաղորդված տեղեկության ծավալը բնագրում և թարգմանության մեջ լրիվ համընկնում է, մինչդեռ երկրորդի ժամանակ ասելիքի հաղորդված իմաստային ծավալները բնագրում և թարգմանվածքում կարող են համընկնել կամ մասնակի կերպով, կամ լիովին, սակայն տեղեկությունները կարող են և չհամընկնել: Բառային միավորների համապատասխանությունը դասակարգվում է նաև ըստ լեզվում նրանց գործածման բնույթի. 1. հաստատուն համարժեք (առաջնային բացարձակ հոմանիշներ), 2. դիպկածային համարժեք (ստեղծվում են բացառապես թարգմանության գործընթացում և պայմանավորված են բնագրի ռոժով, թարգմանվող լեզվի առանձնահատկություններով և թարգմանչի ստեղծագործական անհատականությամբ): Այս և նման այլ համարժեքային մոտեցումներ մանրամասն քննության ենք առել է. Հեմինգուեյի պատմվածքների՝ մեր կատարած թարգմանության գործընթացում: Մեր դիտարկած գործերում առկա է երկխոսությունների տարաբնույթ ներկայություն, որն առավել տեսանելի է դարձնում հեղինակային խոսքի կենդանությունն ու դինամիկ ընթացքը: Պատմվածքներում մենք հիմնականում ուշադրություն ենք դարձրել գործաբանական համարժեքության խնդրին հաստատուն և դիպկածային տարատեսակների դիտանկյունից: Մեր ուսումնասիրություններում շատ ենք կարևորել հանրահայտ տեսաբան Ջ. Քեթֆորդի թարգմանական տեղաշարժերին վերաբերող մոտեցումը, որը ուղեցույց է լեզվից լեզու անցնելու ճանապարհին հնարավոր խոթերը պատճառաբանելու և բացատրելու հարցում [3]: Մեզ համար հետաքրքրական է և վերլուծական առումով ուսանելի նաև գործածական թարգմանաբան Ջ. Հաուսի «բաց և փակ» թարգմանության մշակման տեսությունը [5]: Թարգմանական և վերլուծական գործընթացում հաճախ առնչվում ենք նաև հայտնի տեսաբան Ջ. Բելլըրի թարգմանական համարժեքությանը վերաբերող մոտեցման հետ և գտնում ենք, որ նրա կողմից առաջադրված քերականական և տեքստային համարժեքությունը շատ իրատեսական է և վերլուծական առումով արդյունավետ [2]: Մեր կատարած թարգմանությունների մեջ առավելապես տեղ ենք տվել հաստատուն համարժեքներին, սակայն և երբեմն՝ դիպկածայինի դեպքերի: Այսպես, հեղինակի «Կատուն անձրևի տակ» («Cat in the Rain») պատմվածքի որոշ երկխոսական հատվածներ.

“I’m going down and get that kitty”, the American wife said.

“I’ll do it”, her husband offered from the bed.

“No, I’ll get it. The poor kitty out trying to keep dry under a table” [4, 159].

Հմում.

– Իջնում եմ, էդ կատվիկին բերեմ,– ասաց ամերիկուհին:

– Ես կգնամ,– առաջարկեց ամուսինը անկողնու միջից:

– Չէ՛, ես ինքս: Խեղճ փիսիկը փորձում է մի կերպ էնտեղ սեղանի տակ չոր մնալ [1, 12]:

Թարգմանական հատվածում հիմնականում պահպանված է բառային-շարահյուսական կառուցվածքի հաստատուն համարժեքությունը: Մեկ այլ հատվածի երկխոսության մեջ.

– Ha perduto qualche cosa, Signora? (Դուք ինչ-որ բան եք կորցրել, սիրույրա [4, 160]:

– Էստեղ մի կատու կար,– ասաց ամերիկուհին:

– Կատո՞ւ,– սպասուհին ծիծաղեց:– Անձրևի տա՞լկ:

– Այո՛,– ասաց կինը,– սեղանի տակ: Հետո՝ – Օ՛, էնքան էի ուզում դրան: Փիսիկ էի ուզում [1, 13]:

Թարգմանական համարժեք-տարբերակում մեկ ուրիշ լեզվի՝ որպես օտարաբանության առկայությունը տեքստին հաղորդում է յուրատիպ հուզարտահայտչական երանգ, որը վկայություն է կատարվող գործողության տեղանքի և նաև ընդգծում է պահի դրամատիզմը:

Պատմվածքի ավարտին կառուցվածքային առումով ուշագրավ է հետևյալ մենախոսություն–ինքնախոսություն–երկխոսությունը, որն արտաքուստ է մենախոսություն՝ ներքին լարվածությամբ և հուզումով հագեցած՝ ընդդեմ դիմացինի անհույս անտարբերության:

Այսպես.

“And I want to eat at a table with my own silver and I want candles. And I want it to be spring and I want to brush my hair out in front of a mirror and I want a kitty and I want some more clothes” [4, 162].

Հմմտ.

– Եվ ուզում եմ սեղան նստել իմ սեփական արծաթե սպասքով, ու մոմեր եմ ուզում: Եվ ուզում եմ, որ գարուն լինի, ու մազերս եմ ուզում սանրել հայելու առաջ, ու մի փիսիկ եմ ուզում, ու մի քանի նոր շոր ել [1, 14]:

Այստեղ կրկնվող բազմաթիվ “and”-երի հայերեն «և» և «ու» տարբերակները միտումնավոր են գուժադրվում՝ ուժգնացնելու կերպարի հուզական վիճակի ռիթմը:

Մեկ այլ հատված «Բլուրներն ասես ճերմակ փղեր» (“Hills like White Elephants”)-ից, որը կառուցված է ակտիվ երկխոսական հենքի վրա և, մեր խորին համոզմամբ, կրում է համարժեքության մեր հիշատակած բոլոր հնարավոր տարբերակները (ներառյալ մի շարք ոճական պատկերավորման միջոցներ): Հմմտ.

“They are lovely hills,” she said. “They don’t really look like elephants. I just meant the coloring of their skin through the trees” [4, 164-165].

– Սքանչելի բլուրներ են,– ասաց նա:– Երևի թե էնքան էլ նման չեն ճերմակ փղերի: Պարզապես նկատի ունեն, որ հենց էդպես էլ փղերը ճերմակ երանգ են ստանում ծառերի արանքից [1, 17]:

Այստեղ փղերի և բլուրների համեմատությունը, խորհրդանիշ լինելով հանդերձ, ունի այլաբանական իմաստ-ստեղծ, այն է՝ երջանկություն (նոր կյանքի ծնունդը) և փղերի ոչ հստակ երևալը ինքնին խոստուն վկայություն է հեղինակի փիլիսոփայության (կյանքի և մահվան հերթագայության գաղափարը):

Եվս մի կարճ դիտարկելիք երկխոսական հատված հեղինակի «Տասը հնդկացիներ» (“Ten Indians”) գործից.

“Were they-were they-”

“Were they what?”

“Were they happy?” [4, 45].

Հմմտ.

– Բսկ նրանք... նրանք...

– Նրանք՝ ինչ:

– Բսկ նրանք ուրա՞խ էին [1, 32]:

Այստեղ հավելյալ դիպվածային «իսկ» բառը յուրօրինակ հուզականություն-լրացում է հաղորդում կերպարի հոգեվիճակին և, թերևս, միանգամայն հարիր է հայերենի բարեհնչյունությանը:

Այս և նման այլ հատվածներում փորձել ենք պահպանել երկու լեզուների բառային-շարահյուսական կառուցվածքի ամբողջականությունը՝ հնարավորինս հարազատ մնալով դրանց օրինաչափություններին: Այստեղ և, ընդհանուր առմամբ, անչափ կարևոր է թարգմանչի դերը որպես փոխադրվող տեքստի մեկնիչ, քանզի նրանից է մեծապես կախված երկու լեզվական մշակույթների հավուր պատշաճի փոխգործողության «ճակատագիրը»: Բառացի թարգմանությունից խույս տալու համար թարգմանիչը, որպես տվյալ հեղինակի շահերի պաշտպան, պետք է գտնի կառույցի իմաստային համարժեքը, որը փոխադրվող լեզվի մեջ լավագույնս հնչի բոլոր առումներով: Մեր խորին համոզմամբ, որքանով բնագիրն ու թարգմանվող լեզուն օրինաչափորեն համարժեք լինեն իրար, չխաթարեն տեքստի ինքնատիպությունը, այնքանով թարգմանություն-մեկնությունը բարձրարժեք կլինի: Հարկ է նշել այն մտահոգությունը, որ թարգմանության գործընթացում համարժեքության խնդիրն իրականացնելու ճանապարհին կարող է նաև կտրականապես խախտվել լեզվական համարժեքությունը: Սա խոստայային գործառնության միջմշակութային իրականացման հետ է

կապված՝ լեզվական քանակից դեպի հաղորդակցական որակ՝ տարանցիկության պայմաններում:

Վերջաբան

Այսպիսով, շնորհիվ իրականության խոսքային արտացոլման՝ ճանաչողական, իմաստասիրական, հաղորդակցական-գործաբանական, ինչպես նաև միջմշակութային գեղագիտական գործառնությունների կատարելության աստիճանի՝ Էռնեստ Հեմինգուեյի երկխոսությունները լրացնում են երկխոսական ժանրի դասականների շարքը, ուստի մեր ուսումնասիրության առանցքը համարժեքության կարևորության և արժևորման տեսանկյունից դիտարկելը համարում ենք խնդրո առարկայի համար անհրաժեշտ պայման:

Ամփոփում

Հոդվածում դիտարկված է Էռնեստ Հեմինգուեյի կարճ պատմվածքների երկխոսությունների թարգմանական համարժեքության խնդիրը տարբեր տեսանկյուններից: Թարգմանության համարժեքությունը բնագրի և թարգմանության բովանդակության ընդհանրությունն է: Այն ոչ այլ ինչ է, եթե ոչ բնագրային տեքստերի և թարգմանության իրական բովանդակային, իմաստային հարազատությունը: Հետազոտությունը հենված է Է. Հեմինգուեյի պատմվածքների մեր կատարած թարգմանությունների ներհայեցական վերլուծության հիման վրա՝ վեր հանելու համարժեքությանն առնչվող տարատեսակ խնդիրներ: Աշխատության մեջ շեշտադրում է արված խոսակցական լեզվի հաղորդակցական և գեղագիտական գործառնության արժևորմանը, որպես պարտադիր պայման համարժեքության հարցը քննելիս: Մանրամասն քննել ենք հեղինակի լեզվամտածողությունը, օգտագործված բառապաշարը, ինքնատիպ ոճական հնարները, փորձել ենք առավելագույնս տալ այդ ամենի համարժեք արտացոլումը թարգմանության մեջ՝ դարձնելով այն գերխնդիր: Ներկայացված մի շարք երկխոսական հատվածների միջոցով փորձել ենք պարզաբանել թարգմանական մի շարք տարբերակներ՝ հաստատուն և դիպվածային համարժեքության տեսանկյունից: Համարժեքությունը դիտարկել ենք որպես մի հարաբերություն կամ հաղորդակցական գործառնություն, որն իրականանում է թարգմանված միավորի մեջ բնագիր խոսքային միավորի ձևական և իմաստային բոլոր էական հատկանիշների պահպանման պայմաններում: Այստեղ առանձնակի կարևորություն է տրվել երկխոսական կառույցների թարգմանական համարժեքների գործաբանական կողմին՝ հետևելով խոսքային համագործակցության գրայայն հայտնի սկզբունքներին՝ որոնելու և գտնելու կոնկրետ համարժեք՝ երբեմն հանդես բերելով ստեղծագործական մոտեցում: Հոդվածում տեղ են գտել նաև մի շարք հայտնի թարգմանաբան-լեզվաբանների տեսակետ-տեսություններ խնդրո առարկայի վերաբերյալ:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-51>

Գրականություն

1. Հեմինգուեյ Է. Այնտեղ, ուր մաքուր է ու լուսավոր (պատմվածքների ժողովածու, թարգմ.՝ Ն. Ա. Ջադիյանի), «ՄԻՄ տպագրատուն», Վանաձոր, 2006:
2. Baker M. In Other W: A course Book for Translation, Routledge, New York, 2001.
3. Catford J. C. Translation Shifts. In L. Venuti (Ed). The Translation Studies Reader. London: Routledge, 2000.
4. Hemingway E. Selected Stories, Progress Publishers, Moscow, 1971.
5. House J. Translation Quality Assessment, Oxford University, 2009.

К проблеме переводческой эквивалентности диалогов в коротких рассказах Эрнеста Хемингуэя

Джагинян Нина

Резюме

Ключевые слова: коммуникация, художественный текст, художественный перевод, «теория айсберга», речевая деятельность, оригинал и переводной текст, эстетическая функция, принципы (максимы) Грайса

В статье рассматривается проблема переводческой эквивалентности диалогов в коротких рассказах Эрнеста Хемингуэя с разных точек зрения. Эквивалентность перевода – это общность содержания оригинала и перевода. Это не что иное, как истинное содержание и смысловое родство между исходными текстами и переводом. Исследование основано на внутриконцептуальном анализе наших переводов рассказов Э. Хемингуэя с целью выявления различных проблем, связанных с эквивалентностью. В работе подчеркивается важность учета коммуникативной и эстетической функции устной речи как необходимого условия при рассмотрении вопроса эквивалентности. Мы подробно рассмотрели языковое мышление автора, используемую лексику, уникальные стилистические приемы и постарались дать всему этому адекватное отражение в переводе, сделав это приоритетной задачей. С помощью представленных диалогических фрагментов мы попытались прояснить ряд вариантов перевода с точки зрения фиксированной и условной эквивалентности. Мы рассмотрели эквивалентность как коммуникативную функцию, которая реализуется в переводе при сохранении всех существенных формальных и семантических признаков исходной вербальной единицы. Особое значение здесь придается прагматическому аспекту переводческих эквивалентов диалогических структур, следуя известным принципам Грайса о вербальной кооперации для поиска и нахождения определенного эквивалента иногда с применением творческого подхода. В статью также включены взгляды и теории ряда известных переводчиков-лингвистов по данному вопросу.

On the Problem of Translation Equivalence of Dialogues in Ernest Hemingway's Short Stories

Jaghinyan Nina

Summary

Key words: *communication, fiction text, literary translation, "The Iceberg Theory", speech act, original and translated text, aesthetic function, Gricean maxims*

The article touches upon the issue of translation equivalence of dialogues in Ernest Hemingway's short stories from different perspectives. The equivalence of translation is the similarity of the content of the original text and the translation. It is nothing but the true content and semantic affinity between the original text and the translation. The paper emphasizes the evaluation of the communicative and aesthetic functions of spoken language as a prerequisite for examining the problem of equivalence. We have studied in detail the author's way of thinking, the vocabulary used, the unique stylistic devices and tried to give an adequate reflection of all this in the translation, making it a top priority. We've considered equivalence as a relationship or communicative function that is realized in the translated unit while preserving all the essential formal and semantic features of the original verbal unit. Here special importance is given to the pragmatic aspect of translational equivalence of dialogical structures, following the well-known Gricean maxims of verbal cooperation, in order to search and find the specific equivalent, sometimes taking a creative approach. The article also includes the standpoints, theories of famous translation scholars and linguists on the subject matter.

Ներկայացվել է 30. 01. 2025 թ.

Գրախոսվել է 10. 02. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 05. 06. 2025 թ.

ԲԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ФОЛЬКЛОРИСТИКА И
ЛИТЕРАТУРОВЕДЕНИЕ

FOLKLORISTICS AND
LITERARY STUDIES

Արփիար Արփիարյանը Ա. Չոպանյանի քննադատության թիրախ

Բալայան Նահրա

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-59>

Հանգուցային բառեր. *հասարարական-քաղաքական կյանք, ազգային-գրական տարաձայնություն, հեզնանք, գրագողություն, գրական ազդեցություն, գեղագիտական արժեք, ազգային ոգի, հայրեններ*

Նախաբան

Կեդրոնական վարժարանում սովորելու տարիներին Արշակ Չոպանյանը թարգմանական և ստեղծագործական գործունեությունը ընդլայնում է և սկսում Արփիար Արփիարյանի «Հայրենիք» պարբերական ուղարկել իր նյութերը՝ ի թիվս մյուսների ավելացնելով հրապարակախոսական ակնարկներ: Արփիարյանի հետ հարաբերությունները սկսում են ձևավորվել հենց այս տարիներից, իսկ նրա հրավերով պարբերականի հիմնական աշխատակից դառնալուց հետո ավելի մերձավորանում են [3, 138]: «Ա. Արփիարյանի «Հայրենիք» օրաթերթի հրատարակման առաջին տարվանից (1891) Չոպանյանը դառնում է նրա հիմնական աշխատակիցը՝ տպագրելով այնտեղ արձակ էջեր, ֆրանսիական նորագույն գրականությանը ծանոթացնող հոդվածներ, որոնք կարճ ժամանակում լայն հետաքրքրություն են ստեղծում նրա անվան շուրջ» [18, 130]: Սակայն տարիների ընթացքում Արփիարյանի հետ Չոպանյանի և՛ անձնային, և՛ գրական ու հասարարական տարաձայնությունները խորանում են, ու Չոպանյանը թողնում է իր գործը «Հայրենիք»-ում, մեկնում Փարիզ՝ մեկընդմիջտ նվիրվելով հայրենիքին ու մշակույթին¹:

Հետագայում Արփիարյանի և Չոպանյանի հարաբերությունները չեն կարգավորվում, ավելին՝ փոխադարձ մեղադրանքները շատանում են: Գրական տարաձայնությունների ակունքները պարզելու, Արփիարյանի ասեկոսներին վերջ տալու նպատակով Չոպանյանը նախընտրում է հրապարակային խոսքը, որը Արփիարյանի հետ բանավեճի սահմաններում արտացոլվում է 4 ընդարձակ հոդվածներում: Դրանք հրապարակվում են 1901-1907 թթ. «Անահիտ» հանդեսում՝ «Արփիար Արփիարյան», «Արփիարյան պոլիտիկոս», «Արփիարյան էսթետիկոս» և «Նահապետ Քուչակի շուրջ» խորագրերով:

Այս և թեմային առնչակից այլ հոդվածներ դարձել են հոդվածի ուսումնասիրման նյութը: Հոդվածի նպատակն է բացահայտել Չոպանյան և Արփիարյան բանավեճի հիմնախնդիրները, ներկայացնել հասարակական-քաղաքական համատեքստում նրանց երկուսի դիրքորոշումը, արժևորել Չոպանյանի ազգային-գեղագիտական հայացքները: Հոդվածում քննության են առնվում Չոպանյանի և Արփիարյանի բանավիճային բազմաբնույթ խնդիրներ՝ կապված ինչպես կենսագրական տարբեր հարցերի, այնպես էլ ժամանակի քաղաքական ու հասարարական դեպքերին ու դեմքերին, ազգային-հայրենասիրական ընկալումներին, գեղարվեստական և գրականագիտական հարցերին և այլն:

Հոդվածի գիտական նորույթը պայմանավորված է Չոպանյանի բանավիճային այս հոդվածները առաջին անգամ խորությամբ, պատմահամեմատական և համադրական մեթոդներով ուսումնասիրված լինելու հանգամանքով, ինչի շնորհիվ այսօր կարելի է այլ դիտանկյունից, նոր լույսի ներքո ներկայացնել Արփիարյան և Չոպանյան մտածողներին:

Հոդվածի բովանդակությունը

Ժամանակագրորեն առաջինը 1901 թ. տպագրած «Արփիար Արփիարյան» ընդարձակ

¹ 1894 թ. նա վերադառնում է Պոլիս, հրատարակում «Ծաղիկ» հանդեսը, բայց 1895 թ.՝ համիդյան ջարդերից հետո, մեկընդմիջտ մեկնում է Փարիզ և հաստատվում այնտեղ [2, 65-66]:

հողվածն է, որում այդ ժամանակի ինքնակենսագրական նոթերին հընթացս պարզաբանվում է Արփիարյանի հետ հարաբերությունների պատմությունը: Ի տարբերություն Գ. Ձոհրայի նույնախորագիր հոդվածի [12], որում գրեթե անձնականացված ոչինչ չկա, Չոպանյանի այս հոդվածը անհատական դիպվածների, կենսագրական ուշագրավ հատվածների և Արփիարյանի հետ պառակտության անձնական մոտիվներ է պարունակում: Հոդվածը կազմված է 2 մասից. առաջին հատվածում Չոպանյանը խոսում է գրական, հասարակական հարաբերությունների սկսման ու առձակատումների մասին, ընդ որում՝ պարզում է գրելու շարժառիթը՝ Արփիարյանի՝ «բարեկամ գրագետի» քննադատությունը: «Ամերիկայի «Հայրենիք»-ին պարոնները վարժուած են խեղաթիւրելու, յայպաւելու, աւելցնելու, ստելու, կեղծաբարելու: Իրենց ընթացքը այս պարագային մեջ տարօրինակ չի թուիք ինծի. բայց տարօրինակ կը գտնեմ որ բարեկամ գրագետ մը իմ մէկ արարքս քննադատէ առանց անոնս տալու» [19, 33]: Ջարմանակի չէ Չոպանյանի սրտնեղությունը, հատկապես որ նրանց հարաբերությունները բավական ջերմ են եղել մինչ 1896 թ., ինչ հատկապես երևում է նամակներում, որոնցում նա Արփիարյանին «սիրելի» է կոչում և հայտնում իր ոգևորությունը [8]: Ավելին՝ նրանց ջերմ համախոհության մասին է վկայում Չոպանյանի՝ Ջոհրայի հոդվածներին ուղղված կոպիտ քննադատությունը, որ արված էր Արփիարյանին կոշտ բանականձեղու առիթով [17]:

Մինչ այդ՝ 1892 թ., Արփիարյանը վատ թաքցրած ծաղրանքով անդրադարձել էր Չոպանյանի մուտքին գրականության անդաստան՝ միակ դրական գիծ մատնանշելով նրա գրական ոճի բնականությունն ու անկեղծությունը²: Նշենք, որ Արփիարյանի այս և այլ անդրադարձները Չոպանյանը անպատասխան է թողել, բայց մեկ տասնամյակի անց այս հոդվածի արձագանքը գտնում ենք Չոպանյանի անդրանիկ պատասխան հրատարակման մեջ:

Պետք է ընդգծել, որ Չոպանյանի հոդվածում բավական տեղեկություններ կան 20-րդ դարի սկզբի գրական շատ հայտնի գործիչներին և նրանց մարդկային դիմագիծը բացահայտելու առումով, և այս համատեքստում է ուրվագծվում նաև Արփիարյանի՝ որպես հասարակական գործչի և խմբագրի պատկերը:

Ընդհանրապես, Ա. Արփիարյանը հակասական նկարագիր ուներ, որի մասին փաստում են կենսագիրներն ու ժամանակակիցները: Հիմնականում նա բանիմաց խմբագիր էր՝ «գիտակ իր ըրածին, իրական խմբագրի մը հոգեբանութեամբն ու շնորհներով» [26, 378]: Միևնույն ժամանակ նա «արդարության ոգեշունչ մունետիկ» [15] էր, որ «Մոտ երեսուն տարի, երբեմն օրը օրին, արևելահայ ընթերցողներին ծանոթացնում է արևմտահայության հասարաքաղաքական ու տնտեսական ծանր կացությանը, «հայկական հարցի» միջազգային արձագանքներին, խոսում գրականության ու արվեստի և առհասարակ արևմտահայությանը ընդհանուր իրավիճակի մասին» [15, IV]:

Այդուհանդերձ, նման դրական կարծիք Չոպանյանը չունի. նա սկզբունքային ազնվության դիրքերից է Արփիարյան մտավորականի գործելաճի մասին տարակուսանք հայտնում: Գրեթե մի ամբողջ էջ և ավելիի սահմաններում քննադատը բավական խիստ, սուր գծերով բնորոշում է Արփիարյանին՝ միասին աշխատելու ժամանակահատվածի հիշողությունը բնավ ախորժելի չհամարելով, ընդգծելով իրենց երկուսի խոր հակասությունն իրարից, նրա

² «Արշակ Չոպանյանի գրվածքներում մեջ կսիրեմ ամենեն ավելի իր բնականությունը, կեղծիք չկա, ինչ որ կզգա, նույնը կգրե... շատ անկեղծ է, ինչպես նաև շատ մանրագին դիտող մըն է, բայց կփափաքեի, որ նկարագրություններուն մեջ ամենաճարտար լուսանկարիչը մը ըլլալու տեղ ըլլար ամենաճարտար պատկերահան մը, լուսանկարիչը ճիշտ ու ճիշտ կը նկարէ, պատկերահանը թերևս քիչ մը ճշտութենէ կհեռանա, բայց նկարներուն մեջ իր սրտեն կդնէ բան մը, որ կլրացնէ նույնիսկ բնության մոռցածը» [4]: Հետո արդեն, ավելի հեռուն գնալով, Արփիարյանը գրել է, թե Չոպանյանը առաջին բանաստեղծական ժողովածուում կապույտի մեջ կորսված երազող մանկիկ է [19, 36]:

գեղարվեստի՝ օպերայի և թատրոնի, ֆրանսերեն ամսագրերի կամ օտարալեզու հեղինակների հանդեպ արհամարհական վերաբերմունքը [19, 35]: «Շատ ուշիմ բայց շատ միակողմանի ու հապճեպ զարգացում ունեցող մարդ մը, շահեկան ու վառվռուն բայց էականորեն թեթև ու չար խառնուածք մը» [19, 35]: Չոպանյանը չէր կարող ծանոթ չլինել Ջոհրապի նմանատիպ, բայց ավելի խիստ գնահատականին («Ամեն ինչ թերատ, ստուերտ ու անկատար է իր վրայ» [12]), և այդուհանդերձ շատ ավելի զուսպ վերաբերմունք է դրսևորում իր քննադատության մեջ, ինչպես նաև հրապարակային վեճերում [26, 412]:

Արփիարյանի սուր գրիչը, որ երևան էր գալիս հատկապես հրապարակագիտական ակնարկների մեջ, իրարամերժ կարծիքների առիթ էր միշտ դառնում. նրա քրոնիկները միշտ աղմուկ էին հանում, քանզի «հաստատության մը, գործի մը վրայ անկողմնակալ ու բարձրահայեաց քննադատություն մը ընելու տեղ, Արփիարյան շատ անգամ «անձ մը կճելու» փափաքը ցոյց կուտար» [19, 36]: Նույնը վկայվում է նաև ժամանակակիցների հուշերում. «Հեգնելը Արփիարին այնքան բնական էր որչափ ծիծաղը մարդուս. իրաւ սկեպտիկն էր ան: Իր այդ բնածին յատկութիւնը այն ատեն մանաւանդ օգնութեան կը կոչէր՝ երբ խնդիրը հակաճառութեան մը շուրջ դառնար. իր պզտիկ վրէժխնդրութիւններուն անմեղ գենքն էր, որ չէր խոցեր, բայց կը ցնցեր անպատճառ» [9, 13]:

Ընդհանրապես, այս հոդվածը Չոպանյանի մանրամասն հաշվետվությունն է Արփիարյանի հետ ունեցած առճակատման ողջ պատմության, ուր ներկայացվում է Արփիարյան գործչի և մարդու ամբողջական դիմանկարը՝ անշուշտ, որոշակի ենթակայական լույսի ներքո: Բայց և այնպես, Արփիարյանի՝ դավաճան, մատնիչ համարվելու³ և նրանից շատերի օտարվելու պատմության մեջ յուրահատուկ դեր է կատարում, ճշմարտության և արդարության նպատակով նրա պաշտպանն է դառնում Չոպանյանը՝ որոշ իմաստով գրական ազգային կրքի դիրքից ներելով Արփիարյանի անհանդուրժողականությունն ու կոպտությունը: «Ժուժկալ ու պարզուկ կեանք մը կը վարէր ու միշտ թափփփած հագուստներով միշտ գրպանը պարապ. եւ իր միակ գուարժութիւնը, միակ հաճոյքը, միակ կիրքը իր ազգային գրական-գործունեութիւնն էր» [19, 39]:

1895 թ. հետո, երբ Չոպանյանը մտնում է ազգային պայքարի ուղին, ազգային գործունեության շրջանակում Արփիարյանի հետ եղած հարաբերությունները նոր փուլ են թևակոխում: Այս շրջանում գործող Արփիարյանի մասին ուշագրավ բնութագրում է տալիս Մ. Հակոբյանը. «Ուժեղ խառնուածք ունէր իր հրապարակագրութեան մէջ, ժողովրդական էր, համարձակ էր, շեշտակի էր... Բայց այսքանը միայն» [16, 3]: «Արփիար Արփիարյան» հոդվածի երկրորդ մասում, ճշմարտապես կարևորելով Արփիարյանի դերը՝ որպես երեսփոխանի, որպես հրապարակագրի, որպես հեղափոխականի, Չոպանյանը, այնուամենայնիվ, միանշանակ դիրքորոշում չի ցուցաբերում, քանզի համարում է, որ նույն անձը հասարակական տարբեր դիրքերում պահպանում է նույն գործելաճր: Արփիարյանին ծաղրով համարելով Պոլսի լավագույն «հոսսոսը»՝ Չոպանյանը գրում է. «Միշտ հակամետ փոխուելու, միշտ սերամադիր ասեղի ծակի մը մեջէն անցնելու չափ ճարպկանալու, ու խորքին մեջ միշտ տրակպտիկ՝ հակառակ իր առերեսոյք՝ աւինին պերճախօսութիւններուն, ու իր կարճատեւ բորբոքումներուն մէջ իսկ միշտ հեգնտու ու միշտ անբուժելիօրէն թեթեսօլիկ» [19, 45]: Այս տեսանկյունով քննադատը ներկայացնում է Արփիարյան հրապարակագրին, որը հեգնում է, ծաղրում, ռուսահայերին գերադասում թրքահայերից, հետո վերջիններիս անզգա, ապուշ ու եսական անվանում ու տաճկահայերի կոտորածների պատճառը վերագրում իրենց: Միաժամանակ Չոպանյանը կարևորում է հարուստների հանդեպ արդար, բայց ոչ անձնային,

³ Հոդվածի անձուկ սահմանների պատճառով այս հարցի քննությանը չենք անդրադառնում: Արփիարյանի՝ մատնիչ, գող, դավաճան համարվելու և նրա եղբրական մահվան մասին հարցերը բավական մեծ ուսումնասիրության նյութ են և դուրս են մեր հոդվածի հետաքրքրության շրջանակից [17, 2]:

ենթակայական քննադատությունը⁴ և այս տեսանկյունից մերժում Արփիարյանի քրոնիկոնների կատաղի ու մոլեգին գրելաձևը, որի պատճառով նրա «անունը անարգալից ու պառակտողական աստելություն մը միայն կ'արթնցնէր այդ դասակարգին մէջ» [19, 48]:

Անդրադառնալով Արփիարյանի հեղափոխական գործունեությանը՝ Չոպանյանը համարում է, որ Հայաստանը և նրա խնդիրները պատեհ առիթներին ներկայացնելու նրա ջանքերը անպտուղ են եղել կամ առհասարակ չեն եղել: Ընդհանրապես, Չոպանյանը մերկ նկարագրությունների այս ձևով հավակնում է սերունդներին ծանոթացնելու Արփիարյանի իրական նկարագրին: «Այս յօդուածս դիտողի մը տպաւորութիւնն է, անաչառ վերլուծում մը,– եւ ինչ ալ կաղկանձեն՝ այս կամ այն կողմէն՝ չարամիտ ու գծուձ մտքերը, ես վստահ եմ որ ասով առջիման մը կազմած պիտի ըլլամ՝ որուն պիտի դիմէ վաղուան սերունդը, երբ Արփիար Արփիարեանի հոգեբանությունը ուսումնասիրել ուզէ» [19, 53]:

«Միշտ զգոյշ, Արփիարեանին նման մակընթացութեան մէջ չառնուելու իմաստութեամբ մը» [26, 314] Չոպանյանը քննադատական ազնվություն և նպատակայնություն է դրսևորում հողվածի հետգրության մեջ, որում փարատում է Արփիարյանի կասկածը, թե «Անահիտ»-ը մրցակցության համար է: ««Անահիտ»ին հիմնարկութենէն ի վեր ես ամեն բան ըրած եմ ապացուցանելու համար թէ նպատակս բազմաթիւ բաժանորդներ ունենալը չէ, այլ կարգ մը գաղափարներ տարածելը, ոչ մէկ կուսակցութեան վրայ կրթնելու, ոչ մէկ դասակարգի հաճելի ըլլալու մէջոտը չեմ ուզած գործածել՝ «Անահիտ»ին տոկուն ու տեսական «քլիանթ» մը ունենալու համար» [19, 55]:

Չոպանյանի և Արփիարյանի առձակատման նոր հարաբերությունները ի հայտ են գալիս 5 տարի անց՝ 1906 թ.: Առիթը Չոպանյանի ընդարձակ ու բազմաշերտ հողվածն էր՝ «Ռուսիա և հայերը» [20] խորագրով, որի դեմ Արփիարյանը սուր հողված է գրում «Շիրակում»՝ պարբերաբար ծաղրանքով նրան անվանելով ապաժաման սուրհանդակ [6, 96]: Սուր քննադատության ենթարկելով Չոպանյանին, անգամ սուտասան կոչելով նրան Արփիարյանը նրա հողվածը հայ ժողովրդի դեմ ամբաստանագիր է անվանում: «<...> «Ռուսաստան և հայերը» հանրագիտակ յօդուած մըն է, ճարպիկօրէն յօրինուած, որ երբ արհեստագարդ սքօղանքէն թէթննայ, ներքևի մերկոյթը աչքերուդ առջև պարզապէս հայ ազգին դէմ «փուրսիշ» մը, որ է՝ ամբաստանագիր, կը սևափայլի» [6, 97]: Արփիարյանի այս հողվածին անդրադառնալու մասին Չոպանյանը տեղեկացնում է «Անահիտի» նույն թվին տպված համարներից մեկի հողվածի լուսանցքում: Ծաղրելով Արփիարյանի քաղաքական և գեղագիտական հայացքները՝ նա ծանուցում է, որ այս անգամ լրջագույնս քննելու է նրա ողջ վաստակը՝ գեղագիտական, գրական և քաղաքական: «Արփիարյան ժամանցագիրը Շիրակին վերջին թիւին մէջ քանի մը ցնդաբանութիւններ սփռտեր է այդ ուսումնասիրութեանս նկատմամբ: Յօդվածի մը մէջ գոր պիտի նուիրեմ՝ Անահիտի յառաջիկայ թիւն մէջ Արփիարեանի գեղեցկագիտական արփաթնումներուն, հաւանական որ էսթետիկոս Արփիարեանին հետ պոլիտիկոսն ալ պզտիկ քննագրօսանքի մը ենթարկեմ: Նիւթը, թէպէտ քիչ կարևոր, բայց գուարձալի է» [21, 117]:

Չոպանյանի ծաղրանքը սրամիտ է, իսկ պատասխանները՝ փաստարկված: Ըստ նրա՝ Արփիարյանը իրավիճակին հարկը հաճախ է կարծիք փոխում՝ հակասելով ինքն իրեն: Ռուսների դեմ արտահայտվող ու Չոպանյանի «ռուսասիրությունը» այսպիսով Արփիարյանը, ըստ հողվածագրի, միաժամանակ ռուս իշխանից Ռուսաստանի օգտին բարեհաճություն ակնկալող նամակի աջակիցն է: «Արփիարեանի մօտ՝ կարծիքի փոփոխությունները կը կատարուին «սինէմաթօկրաֆի» պատկերներու յաջորդութեան արագութեամբ, եւ առանց չքմեղացնող խորին փաստերու: Հովը կը փչէ, եւ Արփիարեան կը դառնայ, ինչպէս

⁴ Ուշագրավ է, որ հակառակ կարծիք ունէր Զոհրապը, որը «Ճամփեն շեղված» հողվածում ձաղկում է Արփիարյանի՝ հարուստների հանդեպ կամայական վերաբերմունքը և թերթի՝ հարուստներին նվիրված ծանուցումները [13]:

«Ժիրուէթը» տանիքներուն վրայ» [22, 235]: Չոպանյանն այս հոդվածում սատիրայի փոխված ծաղրով օգտագործում է նաև Ձոհրապի կողմից Արփիարյանին տրված «օղապարիկ» մականունը⁵. «Երբեք Արփիարեան այդ գերագոյն կատարելութեան չէր հասուցած իր մտաւոր թեթեւութիւնը որ- կը խոստովանիմ-բնութեան հրաշալիքներէն մին ըլլալու չափ եզական աստիճանի մը կը հասնի այդ մարդուն քով,- եւ կը զարմանաւ թէ ինչու օղապարիկին հարցը վերջապէս լուծելու համար մասնագէտները չեն գործածեր Արփիարեանի ուղեղային կաղը իբրեւ թեթեւագոյն մարմինը որ կայ աշխարհիս մէջ» [22, 235]: Ազգային դժբախտությունների մասին Արփիարյանի դիրքորոշումը Չոպանյանը ածանցում է նրա մարդկային նկարագրից՝ նրա եզրահանգումների թերությունները կապելով ազգային հոգեկերտվածքի տվածությամբ: «Արփիարեանի մէջ՝ նկարագրի պակասին կը միանա թերևս անկից ծնելով- անխղճամտությունը, գիտակից ու չարամիտ խեղաթիրմանց, թունաւոր սպորտութիւնը ամբողջ հոյլովը պաշարուած» [22, 235]: Հավելումն իր մտքերի, որոնք Արփիարյանը խեղաթուրել էր, Չոպանյանը վերստին պարզաբանում է, որ ժողովրդի սխալը չկա իր իսկ ողբերգական ճակատագրի հարցում, դրա պատճառը միայն վերնախավի սխալ որոշումներն են: «Հայ վարիչներու սխալ թաքթիքը ոչ թուրքերուն գազանութիւնը կ'արդարացնէ, ոչ թուս դիւանագիտութեան ապուշութիւնը եւ անսրտութիւնը» [22, 236]: Այս համատեքստում Արփիարյանի այն մեղադրանքը, թե հայերն իրենք են մեղավոր կոտորածների համար, քանի որ տարբեր երկրների են նամակ-դիմումներ ուղարկում, Չոպանյանը համարում է վատ կատակ: Նա վստահ է, որ եթե դիմումների ժամանակն ու կոտորածները զուգատիպել են, ապա հիմնականում կանխել են մեծ արյունահեղությունները: «Պիտի դիտել տամ որ դիմումները կարելի չէ կոտորածներու կամ թալաններու ուղղակի շարժառիթ նկատել, եւ թէ անոնք՝ պատեհ ըրալէին ու լավ ձեւով կատարուած՝ կրնան մերթարդիւնաւոր ըլլալ որոշ չափով մը» [22, 237]:

* * *

Շատ ավելի սուր է ծաղրը Արփիարյանի գեղագիտական, գրականագիտական ու բանասիրական հոդվածների ու հենց Արփիարյան հեղինակի մասին, ավելին՝ ենթակայորեն կասկածվում է Արփիարյանի՝ գրականությունը հասկանալու ունակությունը: «Սանսքիթը, գոր չի գիտեր, վկայութեան կը կոչէ՝ բացատրելու համար հայերէն բառեր, եւ յանուն գեղեցկագիտական սկզբունքներու՝ որոնց անծանօթ է՝ պատգամներ կ'արձակէ գրական գործերու վրայ գոր չի հասկնար» [23, 35]:

Բանավիճային հոդվածի այս հատվածում քննվում են սակավ տաղանդավոր հայ գրողների ստեղծագործությունների ամբողջական թե միայն արժեքավոր մասի տպագրության, գրական ազդեցությունների կամ գրագործության խնդիրները: Հատկապես լրջագույնս ու մանրամասն քննվում է «հայոց ազգասիրական» բանաստեղծությունների տպագրության և հանրահռչակման կարևորությունը՝ անկախ գեղագիտական մեծ արժեքից: Գրականագիտության դաշտում Արփիարյանի և Չոպանյանի առաջին լուրջ հակասությունը գրողների ժառանգության տպագրության հարցի շուրջ է: Արփիարյանի նախընտրությունը սակավ տաղանդավոր հայ գրողների միայն հատընտիր էջեր հրապարակելն է, այնինչ Չոպանյանը հակառակ կարծիքին է՝ համարելով, որ գրողի համապատկեր ժառանգությունը լույս է սփռելու նրա ողջ գրական վաստակի վրա, և հատկապես «խոնարհ խավերուն», սերունդների համար կարևոր է երկերի ազգային-դաստիարակչական բնույթը [23, 35]: Ի մասնավորի անդրադառնալով Մկրտիչ Պեշիկպաշյանի բանաստեղծական ժառանգությանը՝ Չոպանյանը

⁵ 1893 թ. Արփիարյանը Ձոհրապի «Չնորհիվ» ստացավ «օղապարիկ» մականունը՝ սատիրայով ծաղրելով նրա հենադիմական քայլերը. «Ո՛ր է այն լեցուն, ոյժով ու բարձր թռիչով օղապարիկը, որուն ճախրանքը պիտի դիտվիք. պարպուած, կծկուած բան մը է հիմա. օղաչու. հսկայէն՝ գետնաքարշ թզուկ մը մնացած» [14, 53]:

յանը գտնում է, որ «անոնց մեջ չկայ հատ մը որ տգեղ ըլլայ. միշտ կայծ մը կայ սիրունութեան, աղուր ժպիտի մը շուրջ, քաղցրութեան շունչ մը» [23, 36]:

Բանավեճի մյուս խնդիրը անչլվում է գրագողությանն ու գրական ազդեցությանը. որպէս օրինակ՝ դիտարկվում են Մ. Պեշիկթաշլյանի և այլոց բանաստեղծությունների աղերսները: Արփիարյանը ճգնում է ապացուցելու, որ Պեշիկթաշլյանի շատ բանաստեղծություններ գրական ազդեցությունների ներքո են ստեղծված, ավելին՝ անգամ նմանակումներ են [5, 126-129]: Մանրամասն ներկայացնելով այդ բանաստեղծությունների գեղագիտական արժեքը՝ Չոպանյանը լիովին հակադրվում է Արփիարյանին: Թեպետ ինքն էլ գտնում է նմանողություններ Հյուգոյի բանաստեղծության հետ, սակայն, համադրելով ժամանակաշրջանները, եզրակացնում է, որ «իրարմէ ժամանակով ու երկրով հեռու եւ իրար երբեք չճանչած հեղինակներու մօտ յաճախ կը պատահի նկատել միեւնոյն գաղափարը, նոյն պատկերը, նոյն բացատրութիւնը» [23, 37]: Որպէս ազգային և համաշխարհային, անտիկ և ժամանակակից գրականության լավագույն գիտակ, որպէս լայնախոհ հետազոտող՝ Չոպանյանը՝ **«մեր գրականութեան ամենէն բազմերախտ մշակը»** [26, 309], քննադատությունը կառուցում է հիմնականում պատմահամեմատական մեթոդի օգնությամբ: Համեմատության գրական դաշտը բավական լայն է՝ Սոֆոկլես, Եվրիպիդես, Արիստոֆանես, Հեսիոդոս, Հոմերոս, Եզոպոս, Կիկերոն, Շեքսպիր, Լաֆոնտեն, Բոկաչչո, Մոլիեր և այլք: Նա բազմաթիվ համեմատություններ ու համադրություններ է անում ոչ միայն այլոց, այլև հենց իր և ուրիշների գրական գործերի միջև, միաժամանակ պարզում, որ գրական ազդեցության գործոնը գեղագիտական համակարգում, այդուհանդերձ, բնավ տաղանդի բացակայության ցուցիչ չէ: Չոպանյանի գեղագիտական հայեցակարգում գրագողությունն ու գրական ազդեցությունը հստակ սահմանազատված են. «Բանագողը այն է որ նոյնութեամբ փոխ կ'առնէ ուրիշ հեղինակի մը գաղափարն ու արտայայտութիւնը, եւ կամ եթէ փոփոխութիւն մը մտցնէ՝ կ'այլանդակէ բնատիպարը: Հանճարը, հետեւողութեան մեջ, կը մնայ ստեղծագործ. կտաւն է որ փոխ կ'առնէ, ու մերթ ասդնագործութեան մոթիֆներէն մէկ քանին, եւ ինքն իսկ կը բանի հոն իր անձնական ճաշակին ու ներշնչման համեմատ» [23, 38]: Չոպանյանի գրեթէ յուրաքանչյուր ուսումնասիրության, ակնարկի կամ հոդվածի առանցքում ազգային ոգու առկայությունն է: Իր կյանքի նշանաբաններից մեկը՝ ճանաչել տալ հայ ազգի մշակույթը Եվրոպային, նա միշտ դիտարկում է առաջնային և այս առումով զարմանում ու զայրույթ է հայտնում Արփիարյանի «Հայոց ազգասիրական բանաստեղծութեան հատընտիրը նմոյշներով փորձիկ հատոր մը» [23, 40-41] իտալերեն չիտատարակելու առթիվ այն պատճառով, թե «Հայոց հայրենասիրական բանաստեղծութիւնը ամբողջապէս նմանողական է»: Չոպանյանը համարում է, որ ազգային հայրենասիրական գրականության կարևոր առաքելությունը ոչ միայն դաստիարակության նպատակին է միտված, այլև համաշխարհային գրականության անդաստանում մի գողտրիկ, բայց ճանաչելի մաս դառնալուն:

Չոպանյանի և Արփիարյանի առճակատության մյուս կետը **քուչական հայրենների** շուրջ է՝ «Արփիարյան Էսթետիկոս» հոդվածում պատասխանելով Արփիարյանի դիտողություններին և մեղադրանքներին՝ ուղղված իր հետազոտություններին ու հայրենները խմբագրված տպագրելուն՝ Չոպանյանը միաժամանակ քննում է հարցեր, որ վերաբերում են հայրենների ժամանակաշրջանին, հեղինակի անձին, տպագրության վրիպակներին: Եթե սխալների ու վրիպակների հարցում Չոպանյանն ազնվորեն ընդունում է իր մեղքը ու համարում է, որ դրանք բանահավաքության, ձեռագրերի դժվարընթեռնելիության ու տպագրության

⁶ 1903 թ. Չոպանյանը հրատարակել էր «Նահապետ Քուչակի դիվանը» գիրքը, որը հայրենների առաջին մեծ հրատարակությունն էր: Գրքի դրական արձագանքների և ողջունումների մեջ իր ներհակ կարծիքով առանձնանում է Հրազդան ստորագրությամբ Արփիարյանը, որն իր հոդվածում համարում է, որ Չոպանյանը խելաթափուրել է հայրենները և գրեթե փախցրել «ամենուն ալ համը հոտը» [5, 123]:

բարդ գործում անխուսափելի են, ապա գրական-գրականագիտական ու գեղագիտական հարցերում սկզբունքային մոտեցում է ցուցաբերում:

Ի պատասխան Արփիարյանի դիտարկման, թե հայրենները տպագրելու համար հարկ է գիտենալ արևելյան լեզուները և հայերենի բարբառները՝ Չոպանյանը սուր ծաղրով դիտարկում է. «Քուչակ մը գործը բուսաբանական կամ կենդանաբանական կամ լեզուագիտական ուսումնասիրություն չէ. բանաստեղծություն է.՝ զայն հասկնալու, անոր գոյացուցիչ տարրերը, կազմվածքը, հոգին ըմբռնելու համար, չի բաւեր արեւելյան բոլոր լեզուները եւ Հայաստանի բոլոր անատուններուն անունները գիտնալ» [24, 66]:

Քուչակյան թեմային առնչվող հարցերի ընդլայնված անդրադարձը «Նահապետ Քուչակի շուրջ» հոդվածն է, որ Արփիարյանի հոդվածի այլ պատասխանն է: Հոդվածում մանրամասն քննվում են հայրենների, Ակնա անտունիների, Քուչակի ու նրա անունով մնացած հայրենների հարցերը, որոնք, նկատելով է Չոպանյանը, դեռ հստակ պատասխանների կարիք ունեն. «Հող, արդէն ամեն բան անորոշ է. վարկածներու մշուշին մէջ ենք, ու ամենամեծ զգուշութիւն պէտք է՝ ճշմարտութեան քիչ շատ մօտենալու համար» [25, 98]: Չոպանյանը ամենայն մանրամասնությամբ ներկայացնում է հայրենների հեղինակի քննության հարցը, որ համադրում է Ղ. Ալիշանի, Ա. Տեկանցի, Կոստանյանի՝ այս խնդրի առնչությամբ ուսումնասիրություններին: Մերժելով Արփիարյանի՝ «Քուչակ» բառի սանսկրիտից բխող ծագման տրամաբանությունը՝ քննադատը առաջադրում է ձեռագրերում իրեն հանդիպած «Քեչէկ» կամ «Քոչէկ» անունը, որը համարում է թուրքական բառի հայերենացած ձև: Հոդվածի մյուս կարևոր ատաղձը Ակնա անտունիների ու քուչակյան հայրենների նմանության ու տարբերության խնդիրներն են, որ տարատեսակ համադրություններով Չոպանյանը փորձում է պարզաբանել համարելով, որ Քուչակի տաղերը հորինող բանաստեղծը ինքն է ստեղծել Ակնա բանաստեղծական ոճը և «իր յաջորդները կրկնած են իր գեղեցիկ դարձածներէն շատերը», կամ այդ ժողովրդական բանաստեղծութեան ամենասիրուն պատկերները իր «ստեղծագործութեան մէջ ձուլելով իւրացուցած է» [25, 110]: Չոպանյանը, հակված լինելով առաջինին, միաժամանակ երկու վարկածների հաշտեցման կողմնակիցն է: Դա է պատճառը, որ նա զարմանալի մարգարեաբար է ավարտում իր հոդվածը. «...Թերեւս ձեռագիրները միշտ շարունակեն լուռ մնալ հեղինակի անուան մասին ու մեր Քուչակեան հարցը դառնայ տեսակ մը փոքրիկ հոմերական հարց» [25, 111]:

Եզրակացություն

1901-1907 թթ. «Անահիտ» հանդեսում տպագրված «Արփիար Արփիարյան», «Արփիարյան պոլիտիկոս», «Արփիարյան էսթետիկոս» և «Նահապետ Քուչակի շուրջ» խորագրերով հոդվածները ոչ միայն պարունակում են ուշագրավ տեղեկություններ Ա. Չոպանյանի և Ա. Արփիարյանի գործունեության և նրանց քաղաքական-հասարակական-մշակութային հայացքների վերաբերյալ, այլև լույս են սփռում ժամանակի կնճռոտ խնդիրների վրա: Քննությունը ցույց է տալիս, որ և՛ Արփիարյանը, և՛ Չոպանյանը բանավիճելիս դրսևորել են ծաղր, հեգնանք միմյանց նկատմամբ՝ երբեմն անցնելով թույլատրելի սահմանները: Չոպանյանը, հաճախ ցուցադրելով քննադատական ազնվություն, ենթակայական վերաբերմունք է դրսևորել Արփիարյանի հանդեպ՝ անգամ կասկածի տակ դնելով նրա գրական, գրաքննադատական ունակությունները: Այդուհանդերձ, Չոպանյանի հոդվածների ընդհանուր համատեքստում ցույց է տրվում բանավիճող հեղինակի գլխավոր սկզբունքները՝ այն է՝ հայրենի մշակույթը և հայ ժողովրդին ճանաչելի դարձնելու դիրքերից դիտարկելը, ազգային ոգու շեշտադրումը, գրական երկերի դաստիարակչական-հայրենասիրական բովանդակության առաջնահերթության ընդգծումը, գրականության քննության մեջ գիտականության պահպանումը և այլն:

⁷ Չոպանյանի ուսումնասիրությունները՝ Քուչակի և հայրենների թեմայով, գրականագիտության մեջ առ այսօր շարունակում են հետազոտվել [7: 10: 11]:

Գրականություն

1. Աւագեան Հ., Արփիար Արփիարյանի մահափորձը, Գահիրե, 2018, Զահակիր շաբաթաթերթ, յաւելում ժԲ:
2. Ավագյան Վ., Արշակ Չոպանյանի կյանքի և գործունեության նկարագիր, Պատմաբանասիրական հանդես, թիվ 2, Երևան, 2022, էջ 63-88:
3. Ավետիսյան Յու., «Մաղիկ» հանդեսը Արշակ Չոպանյանի խմբագրությամբ http://www.old.ysu.am/files/15Yu_Avetisyan.pdf (մուտք՝ 3.09.2024):
4. Արփիարյան Ա., Օրուան կեանքը: Արշալոյսի ձայներ, «Հայրենիք» օրաթերթ, թիվ 123, Կ. Պոլիս, 1892:
5. Արփիարյան Ա.Գրական կեանքէն, Շիրակ, Բ հատոր, թիվ 8, (օգ.), Ալեքսանդրիա, 1905, էջ 123-132:
6. Արփիարյան Ա., Հակահայ փութիշ, Շիրակ, թիվ 2 (հուլ.), Բ հատոր, Գահիրե, 1906, էջ 92-97:
7. Բալայան Ն., Հայրենների քննությունը Արշակ Չոպանյանի աշխատություններում, Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 1(1), Երևան, 2007, էջ 79-83:
8. Գրիգորյան Հ., Արշակ Չոպանյանի նամակները Արփիար Արփիարյանին՝ Օսմանյան դրամատան գրավման և դրա հետևանքների մասին, ՎԷմ, թիվ 3(51), Երևան, 2015, էջ 235-242:
9. Դավիթյան Ս., Ինայեթեան Հ., Մալեգեան Վ., Պալեան Կ., Քեչեճեան Ն., Յուշարձան ողբացեալ Արփիար Արփիարեանի, Գահիրե, 1911, 46 էջ:
10. Եղիազարյան Վ., Նահապետ Քուչակը և նրա անունով մեզ հասած երգերը, Գրակահագիտական հանդես, ԺԷ, Երևան, 2016, էջ 16-43:
11. Եղիազարյան Վ., Աշուղ Նահապետ Քուչակը և իր երգերը, Հայագիտական հանդես, թիվ 5 (59), Երևան, 2022, էջ 86-106:
12. Զոհրապ Գ., Մանօթ դէմքեր, Արփիար Արփիարյան, Մասիս, թիվ 3969 (հոկ. 17), Կ. Պոլիս, 1892, էջ 226-227:
13. Զոհրապ Գ., «Ճամփին շեղած», Մասիս, թիվ 3975 (հունվ. 23), Կ. Պոլիս, 1893, էջ 34-35:
14. Զոհրապ Գ., Պարպուած օղապարիկ, Մասիս, թիվ 3976 (հունվ. 23), Կ. Պոլիս, 1893, էջ 51-53:
15. Մարգարյան Հ., Արդարության ոգեշունչ մունետիկը. Արփիար Արփիարյան, Երկեր, 1987, Երևան, 524 էջ:
16. Յակոբեան Ս., Արեւմտահայ արձակագիրներ. Արփիար Արփիարեան, Վիեննա, 1922, 64 էջ:
17. Շարուրյան Ա., Արփիար Արփիարյան և Գրիգոր Զոհրապ, «Բանբեր Երևանի համալսարանի», թիվ 3, Երևան, 1988, էջ 69-80:
18. Ստեփանյան Գ., Արշակ Չոպանյան (ծննդյան 100-ամյակի առթիվ), Պատմաբանասիրական հանդես, թիվ 3, Երևան, 1972, էջ 129-142:
19. Չոպանյան Ա., Դէմքեր: Արփիար Արփիարեան, «Անահիտ», թիվ 2, Փարիզ, 1901, էջ 33-55:
20. Չոպանյան Ա., Ռուսիա և Հայերը, «Անահիտ», թիվ 3-5, Փարիզ, 1906, էջ 33-88:
21. Չոպանյան Ա., Քրոնիկ, «Անահիտ» թիվ 8-9, Փարիզ, 1906, էջ 177-192:
22. Չոպանյան Ա., «Արփիարյան պոլիտիկոս», «Անահիտ», թիվ 10-12, Փարիզ, 1906, էջ 234-240:
23. Չոպանյան Ա., «Արփիարյան էսթետիկոս», «Անահիտ», թիվ 1-2, Փարիզ, 1907, էջ 35-41:
24. Չոպանյան Ա., «Արփիարյան էսթետիկոս», «Անահիտ», թիվ 3-5, Փարիզ, 1907, էջ 64-69:

25. Չոպանյան Ա., «Նահապետ Քուչակի շուրջ», «Անահիտ» թիվ 6-9, Փարիզ, 1907, էջ 97-111:
26. Օշական Յ., Համապատկեր արևմտահայ գրականության. Իրապաշտներ, հատոր 5, Երուսաղեմ, 1952, 486 էջ:

Арпиар Арпиарян как объект критики А. Чопаняна

Балаян Наира

Резюме

Ключевые слова: общественно-политическая жизнь, национально-литературные разногласия, ирония, плагиат, литературное влияние, эстетическая ценность, национальный дух, айрены

С целью прояснения причин литературных и общественно-политических разногласий с А. Арпиаряном, а также для прекращения распространявшихся с его стороны слухов, в 1901–1907 гг. в журнале «Анаит» были опубликованы обширные статьи А. Чопаняна: «Арпиар Арпиарян», «Арпиарян-политик», «Арпиарян-эстет» и «Вокруг Наапета Кучака». Материалами для настоящего исследования послужили указанные публикации, а также другие статьи, содержащие ценные сведения о деятельности А. Чопаняна и А. Арпиаряна, их политико-культурных взглядах и оценках современности.

В статье анализируются многоаспектные проблемы, лежащие в основе полемики между А. Чопаняном и А. Арпиаряном, включая биографические факты, общественно-политические события и фигуры рубежа XIX–XX веков, различия в национально-патриотических представлениях, а также эстетико-литературные разногласия. Особое внимание уделяется реконструкции позиций сторон и интерпретации их поведения в контексте актуальных идеологических и культурных дискуссий эпохи.

Характеризуя взгляды А. Арпиаряна, А. Чопанян нередко проявлял критическую прямоту, сопровождаемую ироничными и субъективными замечаниями, особенно в отношении литературных и критических способностей своего оппонента. Подобная риторика, несмотря на очевидную эмоциональную окрашенность, позволяет глубже понять как идейные расхождения между двумя крупными представителями армянской интеллигенции, так и широкий контекст общественно-литературной жизни начала XX века.

Arpiar Arpiarian as an Object of A. Chopanyan's Criticism

Balayan Naira

Summary

Key words: *social and political life, national-literary controversy, irony, plagiarism, literary influence, aesthetic value, national spirit, aïrenes*

To clarify the origins of literary and national-public disagreements with Arpiarian and to dispel rumors about him, A. Chopanyan published a series of extensive articles in the magazine *Anahit* between 1901 and 1907. These articles – “*Arpiar Arpiarian*”, “*Arpiarian the Politician*”, “*Arpiarian the Aesthete*”, and “*Around Nahapet Kuchak*” – served to illuminate his political and cultural views.

The material for this article was also enriched by other writings on the subject, which not only provide valuable information about the activities of A. Chopanyan and A. Arpiarian, but also shed light on the complex issues of the time.

The article reveals heterogeneous problems in the discussion between Chopanyan and Arpiarian, related to various facts of their biography, as well as political, cultural events and figures of the time, national-patriotic perceptions, artistic and literary issues, etc.

Based on the debates of Chopanyan and Arpiarian, the paper identifies a variety of issues related both to the facts of their biography, political and social events, personalities of the time, as well as national-patriotic views, artistic and literary issues. In this context, their behaviour and position on the issues under discussion are identified and highlighted. It is noteworthy that while Arshak Chopanyan often exhibited critical honesty, he also displayed a subjective and ironic stance toward Arpiar Arpiarian, frequently questioning the latter's literary and critical abilities.

Ներկայացվել է 23. 09. 2024 թ.

Գրախոսվել է 15. 09. 2024 թ.

Ընդունվել է տպագրության 05. 06. 2025 թ.

Հայրենների ձեռագրերի գրչության և Նահապետ Քուչակի ապրած ժամանակը

Եղիազարյան Վանո

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-69>

***Հանգուցային բառեր.** հայրեններ, Արիստակես Տևկանց, գուսաններ, Վիեննայի Մխիթարյանների միաբանություն, Մատենադարան, Խաչատուր Կեչառեցի*

Սույն հոդվածի **արդիականությունը** Քուչակի ապրած ժամանակի և հայրենների ձեռագրերի գրչության ժամանակի համեմատումն է:

Հոդվածի **նպատակն** է ցույց տալ, որ Քուչակի ապրած ժամանակ գրչագրվել են հայրեններ՝ որպես անանուն հեղինակների երգեր, իսկ Քուչակի անունով ձեռագրերում աշուղական երգեր գրչագրվել են նրա մահից հետո: Առաջադիր **խնդիրն** է ի ցույց դնել այն փաստը, որ Քուչակից դարեր առաջ ձեռագրերով մեզ են ավանդվել Արիստակես Տևկանցի կողմից անիմացաբար Քուչակին վերագրված հայրեններ: Հոդվածում կիրառել ենք **հերմենևտիկայի մասնագիտական մեթոդը**: Հոդվածի **գիտական նորույթը** Քուչակին վերագրված հայրենների գրչության ժամանակի և Քուչակի ապրած ժամանակի համադրումն է՝ բացահայտելով այն փաստը, որ Քուչակի ծնունդից դարեր առաջ ձեռագրերում արտագրվել են ինչպես հեղինակային, այնպես էլ անանուն գուսանաժողովրդական հայրեններ, որոնք 19-րդ դարում սխալմամբ վերագրվել են Նահապետ Քուչակին:

Նահապետ Քուչակը ծնվել է 15-րդ դարի վերջին՝ մոտ 1492 թ. և մահացել 1592-ին [1, 3-23]: Բնականաբար, Քուչակի անունով ձեռագրերով մեզ հասած երգերը գրչագրվել են նրա ապրած ժամանակից հետո: Բերենք ընդամենը մի օրինակ՝ «Գովանք Աստուածածնին ումեմն գոսանէ՝ Քոչակ Վանեցոյ, օգնեա հոգուդ Սուրբ Աստուածածին» վերնագրով «Աղբյուր կենդանի» սկսվածքով հայերեն աշուղական երգը մեզ է հասել Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 1636, 2079, 2566, 3411, 7717, 9322, 9597, 10006 ձեռագրերով: Այսպես՝

<i>Ձեռագրի համարը</i>	<i>Գրչության ժամանակը</i>
1636	17-18-րդ դար
2079	<i>17-րդ դար, 1622 թ. Հետո</i>
2566	<i>17-րդ դար</i>
3411	<i>17-րդ դար</i>
7717	<i>1695 թ.</i>
9322	<i>1659 թ.</i>
10006	<i>19-րդ դար</i>

Բնականաբար, Նահապետ Քուչակի երգերը ձեռագրերով մեզ կարող էին հասնել կամ նրա ապրած ժամանակ կամ նրա մահից՝ 1592 թվականից հետո, ինչն ակնհայտ է վերևում ներկայացված աղյուսակում:

Հասկանալու համար քուչակյան կոչված հայրենների Քուչակին վերագրելու տեսության սնանկությունը, պարզապես այստեղ բերենք այն ձեռագրերի ցանկը, որոնցում գրչագրվել են հայրեններ, իսկ այդ ձեռագրերը 1492 թվականից՝ Քուչակի ծնունդից առաջ են գրչագրված:

Այսպես՝

Ձեռագրի համարը	Գրչության ժամանակը	Գրչության վայրը	Գրիչը
Հմր. 9229	1284-1286 թթ.	Կիլիկիա ^օ	-
Հմր. 181	1295 թ.	Մլեհի վանք	Հովհաննես քահանա
Հմր. 2961	1321 թ.	Անհայտ	Մխիթար Անեցի
Հմր. 2611	1363 թ.	Ղրիմ	Կարապետ քահանա
Հմր. 3505	1394 թ.	Սիս	Եսայի Սասնեցի
Հմր. 6564	14-րդ դար	-	-
Հմր. 2148	1416 թ.	Անհայտ	Մելիքսեդ
Հմր. 7953	1461 թ.	-	Ստեփանոս քահանա
Հմր. 1624	1488 թ.	Քաջբերունիքի Ասպինակ գյուղ	Բարսեղ քահանա
Հմր. 7773	15-րդ դար	-	-
Հմր. 5614	1543 թ.	Քանաքեռ, Հայու թառ	Գրիգոր կր.
Հմր. 8968	1556 թ.	Ըստըմբոլ	-
Հմր. 2151	1587 թ.	Սեբաստիա	Մարտիրոս երեց
Հմր. 1770	1589 թ.	Անհայտ	Աստվածատուր դպիր
Հմր. 1661	1594 թ.	Թոխա ^օ թ	Պետրոս քահանա

Բացի Մաշտոցի անվան Մատենադարանի վերոհիշյալ ձեռագրերից, մեզ է հասել ևս մեկ ձեռագիր Կարմիր վանքից, այսպես՝ Կարմիր վանուցն Անկյուրիո Մատենադարանի հմր. 91 ձեռագրում, որը գրչագրված է 1453, 1475 թթ. Նիկողայոս եպիսկոպոսի և Յովանես երեցի կողմից, պահպանվել է «Երկինքն ի գետին ասաց» սկսվածքով հայրենային տաղաշարքը, որն Աս. Մնացականյանը գետեղել է Ե/ՄԱ հայրենային տաղաշարքում՝ որպես անհատական ստեղծագործություն [2, 942-943], թեև ձեռագրում շարքն անհեղինակ է [3, 457-458]:

Եթե աղյուսակում գետեղված հայրենների մեծ մասն անհատական հայրեններ են, ապա հմր. 8968 ձեռագրում, որը գրչագրված է 1556 թ. Ստամբուլում, գուսանաժողովրդական հայրեններ են, որն Աս. Մնացականյանը գետեղել է Ա/ԼԵ տաղաշարքով: Նույն ձեռագրի 151բ-156բ էջերում արտագրված է նաև Խաչատուր Կեչառեցու «Թէ մարդ ես և միտք ունիս» սկսվածքով հայրենային խրատական տաղաշարքը, որն Աս. Մնացականյանը գետեղել է Բ/ԺԶ շարքով: Նույն ձեռագրում է պահպանված նաև Գ/ԻԳ տաղաշարքը՝ «Թագուհի մի տեսայ» սկսվածքով, որը տարբերակ-փոփոխակն է Գ/ԻԴ տաղաշարքի, որն, ի դեպ, Ա. Տեկանցը տպագրել է Նահապետ Քուչակի անունով: Խոսքը «Տաղ ի վերայ Մոսկովու թագաւորին» վերնագրով և «Գուգալ մ'ես յերկ տեսայ» սկսվածքով հայրենային տաղաչափությամբ հորինված երգի մասին է, որը հայրեն չէ և պահպանվել է Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 1978 ձեռագրում՝ 1605-1606 թթ.: Այդ աշուղական երգը մենք ևս տպագրել ենք Նահապետ Քուչակի աշուղական երգերի շարքում, սակայն կատարել ենք որոշ վերապահում, քանի որ այդ երգի հնագույն ձեռագիրը 16-րդ դարի՝ 1543 թ. գրչագրված Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 5614 ձեռագիրն է (էջ 18բ-19ա), որտեղ երգի հեղինակ է հիշատակված Կիրակոսը [1, 121-122], իսկ 17-րդ դարում գրչագրված այս երգի տարբերակը «Պալանական ենք համարում, որ Քուչակը մշակել ու երգել է» [1, 121] որպես ժողովրդական երգի մշակում: Մինչդեռ այս երգը հայրեն չէ, այլ աշուղական երգ:

Փաստենք, որ Քուչակի ապրած ժամանակ՝ 1556 թ., Ստամբուլում գրչագրվում է մի

ձեռագիր, որում գուսանաժողովրդական հայրենը արտագրվում է որպես անանուն երգ, իսկ նույն ձեռագրում մեկ այլ հայրենային տաղաշարք արտագրվում է Խաչատուր Կեչառեցուց (13-14-րդ դդ.):

Բավական է ասել, որ Քուչակի ապրած ժամանակ արտագրված Ա/ԼԵ հայրենային շարքի վերջին միավորն ունի մի շարք տարբերակներ ու փոփոխակներ, ինչն ապացույցն է այն բանի, որ խոսքը գուսանաժողովրդական հայրենի մասին է: Այսպես՝ Ա/ԼԵ, 13-16 հայրենը մեզ հասել է թերի՝ հետևյալ տեսքով.

Յորժամ ի մօրէտ ծնար,
Դու լայիր, 'ւ ամէն խնդային,
Հանց մաքուր էլ յաշխարհէս,
Թէ ամէն լան, նայ դու ծիծաղիս [2, 125]:
Ահա նույն հայրենի թերի փոփոխակն է Ա/Օ, 123-126 միավորը.
Այն օրն ի մօրէտ ծնար,
Դուն լայիր, ամէն խնդային,
Հանց մաքուր էլ ի յաշխարհէս,
Թ' երկիր լայ, նայ դու ծիծաղիս:

Հայրենի այս փոփոխակը մեզ է հասել Վենետիկի Մխիթարյան միաբանության Մատենադարանի հմր. 1371 ձեռագրով՝ գրչագրված 1641 թ.:

Ակնհայտ է, որ և Քուչակի ապրած ժամանակ՝ 1556 թ., և նրա մահից գրեթե կես դար անց՝ 1641 թ., գրչագրված ձեռագրերում այս հայրենը մեզ է ավանդվել որպես անանուն գուսանաժողովրդական երգ, որ մի քանի դար անց սխալմամբ վերագրվել է Նահապետ Քուչակին, թեև անտրամաբանական է կարծել, թե Քուչակի կեղանության օրոք նրա գրած երգը կարող էր գրչագրվել որպես անանուն երգ:

Քննարկենք ևս մեկ փաստ: Ըստ Արիստակես Տևկանցի՝ «Այս ծովական գիշերս» երգը գրչագրվել է 1583 թ. Սեբաստիայում, ապա նույն ձեռագրից 1746 թ. Պետրոս Երեցն է արտագրել [4, ԺԲ], սակայն այդ հայրենն իրականում պահպանվել է երեք այլ ձեռագրերով: Այսպես՝ Ա/Կ, 169-176 միավորը պահպանվել է Վիեննայի Մխիթարյան միաբանության Մատենադարանի հմր. 671 ձեռագրում՝ գրչագրված 1668 թ. առաջ: Տևկանցի «Հայերգ»-ից Աս. Մնացականյանն այն տպագրել է Ա/ԶԲ, 1-8 տաղաշարքով.

Այս ծովական գիշերս ի բուն
Ես երկու շրջան մանեցի,
Խօշ եարս այլ ի միտս ընկաւ,
Թէզ մ' ելայ, զջափրաս վերուցի,
Փարչիկ մ' այլ գինի առի,
Խօշ եարիս դուռն գնացի,
– Խօշ եա ր, ամ զդուռն բա ց,
Զինն եկեր, ոտվիս կու մըսի [2, 312]:

Հայրենի մեկ այլ տարբերակ՝ վերջին երեք տողի երգային կրկներգի հավելումով, պահպանվել է Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցու հմր. 30 ձեռագրում, որը «Հայրեն է աստից կարգաւ, հոգոյ և սիրոյ» խորագրի ներքո Աս. Մնացականյանը զետեղել է Ա/ԶԳ, 427-437 միավորի տակ:

Այս հայրենի մասին գրել ենք. «Ուշագրավ է նաև հայրենի առաջին տողում տարբերակների առկայությունը, այսպես՝ «ծով գիշեր», «անական գիշեր», «ծովական գիշեր», «անատակ գիշեր» պատկերներն ունեն գեղարվեստական մտածողության այլազան դրսևորումներ, սակայն բոլոր դեպքերում այլասացությամբ ձևափոխ երկար գիշերվա արտահայտման իմաստ ունեն: «Անատակ» բառը «Միջին հայրենի բառարան»-ում բացատրվում է որպես «շատ խոր, անհատակ», իսկ «ծովական» բառը՝ «ծովի նման անհունորեն երկար»,

«անական»-ը՝ «անակն» բառի սեռական հոլովաձևն է, որը նշանակում է «առանց ակի, ակ չունեցող»: Հատկապես ուշագրավ է «անատակ գիշեր» արտահայտությունը, որը կապվում է հնագույն հեթանոսական պատկերացումների հետ: Ըստ հնագույն հավատալիքի՝ երկիրն ունի յոթ հարկեր, որոնք վար են իջնում. դրանք են՝ Գետինք, Դժոխք, Մանդարամետք, Տարտարոս, Գեհեն, Անդունդք, Յանատակ [5, 9-18]: «Անատակ»-ը ամենախոր, ամենահեռու գնացող հարկն էր, և այս համաբանությամբ էլ ձմռան երկար գիշերը համեմատվել է երկրի ամենահեռուն գնացող խորխորատի հետ: Կարծում ենք, հայրենի նախնական տարբերակում եղել է հենց այս բառը, որը հետագայում այլ պատկերացմամբ փոխակերպվել է:

Հայրենի մի քանի տարբերակների առկայությունը, «խօշ», «ջահրա», «թեգ», «փարչ» պարսկերեն բառերի գործածությունը, վերջինի նվագական, փաղաքշական «փարչիկ» տարբերակը, «անատակ» բառը՝ որպես հնագույն հավատալիքի դրսևորում հուշում են, որ գործ ունենք հնագույն շրջանից մեզ ավանդված գուսանածոդավրդական մի հայրենի հետ» [6, 166]:

Մինչդեռ Արիստակես Տևկանցը միայն մեկ աղբյուրի հիման վրա, առանց տարբերակների ու փոփոխակների գոյության մասին իմանալու, այս գուսանածոդավրդական հայրենը առանց ձեռագրական որևէ փաստի պարզապես վերագրել է Քուչակին:

Քննության առնենք ևս մեկ ձեռագրական փաստ: Մեքսատիայում 1587 թ. գրչագրված մի ձեռագիր կա, որը Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 2151 ձեռագիրն է. գրիչն է Մարտիրոս երեցը: Այդ ձեռագրի հայրենների տաղաշարքը Աս. Մնացականյանը տպագրել է որպես անհատական հայրեններ [2, 503], սակայն տաղաշարքում կան գուսանածոդավրդական հայրեններ, մասնավորապես Բ/ԼԱ, 101-108 միավորը, որը տեղ է գտել նաև Տևկանցի տպագրում [4, 38], իսկ Աս. Մնացականյանն այն տպագրել է որպես Ա/ՁԲ, 761-768 միավոր [2, 333]:

Ստացվում է, որ 1587 թ. Քուչակի կենդանության ժամանակ Մեքսատիայում գրչագրվել է հայրենային շարք, սակայն որպես դրա հեղինակ չի հիշատակվել Քուչակը: Դա նույնն է, թե Քուչակն ասի, թե ինքը չէ հայրենների հեղինակը: Ահա այդ հայրենը.

**Հաւատն՝ անառիկ բերդիկ,
Ով առնէ զինքն հայրենիք.
Թէպէտ թշնամիք ունի,
Որ բերեն իր շատ միրճունիք.
Թուման մի հեծել կապէ,
Ու լինի ի նայ նետաձիգ.
Նայ զայն մասխարա դնէ,
Ու թքնէ զերդ զխամաճիք [2, 503]:**

Նկատենք, որ Բ/ԼԱ, 101-108 միավորի տարբերակներն են ոչ միայն Տևկանցի տպագրածը՝ Ա/ՁԲ, 761-768, այլ նաև Ա/ՁԳ, 205-212, Բ/Դ 249-256 միավորները: Ուշագրավ է, որ վերջինը Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 7773 ձեռագրում, որը 15-րդ դարի ձեռագիր է՝ վերնագրված «Յովհաննէ վարդապետի ասացեալ Պըլուգ»:

Փաստն այն է, որ Տևկանցը 15-րդ դարի ձեռագրում գրչագրված հայրենը անիմացաբար վերագրել է 16-րդ դարի աշուղ Քուչակին, և սա այն դեպքում, երբ 16-րդ դարում գրչագրված Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 2676 ձեռագրում հայրենը գրչագրվել է անանուն տաղաշարքում, իսկ դրա մի տարբերակը 15-րդ դարում՝ Հովհաննէս Պլուգ Երզնկացուն:

Եզրակացություն

Նահապետ Քուչակի աշուղական երգերը ձեռագրերով մեզ են հասել նրա մահից՝ 1592 թվականից հետո, հիմնականում 17-րդ դարում, իսկ Քուչակին վերագրված հայրենները գրչագրվել են նաև 1492 թվականից՝ Քուչակի ծնունդից առաջ:

Քուչակի ապրած ժամանակ՝ 1556 թ. Ստամբուլում գրչագրվել է մի ձեռագիր, որում գուսանաժողովրդական հայրենը հիշատակվել է որպես անանուն երգ, իսկ նույն ձեռագրում մեկ այլ հայրենային տաղաշարք արտագրվել է 13-14-րդ դարի բանաստեղծ խաչատուր Կեչառեցու անունով:

Նահապետ Քուչակի ապրած ժամանակ՝ 1556 թ., և նրա մահից գրեթե կես դար անց՝ 1641 թ., գրչագրված ձեռագրերում մի թերի հայրեն մեզ է ավանդվել որպես անանուն գուսանաժողովրդական երգ, որ մի քանի դար անց սխալմամբ վերագրվել է Նահապետ Քուչակին, ում կենդանության օրոք նրա գրած երգը չէր կարող գրչագրվել որպես անանուն երգ:

Արիստակես Տեկանցը «Այս ծովական գիշերս» սկսվածքով հայրենը միայն մեկ ձեռագրական աղբյուրի հիման վրա վերագրել է Քուչակին, և իբր այդ ձեռագիրը գրչագրվել է 1583 թ. Սեբաստիայում, ապա այդ ձեռագրից 1746 թ. Պետրոս Երեցն է արտագրել, սակայն այդ հայրենն իրականում պահպանվել է այլ ձեռագրերով՝ Վիեննայի Մխիթարյան միաբանության Մատենադարանի հմր. 671 ձեռագրում՝ գրչագրված 1668 թ. առաջ, Պալաթի Ս. Հրեշտակապետ եկեղեցու հմր. 30 ձեռագրում, որոնք նույն հայրենի տարբերակներն ու փոփոխակներն են, որոնց գոյության մասին չիմանալով, այս գուսանաժողովրդական հայրենն առանց ձեռագրական որևէ փաստի Տեկանցը վերագրել է Քուչակին:

Սեբաստիայում 1587 թ. գրչագրված Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 2151 ձեռագրում Քուչակի կենդանության ժամանակ պահպանվել է մի հայրենային շարք, որի հեղինակ չի հիշատակվել Քուչակը, ավելին՝ այդ հայրենի տարբերակը 15-րդ դարում գրչագրված Մաշտոցի անվան Մատենադարանի հմր. 7773 ձեռագրում Հովհաննես Պլուզ Երզնկացու անունով է վկայված:

Ձեռագրական փաստերի համաձայն՝ Քուչակի ապրած ժամանակ և նրանից առաջ գուսանաժողովրդական հայրենները գրչագրվել են ձեռագրերով որպես անանուն երգեր, իսկ անհատական հայրենները՝ Հովհաննես Պլուզ Երզնկացու, խաչատուր Կեչառեցու անուններով: Մինչդեռ ձեռագրերում Քուչակի անունով վկայված երգերը հայրեններ չեն, այլ աշուղական երգեր, որոնք մեզ են հասել 17-րդ և հետագա դարերի ձեռագրերով:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-69>

Գրականություն

1. Նահապետ Քուչակ, Աշուղական երգեր, աշխատասիրությամբ Վանո Եղիազարյանի, Երևան, 2017:
2. Հայրեններ, աշխատասիրությամբ՝ Ա. Շ. Մնացականյանի, Երևան, 1995:
3. Բաբգեն աթոռակից կաթողիկոս, Յուզակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից, Անթիլիաս-Լիբանան, 1957:
4. Տեկանց Ա., Հայերգ, Թիֆլիս, 1883:
5. Հարությունյան Ս., Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000:
6. Եղիազարյան Վ., Քննություն գուսանաժողովրդական հայրենների, Երևան, 2023:

Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրեր

հմր. 181, 1624, 1636, 1661, 1770, 2079, 2148, 2151, 2566, 2611, 2961, 3411, 3505, 5614, 6564, 7717, 7773, 7953, 8968, 9229, 9322, 9597, 10006

Կարմիր վանուցն Անկյուրիո Մատենադարանի հմր. 91 ձեռագիր

Списки рукописей айренов и период жизни Наапета Кучака

Егизарян Ваню

Резюме

Ключевые слова: айрены, Аристакеc Тевканц, гусаны, Конгрегация Венских Мхитаристов, Матенадаран, Хачатур Кечареци

Ашугские песни Наапета Кучака дошли до нас в рукописях, составленных после его смерти в 1592 году, преимущественно в 17 веке, а некоторые айрены, приписываемые Кучаку, были записаны еще до его рождения, в 1492 году.

Аристакеc Тевканц приписал авторство айрена «Эта морская ночь» Кучаку, основываясь только на одном рукописном источнике, который якобы был составлен в Себастии в 1583 году. После этого Петрос Иерей переписал его из этой рукописи в 1746 году, однако, этот айрен фактически сохранился в других рукописях: в рукописи № 671 из Книгохранилища Конгрегации Венских Мхитаристов (составлена до 1668 года) и в рукописи № 30 из Палатской церкви Св. Архангелов, которые являются вариантами данного айрена. Не зная о существовании этих произведений, Аристакеc Тевканц без каких-либо филологических обоснований приписал этот народно-гусанский айрен Кучаку.

Согласно рукописным данным, в период жизни Кучака и до этого народно-гусанские айрены записывались в рукописях как анонимные песни, а авторами индивидуальных айренов назывались Ованес Плуз Ерзнаци и Хачатур Кечареци. Между тем, песни, дошедшие до нас в рукописях под именем Кучака, являются не айренами, а ашугскими песнями, сохранившимися в рукописях 17 и более поздних веков.

The List of Hayren Manuscripts and Life Period of Nahapet Kuchak

Yeghiazaryan Vano

Summary

Key words: hayrens, Aristakes Tevkantz, gusans, Congregation of the Vienna Mekhitarists, Matenadaran, Khachatur Kecharetsi

The ashugh songs of Nahapet Kuchak have reached us in manuscripts compiled after his death in 1592, mainly in the 17th century, and some hayrens attributed to Kuchak were written down before his birth, in 1492. Artashes Tevkants attributed the hayren with the beginning "This my sea night" to Kuchak on the basis of only one manuscript as if the latter was transcribed in 1583 in Sebastia, after that in 1746, Priest Petros copied it, though that hayren was actually preserved within other manuscripts: No 671 in the Matenadaran of the Mkhitarian Congregation in Vienna, before 1668, in Palati St. Archangel Church, No. 30 manuscript (all the mentioned were versions of the same hayren mistakenly attributed to Kuchak).

According to the manuscript facts, during Nahapet Kuchak's lifetime and before that the gusan-folk hayrens transcribed in manuscripts as anonymous songs and individual hayrens were attributed to Hovhannes Plus Erzinkatsi and Khachatur Kecharetsi. Meanwhile, the songs under the name of Kuchak, were not hayrens, but simply gusan songs that have reached us in the manuscripts of the 17th and later centuries.

Ներկայացվել է 16. 12. 2024 թ.

Գրախոսվել է 01. 02. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 05. 06. 2025 թ.

Уфологические городские легенды в современной фольклорной культуре Армении

Тадевосян Тадевос

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-75>

Ключевые слова: Айк (Орион), аномальные зоны, Арагац, НЛО, инопланетяне, мемораты, палеоконтакт

Введение

На современную фольклорную культуру Армении определенное влияние оказывают уфологические городские легенды. Эти легенды, отражающие мифологическую историю и архетипические представления о сверхъестественном (непознанном) мире, становятся важным компонентом культурного дискурса и служат своеобразным зеркалом социальной реальности. **Актуальность** данного исследования обусловлена растущим интересом к вопросам междисциплинарных связей между фольклором и разными аспектами массовой культуры, прежде всего городскими легендами, а также необходимостью осмысления их феномена в контексте постмодернистского мейнстрима.

Целью данной статьи является анализ уфологических городских легенд в современной Армении, их функций и значений в локальной культуре. Для достижения этой цели нами поставлены следующие **задачи**. 1) определить характерные черты уфологических легенд; 2) исследовать их место в системе фольклорного наследия; 3) выявить социальные и культурные контексты, в которых они возникают и развиваются.

Объектом исследования являются уфологические городские легенды, как специфический жанр фольклора, а **предметом** – их влияние на формирование общественного сознания как одного из сегментов фольклорного пространства Армении. **Научная новизна** статьи заключается в том, что уфологический компонент современных армянских городских легенд впервые становится предметом специального фольклорно-культурологического исследования.

Методологической основой статьи служат подходы культурной антропологии и фольклористики, позволяющие рассматривать уфологические легенды как социальный текст, отражающий исторические и культурные изменения в обществе.

Таким образом, исследование уфологических городских легенд в Армении представляет собой важный шаг в понимании динамики современной фольклорной культуры и ее взаимодействия с актуальными социальными процессами. Уфологические легенды Армении можно сгруппировать по четырем направлениям: 1) дислокация НЛО в аномальных зонах; 2) активность НЛО время войн, землетрясений и других катаклизмов; 3) визуализация НЛО в детском коллективе; 4) теория палеоконтактов.

Определение уфологических городских легенд и их роль в фольклорной культуре

Уфологические городские легенды представляют собой уникальный жанр современного фольклора, который включает в себя элементы мифологии и традиционного фольклора. Исследования социокультурных аспектов феномена НЛО, как утверждает С. Дмитриева, показывают, что многие свидетельские рассказы о НЛО представляют собой несказочную прозу в форме мемората и распространяются как в устной форме, так и с помощью письменных носителей [13, 147]. Однако уфологические легенды имеют и свои особенности: отчеты очевидцев подобных событий часто имеют четкую привязанность к месту, времени и другим деталям.

Многочисленные исследования подтверждают, что уфологические легенды включают

как свою символику и коды, укорененные в народной культуре, так и другие нарративы, функционирующие по фольклорным моделям. Городские легенды, являясь неформальным фольклорным нарративом, отражают механизм фольклорной артикуляции – процесс осознания и выражения неосознаваемых страхов и тревог общества, а также механизм компенсации, который помогает справиться с эмоциональным дискомфортом [15, 21]. Это искусственный интеллектуальный продукт, передающийся устно или через СМИ и интернет, который позволяет людям осмысливать окружающий мир и психологически противостоять потенциальным угрозам.

Элемент страха, присутствующий во многих рассказах о НЛО, также характерен для фольклора, где часто подчеркивается неизвестность и непредсказуемость окружающего мира.

Можно сказать, что уфологические легенды представляют собой часть фольклорной культуры, которая вписывается в традиционные мифологические сюжеты и образы. Рассказы об НЛО содержат те же элементы, что и традиционные фольклорные тексты, основанные на воспоминаниях очевидцев, эмоциональных переживаниях и детальном описании контекста событий.

Взросший интерес к уфологии можно объяснить как часть общего увлечения мистикой и аномальными явлениями в контексте космофилии или даже как массовый психоз, который обострился в период уфобума конца 1980-х – начала 1990-х годов. В периоды духовного кризиса общества такие истории становятся особенно популярными, предоставляя людям возможность уйти от реальности и ощутить связь с чем-то неизведанным.

Рассказы о НЛО могут переплетаться с мотивами из литературы, кино и других источников, отражая как эмоциональное, так и физическое состояние очевидцев. Вера в НЛО и внеземную жизнь иногда становится частью религиозных убеждений и милленаристских представлений, согласно которым контакт с инопланетянами может привести к фундаментальным изменениям в обществе. Милленаристы верят, что инопланетяне способны предотвратить хаос, поскольку находятся на более высоком уровне развития. Эти идеи часто черпаются из научно-фантастической и уфологической литературы, а также из сообщений людей, которые утверждают, что имели контакты с внеземными существами.

Խ. Աբովյանի գրած բազմաքանակ նամակների ու խնդրագրերի մի չնչին մասն է միայն պահպանվել [1, 368-369], որոնք իր կյանքի ու գործունեության տարբեր ժամանակներում նա հասցեագրել է իր ընկերներին ու բարեկամներին, սաներին կամ էլ ուղղել զանազան պետական գործիչների և պաշտոնական անձանց:

Նամակները հարուստ տեղեկություններ են հաղորդում Խ. Աբովյանի աշխարհայացքի և գրական-մանկավարժական գործունեության վերաբերյալ: Դրանք հասուն մարդուն բնորոշ մտածումների, դատողությունների և գիտակցված անելիքների մի ողջ շղթա են՝ համարձակ և ինքնավստահ. «*Լուսաւորութիւն ազգին մերոյ, ըստ իմ դատման, պարտի սկսանիլ ի հոգեւորականաց մերոց, որ գլուխ է և հոգի ազգին մերոյ*» [1, 154]:

Նամակները երկու բնույթի են՝ պաշտոնական և անձնական: Երկու դեպքում էլ նկատելի են նամակագրի չափազանց անկեղծությունը, անմիջականությունը և անկաշխադռնը. «Այս վավերագրերի մեջ մենք տեսնում ենք կենդանի Աբովյանին՝ իր անկեղծ, անմիջական խոսքով, հայրենասիրական-լուսավորական իր համարձակ ծրագրերով ու նախագծումներով, իր անվերջանալի հոգսերով ու տագնապներով, մերթ խանդավառված ու ոգևորված, մերթ՝ հուսահատական ու հիասթափական տրամադրություններով» [1, 368]:

Իս. Աբովյանի առաջին նամակը գրված է 1829 թվականին և ուղղված է Հովսեփ Տեր-Մարտիրոսյանին, իսկ վերջինը՝ 1848 փետրվարին՝ Իվան Անդրեիչին: Շուրջ 19 տարվա նամակագրության պատմություն: Հասցեատերերի թվում են շատ նշանավոր դեմքեր՝ Ներսես Աշտարակեցի, Քրիստիան Ֆրեն, Ֆրիդրիխ Պարրոտ, Էմիլյա Պարրոտ, Վասիլի Շուկովսկի, Թեոդոր Գրասին, Հարություն Ալամդարյան, Հովհաննես Դրիմեցի, Գևորգ Շահնազարյան և այլք:

Իս. Աբովյանը Դորպատում, Թբիլիսիում և Երևանում եղած ժամանակ հաճախ նամակագրություն է ունեցել ռուս և եվրոպացի գիտնականների, այդ թվում նաև գերմանացի հայտնի արևելագետ Քրիստիան Ֆրենի հետ: Այդ նամակներից ընդամենը իննի պատճեններն է ուղարկվել Հայաստան՝ շնորհիվ Լ. Մսերյանի: Ըստ Մսերյանի՝ նամակները գրված են «գեղեցիկ գերմաներենով»: Դրանց թարգմանությունը կատարել են Ստ. Կանանյանցը և Հ. Մանանդյանը: Նամակները գետեղված են «Դիվանում» [5, 103-123]:

Քրիստիան Ֆրենին ուղղված նամակներում արտացոլվում են Աբովյանի մեծ նվիրվածությունն ու վստահությունը՝ ողողված խորին ակնածանքով, երախտագիտությամբ և անկեղծությամբ: Ամենահուսահատ պահերից մինչև ամենաուրախ ապրումները Աբովյանը ներկայացնում է իր բարերարին. «էլ ու ՚մ պիտի դիմեմ իմ ներդրության միջոցին, եթե ոչ նրան, որն այնքան հաճախ և այնքան սիրալիք խնամել և ամեն ժամանակ յուր հայրական բարության, յուր սիրալիք բարոյացականության հավաստիքներն է տվել ինձ...» [1, 215]: Մեկ այլ նամակում էլ գրում է. «Ձեր բարոյացական զգացումները, որ դուք այնքան բարությամբ ամեն անգամ արտահայտում եք իմ նկատմամբ, լցնում են իմ սիրտը շնորհակալությամբ և ուրախությամբ: Չգիտեմ, թե ինչպես ամենաբարի նախախնամությունն այնքան անսպառ բարիք է հաճում շնորհել ինձ» [1, 230-231]:

1839 թ. թվագրված այս նամակներում Աբովյանն իր հովանավորին բարեկիրթ համեստությամբ պատմում է այն տվյալանքներն ու հավածանքները, ծայրահեղ ծանր վիճակը, որի մեջ գտնվում էր ինքը: Ներկայացնում է նաև իր ծրագրերն ու նպատակները, մտահոգություններն ու անհանգստությունները:

Այս և այլ նամակներում բացահայտվում են Աբովյանի խառնվածքի մի շարք առանձնահատկություններ: Նա զգացմունքային է, խորին ակնածանքով ու երախտագիտությամբ է լցված դեպի Դորպատի իր ուսուցչապետներն ու բարեկամները: Նա որդիական խոնարհությամբ է դիմում նրանց՝ կոչելով «բարերար և պաշտպան»: Համոզվելու համար մեջբերեք մի քանի հատված. «Մակյան գործել մերձավոր ընկերների և գիտության համար, որքան իմ ուժերը կներեն, ես իմ բարձրագույն, սրբազան պարտքը կհամարեմ և այս ձգտմամբ Ձեզ, **թանկագին բարերար, ծառայած լինելով՝ ես ինձ երջանիկ կհամարեմ**» [1, 208]:

Նամակներում հաճախ ենք կարդում ինքնակենսագրական և հուզական տողեր. «Հասակ իմ քսանամեայ գոյով յաւելանայ օրըստօրէ և նուազի ջերմագին իղձ իմ և ընդ նմա մեռանի և կենսի իմ, գորս զամենայն աւուրս հառաչանօք անցուցանեմ, առ որ եղի ի մտի այժմ կամ հասանել բաղձանաց իմոց, կամ տալ զանձն իմ ի վտանգ կորստեան» [1, 119]:

Անկեղծ խոստովանք է նաև Իվան Վասիլևիչին գրված նամակը (1842 թ., Թիֆլիս). «Բմ կյանքի 23 տարում, մարդկային կյանքի այդ կարևոր շրջանում, երբ մտավոր ընդունակություններն արդեն դադարում են իշխել վառ երևակայության և թեթև հիշողության այն երջանիկ ուժերի վրա, երբ մարդն արդեն սկսում է գործադրել պատանեկության ժամանակ ձեռք բերած աշխատությունների գանձը, ես նոր միայն ձեռնարկեցի ձեռք բերելու դրանք՝ թողնե-

լով հոգևոր կարգս, հայրենիքս... որպեսզի իմ հոգին լուսավորեն եվրոպական կրթության բարերար ճառագայթներով» [1, 258]:

Իր բոլոր նամակներում Աբովյանը գործածում է դիպուկ դիմելաձևեր՝ «*Բարեձնունդ տեղ*», «*Մեծպատիվ պաշտպան*», «*Բարեգույթ հայր*», «*Ձերոջ վսեմություն*», «*Գթառատ հայր*», «*Սրբազնակատար քահանայապետ*», «*Խնամառատ տեղ*» և այլն: Եվ սրանց հակառակ՝ նամակներն ավարտում է՝ «*գլխին ծառայ Ձեր*», «*խոնարհ ծառայ*», «*ամենանուստ ծառայ*» և այլ արտահայտություններով, որոնք վկայում են նրա համեստ ու պարզ բնավորության մասին:

Ցավի, վշտի ու կսկիծի ինքնամոռաց պոռթկում է Էմիլյա Պարրոտին ուղղված նամակը: Այն գրված է գերմաներենով: Թարգմանությունից պարզ են դառնում մեծ լուսավորչի հոգեցունց ապրումները: Իմանալով իր սիրելի բարերարի և ուսուցչի մահվան գույժը՝ Աբովյանը շտապում է ապրումակցել նրա կնոջը՝ դիմելով նրան՝ «*ամենաթանկագին, վշտահար բարեկամուհի*» ձևով. «*Եվ Դուք, խորապես վշտացած ամենաթանկագին բարերարուհի, Դուք վկա եք, թե ինչպիսի պայքարով աշխատում էի զսպել ինձ, երբ իմ սիրելի հոր և ուսուցչի մահն ամենադաժան հարվածն հասցրեց ինձ... Ես մխիթարվում էի Ձեր միջոցով, Ձեր սիրալիր կարեկցությամբ, Ձեր արցունքների միջոցով... Սակայն ոչ, ես չեմ կարող Ձեզ մխիթարել, ոչ, կարող եմ միայն Ձեզ հետ միասին լալ, սգալ, հառաչել*» [1, 243]:

Նամակում իր վիշտն ու ցավը, զգացումներն ու հույզերը Աբովյանն արտահայտում է հախտոն անկեղծությամբ՝ առատորեն գործածելով պատկերավորման միջոցներ և արտահայտչամիջոցներ՝ դարձնելով խոսքն առավել տպավորիչ: Ահա թարգմանությունից մի հատված. «*Հայր, ես քեզ սիրում եմ, ես քեզ սիրում եմ նաև գերեզմանից այն կողմ, մնաս բարյալ: Ցտեսություն: Ախ, ցավը խլում է ինձնից լեզուն ու խոսքերը: Արցունքները պղտորում են իմ աչքերը... Եվ, ախ, ո՞ր եմ նրա վերջին խոստումները... Ինչպե՞ս գամ ես այժմ Եվրոպա և ինչո՞ւ պիտի գամ: Որպեսզի տեսնեմ այն լուռ շիրմաքարը, որ իր տակ է առել իմ երկրորդ, իմ հոգևոր հո՞րը: Ջարիուրելի՜ հիշողություններ...*» [1, 243]:

Եվ այսպես անվերջանալի հարցերի, մորմոքի զգայացունց տեսարաններ, երախտագետ աշակերտի վշտալի բողոք ու հառաչանք, իսկ ավարտին՝ «*Մնացեք բարյալ: Մնաս բարյալ, պայծառակերպված հոգի, աստղերի այն վրանից, որտեղ Հավերժն է բազմած, նայիր նաև քո, ամբողջ կյանքում քեզ հավատարիմ և երբեք չուրացող սանին, բարեկամին, զավակին, քո Աբովյանին...*» [1, 245]:

Աբովյանը խորապես սգում է մեծ գաղափարներով տոգորված մարդու և ուսուցչի կորուստը:

Աբովյանի սիրտը մշտապես բաբախել է հայրենիքի ցավով ու հոգսերով, նրան հուզել են իր ժողովրդի ճակատագիրն ու վիճակը: Նամակները փաստում են, որ Աբովյանն ազգին ծառայելը համարել է իր կյանքի նպատակը: Ինչպես կարդում ենք, օրինակ, Է. Պարրոտին ուղղված նամակի տողերում. «*Իմ սիրտը բաղկացած է միայն անբուժելի վերքերից*» [1, 241]:

Հայրենասիրության մի ներբող է նաև 1832 թ. Դորպատից Հովհաննես Կարբեցուն ուղարկված նամակը: Գրաբարադիր այս նամակում հայրենիքի անձնվեր ու անմնացորդ նվիրյալ ճոխ ոճավորմամբ, մակդիրների առատ գործածություններով ստեղծում է գեղարվեստական անգուգական մի պատկեր, որտեղ զգացվում է մեծ հայրենասերի՝ դեռևս պատանեկան տարիներից որդեգրած ուղին՝ ապրել և մեռնել հայրենիքի համար. «*Ի դարձուցանել իմում գրեմս առ Հայրենիս, ներկայանալ ինձ նոր, երևումն՝ արեգակնաստիպ ճառագայթեալ ի Օռոս Հայաստանի, և խնդրիս հոգեպարոյր փայլի, փայփայի ի դեմս այնոցիկ ընդ որս անցին այն ոսկեղեն առուրք մանկութեան իմոյ:... Իմ տուն՝ Հայրենիք իմ, իմ վայելչութիւն՝ մեռանիլ վասն նորա, իմ փառք՝ որդիք նորա...*» [1, 137-144]:

Բերված օրինակները փաստում են, որ Աբովյանի նամակները պարզապես տեղեկատվական բնույթի չեն, այլ գեղարվեստական շնչով և ոճավորմամբ ողորկված հորինվածքներ են:

Անձնական նամակի գեղեցիկ նմուշներ են «*Անձանոթի*» նշումով նամակները (թվով

վեց)¹, որոնք հեղինակը գրել է տարբեր թվականների՝ 1830, 1835, 1836 և 1841: Դրանցից մեկն է միայն գրաբարագիր, մեկը ռուսերենով է, մյուսները՝ գերմաներենով: Ուշագրավ է հատկապես 1836 թ. Նոր Նախիջևանում գրված նամակը, որն ուղղված է Աբովյանի դորպատյան բարեկամուհիներից մեկին, ում հեղինակը դիմում է *«Ողորմած տիկին»* արտահայտությամբ: Նամակը կարևոր է Աբովյանի գրական հետաքրքրությունների ուսումնասիրման տեսանկյունից: Նամակագիրը բարձր է գնահատում տիկնոջից ստացած նվերը, որը կապվում է Շիլլերի անվան հետ (հավանաբար կա մ երկերի ժողովածուն է, կա մ նկարը). *«Օտարերկրյա ո՛չ մի գրող հենց սկզբից ինձ այնպես չի հրապուրել, ո՛չ մեկն այնպիսի մնայուն, անջնջելի ազդեցություն չի թողել ինձ վրա, ինչպես Շիլլերը. և եթե կա մեկը, որն իմ ապագա կյանքում հոգուս պահապանը, իմ առաջնորդն է լինելու, ապա դա պետք է միայն նրա վեհ հոգին լինի: Որքան պետք է ես ինձ շոյված զգամ, որը Դուք, Ձեզանից իսկ արած մի այսպիսի կրկնակի կողոպուտով... կամեցել էք ուրախություն պատճառել ինձ...»* [1, 204]:

Նետաքրքրական է նաև այդ նույն նշումով 1830 թ. ապրիլ ամսին թվագրված գրաբարագիր նամակը, որում գործածված քնքուշ դիմելաձևերը՝ *«խնդրօրին իմ, նազելի իմ, արև իմ»* տարակարծությունների տեղիք են տվել: Առաջին հայացքից թվում է, թե նամակը կնոջ է հասցեագրված, մինչդեռ նամակի ստորագրությունը *«Ջամենախոնարհ ծառայս Ձերդ անգին եղբայրություն...»* և հետագա տողերը փաստում են տղամարդուն ուղղված լինելը (հավանաբար մտերիմ ընկերներից կամ սիրելի աշակերտներից մեկին):

Այս նամակն ասես արձակ բանաստեղծություն լինի, որում հեղինակը ճոխ գրաբարով հայտնում է իր հիացմունքը նամակի հասցեատիրոջը՝ ամենայն հավանականությամբ վերջինիս ստեղծագործությունների՝ «բանք»-երի առիթով.

«...Մյնքան զգալի են ինձ բանք Ձեր, ա՛յնքան հոգեխառն, մինչև յընթերնով իմում գիրաբանչյուր տողի, գիրաբանչիւր բանի, նաև զբառի իսկ, զարտասուս ջերմագինս հոսեալ առատանամ ի բանս և յօրինութիւն զՁեզ, զհոգւոյս մխիթարութիւն...» [1, 123]:

Իր բոլոր նամակները Աբովյանը գրում է ստեղծագործ անմիջականությամբ, գրողի գրելաձևի բնորոշ են գեղարվեստական նկարագրությունները և պատկերավոր համեմատությունները.

«Աղաչեմ գհարաւ՝ Ձեզ լինիլ կենսաբեր՝ և ես երբևիցէ ի հիւստոյ

Գամ առ քեզ:

Գալցէ ձեռն այն նաւեան՝ Արևուղ գհորիզոն՝ ես ուր և շրջեցայց, այլ անդրէն

Գամ առ քեզ:

Թէ անիւ օրհասին մեղմընթաց ուղղեսցին, յԵւրոպեան ի ծոցում ո՛չ մնամ

Գամ առ քեզ...» [1, 123]:

Մա հուզական խոսքի ու քնարականության մի պատկեր է, ուր արձակ շարադրանքն ասես վերածվել է բանաստեղծության:

Պատկերավորություն առումով չեն զիջում նաև Հովսեփ Տեր-Մարությանին, Հովհաննես Դրիմեցուն, Ս. Նազարյանին, Հ. Պետերմանին գրված նամակները: Ի դեպ, վերջինիս նամակին Աբովյանը կցել է նաև իր՝ Արարատին նվիրված բանաստեղծությունը:

Խ. Աբովյանի և անձնական, և՛ պաշտոնական նամակների լեզուն պարզ ու հասկանալի ժողովրդական գրաբարն է (քանի որ դրանց մեծ մասն ուղղված է հոգևոր հայրերին): Գրաբարագիր նամակների շարադրանքը փաստում է, որ Աբովյանը հրաշալի տիրապետել է ոսկեդենիկ գրաբարին, թեև նրա ապրած գրական-ստեղծագործական ժամանակաշրջանում հին հայերենը կորցրել էր իր հաղորդակցական հնարավորությունները, իսկ նոր գրական լեզուն՝ աշխարհաբարը, դեռևս լիովին ձևավորված չէր, և հասարակության տարբեր շերտերը հաղորդակցվում էին կա մ բարբառներով, կա մ ժամանակի գրաբարով: Ահա այս

¹ Այդ նշումը տրվել է հատորը կազմողի կողմից այն դեպքում, երբ հնարավոր չի եղել որոշել նամակի հասցեատիրոջը:

շրջանում է, որ Աբովյանը գրում է իր գրաբարագիր երկերի մեծ մասը, ներառյալ նաև նամակները: «Մխիթար աբբա հոր եւ Մխիթարյան միաբանության նվիրյալ գործունեությունը ոգևորել է երիտասարդ Աբովյանին՝ վերակենդանացնելու հին գրական հայերենը: Այս է պատճառը, որ մեծ գրողը ստեղծել է հին հայերենով գրված հարուստ գրական-գիտական ժառանգություն» [4, 45]: «Գրաբարյան բարձր ոճը ժողովրդախոսակցական, անգամ նեղ բարբառային բառուբանի հետ զուգադրելու առաջամարտիկ ու լեզվաշինարար» [4, 54] Աբովյանը վարպետությամբ է ընտրում բառերն ու բառաձևերը՝ թափանցելով բառի էության մեջ՝ դրսևորելով բարձր և խոսքը նպատակային գործածելու հմտություն [3, 649], երբեմն էլ չբավարարվելով գրաբար բառի հնարավորություններով՝ կերտում է նորը: Այսպես՝ գրաբարյան *տաղտապեմ (իմ)* բայից, որ նշանակում է «նեղել, հարստահարել, գրկել» [2, 840], ստանում է *տաղտապանք* գոյականը. «Ասա ինձ, նազելի իմ, մի թե այս տաղտապանք իցեն զմիսեամբք...» /Ասա ինձ, ի մ՝ նազելի, այդ նեղությունները արդյոք կլինեն միմյանց շուրջը/ [1, 123]:

Նամակներից մեկում գրաբարյան հայտնի բառերի նմանությամբ կերտում է նորերը՝ *արեզնատիպ, հոգեպարոյր*: Այսպես. «Ի դարձուցանել իմում գղէմս առ Հայրենիս, ներկայանալ ինձ նոր երևումն **արեզակնատիպ** ճառագայթեալ ի Օրոցս Հայաստանի, և խնդրոթին **հոգեպարոյր**՝ փայլի, փափայի ի դէմս այնոցիկ ընդ որս անցին այն ոսկեղէն առուրք մանկութեան իմոյ» [1, 137]:

Մեծ ոգևորությամբ ու հայրական գթասրտությամբ է գրված հատկապես Գեորգի Շահնազարյանին՝ իր գաղափարակից աշակերտին ուղղված նամակը՝ թվագրված 1847 թ. հոկտեմբերի 19-ին, ուր գգուշավորությամբ պատվիրում է նրան, իր գիրը ծածուկ կարդալ և պատռել կամ հետ ուղարկել, որպեսզի օտար ձեռք չընկնի. «Գեորգի՛ ջան, ժորժ ջան, իմ հրեշտակ, իմ հոգվո՛ւյս լույս ... Էլի՛ միտս դո՛ւ ես, քունս դո՛ւ ես, երագս դո՛ւ ես: Երանի՛ Մամադ Շաֆու աչքին, որ քեզ կտեսնի, երանի՛ նրա ձեռին՝ որ էս թուղթը քեզ կտա, նրա բերնին, որ քեզ հետ կխոսի... երե՛ սիդ դուրբան, էդ հրեշտակայի՛ն էրեսիդ, էդ լուսաթա՛թախ պատկերիդ...» [1, 287]:

Իր սիրելի աշակերտներին՝ Գեորգի Շահնազարյանին և Գ. Գեղամյանին Աբովյանը 6 նամակ է հղել, որոնցից հինգը գրաբարով է, իսկ մեկը գրված է Քանաքեռի խոսվածքով՝ հավանաբար սրանով ընդգծելով իր մտերմությունն ու հարազատությունը սաների նկատմամբ. «Գարծում էի ամեն սևաթ, թե Միքիլն է իմ վերջը. Միքիլը մարդ աչքի առաջին ունենալիս, էլ սե՛ր կզա միտքը, յա սիրելի, յա որդի: Էս վերջին թղթումը կարճառոթեն քեզ գրեցի իմ էն ժամանակվան դառնության պատճառները. յարա՛բ ձեր ձեռը հասա՛մ, յարա՛բ ինչպես ասել էի, էնպես ծածուկ կարդացիք...» [1, 287]:

Այս անկեղծ խոստովանությամբ բացահայտվում է Աբովյանի հոգեվիճակը, այն ապրումներն ու փոթորկումները, որ ունեցել է մեծ մտածողը տիրող կեղծիքի և զրպարտության մթնոլորտում:

Խ. Աբովյանի հայտնի ու խորհրդավոր նամակներից են նաև Ներսես Աշտարակեցուն ուղղված երկու նամակներ: Առաջինը թվագրված է 1834 թ. հունիսի 10-ին: Այս նամակում երևում է մեծ մտածող և ազատաբաղձ Աբովյանը, որը միտված է վեհ նպատակի. «Անդ հարստահարութիւն թշնամեաց վարէր և կրթէր գծողովորդն ի ջերմեռանդութեան կրօնի և աստուածապաշտութեան, այժմ ազատութիւն քաղաքական բառնայ և արմատախիլ առնէ և զվերջին մեր և զառաջին զառաքինութիւն, որով ազգն Հայոց՝ յօրէ՛ անկման իւրոյ մինչև ցայսօր՝ բարձր ի զլուխ պանծայր ի մէջ ամենայն ազգաց, գիատատութիւնն ասեմ հաւատոյ և զմաքրութիւն բարուց, զանկեղծ ջերմեռանդութիւն առ կրօնս և ազգակից իւր» [1, 299]:

Խ. Աբովյանի մյուս պաշտոնական գրագրություններն ու խնդրագրերը, որոնք ամենատարբեր հարցերով ու խնդրանքներով ուղղված են ցարական պաշտոնյաներին, հոգևոր ու պետական գործիչներին, կրում են ժամանակի լեզվական ազդեցությունը: Դրանք գրված են գրագետ ու ճոխ լեզվով, երբեմն, ըստ անհրաժեշտության, նամակագիրը գործածում է նաև

օտարաբանություններ. «...Հարկադրիմ հասուցանել զայն՝ առ պարոն **նաղվժօրհի տվէտ-նիկ պրօֆէսոր Արխն, գորոյ զելն ի լեառն Արարատ հաստատէր այն վկայութիւն**» [1, 271]:

Անգամ պաշտոնական գրություններում նկատելի է գրողի անմիջականությունն ու անկեղծությունը, օրինապաշտությունն ու հեզությունը:

ԱՄՓՈՓՈՄ: Կատարված ուսումնասիրությունից ելնելով՝ հանգում ենք հետևյալին.

- Հոդվածում ներկայացվում է շուրջ 19 տարվա նամակագրության պատմություն: Ուսումնասիրության տիրույթում քննվել են ոչ միայն գրաբարագիր, այլև օտար լեզուներով ռուս և եվրոպացի գիտնականներին և նշանավոր գործիչներին ուղղված նամակները: Սրանով է պայմանավորված *հոդվածի արդիականությունը*:
- Նամականին (ընդամենը 72 նամակ) ի. Աբովյանի գրաբարագիր գրական ժառանգության արժեքավոր մասն է:
- Հոդվածում քննել ենք գրողի և՛ անձնական, և՛ պաշտոնական նամակները. որոնցում նկատելի են նամակագրի չափազանց անկեղծությունն ու անմիջականությունը:
- Նամականու ուսումնասիրությունը թույլ տվեց իր իսկ կերպավորմամբ բացահայտելու Աբովյանի քաղաքական, հասարակական և գրական հայացքները, գրողի հույզերն ու հոգեկան աշխարհը:
- Թեև նամակներից շատերը գրված են օտար լեզվով, այնուամենայնիվ, դրանք մեծ լուսավորչի ստեղծագործական ուղու պատկերավոր և խոսուն վկայություններ են:
- Նամականին արժեքավոր է նաև նրանով, որ այստեղ բացահայտվում են Աբովյանի բառակերտման հմտությունները: Թափանցելով բառի էության մեջ, դրսևորելով բառը և խոսքը նպատակային գործածելու կարողություն, երբեմն էլ չբավարարվելով գրաբար բառի հնարավորություններով՝ գրողը կերտում է նոր բառեր՝ իր ասելիքն առավել տպավորիչ դարձնելու նպատակով:
- Նամակներն աչքի են ընկնում նաև դիպուկ դիմելաձևերի գործածմամբ:
- Նամակագրության մեջ մի նոր որակ էր Աբովյանի խոսքի ու պատումի, պատկեր-նկարագրություններ ստեղծելու արվեստը, որով նամակները նմանվում են գեղարվեստական ստեղծագործությունների:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-91>

Գրականություն

1. Աբովյան ի., Երկերի լիակատար ժողովածու ութ հատորով, հ.10, Երևան, 1961:
2. Աւետիքեան Գ., Միւրմէլեան ի., Մ. Աւգերեան Մ., Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Ս. Ղազար, Վենետիկ, 1837, հ.2:
3. Բազյան Ս., Աբովյանի գրական ժառանգությունը, Երևան, 1966:
4. Դիլբարյան Ն., Խաչատուր Աբովյանի գրաբարագիր ժառանգության լեզվական-բանասիրական քննություն, Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն, 2024, Vol. 15, N. 2(44), հուլիս:
5. Դիվան Խաչատուր Աբովյանի (կազմեց՝ Ե. Շահագիզ), գիրք 1-ին, Երևան, 1940:
6. Հակոբյան Պ., Խաչատուր Աբովյան: Կյանքը, գործը, ժամանակը (1809-1836), Հայկական ՄՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1967:
7. Մուրադյան Ն., Աբովյանի պոետիկան, Երևան, 1979:

Особенности структуры эпистолы Хачатура Абовяна

Саакян Рузанна

Резюме

Ключевые слова: *эпистола, прошение, наследие (написанное на древнеармянском языке), искренность, непосредственность, языковые-стилистические особенности, самовыражение, художественная выдумка*

В статье представлена история эпистолярного наследия Хачатура Абовяна, охватывающая период около девятнадцати лет. Исследование охватывает как письма, написанные на древнеармянском языке, так и обращения к русским и европейским ученым и выдающимся деятелям, составленные на иностранных языках, что придаёт работе особую актуальность и межкультурное значение.

Особое внимание уделяется 72 письмам, представляющим собой важную часть литературного наследия Х. Абовяна как автора, активно использовавшего древнеармянский язык. В исследовании рассматриваются как личные, так и официальные письма, отличающиеся искренностью, непосредственностью и эмоциональной насыщенностью. Анализ текстов позволил глубже понять политические, социальные и литературные взгляды Абовяна, а также особенности его внутреннего мира.

Несмотря на то что значительная часть писем написана на иностранных языках, они сохраняют яркость, выразительность и художественную ценность, отражая творческий путь писателя-просветителя. Эпистолярные тексты также демонстрируют лексико-стилистическое мастерство Х. Абовяна, в частности его способности к словообразованию. Стремясь к точности и выразительности, автор нередко выходит за рамки существующего литературного языка, создавая новые слова и речевые формы для более глубокого выражения мысли.

Письма Х. Абовяна представляют собой не только историко-документальный, но и художественный интерес: в них проявляется оригинальное авторское мастерство в области повествования и речевой изобразительности, что сближает эпистолярный стиль писателя с художественной прозой.

Peculiarities of the Structure of Khachatur Abovyan's Epistles

Sahakyan Ruzanna

Summary

Key words: *epistles, petition, heritage (written in Old Armenian), sincerity, directness, linguistic-stylistic features, self-expression, fiction*

The paper presents the history of the correspondence covering about 19 years.

Not only letters in Old Armenian, but also letters addressed to Russian and European scholars and prominent figures in foreign languages were considered within the framework of the study. This is the reason for the *relevance of the article*.

72 letters in total are valuable components of Kh. Abovyan's literary heritage as an author in Old Armenian. The article explores both personal and official letters of the writer, in which his excessive sincerity and directness are noticeable. Although many of the letters are written in foreign languages, they are nevertheless colorful and expressive testimonies of the creative path of the great enlightener.

The epistle is also valuable in such a perspective that it reveals Abovyan's skills in word formation. Penetrating into the essence of words and demonstrating the ability to use words along with the speech purposefully, sometimes not being satisfied with the possibilities of literary language, the writer creates new words to make his thoughts more impressive.

Moreover, the epistolary work reveals a new quality of the art of speech and narration. Through vivid images-descriptions of Abovyan, letters resemble works of art in their expressive depth.

Ներկայացվել է 26. 08. 2024 թ.

Գրախոսվել է 09. 10. 2024 թ.

Ընդունվել է տպագրության 05. 06. 2025 թ.

Проявления приема «всезнающего рассказчика» в произведениях Э. Манро

Парсаданян Лилит

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-99>

Ключевые слова: повествование, литературный анализ, психология персонажей, сложность человеческой природы

Введение

Художественная литература дает возможность глубоко исследовать и раскрывать образы индивидуальной и национальной идентичности, исследовать системы ценностей, ключевые проблемы и связанные с ними вызовы, охватывая широкий спектр тем – от личных переживаний до общественных проблем. Она открывает перед читателем возможность проследить эволюцию творческого пути писателя, его становление, а также увидеть отражение национальных особенностей автора в его произведениях на протяжении всего творчества, что позволяет читателю глубже понять не только самого автора, но и особенности эпохи, в которой он жил и творил.

Именно в художественной литературе полностью декодируется весь спектр внутренних конфликтов и противоречий героев произведения. Читатель целиком погружается в иной мир, растворяется в нем, пытаясь пройти по уже знакомым и еще неизведанным его уголкам. Он пытается решить определенные проблемы и преодолеть стоящие перед ним трудности, и, что самое важное, сопоставляет собственные национальные ценности, пути поиска своей идентичности с опытом героев того или иного произведения и, предлагая собственные решения, находит ответы на свои вопросы.

Художественная литература – это замечательный и удивительный мир, совмещающий совокупность сравнительных методов и глубоких исторических познаний, что в итоге приводит к созданию выдающихся литературных произведений. Она первой взяла на себя смелость осветить все многообразие мировых геополитических процессов и представить их всему человечеству. Писатели не только делились волнующими человечество проблемами, но и освещали их, пытаясь найти конкретные решения этих проблем.

Что же касается авторского «присутствия» в литературном произведении, то оно в нем обнаруживается в разной степени и в разных формах. В книге У. Ле Гуин «Парус для писателя от Урсулы Ле Гуин» автор выделяет 6 типов повествования, знание которых позволяют читателю открыть для себя новые смыслы и лучше понять прочитанное: «надежный рассказчик»; «отстраненный автор («муха на стене», «кинокамера», «объективный рассказчик»); ограниченное третье лицо; вовлеченный автор или «всезнающий рассказчик»; рассказчик-наблюдатель, повествующий от первого лица; повествующий от третьего лица [1]. По мнению исследователей, в повествовании от 3 лица повествователь – рассказчик-наблюдатель наиболее близок автору, а в сказе рассказчик наиболее отдален от него. Как справедливо указал Б.О. Корман, рассказчик в сказе не только субъект речи, но и объект речи. Вообще можно сказать, что, «чем сильнее личность рассказчика обнаруживается в тексте, тем в большей степени он является не только субъектом речи, но и ее объектом» [3, 34]. Анализ всех типов повествования не входит в задачи настоящей статьи, оно может стать предметом отдельного исследования. В данной статье мы остановимся лишь на анализе приема «всезнающего рассказчика».

Актуальность темы данной статьи обусловлена необходимостью анализа такого

распространенного типа повествования, как прием «всезнающего рассказчика» в канадской англоязычной литературе, а именно, в произведениях Элис Манро.

Цель данной статьи – детально изучить прием «всезнающего рассказчика» в рассказах Э. Манро. В соответствии с поставленной целью в работе ставятся и решаются следующие **задачи**:

- осветить основные типы повествования;
- рассмотреть использование приема «всезнающего рассказчика» в рассказах Э. Манро («Слишком много счастья»; «Мальчики и девочки»; «Дороже самой жизни» и др.);
- сделать соответствующие выводы.

Объектом исследования являются рассказы Э. Манро.

Предметом исследования в данной статье является специфика использования приема «всезнающего рассказчика» в рассказах Э. Манро.

В основу данного исследования положены традиционные **методы исследования**: наблюдение, описание, сопоставление, а также методы анализа и синтеза, индукции и дедукции, мысленного моделирования, метод выборки, метод интерпретации полученных данных. В настоящей работе все они взаимосвязаны и органично дополняют друг друга, отвечают поставленным задачам.

Основная часть

В представленной статье подробнее остановимся на таком известном приеме, как «вовлеченный автор» или «всезнающий рассказчик». Это не только самый распространенный режим повествования, а еще и самый универсальный, гибкий и комплексный, но для писателя он является еще и самым сложным. «Всезнающий рассказчик» в литературе – это повествователь, который обладает полной информацией о всех аспектах описанной им истории: мыслях и чувствах героев, прошлом, настоящем и будущем событий. Повествование в этом случае ведется не с точки зрения одного из персонажей, здесь описываются взгляды и восприятие, дается анализ и высказываются предположения, которые может сделать только сам автор.

Как было указано выше, художественная литература – именно та сфера, где полностью расшифровывается весь спектр внутренних конфликтов и противоречий героев художественного произведения. Канадская литература также не осталась в стороне от глубокого осмысления ряда общечеловеческих проблем. Ярким представителем современной канадской англоязычной литературы является Элис Энн Манро (1931–2024) – канадская новеллистка, лауреат Букеровской премии, трёхкратный лауреат канадской премии в области фантастики, лауреат Нобелевской премии по литературе за 2013 год. Нобелевскую премию ей вручили с формулировкой «мастеру современного рассказа». Действительно, Элис Манро, признанная мастером короткого рассказа, известна своими глубокими и подробными изображениями повседневной жизни Канады. Миром Манро становится мир послевоенной Канады, когда женщины начинают испытывать ограниченную свободу.

Одной из главных черт её творчества является использование приёма «всезнающего рассказчика», который позволяет автору свободно перемещаться между сознанием персонажей, раскрывая их внутренний мир и мотивы поступков. В произведениях Манро этот приём приобретает особую значимость, поскольку она использует его для углубленного анализа человеческих отношений. Рассказчик в её произведениях хотя и сохраняет объективность, но при этом чутко передаёт эмоциональные состояния персонажей. Голос рассказчика есть в каждом ее произведении, он всегда занимает определенную позицию по отношению к происходящему. Мы, читатели, можем разделять эту позицию или не соглашаться с ней, но, тем не менее, именно этот голос ведет нас за собой.

В рассказах Манро звучат, в основном, два священных мотива бессмертия: автор обращается к своей семье, родителям, друзьям и жителям родного Онтарио. Последним она уделяет особое внимание, поскольку считает, что только связь с родной природой способна обеспечить преемственность человеческого рода и души. Надо всем этим возвышается идея памяти и утраты, поскольку автор фокусирует свое внимание на роли памяти в сохранении идентичности и связи сменяющих друг друга поколений. Посредством памяти она воскрешает своих родителей, друзей. Память становится для нее не просто совокупностью воспоминаний, а источником для сюжетов, образов и идей, которые она воплощает в своих произведениях.

Первой книгой Э. Манро, которая вышла в России, стал сборник рассказов «Слишком много счастья» (2009). В одном из рассказов сборника повествуется о незаурядной женщине-математике Софье Ковалевской (1850–1891). Верная своему особому методу «сжимать» повествование Манро, с помощью ретроспекций в детство и юность известной ученой, описывает почти всю жизнь своей героини, полную борьбы, неудач и достижений, взлетов и падений. Большая часть рассказа посвящена последнему периоду жизни Ковалевской, по всей вероятности, самому счастливому, так как в это время она, наконец, находит работу в Стокгольмском университете и – по версии автора – готовится выйти замуж за своего дальнего родственника Максима Ковалевского. Однако по дороге в Швецию сильно простужается и заболевает воспалением легких. В возрасте сорока одного года она умирает в Стокгольме, сказав перед смертью: «Слишком много счастья» [6].

«Слишком много счастья» – далеко не единственный рассказ Манро, в котором вырисовывается тема России. Очевидно, что русский роман XIX в. и, в частности, романы Л. Н. Толстого «Война и мир» и «Анна Каренина» и др., несомненно, оказали большое влияние на Э. Манро, поэтому отсылки к этим произведениям мы встречаем в рассказах «Случай», «Страсть», «Способности» (сборник «Беглянка»), «Амундсен» (сборник «Дороже самой жизни») и др. [7], [8].

Несомненным достижением Манро, на наш взгляд, являются ее рассказы о человеческих взаимоотношениях, трудностях понимания и, конечно, о любви. Писательница всегда сохраняет дистанцию, не договаривая чего-то и предоставляя читателю самому разобраться в описываемой ситуации.

Как и в сборнике рассказов известной канадской писательницы Маргарет Лоренс «Птица в доме» (1970), сравнение с которым неизбежно напрашивается, Элис Манро акцентирует не события, а их осмысление, попытку понять происходящее.

Э. Манро, благодаря своей свободе, стремится найти родственные души друзей и единомышленников. Большинство героев ее историй – женщины, а мужчины – всего лишь второстепенные персонажи, которые создают проблемы для женщин и оставляют их наедине с ними.

Ключевой особенностью ее женских персонажей является их ярко выраженная женственность и осознание своей гендерной роли. Автор подчеркивает двойственную природу женщин: с одной стороны, они женственны и традиционны, с другой – в них есть дикая, независимая сила, которая проявляется в условиях отсутствия сильного мужского плеча. В женщине живут внешняя и внутренняя формы, одна из которых живет в видимом мире, а другая – в совершенно неизвестном и невидимом. Внешняя форма живет благодаря дневному свету и может быть очень легко обнаружена, в то время как внутренняя форма иногда путешествует из одного места в другое, и очень часто просто дремлет во внутреннем мире женщины. Он появляется и исчезает довольно быстро. Чтобы понять эту двойственность, женщинам иногда приходится превращаться в мужчин, а мужчинам – в женщин.

Чтобы придать процессу создания художественного произведения четкую логическую структуру, Э. Манро связывает временные понятия «прошлое», «настоящее» и «будущее» с помощью различных интерпретаций в конкретных ситуациях. Ее рассказы настолько богаты, насыщены и содержательны, что, по мнению многих критиков, напоминают небольшие романы. Создавая свои произведения, Манро не стремится к краткому разрешению конфликта в рассказе, она способна довести небольшое произведение до кульминации и завершить его именно в этом напряженном моменте. Как отмечает Н. Л. Зыховская, литературоведческий подход «предполагает поиск методов и способов выявления роли и функции в общем смысловом поле художественного текста» [2], и именно в этом аспекте запах, например, становится частью поэтики текста, которую исследователь способен выделить из целого. К слову, в рассказе «Фамильные мебеля» («Family Furnishings») – «запах мужских тапок, утративших форму и первоначальный облик», стойкий мужской «запах» комнаты, «с его стыдливо прячущимся, но неподатливым видом сопротивления женскому владычеству» [9, 211]. Исследователи отмечают особую роль различных элементов художественного произведения, которые позволяют говорить о «метафоре запаха» в произведениях словесности. Запахи как явление в прозе Э. Манро тесно сопряжены с мотивом памяти [4, 93-94].

Э. Манро постоянно поддерживает контакт со своими читателями, предоставляя им возможность самостоятельно размышлять и судить о происходящем. Все это позволяет ей создавать живую связь между ее персонажами и читательской аудиторией. Это означает, что Э. Манро является не только писателем, но и читателем. Ее творчество основано не только на вдохновении, но и на мастерском владении литературными приемами, таким, как создание ярких персонажей, правдоподобной среды и атмосферы человеческих отношений.

В целом понятие прототипа в творчестве Манро является двояким. Как уже указали выше, с одной стороны: это люди, которые реально существовали, жили и совершали определенные действия при определенных обстоятельствах, с другой: это люди, которые возможно или вероятно существуют и склонны к аналогичным предполагаемым действиям. Это обобщенные образы, воплощающие в себе определенные черты и склонности. Следует отметить, что эта двойственная концепция лежит в основе персонажей, созданных Манро: они одновременно и реальные, и нереальные. Манро отмечает, что ее герои, с одной стороны, знакомы ей, так как она черпала вдохновение в реальных людях из своего окружения, а с другой – являются плодом ее воображения, их психологические портреты созданы автором [11].

Разберем еще несколько ее рассказов.

Сборник рассказов «Ненависть, дружба, ухаживание, любовь, брак» состоит из девяти рассказов, которые концептуально отличаются друг от друга, однако по языковым и стилистическим признакам выдержаны в одном стиле. Это рассказы: «Ненависть, дружба, ухаживание, любовь, брак» (“Hateship, Friendship, Courtship, Loveship, Marriage”), «Плавучий мост» (“Floating Bridge”), «Крапива», (“Nettles”), «Мишка косопалый гору перелез» (“The Bear Came over the Mountain”) и др.

Заглавный рассказ сборника – «Ненависть, дружба, ухаживание, любовь, брак» – несколько отличается от остальных своим стилем: в нем большое место занимают письма. В рассказе действие происходит в Канаде, в юго-западном Онтарио, где героиня рассказа – простая, бедная незамужняя Джоанна работает домработницей у мистера Макколи и его внучки Сабиты. Мать Сабиты давно нет в живых, а ее отец, Кен Будро, живет в бедности в другом селе. Сабита дружит с Эдит, дочерью мастера по ремонту обуви, жизнь которой протекает довольно скучно из-за однообразного рабочего образа жизни. Эдит и Сабита идут

на обман, подделывают любовные письма отца Сабиты к Джоанне. Однако Джоанна, не ведая ничего и убежденная в правоте чувств Кена, использует свои довольно значительные сбережения для того, чтобы поехать в то удаленное село, где живет Кен и встретиться с ним. Приехав туда, она обнаруживает, что Кен заболел, и с любовью и терпением заботится о нем, пока он полностью выздоравливает. Осознавая, что Кен не может управлять своей жизнью, не может взять ответственность за нее, Джоанна берет на себя эту нелегкую обязанность. Кен, впечатленный решимостью Джоанны, не сомневается в ее решениях, и у них завязываются отношения. Несколько лет спустя Эдит узнает, что Кен и Джоанна поженились, и у них есть ребенок. Именно юные девушки, не обремененные взрослой мудростью, посредством писем смогли соединить сердца людей, кардинально меняя их судьбы.

Этот рассказ посвящен жизни, надеждам, мечтам и целям женщин: их отношениям к браку, к тем, кто каким-либо образом соприкасается с их жизнью, какими бы кратковременными или длительными ни были эти периоды, а также необычайным перипетиям судьбы.

В следующем рассказе – «Плавучий мост» – Джинни, тяжело больная женщина средних лет, едет с мужем Нилом с приема врача. Она очень переживает по поводу неутешительных результатов анализов, однако, ее муж совсем не обеспокоен этим и довольно спокоен. Вместо того, чтобы поддержать свою жену в этой непростой ситуации, он флиртует с Хелен, молодой женщиной, которую они наняли помогать по дому, пока Джинни проходит химиотерапию. В конце рассказа Джинни разрешает другому герою рассказа – сыну приемных родителей Рики – не только общаться с ней, а и позволяет ему проводить ее, и они целуются на плавучем мосту. Этот небольшой акт возмездия «возрождает» Джинни, которая теперь чувствует себя способной бороться за свое здоровье и счастье.

В рассказе «Мишка косопалый гору перелез» («The Bear Came over the Mountain») героиня рассказа Фиона волею судьбы становится пациенткой лечебного учреждения для душевнобольных. Болезнь день за днем стирает ее личность, прежние привязанности и привычки постепенно забываются. Она на время утрачивает даже связь с любимым мужем Грантом, который с горестью замечает, что их многолетний брак рушится на глазах. Однако, Грант, который никогда не был верен своей жене, видит, как в душе Фионы зарождается чувство к одному из больных, старику Обри, в облике которого было нечто от «красоты сильного, но сломленного престарелого коня» [9, 355]. Наблюдая за изменившейся до неузнаваемости женой, Грант вспоминает и приятные эпизоды из их совместной жизни, важной частью которой являются *запах*: уютные вечера с ароматным кофе, запах табака от сигарет, которые курила Фиона, запах цветов и т.д. Но сейчас запах соснового дезодоранта, которым была буквально пропитана клиника, становится запахом его будней. В момент, когда Фиона вновь обретает ясное сознание, Грант отмечает, что жена обрела «еле заметный новый душок, напомнивший ему запах, который издают срезанные цветы, слишком долго простоявшие в воде» [9, 374]. Тем не менее герой не отступает от своих чувств: финал рассказа даёт понять читателю, что Фиона вновь становится главной женщиной в его жизни [5].

Считаем необходимым подчеркнуть, что Манро в своих рассказах уделяет внимание не любовным историям, а более актуальным проблемам современности: насилию в отношении женщин, нарушению прав человека и распространению различных заболеваний. В ее произведениях как будто отсутствует любовная составляющая, эмоции уступают место рациональному анализу ситуации, а герои действуют, руководствуясь не чувствами, а обстоятельствами. Почти во всех своих произведениях Манро не следует определенному порядку, смешивая прошлое и настоящее, создавая уникальный временной ритм.

Действие рассказов Э. Манро преимущественно разворачивается в ее родном Онтарио, и

религиозная тема пронизывает практически все ее произведения. Многие критики сравнивают ее творчество с произведениями американских писателей Фолкнера и О'Коннора, так как в них также присутствуют яркие описания природы и глубоко укоренившихся традиций. Однако, в отличие от этих авторов, герои Манро менее привязаны к своей родной земле и часто пытаются противостоять местным манерам и обычаям. Она обладает уникальным талантом создавать живописные картины природы, отличающиеся уникальной красотой, которые в сочетании с ее интересными персонажами создают замечательные образы, требующие не только чтения, но и глубокого погружения.

Все персонажи и события в рассказах Манро наделены удивительной жизненной силой. Она часто начинает свои истории с описания, казалось бы, идеальной жизни, но вскоре становится ясно, что за этой идиллической картиной скрываются глубокие психологические проблемы.

Манро с психологической точностью и глубиной исследует темы, связанные с уязвимыми группами населения: детьми, переживающими утрату или похищение, разводами и смертью пожилых людей и т.п. Однако она не только отражает вышеупомянутые проблемы и явления, но в то же время показывает магический способ их преодоления [10].

Литературный язык ее рассказов богат метафорами, сравнениями, гиперболами. Ее стиль отличается тонким юмором и иронией, которые часто проявляются в самых неожиданных и трагичных ситуациях. Ярким примером может служить рассказ «Фамильные мебеля», где одну из главных героинь, Эльфриду недолголюбивают в семье, поскольку она всегда прямолинейна и точна. Никто в семье не скрывает своего противоречивого отношения к родственнице. А десятилетняя девочка описывает свою тетю Эльфриду следующим образом: «Эльфрида всегда заливалась смехом и показывала счастливые зубы» [4, 93-94].

Одной из лингвистических особенностей Манро является ее ясный и понятный, а также подробный, описательный стиль. Она пишет максимально доступно и описывает так подробно, как будто читатель находится рядом с этими персонажами. Ничто не ускользает от глаз читателя, который читает те эпизоды рассказа, где описываются комнаты: в каком году была изготовлена мебель, где, кто ее купил или подарил и т. д. Читатель может буквально увидеть каждый предмет, представить его историю.

Этот сборник рассказов Э. Манро – одно из ее лучших произведений, на каждой странице которого отражается талант автора – раскрывать обыденную жизнь с неожиданных сторон – вне и внутри сознания. Автор показывает, насколько интересным и необычным может быть окружающий мир, если отвлечься от повседневных забот и присмотреться к нему внимательнее. Она приглашает нас в путешествие по обыденному миру, открывая перед нами его скрытые грани и показывая, что удивительные вещи происходят рядом с нами каждый день, стоит лишь внимательно присмотреться. Природа в этом рассказе, как и в других ее произведениях становится не просто фоном, но неотъемлемой частью человеческой жизни, источником мудрости и утешения.

Заключение

Э. Манро стремится показать каждому живущему и умирающему существу, что его жизнь в его собственных руках, в тайнах его души и сознания. Она пытается доказать, что в борьбе за выживание между жизнью и смертью важна сила воли и неистовое желание победить. Человек сам должен осознать ценность своей жизни, и все, что окружает его: растущее рядом с домом дерево, цветок, плохо спроектированный дом, плавающий мост и т. д.

Как можно заметить, названия всех рассказов Элис Манро – это метафоры, имеющие серьезную идеологическую нагрузку, которые раскрывают свой смысл лишь в конце

повествования, заставляя читателя глубоко задуматься. Язык Э. Манро настолько убедителен и жив, что невольно веришь в правдивость и честность ее слов.

Таким образом, рассмотрев наиболее известные рассказы Элис Манро, приходим к выводу о том, что использование приема «всезнающего рассказчика» является одной из ключевых особенностей ее творчества. Этот прием позволяет ей создавать глубокие, психологически насыщенные истории, которые раскрывают сложность человеческой природы. «Всезнающий рассказчик» в произведениях Э. Манро – не просто повествователь, но инструмент, с помощью которого автор передает свое видение мира.

Она доказала, что короткий рассказ может быть не менее многослойным и глубоким, чем роман. Мастерство Э. Манро в использовании «всезнающего рассказчика» ставит её произведения в ряд лучших образцов современной канадской англоязычной литературы.

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-99>

Литература

1. Гуин Ле У. Парус для писателя от Урсулы Ле Гуин [Электронный ресурс] URL: <https://www.mann-ivanov-ferber.ru/catalog/product/parus> (01.12.2024)
2. Зыковская Н.Л. Ольфакторий художественной словесности: современное состояние проблемы // Вестник Волжского университета им. В.Н. Татищева. 2012. №: 1 (9) URL: <https://cyberleninka.ru/article/n/olfaktoriy-hudozhestvennoy-slovesnosti-sovremennoe-sostoyanie> (11.12.2024)
3. Корман Б.О. Изучение текста художественного произведения. М., 1972, с. 34.
4. Лазутина М. С. Одористические образы в прозе Элис Манро // Ученые записки Орловского государственного университета. №2 (87), 2020, с. 93-94.
5. Манро Э. Ненависть, Дружба, Ухаживание, Любовь, Брак URL: <https://magicbook.com.ua/ru/product338234.html?srltid=AfmBOoqXfb3YGeg70e6NQDfCUd8qmL> (10.12.2024)
6. Манро Э. Слишком много счастья. Новеллы. Пер. А.Д. Степанов. СПб.: Азбука, Азбука Аттикус, 2014, - 352 с.
7. Манро Э. Беглянка. Пер. Е. Петровой. СПб.: Азбука, Азбука Аттикус, 2014. - 352 с.
8. Манро Э. Дороже самой жизни. Пер. Т. Боровиковой. СПб.: Азбука, Азбука Аттикус, 2014, - 320 с.
9. Манро Э. Плунет, поцелует, к сердцу прижмёт, своей назовёт: рассказы/ Элис Манро; пер. с англ. В. Бошняка. СПб.: Азбука, Азбука-Аттикус, 2015, - 389 с.
10. Thacker R. The Rest of the Story: Critical Essays on Alice Munro. 1999, p. 135. URL: <https://ecwpress.com/products/rest-of-the-story?variant=3326489093> (11.12.2024)
11. Howells, Coral, Ann. Private and Fictional Words: Canadian Women Novelists of the 1970s and 1980s. 1987, London, p. 54.

**«Ամենագետ պատմողի» հնարքի դրսևորումներն Ա. Մունրոյի
ստեղծագործություններում**

Փարսադանյան Լիլիթ

Անփոփում

Հանգուցային բառեր. պատմվածք, գրական վերլուծություն, կերպարների հոգեբանություն, մարդկային էության բարդություն

Նոդվածը նվիրված է ժամանակակից կանադացի ականավոր գրող և գրականության 2013 թվականի Նոբելյան մրցանակի դափնեկիր Ալիս Մունրոյի ստեղծագործություններում «ամենագետ պատմող» հնարքի կիրառման վերլուծությանը:

Այս հոդվածի նպատակն է վերլուծել «ամենագետ պատմողի» հնարքը Ա. Մունրոյի կարճ պատմվածքներում: Դիտարկվում են պատմվածքների առանձնահատկությունները կապված ամենագետի տեսակետի կիրառման հետ, դրա ազդեցությունը կերպարների բացահայտման և բազմաշերտ պատմվածքի ստեղծման վրա: Ուշադրության կենտրոնում է այն, թե ինչպես է «ամենագետ պատմող» հնարքը խորացնում իրականության ըմբռնումը ընթերցողի կողմից՝ Մունրոյի պատմությունները եզակի դարձնելով կանադական ժամանակակից անգլիալեզու գրականության համատեքստում: Այս հնարքը թույլ է տալիս հեղինակին ստեղծել խորը, հոգեբանորեն հարուստ պատմություններ, որոնք բացահայտում են մարդկային էության բարդությունը:

«Ամենագետ պատմող» Մունրոյի ստեղծագործություններում պարզապես պատմող չէ, այլ գործիք, որով հեղինակը փոխանցում է աշխարհի մասին իր տեսլականը: Ալիս Մունրոն ապացուցեց, որ պատմվածքը կարող է լինել նույնքան բազմաշերտ և խորը, որքան վեպը: Ալիս Մունրոյի ստեղծագործությունների լեզուն այնքան համոզիչ է, որ հեշտ է հավատալ պատկերված իրադարձությունների իրականությանը: «Ամենագետ պատմողի» հնարքի վարպետորեն օգտագործումը դասում է Ա.Մունրոյի ստեղծագործությունները ժամանակակից գրականության լավագույն օրինակների շարքում:

Manifestations of the «Omniscient Narrator» Device in A. Munro's Works

Parsadanyan Lilit

Summary

Key words: *narrative, literary analysis, psychology of characters, complexity of human nature*

The article is devoted to the analysis of the use of the «omniscient narrator» device in the works of Alice Munro, an outstanding contemporary Canadian writer and winner of the 2013 Nobel Prize in Literature.

This article aims to analyze the «omniscient narrator» device in Alice Munro's stories. The features of the narrative associated with using an omniscient point of view, its influence on the disclosure of the characters, and the creation of a multi-dimensional narrative are considered. The main attention is paid to how the «omniscient narrator» device contributes to the deepening of the reader's perception, making Munro's stories unique in the context of contemporary Canadian English-language literature. This device allows the author to create deep, psychologically rich stories that reveal the complexity of human nature.

The «omniscient narrator» in Munro's works is not just a narrator, but a tool with which the author conveys her vision of the world. Alice Munro proved that a short story can be no less multi-layered and deep than a novel. Her mastery of the «omniscient narrator» places her works among the best examples of modern literature.

Ներկայացվել է 15. 01. 2024 թ.

Գրախոսվել է 03. 02. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 05. 06. 2025 թ.

Հովհաննես Երանյանի և Թովմա Տերտերյանի «Արչի» վեպը

Փիլոյան Վաչերի

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-107>

Հանգուցային բառեր. *Ժամանակ և գրականություն, եղեն, Արցախյան պահանջատիրություն, կերպարային համակարգ, գեղարվեստական տարեգրություն*

Նախաբան

Հրատարակվել է Հովհ. Երանյանի «Արչի» վեպը [2], որ անդրադարձ է հայ իրականությանը վերջին հարյուրից ավելի տարիների ժամանակային ընդգրկմամբ, ուրեմն և ներառում է ոչ միայն եղենի, այլև Արցախյան պատերազմի վերջին զարգացումների գեղարվեստական տարեգրությունը: Այս իրողություններն են դարձել վեպի երկու սյուժետային հոսքերի ատաղձը, և նկատելի են ընդհանրություններ, պարբերաբար կրկնվող իրողություններ, որ բացատրվում են նաև մեր ինքնության ու էության բարդություններով:

Գեղարվեստական շարադրանքը ժամանակային հոսքի մեջ պատկերելու մոտեցումը նորություն չէ. մասնավորապես վերջին շրջանում ստեղծված գործերից Վահագն Գրիգորյանի «Պողոս-Պետրոս» վեպում երկու հարյուրից ավելի տարիների տարեգրություն կա, որ հասնում է մինչև մեր օրերը՝ վերհանելով բազմաթիվ հիմնախնդիրներ, իսկ «Ժամանակի գետը» վեպը ներառում է 1914-ի դեկտեմբերից մինչև 2007-ի հունվար մի ժամանակահատված, որ ներկայացվում է մեկ ընտանիքի հաջորդական սերունդների կյանքի ու տառապանքի պատկերմամբ: Այս ընթացքում հայ իրականությանն առնչվող, վերաբերող ոչ մի նկատելի իրողություն չի անտեսվում, և հեղինակային նպատակադրում է ոչինչ չանտեսելն ու չգունակարգելը: Այդ պատճառով էլ դառնահամ կա գործում, բայց ոչ պարտություն, որ հաճախադեպ է տեղ գտնում մասնավորապես եղենին անդրադարձների ընթացքում՝ այդ անդրադարձը վերածելով ձախողման: Սրանից է ծնվել Վ. Գրիգորյանի դիտարկումը. «Կասկածների որդը ներսից կրծում է մեզ, ցավոք, հաճախ մոռանում ենք դառը փորձն ականջներիս օղ անել: Ինչպես միշտ: Ինչպես դեռ այն ժամանակ, երբ թերևս կարելի էր հավատալ, որ ցորենի հատիկը մատուրի չափ կդառնա, զարին՝ ընկույզի: Բայց հիմա, երբ ավազահատիկ են դարձել, մոռանալն, ինչ խոսք, հիմարություն է» [1, 495]: Մյուս կողմից կա խնդրի ձևակերպման օշականյան բանաձևումը. «Մեր հերոսները դժբախտ սպասումն ունին չեկած վարպետին: Ոչ մեկ ժողովուրդ մեզի չափ խոր զգացած է կեանքին այն ահաուոր, անպատմելի ողբերգությունը, որ բոլոր գրականությանց խարիսխը եղած է: Ոչ մեկ երեակայություն պիտի կրնայ մոտենալ մեր հոգիին մեջ կուտակուած զգայությանց անհուն մթերքին: Մեր գրողները դեռ մեզի չտուին *մարդը*, որ իրացանը ուսին, իր ատերությունը հալածեց ու իր պզտիկ մարմնով կռուեցաւ շատ մեծ կռիւլը իր ցեղին պարսիկին: Ու ոչ ոք այսօր մեր մեծ ու պզտիկ գրողներէն կը համարձակի նայիլ տեսարանին, ա՛յն անորակելի պատկերին, որուն շրջագիծը՝ ջարդողները շղթայ կը բռնեն, ու կեղորոն՝ ջարդողները:

Ու կարօտը, պէ տըը ունինք անոնց, որոնք մեր ողբերգությունը տեսնային իր արժանաւոր հոծութեանը մէջ: Որոնք այդքան հսկայ աղէտներ պատմելու գործը չյանձնէին պատահական բերաններու, ասուն, թե անասուն, ու չլորճէին անոր արիւնտու մեծութիւնը: Ու կը սպասենք արուեստագէտին, որ մարգարէի պէս գիտնար առանձնանալ ու տառապիլ իր նիւթին հետ գուցէ տարիներով ու նուաճէր զայն» [9, 35]: Վահագն Գրիգորյանը և Հովհաննես Երանյանը պատահական անուններ չեն և ունեն համազգային ողբերգությունները տեսնելու և իմաստավորելու պարտավորությունը:

Վերհիշելով Վ. Գրիգորյանի տաճապը՝ «Երբ գրվում են մեր տարեգրության վերջին տողերը, մեր մեջ համարձակ, անհամեստ ցանկություն է ծնվում, արձագանք այսօր լսել,

վաղը, մյուս օրը, քանզի անկախ նրանից, թե ինչ պայծառությամբ է վառվում մեր աստղը երկնակամարում, մերը մինևույն է, նա է» [1, 498-499], անդրադառնա՞նք նաև Հովհ. Երանյա-նի վեպին:

Հովհաննես Երանյանի «Արչի» վեպը

Անդրադարձը պատահականորեն չի վերնագրվել «Հովհաննես Երանյանի և Թովմա Տերտերյանի «Արչի» վեպը»: Թովմա Տերտերյանը հեղինակի նախորդ «Մեղքի պարան» վեպի գլխավոր կերպարն է, ոչ թե ինչ-որ մի հեղինակ. նրա վերջին գործին ու մահվանը հպանցիկ անդրադարձ կա այստեղ, ինչն էական դերակատարություն ունի, և համարյա ան-միջապես է բացահայտվում կապը «Մեղքի պարան» վեպի հետ: «Մազապուրծ Արչին» [տե՛ս 2, 75 և 228] վեպի ձեռագիրը գտնվել ու տրվել է ընթերցողին պատմող-ներկայացողին, որ որոշակի կարծիք է ձևավորել գրողի մասին. «Հասկացա, որ կյանքի վերջում խանգարվել է, հետո մարդասպանության կասկածանքով բանտ նստել: Հենց եղտեղ էլ գրել էր» [2, 7]: Վեպը յուրացնելու գայթակղության են մղում հեղինակին («Քաշեց, պոկեց առաջին էջը, ասաց. «Վերջ, էլ ոչ մի Թովմա Տերտերյան: Դու ես, չէ՛, ավարտելու»» [2, 6]), սակայն սա սկզբունքա-յին խնդիր է կերպարի համար և գրագողությունից հրաժարվելով կամ գրագողության չդիմե-լով ապրելու կորով է տալիս պատմողին («Միակ բանը, որ դեռ հետաքրքիր էր իմ կյանքում, Տերտերյանի վեպն ավարտելն էր» [2, 42] և «<...> մտքովս մեկումեջ անցնում էր, թե գրքի տպագրությունը կանխելու առիթը ծնվեց որպես պաշտպանական բնագոյ, որ առանց ինք-նանկատացման հետանամ մահվան խրամատից» [2, 74]): Այնուհետ գտնվում են Թովմա Տերտերյանի զավակները, որոնք փոխանցում են «վեպի պլան-մտադրության մի քանի դժվարընթեռնելի ձեռագիր էջ» [2, 228] և թույլատրում վեպն ավարտելն ու հրատարակելը:

Տեղ է գտնում յուրահատուկ միջտեքստայնություն, որ մեկ ամբողջի է վերածվում, երբ պատմողի երազը, մղձավանջը, վերապումը իրար են ներհյուսում հարյուրամյա հիշողու-թյունն ու մերօրյա տազնապները: Իսկ հարյուրամյա հիշողությունը եղեռնն է, սրա արհա-վիրքներն ու տառապանքը, հողի, մարդկային հավաքականությունների, մշակույթի ու տնտեսության, ամեն ինչի կորուստները, նաև վաղվա օրվա («Մեղա-մեղա, բայց մեր պա-հանջատիքությունը թուրքից ոչ այնքան կորուսյալ երկրի վերադարձը պիտի լիներ, որքան առաջընթացից ահա այսքան ետ մնալու գինը...» [5, 20]), որ տեղ գտան ու դրսևորվեցին զարհուրանքների միջոցով: Տերտերյանի վեպը մի ընտանիքի պատմություն է, երանյանա-կան լրացումներն ու մեր ներկան ամբողջացնում են մեկ այլ ընտանիքի ձևավորման պատ-մությունը Արցախյան ողբերգության ու մեր ժողովրդի այսօրի համապատկերում:

Արևմտյան Հայաստան և Արցախ. պապենի տարածքներ, նախնիներից ավանդված հող հայրենի, որ հեռանում են մեր վաղվա սերունդներից: Մուշեղ Գալոշյանն ասում է. «Հողը ձնվածներինն է»: Այս դրույթն է ստիպում խոսքը շարունակել «Արչի» վեպի երկու կերպարների զրույցից: Մուֆթի Հիքմեթ Յուզգանի և վարդապետ Մարինոսի առաջին զրույցի ընթացքում (այս զրույցն այնքան է կարևորվել հեղինակի կողմից՝ որպես պոմեի էական խնդրառություն ունեցող հատված, որ հեղինակը խախտել է ֆաբուլային զարգացման բնա-կան ընթացքը) խոսք է հնչում. «**Ամենակարևորը հողն է:** Հողն է, որով Աստված ստեղծեց մեր նախնուն, եթե հողը չէս պաշտում, ուրեմն Արարչին էլ չես հավատում» [2, 25]: Ապա և՛ «Միննույն է, կարևորը տարածքն է: Մնացածը պարտավածների հորինածն է՝ հանուն միխթա-րության: Հողն է կարևոր, որովհետև եթե անվերջության Արարչին երկրպագել ես ուզում՝ էլի երկու ծնկաչափ հող է պետք: Եթե նույնիսկ քեչա ես փռում, խսիր, թե կարպետ, հողին ես փռում ու դրա վրա ծնկում: Այնպես որ Աստծուն մոտենալու համար անսահման տիեզեր-քում քո ոտատեղ սեփական հողը պիտի ունենաս» [2, 26]: Սա ասում է մուֆթի Հիքմեթ Յուզգանը հայր Մարինոսի հետ զրույցի ընթացքում՝ որպես ընդհանրացում: Եվ սա նրա՛նց դիրքորոշումն է, երբ ասում են՝ «Զավակիս կտամ, հողը չեմ տա», այնինչ ցանկալի կլիներ, որ հողին հավատարմությունը դառնար հայ մարդու ու հայ տեսակի կարգախոսը, այն

ասեինք մենք և այն չամփոփեինք լոկ պահանջատիրության վեհերոտ ձևակերպումներում կամ բարձրաձայնեինք արբելուց հետո:

Վեպում դրսևորված հայր Մարինոսի կերպարն առանձին ու լուրջ վերլուծության արժիք կարող է տալ՝ կապված պահվածքի, հոգևոր հովվության, հավատքի հետ, ինչպես նրա անվան շուրջ ձևավորված առասպելի, որ որպես «գարշեյի երագ» ու «սարսափ» ներկայացնում է պատմողը՝ յուրովի ավարտելով «հաշիվները» կերպարի հետ, բայց կասկածներ թողնելով՝ կապված հավատի կորստի հետ: Միջանկյալ նշենք, որ Երանյանը չի սիրում անտեր թողնել իր կերպարներին: Սա նաև վեպի ժանրի պահանջն է: Այս տեսակետից արդեն դասական օրինակ կարող է գիտակցվել Երանյանի «Մահացու հյուրախաղ» վեպը:

Եղեռնին անդրադարձը դժվարությամբ է տրվում յուրաքանչյուր հայ գրագետի: Անդրադարձը ձևավորել է յուրահատուկ կաղապար՝ հայրենի բնակավայր-տարագրություն-Դեր-Ձոր անապատ, փրկվածների համար՝ օտար մի կեցավայր բաղադրիչներով: Ու գործում են երկու դերակատարներ՝ զոհն ու դահիճը՝ վերջինը որպես իբր զինվոր ու բաշխող: Այս բանաձևը կա վեպում՝ մյուսներին նմանվելով ու իր առանձնահատկություններով: Ու նույնն է տառապանքը. «Նրանք <ուղեկցող զինվորները> մի պահ զգացին, որ ոտնատակ են գնալու հարձակվող հսկա բազմությանը, բայց այդ պատճառով չէ, որ ձեռքերը լվացին: Հրաման ունեին միայն մի քանի հոգու Հալեպ հասցնել: Մնացածը պիտի ոչնչանային ճանապարհին. սրով, փամփուշտով, բայց ավելի նախընտրելի էր՝ սովից ու ծարավից: Հիմա դա իրենց փոխարեն անում էին ուրիշները, այդ պատճառով էլ նրանց մի մասը հռչառում էր, զվարճանում զարհուրելի տեսարանով: Ոմանք երեխա էին նախընտրում հափշտակել, ուրիշները՝ կին, իսկ մեծամասնությունը՝ ունեցվածք՝ կահ-կարասուց մինչև լաթեր ու մետաղյա ամանեղեն: Սպանում էին, հետո սպանվածի գրպաններում ոսկեդրամ փնտրում» [2, 91]: Եվ այդ տառապանքն է տեղ գտնում՝ կապված վերջին կորուստների հետ, քանի որ «ներկայի և հարյուր տարի առաջվա նմանությունը» ակնբախ է, և «Մենք պստեղ ենք, որպեսզի ավարտին հասցնենք 1915-ին կիսատ թողածը», – սպառնում է նրանց առաջնորդը» [2, 248]:

Արցախյան պատերազմի համապատկերում կերպարների պատկերասրահ է ձևավորվում՝ որպես կամավոր կռվի գնացած հայր ու որդի, գնդերեց Սևակ սարկավազ, որ այնուհետ գերի է ընկնում, 2016-ին մի ոտքից զրկված Համո, որ 2020-ին երկաթե պրոթեզ ոտքով է կռվում, ականանետով խոցում թշնամական ուղղաթիռ, ղեկավարում մարտը, հաջորդ տարի զոհվում, բժշկուհի, որ վիրավոր շարունակում է վիրահատությունը՝ կարծելով, թե որդուն է վիրահատում, իսկ հաջորդ օրը գնում որդու հոգեհանգստին, Կարինե ու Լիանա, Շուշան, որի կյանքի փխրուն հետագիծը ուրվագծվում է երկու-երեք վրձնահարվածով, զինվորականներ ու կամավորներ՝ ժողովուրդ, բայց տեսանելի չէ նա, ով պիտի իր ուսերին առներ այս ժողովրդի ու հողի պատասխանատվությունը: Մա հետոյի խնդիր է:

Վեպում իրականությունից առնված կամ ածանցված կերպար կա՝ Մոսը, որ հոգեբանորեն պարտվածի օրինակ է, հետո էլ ինքնասպանություն գործած մեկը. «Ես Երևանից էլ եմ գնալու, Հայաստանից էլ <...> զգվում եմ էս մեր սարերից, էլ ալմաստ վահան, գագաթները բյուրեղ վրան, էլ լեռներից լավ միայն լեռներն են, իրականում ոնց որ բանտի հսկայական պատեր լինեն, մենք իրանց արանքում բանտախցի մեջ ենք, ու չենք կարող դուրս պրծնել: Եղ պարիսպների հետևում էլ բանտապահներն են» [2, 66]: Վերը՝ Վ. Գրիգորյանի խոսքում, հիշատակվեց երկնականարում վառվող մեր աստղը: Իսկ մեր աստղը... «Հայոց մեր աստղը պայթել ու բոլոր կողմերի վրա ցրիվ է գալիս, և այդ հեռացող կրակե բեկորները քանի դեռ տեսնվում են՝ իմն են: Նրանք իմ ուժն ու կյանքն են հեռացնում» [6, 382]: Մեփական ինքնությունից փախուստը դարերով արտագաղթ է ծնել, որ համառորեն շարունակվում է և դոնորական արյուն ու դառնում այլոց համար, այնինչ արնաքամվում է այս տեսակը: Իսկ սրանց՝ գնացողների մասին մեր իրավ դասականն է բարձրաձայնել իր Աղուն կերպարի

շուրթերով. «Ձերոնք որ փախչում են՝ իրենցից են փախչում – կարծում են գյուղից ու տեղից են փախչում, մատաղ» [7, 641]:

Էպոսում, որ մեր ինքնադիմանկարն է ու վկայում է ոչ միայն մեր միամտությունը, այլև թշնամու խորամանկությունը, պատկեր կա. Մասնո մեջ հացի թանկություն է ընկնում ճամփան կտրած առյուծի պատճառով: Քեռի Թորոսի մոտ խորհրդի գնացած Մհերը հարցնում է. «Առյուծն ի՞նչ է, իմա՞լ առյուծ», «Հեռվա՞նց կ'ուտի, Թե՞ մոտենաս, ու նոր կուտի» [8, 101]: Մենք շարունակում ենք 1000 տարի առաջվա պատկերացումների հետ մնալ. առյուծը թշնամու պատկերացումն է, անօդաչուն ու ֆոսֆորային ռումբը՝ հեռվից կովելու նրա հունարը: Հետո այդ ամենին հավելվեցին ամիսներ տևած անմարդկային շրջափակումն ու սովը, որ նույնպես հանցագործություն են մարդու և մարդկայնության դեմ...

Արցախյան պատերազմին նախորդած դասերը պիտի քաղած լինեինք հարյուր տարի առաջ, երբ ոչնչացվում էր մի ողջ ժողովուրդ՝ տարածք առ տարածք, բնակավայր առ բնակավայր, ընտանիք առ ընտանիք, հայ առ հայ... Հովսեփյանների ընտանիքը տարագրության ճանապարհին մասնատվում, փշրվում է: Առաջին զոհը մայրական պապն է, ապա՝ տատը, ապա՝ մայրը, որից հետո քեռին՝ Մարինոս վարդապետը, Եփրատն է նետում Արշակին, փրկվում է լոկ Արուսյակը, Յուսուֆ դարձած Արշակն ի վերջո ինքնասպանություն է գործում: Համակարծիք չենք արդեն հնչած այն մտքին, թե «Արշակ Հովսեփյանի ինքնասպանությունն, օրինակ, բավարար չափով չի հիմնավորվել» [4]: Մահից առաջ քրոջն ուղարկված նամակն այդ ինքնասպանության հիմնավորումն է: Ապավինենք բնագրին. «Չեմ հավատում, թե մորենու մոտ Աբրահամին տված իր խոստումը Աստված կարող է իրագործել, թե ի գորու է ջրիորներից ու ծովերի խորքից հանել բոլոր մարդկանց մարմինները, չի կարող հողի ու ավազի տակից դուրս բերել բոլորի ոսկորներն ու կենդանություն տալ: Վեց տարեկան տղային հաստատ չի կարող դուրս կորզել գետի հորձանքից: Նա չխեղդվեց, չմեռավ այնտեղ: Նրա մարմինն ու ոսկորները անհնար է գտնել այնտեղ: Բայց նա է՛լ չկա: Աստծո փոխարեն դա արեց մի կին: Եփրատի սառը ջրերից մահվան հոտ էր փչում, դիակները զարկվում էին նրան ու առաջ անցնում: Նա հիմա զղջացել է, որ պայքարել է. պիտի հանձնվեր, բայց կյանքի համար նրա մաքառումը բնագործեն էր: Վեց տարեկան այդ տղայի համար կարո՞ղ էր լինել ճակատագրի ավելի լավ փորձություն... չէր կարող: Կամրջի վրայից նրան ջուրն են նետում, որ փորձեն ճակատագիրը: Նրանք, ովքեր չեն կարողանում պաշտպանել, նետում են ճակատագրական գետի հորձանուտը: Նա, ով պատահաբար չխեղդվեց ու դուրս եկավ գետից մի օտար կնոջ օգնությամբ, արդեն ուրիշ մարդ էր, ուրիշ ճակատագրով: Նա չէր ուզում հիշել այն մեկին, ում դեռ շնչող մարմինը թեև հանեցին գետից, բայց ինքը մնաց այնտեղ՝ Եփրատի փրփուրների մեջ: Եվ նրա որդեգիրները օգնեցին, որ չհիշի: Հաջողությունն ու ճանաչումը նույնպես լավ օգնական էին: Այնպես որ Յուսուֆ Արչին չի ստել, չի խաբել քրոջը, թե եղբայր չէ: Թվում էր, թե այլևս ոչինչ չի կարող փրկչական մոռացումը... ոչ քրոջ հայտնությունը, ոչ նրա բազմաթիվ նամակները չէին կարող հարություն տալ այն տղային: Բայց կար մի բան՝ մանկության հուշերը, որոնք երբեմն-երբեմն ասպատակում էին, խուժում նոր մարդու՝ Յուսուֆ Արչիի հոգին, տակնուվրա անում սիրտը, ջնջում կամքը: Պարզվեց, որ այդ վարկյաններն ավելի զորեղ էին, քան Յուսուֆ Արչիի հաջողությունները: Այդպես պահեղ կարող է ավելի երկար թվալ, քան տարիները: Նա հասկացավ, որ չի հաղթել հուշերին, որ անիմաստ ու անտեղի է պայքարել դրանց դեմ: Արշակն այլևս չկար, իսկ Յուսուֆ Արչին չէր ուզում լինել: Նա չէր էլ եղել: Նրան հորինել էին մարդիկ, որոնք չուզեցին աշխարհի վրա լինի Արշակ Հովսեփյան անունով վեց տարեկան մի երեխա, ու նա համաձայն էր չլինել: Նրանք սպանեցին Արշակին, իսկ ես կապանեմ իրենց ստեղծած Յուսուֆին: Կսպանեմ, որովհետև նպատակ ու առաքելություն մարդու ոչ միայն մահվան մեջ չկա, այլև ապրելու: Թող ոչ մեկը լինի, ոչ էլ մյուսը: Չգիտեմ՝ դա հաղթանակ կլինի, թե՞ պարտություն, որովհետև չգիտեմ՝ ինչ-որ բանի ավարտը դրանցից որ մեկն է» [2, 272-273]:

Որպես Արշին Յուսուֆօղլու-Յուսուֆ Արչի չապրելու, բայց և Արշակ Հովսեփյանը չլինելու այս հակասությունը տեղ է գտնում նաև տղայի «Ռեքվիեմի» Արուսյակի ընկալումների մեջ:

Հասանք Արուսյակին: Քեռու կողմից եղբորը՝ Արշակին, գետը գցելուց հետո, ինչին ականատես է լինում Արուսյակը, պապանձվում է և այնուհետ գերմանացի ու ավստրիացի բժիշկներն անգամ չեն կարողանում «բուժել աղջկա պապանձումը» [2, 228]: Այնինչ տարիների հետ մեծացած աղջիկը տարիներ անց ապրում է մի երկրորդ գաղտնի կյանքով, իրականացնում անաբեկչական գործողություններ, այրում «շոգեկառքի վագոնը, որի մեջ ինչ-որ երկրի բարձրաստիճան պատվիրակություն է եղել» [2, 232], հրդեհում «Վիեննայում Թուրքիայի դեսպանատան շենքը» [2, 232], պայթեցնում «կառքը, որի մեջ դարձյալ թուրք պաշտոնյա էր»: Այսպես է ձևավորվում «Նեմեսիսի» դուստրը, Օշականի փնտրած հրացանով մարդը, Գուրգեն Յանիկյանի քույրը, ԱՍԱԼԱ-ի տատիկը՝ արդար վրիժառության ոգին: Փորձում է ժամանակ անց պայթեցնել թուրք երիտասարդ երգահան ու նվագավար Յուսուֆ Արչիին համերգի ընթացքում, սակայն վերջին պահին կանգնեցնում է պայթուցիչի ժամացույցը, քանի որ ի դեմս Յուսուֆի ճանաչել է եղբորը՝ Արշակին: Նկուղից համերգն ունկնդրող Արուսյակի համար տեսանելի է դառնում երաժշտությունը, որ Արչի-Արշակի նույնականացման բաղադրիչներից է. «Մի քանի բուպեից հանդարտ մեղեդին նրան տարավ Երզնկա՝ Եփրատի ափ, որտեղ վազվզում էին եղբոր հետ: Հետո գետը փրփրեց, ալիքները կատաղի թափով զարկվեցին ու դուրս եկան ափերից: Դրանք կարմիր էին: Կարմիր ջուրն իր հետ գետի հորձանուտ քաշեց եղբորն ու քրոջը: Նրանք փորձում էին բռնել իրար մեկնված ձեռքերը, բայց զարկվում էին քարերին ու առաջ ըշվում հոսանքն ի վար: Նվագախումբը լռեց, և լսվում էր թավջութակի սուլո ողբը: Հետո զանգեր էին ու ջութակի ճիչը: Աղջիկը հեկեկում էր, մայրս է՝ մտածեց ջութակի մասին: Նա վազում էր քարքարոտ ափին, սայթաքում էր, ընկնում ու նորից վազում, փորձում փրկել ջրապտույտի մեջ հայտնված իր զավակներին, բայց նրանք ավելի էին հեռանում, թմրակների մի քանի հարվածից հետո նա էլ ջուրը նետվեց: Ջութակի ճիչը դանդաղ մարեց, և նրան միացան ուրիշ ջութակներ, նրանք մեղմորեն լալիս էին, հետո կրկին ճիչը և բողոքը դեպի երկինք: Արուսյակը տեսավ եղբորը քեռու կողքին՝ եկեղեցու բեմի վրա, դպիրի հագուստով: Երգեհոնի հետ եկան հրեշտակները, նրանք թևերը փշրվում էին, ու նրանք գահավեժ զարկվում էին ժայռերի սուրճայր քարերին ու մահանում: Քառս էր ոչ միայն երկրի վրա, այլ(և) ողջ տիեզերքում: Փողերն ազդարարեցին երկնքի փուլ գալը, և կրկին ամեն ինչ մեղմացավ, մարեց ու միայն դաշնամուրն էր սգում աշխարհի կործանումը» [2, 256-257]:

Անհամեստ կենյի զուգահեռը, բայց Արշակ-Յուսուֆը նմանվում է Եվրիպիդեսի Մեդեայի՝ իր իսկ ձեռքով սպանված որդիներին, որոնք չեն որոշում իրենց ձակատագիրը, այլ քավության նոխալ են: Մեդեայի սերունդը լինելու, բայց Յասունի շարունակության չնման լու բարոյություն այս դեպքում որոշվում է Արշակ լինելու և Յուսուֆ չենթադրվելու անլուծելիությամբ: (Վահագն Գրիգորյանի՝ շարադրանքում արդեն հիշատակված «Ժամանակի գետը» վեպում էլ Հովսեփ-Յուսուֆ կա, որ ինքն իրեն հարց է տալիս. «Ես հայ չեմ, թուրք չեմ, ուրեմն ի՞նչ եմ»):

Հրատարակված վեպը վերնագրվել է ոչ թե «Մագապուրծ Արչին», այլ «Արչի»: Իսկ վեպում երեք Արչի կա՝ հայկական ոչխարապահ գամփո տեսակի շունը, որ 1913-ին («Երկար ժամանակ առանց տերերի և առանց կանոնավոր սնվելու, ինչին սովոր էր **միջև երկու տարեկան դառնալը**, նիհարել էր» [2, 235]) հայտնվում է սուրճի վաճառական Ասատուր Հովսեփյանի տանը, դառնում նրա զավակների՝ Արուսյակի ու Արշակի, ընդհանրապես տուն ու ընտանիքի պահապանն ու ուղեկիցը, Յուսուֆ Արչին, որ նույն Արշակն է, սակայն ինքն է սահմանագծում հայ Արշակին ու թուրք Յուսուֆին և ըստ էության պարտվում (մարդիկ «շուգեցին աշխարհի վրա լինի Արշակ Հովսեփյան անունով վեց տարեկան մի երեխա, ու նա համաձայն էր չլինել»), և երրորդ Արչին՝ հայկական գամփոից և գերմանական

շանից ծնված խառնածինը: Երեք Արչի՝ հաղթող, բայց ծերացած, պարտված և խառնածին: Այս վերջինով է եզրափակվում վեպը: Վեպի վերնագրում ենթադրվում է այս երեքի դերակատարությունը, և թերևս առավել կարևոր է վերջինը, եթե հիշում ենք հեղինակի նախորդ վեպի հանգուցալուծումներից մեկը: «Մեղքի պարան» վեպում քիչ թե շատ ներդաշնություն է հասնում Թովմա Տերտերյանի դուստրը՝ Անին, որ ամուսնացել է ամերիկացի Բիլի հետ և զավակ ունեցել՝ Տիգրան անունով (?) [3]: Խառնածինն է այս տեսակի վաղվա տեսլականը: Արդյոք գլոբալացման տագնապներից մեկն էլ սա չէ, որ բազում հարցականներ է ծնում, երբ իրականության ներկայացրած փաստերն ավելի հաճախ մեր տեսակի օգտին չեն խոսում:

Վեպը նորից է հուշում հեղինակի՝ իրականության վերաբերմամբ ունեցած անհագ հետաքրքրությունը և այդ իրականությունից առնված դեպքոլոյիպվածի անմիջական կիրառությունը իր շարադրանքում: Հարաբերականորեն թարմ է ինչպես Արցախյան պատերազմի, այնպես էլ արցախյան շրջափակման և սովահարության մատնված ժողովրդի մասին հիշողությունը, ինչը նույնպես դարձել է պատկերման նյութ: Սա արագագորության արդյունք չէ, այլ հրապարակությամբ պարտադրված արագ արձանագրի: Կա ոչ միայն յուրահատուկ, համարյա վավերագրական պատում, այլև այդ մղձավանջից դուրս գալու համառություն՝ տեսնելու համար վաղվա օրվա հեռանկարը: Այդպես էր և՛ «Ապոկալիպսիսի հրեշտակները» պատմվածքի դեպքում, և՛ այս վեպի հետ կապված: Վեպի առանձին էջեր հուշում են իրենց ազգակցությունը երանյանական միասնական տեքստին, ոչ միայն «Մեղքի պարան» վեպին, այլ նաև «Խաբուսիկ օր», «Ապոկալիպսիսի հրեշտակները» պատմվածքներին, այլ գործերի:

Հեղինակային սթափ հայացքի արդյունք ու ձևակերպում է. «Թե երազների մեջ, թե իրականում անցյալը ներկա էր դառնում: Ամեն հաջորդ օրը նախորդից սահմոկելի նորություն էր բերում, և թվում էր, թե դա երբեք չի ավարտվի: Բայց առավել վիատեցնող էր միտքը, որ անցյալը ոչ միայն ներկան է, այլև ապագան է լինելու» [2, 247]: Սա կանգ առած ժամանակ է, թե՛ «ներկայի և հարյուր տարի առաջվա նմանությունը» [2, 218]: 5-րդ դարում Եզնիկ Կողբացին է գրել (թերևս թարգմանել լատիներենից). «Այս կյանքը պատերազմ է»: Այս մտքի փոփոխակ է բարձրաձայնում վեպի կերպարներից մեկը. «Հիմա էն վիճակում ենք, որ մեր առաջ ամենուր թշնամիներ են. Թուրք, թե հուսահատություն՝ տարբերություն չկա, ամեն քայլի վրա սահման ա ու կռիվ» [2, 248]: Հետևությունը մեկն է՝ գործել, պայքարել, որ ժամանակը կանգ առած չմնա: Այս տրամաբանությամբ է կերպարը հասնում հաջորդ հանգրվանին. «Մենք պարտվել ենք ու դեռ պարտվում ենք, բայց էս ու դու հաղթել ենք ինքներս մեզ: Էդ ամենակարևոր հաղթանակն ա, մեզ պես հազարներ են, որ հաղթեցին իրենք իրենց: Բայց դեռ կան պարտվածներ» [2, 278]: Վեպը տարբեր ենթաժանրերի բաղադրիչներից է հյուսված՝ հոգեբանական, դավանաբանական, դետեկտիվ, արկածային, էրոտիկ..., ընթերցվում է հափշտակությամբ, կարող է բեստսելլեր գիտակցվել՝ ընդգրկելով ընթերցողների լայն շրջանակ: Վեպի թերևս ամենակարևոր արժանիքը հուսահատությունն ու պարտությունը բացառելու միտումն ու ջանքն է:

Վերիպումներ

Վեպում կա՞ն առանձին թերացումներ: Հարկավ. գլխավոր կերպարներից Տիրուհու մոր անունը մի դեպքում հիշատակվում է Հռիփսիմե [2, 52], մեկ այլ դեպքում՝ Նազիկ հանրմ [2, 94]: Հայ իրականության մեջ սուլթանական Թուրքիայի վարչատարածքային բաժանումներից մեկը կոչվում է Խարբերդի վիլայեթ և այդպես հիշատակվում նաև այս վեպում, սակայն այդ չարաֆաստիկ վիլայեթը կոչվել է Մամուրեթ ուլ Ազիզ կամ Հարպուր [10, 423]: Առաջին համաշխարհային պատերազմի սկիզբը (1914-ի օգոստոս, Թուրքիան պատերազմի մեջ մտավ հոկտեմբերին) և եղեռնի, ուրեմն և տեղահանության սկիզբը (1915-ի ապրիլ) մեկտեղվել են, երբ գրվում է, «Պատերազմի երրորդ ամիսն էր» (հոկտեմբեր) և «նույն այդ ժամանակ <...>» [տե՛ս 2, 76-77]: Գեղարվեստորեն համոզիչ չէ խառնածին շան շվեյցարական քաղաքում հայտնվելը, երբ Արչին ու գերմանական էգ հովվաշունը իրար

հանդիպել են Բեյրութում [տե՛ս 2, 214-215]: Կամ նույնական են պատկերացվում բոքոնն ու նկանակը, որ հաց են, սակայն բոքոնի աղայանական ձևակերպումը «ուռուցիկ ու հաստ ամբողջական հաց» է, իսկ նկանակինը՝ «մի տեսակ կլոր հաց բլիթ»: Այն դիտարկումը, թե կերպարները արևմտահայերեն չեն խոսում, էական չէ [4], քանի որ հեղինակի նպատակը ոչ թե կոնկրետ կերպարի անհատականացման, այլ մեզ բաժին հասած ողբերգությունների իմաստավորման ու բարդությունների հաղթահարման խնդիրն է: Մեկ այլ օրինակ. ուռուցիչ Մեսրոպի Մարսել որդին, որ ծնվել է դիմադրության շարժման մասնակից Մեսրոպի զոհվելուց երկու շաբաթ անց, չէր կարող 90 տարեկան հասակում մահանալ կամ կարող էր, եթե վեպը գրվեր 2030-ից հետո: Կամ ֆրանսիական դիմադրության մասնակից Մեսրոպը, որ քառասունն անց է այդ օրերին, չէր կարող 1913-ին ուռուցչություն անել ու սիրահարվել Սրբուհուն, 1915-ին դառնալ գերմանական բանակի թարգմանիչ-հանձնակատար, որով-հետև այդ թվականին նա ուղղակի անչափահաս կլիներ: Այս անգամ արագագրությունը չար կատակ է խաղացել հեղինակի հետ, չկա Օշականի նշած հեղինակը, որ «մարգարէի պէս գիտնար առանձնանալ ու տառապիլ իր նիւթին հետ գուցէ տարիներով»: Թող ընթերցողն ու հեղինակը սա չընդունեն թունավոր քննադատություն, այլ եղբայրական հորդոր խմբագրելու և սրբագրելու իմաստով:

Եզրահանգում

Հովհաննես Երանյան գրողն ու իր գիրը այսօրվա գրականության մեջ պատահական ներկայություն չեն, այլ պարտադրված անհրաժեշտություն, և դետալի, մանրամասի նկատմամբ հետևողականությունը ավելի արժանավոր ու վստահելի կդարձնի իր բնագիրը: Մասնավորապես «Մարդահամար» ժողովածուն, «Ուժ տուր ետ դառնամ», «Ապոկալիպսիսի հրեշտակները» պատմվածքները, այլ գործեր այդ իրողության առնավատյաներն են:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-107>

Գրականություն

1. Գրիգորյան Վ., Ժամանակի գետը, Երևան, «Զանգակ-97» հրատ., 2008, 504 էջ:
2. Երանյան Հովհ., Արչի, Երևան, «Անտարես» հրատ., 2023, 288 էջ:
3. Երանյան Հովհ., Մեղքի պարան, Երևան, «Անտարես» հրատ., 2017, 272 էջ:
4. Խաչիկյան Գ., Գոյաբանական խնդիրները և հայ մարդկանց ճակատագրերը Հովհաննես Երանյանի «Արչի» վեպում, ԳԹ, թիվ 39 (3668), 22 նոյեմբերի, 2024:
5. Հովսեփյան Ռ., Ծիրանի ծառերի տակ, Երևան, «ԱՌՏ» հրատ., 2006, 208 էջ:
6. Մաթևոսյան Հր., Ես ես եմ, Երևան, «Ոսկան Երևանցի» հրատ., 2005, 520 էջ:
7. Մաթևոսյան Հր., Վիպակներ, Երևան, «Նաիրի» հրատ., 1990, 736 էջ:
8. Սասունցի Դավիթ, Երևան, «Լույս» հրատ., 1981,
9. Օշական Յ., Մերմնացան, Պեյրութ, 1998, 160 էջ:
10. Кеворкян Р. Геноцид армян, М., Ягуза-каталог, 2016.

Роман Ованнеса Ераняна и Товмы Тертеряна «Арчи»

Пилоян Валерий

Резюме

Ключевые слова: время и литература, геноцид, предъявление прав Арцах, образная система, художественная летопись

Роман О. Ераняна «Арчи» отражает более, чем вековую армянскую действительность, включает в себя художественную хронику геноцида и последних событий Арцахской войны, ставших основой двух сюжетных линий романа, в которых заметны общие черты и периодически повторяющаяся реальность, что можно объяснить комплексами нашей идентичности и сущности.

Произведение насыщено интертекстуальными элементами, которые превращаются в единое целое, когда в сновидениях, кошмарах и переживаниях рассказчика переплетаются вековые воспоминания и тревоги сегодняшнего дня. Роман представляет собой историю одной семьи, а авторские дополнения и наше настоящее придают целостность истории становления другой семьи в контексте Арцахской трагедии и современных армянских реалий.

В романе три Арчи: постаревший победитель, побежденный и двойственный. Роман заканчивается присутствием последнего образа. Название романа предполагает значительную роль этих троих, и, возможно, последний из них представляется самым важным. Является ли двойственность перспективой завтрашнего дня? Разве это не одна из проблем глобализации, которая поднимает очень много вопросов, когда реальные факты чаще всего не говорят в пользу нашего вида? Роман еще раз напоминает нам о неутомимом интересе автора к реальности и непосредственном использовании в своем повествовании событий и происшествий, взятых из этой реальности. Память об Арцахской войне, блокаде и голоде сравнительно свежа, что также стало предметом изображения. Возможно, самое главное достоинство романа заключается в стремлении и усилии исключить отчаяние и поражение.

The Novel "Archi" by Hovhannes Yeranyan and Tovmas Terteryan

Piloyan Valeri

Summary

Key words: time and literature, genocide, Artsakh claims, character system, artistic chronicle

The novel "Archi" by Hovhannes Yeranyan reflects on the Armenian reality over the last century, encompassing the artistic chronicle of the genocide and the recent developments of the Artsakh war, which serve as the framework for the two narrative threads of the novel.

There are three Archis in the novel: a victorious, but elderly one, a defeated one, and a double-natured. The novel concludes with this last character. The title of the novel suggests the roles of these three, and perhaps the last one is the most important. Is Duality the Future of Tomorrow? Isn't this one of the problems of globalization, which raises so many questions when the real facts most often do not speak in favor of our kind? The novel reminds us once again of the author's insatiable interest in the reality and the immediate application of the cases derived from that reality in his narrative. The memory of the Artsakh war, the blockade and famine is relatively fresh, which also became the subject of the depiction. Perhaps the most important merit of the novel is the desire and effort to exclude despair and defeat.

Ներկայացվել է 22. 01. 2025 թ.

Գրախոսվել է 19. 02. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 05. 06. 2025 թ.

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ИСТОРИОВЕДЕНИЕ

HISTORICAL STUDIES

**Հայաստանի Հանրապետության հանրակրթության վիճակը և
հիմնախնդիրները 2000-ական թվականների սկզբին**

Ավետիսյան Սուրեն

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-116>

Հանգուցային բառեր. *կրթություն, բարեփոխում, սովորող, մանկավարժ, դպրոց, օրենսդրություն, չափորոշիչ, ծրագիր*

Նախաբան. Հայաստանի Հանրապետության կրթության ներկա համակարգը հիմնվել է Հայաստանի առաջին հանրապետության (1918-1920) կարճատև գոյության ընթացքում և զարգացել խորհրդային իշխանության (1920-1990) տարիներին [7, 5]: ՀՀ կրթության համակարգն ընդգրկում է պետական կրթական չափորոշիչների, կրթության հաջորդականությունն ապահովող տարբեր մակարդակի և ուղղվածության կրթական ծրագրերը, այդ ծրագրերն իրականացնող տարբեր տիպի ուսումնական հաստատությունների համակարգը:

Հոգվածի նպատակն է ուսումնասիրել 2000-ականների սկզբին հանրակրթության ոլորտում առկա վիճակը օրենսդրաիրավական դաշտը, հաստատությունների և սովորողների թվաքանակի շարժը, մանկավարժական կադրերով ապահովվածությունը, իրականացվող վերափոխումները և ոլորտում կուտակված հիմնախնդիրները:

Նշված ժամանակահատվածում իրականացված հանրակրթության բարեփոխումների գնահատումը և վերաաժեկումը ոլորտի ժամանակակից զարգացումների համատեքստում կարևոր են և պատմահամեմատական տեսանկյունից արդիական: Թեմայի շրջանակում իրականացված վերլուծությունն ունի ինչպես գիտական, այնպես էլ գործնական նշանակություն:

Հանրակրթությունը 2000-ական թվականների սկզբին. ՀՀ անկախությունից հետո մինչև 1999 թ., երբ ընդունվեց «Կրթության մասին» ՀՀ օրենքը, պետության դերը կրթության ոլորտում հստակեցված չէր [11, 211]: 1999 թվականին ընդունվեց կրթության բնագավառը կարգավորող առաջին իրավական ակտը՝ «Կրթության մասին» ՀՀ օրենքը (այսուհետ՝ օրենք): Օրենքը սահմանում էր հանրակրթության նպատակները և խնդիրները, ինչպես նաև պետական քաղաքականության սկզբունքները՝ հիմքում ունենալով հետևյալ դրույթը՝ «Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքն ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը մասնագիտական պատշաճ պատրաստվածություն ունեցող և համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է» [6]: Օրենքի մյուս հոդվածներում նշվում էին պետական կրթական չափորոշիչները, կրթական ծրագրերը, կրթության բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջները, հանրակրթական հիմնական ծրագրերի իրականացումը և այլն: Օրենքն ուղենիշային էր հանրակրթության բնագավառում փոփոխություններին միտված գործողությունների իրականացման համար:

Օրենքով սահմանվում էին կրթության ոլորտի կարգավորման առանցքային ուղղությունները, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների՝ Սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի ապահովումը և պաշտպանությունը, իրավասության բաշխումն ու տարանջատումը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև, կրթության համակարգի գործառնության և զարգացման համար իրավական երաշխիքների և մեխանիզմների ստեղծումը, ոլորտում իրավաբանական և ֆիզիկական անձանց իրավունքների, պարտականությունների, պատասխանատվության սահմանումը և փոխհարաբերությունների իրավական կարգավորումը [2, 11]:

Թեև օրենքի ընդունումը, որպես այդպիսին, խիստ կարևոր և բեկումնային քայլ էր կրթության ռազմավարական զարգացման ուղղությամբ, սակայն ոլորտի հետագա տեղա-

շարժերը փաստեցին, որ կրթական քաղաքականության լիարժեք իրականացման գործում չհաջողվեց ապահովել կրթության բնագավառի՝ դրանում հռչակված և երաշխավորված առաջանցիկ զարգացումը՝ որպես պետականության ամրապնդման կարևորագույն գործոն: Որպես հիմնական խոչընդոտներ կարելի է նշել օրենքների և ենթաօրենսդրական ակտերի թերկիրառումը, դրանց կիրառման մեխանիզմների անկատարությունը կամ բացակայությունը, առանձին իրավական ակտերի ժամանակին չընդունումը, ինչպես նաև օրենսդրական դաշտում առկա հակասությունները:

Հանրակրթության բարեփոխումների իրականացման գործում հատկապես կարևորվում էր Համաշխարհային բանկի (ՀԲ) ֆինանսական միջոցներով 1997-2002 թթ. իրականացվող «Կրթության կառավարման և ֆինանսավորման բարեփոխումներ» վարկային ծրագիրը, որն ուներ երկու հիմնական ռազմավարական ուղղություններ՝ բովանդակային և կառուցվածքային [7, 10]:

Առաջինն ուղղված էր հանրակրթության բովանդակության զարգացմանը և համապատասխանեցմանը հասարակության արդի պահանջներին, որը իր մեջ ներառում էր ուսումնական պլանի, առարկայական ուսումնական ծրագրի վերանայում, դասագրքերի տպագրում և բաշխում: Երկրորդն ուղղված էր հանրակրթության կառավարման ապակենտրոնացմանը և հաստատությունների ինքնավարության աճին՝ ներառելով հանրակրթության կառավարման և ֆինանսավորման նոր մեխանիզմների ներդրում, հանրակրթական հաստատությունների կազմակերպչիրավական կարգավիճակի վերանայում, ղեկավար կադրերի կառավարման որակի բարձրացում:

ՀՀ կառավարության 2000 թվականի մայիսի 8-ի «Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության պետական չափորոշիչը հաստատելու մասին» թիվ 226 որոշմամբ հաստատվում է կրթության պետական չափորոշիչը, որն արդեն իսկ պետք է նպաստեր և ապահովեր հանրակրթության որակի վերահսկումը և պատշաճ մակարդակի ապահովումը: Չափորոշիչների հիմքի վրա ճշգրտվեց հանրակրթության բովանդակությունը [11, 212]:

Միջնակարգ կրթության պետական չափորոշիչը սահմանում էր կրթության բովանդակության կառուցվածքը, սովորողների ուսումնական բեռնվածության առավելագույն չափը, սովորողներին ներկայացվող ընդհանրական որակական պահանջները, գնահատման ձևերն ու սանդղակը: Չափորոշիչն համապատասխան՝ ստեղծվելու էին ուսումնական առարկաների ծրագրեր, օրինակելի ուսումնական պլաններ և ուսումնական գործընթացը կանոնակարգող նորմատիվ այլ փաստաթղթեր, որոնց նորմերն ու դրույթները պարտադիր էին հանրակրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների համար՝ անկախ դրանց կազմակերպչիրավական ձևերից և ենթակայությունից:

Չափորոշիչը ներառում էր հանրակրթության ուսումնական բնագավառները և բովանդակային բաղադրիչները, սովորողին ներկայացվող ընդհանրական որակական պահանջները՝ ըստ ուսումնական բնագավառների և դպրոցի աստիճանների, հենքային ուսումնական պլանը, ուսումնական առարկաների ցանկի ձևավորման հիմնական սկզբունքները, օրինակելի ուսումնական պլանի մշակմանն ու հաստատմանը ներկայացվող պահանջները, գնահատման ձևերը, սանդղակը և գնահատականների գրանցման ու հաշվառման կարգը [5]:


Բարեփոխումների շրջանակում ներդրվեց նաև դպրոցների կառավարման խորհուրդների ինստիտուտը, սակայն վերջինիս ստեղծումով ուսումնական հաստատությունների կառավարման մոտեցումները չարդարացրին իրենց նպատակադրած սկզբունքները: Խորհուրդների դիրքերի ամրապնդմանը չնպաստեց նաև ՀՀ կառավարության 25.07.2002 թ. թիվ 1392-Ն որոշմամբ [15, 13] հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը: Խորհուրդներն իրենց վերապահված գործառնություններն իրականացնում էին ձևականորեն, անդամները, որպես կանոն, չէին տիրապետում իրենց վերապահված իրավունքներին և պարտականություններին, որպես այդպիսին, չիրացնելով

կամայականությունները զսպող գործոն հանդիսանալու իրենց իրավասությունը:

2000-ականների սկզբին միջնակարգ ընդհանուր կրթությունն իրականացվում էր եռաստիճան միջնակարգ հանրակրթական դպրոցում՝ 10 տարի ընդհանուր տնտղությամբ՝ հետևյալ հաջորդական աստիճաններով՝ տարրական դպրոց (1-3-րդ դասարաններ), միջին դպրոց (4-8-րդ դասարաններ), ավագ դպրոց (9-10-րդ դասարաններ): Միջնակարգ հանրակրթական դպրոցի առաջին երկու աստիճանները կազմում էին հիմնական դպրոցը [4]: Ուսման տնտղությունը 2001 թվականից դարձավ 11, իսկ 2006 թվականից՝ 12 տարի [14, 63]:


ՀՀ հանրակրթական դպրոցների քանակը 2000-ականների սկզբին տատանվել է 1400 մինչև 1481-ի միջև: 2000-2002 թթ. գրանցվել է դինամիկ աճ, այնուհետև 2004 թ. տվյալներով կտրուկ նվազել է 2000 թ. համեմատ 33 դպրոցով (գծապատկեր 1), ինչը կապված էր թե՛ սովորողների թվաքանակի կրճատումով (գծապատկեր 2), թե՛ երկրի սոցիալ-տնտեսական վիճակով:

Այս տարիներին սկսեցին ձևավորվել նաև առաջին մասնավոր դպրոցները: 2000 թ. նման դպրոցների թիվը հասնում էր 40-ի [12, 295]:



Գծապատկեր 1. ՀՀ-ում գործող հանրակրթական դպրոցների քանակն՝ ըստ տարիների (2000-2004 թթ.) [3]

Դպրոցներում սովորողների թվաքանակը, համաձայն ՀՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների, 2000-2004 թվականներին դինամիկ նվազել է՝ կրճատվելով 91000 սովորողով (գծապատկեր 2), ինչը կապված էր 1990-ական թվականներին հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակի և ծնելիության ցուցանիշի նվազման հետ:



Գծապատկեր 2. Սովորողների թվաքանակն (հազ. մարդ)՝ ըստ տարիների (2000-2004 թթ.) [3]

Հանրակրթական ուսումնական հաստատություններում աշխատում էր շուրջ 56100 մանկավարժ: Թեև ուսուցիչների թվաքանակը գերազանցում էր նորմատիվային թիվը (պահանջվում էր 42000 ուսուցիչ), հանրապետությունում ուսուցիչ-աշակերտ հարաբերակցությունը 1/10 էր, ինչը էապես տարբերվում էր տնտեսապես զարգացած երկրների ցուցանիշներից (Եվրոպական համագործակցության երկրներում դրանք համապատասխանաբար կազմում էին 1/17 և 1/25): Այլ կերպ ասած, հանրակրթական հաստատություններում զբաղված ուսուցիչների թվաքանակը էապես բարձր էր արդյունավետ պահանջարկից, ինչը օբյեկտիվորեն հանգեցնում էր ուսուցիչների դրույքային թերբեռնվածության:

Բարձրագույն կրթություն ուներ մանկավարժական կազմի 75,2 %-ը (44800), թերի բարձրագույն կրթություն՝ 2,3 %-ը (1400), միջին մասնագիտական կրթություն՝ 19,8 %-ը (11.800), միջնակարգ ընդհանուր կրթություն՝ 2,7 %-ը (1600): Ուսուցիչների շուրջ 20 %-ը չունեի մանկավարժական կրթություն, և մանկավարժների 50900-ը (85 %) կանայք էին [4]:

Չնայած ուսուցիչների զբաղվածության՝ վերը բերված տվյալներին, գյուղական դպրոցներում խնդրահարույց էր մանկավարժական ապահովվածությունը, ինչը չէր երաշխավորում գյուղաբնակ քաղաքացու՝ որակյալ կրթություն ստանալու իրավունքի իրացումը: Ուսուցչական համակազմը բաշխված էր անհամամասնորեն, և եթե քաղաքային բնակավայրերում առկա էր մանկավարժական կադրերի կուտակում, ապա գյուղական դպրոցներում կար ուսուցչի պահանջարկ, այն դեպքում, երբ փաստացի դասավանդող ուսուցիչների թիվը 30 տոկոսով գերազանցում էր սահմանված նորմերը:

2000 թվականին ուսուցիչների միջին աշխատավարձը կազմում էր 12. 6 հազար դրամ, 2003 թվականին՝ 18. 6 հազար. դրամ, 2004 թվականին՝ 30. 6 հազար դրամ: Ուսուցիչների աշխատավարձի բարձրացման քաղաքականությունը շարունակվել է նաև 2005 թվականին. հունվարի 1-ից ուսուցիչների միջին աշխատավարձն արդեն գերազանցում էր 50 հազար դրամը [14, 61-62]:

Աշխատավարձի բարձրացմանը զուգընթաց ուսուցիչների թվաքանակը 2000-2004 թվականներին նվազել է 12800-ով (տե՛ս գծապատկեր 3), ինչը, թեև դրական միտում էր ուսուցիչների աշխատաշուկայի հավասարակշռության տեսանկյունից, սակայն էական ազդեցություն չունեցավ ոլորտում հիմնախնդիրների լուծման և որակական տեղաշարժերի առումով:



**Գծապատկեր 3. Ուսուցիչների թվաքանակն (հազ. մարդ)՝
ըստ տարիների (2000-2004 թթ.) [4]**

Հանրակրթության ոլորտի հիմնախնդիրները: Սոցիալ-տնտեսական ծանր վիճակով պայմանավորված՝ 2000-ականների սկզբին կրթության ոլորտում առաջացել էին բազմաբնույթ խնդիրներ: Բնակչության կենսամակարդակի շարունակական անկումը և աղքատության բարձր մակարդակը նույնպես անմիջաբար արտացոլվել էին կրթության համակար-

գում, և նշված գործոնների հանրագումարը բացասաբար էր ազդում կրթության որակի վրա՝ հանգեցնելով բնակչության համընդհանուր կրթվածության անկման:

Սկսած 1990 թ. քաղաքական և տնտեսական պայմանների վատացումից՝ Հայաստանի դպրոցներում խախտված էին աշակերտների բարոյահոգեբանական, մանկավարժական և դաստիարակության չափանիշները: Այն ձեռքբերումները, որոնք մեծ դժվարությամբ հիմնավորվել էին դպրոցներում սովորողների հայեցի դաստիարակման գործընթացում, հիմնականում մատնված էին անհաջողության [1, 13]:

Համաձայն 2001 թ. Մարդկային զարգացման ազգային զեկույցի՝ Հայաստանում սահմանափակվել են պետական ծախսերը կրթության ոլորտում. «... այն ՀՆԱ-ի 2-3 %-ն է, իսկ 1980-ականներին այն 7-9 %-ն էր: Մեկ դպրոցականի հաշվով բյուջեի հատկացումները կազմում են մոտ 40 ԱՄՆ դոլար: Երկու ցուցանիշներն էլ այլ երկրների համեմատությամբ բավական ցածր են» [10, 16]:

Բացի բյուջետային հատկացումների սղությունից, պետական բյուջեի կառուցվածքում կրթության մասնաբաժինը ևս բավականին փոքր էր, չնայած աստիճանական, ըստ տարիների՝ ունեցել է աճի դինամիկա, որը խոսում էր պետության կողմից հանրակրթության ոլորտին տրվող առաջնայնության մասին:

Կրթության ֆինանսավորման կառուցվածքում հանրակրթության մասնաբաժինը 1996 թվականի համեմատությամբ (41 %) 2000 թվականին աճել է մինչև 72 %՝ գերազանցելով եվրոպական միջին ցուցանիշը (70 %) [4]: Սակայն հարկ է նշել, որ հանրակրթության բյուջետային հատկացումներն ավելացվում էին ոչ թե կրթության ընդհանուր բյուջեի աճի, այլ մյուս մակարդակների ֆինանսավորման անընդհատ կրճատման հաշվին:

Այսպիսով, ՀՀ կառավարության իրականացրած բարեփոխումների շնորհիվ հանրակրթությանը հատկացվող պետական ֆինանսավորման չափը աստիճանական աճել է՝ 2001 թվականին այն կազմել է 17,908 մլն դրամ, 2002 թվականին՝ 19,719 մլն դրամ, 2003 թվականին՝ 23,029 մլն դրամ [15, 10]:

Կրթության բնագավառում օրենսդրության անկատարության հետևանք էր պետական կառավարման, տարաձայնի կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների միջև օպերատիվ կապերի բացակայությունը: Ուսումնական հաստատությունները գտնվում էին տարբեր գերատեսչությունների ենթակայության տակ, սակայն չկային լիազորությունների հստակ տարանջատման վերաբերյալ ենթաօրենսդրական ակտեր: Կառավարման համադասումը ապահովող ակտերի բացակայությունը լուրջ դժվարություններ էր առաջացնում կրթության կառավարման լիազորված մարմնի համար իր գործառնություններն իրականացնելիս:

Առանց կառավարման անհնարին էր լուծել ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործումը, նրա բոլոր հիմնախնդիրների համալիր լուծումը [9, 403]:

Կրթության զարգացման պետական ծրագրի իրագործողը պետք է լիներ մանկավարժը: Մինչդեռ կրթության ոլորտում առկա էր կադրային հիմնախնդիր՝ բազմաթիվ դրսևորումներով, մանկավարժական համակարգի ծերացում կայուն միտում, սեռային անհամամասնություն¹, որակյալ կադրերի արտահոսք, նրանց փոխարինում ոչ մասնագետներով, որակավորման բարձրացման, վերապատրաստման և ատեստավորման գործընթացների թերի սպասարկում և այլն:

Ուսուցչական և մանկավարժական կադրերի որակը կազմում էր կրթության ոլորտի հիմնախնդիրների առաջնքը: Այստեղ պետության ուշադրությունը բևեռվում էր այն բարեփոխումների վրա, որոնք կկատարելագործեին բարձրորակ ուսուցիչների հավաքագրման գործընթացը դպրոցներում (ուսուցիչների նախապատրաստման բարելավում, վերապատ-

¹ Մանկավարժների միջին տարիքը մոտենում էր 55-ի, յուրաքանչյուր 6 ուսուցիչից 1-ը կենսաթոշակային տարիքի էր, ուսուցիչների 85 տոկոսը կլին էր:

րաստում): Այս միջոցառումները կօգնեն ուսուցիչներին պահպանել իրենց գիտելիքները ու հմտությունները և կնպաստեն նրանց որակավորման մշտական աճին: Ոչ պակաս կարևոր նշանակություն ունենի ուսուցիչների աշխատանքային պայմանները և նրանց աշխատավարձի չափը, քանի որ դրանք միանշանակ ազդում են կրթական գործընթացի «որակի» վրա [13, 8]:

Ուստի աշխատավարձի ու մասնագիտության վարկանիշի ցածր մակարդակի և սոցիալական թույլ պաշտպանվածության պատճառով համակարգում առկա էր որակյալ կադրերի արտահոսք:

1990-ականների վերջին քայքայվել էր կրթության համակարգի շենքային ապահովվածությունը, որից ամենաշատը տուժել էր հատկապես դպրոցական ոլորտը (մասնավորապես երկրաշարժից և ռազմական գործողություններից): Հաստատությունները չէին համարվել գույքով՝ կահավորանքով, լաբորատոր սարքավորումներով, ուսումնադիտակցող պարագաներով: Անբավարար էին ուսուցման ժամանակակից տեխնիկական միջոցները, գործնական աշխատանքի սարքավորումները, տեղեկատվական, համակարգչային տեխնիկան և կապի միջոցները: Կրճատվել էին հաստատություններում կատարվող ուսումնամեթոդական մշակումները, տպագրվող մասնագիտական գրականության տեսականին և ծավալները:

Դպրոցներից միայն մոտ 400-ն ունեւ համակարգչային տեխնիկա, իսկ ինտերնետային կապ գործում էր հանրապետության դպրոցների 5 տոկոսում: Ամբողջական կամ մասնակի նորոգման կարիք ունեւ շուրջ 350 դպրոց (հիմնականում՝ գյուղական) [15, 16]:

Այսպիսով, մինչև 2003 թվականը բարեփոխումները հիմնականում կառուցվածքային բնույթի էին և միտված էին լուծելու համակարգի ֆինանսավորման և կառավարման խնդիրները: 2003 թվականից սկսվել էր բարեփոխումների նոր փուլ, որն ընդգրկում էր նաև բովանդակային հիմնահարցեր՝ կրթակարգ, նոր ուսումնական ծրագրեր, գնահատման նոր համակարգ և այլն [8, 5]:

Հիմնախնդիրների լուծման նպատակով հաստատված «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2001-2005 թվականների պետական ծրագիր հաստատելու մասին» օրենքի համաձայն՝ նախատեսվում էր կրթության համակարգի բնականոն գործառման ու կայուն զարգացման համար իրագործման երեք փուլ [4]:

Առաջինը (2001 թ.) կրթության համակարգի պահպանմանն ուղղված համալիր միջոցառումների իրականացումն էր և դրա հետագա զարգացման համար պայմանների ստեղծումը: Այս փուլում ծրագրի իրականացման կարևորագույն ուղղություններն էին ճգնաժամային գործընթացների կանխարգելումը, ուսումնական հաստատությունների բնականոն գործընթացի անհետաձգելի միջոցառումները, կրթության բնագավառում նորմատիվային իրավական և վիճակագրական հիմքի կատարելագործումը, մասնագետների պատրաստման համակարգի վերակազմակերպումը: Երկրորդը (2002-2003 թթ.) անցումն էր կրթության համակարգի կայուն էվոլյուցիոն զարգացմանը, և երրորդը (2004-2005 թթ.)՝ անցում կրթության համակարգի առաջանցիկ զարգացմանը՝ ապահովելով դրա համակողմանի առաջընթացը:

Եզրակացություն. Այսպիսով, պետության համար հանրակրթության ոլորտի զարգացումը դիտարկվում էր առաջնային, սակայն բարեփոխման և խնդիրների լուծման գործընթացը բավականին դանդաղ էր ընթանում, որն իր բացասական ազդեցությունն էր թողնում հանրակրթության լավարկման վրա, ինչն էլ իր հերթին ազդում էր ոլորտի առաջընթացի վրա: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հանրակրթության ոլորտում կուտակված բազմաթիվ խնդիրների վրա իր մեծ ազդեցությունն է ունեցել երկրի սոցիալ-տնտեսական անբարենպաստ վիճակը:

Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ հանրակրթության կազմակերպման արմատական վերափոխությունները և բարեփոխումները գրեթե բոլոր ժամանակներում ենթադրել են

կրթության ոլորտի վերաիմաստավորման և կրթության կազմակերպման նորագույն ձևերի կառուցման հիմնախնդիրներ և պահանջել են ոչ միայն լուրջ ֆինանսական, այլ նաև ժամանակակից ինտելեկտուալ ներդրումներ, ինչն արդիական է նաև այսօր:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-116>

Գրականություն

1. Գևորգյան Ս., Ազգային կրթության դերն ու նշանակությունը սովորողների հայեցի դաստիարակության գործընթացում, Երևան, «Զանգակ-97», 2002:
2. Հանրակրթության կառավարման համակարգի խնդիրները, Երևան, 2020: URL: [Էլեկտրոնային ռեսուրս] // [www.osf.am/ wpcontent/uploads/2021/09/Հանրակրթության-կառավարման-համակարգի-խնդիրները.pdf](http://www.osf.am/wpcontent/uploads/2021/09/Հանրակրթության-կառավարման-համակարգի-խնդիրները.pdf) (ղիտվել է 01. 12. 2024).
3. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2005: <https://armstat.am/file/doc/525.pdf>
4. «Հայաստանի Հանրապետության կրթության զարգացման 2001-2005 թվականների պետական ծրագիր հաստատելու մասին» ՀՀ օրենք (ընդունվել է՝ 26. 06. 2001 թ., ՀՕ-199):
5. ՀՀ կառավարության 08.04.2000 թ. թիվ 226 որոշում «Միջնակարգ (լրիվ) ընդհանուր կրթության պետական չափորոշիչը հաստատելու մասին»:
6. «Կրթության մասին» ՀՀ օրենք (ընդունվել է՝ 14.04.1999թ., ՀՕ-297) 4-րդ հոդված, 2-րդ կետ:
7. «Կրթությունը Հայաստանում», 2002:
8. «Կրթությունը Հայաստանում», 2004:
9. Մանկավարժություն (ուսումնական ձեռնարկ), Երևան, «Մանկավարժ», 2005:
10. Մարդկային զարգացման ազգային զեկույց, 2001: “Ten years of Independence and Transition in Armenia”, National Human Development Report, Armenia, 2001, p. 16.
11. Մինասյան Է., Սոցիալ-տնտեսական վերափոխումները Հայաստանի Հանրապետությունում (1990-2003 թթ.), Երևան, ԵՊՀ հրատ., 2003:
12. Մինասյան Է., Հայաստանի երրորդ Հանրապետության պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 2013:
13. Մինասյան Ս., Հայաստանի Հանրապետության հանրակրթական համակարգի որակի կառավարման հիմնախնդիրների շուրջ, Երևան, 2005:
14. Մկրտչյան Լ., «Կրթական վերափոխումների գործընթացը Հայաստանի Հանրապետությունում 1991-2005 թթ.», պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսություն, Երևան, 2012:
15. Միջնակարգ կրթությունը Հայաստանում. խնդիրներ և հեռանկարներ, Երևան, «Քաղաքացիական հասարակության ինստիտուտ» ՀԿ, 2003:

Состояние и основные проблемы народного образования в Республике Армения в начале 2000-х годов

Аветисян Сурен

Резюме

Ключевые слова: образование, реформа, учащийся, педагог, школа, законодательство, стандарт, программа

В начале 2000-х годов в системе общего образования Республики Армения накопился ряд серьезных проблем и вызовов. Среди них — несовершенство нормативно-правовой базы, сокращение численности учащихся и образовательных учреждений, дефицит педагогических кадров и другие системные трудности. Реализация мероприятий, предусмотренных государственной программой развития образования, была в значительной степени нацелена на преодоление этих проблем.

Проведенное исследование показало, что значительное влияние на кризисные явления в сфере общего образования оказала социально-экономическая ситуация в стране. Как известно, практически в любой исторический период кардинальные реформы в образовательной системе сопровождались необходимостью переосмысления самой ее структуры, поиска новых организационных форм и привлечения не только серьезных финансовых, но и современных интеллектуальных ресурсов.

В рамках данной статьи проанализирована динамика изменений, происходивших в общеобразовательных учреждениях Армении в указанный период. Особое внимание уделено таким факторам, как сокращение числа учащихся, уменьшение количества школ и педагогических работников, а также дана оценка эффективности предпринятых шагов в контексте образовательных преобразований и преодоления накопившихся проблем.

The State and Main Problems of Public Education in the Republic of Armenia in the Early 2000s

Avetisyan Suren

Summary

Key words: education, reform, student, educator, school, legislation, standard, program

In the Republic of Armenia, the early 2000s were marked by a series of issues and challenges in the field of general education, including imperfect legislation, decrease in the number of students and general educational institutions, as well as difficulties in providing teaching staff, etc. The reform measures included in the state education development program were mainly aimed at solving a number of problems in this sphere.

Research has shown that many of the issues accumulated in general educational institutions were significantly influenced by the socio-economic conditions of the country. Radical changes and reforms in organizing general education have practically always presumed issues of rethinking of the education sphere and building brand new forms of educational processes, requiring not only substantial financial resources, but also modern intellectual investments.

Thus, within the framework of the article, the dynamics of the actual situation that existed in general educational institutions during the mentioned period was studied. The latter was characterized by a reduction in the number of students, educational institutions, teaching staff, as well as an assessment of the effectiveness of the measures taken to address the accumulated problems and transformations.

Ներկայացվել է 07. 10. 2024 թ.

Գրախոսվել է 13. 11. 2024 թ.

Ընդունվել է տպագրության 05. 06. 2025 թ.

**Կառավարման խորհրդային համակարգի ձևավորման հարցը
Խորհրդային Ռուսաստանում և Խորհրդային Հայաստանում
(1920-ական թվականների առաջին կես)**

Քաղաքյան Արմեն

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-124>

Հանգուցային բառեր. Խորհրդային Ռուսաստան, Խորհրդային Հայաստան, քաղաքական համակարգ, խորհուրդներ, կառավարման սկզբունքներ, կրկնօրինակում, 1920-ական թվականների առաջին կես

Նախաբան

Կառավարումը մեր առօրյա կյանքի անհրաժեշտ տարրերից մեկն է, որը անքակտելիորեն կապված է հասարակության զարգացման հետ: Կառավարման շնորհիվ աշխարհում ստեղծվում է հավասարակշռություն, մարդկային կոլեկտիվի անխափան գործունեություն, և առանց որի տիրում է քաոս ու անիշխանություն:

Կառավարման ուղղություններից է պետական կառավարումը: Այս հասկացությունը օգտագործվել է ԽՍՀՄ սահմանադրությունում և խորհրդային վարչական իրավունքի մասին գիտության մեջ: Այն մեկնաբանվում է որպես պետական իշխանության գործադիր և կարգադրիչ մարմինների (կառույցների) գործունեություն [23, 35]:

Չնայած խորհրդային տարիներին ընդունված սահմանադրություններից և ոչ մեկը չէր սահմանում կառավարման այն կարգը, համաձայն որի կոմունիստական կուսակցությունը պետք է կառավարի խորհրդային կյանքի բոլոր ոլորտները, սակայն Ռուսաստանում խորհրդային իշխանության հաստատման հենց սկզբից բոլշևիկյան կուսակցությունը սկսեց ամրապնդել իր ղեկավար դերը երկրի կյանքի բոլոր ոլորտներում՝ որդեգրելով կառավարման ամբողջատիրական սկզբունքը: Ի վերջո այն դարձավ խորհրդային երկրի ղեկավարման և կառավարման իրական բարձրագույն մարմինը: Բնականաբար, Խորհրդային Հայաստանում այդ դերը ստանձնեց ՀԿ(բ)Կ-ն:

Հասկանալի է, որ բոլշևիկյան կուսակցության պատմության վերոնշյալ հարցի վերաբերյալ ԽՍՀՄ տարիներին գրվել են ոչ այնքան գիտական, որքան՝ ագիտացիոն բնույթ ունեցող աշխատություններ:

Հարցը ուսումնասիրությունը սկսվեց միայն ԽՍՀՄ գոյության վերջին տարիներին (հասկանալի է, որ ԽՍՀՄ-ում կառավարման գործունեության իրական համակարգի թեման չէր կարող անաչառ ուսումնասիրվել) ու հետխորհրդային շրջանում: Այդուհանդերձ, չնայած հետխորհրդային շրջանում առանձին աշխատությունների երևան գալուն¹, Խորհրդային Հայաստանում 1920-ական թվականների խորհրդային կառավարման համակարգի ձևավորման (և հատկապես դրա՝ ՌՄԴԽՀ-ին կրկնօրինակելու) հարցը դեռևս նորովի ու լիարժեք չի ուսումնասիրվել և առանց դրա՝ Խորհրդային Հայաստանի քաղաքական պատմության ներկայացումը կլինի թերի և ոչ լիարժեք: Իսկ սույն հարցի ուսումնասիրությունը խիստ կարևոր է, քանզի պետական կառավարման ցանկացած ձևի և քաղաքական համակարգի պայմաններում իշխանության բարձրագույն մարմինների ռազմավարական և մարտավարական որոշումներից է կախված տվյալ երկրի քաղաքացիների հետագա ճակատագիրը:

¹ Տե՛ս Ղազախեցյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., Երևան, 2006, Հակոբյան Ա., Միակուսակցական վարչակազմի ձևավորումը Խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներ), Երևան, 2016, Մանուկյան Ա., Քաղաքական կյանքը Հայաստանում 1920-1940 թթ., Երևան, 2002, Ժամհարյան Գ., Հայաստանի խորհրդային ժամանակաշրջանի առօրեականության պատմության դրվագներ (1920-1930-ական թվականներ), Երևան, 2019:

Այս կամ այն երկրից կառավարման համակարգի չմտածված հայելային կրկնօրինակումը չի նպաստում երկրի զարգացմանը և բերում է բավականին բարդություններ:

Կառավարման խորհրդային համակարգի ձևավորման սկիզբը ՌՄԴՄՀ-ում

ՌՄԴՄՀ-ում կառավարման խորհրդային համակարգի ձևավորումը սկսվել է 1917 թ. նոյեմբերին, երբ խորհուրդների II համագումարը օրենսդիր մակարդակով պետական իշխանությունը փոխանցեց խորհուրդներին: Այդ ժամանակաշրջանում խորհուրդների համակարգը արդեն գործում էր ՌՄԴՄՀ գրեթե բոլոր բնակավայրերում:

Անհրաժեշտ է նշել, որ բոլշևիկները մեծ տեղ էին հատկացնում ժողովրդաիշխանության ինստիտուտին (ժողովրդաիշխանություն ասելով հասկանում ենք քաղաքական իշխանության այնպիսի համակարգ, որի ժամանակ պետական իշխանության մարմինների ձևավորման և հասարակական կյանքի կարևորագույն հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման գործընթացը մեծապես կախված է ժողովրդի կարծիքից): Այսպես, 1917 թ. հոկտեմբերին 25-ին վերոնշյալ համագումարը «Բանվորներին, զինվորներին ու գյուղացիներին» ուղղված կոչում նշում էր, որ ամբողջ իշխանությունը անցնում էր խորհուրդներին, որոնք տեղերում ապահովելու էին հեղափոխական կարգուկանոն [24, 8-9]:

Իշխանությունը խորհուրդներին հանձնելու նշյալ թեզը իր արտացոլումը գտավ հետագայում ընդունված բոլոր օրենքներում: Մասնավորապես, ՌՄԴՄՀ 1918 թ. հուլիսի 10-ին ընդունված սահմանադրությունում ամրապնդվեց այն նորմը, որ ամբողջ իշխանությունը պատկանում է խորհուրդներին [20, 16-24]: Սահմանադրության համաձայն՝ կառավարման բարձրագույն մարմինը խորհուրդների համառուսաստանյան համագումարն էր, որը ընտրում էր ՀամԳԳԿ: Վերջինս կառավարում էր համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում: 1918 թ. սույն սահմանադրությունը մեծապես ազդեց ինչպես հետագայում ընդունված ՀՄԽՀ, այնպես էլ՝ ԽՍՀՄ սահմանադրության բովանդակության վրա: Նշյալ սկզբունքը (նորմը) խորհրդային պետության կառավարման հիմնական գաղափարական տարրերից մեկն էր. ամբողջ իշխանությունը կենտրոնացվում էր տարբեր տարածքների ու մակարդակների խորհուրդներում: Դրանք իրենց ղեկավարման ներքո գտնվող տարածքներում հանդիսանում էին կառավարման ինքնուրույն մարմիններ, որոնք, սակայն, իրենց որոշումները համաձայնեցնելու էին վերադաս իշխանությունների հետ:

Վերադառնալով 1917 թ. խորհուրդների II համագումարին՝ ավելացնենք միայն, որ այն ընտրեց Համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտե՝ համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում պետական իշխանության գլխավոր մարմինը [27, 89-90]: ՀամԳԳԿ-ն նոյեմբերյան իր նիստում ընդունեց աշխատանքային կանոնադրությունը, համաձայն որի՝ ՀամԳԳԿ բարձրագույն մարմինը պլենար նիստն էր, որը կայանալու էր երկու շաբաթը մեկ անգամ՝ ընդլայնված կամ նեղ կազմով: Պետական կառավարման համակարգի՝ կենտրոնական և տեղական մարմինները ստեղծվում և գործում էին ՀամԳԳԿ-ի կողմից հաստատված նորմատիվ ակտերի՝ «Կանոնադրությունների» հիման վրա: Ավելացնենք նաև, որ խորհուրդների II համագումարին պետական ապարատի կառավարման համար ձևավորեց նոր կառավարություն՝ ժողովրդական կոմիսարների խորհուրդ, ինչպես նաև հստակեցրեց վերջինիս գործառնության պարտականությունները [26, 14-15]: Որպես կենտրոնական կառավարման հիմնական մարմիններ ձևավորվեցին ժողովրդական կոմիսարիատները. ներքին գործերի, հողագործության, ժողովրդական լուսավորության և այլն:

Այսպիսով, 1918 թ. զարնանը ՌՄԴՄՀ-ում արդեն ստեղծվել էր պետական կառավարման խորհրդային համակարգ. խորհուրդները իրականացնում էին պետական իշխանությունը կենտրոնում և տեղերում: Խորհուրդների համակարգը ձևավորված էր ըստ տարածքային սկզբունքի՝ նահանգային, մարզային, գավառային և գավառակային, ինչպես նաև քաղաքային ու գյուղական: Նշյալ խորհուրդների մշտապես գործող կառույցները դրանց գործկոմներն էին [28, 92-95]:

Քաղաքային խորհուրդների մասով ավելացնենք, որ 1922 թ. հունվարի 26-ին ՀամԳԳԿ

որոշմամբ հստակեցվեցին դրանց պատգամավորների լիազորությունները: Այսպես, քաղ- խորհրդի պատգամավորը պարտավոր էր. ա) մասնակցել քաղխորհրդի նիստերին և դրանց մասին հաշվետվություններ ներկայացնել իր ընտրողներին, բ) աշխատել քաղաքային խորհրդի սեկցիաներից մեկում, գ) աշխատել հանձնաժողովներում, եթե դրանք առկա են: Պատգամավորը պարտավոր է քաղխորհրդի քննարկմանը ներկայացնել ընտրողների բարձրագրած հարցերը: Վերոնշյալ որոշման 19-րդ կետում նշվում էր, որ քաղխորհուրդը անմիջականորեն պատասխանատու էր վերադասին խորհուրդների նահանգային համա- գումարին և նահանգային գործկոմին և ոչ թե պատգամավորներին ընտրած ժողովուրդին: Չնայած իշխանությունը հռչակված էր ժողովրդապետական, սակայն ժողովուրդը, փաստա- ցի, շատ հեռու էր իշխանության ձևավորման գործընթացից, և իշխանությունը ժողովուրդի առջեւ հաշվետու չէր [29, 75-77]:

Հստակեցվեց նաև խորհուրդների կողմից ձևավորվող գործադիր մարմինների ենթա- կայության հարցը: 1925 թ. ՌԽՖՍՀ սահմանադրության համաձայն տվյալ տարածքում (նահանգ, մարզ, գավառ և այլն) բարձրագույն իշխանություն հանդիսացող խորհուրդների համագումարները ընտրում էին գործադիր կոմիտեներ, որոնք աշխատում էին կրկնակի ձևաչափի սկզբունքով. մի կողմից ենթակա էին խորհուրդների տվյալ համագումարին, մյուս կողմից՝ վերադաս խորհրդի ձևավորած գործկոմին: Նմանապես՝ գործկոմների բաժինները ենթակա էին գործկոմների նախագահությանը և վերադաս գործկոմի համապատասխան բաժիններին:

Այսպիսով, ի սկզբանե ձևավորվեց խորհուրդների և դրանց ձևավորած գործկոմների կրկնակի ենթակայության ձևաչափը:

Իշխանության համար պայքարը կուսակցական և խորհրդային մարմինների միջև խորհրդային Ռուսաստանում

Պետք է նշել, որ ՌԿ(բ)Կ կառավարման կարևորագույն սկզբունքներից էր այն հասկա- ցությունը, որ իշխանության գործադիր և օրենսդիր թևերի տարանջատում չպետք է լինի: Նշյալի պատճառով ՌԿ(բ)Կ ղեկավար ոչ բոլոր անդամներն էին կողմ, որ խորհուրդները և դրանց ձևավորած գործկոմները ինքնուրույն գործեն: Չպետք է մոռանալ, որ 1917 թ. նոյեմբե- րին գրավելով իշխանությունը Ռուսաստանում, բոլշևիկյան կուսակցությունը սկսեց ամրա- պնդել ղեկավար իր դերը խորհրդային կյանքի բոլոր ոլորտներում՝ հասարակական-քաղա- քական, սոցիալ-տնտեսական, դատաիրավական և այլն:

Սակայն արժե նշել, որ ՌԿ(բ)Կ ղեկավարության ոչ բոլոր անդամներն էին կողմ կու- սակցության և խորհրդային իշխանության մարմինների գործառույթների միաձուլմանը: Ավելին, դեռևս ՌԽՖ(բ)Կ 7-րդ համառուսաստանյան կոնֆերանսի (24-29.04.1917 թ.) ժամանակ լրջորեն քննարկվել է այն հարցը, թե որն է ավելի բարձր՝ կուսակցությունը, թե՞ խորհուրդները [25, 135-138, 140, 152-154]:

Մեկ տարի անց այդ հարցը դեռևս չէր հստակեցվել, ինչը լարել էր կուսկոմիտեների ու խորհրդային իշխանության, հատկապես՝ գործադիր իշխանության մարմինների փոխա- րաբերությունները, քանզի երկուսն էլ ձգտում էին քաղաքական իշխանության հաստատ- մանը: Այսպես, ՌԿ(բ)Կ 7-րդ արտահերթ համագումարում (1918 թ. մարտ) խնդիր էր դրել «ճշգրիտ ձևակերպել Համառուսաստանյան ԿԳԿ-ի նախագահության իրավունքներն ու պարտականությունները և սահմանազատել նրա գործառույթների ոլորտը ժողովրդային գործառույթների ոլորտից», ինչպես նաև՝ «չպետք է շփոթել կուսակցական մարմինների ֆունկցիաները պետական (խորհրդային) մարմինների ֆունկցիաների հետ: Կուսակցու- թյունն իր որոշումները անցկացնում է սովետական մարմինների միջոցով, սովետական սահմանադրության շրջանակներում: Կուսակցությունը ջանում է ղեկավարել սովետների գործունեությունը, բայց չփոխարինել նրան» [19, 139-141]:

Սակայն, կուսկոմիտեները քայլ առ քայլ ամրապնդում էին իրենց ղեկավար դիրքը խորհրդային իշխանության մարմինների նկատմամբ: Քաղաքական իշխանության պատկա-

նեկիության վերաբերյալ կոմկուսի և խորհուրդների միջև եղած տարաձայնությունները ավարտվեցին ՌԿ(բ)Կ VIII համագումարի (18-23.03.1919 թ.) ժամանակ, երբ որոշվեց, որ կոմունիստական կուսակցությունն է ամբողջապես ղեկավարելու ինչպես աշխատավորական բոլոր կազմակերպությունները, այնպես էլ՝ բոլոր կազմակերպությունները՝ արհմիություններ, կոապերատիվներ, գյուղական կոմունաներ և այլն, այնպես էլ՝ խորհուրդները և խորհրդային իշխանության մարմինները [21, 76-77]:

Համագումարը ընդունեց նաև կուսակցության նոր կանոնադրությունը, համաձայն որի՝ խիստ ամրապնդվեց կուսակցական կառույցների ուղղահայաց ենթակայությունը:

Սույն համագումարից հետո Խորհրդային Ռուսաստանի տարածքում կայացած կուսակցական նահանգային կառույցները էլ ավելի ամրապնդեցին կուսակցության ղեկավար դերը խորհրդային իշխանության մարմինների նկատմամբ: Այսպես, օրինակ, նահանգների տարածքներում գտնվող խորհրդային մարմինների ու հիմնարկ-ձեռնարկությունների պատասխանատու բոլոր պաշտոնները հետայդու զբաղեցնելու էին միայն կոմկուսի անդամները, ովքեր հաշվետու էին նահանգային կուսկոմիտեներին և կատարելու էին վերջիններիս որոշումները ու հրահանգները:

ՌԿ(բ)Կ հետագա համագումարները և կոնֆերանսները, պահի քաղաքական նպատակահարմարությունից ելնելով, փոփոխություններ էին կատարում կուսակցության կանոնադրությունում, որով ընդամենը փոխվում էին կուսկառույցների կոնֆերանսների անցկացման ժամկետները և կուսկոմիտեների քարտուղարների համար անհրաժեշտ կուսակցական ստաժների չափերը [22, 374, 454]:

Մակայն այլևս կասկածի տակ չէր դրվում այն գաղափարը, որ խորհրդային իշխանության մարմինները, փաստացի, ենթակա էին տվյալ տարածքի կուսկազմակերպությանը: Ավելին, ՌԿ(բ)Կ XII համագումարից (17-25.04.1923 թ.) հետո այլևս չէր բարձրացվում այն հարցը, որ խորհուրդներին պետք է վերադարձվեն սահմանադրությամբ նրանց տրված լիազորությունները, և խորհուրդներն արդեն վերածվել էին կուսակցական որոշումները դակող մարմինների. խորհուրդների փոխարեն ամեն ինչ որոշում էին կուսկոմիտեները:

Այս իրավիճակը ամրապնդվեց 1927 թ. ապրիլին, երբ ՀամԿ(բ)Կ XIV կուսկոնֆերանսը հռչակեց իշխանության կենտրոնացման կուրս. տեղական խորհուրդների ինքնուրույնությունը ամբողջովին դարձավ ձևական: Այս ժամանակահատվածը համընկավ վարչափարավայական համակարգի ձևավորման ժամանակաշրջանին: Մկսվեց պետական կառավարման համակարգի ու հատկապես՝ խորհուրդների գործունեության վրա իշխող կոմկուսի ազդեցության խիստ ուժեղացման քաղաքականությունը: Պետական կառավարման խորհրդային համակարգը իշխող կուսակցության համար վերջնականապես դարձավ գաղափարաքաղաքական գործիք: Չմոռանալ, որ դեռևս խորհրդային իշխանության հաստատման առաջին իսկ օրվանից կառավարչական բոլոր մարմինների ղեկավար պաշտոններում նշանակվեցին բոլշևիկյան կուսակցության անդամները, և ստեղծվող պետական կառավարման համակարգը գործում էր պատասխանատու կուսակցական գործիչների նեղ շրջանակի ղեկավարման ներքո:

Պետական իշխանության համակարգի կայացման և կառավարման գրեթե բոլոր հարցերը նախապես քննարկվում էին կուսակցության համագումարներում, Կենտկոմի պլենումներում, Կենտկոմի նախագահությունում և քարտուղարությունում, Կենտրոնական վերստուգիչ հանձնաժողովում, կուսակցական տեղական կառույցներում, տարբեր կազմակերպություններում գործող սկզբնական կուսակցական կազմակերպություններում (բջիջներում):

Կառավարման խորհրդային համակարգի ձևավորումը ՀՄԽՀ-ում

Իսկ ինչպիսի՞ն էին կոմկուս-խորհուրդներ փոխհարաբերությունները ՀՄԽՀ-ում:

Նախ նշենք, որ չնայած իր անվանը, Խորհրդային Հայաստանի կոմկուսը ինքնուրույն և անկախ կուսակցություն չէր: Չունէր իր ծրագիրը և կանոնադրությունը: ՀԿ(բ)Կ-ն ՌԿ(բ)Կ

բաղկացուցիչ մասն էր, որն օգտվում էր մարզային կազմակերպության իրավունքներով: Նրա միջոցով իրականացվում էր ՌԿ(Բ)Կ քաղաքականությունը: ՀՄՍՀ-ում խորհրդային պետական կառավարման համակարգի՝ ՌԽՄՂՀ-ից կրկնօրինակելու փաստաթղթային ցայտուն օրինակ է ՀՄԽՀ արդարադատության ժողովմաստի 1920 թ. դեկտեմբերի 18-ի որոշումը այն մասին, որ «խորհրդային Ռուսաստանի օրենքները կիրառվում են նաև Խորհրդային Հայաստանում» [15, 2]:

Վերադառնալով ՀՀ խորհրդայնացման հարցին՝ նշենք, որ 1920 թ. դեկտեմբերի 2-ի իշխանափոխությունից հետո Խորհրդային Հայաստանում ՀԿ(Բ)Կ-ի կողմից ստեղծված Ռազմահեղափոխական կոմիտեն (ՌՀԿ) դեկտեմբերի 4-ին հասավ Երևան: Վերջինս կառավարելու էր ՀՄԽՀ-ն մինչև իշխանության բարձրագույն մարմնի՝ խորհուրդների առաջին համագումարի և նրա կողմից ձևավորած մարմինների ստեղծումը: Հայեղկումը իրականացնում էր օրենսդիր, պետական կառավարման, հսկողության ու արդարադատության գործառնություններ: Նշենք, որ Հայեղկումի՝ Խորհրդային Ռուսաստանում ՌԿ(Բ)Կ-ի կողմից իրականացվող քաղաքականությունը անմիտ կերպով ՀՄԽՀ-ում կրկնելու պատճառով երկրում սկսվեց քաղաքացիական պատերազմ, որի ավարտից հետո միայն ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահությունը սկսեց իշխանությունների ձևավորման լիարժեք գործընթացը: Սրան օգնեց այն համագամանքը, որ անցումային այդ ժամանակահատվածում իշխանության նախկին մարմինները լուծարվել էին, իսկ նորերը (առավել ևս՝ խորհուրդները) դեռևս չէին ստեղծվել:

Վերոնշյալ գործընթացի առաջին քայլերից էր Հայառաքինեղկումի վերակառուցումը ՀՄԽՀ ժողովրդական կոմիսարների խորհրդի (ժողկոմխորի կամ ԺԿԽ), որի կազմը ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահության նիստում քննարկվեց 1921 թ. մայիսի 19-ին: ԺԿԽ նախագահ նշանակվեց Ա. Մյասնիկյանը, ներքգործող կոմ՝ Պ. Մակինցյանը, արտգործող կոմ՝ Ա. Մռավյանը և այլն [16, 5, 8]: Կառավարության նշյալ կազմը ՌՀԿ-ն համապատասխան դեկրետով, «հաստատեց» 1921 թ. մայիսի 21-ին, որը ամբողջովին նույնական էր Կենտկոմի նախագահության հաստատածին: Հայեղկումի վերակառուցումը ժողկոմխորի բովանդակության տեսակետից ոչինչ չփոխեց, որովհետև գործառնությունները նույն էին: Ինչպես նշում է պ. գ. դ Վլ. Ղազախեցյանը, «Ֆունկցիաների իմաստով նա նույն ռազմեղկումն էր, օրենսդիր և գործադիր իրավունքներով: Անվանափոխությունը միայն ուղենշում էր ռազմական և հեղափոխական կոչումից հրաժարվելու և քաղաքացիական իշխանության անցնելու մասին» [18, 227]:

Թեև Խորհրդային Հայաստանում դեռևս հստակեցված չէին կոմկուս-խորհուրդներ փոխարաբերությունները, սակայն ինչպես արդեն նշեցինք՝ հենց սկզբից ՀԿ(Բ)Կ-ն հստակեցրեց, թե ով է իրական ղեկավարը ՀՄԽՀ-ում, և իր ձեռքը վերցրեց խորհրդային կառավարման համակարգի ձևավորման գործընթացը: Եթե սկզբնական շրջանում ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահությունը հաստատում էր գործադիր իշխանության առաջին դեմբերին, ապա, շատ կարճ ժամանակ անց, երկրորդ դեմբերի (ժողկոմների տեղակալների, իսկ կարճ ժամանակ անց նաև՝ ժողկոմատների կառուցվածքային ստորաբաժանումներին) ղեկավարների) հաստատման հարցը նույնպես վերապահվեց նախագահությանը [1, 17]:

Կառավարության գործունեության նկատմամբ ՀԿ(Բ)Կ հսկողությունն այնքան էր ուժեղացել, որ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահության 1921 թ. հուլիսի 16-ի որոշմամբ՝ ԺԿԽ նախագահության նիստերին բացակայող անդամներին փոխարինելու հարցն իր որոշմամբ էր լուծելու [2, 27-28]: Ավելին, ՀԿ(Բ)Կ Կենտկոմը 1921 թ. օգոստոսի 2-ին ժողկոմներին արգելեց առանց Կենտկոմի գիտության և թույլտվության այցելել գավառներ [3, 50-53]:

Գործադիր իշխանությունն իր հսկողության տակ վերցնելուց հետո ՀԿ(Բ)Կ-ն անցավ օրենսդիր իշխանությունը ձևավորելու և այն նույնպես իր վերահսկողության տակ վերցնելու քաղաքականությանը: Չնայած արդեն մի քանի ամիս էր, ինչ երկրում ձևավորվել էր գործադիր իշխանության բարձրագույն մարմինը՝ ԺԿԽ-ն, սակայն ՀՄԽՀ գավառներում դեռևս շարունակում էին գործել հեղկոմները, որոնց միջոցով ժողկոմխորի կառավարում

էր երկիրը: Իշխանությունը հեղկումներից խորհուրդներին փոխանցելու գործընթացը, բնականաբար, պետք է տեղի ունենար կոմկուսի խիստ վերահսկողության ներքո: Այդ ուղղությամբ կարևոր քայլ կատարվեց 1921 թ. հուլիսի 20-ին, երբ հրատարակվեցին «ՀՍԽՀ վարչական բաժանման» և «Գյուղական, տեղամասային և գավառային հեղկումների կազմակերպման ժամանակավոր կանոնների մասին» դեկրետները [4, 17]: Մինչ այս, ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահությունը հանձնարարել էր ՆԳԺԿ-ին ներկայացնել գյուղխորհուրդների ընտրության ծրագիրը [5, 17]: Ի դեպ նշենք, որ Հայկեղկոմից հետո կառավարման համակարգում կարևորությամբ երկրորդը ՆԿ ժողկոմատն էր, որը հին պետական մեքենան փոխելու էր նորի՝ պրոլետարիատի դիկտատուրայի պետական մեքենայով: Նրա գործառույթներն էին՝ 1) տեղական իշխանության ձևավորումը, այն է՝ տեղական հեղկումների հիմնումը 2) կառավարման տեղական մարմինների աշխատանքների վերահսկողությունը և այլն: Այսպիսով, ՆԳԺԿ-ի ներկայացրած վերոնշյալ ծրագիրը ընդամենը աշխատանքային ժամանակակազույց էր, թե հեղկումներից գյուղխորհուրդների անցման որ քայլը որից հետո է կատարվելու: Տեղական հեղկումները իրենց ենթակա տարածքում, լինելով խորհրդային իշխանության լիազոր մարմիններ, լուծում էին տեղական բնույթի հարցեր [6, 18]: Իսկ գավառի տարածքում բարձրագույն իշխանությունը ՆԳԺԿ-ի կողմից ձևավորված գավիեղկոմն էր, որը տեղերում կիրառում էր կենտրոնական իշխանության բոլոր դեկրետները: Նշենք միայն, որ գավիեղկոմների ղեկավարությունը, չնայած օրենսդրությանը (ձևավորում էր ՆԳԺԿ-ն), սակայն, իրականում, նույնպես նշանակվում կամ պաշտոնազրկվում էր ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահության կամ էլ քարտուղարության որոշմամբ: Այսպես, 1921 թ. մայիսի 23-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահության որոշմամբ Ալեքսանդրապոլի հեղկոմի նախագահ նշանակվեց Մանուցյանը, հեղկոմի անդամներ՝ Ամատունին, Աբրամյանը, Կուրդիյանը և Ա. Հանեստլյանը, Լոռու գավիեղկոմի նախագահ Գ. Սաֆրազբեկովը փոխարինվեց Բ. Սահակյանով, իսկ Դարալագյազի արտակարգ կոմիսար նշանակվեց Դ. Տեր-Միմոնյանը [7, 9]: Հեղկումներից խորհուրդներին անցնելու հաջորդ քայլը կատարվեց 1921 թ. հոկտեմբերի 4-ին, երբ ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահությունը ՆԳԺԿ-ին հանձնարարեց կազմելու երկրի խորհրդայնացման գործընթացի ծրագիրը, որը պետք է հաշվի առներ նախկինում կատարված աշխատանքները [8, 95-96]: Խորհուրդների ընտրությունները և դրանց համակարգումները տեղի ունեցան 1921 թ. դեկտեմբեր – 1922 թ. հունվարին: Ընտրվեցին երկու քաղաքային (Երևան և Ալեքսանդրապոլ) ու մոտ 800 գյուղական խորհուրդներ: Ձևավորվեցին տեղական իշխանության գործադիր մարմինները: Արդեն խորհուրդների ընտրությունների ավարտից ու ընտրովի իշխանության մարմին հանդիսացող գավգործկոմների ստեղծումից հետո գավիեղկոմներն իրենց գործերը հանձնում են գավգործկոմներին և լուծարվում:

Ավարտելով խորհուրդների ձևավորման գործընթացը, ՀԿ(Բ)Կ-ն նախաձեռնեց խորհուրդների հանրապետական համագումարի՝ ՀՍԽՀ դե յուրե բարձրագույն իշխանության կազմավորման աշխատանքները: ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահությունը 1921 թ. դեկտեմբերի 13-ին որոշեց հրավիրել կուսակցական խորհրդակցություն, որի ժամանակ քննարկվելու էին համագումարի օրակարգը և դրանից բխող մյուս հարցերը [9, 106-107]:

1921 թ. դեկտեմբերի 31-ին ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահությունը որոշեց հաջորդ տարվա հունվարի 25-ին հրավիրել ՀԿ(Բ)Կ համագումար, որից հետո միայն երեք օր անց խորհուրդների համագումար: Ինչպես տեսնում ենք, կուսակցական համագումարը նախորդելու էր պատգամավորների խորհրդի համագումարին, ինչը նշանակում էր, որ բոլոր կարևոր հարցերը նախապես լուծվելու էին կուսակցության համագումարում, իսկ խորհուրդների համագումարը միայն «ընդունելու և հաստատելու» էր արդեն լուծված հարցերը: Խորհուրդների համագումարի բացումից մի քանի օր առաջ՝ 1922 թ. հունվարի 16-ին, ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահությունը հաստատեց դրա օրակարգը. այն է՝ 1) ԺԿԽ-ի հաշվետվությունը, 2) հողային քաղաքականությունը և գյուղատնտեսության հերթական խնդիրները, 3) Կարմիր բանակի խնդիրները և այլն [10, 1]: Օրակարգի բոլոր հարցերը նախապես

արդեն քննարկվել էին կուսակցության համապատասխան մարմիններում և ընդունվել համապատասխան որոշումներ:

Գումկուս-խորհուրդներ փոխհարաբերությունների հարցը քննարկման առարկա դարձավ նաև մի քանի օր անց կայացած ՀԿ(Բ)Կ համագումարի ժամանակ, երբ ԺԿԽ նախագահ Ալ. Մյասնիկյանը նշեց, որ «Կուսակցությունը պետք է լինի ղեկավարող, բայց ոչ անմիջական կատարող մարմին» [11, 18]: Նշյալ հարցի մասին համագումարը նաև բանաձև ընդունեց, համաձայն որի՝ «Կուսակցության և խորհուրդների միջև հաստատել այնպիսի հարաբերություններ և աշխատանքները այնպես կազմակերպել, որ կուսակցությունը չխնամակալի խորհուրդներին» [17, 264]: Չնայած ընդունված բանաձևին, այդ խնամակալությունը շարունակվեց:

1921 թ. հունվարի 30-ից փետրվարի 4-ը կայացած պատգամավորական խորհուրդների առաջին համագումարը ձևավորեց օրենսդիր և կարգադիր բարձրագույն իշխանության մարմին՝ կենտգործկոմ՝ 75 անդամի և 17 թեկնածուի կազմով ու նրա նախագահությունը: ԿԳԿ-ի նախագահ ընտրվեց Մաքո Համբարձումյանը, ում թեկնածությունը նախապես հաստատվել էր ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահության 1922 թ. հունվարի 30-ի նիստում: Իհարկե, հաստատվել էին նաև ԿԳԿ բոլոր անդամները և թեկնածուների կազմը [12, 2]: Համագումարին մնում էր միայն «հաստատել» ՀԿ(Բ)Կ Կենտկոմի՝ նախապես ընդունված որոշումները: Սակայն, ինչպես վերոնշյալ օրինակներում, ԿԳ-ի նախագահությունն ու քարտուղարությունն էին որոշում երբ անցկացնել խորհուրդների համագումարները, նստաշրջանները ու օրակարգի հարցերը: Այսպիսով, փաստենք՝ խորհուրդների աշխատանքը ղեկավարում էր ՀԿ(Բ)Կ Կենտկոմը:

Հետագա գործունեության ողջ ժամանակաշրջանում ԿԳԿ-ն շարունակեց մնալ ՀԿ(Բ)Կ փաստացի ենթակայության ներքո: Այսպես, ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահությունը 1924 թ. ապրիլի 22-ին հաստատեց ԿԳԿ-ի կայանալիք նստաշրջանի օրակարգը: Նաև ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահության 1925 թ. մարտի 16-ի որոշմամբ էլ հաստատվեցին ԿԳԿ նախագահության և կառավարության կազմերը [13, 15]:

Իհարկե, ՀԿ(Բ)Կ Կենտկոմը շարունակում էր նաև գործադիր իշխանությունը ղեկավարելու իր քաղաքականությունը. երբ ԺԿԽ նախագահ Ա. Մյասնիկյանը ղեկավար աշխատանքի տեղափոխվեց Թիֆլիս, հանրապետության կառավարության նախագահ դարձավ Ս. Լուկաշինը, որի թեկնածությունը հաստատվեց ՀԿ(Բ)Կ Կենտկոմի նախագահության 1922 թ. ապրիլի 18-ի նիստում: Ի դեպ, իրավական տեսակետից, ԺԿԽ-ի կառուցվածքը և կազմը պետք է հաստատեր ԿԳԿ-ն, սակայն, ինչպես տեսնում ենք, իրական կյանքում որոշողը ոչ թե խորհուրդն էր, այլ՝ կոմկուսը:

Վերադասի՝ խորհուրդների աշխատանքներին միջամտելու քաղաքականությունը տեղերում այն աստիճան եռանդով էին իրականացնում գավկոմները, որ ՌԿ(Բ)Կ Անդրերկրկոմը 1925 թ. մարտի 19-ի շրջաբերականով պահանջեց «պարզաբանել բոլոր գավկոմներին, որպեսզի իրենց վրա չվերցնեն խորհրդային մարմինների գործառույթներ» [14, 11]:

Վերադառնալով ՀՄԽՖ պատգամավորների I համագումարին՝ նշենք, որ համագումարը 1922 թ. փետրվարի 3-ին հաստատեց ՀՄԽՖ առաջին սահմանադրությունը: Այն չհատկեցրեց կոմկուս-խորհուրդներ փոխհարաբերությունների հարցը: Սահմանադրությունը մեծապես կրկնում էր ՌՄԴԽՖ 1918 թ. հուլիսի 10-ին ընդունած սահմանադրությանը: Հիմնական օրենքում մատնանշված էր իշխանության հետևյալ կառուցվածքը. բարձրագույն իշխանությունը համարվում էր խորհուրդների համահայաստանյան համագումարը, իսկ դրանց միջև ընկած ժամանակահատվածում՝ ՀՄԽՖ օրենսդիր, կարգադիր ու ղեկավար-վերահսկողական բարձրագույն իշխանություն հանդիսացող ԿԳԿ-ը: ԿԳԿ-ը ներկայանում էր որպես բարձրագույն օրենսդիր մարմին (հետագա տարիներին ԿԳԿ-ի գործառույթները

«սեփականաշնորհեց» նեղ կազմով գործող ԿԳԿ-ի նախագահությունը): Առանձնահատուկ կարևորության որոշումների՝ սահմանադրության ընդունման, հանրապետության սահմանների որոշման, երկրի վարչական բաժանման, պետական բյուջեի հաստատման, օրենսդրության ընդունման և կարևոր այլ նորմերի ընդունման իրավունքը պատկանում էր պատգամավորական հանրապետական խորհուրդների համագումարին և նրա ձևավորած ԿԳԿ-ին (ի դեպ նշենք, որ ժողկոմխորհը ևս ուներ օրենսդրական գործառույթ): Իրականում, վերոնշյալ բոլոր հարցերը նախապես քննարկվում էր ՀԿ(Բ)Կ համապատասխան կառույցների կողմից ու հետո «հաստատվում» ԿԳԿ նստաշրջանում: Չնայած վերոնշյալ սահմանադրության մեջ ոչ մի խոսք չկա կուսակցության դերի մասին, սակայն պետական կառավարման ամբողջ համակարգը ղեկավարվում և կառավարվում էր կոմկուսի կենտրոնական ու տեղական կառույցների կողմից:

Եզրակացություն

Չնայած Խորհրդային Հայաստանում՝ ՌՄԴԽՀ օրինակով իրավական տեսակետից քարձրագույն իշխանության մարմինը խորհուրդների համագումարն էր (դրանց միջև ընկած ժամանակահատվածում՝ ԿԳԿ-ն), սակայն քաղաքական տեսակետից իշխանության իրական տերը ՀԿ(Բ)Կ-ն էր՝ իր համագումարներով, պլենումներով, Կենտկոմի նախագահությամբ և քարտուղարությամբ: Պետական ամբողջ իշխանությունը կուսակցականացված էր: Կառավարման խորհրդային համակարգում, անգամ ՀՄԽՀ առաջին սահմանադրության ընդունումից հետո, իշխանության՝ օրենսդիր և գործադիր թևերի ու կոմկուսի փոխհարաբերություններում հստակ տարանջատումներ տեղի չունեցան: Հետագա տարիներին տարբեր մակարդակի խորհուրդները գործնականում վերածեցին կուսակցական կցորդի: 1920-ական թթ. սկզբներին ձևավորված կառավարման այս համակարգը հետագա տասնամյակների ընթացքում ավելի հղկվեց ու կարծրացավ:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-124>

Գրականություն

1. Հայաստանի ազգային արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 17:
2. ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 27-28:
3. ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 50-53:
4. ՀԱԱ, ֆ. 113, ց. 5, գ. 1, թ. 17:
5. ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 17:
6. ՀԱԱ, ֆ. 113, ց. 5, գ. 1, թ. 18:
7. ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 9:
8. ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 95-96:
9. ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 106-107:
10. ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 3, թ. 1:
11. ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 1, թ. 18:
12. ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 3, թ. 2:
13. ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 9, թ. 15:
14. ՀԱԱ, ֆ. 1, ց. 5, գ. 37, թ. 11:
15. ՀԱԱ, ֆ. 121, ց. 121, գ. 11, թ. 2:
16. ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 5, 8:
17. Հակոբյան Ա., Միակուսակցական վարչակազմի ձևավորումը Խորհրդային Հայաստանում (1920-ական թվականներ), Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2016, 366 էջ:

18. Ղազարյան Վ., Հայաստանը 1920-1940 թթ., Երևան, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2006, 564 էջ:
19. ՍՄԿԿ համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում և որոշումներում, հ. 2, 1917–1922 թթ., Երևան, 1986, էջ 139-141:
20. Хрестоматия по истории отечественного государства и права. М.: Зерцало, 1997, 591 с.
21. КПСС в резолюциях и решениях съездов, конференции и пленумов ЦК (1898-1986). М.: Издательство политической литературы. 1983, т. 2 (1917-1922). 606 с.
22. КПСС в резолюциях и решениях съездов, конференции и пленумов ЦК (1898-1986). М.: Издательство политической литературы. 1983, т. 2. (1917-1922). 454 с.
23. Миронов А. Л. Особенности государственного управления 1920-1930-х гг. XX в., // «Вестник Московского университета МВД России». № 7, 2020, с. 35-36.
24. Рабочим, солдатам и крестьянам! Обращение II Всероссийского съезда Советов от 25 окт. 1917 г. Декреты советской власти. Т. 1. М.: Государственное издательство политической литературы, 1957, 640 с.
25. Седьмая (апрельская) Всероссийская конференция РСДРП(б): Протоколы: М.: Государственное издательство политической литературы. 1958, 423 с.
26. Съезды Советов Союза ССР, Союзных и Автономных Советских Социалистических Республик. 1917-1936 гг.: Сб. документов: М.: Акад. наук СССР, 1959, т. 1. 836 с.
27. Туфанов Е.В., Кравченко И.Н., К вопросу о становлении Советской системы органов государственной власти и управления в 1920-е гг., «Современная научная мысль», М., 2019, № 3, с. 89-95.
28. Туфанов Е.В., Кравченко И.Н. К вопросу о становлении Советской системы органов государственной власти и управления в 1920-е гг., // «Современная научная мысль». М., 2019, № 3, с. 89-95.
29. Упоров И.В. Институт народовластия и его трансформация в Советском государстве в 1917–1927 гг., // «ОБЩЕСТВО: философия, история, культура», Краснодар, 2016, № 11, с. 75-77.

Вопрос о формировании советской системы управления в Советской России и Советской Армении (первая половина 1920-х годов)

Бадалян Армен

Резюме

***Ключевые слова:** Советская Россия, Советская Армения, политическая система, советы, принципы правления, дублирование, первая половина 1920-х годов*

Формирование советской системы правления в Советской России началось в ноябре 1917 года, когда II Всероссийский съезд Советов передал государственную власть Советам. Принятая 10 июля 1918 года Конституция РСФСР закрепила положение о принадлежности всей власти Советам. Однако на практике одним из ключевых принципов функционирования власти в Советской России, установленным Коммунистической партией (РКП(б)), стало отсутствие разделения между законодательной и исполнительной ветвями власти. На VIII съезде РКП(б) было принято решение о полном подчинении Советов и всех органов государственной власти партийному руководству. После XII съезда вопрос о восстановлении полномочий Советов, предусмотренных Конституцией, больше не поднимался. К этому

моменту Советы окончательно трансформировались в структуры, формально утверждающие партийные решения.

Коммунистическая партия Армении, как структурное подразделение РКП(б), следовала аналогичной политике подчинения Советов партийной воле. В декабре 1921 года были проведены выборы в местные Советы, а в январе 1922 года сформированы два городских Совета (Эриванский и Александропольский) и около 800 сельских Советов. На I съезде Коммунистической партии (большевиков) Армении была принята резолюция о взаимоотношениях между партией и Советами, в которой подчеркивалось, что эти отношения должны носить рабочий характер и не предполагать прямого контроля со стороны партии. Тем не менее, уже 3 февраля 1922 года была утверждена Конституция Советской Армении, во многом повторявшая положения Конституции РСФСР 1918 года, не конкретизируя вопрос о соотношении власти партии и Советов. В последующий период Советы всех уровней фактически утратили самостоятельность и превратились в придаток партийных структур, что стало характерной чертой всей советской модели государственного управления.

The Formation of the Soviet System of Governance in Soviet Russia and Soviet Armenia (first half of the 1920s)

Badalyan Armen

Summary

Key words: *Soviet Russia, Soviet Armenia, political system, Soviets, principles of governance, copy, first half of the 1920s*

The formation of the Soviet system of governance in Soviet Russia began in November 1917 when the 2nd Congress of the Soviets passed the state power to the Soviets. The principle that the whole power belongs to the Soviets was firmly fixed in the Constitution of Soviet Russia passed on 10 July 1918. However, one of the most important principles of governance of the Communist (Bolshevik) Party of Russia was that there must not be any split between the executive and legislative powers. As the Communist (Bolshevik) Party of Armenia was a part in the structure of the C(б)PR, it began the policy of subordination of the Soviets to itself. Elections of Soviets and their congresses were held in December 1921 – January 1922. Two cities (Erivan and Alexandropol) and about 800 village-soviets were elected. During the 1st Congress of C(б)PA, a resolution was passed about the relations between the Communist Party and the Soviets: there must be work relations between the party and the Soviets, and the Communist Party will not take the Soviets under its sponsorship. The first Constitution of Soviet Armenia, passed on 3 February 1922, was almost a copy of the 1918 Constitution of Soviet Russia.

Ներկայացվել է	04. 10. 2024 թ.
Գրախոսվել է	18. 10. 2024 թ.
Ընդունվել է տպագրության	05. 06. 2025 թ.

**Հայաստանի Հանրապետության դիրքորոշումը Ջանգեզուրի հարցում
(1918 թ. հունիս-նոյեմբեր)**

Ղուլյան Յուրիկ

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-134>

Հանգուցային բառեր. *Բաթում, Կ. Պոլիս, Օսմանյան կայսրություն, Հայաստանի Հանրապետություն, Ադրբեջանի Հանրապետություն, Ջանգեզուր, Անդրանիկ, սահմանային հարցեր*

Նախաբան

Արցախի կորստից հետո տարածաշրջանում խմորվող ներկա աշխարհաքաղաքական գարգացումների պայմաններում Ադրբեջանն ու նրան հովանավորող Թուրքիան Հայաստանի Հանրապետությունից պահանջում են տրանսպորտային հաղորդակցման նպատակով «Ջանգեզուրի միջանցք» հատկացնել: Այս իմաստով 1918-1920 թթ. հայ-ադրբեջանական հարաբերությունների պատմության մի շարք հակոտնյա դրվագների բացահայտումը, այդ թվում սահմանների ճշգրտման խնդիրը, հայ պատմագիտության համար ձեռք է բերում առաջնահերթ կարևորություն և արդիականություն: Հայաստանի Հանրապետության անբաժանելի մաս հանդիսացող Սյունիքի նկատմամբ Ադրբեջանի ներկայիս նկրտումները պատմականությունից գուրկ են ինչպես մեր օրերում, այնպես էլ հարյուր տարի առաջ:

Երկրամասի սահմանազատումը նախապատրաստելու ուղղությամբ կարևոր քայլ էր 1917 թ. ամռանը Պետրոգրադում տեղի ունեցած խորհրդակցությունը [14, 4], որտեղ հայկական կողմը առաջարկում էր Անդրկովկասում տեղական ինքնակառավարման՝ զեմսովային համակարգ հաստատել և այդ նպատակով երկրամասը նոր սահմանաբաժանման ենթարկել: Այդ հարցում հենց սկզբից լուրջ տարաձայնություններ առաջացան հայերի և կովկասյան թուրքերի (ադրբեջանցիների) միջև: Ներկայացված նախագծով հայկական մասը բաղկացած էր լինելու երեք նահանգներից՝ Երևանի, Ալեքսանդրապոլի և Գանձակի: Երևանի նահանգի մեջ մտնելու էր Նախիջևանի գավառը, Ալեքսանդրապոլի նահանգի մաս էին կազմելու նաև Ախալքալաքի և Լոռու գավառները, իսկ Գանձակ նահանգը բաժանվելու էր երկու մասի՝ դաշտային և լեռնային: Լեռնային մասը Ղարաբաղի և Ջանգեզուրի հետ կազմելու էին հայկական Գանձակի նահանգը [25, 609]: 1918 թ. ապրիլ-մայիսին Անդրկովկասյան հանրապետությունների հռչակումով զեմսովոյական խորհրդակցությունների ժամանակներից եկած սահմանային վեճերը կրկին ի հայտ եկան, առաջ քաշվեց նահանգներն ու գավառներն ըստ բնակչության ազգային մեծամասնության բաժանելու խնդիր:

Անկախության հռչակման առաջին ամիսներից Հայաստանի ու Ադրբեջանի միջև առկա հակասություններն ու տարաձայնությունները պայմանավորված էին վիճելի տարածքային խնդիրներով, որի լուծման ժամանակ կողմերից ոչ մեկը չէր ցանկանում զիջել: Ադրբեջանի ու Վրաստանի հետ սահմանների ճշգրտման հարցում Հայաստանի Հանրապետության կառավարությունը հիմք էր ընդունում «ազգագրական սկզբունքը իբրև միակը, որ համապատասխանում է ռավկավար պետությունների ոգուն և նպատակներին» [13, 24], որը, սակայն, նրանց կողմից չէր պաշտպանվում:

Անդրկովկասյան հանրապետությունների անկախության հռչակումից հետո, ինչպես նաև 1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրով չորոշվեց Հայաստանի ու Ադրբեջանի միջպետական սահմանը և Ղարաբաղի ու Ջանգեզուրի պատկանելության հարցը [19, 533-536]: Այն պետք է որոշվեր կողմերի փոխադարձ համաձայնությամբ:

Չնայած Բաթումի կոնֆերանսում հայկական կողմի վրա եղած թուրք-ադրբեջանական ճնշումներին, հայկական կողմը մտադրություն չունեւ հրաժարվելու Ղարաբաղից ու Ջանգեզուրից: Այդ դիրքորոշումը հստակ դրսևորվեց Հայոց ազգային խորհրդի 1918 թ. մայիսի

28-ի հրապարակած անկախության հռչակագրում, որով խորհուրդն իրեն հայտարարում էր հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն: Հայկական գավառներ անվան տակ հասկացվում էին հայաբնակ այն գավառները, որոնք նախկինում գտնվում էին Երևանի, Թիֆլիսի և Գանձակի նահանգների կազմում:

Բայթումի պայմանագրից հետո թուրքական զինազրավումից ազատ էին միայն Երևանի գավառի մի մասը, Էջմիածնի գավառի մեծագույն մասը, Նոր Բայազետի գավառը, Դարալագյազը, Դիլիջանի գավառը՝ Ղազախ գավառի լեռնային մասը և Ջանգեզուրը, որը ոչ մի իշխանության ենթակա չէր [16, 206]:

Նորանկախ Ադրբեջանը, Բաքվի ու Ելիզավետպոլի նահանգներն իր կազմի մեջ հռչակելով, փորձեց նվաճել Հայաստանի բաղկացուցիչ անբաժանելի մաս հանդիսացող, միատարր հայ բնակչություն ունեցող Լեռնային Ղարաբաղի ու Ջանգեզուրի գավառները՝ տարածքային պահանջներ ներկայացնելով Հայաստանի Հանրապետությանը:

Ադրբեջանի տարածքային պահանջները բխում էին մեծապետական նկրտումներից, Հայաստանի Հանրապետությունը ձգտում էր իր կազմում ունենալ պատմական հայկական տարածքները, որոնց նշանակությունը Հայաստանի համար կենսական էր ու անփոխարինելի:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը սկզբնական շրջանում զգուշանում էր Ղարաբաղն ու Ջանգեզուրը իր տարածքային ամբողջության իրավական և անբաժան մասը ճանաչելուց: 1918 թ. ամռան դրությամբ արտաքին աշխարհից ամբողջովին մեկուսացված Հայաստանի Հանրապետությունը զբաղված էր սեփական ժողովրդի վտանգված ֆիզիկական գոյությունն ապահովելու գործով: Նման պայմաններում հայ ազգի ոչ միայն քաղաքական, այլև ֆիզիկական գոյության հետ հաշտվել չկամեցող թուրք-թաթարական ուժերի հետ համաձայնության գալն անհնարին էր: Խուսափելով առճակատման գնալուց՝ Հայաստանի Հանրապետությունը փորձում էր Ադրբեջանի հետ հաստատել «տանելի» հարաբերություններ: Դրանով էր պայմանավորված այն հանգամանքը, որ Անդրկովկասում թուրքերի եղած ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությունը Ղարաբաղի ու Ջանգեզուրի նկատմամբ իրականացնում էր զգուշավոր քաղաքականություն [11, 24]:

Հայաստանի Հանրապետության կառավարության արտաքին քաղաքականության որդեգրած զգուշավոր կուրսն իր արտացոլումը գտավ ՀՀ առաջին վարչապետ Նովիաննես Քաջազնուտու կողմից 1918 թ. հունիսին հրապարակած հռչակագրում: «Արտաքին քաղաքականության բնագավառում կառավարությունը պիտի ունենա մեկ իշխող սկզբունք՝ բարի դրացիական հարաբերություններ հաստատել սահմանակից պետությունների հետ, բոլոր միջոցներով խուսափել նրանց հետ կոնֆլիկտներից, ելնելով այն դրությունից, որ մեր ժողովրդին, մեր երկրին հանգիստ է հարկավոր, հարկավոր է խաղաղություն, թեկուզ և վտիտ: Մենք քայքայված ենք, ուժասպառ և վերջապես կազմալուծված: Մենք ի վիճակի չենք ուժերի հետագա լարվածության, մենք չենք դիմանա նոր փորձությունների: Յանկացած նոր արտաքին բարդացում մեզ սպառնում է անխուսափելի ու վերջնական կործանում: Մենք ջարդված կողմ ենք, պարտված: Մենք պետք է դա պարզ հասկանանք, հաստատ հիշենք և ունենանք միայն մեկ նպատակ, փրկել հայ ժողովրդի մնացորդներին և հեղրասական փորձ կատարելով ստեղծել դեռևս մեզանից չխլված փոքր տարածքի վրա պետություն» [23, 323]: «Այդ մտածողությունը պիտի դառնա առաջնորդող սկզբունք մեր այսօրվա արտաքին քաղաքականության համար: Մինչ այդ մենք կկատարենք սրբությամբ և անշեղ կերպով մեր այն **պարտավորությունները**, որոնք բխում են խաղաղության դաշինքից» [1], – ասված էր հռչակագրում: Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքական նման ուղղության որդեգրումը պայմանավորված էր երկրի ծայրահեղ ծանր ներքին կացությամբ, երբ «ուժասպառ ու կազմալուծված վիճակում և գերմարդկային ճիգերով փորձում էր ոտքի կանգնել, անգամ իր ձեռքին մնացած փոքր տարածքի վրա պետություն իմանել» [1]:

Հատկանշականն այն է, որ Անդրկովկասի վրա կախված թուրքական զինազրավման

պայմաններում Հայաստանի Հանրապետությունը, գրկված լինելով իր կենսական տարածքներին մեծ մասից, ամփոփված մի փոքր հողակտորի վրա, երկրում ունենալով բազում լուծում պահանջող խնդիրներ, հարյուր հազարավոր գաղթականներ, տասնյակ հազարավոր որբեր, քայքայված տնտեսություն, չէր կորցնում լավատեսությունը ու հավատը վաղվա Հայաստանի հանդեպ: Դա իր արտահայտությունը գտավ նաև 1918 թ.օգոստոսի 1-ի Հայաստանի Խորհրդի անդրանիկ նիստում Խորհրդի նախագահ Ա. Սահակյանի ճառում, ով մասնավորապես, հայտարարեց. «Այո, մեր Հանրապետությունը փոքր է ու նեղ իր սահմաններով, նա գրկվել է իր ամենագնահատելի երկրամասերից ու չի կարող իր մեջ տեղավորել ամբողջ ազգաբնակչությունը և կարծես թե պայմաններ չունի անկախ գոյության համար: Բայց ես կարծում եմ, որ երկրի սահմանները քարացած չեն կարող մնալ միշտ: Ես հավատում եմ, որ մեր սահմանները կընդարձակվեն կյանքի երկաթե օրենքի ուժով, մեր արդար ու անվիճելի իրավունքների պաշտպանությամբ գրավված հողամասերի վերաբերմամբ» [10, 15]: Ուշագրավն այն է, որ այդ մասին Ա. Սահակյանը հայտարարեց նիստին ներկա Թուրքիայի ու նրա դաշնակից պետությունների ներկայացուցիչների ներկայությամբ:

Հայաստանի Խորհրդի օգոստոսի 3-ի նիստում Հայաստանի Հանրապետության վարչապետ Հովհաննես Քաջազունին ներկայացրեց կառավարության ծրագիրը, որը նախատեսում էր արտաքին քաղաքականություն իրականացնել՝ հարգելով բոլոր պայմանագրային պարտավորությունները [21, 45]: Կառավարությունը նախատեսում էր Ադրբեջանի և Վրաստանի հետ փոխադարձ համաձայնության գալով լուծել միմյանց սահմանների հարցը՝ հիմք ունենալով էթնիկական սկզբունքը, իբրև միակը, որ համապատասխանում է ռավակար պետությունների ոգուն և նպատակներին [18, 11]: Ելնելով այս մտայնությունից՝ ՀՀ կառավարությունը հռչակում էր. «Կառավարությունը չի ուզում սխալանքների մեջ գցել երկիրը լայն հեռանկարներով և անիրագործելի խոստումներով, չի ուզում վերցնել իր վրա պարտականություններ, որոնց կատարումը վեր է իր ուժերից» [18, 11]:

Կառավարության հայտարարության վերաբերյալ Հայաստանի Խորհրդի օգոստոսի 6-ին իստում պատգամավորները վարչապետ Հ. Քաջազունուն ուղղեցին մի քանի հարցեր ու առաջարկություններ, ներկայացրին որոշ պահանջներ: Ի պատասխան պատգամավոր Արշամ Խոնդկարյանի նկատառմանը, թե Հայաստանի, Վրաստանի և Ասորպատականի (ասել է թե՝ Ադրբեջանի), սահմանները որոշելիս ի նկատի է առնվելու միայն ազգագրական սկզբունքը, անտեսելով տնտեսական պայմանները, Հ. Քաջազունին նշեց, որ, որպես սահմանորոշող ծրագրի սկզբունքներ, կիրառվում են թե՛ ազգագրական, թե՛ աշխարհագրական-տեղագրական և թե՛ տնտեսական պայմանները [18, 17]: Պատգամավորներ Արշամ Խոնդկարյանի, Արշավիր Մելիքյանի ու Ստեփան Մամիկոնյանի այն հարցին, թե որո՞նք են Հայաստանի սահմանները, վարչապետը պատասխանեց. «Հայաստանի հյուսիսային սահմանները որոշված չեն, իսկ հարավայինը որոշված է ընդհանրապես: Պարտք եմ համարում հայտարարելու, որ քանի դեռ նոր ակտով սահմաններ փոխված չեն, այժմ գոյություն ունեցողներից դուրս ուրիշն ընդունելի լինել չի կարող» [12]: Հ.Քաջազունին միաժամանակ հայտարարեց, որ արտաքին քաղաքականության ասպարեզում մնալու է Բաթումի դաշնագրի տեսակետի վրա և դրանից մագաչափ չեղում չի թույլատրելու [27, 198]:

Նիստի մասնակիցներից շատերին զարմացնում էր կառավարության ղեկավարի որդեգրած ուղեգիծը, որով նա պարտավորվում էր խստիվ կատարել Թուրքիայի հետ կնքված դաշնագրի պայմանները և պետք է հետևեր, որ նույնն անի նաև Թուրքիան: Հ. Քաջազունին անթաքույց հայտարարում էր. «Այո, պիտի ասեմ, որ քանի որ դաշնագրով մենք պարտականություններ ենք հանձն առել, որոնք նոր ակտով փոխված չեն, մենք պիտի կատարենք խստիվ և ուրիշից էլ պիտի պահանջենք նույնն անել» [12]: Անդրադառնալով պատգամավորներ Ս. Մամիկոնյանի ու Ա. Մելիքյանի պահանջներին, որ կառավարությունը լինի խիզախ, վարչապետը պատասխանում էր. «Քանի գոյություն ունի ներկա կառա-

վարությունը, նա երկիրը չի դնի նոր-նոր արկածների և փորձությունների առաջ և ուրիշներին էլ թույլ չի տա նույնը անելու» [12]:

Չնայած հայ-ադրբեջանական սահմանային հարցերում Հայաստանի Հանրապետության անդրանիկ կառավարությունը զգուշավոր քաղաքականություն էր վարում, այդուհանդերձ Հայաստանի Հանրապետության կազմավորման պահից երևի թե ոչ մի հարց նրա համար այնքան սուր և կարևորություն ունեցող չէր, ինչպես Ղարաբաղի ու Ջանգեզուրի հարցն էր: Հենց այդ հարցի վրա էր մեծ մասամբ կենտրոնացած Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը: Հայաստանի Հանրապետությունը մտադրություն չուներ հրաժարվելու հին բաժանումով Գանձակի նահանգի մաս կազմող Ղարաբաղից ու Ջանգեզուրից, քանի որ պատմականորեն և ազգագրական տեսակետով դրանք հայկական շրջաններ էին [22, 158]: Պատահական չէ, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ցանկացած հարթակի փորձում էր օգտագործել հայկական տարածքների նկատմամբ իր իրավունքները պաշտպանելու և դրանք մայր հայրենիքին միացնելու համար, որքան էլ նրա դիրքերը թույլ էին: Դա հատկապես դրսևորվեց Քառյակ դաշինքի ու Անդրկովկասյան հանրապետությունների մասնակցությամբ Կ. Պոլսում հրավիրված կոնֆերանսի ընթացքում: Քանի որ Բաթումի պայմանագիրը ստորագրվել էր առանց Քառյակ դաշինքի մյուս երկրների մասնակցության, Գերմանիան հանդես եկավ Բաթումում ընդունված որոշումները վերանայելու առաջարկությամբ: Նախատեսվեց 1918 թ. հունիսի 25-ին Կ. Պոլսում Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Բուլղարիայի, Թուրքիայի և Անդրկովկասյան հանրապետությունների մասնակցությամբ հրավիրել խաղաղության կոնֆերանս, որտեղ պետք է լուծվեին Թուրքիայի և Կովկասի միջև գոյություն ունեցող բոլոր չլուծված հարցերը, ինչպես նաև սահմանային հարցերը Անդրկովկասյան հանրապետությունների միջև:

Կ. Պոլսում հայկական պատվիրակության գործունեությունը նպատակաուղղված էր Բաթումի պայմանագրի համեմատ ավելի նպաստավոր պայմանագրի ստորագրումն ապահովելուն: 1918 թ. հունիսի 8-ին Կ. Պոլսի համաժողովի հայկական պատվիրակությանը ուղարկած հեռագրում ՀՀ կառավարությունը պահանջում էր ուղղում մտցնել Բաթումի պայմանագրի մեջ և Շուշիի, Կարեազի, Ջիվանշիրի, Գանձակի, Ջանգեզուրի, Դարալագյազի, Շարուրի և Նախիջևանի տարածքները ճանաչել որպես Հայաստանի Հանրապետության անբաժանելի մաս [8, 18]:

Հայկական պատվիրակությունը Կ. Պոլսում փորձեց զիջումներ ստանալ ինչպես Թուրքիայից, այնպես էլ Ադրբեջանից: Մասնավորապես, էսվեր փաշային ներկայացրած նախագծով հայկական պատվիրակությունը Թուրքիայից պահանջում էր՝ Սուրմալուն, Նախիջևանը, Ախալքալաքը, Էջմիածինը և Երևանը, իսկ Ադրբեջանից՝ Ղազախի, Ղարաբաղի, Ջանգեզուրի և Օրդուբադի գավառները [28, 138-139]: Կոնֆերանսում հայկական կողմի դիրքերը նպաստավոր չէին, քանզի Ադրբեջանի պահանջները պաշտպանվում ու համընկնում էին Թուրքիայի ծավալապաշտական ու պանթուրքական ծրագրերին: Ուստի պատահական չէր, որ Ղարաբաղն ու Ջանգեզուրը Հայաստանի Հանրապետությանը տալու հարցին թուրքական կողմը վճռականորեն դեմ արտահայտվեց [20, 206]: Տարածքային հարցերում Թուրքիան անվերապահ աջակցեց Ադրբեջանին ու վճռականորեն դեմ արտահայտվեց Ղարաբաղն ու Ջանգեզուրը Հայաստանին տալու հարցին:

1918 թ. ամռանը Ջանգեզուրը դժվարին օրեր էր ապրում: Այսրկովկաս ներխուժած օսմանյան զավթիչները և Ադրբեջանի կառավարությունը գավառի հայ բնակչությունից պահանջում էին զինաթափվել և անվերապահ հպատակվել Բաքվի մուսավաթական իշխանություններին: Ջանգեզուրը և Արցախը նրանք համարում էին Ադրբեջանի անբաժան մաս՝ ելնելով նրանից, որ այդ տարածքները ցարական կառավարության վարչական բաժանումով մտել էին Ելիզավետպոլի նահանգի մեջ:

1918 թ. հուլիսի վերջերին Ջանգեզուրցիները կողմից Երևան ուղարկվեց մի հատուկ պատվիրակություն՝ հայտնելու Հայաստանի կառավարությանը, որ Ջանգեզուրը որոշել է

մնալ Հայաստանի մաս, պատրաստ է մինչև մահ կռվել և խնդրում էր Հայաստանի կառավարությանը Զանգեզուր ուղարկել 8-10 ձեռնհաս սպա ու ֆինանսական միջոցներ: Հայաստանի կառավարության վիճակն այդ օրերին այնպիսին էր, որ շոշափելի օգնություն չէր կարող հասցնել: Վարչապետ Հ.Քաջազունին սահմանափակվեց պատվիրակությանը բարոյական քաջալերանքով: Խնդրին դրական չարձագանքեց նաև Ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանը, որը միայն խոստացավ կենդանի կապ պահել Զանգեզուրի հետ և մոտ ապագայում ուղարկել մի ձեռնհաս հրամանատար ու սպաներ [27, 348]:

ՀՀ կառավարությունից օգնություն ստանալու զանգեզուրցիների խնդրանքները արդյունք չտվեցին: Ելնելով ստեղծված արտաքին անկայուն վիճակից, մանավանդ, որ տարածքային հարցերի շուրջ հարաբերությունները խիստ բարդացել էին Վրաստանի և Թուրքիայի հետ, և ելնելով Ադրբեջանի հետ հարաբերություններն ավելի բարդացնելու վտանգից, Հայաստանի կառավարությունը դա չարեց ու զգուշություն ցուցաբերեց: Բաթումի պայմանագրով կաշկանդված Հայաստանի Հանրապետությունը հնարավորություն չուներ դրանք հայտարարել իր տարածքները և ձեռնպահ էր մնում բացահայտ ու ակտիվ միջամտությունից: Դրանով էր պայմանավորված, որ ՀՀ կառավարությունը ընդառաջ չգնաց Ղարաբաղի և Զանգեզուրի հայության կողմից քանիցս արված օգնության առաջարկություններին ու «կը գոհանար շատ-շատ գործիչներ ու ներկայացուցիչներ ուղարկելու հոն» [11, 24]: Զանգեզուրի հայությունն իր ամբողջ ուժով ծառացավ Ադրբեջանի ծրագրերի դեմ: ՀՀ կառավարությունից օգնություն չստանալով՝ Զանգեզուրը ապավինեց սեփական ուժերին ու անցավ ինքնապաշտպանության կազմակերպման գործին:

1918 թ. օգոստոսի 18-ին Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհուրդը գավառի հայ բնակչությանը դիմեց Բաթումի ստրկացուցիչ պայմանագիրը մերժելու և թուրք-մուսավաթական սպառնալիքի դեմ ինքնապաշտպանության գործը կազմակերպելու կոչով: Նրանում մասնավորապես, ասվում էր. «Երևանի նահանգի հայությունը ստիպված է եղել խայտառակ հաշտություն կնքելու մեր դարավոր ու արյունարբու թշնամի տաճիկի հետ: Կովկասում ըստ հաշտության պայմանների կազմվել են երեք հանրապետություններ՝ Վրաստան, Ադրբեջան և Հայաստան, վերջինս այլ կերպ կոչվում է Արարատյան Հանրապետություն, որի մեջ չեն մտնում պատմական Սյունիքն և Արցախը, որ Ղարաբաղը մերժել է Ադրբեջանին հպատակվելու պահանջը և կազմել Ղարաբաղի ժողովրդական կառավարություն» [2]: Ստեղծված իրադրությունում խորհրդի կարծիքով «Զանգեզուրի հայ ժողովուրդը չի կարող ուրիշ ճանապարհ բռնել, նա պիտի գնա իր մեծ եղբոր՝ Ղարաբաղի հայության ուղիով, որովհետև եթե նույնիսկ ուզենա ուրիշ գործելակերպ էլ բռնել, ոչ ոք չի հավատա նրա անկեղծությանը և նա չարաչար կպատժվի: Զանգեզուրի հայությունն էլ պետք է անխուսափելի կերպով բռնե կովի ճանապարհը» [2]: Ադրբեջանի կառավարությունը սկսել էր իր իշխանությունը տարածել Ելիզավետպոլի նահանգի վրա և դիմադրության չհանդիպելու նպատակով սկսեց զինաթափել նահանգի լեռնային մասի, այդ թվում՝ Զանգեզուրի բնակչությանը: Օսմանյան զավթիչները և Ադրբեջանի կառավարությունը Զանգեզուրի հայ բնակչությունից պահանջում էին անվերապահորեն հպատակվել ու զինաթափ լինել, հակառակ պարագայում՝ սպառնալով բնաջնջել նրանց:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Ադրբեջանից պահանջեց դադարեցնել հայերի զինաթափման գործընթացը մինչև հայ-ադրբեջանական տարածքային վիճելի հարցերի կարգավորումը: Սակայն Ադրբեջանի կառավարությունը մերժեց ՀՀ կառավարության պահանջը: Զինաթափմանը դեմ դուրս եկավ նաև Զանգեզուրի ղեկավարությունը, որը օգոստոսի 3-ին հայտարարեց գորակոչ:

Զանգեզուրի հայ պաշտպանների զինական ուժը մեծապես հզորացավ, երբ 1918 թ. հուլիսի վերջերին Անդրանիկն իր ավելի քան 3 հազարանոց հարվածող զորամասով և գաղթականներով մտավ Զանգեզուր: ՀՀ կառավարությունից գործնական ոչ մի օգնություն չստանալով՝ Զանգեզուրը հույսը կապեց Անդրանիկի հետ և ապավինեց սեփական ուժերին,

որը տվյալ իրավիճակում ամենաիրատեսականն էր: Գործիսում կազմված Հայոց Ազգային խորհուրդը թուրքերին և նրանց պաշտպանած Աղբբեջանին ոչ մի դեպքում չհպատակվելու վճիռ կայացրեց ու Ջանգեզուրի պաշտպանությունը հանձնեց այդ պահին այնտեղ գտնվող գեներալ Անդրանիկին: Ջանգեզուրում Անդրանիկի և նրա զորամասի ներկայությունը առաջ էր բերում Աղբբեջանի կառավարության, թուրքական իշխանությունների և Բաքվի վրա հարձակվող օսմանյան բանակի հրամանատարության անհանգստությունը: Վերջինների ինչպես դիվանագիտական, այնպես էլ զինվորական ներկայացուցիչները Հայաստանի կառավարությունից պահանջում էին Անդրանիկին հեռացնել Ջանգեզուրից: Նրանք շահարկում էին Անդրանիկի գործողությունները, փորձում դրանք կապել Հայաստանի Հանրապետության կառավարության հետ, երկուսին էլ ներկայացնել որպես ագրեսոր, դրանով իսկ իրենց համար բարոյական կոլան ստեղծել՝ Հայաստանի նկատմամբ զավթողական նոր քայլերի դիմելու համար: Աղբբեջանի կառավարությունը Վրաստանում իր ներկայացուցչի միջոցով նամակներ ու բողոքի հուշագրեր էր ուղարկում Վրաստանում ՀՀ դիվանագիտական ներկայացուցիչ Արշակ Ջամալյանին, ով դրանց մասին զեկուցում էր ՀՀ կառավարությանը: Մասնավորապես այդպիսի նամակ ստացվեց 1918 թ. օգոստոսի 15-ին, որի մասին Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչն իր կառավարությանը տեղյակ պահեց օգոստոսի 16-ի զեկուցագրով [6]: Օգոստոսի 17-ին Ա. Ջամալյանը պատասխան նամակ է ուղարկում Թիֆլիսում Աղբբեջանի դիվանագիտական ներկայացուցչությանը, նորից մերժելով Անդրանիկին հովանավորելու մասին Հայաստանի կառավարության նկատմամբ հարուցած մեղադրանքը [1]: «Հաստատելով, որ ստացել եմ և իմ կառավարությանն եմ առաքել Ձորավար Անդրանիկի և նրա ջոկատի Աղբբեջանական Հանրապետության սահմանները ներս թափանցելու վերաբերյալ ձեր օգոստոսի 15-ի համար 461 գրությունը, պատիվ ունեմ իմ կողմից հայտարարելու, որ ինչպես ինքը՝ զորավար Անդրանիկը, այնպես էլ նրա ամբողջ ջոկատը հայկական առանձին կորպուսին տրված հրամանով վաղուց վտարվել են հայկական զորքերի կազմից ու ցուցակներից, որից հետո նրանք հրաժարվել են ճանաչել Հայաստանի Հանրապետության և նրանց պաշտոնական անձանց իշխանությունը և ենթարկվել նրանց: Ձորավար Անդրանիկը և նրա ջոկատը ոչ մի առնչություն չունեն հայկական ազգային զորքերի և նրանց մարմինների հետ, ուստի Հայաստանի Հանրապետության կառավարությունը ոչ մի կերպ չի կարող պատասխանատու լինել նրա անպատասխանատու արարքների համար»,- ասվում էր պատասխան նամակում [6]:

Աղբբեջանի և Հայաստանի սահմանները դեռևս չէին հաստատվել և չէին որոշվել համաձայնության որևէ ակտով, բայց Աղբբեջանի կառավարությունը տարածքային պահանջներ էր ներկայացնում և նվաճողական զինված քայլեր իրականացնում: Աղբբեջանը ձգտում էր տիրել Գորիսին, Ղարաբաղի և Ջանգեզուրի վեճը լուծել իր օգտին, միակողմանի ճնշմամբ, չհարցնելով Հայաստանի համաձայնությունը: Ուստի, Հայաստանի կառավարությունը վճռական բողոք հայտնեց դեռևս չավարտված բանակցությունների առարկա հանդիսացող հարցի լուծման նման եղանակի դեմ [15, 586]:

Մեպտեմբերի 2-ին Հայաստանի կառավարությունը ստիպված նոր հեռագիր է ուղարկում Աղբբեջանի կառավարությանը, որով նորից ու նորից հաստատում է, որ որևէ պատասխանատվություն չի կրում Անդրանիկի գործողությունների համար, քանզի ի վիճակի չէ վերահսկելու նրան և նրա զորամասին, Ձորավար Անդրանիկի ջոկատի հետ որևիցե կապ չի պահում և, հետևապես, չի կարող որևէ պատասխանատվություն կրել Ջանգեզուրում ու Ղարաբաղում նրա գործողությունների համար [3]:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, ցանկանալով չսրել հարաբերությունները Թուրքիայի և Աղբբեջանի հետ, ստիպված էր ցույց տալ, որ չի խախտում Բաթումի պայմանագիրը և որևէ առնչություն չունի Անդրանիկի ու նրա զորամասի հետ: Տվյալ պահին դա թելադրված էր թուրքական նոր ներխուժման վտանգից Հայաստանը հեռու պահելու մտահոգությամբ [26, 338]:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը հույս էր հայտնում, որ այնուամենայնիվ հայ-ադրբեջանական սահմանային հարցերն իրենց լուծումը կստանան Կ.Պոլսի կամ որևէ այլ լուսնֆերանտում, փոխադարձ համաձայնությամբ: Հայկական կողմը ցավ էր հայտնում, որ այս մոտեցումը ադրբեջանական կողմից չի պաշտպանվում, որն, Ասկերանից մինչև Գորիս ընկած ամբողջ տարածքն իր անբաժանելի մասը համարելով, փորձում է Ղարաբաղի ու Ջանգեզուրի վերաբերյալ վեճը միակողմանի ճնշման միջոցով լուծել հոգուտ Ադրբեջանի՝ հաշվի չառնելով հայկական տեսակետը, այն դեպքում, երբ հարցը դեռևս շարունակում է մնալ բանակցությունների առարկա: Բողոքելով հարցի լուծման նման փորձերի դեմ, Հայաստանի կառավարությունը միաժամանակ հույս էր հայտնում, որ առաջիկայում մինչև սահմանների հարցում երկկողմանի համաձայնագրի կնքումը, Ադրբեջանի կառավարությունը ձեռնպահ կմնա վիճելի տարածքներում իր իշխանությունը հաստատելու նկրտումներից [3, 48]:

Ապարդյուն եղավ նաև Ջանգեզուրի Ազգային խորհրդի անդամ Արշակ Շիրինյանի 1918 թ. սեպտեմբերի 19-ի այցը Երևան, ով նպատակ էր հետապնդում կառավարությանը համոզել փոխել անտարբեր վերաբերմունքը Ջանգեզուրի ու Արցախի հանդեպ, ակնկալում էր ստանալ ռազմական օգնություն: Երևանում նա երկար զրույց ունեցավ վարչապետ Հ. Քաջազնունու հետ, ապա տեսակցեց Արամ Մանուկյանին և Ալ. Խատիսյանին, որոնք հուսադրիչ չեղան: Նրան հատկապես վշտացրեց Հ. Քաջազնունու հետ զրույցը, ով կտրականապես մերժեց Ջանգեզուրին ռազմական օգնություն ցույց տալու Շիրինյանի խնդրանքը և զանգեզուրցիներին խորհուրդ տվեց գնեք չբարձրացնել Ադրբեջանի դեմ [4]:

Արշ. Շիրինյանն իր հանդիպումների մասին Անդրանիկին գրում էր. «Միբելի փաշա, այստեղ ստեղծված է ստրկական մի մթնոլորտ, որը ամեն կերպ աշխատում է սիրաշահել տաճիկներին, ինչ գնով էլ ուզում է լինի: Այդպիսի քաղաքականության շարունակության դեպքում մենք ստիպված ենք ևս խաչ դնել հայկական հանրապետության վրա և խզել մեր հարաբերությունները, որը կորստաբեր կարող է լինել մեզ երկուսիս համար: Ամբողջ հայությունը պիտի ունենա մի քաղաքականություն և նրա բոլոր հատվածների վրա պիտի համահավասար ուշադրություն դարձնել և ոչ թե ամբողջ շրջան, ինչպիսին Ղարաբաղն ու Ջանգեզուրն է, գոհ բերել հանրապետության շահերին, որը ավելի միևնառու է, քան ինքը Ղարաբաղը» [24, 160-161]:

Ա. Շիրինյանը Երևանում Հայաստանի Հանրապետության ղեկավարների հետ շփումներից, ինչպես նաև խորհրդի դաշնակցական խմբակցության, Դաշնակցության կենտկոմի և բյուրոյի քսան անդամների ժողովում կայացած քննարկումներից հիասթափված վերադարձավ Ջանգեզուր: Կայացած քննարկումների մասին նա գրում էր. «Խորհրդարանի մեծամասնությունը տրամադիր չէ մեզ օգնել ոչ փողով, ոչ էլ զինամթերքով: Փոքրամասնությունն էր մարտական ոգուն համակիր, որոնց մեջ Դրոն: Հովհաննես Քաջազնունու կարծիքն այն էր, որ Թուրքիան ավելի կամրանա: Հետո դիմել է Սիլիկյանին: Եթե այդ պահանջներն արվեն չորս ամիս առաջ, ասել է նա, ինքը կարող էր մի որևէ բավարարություն տալ, իսկ հիմա ի վիճակի չէ» [15, 586],– Երևանում ունեցած հանդիպումների մասին Ջանգեզուրի ազգային խորհրդին տեղեկացնում է Արշակ Շիրինյանը:

Արշակ Շիրինյանի Երևան կատարած այցի առնչությամբ Հ. Քաջազնունին Կրաստանում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Ա.Ջամալյանին հոկտեմբերի 8-ին ուղարկած նամակում գրում է. «...Եկել էր այստեղ հատուկ հանձնարարությունով Ջանգեզուրի Ազգային խորհրդի՝ այսինքն այնտեղի այսօրվա կառավարության անդամներից մեկը... տեղեկանալ քաղաքական կացության հետ, խորհուրդ հարցնել և օգնություն խնդրել: Մենք բացատրեցինք մեր դրության փափկությունը և այն, որ ի վիճակի չենք ակտիվ օգնություն անելու: Խորհուրդ տվինք զինված դիմադրություն չանել, թե տաճիկները փորձ անեն զորք անցնել Երկրի մեջ, որովհետև նախատեսում են, որ դիմադրության հետևանքն անխուսափելիորեն լինելու է պարտություն, կոտորած ու փախուստ ազգաբնակչության մեր սահ-

մանները, ուր նա սովամահ է լինում: Մինչև մեզ հաջողվի լուծել հարցը դիվանագիտական ճանապարհով, Ղարաբաղն ու Ջանգեզուրը պիտի աշխատեն ամեն կերպ խույս տալ սուր կոնֆլիկտներից և հարմարվել՝ աշխատելով շահել ժամանակ» [4]:

ՀՀ իշխանությունների կրավորական կեցվածքը դրդված էր թուրքերի հետ նոր բար-դություններ չստեղծելու գոյուշավորությունից, բայց ՀՀ կառավարությունը մտադիր չէր Ջան-գեզուրի հարցում զիջման գնալ, որը պարզ դարձավ 1918 թ. սեպտեմբերի սկզբին Երևան ժամանած Խալիլ փաշայի ու ՀՀ ներքին գործերի նախարար Արամ Մանուկյանի հանդիպ-ման ժամանակ: Հանդիպման ընթացքում փորձելով սահմանային հարցերը բանակցություն-ների նյութ դարձնել՝ թուրք գեներալը Բաքվի հետ անմիջական կապ հաստատելու համար առաջարկեց, որ հայերը դատարկեն Ջանգեզուրի և Մեղրիի գավառները, դրա փոխարեն Հայաստանի սահմանները ի հաշիվ Ադրբեջանի ընդարձակել դեպի Ջիվանշիր ու Վարան-դա: Խալիլ փաշայի առաջարկությունները լիովին համընկնում էին Ադրբեջանի շահերին, որոնց իրականացումը լուրջ խնդիրներ կառաջացներ Հայաստանի Հանրապետության ու հայ ժողովրդի անվտանգության և ապահովության հարցում և թուրքերին հնարավորություն կտար կյանքի կոչել պանթուրքիզմի պլանները: ՀՀ կառավարությունը, փայլուն հասկանա-լով Ջանգեզուրի կարևորությունն ու թուրքերի իրական նպատակները, հրաժարվեց Խալիլ փաշայի հետ բանակցություն վարել [9]:

Առաջին աշխարհամարտում Թուրքիայի պարտությունից ու Ջանգեզուր-Ղարաբաղի սահմաններից նրա զորքերի հեռացումից հետո ՀՀ կառավարությունը Ջանգեզուրի ու Ղա-րաբաղի հարցում նախկին գոյուշավոր քաղաքականությունից անցավ գործնական քայլերի իրականացմանը: Այսպես, 1918 թ. նոյեմբերի 11-ին ՀՀ նախագահ-նախարարի, զինվորա-կան, ներքին գործերի, արտաքին գործերի ու արդարադատության նախարարների մաս-նակցությամբ ՀՀ կառավարության նիստը, լսելով զինվորական նախարարի հաղորդումը՝ կապված հայկական տարածքները թուրքական զորքերից մաքրելու ու իրականացվելիք ան-հրաժեշտ միջոցների ձեռնարկման մասին, որոշեց զինվորական նախարարին հանձնարա-րել Ղարաբաղում ու Ջանգեզուրում զորքի կազմակերպման ու պահպանման համար ներ-կայացնել նախահաշիվ: Այն հրապարակման ենթակա չէր [17, 5]: Իսկ արդեն կառավարու-թյան նոյեմբերի 16-ի նիստում լսելով զինվորական նախարարի ենթադրությունները Ղարա-բաղի և Ջանգեզուրի համար զինական ուժեր կազմակերպելու մասին զեկուցումը՝ որոշվեց. «Ի նկատի ունենալով, որ Ադրբեջանը, չսպասելով Ղարաբաղի ու Ջանգեզուրի սահմանների վիճելի հարցերը փոխադարձ համաձայնությամբ խաղաղ լուծմանը, անցել է գործողություն-ների և բռնագրավելով Ղարաբաղի և Ջանգեզուրի լեռնային մասերը, ազգաբնակչության վերաբերմամբ գործադրում է բռնություններ, կազմակերպել զինական ուժեր վերոհիշյալ հայկական շրջաններում պահպանության, ինչպես և ազգաբնակչությունը ոտնձգություննե-րից կասեցնելու համար» [2, 9]:

Եզակացություն

Ադրբեջանի և Հայաստանի անկախության հռչակումից հետո՝ 1918 թ. հունիս-նոյեմ-բերին երկու նորանկախ պետությունների միջև սահմանները չորոշվեցին հակադիր դիրքո-րոշումներ ունենալու պատճառով: Կողմերը համաձայնության չհասան, չստորագրվեց որևէ փաստաթուղթ: Սեփական ժողովրդի վտանգված ֆիզիկական գոյությամբ մտահոգված Հայաստանի Հանրապետությունը, խուսափելով Ադրբեջանի հետ բացահայտ առճակատու-մից և Անդրկովկասում թուրքական ներկայության պայմաններում, սահմանային հարցե-րում, այդ թվում՝ Ջանգեզուրի, իրականացնում էր գոյուշավոր քաղաքականություն: Ղարա-բաղ-Ջանգեզուրի շուրջ տիրող բարդ իրադրությունը պահպանվեց մինչև Առաջին համաշ-խարհային պատերազմի ավարտը: Թուրքիան, որպես պարտված երկիր, իր զորքերը հեռացրեց Ջանգեզուր-Ղարաբաղի սահմաններից:

Գրականություն

1. ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.10, թ.6-7:
2. ՀԱԱ, ֆ.199, ց.1, գ.11, թ.5:
3. ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.42, թ.43:
4. ՀԱԱ, ֆ.276, ց.1, գ.68, թթ. 3-4:
5. ՀԱԱ, ֆ.370, ց.1, գ.33, թ.5:
6. ՀԱԱ, ֆ.370, ց.1, գ. 37, թ. 26:
7. Աբրահամյան Հր., Մարտնչող Արցախ.1917-2000 թթ., Գիրք Ա., Երևան, 2003, էջ 340:
8. Աբրահամյան Հ., Արցախյան հիմնահարցը Ղարաբաղի հայության համագումարի որոշումներում, Դրոշակ, թիվ 14, 1998, էջ 18:
9. «Արձագանք», Եկատերինոդար, 1918, նոյեմբերի 8:
10. Բաբայան Ա., Էջեր Հայաստանի անկախության պատմությունից, Գահիրե, 1959, էջ 312:
11. Գևորգյան Վ., Լեռնահայաստանի հերոսամարտը 1919-1921թթ., Երևան, 1991, էջ 268:
12. «Զանգ», Երևան, 1918, 17 օգոստոսի,
13. Իրազեկ, Մոտիկ անցյալից, Բեյրութ, 1956, էջ 154:
14. Խաչատրյան Աստ., Արևելահայ և թուրք դիվանագիտական հարաբերությունները, Երևան, 2010, էջ 286:
15. Կարապետյան Հ., Անդրանիկ, Երևան, 1994, էջ 586:
16. Հայաստանի անկախության հռչակումը և իշխանության մարմինների ստեղծումը, Երևան, 2009, էջ 218:
17. Հայաստանի Հանրապետության կառավարության նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., Երևան, 2014, էջ 623:
18. Հայաստանի Հանրապետության պառլամենտի նիստերի արձանագրություններ 1918-1920 թթ., Երևան, 2010, էջ 616:
19. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում 1828-1923, Եր., 1972, էջ 809:
20. «Հայրենիք», 1924, դեկտեմբերի 1, էջ 206:
21. Հովհաննիսյան Ռ., Հայաստանի Հանրապետություն, հ.1, Առաջին տարին, 1918-1919, Երևան, 2005, էջ 570:
22. Միքայելյան Ա., Ղարաբաղի վերջին դեպքերը, Հայրենիք, մայիս, 1923, էջ 158:
23. Պետրոսյան Գ., Հայաստանի Հանրապետության հարաբերությունները Ռուսաստանի ոչ խորհրդային պետական կազմավորումների հետ (1918-1920թթ.), Երևան, 2006, էջ 323:
24. Միմոնյան Ա., Զանգեզուրի գոյապայքարը 1917-1920 թթ., Երևան, 2017, էջ 1096:
25. Միմոնյան Հ., Անդրանիկի ժամանակը, հ.1, Երևան, 1996, էջ 751:
26. Ստեփանյան Հ., Անդրանիկը Սյունյաց Երկրում, Կոիվները Սիսիանում, «ՎԷՄ», 1936, թիվ 4 էջ 338:
27. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, 1993, էջ 704:
28. Балаев А. Мамед Эмин Расулзаде 1884-1955, М., 2009, 288 с.

Позиция РА по Зангезурскому вопросу (июнь-ноябрь 1918 г.)

Гулян Юрик

Резюме

Ключевые слова: Батум, Константинополь, Османская империя, Республика Армения, Азербайджанская Республика, Зангезур, Андраник, пограничные вопросы

В Батумском договоре, заключенном между Османской Турцией и Республикой Армения, не было ни слова о Зангезуре. Дальнейшие претензии Азербайджана в отношении Зангезура не имели под собой никаких международно-правовых оснований. Правительство независимой Республики Армения изначально опасалось признания Карабаха и Зангезура правовой и неотъемлемой частью своей территории, хотя ни один вопрос не был для него таким острым и важным, как вопрос Карабаха и Зангезура. С исторической и этнографической точек зрения Зангезур был армянским регионом. Правительство РА пыталось использовать любую платформу для защиты своих прав на армянские территории и присоединения их к Родине, какими бы слабыми ни были его позиции. В территориальных вопросах Турция безоговорочно поддержала Азербайджан и решительно выступила против передачи Карабаха и Зангезура Армении. Республика Армения, скованная Батумским договором, не имела возможности объявить Зангезур своей территорией и воздерживалась от открытого и активного вмешательства. Пассивная позиция властей Армении была продиктована осторожностью, чтобы не создавать новых осложнений с турками. Из-за абсолютно разных позиций по пограничному вопросу, границы между Арменией и Азербайджаном в июне-ноябре 1918 года не были определены, не было подписано ни одного акта. Сложная ситуация вокруг Карабаха и Зангезура сохранялась до конца Первой мировой войны.

The Position of the Republic of Armenia on the Zangezur Issue (June-November, 1918)

Ghulyan Yurik

Summary

Key words: Batumi, Constantinople, Ottoman Empire, Republic of Armenia, Republic of Azerbaijan, Zangezur, Andranik, border issues

The Treaty of Batumi, signed between Ottoman Turkey and the Republic of Armenia, did not mention Zangezur. As a result, Azerbaijan's later territorial claims to Zangezur had no foundation in international law. Initially, the government of the independent Republic of Armenia hesitated to officially recognize Karabakh and Zangezur as legal parts of its territory. Nevertheless, these regions were among its most urgent and important concerns. Historically and ethnographically, Zangezur was an Armenian-inhabited region. Despite its weak position, the Armenian government sought every possible opportunity and platform to assert its rights to these territories and to incorporate them into the Armenian homeland. Turkey, for its part, strongly supported Azerbaijan on territorial matters and firmly opposed the transfer of Karabakh and Zangezur to Armenia. Bound by the conditions of the Treaty of Batumi, the Republic of Armenia was not in a position to openly claim Zangezur as its territory or to intervene actively. Its cautious, passive stance was aimed at avoiding further conflict with Turkey. Because Armenia and Azerbaijan held completely opposing views on the border issue, no official borders between the two states were established from June to November 1918, and no agreements were signed during this period. The tense situation surrounding Karabakh and Zangezur persisted until the end of World War I.

Ներկայացվել է 16. 11. 2024 թ.

Գրախոսվել է 09. 12. 2024 թ.

Ընդունվել է տպագրության 05. 06. 2025 թ.

**Ամերիկյան գորքերի դուրսբերումը և Տալիբանի վերադարձը իշխանության
Աֆղանստանում 2021 թ.-ին**

Մաթնույան Հարություն

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-144>

Հանգուցային բառեր. ԱՄՆ, Աֆղանստան, Տալիբան, Դոհայի համաձայնագիր, Բայդեն, պատերազմ, ՆԱՏՕ, ահաբեկչություն

Նախաբան

21-րդ դարի ամերիկյան քաղաքականության կտրուկ շրջադարձերից մեկը տեղի ունեցավ Աֆղանստանում, երբ ավելի քան երկու տասնամյակ ընթացող քաղաքացիական պատերազմի դադարեցման որոշում կայացվեց՝ այնտեղ գտնվող ամերիկյան գորքերի դուրսբերումը: Այս որոշման իրականացումը ոչ միայն Աֆղանստանում, այլ նաև ողջ տարածաշրջանում բերեց խոշոր ցնցումների, որի արդյունքում Տալիբան կոչվող խմբավորմանը հաջողվեց իր ձեռքը վերցնել իշխանությունը Աֆղանստանում:

Թեման արդիական է, քանզի տեղի ունեցող իրադարձությունները դիտարկվում են ներկայումս ամերիկյան արտաքին քաղաքականության տարածաշրջանային համատեքստում: Տալիբանի իշխանություն գալը նոր մարտահրավերներ առաջացրեց տարածաշրջանի երկրների համար՝ ստիպելով վերաձևակերպել իրենց արտաքին քաղաքականությունը Աֆղանստանի նկատմամբ:

Ուսումնասիրության հիմնական նպատակն է ներկայացնել ամերիկյան գորքերի դուրսբերման իրականացման նախորդող իրադարձությունները, Դոհայի համաձայնագիրը որպես այս իրադարձությունների գլխավոր հիմք, ներկայացնել Տալիբանի իշխանության վերադարձի հիմնական պատճառները, ինչպես նաև այն խնդիրները, որին բախվում է միջազգային հանրությունը Տալիբանի իշխանության վերադարձով:

Թեմայի նորույթը պայմանավորված է նրանով, որ այս իրադարձությունները ներկայումս շարունակում են մնալ չուսումնասիրված ժամանակակից արևելագիտության և պատմագիտական շրջանակներում:

Հետազոտությունը իրականացնելիս կիրառվել են ժամանակագրական, պատմական և պատմահամեմատական մեթոդները:

Դոհայի համաձայնագիրը և դրա կարևորությունը

2021 թ.-ի օգոստոսի 15-ին Տալիբանը ներխուժեց Քաբուլ և ամբողջությամբ տիրապետեց Աֆղանստանին՝ անակնկալի բերելով ինչպես աֆղաններին, այնպես էլ ամերիկացիներին: ԱՄՆ-ի բանակի և դիվանագետների վերջնական դուրսբերումը, ինչպես նաև ԱՄՆ քաղաքացիների տարահաման գործողությունները ավարտվեցին 2021 թ.-ի օգոստոսի 30-ին: ԱՄՆ-ի ուժերի դուրսբերումը նախօրոք սահմանվել էր 2020 թ.-ի փետրվարին ԱՄՆ-ի և Տալիբանի միջև կնքված համաձայնագրով: Տալիբանը հայտարարել էր, որ Աֆղանստանը «ազատ երկիր» է, և ցանկանում են լավ հարաբերություններ ունենալ Միացյալ Նահանգների հետ: Շատ փորձագետներ կասկածում են այս հայտարարության անկեղծությանը, քանի որ հիշում են Տալիբանի նախկին կառավարումը երկրում 1996-2001 թվականներին: Աֆղանստանում իրավիճակը շարունակում է մնալ լարված և մեծ անհանգստություն է առաջացնում տարածաշրջանի համար: Երկիրը ղեկավարվում է 33 մոլլաներից կազմված կառավարության կողմից [4], որոնցից շատերը գտնվում են ՄԱԿ-ի պատժամիջոցների ներքո և հետախուզվում են ահաբեկչական գործունեության համար: Պետքարտուղար Էնթոնի Բլինկենը նախազգուշացրել է, որ եթե խաղաղության համաձայնագիր չկայացվի կառավարության և Տալիբանի միջև, Աֆղանստանը կդառնա «հանցավոր պետություն» [1]: Աֆղանստանի պաշտպանության և ազգային անվտանգության ուժերում առկա լուրջ թերու-

թյունները, ինչպես նաև կոռուպցիայով կառավարման ձևը, որն ուղղված էր ոչ թե երկրի, այլ անձնական շահերին, շարունակում էին պահպանվել Աֆղանստանում մոտ երկու տասնամյակ շարունակ: Տալիբանի իշխանության գալը և նախկին աֆղանական կառավարության անկումը ի հայտ բերեցին մտահոգություններ՝ հարևան երկրների և ընդհանուր տարածաշրջանային կայունության, ներկայիս և ապագա անվտանգային խնդիրների վերաբերյալ: Այսպիսով, ամերիկյան և կոալիցիոն զորքերի դուրսբերմամբ ավարտվում է ավելի քան երկու տասնամյակ ընթացող քաղաքացիական պատերազմը, և ի վերջո Տալիբանը իր ձեռքն է վերցնում ողջ իշխանությունը Աֆղանստանում: Այս գործողությունների իրականացման փաստացի հիմք է հանդիսանում 2020 փետրվարի 29-ին Միացյալ Նահանգների և Տալիբանի միջև կնքված խաղաղություն հաստատելու վերաբերյալ համաձայնագիրը, որը ավելի հայտնի է Դոհայի համաձայնագիր անվանումով [12]:

Դոհայի համաձայնագիրը (նաև հայտնի է որպես ԱՄՆ-Տալիբան խաղաղության համաձայնագիր) շրջադարձային համաձայնություն էր, որը ստորագրվել է 2020 թ.-ի փետրվարի 29-ին Դոհայում, Միացյալ Նահանգների և տալիբների միջև [4]: Համաձայնագիրը նպատակ ուներ վերջ դնել Աֆղանստանում շուրջ երկու տասնամյակ ընթացող պատերազմին, որով նշանակվեց նաև ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի զորքերի դուրսբերման սկիզբը և հիմք հանդիսացավ ներաֆղանական բանակցությունների համար: Այդուհանդերձ, համաձայնագիրը նաև քննադատության է արժանացել Աֆղանստանի կառավարությանը դեմքի տիմացնելու և անվտանգային առումով երկարաժամկետ հետևանքների պատճառով: Դոհայի համաձայնագիրը կառուցված էր մի քանի առանցքային կետերի շուրջ, որոնք նախատեսված էին խաղաղության ճանապարհ ստեղծելու և օտարերկրյա զորքերի դուրսբերումը հեշտացնելու համար: Հիմնական դրույթները ներառում են՝

- **ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի զորքերի դուրսբերումը:** ԱՄՆ-ը համաձայնել է իր բոլոր ռազմական ուժերի, ինչպես նաև ՆԱՏՕ-ի և կոալիցիայի զորքերի փոլային դուրսբերմանը Աֆղանստանից: Սկզբում ԱՄՆ-ը համաձայնագրի ստորագրումից հետո 135 օրվա ընթացքում կնվազեցնի իր ռազմական ներկայությունը մինչև 8600 զինծառայող: Ամբողջական դուրսբերումը պետք է ավարտվեր մինչև 2021 թ.-ի մայիսի 1-ը, ինչը պայմանավորված էր տալիբների կողմից անվտանգային հատուկ պարտավորությունների կատարմամբ: Համաձայնագրի նպատակն էր ապահովել օտարերկրյա ուժերի աստիճանական և կազմակերպված դուրսբերումը՝ կանխելու Աֆղանստանի անվտանգային համակարգի կտրուկ փլուզումը:

- **Տալիբանի պարտավորությունները հակահափայտության դեմ:** Օտարերկրյա զորքերի դուրսբերման դիմաց տալիբները խոստացել են թույլ չտալ ահաբեկչական խմբավորումների, ներառյալ ալ-Գաիդային, գործել իրենց վերահսկողության տակ գտնվող տարածքներում կամ օգտագործել Աֆղանստանի տարածքը՝ սպառնալու ԱՄՆ-ն կամ նրա անվտանգությանը: Այս հանձնառությունը ամենակարևորն էր ԱՄՆ-ի մտահոգությունների համար, քանի որ Տալիբանը նախկինում ապաստան էր տրամադրել ալ-Գաիդային: Տալիբները նաև խոստացել են կանխել «Իսլամական պետություն»¹ Խորասան նահանգի (ISIS-K) և նման խմբավորումների տեղակայումը Աֆղանստանում:

- **Ներաֆղանական երկխոսություն:** Համաձայնագրի կարևոր տարրը տալիբների, Աֆղանստանի կառավարության և այլ քաղաքական խմբակցությունների միջև ներաֆղանական բանակցությունների իրականացման պարտավորությունն էր: Այս բանակցությունները նպատակ ունին ստեղծել քաղաքական կարգավորման շրջանակ, որով կավարտվեր շարունակվող քաղաքացիական պատերազմը: Ակնկալվում էր, որ բանակցությունները

¹ Ահաբեկչական խմբավորում, որն իր գործունեությունը ծավալում էր Իրաքի և Սիրիայի տարածքներում և ավելի հայտնի է որպես Իրաքում և Շամում իսլամական պետություն» (ԻՇԴԴ) անվանումով:

կանդիդատան այնպիսի հարցերի, ինչպիսիք են իշխանության բաշխումը, ապագա քաղաքական համակարգը և մարդու իրավունքների պաշտպանությունը, ներառյալ կանանց իրավունքները: Այնուամենայնիվ, Աֆղանստանի կառավարությունը Դոհայի համաձայնագրի անսխալ կողմ չէր, ինչը շատերը համարում էին համաձայնագրի հիմնական թերությունը:

• **Բանտարկյալների փոխանակում:** Որպես վստահության ամրապնդման միջոց, համաձայնագիրը կոչ էր անում ազատ արձակել 5000 տալիբների բանտարկյալներին, որոնք պահվում էին Աֆղանստանի կառավարության կողմից և 1000 աֆղանական կառավարական զինվորների, որոնք գերեվարվել էին տալիբների կողմից: Այս փոխանակումը դիտվում էր որպես ներաֆղանական բանակցություններ սկսելու նախապայման, թեև այն զգալի հակասություններ առաջացրեց Աֆղանստանի կառավարության և իրավապաշտպան խմբերի շրջանակում:

• **Պատժամիջոցների վերացում:** Համաձայնագիրը ներառում էր դրույթներ տալիբների առաջնորդների նկատմամբ ԱՄՆ-ի և ՄԱԿ-ի պատժամիջոցների վերացման, նրանց ճանապարհորդության և միջազգային դիվանագիտության մեջ մասնակցության դուրացման համար: Սա զգալի զիջում էր ԱՄՆ-ի կողմից, քանի որ տալիբների շատ առաջնորդներ արդեն երկար ժամանակ ահաբեկիչներ էին ճանաչվել կամ միջազգային հանրության կողմից ենթարկվել էին պատժամիջոցների:

• **Վերահսկողություն և մոնիթորինգ:** Համաձայնագիրը ներառում էր մեխանիզմներ ստուգելու դրա իրականացման պայմանների համապատասխանությունը: Ե՛վ ԱՄՆ-ը, և՛ տալիբները պայմանավորվել են աշխատել միջազգային հանրության հետ՝ ապահովելու համար համաձայնագրի իրականացումը, մոնիթորինգը և կիրարկումը: Այնուամենայնիվ, հանրության շրջանում պահպանվում էին մտահոգությունները կիրարկման ուժեղ մեխանիզմի բացակայության վերաբերյալ:

Աֆղանստանից ամերիկյան կողմի հեռանալու վերաբերյալ քաղաքական գործիչներն ու փորձագետները բազմաթիվ պատճառներ են նշում, սակայն դրանցից ոչ մեկը կապված չէ նախագահ Ջ. Բայդենի՝ Սպիտակ տուն ժամանելու հետ: Գերակշռող տեսակետն այն է, որ զորքերի դուրսբերումը Միացյալ Նահանգներում երկկուսակցական կոնսենսուսի արդյունք է: Երկու քաղաքական կուսակցությունների առաջնորդները որոշեցին, որ ժամանակն է լքել Աֆղանստանը՝ նույնիսկ տալիբների հետ 20-ամյա պատերազմը այսպես ավարտելու պայմաններում: Ջ. Բայդենը, զորքերը դուրս բերելու հրաման տալով, գործել է իր նախորդի քաղաքականության շրջանակներում: Հենց նախագահ Դ. Թրամփն է որոշել բանակցել տալիբների հետ: Վերջինս լեգիտիմություն տվեց զինված խմբին՝ ուղղակիորեն բանակցելով նրա ղեկավարության հետ՝ ամբողջությամբ դուրս թողնելով Աֆղանստանի կառավարությանը: Նրա վարչակազմն էր համաձայնագիր ստորագրել տալիբների հետ 2020 թ.-ի փետրվարին [8], որտեղ խոսքը ամերիկացիների հեռանալու և տալիբների իշխանության վերադարձի մասին էր, այլ ոչ թե խաղաղության հաստատման: Դոհայում ձեռք բերված համաձայնությունը հիմնականում ուղղված էր Տալիբան շարժմանը, որը մեծապես թուլացրեց Աֆղանստանի նախագահ Աշրաֆ Դանիշի դիրքերը և նպաստեց 5000 տալիբների բանտարկյալների ազատ արձակմանը՝ առանց նրանց կողմից նշանակալի զիջումների: Սկզբունքորեն կարևոր է, որ Աֆղանստանի կառավարությունը փետրվարյան համաձայնագրի կողմ չի եղել և իր համաձայնությունը չի տվել դրա պայմանների կատարմանը: Միևնույն ժամանակ, տալիբների պահվածքը հակասում է փետրվարյան համաձայնագրով ստանձնած պարտավորություններին: Աֆղանստանի հաշտեցման հարցերով Միացյալ Նահանգների հատուկ ներկայացուցիչ Ջալմայ խալիլզադը Թրամփի վարչակազմի ուշադրությունը հրավիրեց այն փաստի վրա, որ տալիբները շարունակում են Քաբուլի կառավարությանը համարել ռազմական օկուպացիայի արդյունք և պատրաստ չեն նրանց հետ բանակցել [10]:

Փաստորեն Տալիբանի հետ համաձայնությունից հետո քաղաքացիական պատերազ-

մին վերջ տալու խաղաղ գործընթացը չմեկնարկեց: Տալիբները չեն թաքցնում երկրի գործող սահմանադրությունը վերացնելու, գործող կառավարությանը հեռացնելու և հետագայում առանցքային ազդեցություն ձեռք բերելու իրենց ծրագրերը: Այնուամենայնիվ, ԱՄՆ-ը եկել է այն համոզմամբ, որ Աֆղանստանում պատերազմը չի կարող ռազմական լուծում ունենալ: Տալիբները, ընդհակառակը, շահեցին պատերազմից և դրա շարունակությունից, որպեսզի ստանձնեն Աֆղանստանի ղեկավարումը: Այդուհանդերձ, Բայդենի վարչակազմը կատարեց ԱՄՆ-ի պայմանավորվածությունը տալիբների հետ: Թերևս միակ վիճելի կետը, որը հիմա մնում է, այն է, թե արդյոք Թրամփի վարչակազմը, որը պարտավորվել էր դուրս գալ Աֆղանստանից, կարող էր ավելի գրագետ կառավարել նահանջը, քան Ջ. Բայդենը: Իսկապես, 46-րդ նախագահի խոստացած «կանոնավոր ելքը» վերածվել է քաոսի: Հուլիսի կեսերին նա վստահեցրել էր, որ Աֆղանստանից ամերիկյան զորքերի դուրսբերումը հապճեպ չի կատարվի: Նրա վարչակազմը կարծում էր, որ տալիբների կողմից ամբողջ երկիրը գրավելու հեռանկարը անհավանական է: Մակայն այսօր ակնհայտ է, որ ամերիկյան ղեկավարությունը թերագնահատել է այն արագությունը, որով կփլուզվեն աֆղանական պաշտպանությունը և ինստիտուտները:

Քաբուլից ամերիկյան զորքերի դուրսբերումից հետո նախագահ Բայդենի [11] ելույթը նպատակ ուներ փակել Միացյալ Նահանգների պատմության ցավալի էջը: Դրանում նա Աֆղանստանում տեղի ունեցած ֆիասկոն վերագրում էր ամերիկյան ղեկավարության՝ «պետության կառուցման» ռազմավարության սխալ կիրառմանը մի երկրում, որը պատրաստ չէր դրան: Ջ. Բայդենը նշել է, որ ԱՄՆ-ի ուշադրության կենտրոնում պետք է լինեին ահաբեկչության դեմ պայքարը, ոչ թե պետականաշինությունը: Բայդենի այս բացատրությունը նույնպես էական առարկություններ չառաջացրեց: Այնուամենայնիվ, Աֆղանստանում խնդիրն այն չէ, որ Միացյալ Նահանգները ձեռնամուխ է եղել ազգի կառուցման արշավին, այլ հստակ նպատակների բացակայությունը, քաղաքական բարեփոխումներն առաջ մղելու համար լծակներ օգտագործելու անկարողությունը և ռազմական ջանքերին չափից ավելի ապավինելը ստեղծեցին պայմաններ, որոնք տալիբներին թույլ տվեցին ոչ միայն պահպանել իրենց ազդեցությունը, այլև էականորեն զարգացնել շարժման ռազմական ներուժը:

Այնուամենայնիվ, հապճեպ հեռանալը և քաոսային տարիանումը բիծ թողեցին Միացյալ Նահանգների համաշխարհային հեղինակության և Ջ. Բայդենի արտաքին քաղաքականության վրա: Եթե չլինեի նրա վարչակազմի որոշումը՝ շարունակելու մարդասիրական օգնություն ցուցաբերելը աֆղան ժողովրդին, նախագահ Բայդենը կձախողվեր ամբողջովին:

Տալիբանի վերադարձը իշխանության և անվտանգային խնդիրները Աֆղանստանում

Աֆղանստանում տալիբների արագ վերադարձը իշխանության ուժեղ ազդանշան հանդիսացավ տարածաշրջանի երկրների համար պայմանավորված անվտանգային խնդիրներ ունենալու հանգամանքով: Ավելի քան 20 տարի աֆղանական տալիբները պատերազմ էին մղում Միացյալ Նահանգների և օտար ուժերի դեմ, բայց այժմ նրանք պետք է մի քանի ապստամբներից վերածվեն մի խմբի, որը ղեկավարում է երկիրը: Կարո՞ղ են տալիբները կայուն խաղաղության հասնել: Շատ բան կախված է նրանից, թե ինչպես կվարվեն ապագայում և ինչպես կկարողանան կատարել իրենց խոստումները: Տալիբանի որոշ խմբավորումներ այժմ փորձում են ստեղծել խմբի փոփոխված տարբերակը՝ հիմնվելով նոր իրողությունների վրա: Այնուամենայնիվ, տալիբների ներսում ծայրահեղական խմբավորումներ ցանկանում են վերադառնալ 1990-ականներին վարչակարգի վարած քաղաքականությանը [4]: 2022-ի սկզբին քիչ ազդակներ կային, որ իշխանության ղեկին գտնվող տալիբները կարող են լինել ավելի արդյունավետ և ավելի կայուն լինել, քան վերջին 20 տարիների խառը կառավարությունները, որոնց աջակցում էին արտաքին ուժերը: Դժվար թե Քաբուլում ակնկալենք կայուն կառավարության ձևավորում, որը կարող է վերահսկել ողջ Աֆղանստանը: Տարբեր էթնիկ և կրոնական համայնքների միջև պայքարը, առաջնորդների և

կլանների մրցակցությունը հաղթանակած փաշթոնների ներսում, երկրի շրջանների փաստացի ինքնավարությունը և պարբերական զինված բախումները անխուսափելի են թվում: Ինչ վերաբերում է Աֆղանստանից ահաբեկչական սպառնալիքներին, ապա մտավախություն կա, որ դրանց աճը միանգամայն հնարավոր է [3]: Երկիրը վերջնականապես լքելու որոշման ժամանակ Ջ. Բայդենը պնդում էր, որ Աֆղանստանից ահաբեկչության սպառնալիքը ցածր է և տեսանելի ապագայում կառավարելի կլինի: Շատ փորձագետներ համաձայն չեն այս գնահատականի հետ, տալիբների իշխանության վերադարձով վտանգը մեծանում է: Տալիբները ճյուղավորված են, և նրանց ներսում տարաձայնությունները, ամենայն հավանականությամբ, կսրվեն իշխանության համար պայքարի պատճառով, և տալիբների տարբեր խմբավորումները կարող են համագործակցել Աֆղանստանից գործող ահաբեկչական ուժերի հետ [7]:

Այս խմբերից շատերը բախվում են պատժամիջոցների, բայց նրանք պահպանում են կարևոր կողմերը չնայած Միացյալ Նահանգների հակաահաբեկչական քաղաքականության ճնշմանը [9]: Կա ևս մեկ ոչ պակաս վտանգավոր կողմ, Միացյալ Նահանգների պարտությունը և Աֆղանստանում Տալիբանի հաղթանակը դարձել են գլոբալ ջիհադիզմի մղող ուժեր և, հավանաբար, զգալիորեն կբարձրացնեն նրանց ծայրահեղականների ռզկորվածությունն ու ուժը: Մտավախություն կա, որ Իրաքում և Սիրիայում տարածքների նկատմամբ վերահսկողությունը կորցրած ԻՊ-ը կարող է վերադառնալ ապստամբների իր արմատներին և կենտրոնանալ ահաբեկչական հարձակումների կազմակերպման վրա: Տարբեր ահաբեկչական խմբեր ուրախությամբ նշում էին տալիբների կողմից Քաբուլի գրավումը՝ խոստանալով վերսկսել համաշխարհային ջիհադը: Այդ առումով Բայդենի վարչակազմը մասնանշում է հակաահաբեկչական երաշխիքները, որոնք տալիբները տրամադրել են որպես 2020 թ.-ի փետրվարին ԱՄՆ-ի և տալիբների միջև ստորագրված համաձայնագրի հիման վրա: Իրոք, այն պարունակում է մի շարք մանրամասն պարտավորություններ՝ կապված այն գործողությունների հետ, որոնք Տալիբանը պետք է ձեռնարկի ահաբեկչական խմբավորումների կողմից Աֆղանստանի տարածքի օգտագործումը կանխելու համար: Բայց արդյո՞ք տալիբները կիրականացնեն դրանք: Առայժմ պարզ է, որ Տալիբանը բացառել է Վաշինգտոնի հետ համագործակցությունը Աֆղանստանում ծայրահեղական խմբավորումներին զսպելու նպատակով՝ 2021 թ.-ի հոկտեմբերին Դոհայում ԱՄՆ ներկայացուցիչների հետ բանակցություններում՝ այս հարցում անգիջում դիրք գրավելով [5]: Բայդենի վարչակազմի մեկ այլ փաստարկն այն է, որ տալիբները, իբր, սովորել են 2001 թ.-ին Միացյալ Նահանգների դասերը՝ կապված ալ-Կաիդային ապաստան տրամադրելու և ահաբեկչական խմբավորումներին աջակցելու հետ, և հիմա՝ ԱՄՆ-ի հետ նոր զինված բախումից վախենալու պատճառով նրանք թույլ չեն տա այդ խմբերին գործել Աֆղանստանից, այսինքն՝ դուրս գալ պատերազմից նորով սպառնալու համար: Աֆղանստանին սպառնացող ավանդական վտանգը, որը կապված է փուշթունների (Տալիբանը հիմնականում փուշթուն շարժում է) և աֆղան տաջիկների միջև էթնիկ հակամարտությունների հետ նույնպես պահպանվում է: Դուշմանների կառավարության կողմից արդեն իսկ ձևակերպված տալիբների չճանաչման կոշտ դիրքորոշումը հուշում է, որ այս երկիրը նույնպես կարող է ներքաշվել հակակառուցության մեջ: Տաջիկստանը ամուր կապեր ունի Աֆղանստանում ապրող տաջիկների հետ, որոնց թվաքանակը շատ չի գերազանցում փուշթուններին: Նման ընդգծված ձևով դա չի վերաբերում Կենտրոնական Ասիայի մյուս հարևան երկրներին: Իհարկե, Ուզբեկստանի և Թուրքմենստանի ղեկավարությունները նույնպես չեն կարող անտեսել Աֆղանստանում բնակվող էթնիկ թուրքմենների և ուզբեկների շահերը:

Չի կարելի բացառել, որ Իրանի և Մերձավոր Արևելքի մի շարք արաբական երկրների, առաջին հերթին Սաուդյան Արաբիայի միջև հակամարտությունը կարող է տեղափոխվել Աֆղանստան՝ հաճախ ստանալով շիա-սուննի բախման ձև: ԻՊ-ի ներթափանցումը Աֆղանստան և Պակիստան այս միտումի դրսևորումներից մեկն է ներկայումս: Ոչ միայն

ԻՊ-ը, այլ նաև Կենտրոնական Ասիայի և այլ երկրների սուսնի այլ խմբերի հետ կապված մի շարք զինյալներ ակտիվորեն գաղթում են Մերձավոր Արևելքից Աֆղանստան [6]: Այնուամենայնիվ, 2022 թ.-ի սկզբին տալիքները վերահսկում էին Աֆղանստանի մեծ մասը, և տալիքների իշխանության դեմ կազմակերպված դիմադրություն չկար: Բացառություն է կազմում Քաբուլի դեմ զինված պայքարը, որը մղում է ԴԱԻՇ-ի աֆղանական ճյուղը, որը հայտնի է ԻՊ-Խորասան անունով: Սա վկայում է այն մասին, որ տալիքների նոր կառավարությունը, նույնիսկ ցանկության դեպքում չի կարող երաշխավորել երկրում ահաբեկչական գործողությունների դադարեցումը, այսինքն՝ ահաբեկչական սպառնալիքը Աֆղանստանից պահպանվում է: Դա վերաբերում է նաև ալ-Կաիդային: Նրա ղեկավարության զգալի մասը շարունակում է մնալ Աֆղանստանում, և նրա կապերը տալիքների հետ դեռևս սերտ են՝ հիմնված գաղափարական նմանությունների վրա [2]: Տալիքները համագործակցում էին ալ-Կաիդայի հետ, հաճախ «Հաքանի» ցանցի միջոցով, որի առաջնորդ Նալիլ Հաքքանին դարձավ ներքին գործերի նախարար Աֆղանստանի իսլամական էմիրի կառավարությունում, որը վերականգնվեց ամերիկացիների հետանալուց հետո: Կենտրոնական Ասիայի երկրների համար Աֆղանստանում տալիքների իշխանության գալուց հետո առաջին ամիսները համեմատաբար հանգիստ էին: Իրավիճակը սահմանին վերահսկվում է, փախստականների ամբոխները չեն լցվել տարածաշրջան, իսկ տալիքների հաջողություններով ոգեշնչված արմատական խմբերը, որոնք պատրաստ են տապալել տեղական վարչակարգերը, անմիջապես չհայտնվեցին երկրների ներսում: Սա, սակայն, չի նշանակում, որ Աֆղանստանից Կենտրոնական Ասիայի երկրներին սպառնացող վտանգներ չկան: շատ բան կախված կլինի նրանից, թե ինչ ուղի կընտրեն տալիքները, և ուր կվերածվի աֆղանական ճգնաժամն ընդհանրապես:

Եզրակացություն

Աֆղանստանի Իսլամական Հանրապետության քառսային և արագ փլուզումը հետևանք է այդ երկրում ամերիկյան միջամտության ավարտի տարածաշրջանի համար վտանգավոր հետևանքներով: Բայդենի վարչակազմը զարմանալիորեն քառսային կերպով իրականացրեց Աֆղանստանից գործերի դուրսբերումը: ԱՄՆ-ի հապճեպ, չպլանավորված և չկազմակերպված հեռանալը հիմնված էր Թրամփի վարչակազմի կողմից ստորագրված համաձայնագրի վրա, որը տալիքները բացահայտորեն անտեսում էին: Ներկայիս իրավիճակի համեմատությունները 1996 թ.-ին Քաբուլ տալիքների կառավարության առաջին ժամանումից հետո ստեղծված իրավիճակի հետ ցույց է տալիս, որ նրանց ներկայիս դիրքերը շատ ավելի ամուր են: Մինչ ԱՄՆ-ի ռազմական միջամտության մեկնարկը, տալիքները գրեթե ամբողջությամբ մեկուսացած էին աշխարհում: Բացառությամբ մի քանի երկրների, ինչպիսիք են Պակիստանը, Մաուլդյան Արաբիան և ԱՄԷ-ն, ոչ մի այլ երկիր չի ճանաչել Տալիբանի ռեժիմը: Ու թեև Աֆղանստանը դեռ անցումային փուլում է, կարելի է եզրակացնել, որ ահաբեկչական խմբավորումները լուրջ վտանգ են ներկայացնում տալիքների համար, բայց ոչ նրանց ռեժիմը տապալելու աստիճան: Աֆղանստանի կառավարությունում գերիշխելու են տալիքները, իսկ մյուս քաղաքական ուժերը կամ էթնիկ խմբերը երկրորդական դեր են խաղալու: Տալիքները խոստացել են կանխել Աֆղանստանը, որպեսզի դառնա ահաբեկչական կազմակերպությունների համար այլ երկրների դեմ գործելու հենակետ և պայքարել նրանց դեմ՝ իրենց հարևաններին սպառնացող վտանգները կանխելու համար: Եթե տալիքների ռեժիմը լավ չվերահսկի Աֆղանստանը, ապա երկիրը կրկին կարող է դառնալ միջազգային ահաբեկիչների ապաստարան և հենակետային ճամբար: Թմրամիջոցների, փախստականների, Աֆղանստանում քաղաքական ու սոցիալական անկայունության հնարավոր տարածման խնդիրները նույնպես կշարունակեն լուրջ մտահոգել հարևան երկրներին: Բայդենի վարչակազմը, որը կարծում էր, որ տալիքները չեն գրավի Քաբուլը և ամերիկացիների հեռանալուց հետո, այժմ պնդում է, որ ոչ ԴԱԻՇ-ը, ոչ էլ ալ-Կաիդան շուտով համաշխարհային վտանգ չեն ներկայացնի: Վաշինգտոնը Աֆղանստանի համար

խաղաղության ծրագիր չունի: Հակառակ վերջին 20 տարվա ամերիկյան ռազմավարության՝ Տալիբանը դարձել է այստեղ առաջատար քաղաքական ուժը, և երկրի իրավիճակի վրա արտաքին ազդեցությունը ԱՄՆ-ից և ՆԱՏՕ-ից տեղափոխվում է հարևան երկրներ, այդ թվում՝ Չինաստան և Ռուսաստան: Աֆղանստանի քաղաքականությունը արմատապես փոխվել է, և երկրի զարգացումը բոլորովին այլ հետագծի վրա է: Միացյալ Նահանգներին մնում է սահմանափակ լծակ, որը բաղկացած է պայմանական տնտեսական օգնությունից, Տալիբանի կառավարության ճանաչումից, շարժման ղեկավարության դեմ պատժամիջոցների չեղարկումից և նոր կառավարությանը միջազգային ֆինանսական համակարգերին և միջազգային հաստատություններին հասանելիության տրամադրումից: Բայդենի վարչակազմը մտադիր չէ քայլեր ձեռնարկել տալիբների գլխավորած Աֆղանստանի նկատմամբ իր քաղաքականության կոշտությունը մեղմելու համար: Եթե երկիրը դառնա «ձախողված» (Վաշինգտոնի տերմինաբանությամբ օգտագործված) պետություն, այն խոցելի կդառնա սահաբեկչական կազմակերպությունների կողմից, ինչպիսին Խորասանի իսլամական պետությունն է:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-144>

Գրականություն

1. Mcfall C. Blinken warns Afghanistan could become “pariah state” if peace not made with Taliban, Fox News, July 28, 2021. <https://www.foxnews.com/politics/blinken-afghanistan-pariah-state-taliban?msockid=24c3409254dd65ee15125402550f6459%E2%80%A4> (Accessed May 1, 2024)
2. Barbara E. Why the Taliban won’t quit al Qaeda, Foreign Policy, September 21, 2021. <https://foreignpolicy.com/2021/09/21/taliban-al-qaeda-afghanistan-ties-terrorism/> (Accessed January 25, 2024)
3. Hansler J. US and Taliban sign historic agreement, CNN, February 29 2020, <https://edition.cnn.com/2020/02/29/politics/us-taliban-deal-signing/index.html>. (Accessed May 4, 2024)
4. Kirby J. What the Taliban’s new government reveals about how they will rule, Fox news, September 14, 2021, <https://www.vox.com/22665508/taliban-afghanistan-prime-minister-supreme-leader-hassan-haibatullah>. (Accessed May 14, 2024)
5. Lobel O. How Afghanistan’s fall to the Taliban increases the global terrorism threat. September 06, 2021. <https://www.aspistrategist.org.au/how-afghanistans-fall-to-the-taliban-increases-the-global-terrorism-threat/>. (Accessed May 13, 2024)
6. Synovitz R. and Siddique A. One month in Power: Taliban failing to transform from insurgency to functional government. <https://www.rferl.org/a/31462118.html>. (Accessed May 14, 2024)
7. U.S. and Taliban holding first talks since military withdrawal from Afghanistan, 10 October 2021, ABC News <https://www.abc.net.au/news/2021-10-09/us-and-taliban-first-talks-since-military-withdrawal-afghanistan/100527324>. (Accessed February 15, 2024)
8. Yellinek R. The politics and geopolitics of the Afghan refugee crisis, Middle East Institute, 24 September 2021, <https://www.mei.edu/publications/politics-and-geopolitics-afghan-refugee-crisis>. (Accessed June 1, 2024)
9. In power, the Taliban’s divisions are coming to the fore: Ideological differences and bored fighters are creating headaches for its leaders, Economist, October 2, 2021. <https://www.economist.com/asia/2021/10/02/in-power-the-talibans-divisions-are-coming-to-the-fore> (Accessed May 20, 2024)

10. <https://www.state.gov/wp-content/uploads/2020/02/Agreement-For-Bringing-Peace-to-Afghanistan-02.29.20.pdf> (Accessed May 1, 2024)
11. European Parliamentary Research Service, Security situation in Afghanistan, October 2021, [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/BRIE/2021/698771/EPRS_BRI\(2021\)698771_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/BRIE/2021/698771/EPRS_BRI(2021)698771_EN.pdf). (Accessed February 5, 2024)
12. <https://www.state.gov/remarks-at-the-aspen-security-forum/> (Accessed June 2, 2024)
13. <https://www.whitehouse.gov/briefing-room/speeches-remarks/2021/08/31/remarks-by-president-biden-on-the-end-of-the-war-in-afghanistan/> (Accessed February 5, 2024)
14. <https://www.state.gov/wp-content/uploads/2020/02/Agreement-For-Bringing-Peace-to-Afghanistan-02.29.20.pdf> (Accessed May 1, 2024)

Вывод войск США и возвращение Талибана к власти в Афганистане в 2021 году

Матевосян Арутюн

Резюме

***Ключевые слова:** США, Афганистан, Талибан, Дохийское соглашение, Байден, война, НАТО, терроризм*

Вывод американских и коалиционных войск из Афганистана в 2021 году стал неожиданным шагом, вызвавшим широкий резонанс в международном сообществе. Вскоре после этого движение «Талибан» установило контроль над Кабулом, а затем над всей территорией страны, вернувшись к власти спустя более двух десятилетий. Ключевым фактором, подготовившим почву для этих событий, стало Соглашение о мире, подписанное между США и «Талибаном» в феврале 2020 года. В соответствии с его положениями, Соединённые Штаты и союзные коалиционные силы обязались вывести войска с территории Афганистана. В свою очередь, «Талибан» брал на себя обязательства по борьбе с международным терроризмом, в частности – по недопущению использования афганской территории террористическими организациями, включая «Аль-Каиду», для подготовки и осуществления атак против США. Фактическое возвращение талибов к власти после вывода иностранных войск произошло в крайне сжатые сроки, что привело к формированию новой нестабильной и напряженной обстановки как внутри страны, так и в регионе в целом. Отсутствие международных гарантий выполнения талибами своих обязательств, а также возможность создания ими благоприятных условий для деятельности террористических группировок вызывали серьезную обеспокоенность. Для США этот процесс стал свидетельством провала двадцатилетней стратегии по стабилизации Афганистана и построению устойчивых государственных институтов. Возвращение «Талибана» к власти вновь актуализировало проблему региональной безопасности, поставив под угрозу не только безопасность ближайших соседей, но и международную стабильность в целом. Таким образом, события 2021 года подтвердили, что борьба с терроризмом остается одной из приоритетных задач международного сообщества, требующей согласованных усилий, стратегической дальновидности и комплексного подхода.

US Troop Withdrawal and Taliban Return to Power in Afghanistan in 2021

Matevosyan Harutyun

Summary

Key words: *USA, Afghanistan, Taliban, Doha Agreement, Biden, war, NATO, terrorism*

The withdrawal of American and coalition troops in 2021 shocked the international community. After a short time, the Taliban was able to take Kabul and the entire territory of Afghanistan under its control. The Taliban returned to power in Afghanistan after more than two decades. The basis of these events was the Peace Agreement signed by the Taliban and the United States in February 2020. According to this agreement, the United States and coalition forces withdraw their power from Afghanistan, while the Taliban commits to implementing counterterrorism policies, including preventing Al-Qaeda and other terrorist organizations from using Afghan territory to organize and carry out terrorist attacks against the United States. As for the United States, the complete withdrawal of forces showed the failure of the American policy in Afghanistan and the return of the Taliban to power after more than 20 years. The latter increased regional security problems, including not only for neighboring countries, but also for the whole world. Thus, the fight against terrorism will continue to be an important priority for the international community.

Ներկայացվել է	12. 10. 2024 թ.
Գրախոսվել է	04. 12. 2024 թ.
Ընդունվել է տպագրության	05. 06. 2025 թ.

ԵՊՀ առաջին ռեկտոր Յ. Ս. Ղամբարյանի կյանքն ու գործունեությունը

Մովսիսյան Ֆելիքս

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-153>

Հանգուցային բառեր. գիտնական, իրավագետ, պրոֆեսոր, դասախոս, Փարիզ, ռուսական բարձրագույն դպրոց, մասոն, կրթության կազմակերպիչ

Նախաբան

Եվրոպական ճանաչում ունեցող հայ անվանի գիտնական, քաղաքացիական իրավունքի լավագույն գիտակ, կրթության հմուտ կազմակերպիչ Յուրի Ստեփանի Ղամբարյանի կյանքը, գիտական, պրոֆեսորադասախոսական և մասոնական գործունեությունը հայ պատմագիտության կողմից մինչ օրս հիմնավոր ուսումնասիրված չէ: Նրա կյանքի ու գործունեության մասին բավարար քանակությամբ նյութեր չկան, Հայաստանում չի պահպանվել նրա անձնական արխիվը: Խորհրդային տարիներին լույս տեսած գրականության մեջ Յ. Ս. Ղամբարյանի գործունեությունը մոռացության էր մատնված: Հայկական սովետական հանրագիտարանում նա ներկայացվում է որպես գիտնական-իրավաբան [3, 24-25], չի նշվում, որ նա եղել է Երևանի պետական համալսարանի հիմնադիր ռեկտորը: Այդ անարդարությունը շտկվեց միայն 1999 թ. լույս տեսած «Երևանի պետական համալսարանի ռեկտորները» [4, 8-13] գրքում: Մեր օրերում նրա բրնձգածույլ կիսանդրին իր արժանի տեղն ունի Երևանի պետական համալսարանի կենտրոնական մասնաշենքի նախասրահում: Այժմ, երբ Յ. Ս. Ղամբարյանն իրավացիորեն համարվում է գիտության մեծ երախտավոր և կրթության հմուտ կազմակերպիչ, անհրաժեշտ է, որպեսզի հայ պատմաբանների և իրավաբանների կողմից հանգամանորեն ուսումնասիրվեն ոչ միայն նրա կյանքի՝ մինչ օրս մեզ անհայտ բազում էջերը, այլև սերունդներին թողած գիտական ժառանգությունը և մասոնական գործունեությունը:

Յ. Ս. Ղամբարյանի դասախոսական գործունեությունը

Յուրի Ստեփանի Ղամբարյանը ծնվել է 1850 թ. հունիսի 10-ին Թիֆլիսում: Ռուսական աղքատներում նա հայտնի է նաև Գեորգի Ստեփանի Ղամբարով անունով: Նրա հայրը՝ Ստեփան Պավելի Ղամբարովը, 1829 թ. փետրվարի 16-ին դարձել է պետական պաշտոնյա և այդ բնագավառում բավական լուրջ առաջընթաց ունեցել: 1858 թ. Ս. Պ. Ղամբարովը նշանակվել է Թիֆլիսի նահանգային դատախազ, բարեխիղճ ծառայելու համար պարգևատրվել է Սուրբ Աննայի երկրորդ և Սուրբ Վլադիմիրի երրորդ աստիճանի շքանշաններով: 1860 թ. ղեկտեմբերի 25-ին Ս. Պ. Ղամբարովին շնորհվել է քաղաքացիական չորրորդ դասի պետական իսկական խորհրդականի աստիճան [44, 602], որով նա, համաձայն Պյոտր 1-ի 1722 թ. հունվարի 24-ի հրամանագրով հաստատված Աստիճանների ցուցակի, ժառանգական ազնվականի իրավունք է ստացել:

1866 թ. Յ. Ս. Ղամբարյանը բարձր առաջադիմությամբ ավարտեց Թիֆլիսի տղամարդկանց առաջին գիմնազիան, որի շրջանավարտները քվոտայով ընդունվում էին ցարական Ռուսաստանի բարձրագույն ուսումնական հաստատությունները: Գիմնազիան ավարտելուց հետո Յ. Ս. Ղամբարյանը, օգտվելով այդ քվոտայից, ընդունվեց Մոսկվայի կայսերական համալսարանի իրավագիտության ֆակուլտետը: 1870 թ. համալսարանն ավարտելուց հետո նա վերադարձավ Թիֆլիս, որտեղ երեք տարի աշխատեց դատական պալատում որպես դատական քննիչ:

1873-1874 թթ. Յ. Ս. Ղամբարյանը գիտելիքները հարստացնելու նպատակով մեկնեց Եվրոպա, եղավ Ավստրո-Հունգարիայում, Գերմանիայում, Ֆրանսիայում և Շվեյցարիայում: Գերմանիայում նա հաճախում էր Գետտինգենի համալսարան, որն այդ տարիներին ուներ իր ժամանակի համար կատարյալ ուսումնական բազա և ճանաչված պրոֆեսորական կազմ:

1880 թ. հունիսին նա Մոսկվայի կայսերական համալսարանում պաշտպանեց մագիստրոսական ատենախոսություն «Կամավոր և անհատույց գործունեությունը ուրիշի շահում պայմանագրային հարաբերություններից դուրս և օրենքով չնախատեսված» թեմայով [45, 249]:

1880 թ. հոկտեմբերին Յ. Ս. Ղամբարյանը ընտրվեց Օդեսայի Նովոռոսիյսկյան համալսարանի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ: Այս համալսարանը հիմնվել է 1865 թ. մայիսի 1-ին, համարվում էր Ռուսաստանի 12 կայսերական համալսարաններից մեկը, որը տարիների ընթացքում չափազանց կարևոր դեր խաղաց Օդեսայի և տարածաշրջանի հասարակական կյանքում, դարձավ գիտության և բարձրագույն կրթության դրոշակակիր: Հիմնադրման պահին համալսարանի ամենամեծ ֆակուլտետը իրավաբանականն էր, որտեղ դասախոսական գործունեություն սկսեց երիտասարդ իրավաբան Յ. Ս. Ղամբարյանը:

1882 թ. ապրիլին Յու. Ս. Ղամբարյանը կատարելագործման նպատակով կրկին մեկնեց Եվրոպա, վերադարձավ 1883 թ. հուլիսին և շարունակեց դասավանդել Օդեսայի Նովոռոսիյսկյան համալսարանում:

1884 թ. հուլիսին Յու. Ս. Ղամբարյանը դասախոսական աշխատանքի անցավ Մոսկվայի կայսերական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում, սկզբում՝ որպես դոցենտ, իսկ 1884 թ. դեկտեմբերից՝ քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության ամբիոնի արտահաստիքային պրոֆեսոր: Այդ տարիներին իրավագիտության ֆակուլտետում դասավանդում էին ճանաչված այնպիսի պրոֆեսորներ, ինչպիսին էին համալսարանի ռեկտոր Ն. Պ. Բոգոլեպովը, դեկան Վ. Ա. Լեգունինը, Ա. Ս. Պավլովը, Լ. Ա. Կոմարովսկին, Ի. Ի. Յունժալը, Ա. Ի. Չուպրովը, Մ. Մ. Կովալսկին, Պ. Ն. Մրոչեկ-Դրոզդովսկին, արտահաստիքային պրոֆեսորներ Ն. Ի. Ներսեսովը, Գ. Կոլոկոլովը և ուրիշներ [20]: 1884-1885 թթ. Յու. Ս. Ղամբարյանը Մոսկվայի համալսարանում դասավանդում էր առևտրային իրավունք և քաղաքացիական իրավունք գործնական վարժությունների կիրառմամբ, իսկ 1890 թ. աշնանից մինչև 1896 թ. ամառը՝ քաղաքացիական դատավարություն և դատական գործավարություն դասընթացները [29, 251]:

Համալսարանում դասավանդելու ընթացքում Յու. Ս. Ղամբարյանը ծանոթացավ և մտերմացավ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսոր Մաքսիմ Մաքսիմովիչ Կովալսկու (1851-1916) հետ, որը շարունակվեց երկար տարիներ: Նրանք գրեթե հասակակից էին, սերում էին ազնվականի ընտանիքից, մասնագիտությամբ իրավաբան էին, բարձրագույն կրթություն էին ստացել Մոսկվայի համալսարանի իրավագիտության ֆակուլտետում, նաև եվրոպական երկրներում և 1884 թ. սկսած դասավանդում էին նույն ֆակուլտետում: Մ. Ս. Կովալսկու տանը յուրաքանչյուր հինգշաբթի հավաքվում էին իր մտերիմները և Պետերբուրգի մտավորականության ընտրանին ու տարբեր թեմաների շուրջ քննարկումներ անցկացնում, որոնց մշտապես մասնակցում էր նաև Յու. Ս. Ղամբարյանը [32, 10]: Մ. Ս. Կովալսկին իր հիշողություններում գրում է, որ Եվրոպայից վերադառնալուց հետո մտերմացել է երկու մարդկանց հետ, ովքեր «մինչ օրս մնում են իմ բարեկամները: Նրանցից մեկը պրոֆեսոր Ի. Բ. Իվանյուկովն էր, իսկ մյուսը մտայն էր ու միայնակ: Մտայնությունը նրան ստիպում էր մի կողմ քաշվել հասարակությունից, իսկ մենակությունը՝ շատ աշխատել ինքնագրագացման համար: Ես նկատի ունեմ Ղամբարյանին: Նա մեր ամենակրթված իրավաբաններից մեկն է» [32, 231]:

1887 թ. Մ. Ս. Կովալսկին և Յու. Ս. Ղամբարյանը միասին ազգագրական արշավախումբ կազմակերպեցին Կովկասում՝ տոհմային հարաբերություններն ուսումնասիրելու նպատակով, որի նյութերը Մ. Ս. Կովալսկին հրատարակեց առանձին ժողովածուի տեսքով [32, 12]: 1887 թ. հունիսի 6-ին Ռուսաստանի ժողովրդական լուսավորության նախարար Դ. Դեյլանովի հրամանով Մ. Ս. Կովալսկին հեռացվեց համալսարանից իր դասախոսություններում «ռուսական պետական կարգի նկատմամբ բացասական վերաբերմունք արտա-

հայտելու պատճառով» և սահմանադրական գաղափարներ քարոզելու համար [52, 35-48]: Այդ ժամանակից սկսած նա ապրում էր արտասահմանում, դասախոսություններ կարդում Ստոկհոլմի, Փարիզի, Բրյուսելի, Լոնդոնի, Սան Ֆրանցիսկոյի և Չիկագոյի համալսարաններում [36, 311-315; 22, 129-130; 29, 335-336; 49, 127-128; 34, 115-116]:

Մ. Մ. Կովալսկու վտարանդվելուց հետո նրա կապը Յու. Ս. Ղամբարյանի հետ չընդհատվեց: 1894 թ. նոյեմբերին նա իր մտերիներից պրոֆեսոր Ա. Ի. Չուպրովին խնդրում էր լույս տեսած իր գրքի մի օրինակը տալ «իմ ընկեր Յու. Ս. Ղամբարովին և Գրիգորի Ավետի Զանիշին» [14; 32, 492], ով «Մոսկովսկիե վեդոմոստի» թերթի հրատարակիչ-խմբագիրն էր:

Մոսկվայի համալսարանում Յու. Ս. Ղամբարյանը դասախոսություններ էր կարդում քաղաքացիական իրավունքի, քաղաքացիական դատավարության և դատական գործավարության մասին: Դասախոսական գործունեությանը զուգահեռ Յու. Ս. Ղամբարյանը շարունակում էր գիտական ուսումնասիրությունները քաղաքացիական իրավունքի ոլորտում: 1889 թ. Մոսկվայի համալսարանում նա պաշտպանեց դոկտորական ատենախոսություն՝ «Հասարակական շահը քաղաքացիական իրավունքում» թեմայով, որի համար նրան շնորհվեց իրավագիտության դոկտորի գիտական աստիճան:

1899 թ. ամռանը Յու. Ս. Ղամբարյանը Ռուսաստանի ժողովրդական լուսավորության նախարար Ն. Պ. Բոգոլեպովի պահանջով հարկադրված լքել է համալսարանը՝ մեղադրվելով հայկական շարժում և հակապետական քարոզչություն ծավալելու մեջ [22, 58; 45, 251]: Նախարարը կտրականապես դեմ էր համալսարանի քաղաքականացմանը՝ գտնելով, որ եթե պրոֆեսորները զբաղվում են քաղաքականությամբ, ապա ուսումնական հաստատությունը վերածվում է քաղաքական ակումբի: Յու. Ս. Ղամբարյանի հեռացման պատճառը դարձավ Մոսկվայի ուսումնական շրջանի հոգաբարձու, գաղտնի խորհրդական կոմս Պավել Ալեքսեևիչ Կապիստի՝ ռուսական իշխանություններին 1890 թ. դեկտեմբերի 23-ին ներկայացրած զեկուցագիրը: Նա գրում էր. «Ունեցած հավաստի տեղեկություններով Ղամբարովի քարոզչական գործունեությունը որևէ կասկած չի հարուցում: Նրա ջանքերով Մոսկվայում տեղի հայ համայնքի ներկայացուցիչներից ձևավորվել է կոմիտե, որի կազմում, բացի Ղամբարովից, մտնում է նաև Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր Ներսեսովը: Կոմիտեի հավաքները տեղի են ունենում Ղամբարովի ղեկավարությամբ, ով, նաև արականայ, համարվում է Մոսկվայում հայկական շարժման գլխավոր ղեկավարը: Ղամբարովի անձնական նախաձեռնությամբ Մոսկվայում դրամական միջոցներ են հավաքվում հայկական գործի համար» [29, 144]:

Մոսկվայում հայկական շարժում ծավալելու հարցում Յու. Ս. Ղամբարյանի համախոհը, ըստ Պ. Ա. Կապիստի զեկուցագրի, համալսարանի իրավագիտության պրոֆեսոր Ներսես Օսիպի Ներսեսովն (1848-1894) էր: Նա Մոսկվայի համալսարանի շրջանավարտ էր, որտեղ 1874 թ. դասավանդում էր քաղաքացիական իրավունք: 1890 թ. պաշտպանել էր դոկտորական ատենախոսություն: 1892 թ. մարտի 22-ին համալսարանում ստացել էր պրոֆեսորի պաշտոն, ղեկավարում էր առևտրի, մուրհակի և բարոյական իրավունքի ամբիոնը, միաժամանակ իրավագիտության ֆակուլտետի խորհրդի քարտուղարն էր [22, 173-174; 29 497-498]:

Յու. Ս. Ղամբարյանի գործունեությունը Փարիզի Ռուսական բարձրագույն դպրոցում

Մոսկվայի համալսարանից հեռացված Յու. Ս. Ղամբարյանը 1900 թ. ընտանիքով մեկնեց Փարիզ, որտեղ համագործակցում էր Մ. Մ. Կովալսկու հետ, ով արտասահմանում գտնված ժամանակ «իբեներից ներկայացնում էր ձգողականության ամենախոշոր կենտրոնը ինչպես ռուս վտարանդիության, այնպես էլ Ռուսաստանից եկած մարդկանց համար» [32, 17]: Նա պատրաստ էր օգնության ձեռք մեկնել յուրաքանչյուր ռուս մարդու: Յու. Ս. Ղամբարյանի՝ արտասահման տեղափոխվելու մասին Մ. Մ. Կովալսկիին պրոֆեսոր Ա. Ի. Չուպրովին գրում էր. «Իմ բարեկամ պրոֆեսոր Ղամբարովը Մոսկվայի համալսարանում 25

տարի ծառայելուց հետո ընտանիքով տեղափոխվել է Փարիզ» [32, 274]: Այժմ նա «ինձ հետ է..., հուսով եմ, որ կհաջողվի Ղամբարովին տեղավորել Բրյուսելում պրոֆեսոր՝ ռուսերենով դասախոսություն կարդալու իրավունքով և կստանա 5000 ֆրանկ» [15; 32, 505]: Մ. Մ. Կովալսկին կարողացավ օգտակար լինել Յու. Ս. Ղամբարյանին, ով 1901 թ. պրոֆեսորի պաշտոնով ռուսերենով քաղաքացիական իրավունք էր դասավանդում Բրյուսելի ազատ համալսարանում [18; 32, 501]:

Փարիզում Յ. Ս. Ղամբարյանը սկզբնական շրջանում պարապմունքներ էր անցկացնում Միջազգային դպրոցում, որը Ֆրանսիայի Հանրապետության ժողովրդական լուսավորության նախարար Լեոն Բուրժուայի նախաձեռնությամբ գործում էր 1900 թ. Փարիզում կազմակերպված համաշխարհային ցուցահանդեսին կից: Դպրոցի կառավարման կենտրոնական բյուրոյի անդամներ երկու տարով ընտրվեցին Լեոն Բուրժուան, պրոֆեսորներ ֆրանսիացի Վորմսը, կանադացի Մովերտը, ամերիկացի Էլլին, անգլիացի Գեդդեսը և Յու. Ս. Ղամբարյանը: Այդ միջազգային կազմակերպության շրջանակներում կազմակերպվեցին առաջին ազգային կոմիտեները: Ռուսական կենտրոն ստեղծելու գաղափարի հեղինակը ռուս փիլիսոփա պրոֆեսոր Ե. Վ. դե Ռոբերտին էր, իսկ գաղափարի անմիջական իրականացնողները Յու. Ս. Ղամբարյանը և Մ. Մ. Կովալսկին: Ռուսական բաժանմունքի նախագահ ընտրվեց Փարիզում մշտապես բնակվող, բժշկության ոլորտում Նոբելյան մրցանակի ապագա դափնեկիր, Լուի Պաստերի ինստիտուտի փոխտնօրեն, պրոֆեսոր Ի. Ի. Մեչնիկովը, փոխնախագահներ Յու. Ս. Ղամբարյանը և Մ. Մ. Կովալսկին [54, 147]: Ռուս պրոֆեսորներն այս դպրոցում կարդացին 51 դասախոսություն, որոնց երբեմն ներկա էր լինում Փարիզի ուսումնական հաստատություններում սովորող ռուսական ուսանողական ընկերությունը ներկայացնող մոտ 350 ունկնդիր: Նրանք մի քանի անգամ առաջարկեցին միջազգային դպրոցի դասախոսությունները դարձնել մշտական [37, 5]: Այդ առաջարկությունն արժանացավ Մ. Ս. Կովալսկու և Յու. Ս. Ղամբարյանի հավանությանը, քանի որ XIX դարի վերջին Եվրոպայում կտրուկ աճել էր հետաքրքրությունը հասարակական գիտությունների նկատմամբ, «պաշտոնական գիտությունը չէր բավարարում աճող պահանջմունքները, ուստի այդ խնդիրը ստանձնեցին ազատ դպրոցները» [25, 6; 54, 137]:

Փարիզի Հասարակական գիտությունների բարձրագույն ազատ դպրոցում դասավանդող Մ. Ս. Կովալսկին 1899 թ. վերջին Յու. Ս. Ղամբարյանին հղած նամակում առաջ էր քաշում այդ դպրոցում ռուսական պետական և քաղաքացիական իրավունքի մասին դասախոսություններ կարդալու գաղափար: Նրա կարծիքով, եթե «գործը հաջող ընթանա, ապա կարելի է այն ընդլայնել և կազմակերպել արտասահմանյան իրավագիտության ֆակուլտետի տեսակ» [12]:

Համոզվելով, որ Փարիզում սովորող ռուս ուսանողներին և Միջազգային դպրոցի ունկնդիրներին հետաքրքրում են ռուս պրոֆեսորների դասախոսությունները, Մ. Ս. Կովալսկին և Յու. Ս. Ղամբարյանը ֆրանսիական իշխանությունների թույլտվությամբ ձեռնամուխ եղան Հասարակական գիտությունների ռուսական բարձրագույն դպրոցի կազմակերպմանը: Յու. Ս. Ղամբարյանի վկայությամբ այդ նպատակով հավաքեցին երեք հազար ֆրանկ, որից 1500-ը Մ. Ս. Կովալսկու և իր անձնական նվիրատվությունն էր, իսկ մյուս կեսը ուսանողների ուսման վարձը [25, 3]: Այդ ֆինանսական միջոցներով սկսվեց դպրոցի առաջին ուսումնական տարին, որը բավարար չէր լիարժեք գործունեություն իրականացնելու համար: Վիճակը փրկեց դպրոցի առաջին ունկնդիրներից մոսկվացի մի կին, ով, ցանկանալով անհայտ մնալ, դպրոցին նվիրեց 30 հազար ֆրանկ: Ըստ Մ. Ս. Կովալսկու, այդ գումարը բավարար էր վեց տարի դպրոցի աշխատանքները կազմակերպելու համար [7; 32, 713]: Դպրոցի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1901 թ. նոյեմբերի 19-ին Փարիզում, Սորբոն փողոցի թիվ 16 շենքում, որը պատկանում էր Հասարակական գիտությունների ֆրանսիական ազատ բարձրագույն դպրոցին: Ֆինանսական ապահովվածությունը հնարավորություն տվեց Մ. Ս. Կովալսկու և Յու. Ս. Ղամբարյանի ստեղծած դպրոցին ունենալ

լիակատար ինքնավարություն, ինքնուրույն կառուցվածք և դառնալ Հասարակական գիտությունների ֆրանսիական ազատ բարձրագույն դպրոցի անդամ [45, 253]:

Հասարակական գիտությունների ռուսական բարձրագույն դպրոցը պետք է քաղաքականությունից դուրս լիներ, հանդես չգար Ֆրանսիայի Հանրապետության դեմ և կղերականություն չքարոզեր [7]: Ռուսական դպրոցի գործունեության նպաստելու համար ստեղծվեց հատուկ կոմիտե, որի կազմում ընդգրկվեցին մի քանի ազդեցիկ գործիչներ, այդ թվում հայտնի գիտնականներ Ա. Էսպինասը, Է. Ռեկյուն, Գ. Տարդը և ուրիշներ: Դպրոցի վարչական կազմի մեջ մտնում էին երեք ֆրանսիացի՝ գրող Պ. Ադանը, պատգամավոր Ա. Բերտոն և պրոֆեսոր Է. Դելբյեն: Ռուսական դպրոցը ձևավանդվեց վերահսկվում էր ֆրանսիական վարչակազմի կողմից, որի տեսուչը տարեկան մեկ կամ երկու անգամ ծանոթանում էր դասախոսական կազմի ցուցակի և դասավանդվող առարկաների ցանկի հետ [8]: Դպրոցի գործունեությունը մշտապես գտնվում էր ֆրանսիական և ռուսական ուստիկանության ուշադրության կենտրոնում:

Փարիզի ռուսական բարձրագույն դպրոցի ուսումնական ծրագիրն իրենից ներկայացնում էր մի քանի գիտական առարկաների միավորումը մեկ ամբողջության մեջ: Դասավանդումն իրականացվում էր երեք ֆակուլտետներում՝ փիլիսոփայության, իրավագիտության և բանասիրության: 1902-1903 ուսումնական տարում դպրոցում դասավանդում էին մեկ տասնյակից ավելի առարկաներ [25, 58]:

Ռուսական բարձրագույն դպրոցի կանոնադրության բնօրինակը չի պահպանվել: Ըստ ռուսական ուստիկանության դեպարտամենտի հատուկ բաժնի տվյալների՝ Փարիզի ռուսական բարձրագույն դպրոցը կառավարում էր պրոֆեսորների խորհուրդը, որն իր կազմից ընտրում էր 5 հոգուց բաղկացած Գործադիր խորհուրդ՝ նախագահ, երկու փոխնախագահ, գլխավոր քարտուղար և նրա օգնական: Դպրոցի խորհրդի նախագահ ընտրվել է պրոֆեսոր Ի. Ի. Մեչնիկովը, փոխտնօրեններ՝ Մ. Մ. Կովալսկին և Ե. Վ. դե Ռոբերտին, իսկ գլխավոր քարտուղար՝ Յու. Ս. Ղամբարյանը [45, 254]:

Ռուսական բարձրագույն դպրոցն ուներ նաև հոգաբարձուների խորհուրդ, որի կազմում 1903 թ. ընդգրկված էին 31 ճանաչված գիտության ներկայացուցիչներ և հասարակական գործիչներ: Նրանց թվում էին Լ. Բուրժուան, Բրյուսելի Նոր համալսարանի պրոֆեսոր, բելգիական խորհրդարանի անդամ Է. Վանդերվելդեն, Պաստերի ինստիտուտի տնօրեն Է. Դյուլոնը և ուրիշներ [11]:

Ռուսական բարձրագույն դպրոցում դասավանդում էին 50 դասախոսներ, որոնք ցերեկն անցկացնում էին գործնական պարապմունքներ և հատուկ կուրսեր, իսկ երեկոյան կարդում էին դասախոսություններ, որոնց երբեմն ներկա էր լինում 400-500 մարդ [10]:

Յու. Ս. Ղամբարյանը դպրոցում մշտապես դասավանդող պրոֆեսորներից մեկն էր, ով, Մ. Մ. Կովալսկու բնութագրմամբ, «չափազանց պահանջկոտ է իր և ուրիշների նկատմամբ [32, 231]»: Նա դասավանդում էր երեք դասընթաց՝ «Քաղաքացիական իրավունքի հանրագիտարան», «Ժամանակակից իրավունքում անհատական և կոլեկտիվ աշխատանքային պայմանագիր» և «Քաղաքացիական իրավունքի ուսումնասիրության պատմական ներածություն» [32, 512]:

Ռուսական դպրոցում, հիմնադիրներ Յու. Ս. Ղամբարյանից և Մ. Մ. Կովալսկուց բացի, դասավանդում էին նաև Ի. Ի. Մեչնիկովը, Ե. Վ. դե Ռոբերտին, Մոսկվայի կայսերական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում տարբեր տարիներ դասավանդած այլ պրոֆեսորներ, գիտական և քաղաքական տարբեր հայացքներ ունեցող ճանաչված մի շարք դեմքեր: Մ. Մ. Կովալսկու իրավերով տարբեր տարիներ դպրոցում դասավանդել են հայտնի պատմաբաններ Վ. Ի. Կարենը, Պ. Գ. Վինոգրադովը, Վ. Ի. Լուչիցկին, Ա. Ս. Տրաչնսկին, քաղաքատնտեսություն և վիճակագրություն դասավանդող Ա. Ի. Զուպրովը, Ն. Ս. Կաբլովիովը, պրոֆեսոր Պ. Գ. Վինոգրադովը, տնտեսագետ Մ. Ի. Տուգան-Բարանովսկին, մատենագետ Ա. Ի. Վենգերովը, ազգագրագետ Ֆ. Կ. Վոլկովը, բանասեր և գրական

նագետ Ե. Վ. Անիչկովը, «Ազատագրություն» ամսագրի խմբագիր Պ. Ս. Ստրուվեն, իրավաբաններ Ա. Ա. Իսանը, Մ. Ա. Ռայսները և ուրիշներ: Կարճ ժամանակ դպրոցում դասավանդել են նաև ռուս գրողներ Մ. Ա. Վոլոշինը, Կ. Դ. Բալմոնտը, Վ. Ի. Իվանովը [45, 254], ֆրանսիացի ճանաչված պվոնագետներ Պ. Բուայոն, Գ. Լերուա-Բալյոն, Է. Ռեկյուն, Մ. Տարդը, Մ. Մոսսան, Զ. Սորելը և ուրիշներ:

1901-1902 թթ. ռուսական դպրոցում հիմնական հիմունքներով դասավանդում էին 13 դասախոսներ, 6 հրավիրյալ դասախոսներ դասավանդում էին լեզուներ, 32 հրավիրյալներ վարում էին հատուկ կուրսեր և գործնական պարապմունքներ, որոնցից 20-ը՝ ռուսերեն, իսկ 12-ը՝ ֆրանսերեն լեզուներով [25, 24]:

Ռուսական բարձրագույն դպրոցում, որպես հրավիրյալ դասախոսներ, ժամանակ առ ժամանակ դասախոսություններ էին կարդում նաև քաղաքական տարբեր կուսակցությունների ղեկավարներ և անդամներ: Նրանցից էին Ռուսաստանում սահմանադրական դեմոկրատական կուսակցության հիմնադիր անդամներ, Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր, Պետական առաջին Դումայի ապագա նախագահ Մ. Ա. Մուրոմցևը, պատմաբան, փիլիսոփա, սոցիոլոգ, պրոֆեսոր Պ. Բ. Ստրուվեն, իրավաբան, առաջին Դումայի անդամ Մ. Ս. Վինավերը, մարքսիզմի հետևորդ, փիլիսոփա, պատմաբան Գ. Վ. Պլեխանովը [43, 191; 35, 289]:

Էսեռների կուսակցության ապագա առաջնորդ Վ. Վ. Զեռնովը 20 ժամ դասախոսություն կարդաց դասակարգային պայքարի մասին: Ռուսական դպրոցի ղեկավարության վրա ճնշում գործադրելով՝ 1903 թ. փետրվարի 23-26-ին դպրոցի ունկնդիրների համար Փարիզի Կոլեժ դե ֆրանս ուսումնական հաստատության շենքում «Մարքսիստական հայացք Եվրոպայում և Ռուսաստանում ագրարային հարցի վրա» թեմայով չորս դասախոսությամբ հանդես եկավ բոլշևիկ Վ. Ի. Լենինը՝ Իլյին ծածկանունով [53, 15-30]: Դրան դեմ էր Յու. Ս. Ղամբարյանը, ով նրա դասախոսությունից մեկ ժամ առաջ դպրոցի տեխնիկական քարտուղար Մ. Ա. Ինգգերին ծայր աստիճան վրդոված հորդորում էր չեղարկել դասախոսությունը պատճառաբանելով, որ «դպրոցի դասախոսներն ու ուսանողները լեզու մարդիկ են և վերադառնալով Ռուսաստան իրենց լրջորեն վտանգելու են, եթե դպրոցում որպես դասախոս հանդես գա հեղափոխական Լենինը» [50, 34]:

Դպրոցի ունկնդիրների թվում քիչ չէին քաղաքական կուսակցությունների անդամները: Նրանցից էին «Իսկրա» թերթի խմբագրության անդամ Լ. Դ. Տրոցկին [46, 149-150], հրեական «Բունդ» կուսակցության ղեկավարներից Դ. Ա. Պետրովսկին, բոլշևիկներ Արտյոմը (Ֆ. Ա. Սերգեն), Ա. Վ. Լուինաչարսկին և ուրիշներ [7]:

Ռուսական դպրոցի գործունեությունը պարբերաբար լուսաբանում էին ռուսական առաջատար «Русские ведомости», «Русское слово», «Право», «Вестник воспитания» և այլ պարբերականներ:

1903 թ. դրությամբ ռուսական դպրոցի գործերը վատ չէին ընթանում, դպրոցն ուներ մոտ 400 ունկնդիր և բավարար ֆինանսական միջոցներ: Միակ մտահոգող խնդիրը մշտական դասավանդող պրոֆեսորների պակասն էր, որը անհանգստացնում էր Մ. Ս. Կովալսկուն: Նա իր ընկեր Մ. Ի. Չուպրովին գրում էր, որ այդ պարագայում Յու. Ս. Ղամբարյանը վատառողջ է, բուժվում է և միայն մեկ դասախոսություն է կարդում [32, 512]: Դպրոցի հիմնադիրները, դասախոսելուց գատ, գիտական ակտիվ գործունեություն էին ծավալում: 1904 թ. նրանք գիտական հոդվածների ժողովածու պատրաստեցին, որտեղ ընդգրկվեց նաև Յու. Ս. Ղամբարյանի հոդվածը, ով Մ. Ս. Կովալսկու խնդրանքով դարձավ Մոսկվայում հրատարակության պատրաստվող ժողովածուի և գրադարանի 4 հրատարակիչներից մեկը [17; 19]:

1904-1905 թթ. Փարիզի ռուսական բարձրագույն դպրոցը նկատելիորեն քաղաքականացվել էր՝ շնորհիվ դպրոցում դասավանդող քաղաքական գործիչների և հեղափոխական հայացքներ կրող ռուս ուսանողության, որոնց հակասությունները դպրոցի պրոֆեսորների

հետ գնալով խորանում էին և դարձան սովորական երևույթ: Պրոֆեսորներն առաջվա նման չէին ցանկանում նրանց դասավանդել, իսկ ուսանողների քանակը թեև ավելացել էր, բայց նրանք նախկին ոգևորությամբ չէին սովորում և ավելի շատ էին հետաքրքրվում քաղաքական հարցերով: 1904 թ. ապրիլի 24-ին Մ. Մ. Կովալսկին պրոֆեսոր Ա. Ի. Չուպրովին գրած նամակում դժգոհում էր, որ դասավանդող «պրոֆեսորները քիչ են, եղածներն էլ ալարկոտ են, վախկոտ կամ էլ կորցրել են հավատը գործի նկատմամբ» [32, 518]:

1905 թ. հունվարին Ռուսաստանում հեղափոխության բռնկումից հետո դպրոցի հեղափոխական տրամադրություններ ունեցող ունկնդիրները հակացարական ցույցեր կազմակերպեցին՝ դասախոսներից պահանջելով միանալ իրենց, բայց մերժում ստացան: Նրանք Մ. Մ. Կովալսկուն և մյուս պրոֆեսորներին անստորագիր սպառնալից գրություններ ուղարկեցին: Խարկովի բանկը հրաժարվեց Մ. Մ. Կովալսկուն անձնական ֆինանսները փոխանցել Փարիզ՝ ռուսական դպրոցի կարիքները հոգալու համար [13]: Ռուսական իշխանությունները դպրոցի պրոֆեսորներին սպառնացին կամ անհապաղ վերադառնալ Ռուսաստան, կամ մնալ Փարիզում որպես վտարանդի [9]: Պրոֆեսորների մեծ մասը հրաժարվեց դպրոցում դասավանդելուց և վերադարձան Ռուսաստան:

1905 թ. դեկտեմբերի 3-ին Նիկոլայ II-ը հաստատեց լուսավորության նախարար Ի. Ի. Տոլստոյի առաջարկությունը՝ Ռուսաստանում ազատ ուսումնական հաստատություններ բացելու մասին, որոնք միջին կրթությունից բարձր կրթություն էին տալու: Այս պարագայում Փարիզի ռուսական բարձրագույն դպրոցի գոյությունը դարձավ անիմաստ, որը դպրոցի պաշտոնական հայտարարության համաձայն 1906 թ. հունվարին փակվեց պրոֆեսորների և ուսանողների միջև քաղաքական տարաձայնությունների պատճառով: Դպրոցի փակման մասին Մ. Մ. Կովալսկին իր ընկեր Ա. Ի. Չուպրովին գրում էր. «Դպրոցը փակվել է: Հիմա ոչ-ոք չի ուզում սովորել և բոլորը զբաղված են միայն նրանով, որ այլոց մեջ ներդնեն զրպարտության և բռնության համոզմունքը: Կարմիր խուլիգաններն արժանի են սներին»:

Յ. Ս. Ղամբարյանի մատոնական գործունեությունը

Ֆրանսիայում ապրած տարիներին Մ. Մ. Կովալսկին լավ հարաբերություններ ուներ ֆրանսիական մատոնների հետ, որոնք ստանձնել էին ռուսական բարձրագույն դպրոցի հովանավորությունը: Նա Փարիզում անդամագրվել էր ռուսական «Կոսմոս» № 288 օթյակին, որը 1887 թ. հունիսի 25-ին հիմնել էր ռուս էլեկտրատեխնիկ, գյուտարար և գործարար Պ. Ն. Յաբլոչկովը [31, 66-76]: 1898 թ. դեկտեմբերի 15-ին «Կոսմոս» № 288 օթյակի Վարպետ-տեղապահ ընտրվեց Մ. Մ. Կովալսկին [41, 1205, 1207, 1210; 31, 66-76; 30, 482; 39, 244]: Նրա և «Կոսմոս» օթյակի անդամ Ե. Վ. դե Ռոբերտիի մտերմությունը Փարիզում բնակվող մի խումբ հայ վտարանդի մտավորականների հետ իր ազդեցությունն ունեցավ նրանց մատոնական կողմնորոշման վրա:

Ֆրանսիական «Սյուրտե ժեներալ» հատուկ ծառայության արխիվները վկայում են, որ Փարիզում գտնված տարիներին տեղի են ունեցել Յու. Ս. Ղամբարյանի առաջին առնչությունները և շփումները վտարանդի ռուս մատոնների հետ: 1905 թ. մայիսի 16-ին «Կոսմոս» № 288 օթյակում Մ. Մ. Կովալսկու գլխավորությամբ Յու. Ս. Ղամբարյանը, բժշկագիտության դոկտոր Իվան Զախարի Լոռիս-Մելիքովը և ռուսական բարձրագույն դպրոցի պրոֆեսոր, կովկասագետ, Միխայիլ (Միքայել) Իվանի Թամամշյան (Թամամշյան) ձեռնադրվեցին առաջին աստիճանի մատոն [39, 199, 215, 235; 30, 122; 56]: Այդ մասին ռուսական իշխանություններին տեղեկություններ էր տալիս նաև թոշակի անցնելուց հետո Փարիզում բնակություն հաստատած 1902-1905 թթ. ռուսական ոստիկանության արտասահմանյան դեպարտամենտի ղեկավար Լ. Ա. Ռատսկը: Նա գրում էր, որ վերոհիշյալ հայ պրոֆեսորներից բացի, «Կոսմոս» № 288 օթյակին 1905 թ. անդամագրվել են նաև պրոֆեսորներ պատմաբաններ Ս. Ս. Տրաչևսկին և Ե. Վ. Անիչկովը, գրականագետ Ա. Վ. Ամֆիտատրովը [40, 678]:

Ռուս գրող Մ. Ա. Վոլոշինի վկայությամբ՝ վերը նշված մարդիկ ձեռնադրումից մեկ շաբաթ առաջ Մ. Մ. Կովալսկու բնակարանում «Կոսմոս» № 288 օթյակի աթոռի վարպետին

մատոնական քննություն հանձնեցին՝ պատասխանելով նրա բազմաթիվ հարցերին [23, 107-108]: Ա. Վ. Ամֆիտեատրովը հետազայում իր հուշերում գրում էր, որ Յու. Ս. Ղամբարյանին, Ի. Զ. Լոռիս-Մելիքովին, Մ. Ի. Թամամշևին, իրեն և որոշ ժամանակ անց հայտնի փաստաբան Ե. Վ. Գեդրինին «մատոնականացրեց» Մ. Ս. Կովալսկին [42, 62]:

1906 թ. հունվարի 30-ին, «Կոսմոս» № 288 օրթյակում Յու. Ս. Ղամբարյանը, Ի. Զ. Լոռիս-Մելիքովը և Մ. Ի. Թամամշևը ձեռնադրվեցին նախ՝ երկրորդ, ապա՝ երրորդ աստիճանի մասոն: 1906 թ. հունիսի 20-ին Յու. Ս. Ղամբարյանի և Ի. Զ. Լոռիս-Մելիքովի երաշխավորությամբ «Կոսմոս» օրթյակի անդամ դարձավ ռուս վտարանդի պատմաբան, գրականագետ և քննադատ Եվգենի Վասիլևիչ Անիչկովը [56]:

1905 թ. դեկտեմբերին հայրենիք վերադարձած Մ. Ս. Կովալսկին Պետերբուրգի պոլիտեխնիկական ինստիտուտում ստանձնեց պրոֆեսորի պաշտոն: 1906 թ. երկրորդ կեսին Ռուսաստան վերադարձած Յու. Ս. Ղամբարյանը նույն ինստիտուտում մինչև 1917 թ. զբաղեցրեց քաղաքացիական իրավունքի պրոֆեսորի պաշտոնը: Այդ տարիներին նա չափազանց ճանաչված էր որպես դասախոս և բարձր հարգանք ու հեղինակություն էր վայելում ուսանողների շրջանում: Նա շարունակում էր մտերմությունը Մ. Ս. Կովալսկու հետ, ով բավական հանրաճանաչ գիտնականի համբավ ուներ ոչ միայն Եվրոպայում, այլև նույնքան հանրաճանաչ էր նաև Պետերբուրգում: Դա պայմանավորված էր նրա «հսկայական խորագիտակությամբ, համարձակ, անկախ բնավորությամբ, անձնական բացառիկ հմայքով և մարդկային բարձր որակներով, մարդկանց հետ շփվելու աներևակայելի շնորհով» [32, 10]: Կարճ ժամանակում Մ. Ս. Կովալսկին դարձավ «կենտրոն, որին ձգտում էին տարբեր դիրքի, համոզմունքների ու մասնագիտության տեր մարդիկ» [32, 50]:

Ռուս սոցիոլոգ, պատմաբան Մ. Ի. Տուգան-Բարանովսկու բնութագրմամբ՝ Մ. Ս. Կովալսկին «կատարյալ բացառիկ բարոյական կերպար էր» [33, 51]: Նրա մարդկային ու ընկերական բարձր որակների մասին վկայում է հետևյալ փաստը: 1906 թ. վերջին ռուսական իշխանությունները պատրաստվում էին Յու. Ս. Ղամբարյանի բարեկամներից մեկին, ով մեղադրվում էր Մոսկվայում ապստամբության օրերին թուցիկներ տարածելու մեջ, քստորել Տրուխանովսկի երկրամաս: Մ. Ս. Կովալսկին միջնորդեց ոստիկանության դեպարտամենտի ադմինիստրատոր, պետական խորհրդական Մ. Ի. Տրաչկովսկուն, որպեսզի Յու. Ս. Ղամբարյանի բարեկամին քստորի փոխարեն ուղարկեն արտասահման՝ կրթությունը շարունակելու, ով նրա միջնորդությունը հարգեց [32, 381]:

Ռուսական հեղափոխության օրերին ծայրահեղ քաղաքականացած հասարակությունը ձգտում էր ստանալ կյանքի վերակառուցման գործնական դեղատոմսեր, տեսնել սոցիալական արդարություն և մարդասիրական քայլեր: Այս պայմաններում Մ. Ս. Կովալսկին իր հավատարմի ընկերներ, «Կոսմոս» օրթյակի անդամներ Յու. Ս. Ղամբարյանի, Ի. Զ. Լոռիս-Մելիքովի և Ե. Վ. դե Ռոբերտի հետ, ովքեր 1906 թ. վերադարձել էին Ռուսաստան, ձեռնամուխ եղավ մատոնության գաղափարների տարածմանն ու օրթյակների կազմավորմանը: Չնայած ռուսական լիբերալների շրջանում մատոնության մասին եղած նախապաշարումներին, Մ. Ս. Կովալսկին կարողացավ ազատ որմնադիրների շարքերում ընդգրկել ոչ միայն մտավորականությանը, որը պատրաստ էր օրթյակում լուսավորչական աշխատանք տանել, այլև քաղաքական-հասարակական մի խումբ գործիչների: Նրանցից ոմանք մասոն դարձան «բացառապես Մ. Ս. Կովալսկու հմայքի պատճառով, ով հսկայական հեղինակություն էր վայելում ռուսական և արտասահմանյան շրջանակներում, որի ետևից կարելի էր գնալ ամեն տեղ, որտեղ նա կկանչեր» [42, 62]:

Յու. Ս. Ղամբարյանը Փարիզից բացակայելու պատճառով 1907 թ. «Կոսմոս» օրթյակի գործունեությանը չմասնակցեց, բայց մինչև 1908 թ. շարունակեց մնալ օրթյակի անդամ [56]: Նրա մասոնական գործունեությունը ինչպես Փարիզում, այնպես էլ Ռուսաստանում անխզելիորեն կապված է Մ. Ս. Կովալսկու հետ: Վերջինս «Ֆրանսիայի Մեծ Արևելք Օրթյակից» ստացել էր Ռուսաստանում մատոնական օրթյակներ հիմնելու իրավունք: Նա իրավամբ հա-

մարվում է XX դարի սկզբում Ռուսաստանում մասոնության տարածման գլխավոր դեմքը, իսկ Յու. Ս. Ղամբարյանը՝ նրա աջակիցը, գաղափարակիցը, համախոհը և գործընկերը: Այս հարցում նա մշտապես Մ. Մ. Կովալևսկու կողքին էր, ով Ռուսաստանում հիմք դրեց քաղաքական մասոնությանը:

1906 թ. փետրվարի 18-ին Մ. Մ. Կովալևսկին Պետերբուրգում հիմնեց «Страна» ամենօրյա հասարակական-քաղաքական թերթ, որի խմբագրական խորհրդի անդամ դարձան նրա մտերիմ ընկերներ Յու. Ս. Ղամբարյանը, Ի. Ի. Իվանյուկովը և Դեմոկրատական բարեփոխումներ կուսակցության ղեկավարներից գրող, պատվավոր ակադեմիկոս Կ. Կ. Արսենը [32, 347]: Ապրիլի 27-ին Մ. Մ. Կովալևսկին «Страна» թերթի խմբագրությունում, որպես Փարիզի «Կոսմոս» № 288 և «Հավատարիմ բարեկամներ» օթյակների Վարպետ-տեղապահ, Ե. Ի. Կեդրինի երաշխավորությամբ մասոն ձեռնադրեց հայազգի իշխան, կադետների կուսակցության անդամ Դավիթ Օսիպի Բերությունի (1859-1923), ով հետագայում էական դեր խաղած քաղաքական մասոնության տարածման գործում:

1906 թ. նոյեմբերի 15-ին Պետերբուրգում Մ. Մ. Կովալևսկու նախաձեռնությամբ հիմնվեց ռուսական քաղաքական մասոնության առաջին օթյակը՝ «Բևեռային աստղը», որի առաջին անդամները հայտնի մտավորականներ էին և ներկայացնում էին կադետների կուսակցությունը [30, 216; 21, 50; 35, 290]: «Բևեռային Աստղ» օթյակի պաշտոնական գրանցումը տեղի ունեցավ «Ֆրանսիայի Մեծ Արևելքի» օթյակի արտոնագրով, որը շնորհվել էր 1908 թ. մայիսի 9-ին: Օթյակն այդ պահին ուներ 13 անդամ [21, 51], որի հիմնադիրներից Մ. Մ. Կովալևսկին, Ե. Վ. Անիչկովը և Ի. Զ. Լոռիս-Մելիքովը միաժամանակ «Ֆրանսիայի Մեծ Արևելք Օթյակի» միության անդամներ էին [43, 208-210; 41, 290-291; 58]: 1907 թ. «Բևեռային աստղ» օթյակին անդամագրվեց նաև Յու. Ս. Ղամբարյանը [38, 129-130; 40, 199; 30 122; 58]: 1910 թ. փետրվարին մասոնական օթյակների արտակարգ ժողովը կասեցրեց «Բևեռային աստղ» օթյակի գործունեությունը [38, 129-130; 43, 208-210; 42, 290-291; 35, 290]:

1906 թ. Պետերբուրգում Մ. Մ. Կովալևսկու նախաձեռնությամբ հիմնվեց «Ֆենիքս» օթյակը, որը գործում էր «Ֆրանսիայի Մեծ Օթյակի» հետ համագործակցված և ղեկավարվում էր Հնագույն և Ընդունված Շոտլանդական Կանոնադրությամբ: Օթյակի Գերհարգելի Վարպետը Մ. Մ. Կովալևսկին էր, իսկ հիմնադիր 5 անդամներից մեկը՝ Յու. Ս. Ղամբարյանը [57]:

1908 թ. փետրվարի 17-ին, Մոսկվայում «Ֆրանսիայի Մեծ Արևելքի» անդամներ, բարձրաստիճան մասոններ Գաստոն Բուշեի և Բետրան Սենշովի մասնակցությամբ Մ. Մ. Կովալևսկին հիմնեց «Վերածնունդ» օթյակը: Օթյակի հիմնադրման մասին արձանագրությունը ստորագրեցին Մ. Մ. Կովալևսկին, Ե. Դ. դե Ռոբերտին, Ն. Ն. Բաժենովը, Մ. Կոտլյարևսկին, Վ. Ա. Մակլակովը, Վ. Ի. Նեմիրովիչ-Դանչենկոն, Ե. Վ. Անիչկովը, Ի. Զ. Լոռիս-Մելիքովը և Յու. Ս. Ղամբարյանը [43, 207; 30, 122; 35, 291-292; 21, 50-54; 55]: «Վերածնունդ» օթյակն ուներ 25 անդամ և գործեց մինչև 1910-1911 թթ.:

1908 թ. մայիսի 8-ին կայացած ռուս մասոնների ընդհանուր ժողովում Մ. Մ. Կովալևսկին իր համախոհներ Յու. Ս. Ղամբարյանի, Ե. Վ. Անիչկովի և Ե. Վ. դե Ռոբերտիի հետ, Մոսկվայի «Ազատագրում» օթյակի ղեկավարների հետ գաղափարական տարաձայնությունների պատճառով, լքեցին «Բևեռային աստղ» օթյակը և հիմնեցին իրենց «Կոսմոս» օթյակը [38, 151; 35, 291]: Դրանից հետո Մ. Մ. Կովալևսկին, Ե. Դ. դե Ռոբերտին, Ի. Զ. Լոռիս-Մելիքովը և Յու. Ս. Ղամբարյանը դադարեցին էական դեր խաղալ ռուսական մասոնությունում:

1912 թ. ամռանը Մոսկվայում կայացած համաժողովում ստեղծվեց «Ռուսաստանի ժողովուրդների Մեծ Արևելք» կազմակերպություն, որի անդամ դարձավ նաև Յու. Ս. Ղամբարյանը [30, 122, 139; 35, 284-288, 291-293; 43, 263-264]: Դա ռուսական մասոնական վերջին կազմակերպությունն էր, որի հետ Յու. Ս. Ղամբարյանն առնչություն ուներ: Այս կազմակեր-

պուլյունն իր գործունեությունը դադարեցրեց 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից հետո: Մասնաշրջանի քաղաքականացման և կուսակցականացման տարիներին Յու. Ս. Ղամբարյանը մասնակցական ակտիվ գործունեություն չի ծավալել:

1913 թ. ռուսաց կայսեր հրամանագրով Յու. Ս. Ղամբարյանին շնորհվեց պետական խորհրդականի աստիճան: 1917 թ. մայիս-նոյեմբերին նա Կառավարող սենատի առաջին դեպարտամենտի սենատոր էր: Չնայած դրան՝ նա քաղաքականությամբ չէր զբաղվում և երբևէ որևէ կուսակցության անդամ չդարձավ: Նրա քաղաքականացված չլինելու մասին ժամանակին ուսուցիկանության դեպարտամենտի տնօրեն Ա. Ա. Լոպուխինը Մ. Ս. Կովալևսկուն ասել էր. «Ղամբարովը քաղաքական հարաբերություններում վտանգավոր չէ, բայց ապաշնորհ է» [16]:

Յու. Ս. Ղամբարյանը միայն մեկ անգամ կարծիք արտահայտեց քաղաքական հարցերի մասին՝ այն էլ 1904 թ. Սանկտ-Պետերբուրգում հրատարակած «Քաղաքական կուսակցություններն անցյալում և ներկայումս» բրոշյուրում:

Յու. Ս. Ղամբարյանի գիտական գործունեությունը

«Ռուսաստանի ժողովուրդների Մեծ Արևելք» կազմակերպության փակվելուց հետո Յ. Ս. Ղամբարյանը հետագա տարիներին զբաղվում էր բացառապես գիտական և դասախոսական գործունեությամբ: 1916 թ. նա մասնակցեց Մոսկվայում լույս տեսնող հայկական կյանքը լուսաբանող «Армянский вестник» հասարակական-քաղաքական և գրական ամսագրի հրատարակմանը, իսկ 1919-1920 թթ. «Գրանատ» հանրագիտարանային բառարանի խմբագրական խորհրդի անդամ էր:

Յու. Ս. Ղամբարյանը երկար տարիների դասախոսական աշխատանքը հաջողությամբ համատեղում էր գիտական ակտիվ գործունեության հետ: 1879-1880 թթ. նա իր թեկնածուական ատենախոսությունը՝ «Կամավոր և անհատույց գործունեությունը ուրիշի շահում պայմանագրային հարաբերություններից դուրս և օրենքով չնախատեսված», հրատարակեց առանձին գրքի տեսքով, երկու թողարկումով, որն արժանացավ մասնագիտական հանրության ուշադրությանը: Այս աշխատությունում նա ներկայացնում էր քաղաքացիական իրավունքի սոցիալական կամ սոցիոլոգիական հիմնավորման փորձը:

Յու. Ս. Ղամբարյանը սոցիալական իրավագիտության գիտական ուղղության ներկայացուցիչ էր, իրավունքի ուսումնասիրության պատմահամեմատական մեթոդի կողմնակից: Նրա գիտական հետաքրքրությունների շրջանակը պետության և իրավունքի, ինչպես նաև քաղաքացիական իրավունքի հիմնախնդիրներն էին: Գերմանիայում ուսումնառության ժամանակ Յու. Ս. Ղամբարյանի գիտական աշխարհայացքի ձևավորման վրա մեծ ազդեցություն էր թողել գերմանացի ճանաչված իրավագետ Ռուդոլֆ Ֆոն Իերինգի (1818-1892) տեսությունը, ով ձգտում էր միավորել քաղաքական-իրավական տեսությունը սոցիոլոգիական, հոգեբանական և այլ հայեցակարգերի հետ [51, 110-115]: Նա ռուսական քաղաքացիական իրավունքի ոլորտի այն եզակի դեմքերից մեկն էր, ով ռուս իրավագետներին հաղորդակից դարձրեց Արևմուտքի իրավագիտական մտքի նոր հոսանքների հետ, որի առաջամարտիկը Ռ. Իերինգն էր: Նրա գաղափարների որոշակի ազդեցության տակ Յու. Ս. Ղամբարյանը 1879 թ. «Юридический вестник» ամսագրում հրատարակեց «Հասարակական շահը քաղաքացիական իրավունքում», «Ձևական և անլուրջ գործարքների տեսություն», «Մեփականության իրավունքը հասարակական իրավունքի տեսանկյունից», «Պարտավորվածությունը հասարակական իրավունքի տեսության տեսանկյունից» հոդվածները:

Մոսկվայի համալսարանում դասավանդելու տարիներին Յու. Ս. Ղամբարյանը հրատարակեց «Քաղաքացիական գործընթաց: Դասախոսությունների կուրս» ուսումնական ձեռնարկը, «Negotiorum gestio ինստիտուտի սոցիոլոգիական հիմքերը», «Քաղաքացիական իրավունք» աշխատությունները: 1897 թ. նրա խմբագրությամբ լույս տեսավ գերմաներենից թարգմանված գերմանացի իրավաբան Ֆ. Ռեզելսբերգերի «Հնդհանուր ուսմունք իրավունքի

մասին» մենագրությունը, իսկ 1899 թ.՝ «Հասարակական-իրավաբանական գիտությունների ժողովածու»:

«Քաղաքացիական իրավունք: Իրերի իրավունք» աշխատությունում Յու. Ս. Ղամբարյանը, հակադրվելով ավստրիացի Ի. Ունգերի և գերմանացի Բ. Վինգշեյդի տեսակետներին, գրում էր. «Իրերի իրավունքը իրավաբանական նորմերի ամբողջություն է, որը կարգավորում է մարդկանց փոխհարաբերությունները նրանց կողմից իրերի կամ ֆիզիկական աշխարհի առարկաներին տիրելու հարցում» [24, 3]:

1899 թ. լույս տեսած «Իրավունքը նրա հիմնական պահերում» բավական ծավալուն հոդվածում Յու. Ս. Ղամբարյանը քննադատական մոտեցում դրսևորեց Ռ. Ֆոն Իերինգի աշխատություններում առաջ քաշված տեսական այն դրույթների նկատմամբ, որոնք չէին համապատասխանում իրավունքի վերաբերյալ նրա մոտեցումներին ու հայացքներին: Նա իրավունքի մի շարք հարցերի և դրսևորումների վերաբերյալ սեփական մոտեցում արտահայտեց՝ փորձելով միավորել տարբեր դպրոցների հետազոտությունների արդյունքները և առավել ճշգրիտ սահմանազատել նյութական և ձևական պահերը իրավունքի սահմանման հարցում:

Փարիզի ռուսական բարձրագույն դպրոցում «Սեփականության իրավունքը» դասընթացը կարդալիս Յու. Ս. Ղամբարյանը քննադատում էր XIX դարի երկրորդ կեսին Եվրոպական իրավագետների, տնտեսագետների և փիլիսոփաների շրջանում տարածված պատկերացումները հասարակության զարգացման գործում մասնավոր սեփականության բացառիկ նշանակության մասին: Նրա կարծիքով սեփականության կոնկրետ ձևերը «բազմաձև են հասարակական բոլոր հաստատությունների նման, ըստ երկրների, ռասաների, աշխատանքի տեսակի և այլն, այնպես որ նրանցից յուրաքանչյուրի մասին չի կարելի խոսել այլ կերպ, քան տվյալ պատմական պայմանների և տարբեր հասարակական վիճակների հետ կապով» [27, 442]:

Այստեղից Յու. Ս. Ղամբարյանը եզրակացնում էր, որ մասնավոր սեփականությունը կարող է ընկած լինել կոնկրետ տնտեսական և իրավական կարգի հիմքում և չի հանդիսանում տնտեսավարման ունիվերսալ գործիք, մինչդեռ կոլեկտիվ սեփականությունը բացահայտում է նկատելի միտում դեպի ուժեղացում, որը հանդես է գալիս որպես կապիտալի միավորում տարբեր ընկերությունների և «հասարակական սեփականության այլ ձևերի տեսքով» [27, 444]: Այս դատողությունների մասին Մ. Մ. Կովալևսկին հետագայում իր հուշերում գրում էր, որ իր ընկեր Յու. Ս. Ղամբարյանը «դրսևորում էր որոշակի հակում դեպի սոցիալիզմը» [32, 347]:

1903 թ. Յու. Ս. Ղամբարյանը հրատարակեց «Սեփականության իրավունքը» և «Հասարակական շահի քաղաքացիական իրավունքում» ուշագրավ հոդվածները, 1904 թ.՝ «Քաղաքական կուսակցությունները անցյալում և ներկայումս» աշխատությունը: 1902 թ. նա ֆրանսերենից թարգմանեց, խմբագրեց և ծավալուն առաջաբանով հրատարակեց Պոլ Ժիդի՝ «Կանանց քաղաքացիական իրավունքները: Հնագույն ժամանակներից սկսած» աշխատությունը: 1903 թ. Յու. Ս. Ղամբարյանը անգլերենից թարգմանեց Ա. Վ. Ֆոնբլանկի՝ «Անգլիայի կառավարումը: Բրիտանական կայսրության սահմանադրության, կառավարման և օրենքների դասագիրք»-ը, որի ներածություն գրեց Մ. Մ. Կովալևսկին, իսկ առաջաբանն ու ծանոթագրությունները՝ ճանաչված պատմաբան, պրոֆեսոր Ա. Ս. Տրաչևսկին:

Պետերբուրգի պոլիտեխնիկական ինստիտուտում դասավանդելու տարիներն առավել արգասաբեր էին Յու. Ս. Ղամբարյանի գիտական գործունեության համար: 1907 թ. նա հրատարակեց «Ժամանակակից իրավագիտության խնդիրները», «Արտադրությունը և նրա երաշխիքները», 1910 թ.՝ «Ազատությունը և նրա երաշխիքները», «Հանրաձանաչ սոցիալ-իրավագիտական ակնարկներ» ուսումնասիրությունները: 1910 թ. նա գրեց «Արևմտյան Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի Միացյալ Նահանգների պետական կարգը և քաղաքական կուսակցությունները» ժողովածուի առաջաբանը:

«Ժամանակակից իրավագիտության խնդիրները» ծավալուն հոդվածում Յու. Ս. Ղամբարյանը քննարկում էր արդարադատության հանրաճանաչության, սոցիալական արդարադատության, իրավունքի գիտական ուսումնասիրության անհրաժեշտության և սոցիոլոգիայի նկատմամբ իրավագիտության վերաբերմունքի հարցերը [48, 49-82]:

Յու. Ս. Ղամբարյանի ամենաճանրակշիռ և գիտական մեծ պահանջարկ ունեցող ուսումնասիրությունը 1911 թ. լույս տեսած «Քաղաքացիական իրավունքի կուրս» աշխատությունն է, որը ժամանակին բարձր էր գնահատում Ս. Ս. Կովալսկին: Նրա բնութագրմամբ՝ «Ղամբարովը... անընդհատ շտկում է քաղաքացիական իրավունքի մասին իր աշխատությունը, որը պահանջում է առնվազն երեք հատոր: Նրանում այնքան շատ համեմատական նյութ կա և որքան խորն է հասկանում այդ ցիվիլիստը իր առաջ քաշած հարցերում, որոնք կապված են քաղաքացիական էվոլյուցիայի հետ» [32, 231-232]:

Այս աշխատությունում Յու. Ս. Ղամբարյանը ներառել է ոչ միայն ռուսական, այլև համընդհանուր քաղաքացիական իրավունքը: Նա գտնում էր, որ քաղաքացիական իրավունքի սահմանափակումը միայն ազգային օրենսդրությունով հնարավորություն չի տալիս խորությամբ ճանաչել այն և զրկում է հնարավորությունից խորանալու ոչ միայն իր, այլև ցանկացած օրենսդրությունում, տարբերել դրա կենսական մասը մեռած կամ մահացող մասից և մոտենալ իրավունքի սոցիալական խնդրի ճանաչմանը:

Յու. Ս. Ղամբարյանը համաձայնվում էր Ռ. Ֆոն Իերինգի հետ այն հարցում, որ աշխարհի ոչ մի ժողովուրդի օրենսդրությունը չի կարող հասկանալի լինել առանց այդ ժողովրդի գործնական կյանքի ուսումնասիրության: Գերմանացի իրավագետի նման նա իրավունքը համարում էր հասարակության գործնական պահանջների արտահայտությունը՝ գտնելով, որ «իրավագիտական հասկացություններն իրենցից ներկայացնում են ոչ թե պարզ տրամաբանական կատեգորիաներ, այլ կենդանի պատմական կազմավորումներ, որոնք ծագում են սոցիալական հարաբերություններից և միայն դրանց հետ տիրապետում են իրավագիտական դիալեկտիկայի» [26, 6-7]:

Յու. Ս. Ղամբարյանը միաժամանակ հակադրվում էր Ռ. Իերինգին՝ նրա «իրատեսական» ուղղությունում մտցնելով իրական կյանքին մոտ լինելու պահանջ: Նա գտնում էր, որ հարկավոր է քիչ հենվել վերացական դատողությունների վրա և իրավունքի ընկալման հարցում սահմանում էր հասարակական հետաքրքրության նոր տարր: Նա առաջ քաշեց այն միտքը, որ իրավունքի կերտման հարցում ընդհանրապես և մասնավոր ու քաղաքացիական իրավունքի հարցում՝ մասնավորապես, ելակետը պետք է հանդիսանա հասարակական շահը:

Յու. Ս. Ղամբարյանի կարծիքով իրավունքը հարկադիր ուժ չէ, այլ մարդու հասարակական գործունեության վրա էապես ազդող շարժառիթ: Իրավունքը ձևավորվում է հասարակական հարաբերություններից, որը պետք է ուսումնասիրել գործնական իրականացման շրջանակներում: Իրավունքը նախապատրաստում է պետությունը, ուստի հնարավոր չէ խոսել պետության հասկացության մասին, չունենալով պատրաստի իրավունք հասկացությունը, որը պետության ծագման մասին պատկերացման անհրաժեշտ պայմանն է: Այն ազդում է սուբյեկտի կամքի վրա իշխանության կողմից հրապարակված հրամանների միջոցով, իսկ «յուրաքանչյուր հեղինակավոր իշխանության փորձ՝ իրեն ենթակա անձանց ստիպել ենթարկվել իր հրամաններին, նրանց վարքագիծը համաձայնեցնել իր հրամանների հետ՝ իրավունք հաստատելու փորձ է» [26, 63-66]:

Յու. Ս. Ղամբարյանը իրավունքի և օրենքի սահմանազատման կողմնակից էր: Նա ճանաչում էր բարձրագույն իրավունքի առկայությունը որպես իդեալական նպատակ և պոզիտիվ իրավունքի գնահատման չափանիշ: Նրա կարծիքով օրենքը իրավունքի քիչ թե շատ հստակ արտացոլումն է: Իրավունքը պետք է կոչվի ոչ թե բնական, այլ չթույլատրված հարկադրանքի իրավունք: Նրա կարծիքով իրավունքում առկա է երկու կարևոր տարր՝ տեսական և գործնական: Տեսական իրավունքը կամ իրավունքի մասին տեսությունը,

որոշում է, թե ինչ է տեղի ունեցել կամ կարող է տեղի ունենալ մարդկային հարաբերություններում: Գործնական իրավունքը կամ հասարակության իշխող կամքը ենթարկվում է իրավունքի նորմերին: Այս երկու տարրերը չպետք է միմյանց խառնվեն, քանի որ գործ ունեն տարբեր իրականությունների հետ:

Դիտարկելով իրավունքի նյութական կողմը՝ Յու. Ս. Ղամբարյանը հանգեց այն եզրակացության, որ այդ իրավունքը հասարակական կյանքի կարգավորման բովանդակության մեջ է, որը նպատակ է հետապնդում բավարարել մարդկային պահանջմունքները: Նա հանդես էր գալիս որպես «սոցիալական իրավագիտության» համոզված կողմնակից և ելնում էր այն մտայնությունից, որ «եթե իրավունքը սոցիալական կյանքի կարգավորումն ու կանոնավորումն է, ապա սոցիալական բոլոր հարցերը միաժամանակ պետք է լինեն իրավունքի հարցեր» [26, 85-87]:

Յու. Ս. Ղամբարյանի կարծիքով տվյալ պահին և տվյալ տեղում գործող իրավունքը չի կարող դիտարկվել անընդհատ զարգացող գործընթացներից դուրս, չի կարող դառնալ ոչ առանձին գիտելիքի և ոչ էլ գիտական հետաքրքրության առարկա: Նա դոգմատիկ իրավագիտությունը ռուս իրավագետ Ս. Ա. Մուրոմցևի նման չէր համարում արվեստ, այլ ճանաչում էր դրա երկրորդական նշանակությունը և երիտասարդ իրավագետներին խորհուրդ էր տալիս ուսումնասիրել միայն այն աշխատությունները, որոնք շարադրված են պատմահամեմատական մեթոդով:

Յու. Ս. Ղամբարյանը «Ազատությունը և նրա երաշխիքները» գրքում վերլուծում է ազատությունն հասկացությունը դրա ընկալման ամբողջ բարդությունում և ամենատարբեր դրսևորումներում [28], որն այդ խնդրի վերաբերյալ ռուսական իրավագիտության մտքի պատմության մեջ համարվում է լավագույն մենագրությունը:

Իրավագիտության խնդիրների և մեթոդների նկատմամբ իր հայացքներով Յու. Ս. Ղամբարյանը իրավագիտությունում պոզիտիվիզմի ամենահետևողական և փայլուն ներկայացուցիչներից մեկն էր: Նրա տեսական վերլուծություններն աչքի են ընկնում ինքնատիպությամբ, ուսումնասիրության առարկայի խոր իմացությամբ, գիտական բարձր մակարդակի շարադրանքով և հիմնավոր եզրակացություններով:

Յու. Ս. Ղամբարյանը Հայաստանի համալսարանի հիմնադիր ռեկտոր

Ռուսաստանում դասախոսական և գիտական բեղմնավոր գործունեություն ծավալելուց հետո, 1917 թ. Յու. Ս. Ղամբարյանը վերադարձավ Թիֆլիս և սկսեց դասավանդել Վրաստանի ազգային համալսարանում:

1919 թ. մայիսի 16-ին Հայաստանի Հանրապետության նախարարների խորհուրդը որոշում կայացրեց Երևանում համալսարան բացելու մասին [2, 77]: ՀՀ հանրային կրթության նախարար Գ. Մելիք-Ղարաբյոզյանը համալսարանի կազմակերպման գործը վստահեց Շվրոպայում և Ռուսաստանում բուհական աշխատանքի մեծ փորձ ունեցող Յու. Ս. Ղամբարյանին: Նա Թիֆլիսում գտնվող Յու. Ս. Ղամբարյանին հունիսի 10-ին հղած նամակում տեղեկացրեց, որ Հայաստանի կառավարության որոշմամբ նշանակվել է Հայաստանի համալսարանի գլխավոր կազմակերպիչ, իսկ նրա գործընկեր դոցենտ Դ. Զավրյանը՝ իրեն օգնական, հաստատվել է 13 հոգուց բաղկացած կազմակերպական հանձնաժողով:

ՀՀ կառավարության 1919 թ. հուլիսի 8-ի որոշմամբ Յու. Ս. Ղամբարյանը նշանակվեց համալսարանի ռեկտոր [2, 130]: Իր նշանակման կապակցությամբ նա նախարարին գրում էր. «Ի պատասխան Ձեր 1919 թ. հուլիսի 21-ի № 1514 գրության, որով հայտնում եք ինձ Երևանի համալսարանի ռեկտոր հաստատելու մասին, պատիվ ունեմ տեղեկացնելու Ձեզ, որ ես հիմա հանդիսանում եմ Թիֆլիսի պոլիտեխնիկական ինստիտուտի ռեկտորի պաշտոնակատար և, որի հանձնարարությամբ, ես մոտ օրերս մեկնում եմ Ռուսաստան, այդ ինստիտուտի ազատ ամբիոնների համար պրոֆեսորներ հրավիրելու: Միաժամանակ ես ենթադրում եմ ձեռնարկել ինձինք կախված միջոցներ նաև Երևանի համալսարանի պրոֆեսորական կազմը համալրելու համար: Այդ ուղևորությունից վերադառնալուց հետո, եթե Երևանի

համալսարանում հնարավոր լինի բացել իրավաբանության ֆակուլտետ, ես հնարավորություն կունենամ ընդունել ռեկտորի պաշտոնը»:

Հայաստանի կառավարությունը նախատեսում էր հաջորդ տարվա սկզբում համալսարանում բացել նաև իրավաբանության ֆակուլտետ, ուստի Յու. Ս. Ղամբարյանը Ռուսաստանից վերադառնալուց հետո Դ. Զավրյանի հետ եկավ Հայաստան և ձեռնամուխ եղավ համալսարանի կազմակերպմանը: Երևանում համապատասխան շենք չլիներ և պատճառով համալսարանի բացումը ձգձգվում էր, ուստի Յու. Ս. Ղամբարյանն առաջարկեց համալսարանը տեղափոխել Ալեքսանդրապոլ:

1920 թ. հունվարի 31-ին առևտրական դպրոցի շենքում համալսարանի հանդիսավոր բացմանը Յու. Ս. Ղամբարյանը հանդես եկավ հակիրճ, բայց շատ տպավորիչ ու խիստ բովանդակալից խոսքով [1, 158-159; 5, 384]: Նա ոչ թե տոնական ողջույն հղեց հանդիսության ներկաներին, այլ ներկայացրեց համալսարանի դերի ու կոչման մասին իր տեսլականը: Համալսարանի բացման օրը լույս տեսավ մեկօրյա թերթ՝ «Հայաստանի համալսարան», որտեղ գետեղվեց նրա «Հեմոկրատիկ համալսարանը» խոսքը: Նա նշում էր, որ Հայաստանի համալսարանի բացումը «մեր ժողովրդի համար չափազանց մեծ նշանակություն ունի», որի բացման օրը գուցադիպում է Մոսկվայի համալսարանի բացման օրվան և «մեր իրական անկախության ճանաչմանը»: Յու. Ս. Ղամբարյանի համոզմամբ «այդ գուցադիպությունները պատահական չեն և կարող են համարվել բախտավոր գուշակություն Հայաստանի համալսարանի համար», որովհետև Մոսկվայի համալսարանը «չափազանց արդյունավոր դեր է կատարել Ռուսաստանի կրթության գործում»: Չնայած «մեր ժողովրդի նկատմամբ Ռուսաստանի քաղաքականության ծանր մեղքերին, այնուամենայնիվ մեզ համար գնահատելի է, թեկուզ այն պատճառով, որ զգալի չափով մենք նրան ենք պարտական մեր լուսավորությանը»: Նա շեշտում էր, որ այդ լուսավորությունը չէր հենվում ոչ ազատության և ոչ էլ ժողովրդավարության վրա, որը հայ ժողովրդին տալիս է ձեռք բերած «անկախությունը և անհատական ազատությունը»:

Ընդգծելով համալսարանի կարևորությունը հայության կյանքում՝ Յու. Ս. Ղամբարյանն իր խոսքն ավարտում էր մատնական գաղափարախոսության ոգով. «Կեցցե ուրեմն մեր համալսարանը, ո՛չ միապետական, ո՛չ եկեղեցական, ո՛չ արիստոկրատական, այլ ազատ, աշխարհիկ և դեմոկրատիկ համալսարանը, որ կոչված է մշակելու հավասարապես գիտությունը և առաքինությունը, առանց որոնց դեմոկրատիան կամ խաբեություն կլիներ, կամ դատարկ հնչյուն» [6]:

Համալսարանի առաջին կիսամյակի արդյունքները չարդարացրին Յու. Ս. Ղամբարյանի և դասախոսների հույսերը և սպասելիքները: Նրա ներկայացրած համոզիչ փաստարկների հիման վրա ՀՀ կառավարությունը 1920 թ. հունիսի 21-ին որոշեց համալսարանը տեղափոխել Երևան և նրան հատկացրեց ուսուցչական սեմինարիայի շենքը: Կառավարության որոշմամբ նախատեսվում էր մինչև սեպտեմբեր բացել իրավաբանական ֆակուլտետ, որը տեղի չունեցավ: Ավելին, սեպտեմբերին հնարավոր չեղավ անգամ վերսկսել դասերը պատմալեզվաբանական միակ ֆակուլտետում: Չնայած դրան՝ Յու. Ս. Ղամբարյանն ամենևին չհուսահատվեց և կարճ ժամանակում իրեն բնութագրական եռանդով ու նվիրումով հսկայական գործ կատարեց: Նա Ռուսաստանի և Եվրոպայի բուհերում դասավանդող հայազգի լավագույն գիտնականների հրավիրեց համալսարանում աշխատելու, ստեղծեց բարձրորակ պրոֆեսորադասախոսական կազմ: ՀՀ արտաքին գործերի նախարարության միջոցով դիմեց մի շարք երկրներում հայ դիվանագետների՝ խնդրելով համալսարանին ֆինանսապես աջակցելու նպատակով կազմակերպել հանգանակություն և գրադարանի համար ձեռք բերել գրականություն:

1920 թ. դեկտեմբերին Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո նոր իշխանություններն ըստ արժանության չգնահատեցին Յու. Ս. Ղամբարյանի նման համբավավոր գիտնականի, մտավորականի, կրթության ու գիտության լավագույն կազմակերպչի կա-

րողությունները: Այս պայմաններում փոխվեց վերաբերմունքը համալսարանի ռեկտորի և աշխատակազմի նկատմամբ, որոնք աշխատանքից ազատվեցին: Յու. Ս. Ղամբարյանը տեղափոխվեց իր ծննդավայր Թիֆլիս, որտեղ 1921-1925 թթ. դասավանդեց Վրացական ազգային համալսարանում:

Անվանի գիտնականը կյանքի վերջին օրերն անցկացրեց Մոսկվայում, որտեղ իր մահ-կանացուն կնքեց 1925 թ. նոյեմբերի 26-ին՝ Առաջին բժշկական ինստիտուտի հիվանդանոցում և հուղակավորվեց Նովոդևիչյան հանրահայտ գերեզմանատանը [47]:

Եզրակացություն

Յու. Ս. Ղամբարյանը իր արժեքավոր աշխատություններով նկատելի հետք է թողել ռուսական իրավագիտության պատմության մեջ: Հայ պատմագիտության համար կարևորություն ներկայացնող խնդիր է նրա կյանքի մինչ օրս մեզ անհայտ դրվագների բացահայտումը, Օդեսայի, Մոսկվայի, Բյուսելի, Պետերբուրգի և Թիֆլիսի համալսարաններում դասախոսական գործունեության վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերելը, գիտական ժառանգության հիմնարար ուսումնասիրությունը, ինչպես նաև անձնական արխիվի հայտնաբերումը:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-153>

Գրականություն

1. Երևանի պետական համալսարան, 1918-1920 թթ. վավերագրերի ժողովածու (կազմ. Ֆ. Հ. Մամիկոնյան, Ս. Ս. Միրզոյան), Երևան, ԵՊՀ հրատ., 1995, 335 էջ:
2. Հայաստանի Հանրապետության պառլամենտական օրենքները 1918-1920 թթ., վավ. 190, էջ 77, վավերագրերի ժողովածու, 325, էջ 130:
3. Հայկական սովետական հանրագիտարան, հ. 7, Երևան, 1981:
4. Ղարիբջանյան Լ., Երևանի պետական համալսարանի ռեկտորները, Երևան, ԵՊՀ հրատ., 1999, 152 էջ:
5. Վրացյան Ս., Հայաստանի Հանրապետություն, Երևան, Հայաստան, 1993, 704 էջ:
6. «Հայաստանի համալսարան», 1920, 31 հունվարի, թիվ 1:
7. Архив РАН. Ф. 603 (М. М. Ковалевский). Оп 1. Д. 126. Л. 285.
8. Архив РАН. Ф. 603. Оп. 1. Д. 126. Л. 334.
9. ГАРФ. Ф. 102. О. о. 1898. Д. 3. Ч. 140. Л. 92-93.
10. ГАРФ. Ф. 102. О.о. 1903. Д. 1298. Л. 6.
11. ГАРФ. Ф. 102. О.о. 1903. Д. 1298. Л. 10.
12. ЦГИАМ. Ф. 2244. Оп. 1. Д. 690. Л. 1.
13. ЦГИАМ. Ф. 2244. Оп. 1. Д. 1706. Л. 15-17.
14. ЦГИАМ. Ф. 2244. Оп. 1. Д. 1706. Л. 21-22.
15. ЦГИАМ. Ф. 2244. Оп. 1. Д. 1706. Л. 63-64.
16. ЦГИАМ. Ф. 2244. Оп. 1. Д. 1706. Л. 82-85.
17. ЦГИАМ. Ф. 2244. Оп. 1. Д. 1706. Л. 101-104.
18. ЦГИАМ. Ф. 2244. Оп. 1. Д. 1706. Л. 131-132.
19. ЦГИАМ. Ф. 2244. Оп. 2. Д. 131. Л. 4.
20. ЦИАМ. Ф. 418. Оп. 54. Д. 99. Л. 30-31.
21. Аврех А.Я. Масыны и революция. М., Политиздат, 1990, -350 с.
22. Волков В. А., Куликов М. В., Логинов М. В. Московские профессора XVIII – начала XX веков. Гуманитарные и общественные науки. М.: Янус-К, Московские учеб., 2006. - 299 с.
23. Волошин М. История моей души. М.: Аграф, 1999. - 480 с.
24. Гамбаров Ю. С. Гражданское право: Часть особенная: Вещное право. М.: Литография Рихтера, 1894-1895. - 487 с.

25. Гамбаров Ю. С., Ковалевский М.М. Русская Высшая Школа общественных наук в Париже. Ростов-на Дону: Наука и жизнь, 1903. - 60 с.
26. Гамбаров Ю. С. Курс гражданского права. Часть общая. Т.1. СПб.: Тип. М. М. Стасюлевича, 1911. - 793 с.
27. Гамбаров Ю. С. Право собственности // Русская Высшая Школа Общественных Наук в Париже, проф. Ю. С. Гамбаров и проф. М. М. Ковалевский, Ростов-на-Дону: Наука и жизнь, 1903. - 60 с.
28. Гамбаров Ю. С. Свобода и ее гарантии. Т. 1. СПб.: Тип. М. М. Стасюлевича, 1910.- 279 с.
29. Императорский Московский университет 1755-1917 // Энциклопедический словарь. Сост. А. Ю. Андреев, Д. А. Цыганко, М.: Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2010. - 894 с.
30. Карпачев С. П. Масоны. Словарь. Великое искусство каменщиков, М., АСТ: Олимп, 2008. - 634 с.
31. Карпачев С. П. Масонство и масоны. Сборник статей. Вып. 1, Отв. ред. С. И. Варнов, М.: Эра, 1994. - 123 с.
32. Ковалевский М. М. Моя жизнь. Воспоминания. М.: Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2005. - 784 с.
33. Ковалевский М. М. Ученый, государственный и общественный деятель и гражданин, Петроград: Артист. заведение т-ва А. Ф. Маркс, 1917 (обл. 1918) . - 274 с.
34. Куприц Н. Я. М. М. Ковалевский. М.: Юридическая литература, 1978. - 120 с.
35. Курбатов В. В. И. Тайное общество масонов. М., Эксмо; Ростов-на-Дону, Наука-Пресс, 2006. - 416 с.
36. Материалы для биографического словаря действительных членов Академии Наук. Ч. 2, Петроград, Рос. Акад. Наук, 1917. -335 с.
37. Международная школа Всемирной Парижской выставки, М.: Тип. «Русских ведомостей», 1900 . - 15 с.
38. Николаевский Б. И. Русские масоны и революция. М.: Terra-Terra, 1990. -203 с.
39. Платонов О. А. Масоны в русской истории XIX века, М.: Родная страна, 2014. - 384 с.
40. Платонов О. А. Терновый венец России. Тайная история масонства 1731-1996. М.: Родник, 1996. -704 с.
41. Серков А. И. Русское масонство 1731-2000. Энциклопедический словарь. М., Российская политическая энциклопедия (РОССПЭН), 2001. - 1222 с.,
42. Серков А. И. История русского масонства. 1845-1945. М., Изд-во им. Н. И. Новикова. - 488 с.
43. Соловьев О. Ф. Русские масоны. М.: Яуза-пресс, 2007. - 540 с.
44. Список гражданским чинам 4-ого класса. Исправлено по 1-е июля 1863. СПб., тип. Правительствующего сената, 1863. -915 с.
45. Томсинов В. А. Российские правоведы XVIII-XX веков: Очерки жизни и творчества, Т.2. М., Зерцало-М, 2015. - 472 с.
46. Троцкий Л. Д. Моя жизнь. М.: Панорама, 1991. - 624 с.
47. «Известия», 1925. 28 ноября. № 272.
48. Гамбаров Ю. С. Задачи современного правоведения // Журнал Министерства Юстиции. СПб., № 7, с. 49-82.
49. Гуревич П. В. Максим Максимович Ковалевский // «Правоведение», М., 1971, № 5, с. 127-130.
50. Ингбер М. А. Лекции Владимира Ленина в Парижской Высшей Школе Общественных наук (1902) // Пролетарская революция. 1924. № 3, с. 34.

51. Мотова Е. А. Влияние идей Рудольфа фон Иеринга на становление русской правовой мысли XIX века // Теория государства и права. М., 2021, № 3, с. 110-115.
52. Свитков С. Г. Опальная профессура 80-их годов // Голос минувшего, СПб, 1917, № 2, с. 35-48.
53. Стулов П. М. В. И. Ленин в Русской Высшей Школе общественных наук в Париже // Вестник АН СССР. М., 1934. № 1, с. 15-30.
54. Хопров В. В. Высшая Школа общественных наук в Париже // Вестник воспитания. 1902. № 1, с. 137-148.
55. Московская Ложа «Возрождение» [Электронный ресурс] // URL: <http://samisdat.com/5/23/523r-voz.htm> (дата обращения: 08.11.2024).
56. Париж. Ложа «Космос» [Электронный ресурс] // URL: samisdat.com/5/231/523f-kos.htm (дата обращения: 11.11.2024).
57. Петербург. Ложа «Феникс» [Электронный ресурс] // URL: samisdat.com/5/23/523r-fen.htm (дата обращения: 21.12.2024).
58. Петербург. Ложа «Полярная звезда» [Электронный ресурс] // URL: samisdat.com/5/23/523r-pzv.htm (дата обращения: 31.12.2024).

Жизнь и деятельность Ю. С. Гамбаряна – первого ректора ЕГУ

Мовсисян Феликс

Резюме

***Ключевые слова:** ученый, юрист, профессор, преподаватель, Париж, русская высшая школа, масон, организатор образования*

Ю.С. Гамбарян получил блестящее образование в Москве и в ряде ведущих европейских университетов. Он был доктором юридических наук, профессором, одним из лучших специалистов по гражданскому праву в России. Ю.С. Гамбарян успешно совмещал научную деятельность с преподавательской работой. На протяжении многих лет он преподавал в университетах Одессы, Москвы, Брюсселя, в Международной школе Парижа, в Политехнических институтах СПб.а и Тифлиса. В 1901 году, совместно с М. М. Ковалевским, он основал в Париже Русскую высшую школу общественных наук, где был одним из постоянных профессоров.

В 1906 году, вернувшись на родину, Ю.С. Гамбарян по инициативе М.М. Ковалевского принял практическое участие в создании политического масонства в России. Он был высокопоставленным масоном, членом парижской ложи № 288 «Космос», российских лож «Феникс», «Полярная звезда», «Возрождение» и масонской организации «Великий Восток народов России».

Ю.С. Гамбарян был заслуженным деятелем науки, видным юристом, продуктивным и творческим ученым, автором многочисленных исследований, не утративших своей значимости и актуальности до сих пор. Он был одним из основателей социологической школы гражданского права в России, сторонником историко-сравнительного метода изучения права, разграничения права и закона. Он существенно дополнил новыми идеями теорию гражданского права Р. фон Иеринга. Ю. С. Гамбарян был искусным организатором образования. Трудно переоценить его личный вклад в становление и развитие Тифлисского политехнического института и университета Армении.

The Life and Work of Y. S. Ghambaryan, the First Rector of YSU

Movsisyan Felix

Summary

Key words: *scientist, jurist, professor, lecturer, Paris, Russian Higher School, Freemason, education organizer*

Y. S. Ghambaryan received an excellent education at Moscow and several leading European universities. He was a Doctor of Law, a Professor, and one of the best experts in civil law in Russia. He successfully combined his scientific work with teaching and lectured for many years at the universities of Odessa, Moscow, and Brussels, the International School of Paris, and the Polytechnic Institutes of St. Petersburg and Tbilisi. In 1901, together with M. M. Kovalevsky, he founded the Russian Higher School of Social Sciences in Paris, where he was a permanent professor.

Upon returning to his homeland in 1906, Y. S. Ghambaryan actively participated in the formation of political Freemasonry in Russia at the initiative of M. M. Kovalevsky. He was a high-ranking Freemason and a member of the Parisian “Cosmos” Lodge No. 288, as well as the Russian lodges “Phoenix”, “Polar Star”, “Renaissance”, and the Masonic organization “Grand Orient of the Peoples of Russia”.

Y. S. Ghambaryan was also a skilled education organizer. He played a crucial role in the establishment and development of the Tiflis Polytechnic Institute and the University of Armenia.

Ներկայացվել է	27. 10. 2025 թ.
Գրախոսվել է	04. 03. 2025 թ.
Ընդունվել է տպագրության	05. 06. 2025 թ.

ՓԻԼՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ФИЛОСОФИЯ И
ЮРИСПРУДЕНЦИЯ

PHILOSOPHY AND
JURISPRUDENCE

**Խորհրդարանական դիվանագիտության սահմանափակումներն ու
թույլ կողմերը**

Գրիգորյան Աննա

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-172>

Հանգուցային բառեր. *խորհրդարան, պատգամավոր, արտաքին քաղաքականություն, գործադիր իշխանություն, վերահսկողություն, քաղաքական գրոսաշրջություն*

Նախաբան

Խորհրդարանը համաշխարհային քաղաքականության ամենանկատելի դերակատարներից է: Ներկայումս ավելի մեծ թվով միջազգային կազմակերպություններ ստեղծում են խորհրդարանական կառույցներ, խորհրդարանականներն ակտիվորեն ներգրավվում են արդի միջազգային օրակարգի գրեթե բոլոր սուր հիմնախնդիրների լուծման գործընթացներին՝ էապես լրացնելով այդ ուղղությամբ կառավարության ջանքերն ավանդական դիվանագիտության շրջագծում:

Մինևույն ժամանակ խորհրդարանի դերը միջազգային հարաբերությունների սուբյեկտների համակարգում մնում է երկակի. արտահայտելով իրեն ընտրած ժողովրդի կամքը՝ խորհրդարանն, այնուամենայնիվ, գրկված է արտաքին հարաբերությունների ոլորտում իշխանական լիազորությունների մեծ մասից: Այդ համատեքստում հատուկ հետաքրքրության առարկա են դառնում խորհրդարանի դերն ու նրա ազդեցությունն արտաքին քաղաքականության ձևավորման և իրականացման գործում, մասնավորապես՝ որքանով է խորհրդարանների միջազգային գործունեությունն արդյունավետ ու հեռանկարային՝ հաշվի առնելով այն փաստը, որ խորհրդարանական դիվանագիտությունն ունի ինչպես իր հնարավորություններն ու առավելությունները, այնպես էլ ինստիտուցիոնալ սահմանափակումներն ու թույլ կողմերը, որոնք քննարկվում են սույն հոդվածում:

Հիմնական մաս

Գրեթե բոլոր երկրներում արտաքին քաղաքական որոշումների մշակման և իրականացման լծակները փաստացիորեն գտնվում են գործադիր իշխանության ձեռքում. արտաքին քաղաքականությունը համարվում է գործադիր իշխանության առանձնաշնորհը: Խորհրդարանականները դիվանագիտական աշխատանքում, որպես կանոն, ուղղակիորեն ներգրավված չեն և արտաքին քաղաքականությանը վերաբերող առանցքային որոշումների վրա էապես ազդելու հնարավորություն չունեն [6, 5]: Ավանդաբար դա հիմնավորվել է նրանով, որ արտաքին քաղաքականությունը պահանջում է հրապարակապես և գաղտնի որոշումներ, որոնք չեն կարող ընդունվել հանրային երկարատև քննարկումների արդյունքում [13, 1]: Միջազգային բանակցությունների գաղտնիության ապահովման հիմնավորմամբ խորհրդարաններն ավանդաբար դիտարկվել են որպես դիվանագիտությանը խոչընդոտող: Գերիշխել է կայուն համոզմունք, որ նրանց գործառնությունը պետք է սահմանափակվի միայն միջազգային պայմանագրերի վավերացմամբ և գործադիր իշխանության վերահսկողությամբ [8, 80]: Թեև հազվադեպ չեն դեպքերը, երբ նույնիսկ խորհրդարանի վերահսկողական գործառնություն է կաթվածահար լինում գործադիր իշխանության միակողմանի գործողություններով [9]: Որոշ գիտնականների գնահատմամբ՝ ազգային խորհրդարանների միջազգային գործունեությունը, ինչպես և միջազգային միջխորհրդարանական միավորումները փաստացիորեն չունեն խորհրդարանական վերահսկողության լիազորություն [10, 163-164]: Արդի աշխարհում առկա գլոբալ միտումը, որը մասամբ շոշափում է նաև ԱՊՀ պետությունները, գործադիր իշխանության ուժեղացումն է՝ ի հաշիվ օրենսդիր և դատական իշխանությունների: Խորհրդարաններն իրենց հնարավորությունների շրջանակում ձգտում են ընդդիմանալ այդ հեռա-

նկարին, թեև դա բավականին բարդ է, քանզի շատ որոշումների ընդունման համար պահանջվում է մասնագիտացված տեղեկատվություն, որը խորհրդարանները չունեն [12, 27]:

Ըստ պարտուգալացի քաղաքական գործիչ Մ. Ամարալի՝ թեև միջազգային խորհրդարանական կառույցների թվի ավելացման և նրանց գործունեության ոլորտի ընդլայնման շնորհիվ վերջին երկու տասնամյակում խորհրդարանների իրազեկվածությունն արտաքին քաղաքական հարցերին որոշակիորեն աճել է, սակայն դա իր հետ չի բերել խորհրդարանների կողմից արտաքին քաղաքականության վրա ուղղակի ազդեցություն [6, 5]: Մ. Ամարալը դրա հնարավոր պատճառներից մեկը համարում է կառավարության անբարյացակամությունը. գործադիր իշխանությունը չի ցանկանում արտաքին քաղաքականության մեջ խորհրդարանականներին ավելի մեծ տեղ հատկացնել, քանզի վերջիններս, ի տարբերություն պետական պաշտոնյաների և քաղաքացիական ծառայողների, կաշկանդված չեն կառավարական տարատեսակ հրահանգներով, հետևաբար, կարող են տարամետ ուղերձներ փոխանցել:

«Խորհրդարանն աստիճանաբար կորցնում է իր դերը պետական առանցքային որոշումների մշակման գործընթացում՝ դադարելով լինել հանրային քննարկումների վայր և դառնալով դատարկ ձևականություն, քանզի նրա բովանդակությունն էապես չի ազդում պետության և հասարակության զարգացման ուղիների ընտրության վրա: Այդ ուղիները որոշվում են այլ կենտրոններում, այլ ընթացակարգերի շրջանակում՝ քողարկված հանրային կարծիքից, հանրային վերահսկողությունից», – նշված է ՌԴ Պետական Դումայի հրապարակումներից մեկում [4, 8]: Ըստ հրապարակման՝ «ներկայացուցչություն» հասկացությունը շատ հարցերում այսօր կորցնում է իր պատմական իմաստն ու նախասկզբնական բովանդակությունը՝ վերածվելով ներկայացուցչության փոխնակի. «Պատգամավորը ժողովրդի իրավաբանորեն լիազորված ներկայացուցիչը, օժտված լինելով ձևական ազատ մանդատով, դե ֆակտո վերածվել է քաղաքական կուսակցության ներկայացուցչի՝ կաշկանդված կուսակցական կարգուկանոնով և քաղաքական հրահանգներով» [4, 8]:

Կարողությունների և հզորության հարցը շարունակում է մնալ միջազգային հարաբերություններում խորհրդարանների արդյունավետ դերին խոչընդոտող հիմնական պատճառներից մեկը: Ինչպես նշում է Բրյունելի Բաց համալսարանի Եվրոպական հետազոտությունների ինստիտուտի գիտաշխատող Դանիել Ֆիոթը, խորհրդարանը չունի այն ուժը, ինչ կառավարությունը, և ոչ էլ խորհրդարանական ունի այն իշխանությունը, որով օժտված է վարչապետը, ինչը նշանակում է, որ նրանք հիմնականում, թեև ոչ բացառապես, սահմանափակված են բանավեճի ուժն օգտագործելով: Կառավարությունը նաև կարող է օգտվել այնպիսի խողովակներից, որոնք անհասանելի են խորհրդարանականներին, օրինակ՝ հետախուզությունը կամ սեփական նախընտրությամբ որևէ երկրի կառավարության հետ շփումներ հաստատելը: Մինչդեռ խորհրդարանականները կարող են միայն քվեարկել՝ պատերազմել, թե՛ չպատերազմել, այսինքն՝ ներգրավված են ոչ թե որոշումների ընդունման, այլ ավելի շատ դրանց ուսումնասիրության գործընթացում [3, 5]:

Նիդեռլանդացի քաղաքական գործիչ Ֆրանս Վայսգաաթ ևս փաստում է, որ կառավարության, ոչ կառավարական կազմակերպությունների և բիզնեսի համեմատությամբ միջազգային թատերաբեմում խորհրդարաններն ավելի թույլ դերակատարներ են: «Կազմակերպությունները, որոնցում աշխատում են խորհրդարանականները, հաճախ չունեն բավարար ֆինանսներ, ռեսուրս և իշխանություն՝ ապահովելու համար այն ազդեցությունը, որը նրանք կունենային, եթե ավելի լավ ապահովված լինեին: Պատվիրակությունների մանդատները խիստ տարբերվում են, ինչը շատ հաճախ հանգեցնում է դժվարությունների եզրակացությունների կամ հռչակագրերի ձևակերպման ժամանակ, որոնք արդյունքում շատ լողոված ու խուսանավող են: Ի վերջո, հեղինակության և հարգանքի այն մակարդակը, որին արժա-

նանում են խորհրդարանականներն իրենց միջազգային գործունեության համար, նույնը չէ տարբեր երկրներում»,– նշում է նիդեռլանդացի դիվանագետն ու հավելում, որ Հոլանդական բազմակուսակցական կոալիցիոն կառավարական համակարգը միջազգային հարաբերություններում խորհրդարանական կանոնների մասնակցությունը սահմանափակող գործոններից է. «Խիստ կուսակցական կարգապահությունը և խորհրդարանում հնարավոր առավելագույնս ներկայությունը հասկապես քվեարկությունների ժամանակ թույլ չի տալիս խորհրդարանականներին հաճախակի կամ տևական ժամանակով լինել գործողման մեջ» [16, 97]:

Փաստելով, որ խորհրդարանականների արտասահմանյան գործողումներն ավելի հազվադեպ են՝ ի համեմատություն այն մշտական խողովակների, որոնցից օգտվում են դեսպանատները՝ Դ. Ֆիոթը նշում է, որ առանց կանոնավոր կապերի խորհրդարանական դիվանագիտության՝ երրորդ երկրի անհատների և կազմակերպությունների հետ հարաբերություններ հաստատելու կարողությունը թուլանում է. «Եթե դիվանագետի համար կենսականորեն կարևոր են դիվանագիտական հեռագրերը (այժմ՝ էլ. նամակները), ապա դեմ առ դեմ երկխոսությունը նույնքան կարևոր է խորհրդարանականների համար: Վստահության կառուցումը չի կարող արդյունավետորեն ձեռք բերվել առանց սանմիջական համադրումների և պարբերական խորհրդարանական դիվանագիտության: Առանց երրորդ երկրի գործիչների հետ տևական կապի խորհրդարանականները քիչ ժամանակ կունենան, որպեսզի լիարժեք պատկերացում կազմեն այն երկրի և ժողովրդի մասին, ում նրանք ցանկանում են հասկանալ» [3, 5]:

Խորհրդարանների արտաքին քաղաքական գործունեության հաջորդ սահմանափակումը կապված է այն կոնկրետ սահմանադրական կարգերի հետ, որոնց պայմաններում սովորաբար աշխատում են խորհրդարանները լիբերալ ժողովրդավարական պետություններում [1, 11]: Խորհրդարաններն այստեղ գտնվում են խորհրդարանական մեծամասնության իշխանության ներքո: Մեծամասնություն կազմած կուսակցության անդամները, որպես կանոն, քաղաքականապես հարում են իրենց կառավարությանը, քանզի վերջինիս անդամները կամ վարչապետն ընտրությունների արդյունքում հենց այդ նույն մեծամասնությունից են ընտրված լինում: Այդպիսի դեպքերում խորհրդարանին մնում է ապահովել գործադիր իշխանության գործողությունների օրինականությունը և դրանց աջակցությունը [1, 11]: Ըստ Դ. Ֆիոթի՝ դա խորհրդարանական դիվանագիտության թույլ կողմն է, քանզի խորհրդարանական դիվանագիտության ուժը նրա անկախությունն է կառավարությունից և այլ հաստատություններից. «Այնտեղ, որտեղ կառավարությունը կախված չէ խորհրդարանական մեծամասնության աջակցությունից իր պաշտոնները պահելու համար, խորհրդարանն ունենում է ավելի մեծ ներուժ և հնարավորություններ իր սեփական քաղաքականությունն անցկացնելու համար» [3, 5]: Եվրոպական խորհրդարանն, ըստ հեղինակի, այդ իմաստով լավ օրինակ է [3, 5]:

Իր աշխատանքներից մեկում հույն միջազգայնագետ Ս. Ստավրիդիսը ևս քննադատաբար նշում է, որ նոր խորհրդարանական դիվանագիտությունը, ինչպես և միջազգային շփումների մեծ մասն իրենցից ներկայացնում են քաղաքական զբոսաշրջություն, որում գերիշխում է «պաշտոնական լեզու»-ն. յուրաքանչյուր պատվիրակություն միայն վերարտադրում է արդեն հայտնի պաշտոնական կուրսը [13, 11]:

Խորհրդարանական դիվանագիտության թույլ կողմերից է համարվում նաև տարբեր խորհրդարանական մարմինների միջև համակարգման և տեղեկատվության փոխանակման բացակայությունը: Խնդիրն առանձնակի արդիական է դառնում հատկապես այնպիսի պայմաններում, երբ միջազգային խորհրդարանական կառույցների թվի աճը մեծացնում է դրանց աշխատանքում կրկնօրինակման վտանգը, ինչը փաստացիորեն կարող է քայքայել խորհրդարանական դիվանագիտությունը [14, 51]: Մտահոգությունը մեծ է հատկապես տարածաշրջանային խորհրդարանական կառույցների դեպքում. հարց է առաջանում՝ դրանք

փոխարանում, թե՞ կրկնօրինակում են միմյանց: Միջխորհրդարանական միության՝ «Խորհրդարանական մասնակցությունը միջազգային գործերում» վերտառությամբ զեկույցում (2005 թ.) նշվում է, որ որոշ խորհրդարաններ (օրինակ՝ Բոսնիայի և Հերցեգովինայի, Իսրայելի և Լյուքսեմբուրգի) խոստովանում են, որ գոյություն ունի կրկնօրինակում տարբեր տարածաշրջանային խորհրդարանների միջև [11, 29]: Կատարված հարցումներն ամփոփելով զեկույցը միևնույն ժամանակ փաստում է, որ փոքրաթիվ խորհրդարաններ են միջոցներ ձեռնարկում միջխորհրդարանական կազմակերպությունների հետ իրենց հարաբերություններում մեծ համակարգում և համաձայնեցում ապահովելու համար: Խորհրդարանները խոստովանում են, որ այս կամ այն խորհրդարանական կազմակերպությունների հետ աշխատանքին առաջնահերթություն են տալիս՝ ամենից առաջ հաշվի առնելով նրա տարածաշրջանային դիրքը, կամ այն, որ վերջիններս պատկանում են որոշակի լեզվական, մշակութային կամ կրոնական հանրության [11, 29]:

Ըստ Դ. Ֆիորի՝ ժամանակ առ ժամանակ կարող է լինել նաև խորհրդարանական ինստիտուտների երկատու, որը կարող է թուլացնել մեկ ինստիտուտով ձեռք բերվող արդյունավետությունը և ռեսուրսները [3,5]:

Ըստ հաջորդ նկատառման՝ խորհրդարանական դիվանագիտությունը գործում է խիստ «անկանոն»։ չկան անդուլ ջանքեր, ինչը բացատրվում է նրանով, որ դիվանագիտությունը չի հանդիսանում խորհրդարանական գործունեության «ամենօրյա» ոլորտ: Խորհրդարանականները չեն կարող չափազանց շատ ժամանակ տրամադրել որևէ հիմնախնդրի, վերջիվերջո, նրանք ունեն շատ այլ պարտականություններ ևս [3, 5]: Հանդիսանալով ժողովրդի ընտրյալ ներկայացուցիչներ, ովքեր ընտրողների առաջ պատասխանատու են առաջին հերթին լոկալ հիմնախնդիրների լուծման համար՝ խորհրդարանականները մեծամասամբ ստիպված են ուշադրություն դարձնել ազգային խնդիրներին, ինչն ստեղծում է որոշակի բարդություններ միջազգային աշխատանքում խորհրդարանականների առավել ակտիվ ներգրավմանը խթանելու ճանապարհին [7, 6]:

Որոշ հեղինակների կարծիքով՝ խորհրդարանի կառուցվածքը նույնպես չի նպաստում խորհրդարանական դիվանագիտության արդյունավետ իրականացմանը [8, 80]: Ամենից առաջ դա վերաբերում է հարցերի բաշխմանը մի քանի հանձնաժողովների միջև, ինչպես օրինակ՝ միջազգային հարաբերությունների, առևտրի և արդյունաբերության, պաշտպանության և այլն: Շատ դեպքերում պատգամավորներն ընդգրկված են մեկից ավելի հանձնաժողովներում, ինչը նրանց թույլ չի տալիս մասնագիտանալ այն հարցերում, որոնցով զբաղվում է կոնկրետ հանձնաժողովը [8, 80]: Խորհրդարանի ոչ բոլոր անդամներն են զինված արտաքին հարաբերությունների ոլորտում անհրաժեշտ գիտելիքներով: Խորհրդարանականներն ունեն համապատասխան անձնակազմի կարիք, ով կօգնի նրանց արագ ըմբռնել առօրյա միջազգային հարաբերությունների բարդ բնույթը: Որոշ հետազոտողների կարծիքով՝ առհասարակ կա թերահավատություն և անվստահություն՝ կապված խորհրդարանականների դիվանագիտական հարցեր լուծելու ունակության հետ [15, 178]: Հնչում են նաև կարծիքներ, որ խորհրդարանական գործողումների հետ կապված սկանդալները ևս խաթարել են խորհրդարանի նկատմամբ վստահությունը [8, 81]:

«Ժամանակակից լիբերալ-ժողովրդավարական պետություններում ավելի ու ավելի գերիշխող են դառնում հիսաթափությունն ու հանրային ապատիան: Շատ երկրներում խորհրդարանը ժողովրդավարության հիմնական հաստատությունը, կանգնում է լեգիտիմության ճգնաժամի առաջ»,– նշում է հիմնախնդրով զբաղվող հեղինակներից մեկը [1, 7-8]: «Կարող է արդյոք արտաքին քաղաքականությունը լինել ժողովրդավարական և արդյունավետ միաժամանակ՝ սա այն հարցն է, որի պատասխանին ձգտում ենք ոչ պակաս, քան ժողովրդավարության որակին»,– նշված է հրապարակման մեջ [1, 7-8]:

Այսպիսով, խորհրդարանի՝ երկրի արտաքին քաղաքականության ձևավորման մեջ

ունեցած դերի համատեքստում ակնհայտ է դառնում հետևյալ պարադոքսը. ի սկզբանե քաղաքական այս ինստիտուտին վիճակված է եղել լինել իշխանության այնպիսի մարմին, որի շրջանակում իրականացվում է քաղաքացիների բոլոր կատեգորիաների շահերի պաշտպանությունը, և այդ առումով նա սկզբունքորեն ունի առաջնայնություն, բայց միևնույն ժամանակ խորհրդարանը շարունակում է մնալ մարզինալ արտաքին քաղաքականության ուղղությունների որոշման գործընթացում: Արտաքին քաղաքական հարցերի քննարկմանը խորհրդարանականներն, իհարկե, մասնակցում են համապատասխան հանձնաժողովների աշխատանքների կամ կոնկրետ բանավեճերի շրջանակում և այդ կերպ կարող են վիճարկել իրենց կառավարությունների որոշումները, սակայն արտաքին քաղաքականության ձևավորման վրա ազդելու լծակներն առաջվա նման սահմանափակ են: Չնայած արտաքին քաղաքականության ոլորտում խորհրդարանին սահմանադրորեն ամրագրված որոշակի լիազորություններին՝ գործադիր իշխանության գերակայությունն այդ ոլորտում մնում է անվիճելի: Արտաքին քաղաքականության հիմնական դերակատարների կողմից երբեմն նկատվում է նաև խորհրդարանական դիվանագիտության հնարավորությունների թերագնահատում, ինչը կարող է կապված լինել խորհրդարանական դիվանագիտության գործիքների վերաբերյալ ոչ բավարար տեղեկացվածություն հետ [15, 178]: Պրոֆեսիոնալ դիվանագետների կարծիքով՝ արտասահմանյան խորհրդարանական դիվանագիտության թուլությունը կամ թերությունը ԱԳՆ-ի հետ գործողությունների անբավարար համակարգումն է, կամ դրա իսպառ բացակայությունը [5, 12]:

Ֆրանսիայի արտաքին գործերի նախարար (1997-2002) Հուբերտ Վեդրինը 2001 թ. մայիսի 23-ին Փարիզում խորհրդարանական դիվանագիտության թեմայով համաժողովում իր ելույթի ժամանակ հայտարարել էր, որ «խորհրդարանական դիվանագիտություն» եզրույթն օգտագործելը նույնն է, թե փորձել խոսել կառավարության օրենսդրական դերի կամ խորհրդարանի գործադիր դերի մասին [5, 12]: 2002-2007 թթ. Ֆրանսիայի Ազգային ժողովի նախագահ Ժան Լուի Դեբբեն նույնպես կասկածատուրեն էր վերաբերվել խորհրդարանական դիվանագիտության գոյությանը՝ հայտարարելով. «Գոյություն ունի միայն մեկ դիվանագիտություն՝ Ֆրանսիայի դիվանագիտությունը: Այն չի բաժանվում, այն հնարավոր չէ տարանջատել: Այն նախանշվում է Հանրապետության նախագահի կողմից և իրականացվում Կառավարության կողմից: Խորհրդարանն այդ մասով իրականացնում է իր գործառնությունը, օրինակ՝ վավերացնելով պայմանագրերը, բայց չի վարում «դիվանագիտություն» բառի համընդհանուր իմաստով» [5, 12-13]: Թեմայի առնչությամբ այլ տեսակետ էր հայտնել 1982-1992 թթ. Ֆրանսիայի Ազգային ժողովի արտաքին գործերի հանձնաժողովի նախագահ Մայքլ Վոգելը՝ նշելով. «Եթե արդի դիվանագիտությունը կապված է արագ գործողությունների և շրջահայացության անհրաժեշտության հետ, ինչը գործադիր իշխանության արտոնությունն է, այն միևնույն ժամանակ դառնում է կախված երկխոսության, փոխըմբռնման, նոր գաղափարների և միջանձնային փոխհարաբերությունների զարգացման պահանջումներից: Խորհրդարաններն ամենաշատն են համապատասխանում այդ պահանջումներին արձագանքելու համար: Այդ պատճառով կա այսօր տեղ խորհրդարանական դիվանագիտության համար» [5, 13]:

Ինչպես տեսնում ենք, խորհրդարանական դիվանագիտությունն ունի մի շարք ինստիտուցիոնալ սահմանափակումներ և թույլ կողմեր, որոնք էապես ազդում են նրա արդյունավետության վրա, և որոնց ազդեցությամբ հաճախ ազդարարվում է, որ խորհրդարանական դիվանագիտությունը ոչ այլ ինչ է, քան պարզապես «խորհրդարանական գրասաշրջություն»: Որպեսզի խորհրդարանական դիվանագիտության մակարդակը բարձրանա զբոսաշրջությանն այդքան մոտ սահմանից, խորհրդարանը պետք է արդյունավետ իրականացնի իր դերը միջազգային հարաբերություններում: Մասնավորապես.

▪ խորհրդարանականներն իրենց միջազգային գործունեության ընթացքում պետք է իրապես համապետական նշանակության հարցեր բարձրացնեն, որպեսզի խորհրդարանական դիվանագիտությունը չընկալվի որպես զուտ ճանապարհորդելու պատրվակ,

▪ համապատասխան հանձնաժողովների և խորհրդարանական պատվիրակությունների կազմում ընդգրկված խորհրդարանականները պետք է ունենան գիտելիքի և փորձի պատշաճ մակարդակ: Այդ նպատակով անհրաժեշտ է պարբերաբար կազմակերպել դիվանագիտական նոր մարտահրավերներին համարժեք արձագանքելու գործում խորհրդարանների դերի ուսումնասիրությանը նվիրված թեմատիկ քննարկումներ, գիտական համաժողովներ, պատվիրել հետազոտական աշխատանքներ,

▪ միջազգային խորհրդարանական կառույցներում ազգային շահերը ներկայացնելիս առավել փաստարկված հանդես գալու համար անհրաժեշտ է ուժեղացնել խորհրդարանական դիվանագիտության վերլուծական բաղադրիչը: Այդ համատեքստում կարևորվում է ակադեմիական շրջանակների հետ սերտ համագործակցությունը և փորձագիտական հանրության հետ կապի ինստիտուցիոնալացումը,

▪ հաշվի առնելով այն, որ միջազգային ատյաններում չհամաձայնեցված գործողությունները կարող են բացասաբար անդրադառնալ երկրի միջազգային հեղինակության վրա՝ անհրաժեշտ է կառավարության հետ տեղեկատվության ավելի լայն փոխանակում: Խորհրդարանականները պետք է բավարար չափով իրազեկ լինեն պետական քաղաքականությանն ու բանակցային գործընթացներին՝ ընդգրկվելով միջազգային կազմակերպություններում ներկայացված կառավարական պատվիրակություններում: Պարզ է, որ խորհրդարանական դիվանագիտությունը չպետք է և չի կարող փոխարինել պաշտոնական դիվանագիտությանը. միջազգային բանակցությունների վարումը մնում է գործադիր իշխանության գործառույթը: Խորհրդարանը, սակայն, պետք տեղյակ լինի դրանց ծավալման ընթացքին և անհրաժեշտության դեպքում կառավարությանը հայտնի իր քաղաքական տեսակետը,

▪ խորհրդարանի արդյունավետ աշխատանքը մեծապես կախված է մարդկային և նյութական ռեսուրսների հասանելիությունից, ներառյալ՝ տեղեկատվությունը: Այն շատ հաճախ պակասում է զարգացող ժողովրդավարությամբ երկրներում, և այդ պակասուրդը կարող է լրացվել միջազգային համագործակցության շրջանակում՝ ինչպես բազմակողմ, այնպես էլ երկկողմ մակարդակներում: Այդ իմաստով գործընկեր խորհրդարանականների միջև առաջատար փորձի և գիտելիքների փոխանակումը կարող են զգալիորեն ամրապնդել խորհրդարանական դիվանագիտությունը,

▪ խորհրդարանը պետք է դառնա պատշաճ քաղաքական հեղինակությամբ ինստիտուտ ոչ միայն երկրի ներսում, այլ նաև նրա սահմաններից դուրս: Իսկ յուրաքանչյուր խորհրդարան այդպիսին ընկալվում է այնքանով, որքանով նրա որոշումները լուրջ են ընդունվում իր երկրի գործադիր իշխանության կողմից: Պետք է կիրառվեն կառավարության արտաքին քաղաքական գործունեության հաշվետվողականության գործուն մեխանիզմներ: Երկրորդական չէ նաև խորհրդարանի որակական կազմի խնդիրը, քանզի միայն որակյալ քաղաքական գործիչներով համալրված խորհրդարանը կարող է ապահովել իր որոշումների նկատմամբ լուրջ մոտեցում:

Ամփոփելով նշենք, որ խորհրդարանական դիվանագիտության արդյունավետության առնչությամբ առկա թերահավատությամբ և հնչող քննադատություններով հանդերձ՝ հետազոտողների և քաղաքական գործիչների մեծ մասը հանդես է գալիս դրա հետագա զարգացման օգտին՝ վստահություն հայտնելով, որ այն ի գործ է ամրապնդել երկրների միջև վստահությունը և ունենալ դրական ազդեցություն տարածաշրջանային և միջազգային սուր հիմնախնդիրների լուծման գործում [2, 54]: Համաշխարհային քաղաքականությունը կարիք

ունի երկխոսության նորարարական ձևաչափերի, և այդ իմաստով խորհրդարանական դիվանագիտությունը չափազանց պահանջված է՝ հաշվի առնելով երկրների և ժողովուրդների միջև փոխըմբռնումը և վստահությունն ամրապնդելու, անկայունության և սպառնալիքների աճող աղբյուրները զսպելու ունակությունը: Հանրության աչքում այդ հեղինակությունը պահպանելու համար խորհրդարանը պետք է արդյունավետ իրականացնի իր դերը միջազգային հարաբերություններում, որպեսզի խորհրդարանական դիվանագիտությունն աշխարհին ներկայանա իր ամենաշահեկան կողմերով՝ իբրև հիրավի արժեքավոր, այլ ոչ թե ֆորմալ գործիք:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-172>

Գրականություն

1. Bajtaj P. Shaping and Controlling Foreign Policy - Parliamentary Diplomacy and Oversight, and the Role of the European Parliament. Policy Department, Directorate-General for External Policies, 2015. p.11. Available at: [https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2015/549045/EXPO_STU\(2015\)549045_EN.pdf](https://www.europarl.europa.eu/RegData/etudes/STUD/2015/549045/EXPO_STU(2015)549045_EN.pdf).
2. Варлен М. В. О возрастающей роли парламентской дипломатии в многополярном мире. Журнал "Lex russica", № 7 (2019) [Электронный ресурс] // URL: <https://lexrussica.msal.ru/jour/article/view/848/744> (дата обращения: 05.08.2024).
3. Fiott D. On the Value of Parliamentary Diplomacy. Madariaga Paper, Vol. 4, No. 7, 2011, p. 5. Available at: <https://ru.scribd.com/document/528423935/silo-tips-on-the-value-of-parliamentary-diplomacy>.
4. Федеральное собрание Российской Федерации. Государственная Дума. Развитие парламентаризма, совершенствование организации выборов и использования эффективных избирательных технологий. Издание Государственной Думы. М., 2014. [Электронный ресурс] // URL: <http://duma.gov.ru/media/files/LDRluT0D08IB2hPJqLp0VtozVcnf6ftr8.pdf>. (дата обращения: 05.08.2024).
5. Jaskiernia J. Parliamentary Diplomacy – A New Dimension of Contemporary Parliamentarism. 2022. file:///C:/Users/USER/Downloads/Parliamentary_Diplomacy_-_A_New_Dimension_of_Conte%20(1).pdf
6. João Bosco Soares da Mota Amaral Promoting parliamentary diplomacy. Doc. 12428 Report. Committee on Political Affairs and Democracy. The Parliamentary Assembly of the Council of Europe. 26 October 2010, p.5. Available at: <https://assembly.coe.int/nw/xml/XRef/Xref-XML2HTML-EN.asp?fileid=12574&lang=en>.
7. Коньков А. Е., Чуков Р.С. Парламентская дипломатия: развитие общественной государственного взаимодействия на мегаполитическом уровне, Полис. Политические исследования. 2020. № 1. [Электронный ресурс] // URL: <https://www.politstudies.ru/files/File/2020/1/Polis-2020-1-Konkov.pdf>. (дата обращения: 05.08.2024).
8. Masters L. South Africa's emerging parliamentary diplomacy and soft power. Strategic Review for Southern Africa, Vol 37, No 2 (2015). P. 80. Available at: [http://www.up.ac.za/media/shared/85/Strategic%20Review/Vol%2037%20\(2\)/masters-pp74-93.zp74597.pdf](http://www.up.ac.za/media/shared/85/Strategic%20Review/Vol%2037%20(2)/masters-pp74-93.zp74597.pdf).
9. Российский совет по международным делам (РСМД). Парламентская дипломатия и международная безопасность-прямые, которые не пересекаются? 13.01.2021.

- [Электронный ресурс] // URL: <https://russiancouncil.ru/analytics-and-comments/analytics/parlamentskaya-diplomatiya-i-mezhdunarodnaya-bezopasnost-pryamyie-kotorye-ne-peresekeyutsya/> (дата обращения: 05.08.2024).
10. Парламентский контроль в Российской Федерации и в зарубежных странах: нормативное регулирование и практика реализации: коллективная монография. М., 2020, с. 163-164.
 11. Parliamentary Involvement in International Affairs. A report by the Inter-Parliamentary Union (IPU) to the Second World Conference of Speakers of Parliaments New York, 7-9 September 2005, p. 29. Available at: <http://www.ipu.org/splz-e/sp-conf05/involvement-rpt.pdf>.
 12. Роль парламентской дипломатии в решении актуальных вопросов международной повестки дня. Парламентские слушания, 2019, СПб. [Электронный ресурс] // URL: <https://belrus.ru/i/doc/sbornik-dokladov-PS-SPB.pdf>. (дата обращения: 05.08.2024).
 13. Sayfullaev D. PARLIAMENTARY DIPLOMACY IN MAKING OF FOREIGN POLICY. 2016, p. 1. <https://www.journalijdr.com/sites/default/files/issue-pdf/5749.pdf>.
 14. Stavridis S. Parliamentary Diplomacy: any Lessons for regional parliaments? Zaragoza, 2006, p. 11. Available at: <https://www.agora-parl.org/sites/default/files/agora-documents/Parliamentary%20Diplomacy%20-%20Any%20Lessons%20for%20Regional%20Parliaments.pdf>.
 15. Summary records of the proceedings of the 127th IPU Assembly. Session I: Roundtable discussion: Multilateralism and the role of parliamentary diplomacy. Québec City (Canada), 2012, p. 51. Available at: <http://archive.ipu.org/conf-e/127/sr.pdf>.
 16. Середа А. А., Парламентская дипломатия как перспективный инструмент внешнеполитической деятельности, журнал "Власть, том 32, № 3 (2024). [Электронный ресурс] // URL: <https://www.jour.fnisc.ru/index.php/vlast/article/view/10147/9891> (дата обращения: 05.08.2024).
 17. Weisglas, F. and de Boer G. Parliamentary Diplomacy, The Hague Journal of Diplomacy, Vol. 2 (2007), p. 97. Available at: <http://www.fransweisglas.nl/images/uploads/file/parliamentary%20diplomacy.pdf>.

Ограничения и слабые стороны парламентской дипломатии

Григорян Анна

Резюме

Ключевые слова: парламент, депутат, парламентская дипломатия, внешняя политика, исполнительная власть, контроль, политический туризм

В последние годы роль парламентской дипломатии в международных отношениях значительно возросла, а межпарламентские организации заняли устойчивое положение среди ключевых акторов мировой политики. Парламентская дипломатия выступает дополнительным инструментом «мягкой силы», служит важной платформой для диалога и обмена идеями, внося существенный вклад в развитие международного сотрудничества, укрепление взаимопонимания между странами, защиту национальных интересов и решение глобальных проблем.

В данном контексте роль парламента и его влияние на формирование и реализацию внешней политики приобретают особую значимость. Особое внимание уделяется оценке эффективности и перспектив международной деятельности парламентов, учитывая как возможности и преимущества парламентской дипломатии, так и её институциональные ограничения и слабые стороны.

На основе широкого круга источников выявлены факторы, препятствующие успешной реализации парламентской дипломатии, а также обозначены недостатки и проблемные вопросы, остающиеся недостаточно изученными. Это подчеркивает научную новизну и практическую ценность исследования.

Restrictions and Weaknesses of Parliamentary Diplomacy

Grigoryan Anna

Summary

Key words: parliament, deputy, foreign policy, executive power, control, political tourism

The article concludes that in recent years the role of parliamentary diplomacy in international relations has significantly increased, and inter-parliamentary organizations have taken a stable position among the key heads of modern world politics. Being an additional instrument of "soft power" in international relations and a valuable platform for dialogue and exchange of ideas, parliamentary diplomacy makes a significant contribution to the development of international cooperation, the establishment of mutual understanding between countries, the protection of national interests and the process of solving global problems. In this context, the role of parliament and its influence on the formation and implementation of foreign policy have become a subject of particular interest, specifically, how effective and promising is the international activity of parliaments, taking into account the fact that parliamentary diplomacy has both its own opportunities and advantages, as well as institutional limitations and weaknesses, which are discussed in this article. Based on a wide range of sources, the study identifies key factors that hinder the effective implementation of parliamentary diplomacy. It highlights existing shortcomings and weaknesses, as well as issues that, while relevant, remain largely underexplored – underscoring the study's scientific novelty and value.

Ներկայացվել է 06. 11. 2024 թ.

Գրախոսվել է 25. 11. 2024 թ.

Հղումով է տպագրության 05. 06. 2025 թ.

**Արդիականացվող հասարակությունների սոցիոմշակութային
հարացույցների արդի փոխակերպումների առանձնահատկությունները**

Գրիգորյան Աննա

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-181>

Հանգուցային բառեր. *ազատականություն, սոցիալ-մշակութային հարացույցներ, տնտեսակենտրոն մշակույթ, համաշխարհայնացում, տեղեկատվական հասարակություն*
Նախաբան

Հոդվածում քննարկված են ազատականության սոցիոմշակութային այն նախապատվություններն ու հարացույցերը, որոնք հետարդիականության շրջանում ենթարկվում են բովանդակային փոխակերպումների:

Քաղաքակրթության զարգացման ու փոխակերպման փուլերը քննարկելով սոցիոմշակութային հարացույցների դիտանկյունից՝ ինդուստրիալ-ազատական մշակույթի հարացույցների փոխակերպումները վերլուծվում են սոցիալական փոփոխությունների՝ արագության, փոփոխությունների տարածական ընդգրկումների, համաշխարհայնացման, ինստիտուտային կարգավորման վերագրային կառույցների ձևավորման և անորոշությունների աճի տեմպերի գործընթացների համատեքստում:

Կյանքի սոցիալական դիմափառի և համաշխարհայնացման միտումների արագացումով սկսվում է ազատական-ինդուստրիալ քաղաքակրթության կայունությունն ապահովող տնտեսական, քաղաքական ու սոցիոմշակութային մեխանիզմների գործառնական անկումը: Մասնավորապես, վերագրային կորպորացիաների ձևավորումը վիճահարույց է դարձնում ազգային սեփականության, ազգային ինքնիշխանության, ազգային տնտեսության, ազգային նույնականության, ազգային մշակույթի մասին ավանդական պատկերացումները: Այդ ամենի հետևանքով հասարակական կյանքը դառնում է տարաբնույթ և այլընտրանքային, ծագում են բազմաբնույթ նախապատվություններ, ընտրության այլընտրանքային հնարավորություններ, ինչի հետևանքով երբեմնի միասնական մշակույթը կոտորակվում է և դառնում խճանկարային:

Հոդվածում քննարկվում են նաև ազատական մշակույթի արդի փոխակերպումների այն դրսևորումները, որոնց հետևանքով «արտադրող անհատը» վերաճում է «սպառող անհատի», «ազգային քաղաքացին»՝ «համաշխարհային քաղաքացու», «ազատության ժողովրդավարությունը»՝ «հավասարության ժողովրդավարության» և այլն:

Սոցիոմշակութային հարացույցների արդի փոփոխակերպումների առանձնահատկությունները: Արդիականացվող հասարակությունների սոցիոմշակութային հարացույցների փոխակերպումների բնույթն ու բովանդակությունը ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է առաջին հերթին պարզել, թե հասարակության քաղաքական կանոնակարգման ու կարգավորման ժամանակ մշակութային ինչպիսի նախապատվություններ են գերիշխում:

Արտադրության և սպառման տարանջատման խորացման հետևանքով ժամանակակից հասարակության կազմակերպման սոցիոմշակութային նախագծի շրջանակներում ձևավորվեցին մի շարք սկզբունքներ, որոնք ունեն համակարգաստեղծ ու համակարգապահպան ակտիվ գործառնություններ: Դրանք ազատական մշակույթին հաղորդեցին վարքի կարգավորման այնպիսի գործառնություններ, ինչպիսիք չունեին սովորույթներն ու ավանդույթները [7, 81-83]:

Մասսայական արտադրության, մասսայական սպառման ինդուստրիալ հասարակության արտադրության և սպառման արդյունավետության կարևորագույն նախադրյալներից մեկը դառնում է միակերպ ապրանքների և միակերպ պահանջմունքների շուկայի ձևավո-

րումը: Այն, իր հերթին, ձևավորում է միակերպ ապրելակերպ, ոճ, կենցաղ, ճաշակ և այլն: Միատարրությունը և միասեռությունը, ինչը ընդհանրապես խիստ բնորոշ է ինդուստրիալ հասարակության ազատական մշակույթին, իր հերթին նպաստում է սոցիալական-քաղաքական ու հոգևոր կենտրոնացմանը: Ի դեպ, այդ կենտրոնացումը տեղի է ունենում թե ողջ հասարակության մասշտաբով և թե առանձին ոլորտներում ու բնագավառներում:

Այսպիսով, ազատականությանը բնորոշ տնտեսակենտրոն մշակույթի զարգացումն ու ծավալումն աստիճանաբար ձևավորում էր նոր տիպի անհատներ ու սոցիալական խմբեր, որոնք հակված են համապատասխան ձևով վերափոխել նաև սոցիալական միջավայրը, հասարակության քաղաքական կազմակերպման ձևը, վերացնել ազատ անհատականությունների դրսևորման և նրանց տեղափոխման արգելքներն ու արգելանքները [6, 77]: Այս ամենին հետևանքով արդի քաղաքակրթությունը ձեռք է բերում ևս մի նոր սոցիոմշակութային որակ, ինչը կարելի է անվանել էթնոկենտրոնություն:

Էթնոկենտրոն մշակույթի առանցքն ազգ-պետությունների ձևավորումն է: Դրամատիքական հարաբերությունների տրամաբանությունը պահանջում էր ձևավորել տնտեսական, սոցիալական, իրավաքաղաքական, տեղեկատվական ու մշակութային մեկ միասնական ազգային տարածություն, ինչը կբացառեր տնտեսակենտրոն անձի գործունեության համար անհրաժեշտ ազատ շուկային խոչընդոտող կրոնական, համայնքային, ազգայնական, հովանավորչական և ավատատիրությանը բնորոշ այլ կարգի գործոնների դրսևորումները: Բանն այն է, որ առանց քաղաքական համախմբման արտադրողների ու սպառողների միջև տարբերություններն ինչքան մեծանում են, այնքան շուկան և ազգ-պետությունը վերաճում են գերիշխող սոցիալական ռեալության: Այսինքն՝ տնտեսակենտրոն և էթնոկենտրոն մշակույթներն ինդուստրիալ հասարակությունը դարձնում են առավել ամբողջական ու օրգանական [4, 120-125]:

Մինչև 20-րդ դարի կեսերը մասսայական արտադրությունը և մասսայական սպառումը գտնվում էին քիչ թե շատ հավասարակշռված վիճակում, և պետության միջամտությունը պահպանում էր այդ հավասարակշռությունը, իսկ սոցիալական ապահովման պետական միջոցառումները նպաստում էին տնտեսական հավասարակշռությունն ու սոցիալական կայունությանը՝ հասարակությունը դարձնելով օրգանական ամբողջականություն: Այնուհայտ փաստ է, որ կապիտալիզմին բնորոշ է մշտական շարժունությունն ու մրցակցությունը, ինչն այդ համակարգին տալիս է անկայունություն: Եվ այնուամենայնիվ, անկայունության և լարվածության պատճառներ ունեցող կապիտալիստական հասարակությունն ուներ գործառնության ու վերարտադրության կարգավորման ներքին մեխանիզմներ՝ «խաղի կանոններ», որոնք նպաստում էին ոչ միայն մրցակցությանն ու նորարարությանը, այլև համակարգը դարձնում կայուն ու ամբողջական:

Տնտեսական իմաստով ազատական-բաց հասարակությունների կայունության կարևորագույն նախադրյալներից մեկն ապրանքների մասսայական արտադրությունն էր: Շնորհիվ արտադրության արդյունքների ստանդարտացման, ինդուստրիալ հասարակությունը կարճ ժամանակամիջոցում կարողացավ ստեղծել առաջին անհրաժեշտության ապրանքների մասսայական արտադրություն և սահմանել այնպիսի գներ, որոնք, իրենց հերթին, նպաստեցին մասսայական սպառման աճին: Մասսայական ապրանքների արտադրությունը, ինչը պայմանավորված էր հետպատերազմյան Արևմուտքի ապրելակերպի որակական աճով, հնարավոր էր միայն խոշոր ձեռնարկությունների ստեղծումով, ուր աշխատողների թիվը երբեմն հասնում էր մի քանի տասնյակ հազարի: Այս հանգամանքը կյանքի կազմակերպման ազատական մշակույթին տալիս էր կայունացնող լրացուցիչ գործառնություն, քանի որ արդյունաբերության մեջ աշխատող մարդիկ իրենց շահերը պաշտպանելու, ձեռնարկությունների հետ հարաբերությունները կարգավորելու և նմանատիպ այլ նկատառումներով կազմակերպվում էին որոշակի միությունների տեսքով, ստեղծում արիմիություններ, որոնք մշակում էին արտադրահարաբերություններ կարգավորող քաղաքա-

կան լեզու և հակասություններ հաղթահարող ինստիտուցիոնալ համակարգ: Շուկայական հարաբերությունների կարգավորման և ներհասարակական կայունության ապահովմանը նպաստող մյուս կարևոր հանգամանքը կապված է հասարակական սպառման աճի և համապատասխան պահանջմունքները բավարարելու հնարավորությունների ընդլայնման հետ: Ըստ էության մասսայական սպառումը դառնում է մասսայական արտադրության հիմնական շարժառիթը: Վերջինս, իր հերթին, նշանակում է նոր աշխատատեղեր, զբաղվածության կայուն երաշխիքներ, կայուն եկամուտներ, բարեկեցություն, վաղվա նկատմամբ հավատ և այլն:

Մասնագիտական գրականության մեջ տարածված է այն տեսակետը, թե երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո կապիտալիզմի և ազգ-պետությունների յուրահատուկ միավորման շնորհիվ ձևավորված ազատական-ժողովրդավարական մշակույթը սկսեց ճգնաժամ ապրել, ինչի հետևանքով վտանգվեց նաև արևմտյան քաղաքակրթության որոշակիությունն ու զարգացման տրամաբանությունը: Սկսվեցին տնտեսական, քաղաքական ու մշակութային համաշխարհայնացման (գլոբալացման) գործընթացները, որոնք խիստ կասկածի տակ դրեցին ազգային քաղաքական ինքնիշխանության հարցը: Նման մտահոգության պատճառն այն է, որ ինդուստրիալ և հետինդուստրիալ հասարակություններում ազգ-պետությունների գործառույթները սկզբունքորեն տարբերվում են: Կապիտալիստական քաղաքացիական հասարակության ձևավորման ինդուստրիալ փուլում առաջին պլան մղվեց քաղաքական քաղաքացիության խնդիրը, առաջ եկավ քաղաքական իրավունքների ընդլայնման պահանջարկ, և կապիտալիզմի և քաղաքացիության յուրահատուկ դաշինքի ու համագործակցության շնորհիվ առաջ եկավ պետության նոր գործառույթների անհրաժեշտություն: Մասնավորապես, թե՛ կապիտալիստական հարաբերությունների և թե՛ քաղաքացիական հասարակության զարգացումն ազգ-պետություններից պահանջում էր ֆինանսական ներդրումներ անել կապի և մասսայական կրթության համակարգերում: Ավելի ուշ ստեղծվեց առողջապահության, սոցիալական պետության մոդելը, որի շրջանակներում կրթության ազգային համակարգը, սպառողական շուկան, մասսայական տեղեկատվության միջոցները նպաստեցին ազգի սոցիալական, քաղաքական ու մշակութային ոլորտների միաձուլմանը, ինչի հետևանքով ազգը վերաճեց ինքնանույնականացման կոշտ ինստիտուտի:

Բայց, ինչպես արդեն նշեցինք, 20-րդ դարի կեսից սկսվեցին համաշխարհայնացման գործընթացներ, որի հետևանքով ազգ-պետությունները զրկվեցին իրենց երբեմնի գործառույթների մի մասի մենաշնորհից:

Արդի համաշխարհայնացման համատեքստում ազատականության սոցիոմշակութային հարացույցների փոխակերպումների առանձնահատկությունները ճիշտ հասկանալու համար անհրաժեշտ է նշել, որ նույնիսկ ձևավորման «մաքուր» շրջանում հետավատարական հասարակությունները ներքնապես երբեք չեն եղել զուտ ազգային: Շենք միայն միջ-պետական տնտեսական ու քաղաքական պայմանավորվածությունների ու դաշինքների պատճառով, այդ հասարակություններն ունեին արտազգային ուղղվածություն:

Կապիտալիստական տնտեսությունը և ազատական-ժողովրդավարական մշակույթը չէին կարող ունենալ ազգային պատկանելություն: Ինչ վերաբերում է համաշխարհայնացման երևույթին, ապա այն վերը նշված վերազգային երևույթներին տվեց գերտարածական դրսևորման նոր հնարավորություններ:

Համաշխարհայնացումը ոչ միայն ինքնիշխան ազգային պետությունների փոխգործողությունների ակտիվացում է նշանակում, այլև մարդկային փոխպայմանավորվածությունների և փոխներթափանցումների և սոցիալ-տնտեսական կյանքի ինտեգրացիայի ուժեղացում:

Չանտեսելով հարցի այդ կողմը՝ պետք է նկատել, որ համաշխարհայնացումը նաև սոցիալական, մշակութային ու քաղաքական գործոն է: Կյանքի բոլոր ոլորտները ընդգրկող

այս երևույթի պայմաններում, ինչպես արդեն նշվեց, ազգային պետություններն աստիճանաբար կորցնում են իրենց իրավասությունների շրջանակները: Ճիշտ է, պետությունները պահպանում են կրթության, սոցիալական ապահովագրման, ինքնանույնականացման, կարգի պահպանման գործառնությունները, բայց տնտեսական կյանքում իրավիճակն էապես փոխվում է: Մասնավորապես.

ա) վերազգային կորպորացիաների ձևավորումն անորոշ ու անհասկանալի է դարձնում սեփականության պրոբլեմը: Դժվար է միանշանակ որոշել, թե կոնկրետ որ երկրի սեփականությունն է համարվում այս կամ այն վերազգային կորպորացիան: Այս առնչությամբ անորոշ ու անհասկանալի է դառնում նաև այն հարցը, թե նմանատիպ կորպորացիաները ո՞ր երկրի առջև են պատասխանատու և որ երկրի ազգային շահերն են պաշտպանում,

բ) ազգային պետությունների հասարակական կյանքի կարգավորման նախորդ մեխանիզմների տարրալուծման մյուս պատճառն այն է, որ տնտեսության համաշխարհային դաշտը մշտապես ճնշում է պետությունների գործառնական մեխանիզմների վրա, և բիզնեսի բնագավառում նրանք չունեն ներգործության երբեմնի հնարավորությունները: Ձևավորվում է մի իրավիճակ, երբ առանձին երկրներ նոր պայմաններում դժվարությամբ են պահպանում իրենց ինքնիշխանությունն ու ամբողջականությունը,

գ) համաշխարհայնացումը և տնտեսական անորոշությունների հետագա խորացումը պահանջում է արագություն, ճկունություն և տարաբնույթ ռեակցիա, ինչը հնարավոր չէ խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների պայմաններում: Իսկ դա նշանակում է, որ միևնույն կառույցի շրջանակներում որքան հնարավոր է շատ մասսայական սպառման ապրանքներ արտադրելու փոխարեն առաջին պլան է մղում մյուսների հետ շատ ավելի պայմանագրեր կնքելը: Տեղի է ունենում ուղղահայաց կապերի ապահիստեգրում, ինչը, իր հերթին, պահանջում է ստեղծել հաղորդակցման առավել բարդ ինֆրակառուցվածքներ:

Նշված գործընթացների հետևանքով կյանքի կազմակերպման ազատական մշակույթը ձեռք է բերում սկզբունքորեն նոր դրսևորում, և նրա էությունը բնութագրող սոցիոմշակութային նոր արժեք է դառնում «ճկունությունը»:

Ի տարբերություն կապիտալիզմի զարգացման ինդուստրիալ փուլին, որին, ինչպես նկատում է Է. Թոֆֆլերը, բնորոշ էին ստանդարտացումը, կառուցվածքայնությունը, մասնագիտացումը, համաժամանակակցությունը և այլն, հետինդուստրիալ-ստեղեկատվական հասարակությանը բնորոշ է արտադրության, աշխատուժի, պահանջարկի և առաջարկի, աշխատավարձի և ընդհանրապես կյանքի բոլոր ոլորտների ճկունությունը: Այս ամենի հետևանքով հասարակական կյանքն ու ապրելակերպը դառնում են տարաբնույթ և այլընտրանքային, ծագում են բազմաբնույթ ու բազմապիսի նախապատվություններ, ընտրության այլընտրանքային հնարավորություններ, ինչը նշանակում է նաև, որ միևնույն հասարակության ներսում երբեմնի միասնական մշակույթը կոտորակվում է խմբային, անհատական ու գանձազան այլ «աղանդավորական» մշակույթների [2]:

Այս իրողությունը երկակի ձևով է ազդում անձի և նրա նույնականացման ձևավորման վրա: Մշակույթի կոտորակումը մի կողմից նպաստում է անձի նույնականացման բեկորացմանը և կայունության ու բավարարվածության կորստի, մյուս կողմից՝ այդ երևույթը կարելի է դիտարկել որպես ժողովրդավարացման գործընթաց, որը նպաստում է անձի կենտրոնացմանը և ազատ ընտրություն կատարելու հնարավորությունների ընդլայնմանը: Երկու դեպքերի համար էլ ընդհանուրն այն է, որ նոր պայմաններում մարդը ձեռք է բերում տարբեր ապրելակերպեր, իրավունք և հնարավորություն: Պակաս կարևոր չէ նաև այն հանգամանքը, որ սոցիոմշակութային բազմազանության մեջ ապրող անհատների համար դասակարգային պատկանելիությունն ու սոցիալական դերն այլևս վճռորոշ նշանակություն չունեն վարքի նույնացման համակարգում և, հետևաբար, չեն կարող դառնալ քաղաքական մոբիլիզացիայի գլխավոր դրոշմապատճառ:

Վերջաբան

Այսպիսով, ազատականության սոցիոմշակութային հարացույցների և կյանքի կազմակերպման ժողովրդավարական մշակույթի արդի փոխակերպումների հետևանքով ձևավորում է հասարակության քաղաքական կազմակերպումի մի նոր մշակույթ, որը ըստ էության չի արտացոլում ոչ քաղաքացիական հասարակության կամքը, ոչ էլ պատմական առաջընթացի տրամաբանությունը: Այս իրողությունը կարելի է անվանել քաղաքական իշխանության ինքնանպատակ վերարտադրություն, քանի որ այս դեպքում ոչ քաղաքականությունն է հանդիսանում հասարակության սոցիալ-տնտեսական ու բարոյական շահերի պաշտպանը, ոչ էլ վերջինները դառնում են իշխանության ինքնավերարտադրման միջոց: Համակարգի ինքնակազմակերպման ու ինքնավերարտադրության սոցիոմշակութային հարացույցների վերոհիշյալ փոխակերպումների հետևանքով դասական ազատականությանը բնորոշ «ազատական ժողովրդավարությունը» վերափոխվում է «հավասարության ժողովրդավարության» [3], քանի որ ինքնիշխան ու ինքնաբավ անհատների հասարակությունը վերաճում է մասսայի հասարակության:

Հաշվի առնելով այն իրողությունը, որ արդի հասարակություններում ընթանում են սոցիալ-տնտեսական, քաղաքական և սոցիոմշակութային արմատական փոխակերպումներ և ձևավորում են ազատական ժողովրդական հարացույցներով գործառնող ազգային-պետական համակարգեր, հողվածում անդրադարձ է կատարվել նաև անցումային հասարակությունների սոցիոմշակութային փոխակերպումների առանձնահատկություններին:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-181>

Գրականություն

1. Тоффлер Э. Третья волна. М.: Издательство АСТ, 1999, с. 92-116.
2. Տէ և Հարությունյան Է., Ազգային ինքնություն և կյանքի մշակույթ, Երևան, Մակմիլան-Արմենիա, 2004, էջ 77:
3. Арон Р. Эссе о свободах: Универсальной и единственной формулы свободы не существует // Политические исследования, 1996, N 1, с. 72.
4. Бауэр О. Национальный вопрос и социал-демократия // Нации и национализм. 2015. - 658 с.
5. Маркузе Г. Одномерный человек: Исследование идеологии развитого индустриального общества // Маркузе Г. Эрос и цивилизация. М.: REFL-book, 1994. – 370 с.
6. Шпенглер О. Образ и действительность // Закат Европы. Т. 1. Новосибирск, 1993. - 674 с.
7. Fukuyama F. Trust // The social Virtues and the Creation of Prosperity. N.Y.: Free Press, 1966. - 480 p.

Особенности современных трансформаций социокультурных парадигм модернизирующихся обществ

Григорян Анна

Резюме

Ключевые слова: либерализация, социокультурные парадигмы, экономоцентрическая культура, глобализация, информационное общество

В статье рассматриваются те социокультурные предпочтения и парадигмы либерализации, которые подвергаются содержательным трансформациям в эпоху модерна.

Трансформации индустриально-либеральных культурных парадигм в контексте развития и модификации цивилизации с позиций социокультурных парадигм анализируются в контексте процессов социальных изменений, интенсивности, глобализации пространственных включений, институционального регулирования, формирования наднациональных структур и темпов роста неопределенности. С ускорением социального ритма жизни и тенденций глобализации начинается упадок работы экономических, политических и социокультурных механизмов, обеспечивающих либерально-индустриальную цивилизацию и социокультурное существование. В частности, традиционные представления о национальной собственности, национальном суверенитете, национальной экономике, национальной идентичности и национальной культуре делают реальностью формирование наднациональных корпораций. В результате отмеченных трансформаций социокультурных парадигм характерная для классического либерализма «либеральная демократия» трансформируется в «демократию равенства», поскольку общество суверенных и самостоятельных индивидов перерастает в общество масс. В результате этого, в общественной жизни возникают разнообразные предпочтения, альтернативные возможности выбора, вследствие чего некогда единая культура фрагментируется и становится мозаичной. В статье рассматриваются также проявления современных трансформаций либеральной культуры, в результате которых «человек-производитель» превращается в «человека-потребителя», «национальный гражданин» – в «гражданина мира» и т.д.

Modern Transformations Features of Socio-cultural Paradigms of Modernizing Societies

Grigoryan Anna

Summary

Key words: *liberation, socio-cultural paradigms, economy-centered culture, globalization, information society*

The article touches upon such socio-cultural preferences and paradigms of liberation, that undergo substantive transformations in the period of modernity.

Discussing the stages of development and transformation of civilization from a socio-cultural perspective, the transformations of industrial-liberal culture paradigms are analyzed in the context of the globalization process, as well as institutional regulation, formation of supranational structures and growth rates of discussions. With the acceleration of the social rhythm of life and the trends of socialization, the operational decline of the economic, political and socio-cultural mechanisms that ensure the existence of a liberal-industrial civilization begins, in particular, the formation of supranational corporations makes controversial the traditional ideas of national property, sovereignty, national economy, identity and national culture.

As a result of these changes, public life has become more diverse and fragmented, offering a wider range of preferences and opportunities for participation. The once unified culture is now breaking apart into a mosaic of alternatives. The article also explores how liberal culture is being transformed: the 'producing individual' is turning into a 'consuming individual,' the 'national citizen' into a 'global citizen,' and the 'democracy of freedom' is evolving into a 'democracy of equality,' among other shifts.

Ներկայացվել է 23. 09. 2024 թ.

Գրախոսվել է 11. 11. 2024 թ.

Հղումով է տպագրության 05. 06. 2025 թ.

Աշխարհաճանաչողության էմպիրիկ և տեսական մակարդակները

*Տիգրանյան Գնել,
Տիգրանյան Սոնա*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-187>

Հանգուցային բառեր. *աշխարհաճանաչողություն, էմպիրիկ և տեսական գիտելիք, աշխարհընկալում, աշխարհայացք, գիտական գիտելիք, տեսություն, պրակտիկա*

Նախաբան: Իրականության ճանաչողությունն իրականանում է երկու մակարդակում՝ զգայական և տրամաբանական: Զգայական իմացությունն աշխարհի ճանաչողությունն է զգայարանների միջոցով: Զգայական գիտելիքներն անմիջական են, ծագում են իրականության կենդանի հայեցողությունից և արձանագրում օբյեկտի արտաքին հարաբերություններն ու կապերը: Տրամաբանական կամ վերացական իմացությունը կենտրոնանում է ճանաչողության օբյեկտի ներքին օրինաչափությունների և բովանդակության վրա՝ վերացարկելով փորձնական գիտելիքի փաստական տեղեկությունն ու նկարագրությունը:

Աշխարհաճանաչողությունը իրականության վերաբերյալ գիտականորեն հիմնավորված և փաստարկված համակարգ է, այն փնդոյալության բնագավառում առավելապես ստանում է աշխարհայացքի հատկորոշում: Գիտական աշխարհայացքին բնորոշ է իրականությունը առավելապես ճշգրիտ արտացոլելու կարողություն, ապագայի տեսլականի նկարագրություն և դրան հասնելու գործիքակազմի մեկնաբանում:

Աշխարհաճանաչողությունը հավերժական և անփոփոխ ճշմարտություն չէ, այն միշտ կոնկրետ է, կա և գործում է տարածաժամանակային որոշակի հարթության մեջ: Այն անընդհատ ծավալվող, խորացող գործընթաց է երկու պատճառով՝

1) Փոփոխվում, ձևափոխվում է օբյեկտը (իրականությունը), հետևաբար անկարելի է փոփոխվողի մասին ավարտուն, անփոփոխ կամ ճշմարիտ գիտելիք ստեղծել:

2) Երևույթի, օբյեկտի մասին անընդհատ խորանում, զարգանում է գիտական ուսմունքը, հետևաբար աշխարհընկալումը ճշմարտության կայունության և փոփոխության գումար է, բացարձակի և հարաբերականի միասնություն:

Աշխարհաճանաչողության և իրականության վերաբերյալ համապարփակ գիտական տեսություն ստեղծելու գլխավոր նախապայմանը մարդու՝ բնության կամ հասարակության միջև սուբյեկտիվ և օբյեկտիվ կապի գոյությունն է: Առաջին պարագայում գիտելիքը անհատականացված է, ծագում է ձևավորվում է տարերայնորեն, առօրյա կենսափորձից, հետևաբար այն աշխարհի, շրջապատի նկատմամբ չհամակարգված, խիստ անհատական, երբեմն գիտականորեն չհիմնավորված ուսմունք է: Մինչդեռ օբյեկտիվ գիտական աշխարհընկալման տեսությունը ստանում է համընդհանրության ընկալում, որի հենքի վրա ձևավորվում է աշխարհայացքը:

Աշխարհաճանաչողություն և գիտելիք: Մարդու կողմից իրականության գիտական յուրացման և աշխարհաճանաչողության գործընթացը իրականացվում է երկու հիմնական սկզբունքների զուգորդմամբ՝ գիտելիքի փորձնական դաշտի կիրառման և նրա վրա տեսական դրույթների համակարգմամբ ու համադրմամբ: Դճանաչողության առաջին մակարդակում մենք ապավինում ենք բացառապես զգայական իմացությանը, փորձնական պատկերների գործնականում կիրառելու մարդկային հնարավորությանը: Սակայն որքան էլ գիտելիքի այս մակարդակը ամբողջական է, փորձով հաստատված, այսուհանդերձ այն չի կարող բացահայտել օբյեկտների և գործընթացների պատճառահետևանքային կապերը, մեկնել երևույթների ներքին էությունն ու բնույթը: Գիտելիքի ամրագրման առաջին մակարդակը ամեննին միայն զգայական-փորձնական դաշտի մեջ չի ձևավորվում: Փորձից ձեռք բերված

գիտելիքը ամրակայվում է լեզվամտածողության մեջ, հեռանում պրակտիկ շերտից և վերացարկվում բանական ճանաչողության մակարդակում՝ պահպանելով զգայական մտածողության հենքը:

Եթե ճանաչողության զգայական գիտելիքը իրականության առարկայական նախվ ընկալումն է, ապա իմացության տեսական մակարդակում փաստերի իդեալականացված նկարագրության շնորհիվ մտածողությունը հեռանում է առօրյա իմացության ենթաշերտից և ստեղծում վերացական օբյեկտներ և դրանց միավորող սկզբունքներ [3, 162]: Զգայական իմացությունը իրականացվում է երեք փոխլրացվող փուլերով՝ զգայություն, ընկալում, մտապատկեր: Զգայությունը ճանաչողության ընթացքում մեկ զգայարանի և առարկայի հարաբերությամբ ստեղծված գիտելիքն է, որի մեջ իմացության օբյեկտը մարդուն տրվում է մեկ հատկությամբ (միայն տեսնելը, միայն լսելը): Սակայն մեկ զգայարանի կողմից տրված գիտելիքը բավարար չէ օբյեկտն ամբողջովին ճանաչելու համար: Առարկան բազմաթիվ հատկությունների, կողմերի ու հարաբերությունների միասնություն է: Այդ կողմերի ամբողջական ճանաչումը զգայարանների կողմից արձանագրված գիտելիքների հանրագումարն է: Զգայված և ընկալված առարկան, նրա կողմերը հայտնաբերվելով դառնում են գիտելիք: Մարդը կարող է առարկայի բացակայության ժամանակ իր գիտակցության մեջ վերականգնել նրա զգայական կողմերը, որովհետև տեղի է ունեցել մտապատկեր:

Մտապատկերը նախկինում զգայված օբյեկտների վերացարկված մոդելների վերականգնումն է մարդու գիտակցության մեջ դրանց բացակայության պարագայում: Մտապատկերը, լինելով զգայական իմացության փուլ (իր մեջ պարունակում է միայն զգայական գիտելիք), միաժամանակ նաև վերացական է, քանի որ ճանաչողության օբյեկտը տվյալ պահին բացակայում է, իսկ իմացությունը առավելապես հենվում է ինտուիցիայի, հիշողության և ստեղծագործական մտածողության վրա: Զգայական իմացությունը աշխարհի հետ հարաբերվելու, այն արտացոլելու առաջին աղբյուրն է:

Վերացական կամ տեսական մտածողությունը ևս իրականացվում է երեք փուլերով՝ հասկացություն, դատողություն, մտահանգում: Յուրաքանչյուր օբյեկտ ունի բազմաթիվ հատկություններ: Դրանց մի մասը երկրորդական է, մյուսները՝ գլխավոր, ատրիբուտային: Երկրորդական հատկանիշներով տարբերվում են միևնույն տեսակի առարկաները, իսկ գլխավոր հատկության գոյության պարագայում առարկան պահպանվում է որպես ինքնուրույն միավոր և հակադրում մյուսներին: Մարդկային հաղորդակցումը, մտածողությունը հենվում է հասկացությունների վրա: Սակայն դրանք որոշակի կապից դուրս մտքի միավորներ չեն: Շաղկապվելով միմյանց հետ՝ հասկացությունները դառնում են միտք, հաղորդակցության և մտածողության միավորներ՝ դատողություններ: Դատողությունն արտահայտում է երկու և ավելի հասկացությունների փոխադարձ կապը՝ ժխտման կամ հաստատման միջոցով: Լեզվամտածողությունը դատողությունները տրամաբանական կապերի միջոցով իրականացնում է հաղորդակցություն, սակայն մտքերը քառասյին չեն, այլ կանոնակարգված, մեկը ենթադրում է մյուսին և այսպես շարունակ: Այսինքն մեկ դատողությունը նախորդի եզրակացությունն է և մյուսի ծագման հիմքը: Դատողությունների այսպիսի կապակցումը հանգեցնում է մտքի առավել բարդ ձևի՝ մտահանգման: Մտահանգման շնորհիվ մտածողությունը ձեռք է բերում ինքնուրույնություն, ավելի ու ավելի է հեռանում զգայական պատկերներից և գործում ընդհանրական-վերացական հարաբերությունների մեջ:

Մարդկային բոլոր գիտելիքների հիմքը զգայությունն է, այն օբյեկտիվ աշխարհի սուբյեկտիվ պատկերն է: Սակայն իրականության մեջ կան բազմաթիվ գործընթացներ, երևույթներ, որոնք շոշափելի, տեսանելի, զգայելի չեն, բայց որոնց մասին մարդը ստեղծում է ստույգ գիտելիքներ: Բարդ, անմիջականորեն չզգայվող գիտելիքների հիմքը տրամաբանական կամ վերացական մտածողությունն է: Հենվելով զգայականի վրա՝ վերացական իմացությունը տալիս է ընդհանրացված և էական գիտելիք: Աշխարհաճանաչողության գիտելիքի ամփոփման և համակարգման եզրահանգումներում գիտությունը հեռանում է զգայական իմացու-

թյան սահմաններից, երբեմն նաև հակասում նրան: Այս պարագայում աշխարհի գիտական պատկերի հիմնավորումը իրականացվում է պրակտիկ ստուգման կամ հերքման գործընթացի վրա: Փորձի միջոցով հաստատման կամ հերքման վրա հենվելը դեռևս հնարավորություն չի տալիս տարբերել գիտությունը ոչ գիտելիքից կամ մոլորությունից: Այսուհանդերձ, էմպիրիկ ստուգելիությունը, որը հաստատում կամ հերքում է առաջադրվող հայեցակարգերը, գիտական գիտելիքի սահմանազատման կարևոր չափանիշ է: Իհարկե, գիտության մեջ կան գաղափարներ ու տեսություններ, որոնք հնարավոր չէ ստուգել փորձով: Սա հասկապես վերաբերում է փիլիսոփայական աշխարհայացքային խնդիրների քննարկման և մեկնաբանման դրույթներին [2, 12-13]: Աշխարհաճանաչողությունը սկսվում է իրականության կենդանի հայեցողությունից, զգայական գիտելիքից, խորանում է դեպի բանական, վերացական մտածողությունը, այնտեղից էլ դեպի փորձը, պրակտիկան: Այս կոնկրետից-վերացականին և վերացականից-կոնկրետին հակադարձության մեջ ոչ միայն ստուգվում են գիտելիքները, բացահայտվում է դրանց ճշմարտության արժեքը, այլև ծավալվում, ընդարձակվում են իմացության սահմաններն ու հնարավորությունները:

Աշխարհի գիտական պատկերի ստեղծման էմպիրիկ մակարդակի գերխնդիրը փաստական տեղեկատվության հավաքագրումն ու դրա հիմնավորման շրջանակում փորձարարական օրենքի, օրինաչափությունների մեկնաբանումն է: Բայց փորձնական գիտելիքը անհրաժեշտաբար կարիք ունի տեսական հիմնավորման և մոդելավորման, որի կառուցվածքում առաջնային է դառնում ապագայի կանխատեսման սկզբունքը: Տեսական մակարդակում գիտական գիտելիքը ներկայանում է գործնականում հաստատված օրինաչափությունների տեսքով, իսկ փաստական նյութը՝ որպես վստահելի գիտելիք:

Գիտելիքի արտաձման և հետազոտության հնարների և մեթոդների կիրառման առանձնահատկությունները կապված են նյութի փորձնական և տեսական ուսումնասիրության անհրաժեշտության հետ: Քանի որ իմացության օբյեկտը դիտարկվում է տարբեր ապակետներով, հետևաբար՝ նրա տեսականին ներկայացումը գիտելիքի մեջ տրվում է տարբեր ձևերով:

Սակայն բոլոր գիտություններն իրենց հետազոտությունները սկսում են փորձնական տվյալների հավաքումից կամ առաջադրված գաղափարները փորձով հիմնավորելուց: Պրակտիկան գիտելիքների ճշմարտության չափանիշն է: Գործունեության մեջ մոլորություններից խուսափելու, հնարավոր սխալները սրբազրելու համար միշտ պետք է վերադարձ կատարել փորձնական-զգայական դաշտ, միտքը համադրել իրականության հետ:

Տեսական հետազոտությունը չի ենթադրում ուսումնասիրվող օբյեկտի կամ երևույթի անմիջական ներկայություն, այն առկա է միջնորդավորված կամ ենթադրական տեսքով: Ուստի որքան էլ տեսական ուսումնասիրության հնարավորությունները լինեն կատարյալ և անհերքելի, այն անկարող է հավակնել բացարձակ ճշմարտության, եթե այն գործնականում չի հաստատվել: Այս պարագայում բարձրանում է գիտելիքի հավաստիության աստիճանը, և այն ներկայանում է իբրև տեսություն: Տեսական գիտելիքների միջոցով է իմացությունը ձգտում գտնել ճշմարտությունը:

Իմացության հիմքը փորձնական գիտելիքն է: Սա առօրյա այն գիտելիքն է, որը ամենօրյա գործունեության ընթացքում ձևավորվում է իրականության և մարդու ամենապարզ հարաբերությունից: Ստացած տեղեկատվությունը իմացության այս մակարդակում մակերեսային է, պարզունակ, չհիմնավորված, հաճախ նաև սուբյեկտիվ: Իմացության այս մակարդակը միայն զգայական գիտելիք չէ: Վերջին դեպքում իրականության արտացոլումը կատարվում է մեխանիկորեն, մինչդեռ գիտական իմացության դեպքում առկա է նպատակադրում, կենտրոնացում: Բոլոր գիտություններն իրենց հետազոտությունները սկսում են փորձնական տվյալների հավաքումից կամ առաջադրված գաղափարները փորձով հիմնավորելուց:

Գիտական իմացության երկրորդ մակարդակը՝ տեսականը, ստև գաղափարներ չեն,

դրանք օբյեկտիվ են, փորձով հիմնավորված, բայց կրում են համակարգային, վերացարկված բնույթ:

Տեսական գիտելիքները, ծագելով փորձից, առաջ են ընկնում պրակտիկ հնարավորություններից, ստիպում, որպեսզի ստուգման-ապացուցման նոր մեթոդներ հայտնաբերվեն:

Աշխարհի գիտական պատկերի որոնումը և համակարգումը ունի համագիտական բնույթ: Այստեղ մեծ է փիլիսոփայության մեթոդաբանական գործառնությունների դերը, քանի որ աշխարհաճանաչողությունը առավելապես հենվում է աշխարհայացքի վրա: Մակայն գիտականորեն իրականության մեկնաբանումը ենթադրում է համագիտական մեթոդների և գործիքակազմի գույակցված կիրառում: Միայն մեթոդների գույակցման և փոխլրացման պարագայում է հնարավոր իրականության վերաբերյալ տալ հնարավորին ճշգրիտ գիտելիք և ստեղծել հեռանկարի ուրվագիծ [6, 26]:

Տեսական գիտելիքների էությունը գիտականությունն է, որի չափորոշիչներն են օբյեկտիվությունը, բանական հիմնավորվածությունն ու ապացուցելիությունը, օրենքի և էության հայտնաբերման ուղղվածությունը, համակարգային բնույթը և պրակտիկայով ճշմարտացիության հաստատվածությունը:

Գիտական տեսությունների հիմքում միասնաբար են գործում փորձաքարական և տեսական գիտելիքները, ելակետային հասկացությունները, սկզբունքները, աքսիոմաներն ու օրենքները, իդեալականացված օբյեկտները: Գիտելիքի այս մակարդակում օբյեկտը արտացոլվում է բազմաբնույթ կապերի և հարաբերությունների մեջ, որոնց հիմնավորումը փորձից վերացարկվում և ամրակայվում է տեսականորեն [4, 185]:

Աշխարհաճանաչողությունը գիտական գիտելիքի համակարգ է, արժանահավատ շնորհիվ էմպիրիկ և տեսական մակարդակների միասնականության: Դրանց տարանջատումը բացարձակ չէ և գործում է միայն գիտելիքի մեկնաբանման շրջանակներում: Գիտելիքների էմպիրիկ և տեսական մակարդակների տարանջատումը կախված է հետազոտվող օբյեկտի բնույթից, տեսակից և մեթոդից:

Աշխարհի գիտական պատկերի ձևավորման փորձնական և տեսական մակարդակներում իրականացվող հետազոտությունները տարբերվում են ոչ միայն իրենց սկզբունքներով և նպատակներով, այլև գործունեության հնարներով և մեթոդներով: Էմպիրիկ հետազոտության մեթոդներն են դիտարկումը, փորձը, համեմատումը, նկարագրությունը: Մինչդեռ տեսական իմացությունը իրականացվում է մոդելավորման, ինդուկտիվ, վերացարկման մեթոդներով [5, 299]: Պրակտիկ հետազոտության մեթոդական գործիքակազմը ուղղված է բացահայտելու ուսումնասիրվող օբյեկտների արտաքին կողմերը, կապերն ու հարաբերությունները և հավաքագրում է փաստական նյութ: Գիտական գիտելիքների փորձնական մակարդակը մեկնաբանում է բացառապես զգայականորեն ընկալի առարկաների անմիջական պատկերները: Այս մակարդակում ուսումնասիրվող առարկաների և երևույթների մասին տեղեկատվության կուտակման գործընթացն իրականացվում է դիտարկումների, տարբեր չափումների և անմիջական փորձարկումների միջոցով: Մինչդեռ տեսական մակարդակում գիտելիքը բնութագրվում է գիտական վարկածների և տեսությունների մեջ, առաջադրում է օրենքներ՝ տեսական գիտելիքները գործնականում կիրառելու համար:

Ճշմարիտ գիտելիքի և աշխարհի գիտական պատկերի, աշխարհաճանաչողության անվերջ գործընթացի պարագայում էմպիրիկ և տեսական գիտելիքները փոխլրացնում են միմյանց, և դժվար է որոշել որևէ մեկի գերակայությունը: Հարափոփոխ աշխարհի վերջնական, նույնիսկ մոտավոր պատկերի ստեղծումը անհնար է: Այստեղ բացարձակ ճշմարտություններ որոնելը անիմաստ է, քանզի բնագիտական և փիլիսոփայական աշխարհայացքային հավերժական պրոբլեմների անընդհատական և նորովի լուծումը մարդկության առջև նոր հորիզոններ է բացահայտում: Նախկինում արժանահավատ, հավաստի տեսությունները փոխակերպվում են, ինքնաբացասվում իբրև հավանական գիտելիք՝ պայման ու հնա-

րավորություն տալով գիտական նոր հեղաշրջման և իրականության վերաբերյալ գիտական նոր պատկերի ստեղծման համար:

Գիտության զարգացման և հատկապես գիտական բացառիկ հեղաշրջումների յուրաքանչյուր նոր շրջափուլ ամփոփում է աշխարհի գիտական պատկերի համակարգը և ուրվագծում ապագայի հիպոթետիկ տեսականը: Աշխարհաճանաչողությունը անընդհատ հեռանում է բացարձակ ճշմարտություններից, մշտապես ունի հետագա լրացման, փոխակերպման և ճշգրտման ձգտում [1, 38]:

Աշխարհի գիտական պատկերի յուրաքանչյուր շրջափուլ նոր հեռանկար է ստեղծում ոչ միայն աշխարհաճանաչման ապագա ուրվագծման, այլև փորձնական նոր ուսումնասիրության և փաստական նոր տեղեկության հավաքագրման համար: Ավելին. տեսական նոր մոդելը նախկինում մեկնաբանված փաստական նյութը նորովի է դիտարկում: Տեսական մակարդակում իմացությունը գլխավորապես հետամուտ է տեսության ձևավորմանը, մինչդեռ էմպիրիկ մակարդակում գիտական գիտելիքները վերաբերում են առարկայի անհատական հատկություններին, որոնք տրված են փորձի մեջ:

Մաքուր փորձնական վերլուծության և հետազոտության մեթոդներով արտածված տեղեկությամբ ունի սուբյեկտիվ և ենթադրական բնույթ, հետևաբար անհրաժեշտ է այն լրացուցիչ մեկնաբանել, շաղկապել տեսական հիմքի հետ: Փաստական նյութը իմաստավորվում է, եթե հիմնավորվում է տեսության շրջանակներում: Այսպիսով, իրականության գիտական մեկնաբանման համատեքստում գիտելիքի էմպիրիկ և տեսական մակարդակի տարանջատումը ունի հարաբերական բնույթ: Գիտական գիտելիքները ներառում են հետազոտության և էմպիրիկ, և տեսական մակարդակները, դրանք փոխկապակցված են, լրացնում են միմյանց, ներկայանում իբրև համապարփակ և ամբողջական համակարգ: Այդպես է ձևավորվում գիտական տեսությունը, այն դիտարկվում իբրև գիտական գիտելիքների կատարյալ աստիճանակարգ, որի շրջանակում կանոնակարգվում է իրականության գիտական պատկերի տվյալ դարաշրջանի մեկնաբանումը:

Գիտական տեսությունը գիտելիքի ընդհանրացված համակարգ է, որի գերխնդիրն է մեկնաբանել, համակարգել և բացատրել էմպիրիկ փաստերի ամբողջությունը, դրանք հիմնավորել տեսական, հաճախ նաև վերացական մտակառույցներով: Այս միասնությունը մեջ տեսությունը դիտվում է իբրև գիտական հետազոտության ավարտական փուլ, իսկ պրակտիկան տեսության արտացոլման անընդհատական ճշգրտման և ստուգման գործիք:

Աշխարհաճանաչողության մեկնաբանման տեսական մոդելները գործնական կիրառման ժամանակ ենթարկվում են ճշգրտումների, երբեմն նորից հերքվում: Այս պարագայում արդեն մերժված սկզբունքները գիտական դաշտից ամենևին դուրս չեն մղվում: Դրանց հենքի վրա վերստին առաջադրվում են գիտական պրոբլեմներ: Իբրև գիտելիք չգիտելիքի մասին պրոբլեմը ներառում է գիտելիքի շարժման երկու փուլ՝ դրա ձևակերպումը և լուծումը: Նախկին փաստերից և ընդհանրացումներից խնդրահարույց գիտելիքների ճիշտ ածանցումը, խնդիրը ճիշտ դնելու կարողությունը դրա հաջող լուծման անհրաժեշտ նախապայմանն է: Հետազոտությունը կրկին անցնում է որոնման նույն ճանապարհը՝ վարկածի առաջադրում, փաստական նյութի հավաքագրում, գիտական տեսության արտածում: Ահա թե ինչու ժամանակի ընթացքում աշխարհի գիտական պատկերը փոփոխվում է, հայտնաբերվում են նոր փաստեր, հերքվում են անցյալի իրողությունը դիտարկվող և հավաստագրված փաստ համարվող դրույթները, ուստի փոխակերպվում է աշխարհաճանաչողության ըկալումն ու բովանդակությունը:

Աշխարհաճանաչողության գիտական որոնումների գործընթացում պետք չէ գերազանցատել գիտելիքի փորձնական կամ տեսական մակարդակներից որևէ մեկի դերը: Եթե ճանաչողության միակ աղբյուրը համարվի զգայական ընկալումների հնարավորությունը, ապա ժխտվում է բացառվում է վերացական մտածողության գործիքակազմը: Մյուս ծայրահեղության պարագայում աշխարհընկալման մեջ անտեսում է զգայականի, փորձնականի

դերը և միակողմանիորեն գերազնահատում բանական-վերացական մտածողության, ռացիոնալի արժեքը:

Մինչդեռ ճանաչողությունը անվերջ գործընթաց է, որի ակունքները գտնվում են իրականության կենդանի հայեցողության դաշտում: Իրականության վերաբերյալ ամբողջական և ճշմարիտ մոդել ստեղծելու փնտրտուրը գիտությանն ուղղորդում է անցում կատարել զգայական գիտելիքից դեպի վերացարկուն՝ խորացնելով բանական, վերացական մտածողությունը, այնտեղից վերստին վերադարձ կատարում դեպի փորձը, պրակտիկան:

Այսպիսով, աշխարհաճանաչողությունը և աշխարհի գիտական պատկերի որոնումը հավերժական գործընթաց է, որտեղ անցումային յուրաքանչյուր փուլ հեղաշրջում է իրականացնում փորձնական և տեսական գիտելիքի համակարգում՝ այն հիմնավորելով գործնական կիրառմամբ և նախապատրաստում հետագա որակական փոխակերպման տեսլականի ուրվագիծը:

Եզրակացություն

Գիտական գիտելիքը աշխարհաճանաչողության և աշխարհի գիտական տեսական պատկերի կառուցման հիմքն է: Որքան էլ աշխարհընկալումը, իբրև աշխարհայացքի կառուցվածքային բաղադրիչ, սուբյեկտիվ է, քանի որ շոշափում է մարդու անմիջական շահեր և նպատակներ, այն չի կարող հակասել գիտության հաստատված դրույթներին կամ սկզբունքներին: Պատմական յուրաքանչյուր դարաշրջան ստեղծում է աշխարհաճանաչողության իր մոդելը՝ հենվելով առկա համապատասխան գիտելիքի վրա: Այս գործընթացը ունի իր տրամաբանական ընթացքն ու գործիքակազմը:

1. Գիտական գիտելիքների էմպիրիկ և տեսական մակարդակները կազմում են մեզ շրջապատող աշխարհի, բնության օրենքների, մարդկային հասարակության կյանքի և նրա առանձին ոլորտների մասին գիտելիքներ ձեռք բերելու ընթացակարգերի, գործընթացների և մեթոդների միասնական համակարգ:

2. Էմպիրիկ և տեսական մակարդակի տարբերությունը բացարձակ չէ: Գիտական գիտելիքներն անպայմանորեն ներառում են հետազոտության և՛ էմպիրիկ, և՛ տեսական մակարդակները:

3. Աշխարհաճանաչողությունը տեսական գիտելիք է այնքանով, որքանով բացահայտված են նրա հիմքում ընկած օրինաչափությունները և էմպիրիկ այնքանով, որքան ակնհայտ են նրա հիմքում ընկած օրինաչափությունները:

4. Իրականության իմացությունը, գիտական ճանաչողությունը, ծագելով պրակտիկ գործունեությունից, անցնում է տեսական համակարգման և այնտեղից դեպի պրակտիկա: Ինքն իրեն վերադարձը կրկնություն չէ, այլ ավելի բարձր աստիճան, նոր հարաբերությունների և կապերի իմացություն:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-187>

Գրականություն

1. Ավետիսյան Ս., Աշխարհի գիտական պատկերը և փիլիսոփայությունը, Երևան, Հայաստան, 1984:
2. Գևորգյան Ա., Գիտության փիլիսոփայություն, Երևան, ՀՊԱՀ, 2012:
3. Խաչատրյան Բ., Փիլիսոփայություն, ՀԳԱ, Երևան, 2024::
4. Կետյան Ռ., Փիլիսոփայություն, Երևան, Հայաստան, 2003:
5. Հակոբյան Ս., Փիլիսոփայության տեսություն և պատմություն, Երևան, 2009:
6. Алексеев П., Панин А., Философия. М., 2005.

Эмпирический и теоретический уровень познания мира

Тигранян Гнел,

Тигранян Сона

Резюме

Ключевые слова: познание мира, эмпирическое и теоретическое знание, мировоззрение, научное знание, теория, практика

Познание мира – это система комплексных знаний о действительности, в структуре которой выделяются два взаимодополняющих уровня: эмпирический и теоретический. Научное знание о мире следует отличать от индивидуальной научно-теоретической системы. Несмотря на всю ее ценность, она не имеет научной основы, поскольку подвержено исключительно личностному, субъективному влиянию. Знание о мире представляет особую ценность, если оно исходит из экспериментальной области, абстрагируется как теория, имеет универсальный характер и подтверждается в ходе экспериментального применения.

Формирование миропознания и научной картины мира представляет собой бесконечный процесс, поскольку реальность постоянно находится в процессе трансформации и, следовательно, невозможно создать полное знание о реальности.

В поисках мировосприятия научное сознание постоянно отходит от границ чувственного познания, совершает переход от конкретного к абстрактному, созерцательному полю. Единственным критерием обоснованности теоретических знаний является практика. Поэтому любая теория является полным и достоверным знанием только тогда, когда ее положения переносятся обратно в экспериментальную область и получают там свое обоснование или опровержение.

Empirical and Theoretical Levels of World Knowledge

Tigranyan Gnel,

Tigranyan Sona

Summary

Key words: knowledge of the world, empirical and theoretical knowledge, worldview, scientific knowledge, theory, practice

World knowledge is a system of complex knowledge about reality, in the structure of which two complementary levels are distinguished: empirical and theoretical. Scientific knowledge of the world should be distinguished from an individual scientific-theoretical system. Despite all its value, it has no scientific basis, since it is subject exclusively to personal, subjective influence.

The formation of world knowledge and a scientific picture of the world is an endless process, since reality is constantly in the process of transformation. So, it is impossible to create complete knowledge of reality. In search of a worldview, scientific consciousness constantly moves away from the boundaries of sensory cognition, makes the transition from the concrete to the abstract, contemplative field. The only true measure of the validity of theoretical knowledge is practice. A theory can be considered complete and reliable only when its principles are tested through experimentation and either confirmed or refuted in practice.

Ներկայացվել է 21. 11. 2024 թ.

Գրախոսվել է 25. 11. 2024 թ.

Ընդունվել է տպագրության 05. 06. 2025 թ.

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ
ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ЭКОНОМИКА И
ГЕОГРАФИЯ

ECONOMICS AND
GEOGRAPHY

Անձնակազմի կառավարման հիմնախնդիրների վերլուծությունը Լոռու մարզի ձեռնարկություններում

**Բարսեղյան Նարինե,
Հալաջյան Հրիտա**

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-195>

***Հանգուցային բառեր.** անձնակազմ, անձնակազմի կառավարում, կառավարման հիմնախնդիրներ, անձնակազմի շահադրդում, առևտրային կազմակերպություններ, ֆինանսական ռեսուրսներ*

Նախաբան: Անձնակազմի հետ տարվող աշխատանքը կառավարման հատուկ կամ որոշակի գործառնություններից է, որը կարևորագույն նշանակություն ունի արդյունավետ տնտեսավարման և շուկայավարման պահանջներից բխող ձեռնարկչատիրական գործունեության կազմակերպման, կարգավորման և կառավարման համար: Յուրաքանչյուր կազմակերպությունում ռազմավարության հիման վրա մշակվում է կառավարման կազմակերպական որոշակի կառուցվածք, ըստ այդմ՝ նաև հաստիքային ցուցակ, որտեղ առկա հաստիքների համալրումը համապատասխան կադրերով և նրանց արդյունավետ օգտագործումը անձնակազմի կառավարման հիմնական նպատակն է: Կազմակերպության աշխատողները, որպես արտադրական գործընթացի բաղկացուցիչ մաս, կառավարման օբյեկտ են, դրանով հանդերձ՝ անձնակազմը, նախ և առաջ, մարդիկ են՝ անհատական բնութագրերի բարդ համալիրով, որոնց մեջ կարևոր դեր են կատարում սոցիալ-հոգեբանական որակները:

Հոդվածում կիրառվել են **քանակական վերլուծությունների և համադրման մեթոդները:**

Բովանդակություն: Անձնակազմի կառավարումը աշխատանքային գործընթացների իրականացման ժամանակ նրա ներուժի արդյունավետ օգտագործման նպատակով աշխատողների շահերի, վարքագծի և գործունեության վրա կառավարչական ներազդեցության սկզբունքների, մեթոդների, միջոցների և ձևերի ամբողջությունն է (1):

Պայմանավորված համաշխարհային տնտեսությունում մարդկային գործոնի դերի կարևորմամբ՝ ներկայումս ՄԸԿ բնագավառում ուսումնասիրությունների անցկացումը շատ արդիական է: Մարդկային ռեսուրսների ծավալած գործունեության ճիշտ կառավարումը տնտեսական համակարգի կայուն ու վերընթաց զարգացումն ապահովելու, ձեռնարկությունների լայն և արդյունավետ գործունեություն ծավալելու հիմքն է կազմում:

Մարդիկ ցանկացած կազմակերպության ամենակարևոր ռեսուրսն են: Նրանք են ստեղծում նոր արտադրանք, կուտակում և օգտագործում ֆինանսական ռեսուրսներ, վերահսկում արտադրանքի և կատարվող աշխատանքների որակը: Մարդիկ ունակ են անընդհատ զարգանալ և կատարելագործվել, նրանց հնարավորություններն անսպառ են այն դեպքում, երբ մնացած բոլոր ռեսուրսները զուրկ են նման հնարավորությունից: Մարդկային ռեսուրսների կառավարումը համարվում է կազմակերպության ռազմավարական զարգացման անբաժանելի մասը: Մարդկային ռեսուրսների կառավարման հիմնախնդիրների բացահայտումը և դրանց հաղթահարումը կիսանի տնտեսական համակարգի կայունացմանը և զարգացմանը: Հետազոտության **նպատակն է** ուսումնասիրել անձնակազմի կառավարման առանձնահատկությունները և հիմնախնդիրները Լոռու մարզի ձեռնարկություններում (1):

Գլոբիա կարի ֆաբրիկա: «Գլոբիա» կարի ֆաբրիկան հիմնադրվել է 1977 թ.-ին: Անցած տարիների ընթացքում ֆաբրիկայում կատարվել է մի քանի տեխնիկական վերազինում, վերջինը՝ 2021 թ.-ին: Եվ հիմա «Գլոբիա» կարի ֆաբրիկայի արտադրամասերը համալրված են համաշխարհային ճանաչում ունեցող ֆիրմաների կարի ժամանակակից մեքենաներով և սարքավորումներով: Շնորհիվ ֆաբրիկայում աշխատող արհեստավարժ աշխատողների, աշխատանքի կազմակերպման ժամանակակից մեթոդների և բարձր որակի կարի մեքենա-

ների՝ ֆաբրիկան կարող է արտադրել ցանկացած բարդության ժամանակակից և եվրոպական որակի պահանջներին համապատասխան արտադրանք: «Գլորիա» կարի ֆաբրիկայում աշխատում են 2500 աշխատողներ: 2 մասնաճյուղերում միասին ամսական արտադրվում է 180,000 տեսակի հագուստներ, վերարկուներ, բաճկոններ, տարբեր տեսակի պաշտպանիչ հագուստներ: Ֆաբրիկան մեծ ուշադրություն է դարձնում աշխատակիցների աշխատանքային և սոցիալական լավ պայմանների ապահովմանը (5):

Ֆաբրիկաներում գործում է որակի վերահսկման եռաստիճան համակարգ:

- Առաջին աստիճանում որակը ստուգվում է անմիջապես արտադրական գործընթացի ընթացքում, երբ արտադրանքը գտնվում է կիսաֆաբրիկատ վիճակում:
- Երկրորդ աստիճանում որակի հսկիչները որակի ստուգումներ են անց կացնում արտադրական հոսքագծերի վերջում, երբ արտադրանքը արդեն պատրաստի վիճակում է, բայց դեռևս փաթեթավորված չէ:
- Երրորդ աստիճանի ստուգումը անցկացվում է պատրաստի արտադրանքի պահեստում՝ փաթեթավորումից առաջ:

Որակի ստուգման եռաստիճան համակարգը բացառում է թերություններով արտադրանքի առաքումը պատվիրատուներին: Ֆաբրիկան ունի երկու մասնաճյուղ: Արտադրությունում աշխատում են 150 որակի վերահսկիչ և 30 վերահսկիչներ (5):

Աշխատակիցների թվաքանակը ըստ տարիների (1977-2022): Ֆաբրիկան ունի 2204 աշխատող կարի արտադրամասերում, 90 աշխատող ձևման արտադրամասում, 20 աշխատող ասեղնագործության բաժնում, 35 աշխատող հագուստի նախագծման լաբորատորիայում, հումքի և օժանդակ նյութերի կոմպլեկտավորման և հսկողություն բաժնում, ինչպես նաև 85 ինժեներատեխնիկական մասնագետ, 70՝ փաթեթավորման բաժնում, 225՝ որակի վերահսկման բաժնում, 30՝ լոգիստիկայի բաժնում, 25՝ տեխնիկական սպասարկման և օժանդակ բաժիններում (5):

Որակի վերահսկում: Ֆաբրիկայում ներդրված է որակի հսկման եռաստիճան համակարգ.

- որակի ստուգում անմիջապես արտադրական հոսքագծում,
- արդեն պատրաստի արտադրանքի որակի ստուգում հոսքագծի վերջում,
- պահեստում փաթեթավորումից առաջ պատրաստի արտադրանքի որակի հսկում:

Այս ամենը հնարավորություն է տալիս թողարկել գրեթե անթերի 100 % որակյալ արտադրանք:

Ընդհանուր տեխնոլոգիական գործընթաց: Ֆաբրիկան իրականացնում է հագուստի արտադրության ամբողջական ցիկլ՝ ձևում, կարում, ասեղնագործություն, միկրոդետալների լազերային կտրում, ընդհուպ նաև պատրաստի արտադրանքի առաքում սեփական տրանսպորտային միջոցներով մինչև պատվիրատուի պահեստ:

Լոգիստիկա: Արտադրանքը վաճառվում է Գերմանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Ավստրիայում և Ռուսաստանում: Ֆաբրիկայից մինչև Իտալիա պատրաստի արտադրանքը առաքվում է 4 օրում, Գերմանիա՝ 5 օրում, իսկ Ռուսաստան՝ 2 օրում: Ֆաբրիկան ունի եվրոպական երկրներ՝ Գերմանիա, Իտալիա, Ֆրանսիա և այլն, պատրաստի արտադրանքը ժամանակին և որակյալ տեղափոխման բազմամյա փորձ:

Հագուստի մոդելավորման և նախագծման լաբորատորիա: Ֆաբրիկայում կա հատուկ լաբորատորիա, որտեղ հսկվում է բոլոր նյութերի և աքսեսուարների որակը, որոնք մուտք են գործում ֆաբրիկա: Չեն օգտագործվում չստուգված նյութեր: Լաբորատորիայում պատրաստվում են նախաարտադրական նմուշներ, մեկ անգամ ևս ստուգվում են նմուշի որակը և չափերը և հետո միայն ուղարկվում արտադրամաս մասսայական արտադրության համար:

Երկարամյա փորձ: Ավելի քան 40 տարի «Գլորիա» կարի ֆաբրիկան արտադրում է ժամանակակից և որակյալ հագուստի բազմալիսի տեսականի՝ վերարկուներ, բութուլի ներ-

դիրով բաճկոններ, վերնաշապիկներ, մոտոցիկլիստների և լեռնադահուկորդների հագուստ և այլն:

Պրոֆեսիոնալ թիմ: Ֆաբրիկայում աշխատում են բարձր որակավորում ունեցող կարողներ և ինժեներատեխնիկական անձնակազմ: Արտադրությունը համալրված է ժամանակակից կարի մեքենաներով և սարքավորումներով: Շնորհիվ պրոֆեսիոնալ թիմի աշխատանքի և ժամանակակից սարքավորումների՝ արտադրվում է Եվրոպական ստանդարտներին համապատասխան հագուստ (5):

Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ: Լոռու մարզի Ախթալա խոշորացված համայնքը ձևավորվել է 2017 թվականի հունիսի 9-ին և իր մեջ ներառում է Ախթալա և Շամլուղ քաղաքները և Բենդիկ, Ճոճկան, Մեծ Այրում, Նեղոց և Փոքր Այրում գյուղերը: Նոր միավորման բնակչությունը կազմում է 6,492 մարդ: Համայնքի արդյունաբերական մասնագիտացման ձյուղը մետաղագործությունն է «Ախթալայի լեռնահարստացուցիչ կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերությունով, որը շահագործում է Շամլուղի պղնձի հանքավայրը: Հանքավայրը, որի շահագործման պատմությունը սկսվել է 1770 թվականից, գտնվում է Ախթալա քաղաքից մոտ 10 կմ հեռավորության վրա: 3 ամիսների ընթացքում լեռնահարստացման կոմբինատում տեղադրվել են նոր սարքավորումներ, որոնք շուրջ 60 տոննա ժամ արտադրողականություն ունեն: Դրանով իսկ հնարավորություն է ընձեռնվել ավելացնել կոմբինատի արտադրության ծավալները: Վերջին շրջանում պլանավորվել է մշակել ամսական 50 հազար տոննա հանքաքար: Ֆաբրիկայի աշխատողների աշխատավարձն ավելացել է մոտ 40 հազար դրամով: Այսօր կոմբինատում աշխատում է ավելի քան 700 մարդ, միջին աշխատավարձը կազմում է 200 հազար դրամ: Միջին աշխատավարձը հաշվարկվում է վարչական աշխատողների անհամեմատ բարձր աշխատավարձի հետ միասին: Բանվորների աշխատավարձը նույնպես բարձրացել է: Կան բանվորներ, որ 1 250000 դրամ աշխատավարձ են ստանում, իսկ մյուսները՝ 240000-250000 դրամ աշխատավարձ: 320 մարդ Ախթալայից է աշխատում, 80 աշխատող Շամլուղից, աշխատողներ կան նաև Ճոճկանից: Ստեղծվել է 100 նոր աշխատատեղ: Իհարկե, հանքարդյունաբերական լավ մասնագետներ այստեղ դժվար է գտնվում: Այժմ փնտրվում է տեխնոլոգ 1,500000 դրամ աշխատավարձով: Այժմ նախատեսվում է ստեղծվել ևս 200 աշխատատեղ: Իրականացվել է հարցազրույց՝ պարզելու հասարակության կարծիքը Ախթալայի լեռնահարստացման կոմբինատի մասին, որին մասնակցել են մի շարք մասնագիտական խմբերի ներկայացուցիչներ, ինչպես նաև ՀԿ անդամներ, ուսանողներ, տնային տնտեսուհիներ և գործազուրկներ (8):

Աղյուսակ 1.

Հասարակության կարծիքը Ախթալայի լեռնահարստացման կոմբինատի մասին

	Մեծ բազմական արձեցություն	Որոշ բազմա. արձեցություն	Ոչ մի արձեցություն	Որոշ դրական արձեցություն	Մեծ դրական արձեցություն	Դժվարատար խանել
1. Խմելու ջրի մաքրություն	6	9	3	0	0	11
2. Օդի մաքրություն	<u>19</u>	<u>10</u>	0	0	0	0
3. Ոռոգման ջրի մաքրություն	12	7	3	0	0	7
4. Բանջարեղենի և մրգի որակ	11	10	2	0	0	6
5. Համայնքային և միջհամայնքային ճանապարհների որակ	8	11	3	0	0	7
6. Գյուղատնտեսական նշանակության հողերի քանակ, որակ	<u>18</u>	<u>6</u>	0	1	0	4
7. Աշխատատեղեր	0	0	0	<u>20</u>	<u>6</u>	3
8. Ձեռնարկության աշխատողների ապահովագրություն	0	0	13	2	2	12
9. Համայնքի խոցելի խմբերի աջակցություն	0	0	16	2	0	11

Աղյուսակից երևում է, որ հարցազրույցի մասնակիցների 90 %-ը աշխատատեղերին վերաբերող 7-րդ կետում (աշխատատեղերի տրամադրում) նշում է Կոմբինատի կողմից 600-700 տեղացիների աշխատանքով ապահովելու միակ դրական ազդեցությունը: Մնացած բոլոր տողերում առկա են հանքի գործունեության արդյունքում բնության ու մարդկանց վրա բացասական սոցիալական ազդեցությունների գնահատում: Հատկապես մեծ են ՏՏ դժգոհությունները օդի և գյուղատնտեսական նշանակության հողերի քանակի կրճատումից, գյուղատնտեսական արտադրանքի որակից (82-100 %): Ասվածի ապացույցն է մի ընտանիքում իրենց վիճակի վերաբերյալ արված հետևյալ մեկնաբանությունը. «Մեր բուսական և կենդանական աշխարհը քայքայվում է՝ մեղուները ոչնչացել են, այգիները չորանում են, անտառապատ տարածքները՝ նոսրանում: Տնային կենդանիները հերթով սատկում են, ու պատճառները չեն ուսումնասիրվում» (4):

«Թեղուտ» ՓԲԸ: «Թեղուտ» ՓԲԸ-ն ունի մոտ 900 աշխատակից, որոնցից ավելի քան 90 %-ը Լոռու մարզի բնակիչներն են: Ընկերությունն ամբողջ մարզում լուծում է զգալի սոցիալական խնդիրներ: «Թեղուտ» ՓԲԸ-ն հանքարդյունաբերական ընկերություն է, որը հիմնադրվել է 2006 թվականին: Ընկերությունը շահագործում է Թեղուտի պղինձ-մոլիբդենային հանքավայրը: Ընկերությունը 2015 թվականի դեկտեմբերի 31-ի տվյալներով ուներ 1,306 աշխատող, այդ թվում՝ 143 աշխատող Թեղուտից, 250 աշխատող՝ Շնողից, 438 աշխատող՝ Ալավերդուց եւ 475 աշխատող՝ այլ գյուղերից: Ինչպես հայտնի է՝ նշված գյուղերի բնակիչները իրենց ընտանիքներին կերակրում են բացառապես հանքավայրում աշխատելով, քանի որ եկամտի այլ աղբյուր չունեն: Սակայն անցած տարեվերջին միջազգային շուկայում մետաղների գների բարձրացմամբ պայմանավորված Լոռու մարզի արդյունաբերությամբ զբաղվող տնտեսվարողները անցել են որոշակի խնայողությունների և տնտեսումների: Այդ պատճառով Թեղուտի պղինձամոլիբդենային հանքավայրի աշխատակիցների աշխատավարձերը նույնպես կրճատվել են, որն էլ մասնագիտական կարող ուժերի արտահոսքի, ազդակիր համայնքներում սոցիալական իրադրության վատթարացման և այլ անցանկալի հետևանքների պատճառ է դարձել: Այժմ նպատակ կա այդ աշխատակիցների թիվը հասցնել մինչև 1000-ի՝ համալրելով սպասարկող ծառայություններ մատուցող աշխատակիցների շարքերը՝ պահակներ, անվտանգություն, էլեկտրիկներ, փականագործեր և այլ (3):

Լոռու մարզպետարան: ՀՀ Լոռու մարզում պետական կառավարումը իրականացվում է ՀՀ Լոռու մարզպետի կողմից՝ մարզպետի աշխատակազմի միջոցով, իրագործում է ՀՀ կառավարության տարածքային քաղաքականությունը և համակարգում հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեությունը: Մարզպետի աշխատակազմն իր գործունեությունն իրականացնում է ՀՀ օրենսդրությանը և այլ իրավական ակտերին համապատասխան: Մարզպետի աշխատակազմը կազմված է մարզպետից, մարզպետի տեղակալներից, գլխավոր քարտուղարից, մարզպետի խորհրդականներից, մարզպետի օգնականներից ու օժանդակ ստորաբաժանումներից: Մարզպետի աշխատակազմի կառուցվածքում ներառվում են նրա կառուցվածքային ստորաբաժանումները (7 վարչություններ, 8 բաժիններ) և առանձնացված ստորաբաժանումները: Մարզպետի աշխատակազմի համակարգում ընդգրկվում են պետական ոչ առևտրային կազմակերպություններ, հիմնարկներ և մարզային ենթակայության այլ կազմակերպություններ: Մարզպետի աշխատակազմն ունի 112 հաստիք, որոնցից՝ 94-ը քաղաքացիական ծառայողներ, 11-ը՝ մարզպետի աշխատակազմ և 7-ը՝ տեխնիկական աշխատողներ: Մարզպետի աշխատակազմի վերակազմակերպման և նրա գործունեության դադարման կարգն ու պայմանները սահմանվում են օրենքով (2):

Վանաձորի համայնքապետարան: Վանաձորի համայնքապետարանը բաղկացած է 15 բաժիններից.

- Հայեցողական պաշտոններ (6 աշխատակից),
- Համայնքային վարչական պաշտոններ (3 աշխատակից),

- Համայնքային ծառայության պաշտոններ (1 աշխատակից),
- Ճարտարապետության և քաղաքաշինության բաժին (16 աշխատակից),
- Ֆինանսատնտեսագիտական բաժին (7 աշխատակից),
- Գնումների բաժին (6 աշխատակից),
- Զարգացման ծրագրերի, արտաքին կապերի և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժին (9 աշխատակից),
- Կրթության, մշակույթի և տուրիզմի հարցերի բաժին (10 աշխատակից),
- Սպորտի և երիտասարդության հարցերի բաժին (8 աշխատակից),
- Իրավաբանական բաժին (6 աշխատակից),
- Կոմունալ տնտեսության, բարեկարգման և բնապահպանության բաժին (11 աշխատակից),
- Համատիրությունների աշխատանքների համակարգման բաժին (10 աշխատակից),
- Եկամուտների հաշվառման, հավաքագրման և գովազդի բաժին (15 աշխատակից),
- Առևտրի սպասարկման և տրանսպորտի բաժին (7 աշխատակից),
- Քարտուղարության, անձնակազմի կառավարման բաժին (14 աշխատակից),
- Հանրային կապերի, լրատվության բաժին (5 աշխատակից),
- Ներքին աուդիտի բաժին (4 աշխատակից),
- Կառուցվածքային ստորաբաժանումների մեջ չներառված պաշտոններ (14 աշխատակից),
- Տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ (28 աշխատակից) [7]:

Սպիտակի համայնքապետարան: Սպիտակի համայնքը խոշորացված համայնք է, որի կազմում ընդգրկված են 20 բնակավայրեր: Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է համայնքի ղեկավարի 2 տեղակալից, աշխատակազմի 1 քարտուղարից, 20 բնակավայրերի 20 վարչական ղեկավարներից, համայնքի ղեկավարի 1 խորհրդականից, աշխատակազմի գլխավոր մասնագետից, բնակավայրերի 20 առաջատար մասնագետներից, համայնքի ղեկավարի 2 օգնականից, աշխատակազմի 1-ին կարգի 7 մասնագետից [6]:

• Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժինը ընդգրկում է 2 եկամուտների հավաքագրող, 2 հաշվապահ, 2 բյուջետավարող, առաջատար մասնագետ աղբահանության, գովազդի, առևտրի, տեղական տուրքերի, գնումների վարձավճարների գծով և 1 գանձապահ:

• Աշխատակազմի հողաշինության, քաղաքաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժինը կազմված է 1 բաժնի պետից, 1 տեղակալից, քաղաքաշինության գծով գլխավոր մասնագետից, 1 գյուղմասնագետից, հողաշինարարից, ճարտարապետից, գյուղմասնագետից և տրանսպորտի և հողաշինարարության գծով առաջատար մասնագետից:

• Աշխատակազմի մշակույթի, կրթության, սպորտի, երիտասարդության և տուրիզմի բաժինը՝ մշակույթի և կրթության գծով 2 գլխավոր մասնագետից և սպորտի, երիտասարդության և տուրիզմի գծով 2 առաջատար մասնագետ [6]:

Ստեփանավանի համայնքապետարան: Ստեփանավանի համայնքապետարանը բաղկացած է հետևյալ բաժիններից.

• Համայնքի ղեկավարի 2 տեղակալ, աշխատակազմի 1 քարտուղար, համայնքի ղեկավարի 2 խորհրդական, աշխատակազմի 6 գլխավոր մասնագետ, աշխատակազմի առաջին կարգի 6 մասնագետ:

• Կրթության, մշակույթի, սպորտի, առողջապահության, սոցիալական աջակցության, և տուրիզմի բաժին՝ 3 գլխավոր մասնագետ, 1 առաջատար մասնագետ:

• Եկամուտների հաշվառման և հավաքագրման, առևտրի սպասարկման, տրանսպորտի և գովազդի բաժին՝ բաժնի պետի 1 տեղակալ, 1 գլխավոր մասնագետ, 2 առաջատար

մասնագետ, 4 առաջին կարգի մասնագետ:

- Քաղաքաշինության, գյուղատնտեսության և շրջակա միջավայրի պահպանության բաժին՝ 3 գլխավոր մասնագետ, 1 առաջատար մասնագետ:

- Ֆինանսատնտեսագիտական բաժին՝ 3 առաջատար մասնագետ, 1 գլխավոր մասնագետ:

- Քաղաքացիական աշխատանք կատարողներ և տեխնիկական սպասարկում իրականացնող անձնակազմ՝ 16 հաստիք:

Եզրակացություն

Այսպիսով ժամանակակից ձեռնարկությունները գիտակցում են, որ իրենց հաջողության գրավականն աշխատակիցներն են, հետևաբար, ստեղծելով բարեկեցիկ պայմաններ՝ հնարավորություն են ընձեռում շարունակաբար ձեռք բերել նոր գիտելիքներ, կարողություններ և հմտություններ, ապահովել բարձր և առողջ ներգրավվածության և կատարողականի մակարդակ, ձգտելով արագորեն վերամշակել իրենց զարգացման ծրագրերը՝ օգնելու անձնակազմին պահպանել իր ձկունությունն ու եռանդը: Ներկայումս ընկերությունները խրախուսում են ակտիվ հաղորդակցություն, ապահովում հավասար հնարավորություններ, ստեղծում անվտանգ և առողջ աշխատանքային միջավայր բոլոր աշխատակիցների համար: Մարդկային ռեսուրսների կառավարումը հիմնվում է բաց հաղորդակցության վրա, որն աշխատակիցների արտադրողականությունն ու ներգրավվածությունը խթանելու միակ արդյունավետ միջոցն է, քանի որ հենց իրենք են ստեղծում նոր արտադրանք, կուտակում և օգտագործում ֆինանսական ռեսուրսներ, վերահսկում արտադրանքի և կատարվող աշխատանքների որակը: Մարդիկ ունակ են անընդհատ զարգանալ և կատարելագործվել, նրանց հնարավորություններն անսպառ են՝ այն դեպքում, երբ մնացած բոլոր ռեսուրսները գուրկ են նման հնարավորությունից:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-195>

Գրականություն

1. <https://www.academia.edu>
2. 2023-2025 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2023 թվականի բյուջետային ֆինանսավորման հայտ [Էլեկտրոնային ռեսուրս] // URL: <http://lori.mtd.am/files/docs/59552.pdf> (ղիտվել է 01. 12. 2024).
3. «Թեղուտ» ՓԲԸ ֆինանսական հաշվետվություն [Էլեկտրոնային ռեսուրս] // URL: https://vallexgroup.am/wp-content/uploads/2018/10/FS_Teghout_ARM_2014Y.pdf
4. Ecolur. New Informational Policy in Ecology [Էլեկտրոնային ռեսուրս] // URL: <https://www.ecolur.org/files/uploads/2019/EITI%202019/Anahit%20Mkrtychyan%20hashvetvut yunner/socialreportakhtala05082019.pdf> (ղիտվել է 01.12.2024).
5. Gloria. Sewing Factory [Էլեկտրոնային ռեսուրս] // URL: <https://gloria.am/> (ղիտվել է 01. 12. 2024).
6. ՀՀ Լոռու մարզի սպիտակ համայնք [Էլեկտրոնային ռեսուրս] // URL: <https://www.spitak.am/Pages/Home/Default.aspx> (ղիտվել է 01.12.2024).
7. Լոռու մարզպետի աշխատակազմ [Էլեկտրոնային ռեսուրս] // URL: <http://lori.mtd.am/> (ղիտվել է 01. 12. 2024).
8. «Ախթալայի լեռնահարստացման կոմբինատ» ՓԲԸ [Էլեկտրոնային ռեսուրս] // URL: <https://www.e-register.am/am/companies/1266888> (ղիտվել է 01.12.2024).

Анализ проблем управления персоналом на предприятиях Лорийской области

*Барсегян Нарине,
Аладжян Эдита*

Резюме

Ключевые слова: персонал, управление персоналом, проблемы управления, кадровый интерес

В статье делается вывод о том, что современные компании все чаще осознают ключевую роль сотрудников как фактора успеха. В связи с этим организации стремятся создавать благоприятные условия труда, обеспечивая возможности для непрерывного обучения и развития профессиональных навыков, поддерживая высокий уровень вовлеченности и продуктивности персонала, а также гибко адаптируя планы развития с целью сохранения мотивации и активности работников. Современные работодатели все активнее поощряют открытую коммуникацию, равенство возможностей и уделяют особое внимание созданию безопасной и здоровой рабочей среды. Эффективное управление человеческими ресурсами основывается на принципах прозрачности и доверия, поскольку именно сотрудники являются движущей силой бизнеса. Они отвечают за создание продуктов и услуг, управление финансами, обеспечение качества и внедрение инноваций.

В отличие от материальных ресурсов, человеческий потенциал обладает уникальной способностью к постоянному росту и самосовершенствованию, что открывает практически неограниченные возможности для развития организаций.

Analysis of Personnel Management Problems at Enterprises of the Lori Region

*Barseghyan Narine,
Halajyan Edita*

Summary

Key words: personnel, personnel management, management issues, personnel interest

The article concludes that modern companies increasingly realize that the key factor in their success is their employees. In this regard, organizations strive to create favorable working conditions. They provide opportunities for continuous learning and skill development, maintain a high level of staff engagement and productivity, and flexibly adapt their development plans to maintain employee motivation and energy.

Today, employers increasingly encourage open communication, equal opportunities, and care about creating a safe and healthy working environment. Effective human resource management is built on the principles of transparency and trust, because employees are the driving force of business. They create products and services, manage finances, monitor quality, and contribute to innovation.

Unlike other resources, human potential has a unique ability to constantly grow and improve. People's capabilities are truly limitless.

Ներկայացվել է 01. 10. 2024 թ.
Գրախոսվել է 11. 10. 2024 թ.
Ընդունվել է տպագրության 05. 06. 2025 թ.

Ազգային պարկերը և զբոսաշրջային նպատակներով նրանց ներուժի օգտագործման հնարավորությունների վերլուծությունը

*Թադևոսյան Գագիկ,
Հայրապետյան Աստղիկ,
Ոսկանյան Հրանտ*

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-202>

Հանգուցային բառեր. *վայրի բնություն, էկոհամակարգ, ռեկրեացիա, էկոզբոսաշրջություն, գիտական հետազոտության, ընտրանքային սոցիալացում, զբոսաշրջության օգուտներ*
Ամփոփում

Սույն հոդվածը նվիրված է Հայաստանի Հանրապետությունում էկոզբոսաշրջային ներուժի ուսումնասիրությանը, որը կատարվել է՝ հիմք ընդունելով ոլորտում հայտնի համաշխարհային փորձը:

Հանրահայտ է, որ մարդկանց և վայրի բնության միջև միշտ եղել է յուրահատուկ կապ՝ արատահայտված էկոհամակարգերի միջոցով, որն անհրաժեշտ է պահպանել և պաշտպանել՝ մանավանդ նկատի ունենալով ժամանակակից զբոսաշրջության պահանջները: Նշենք, որ հայ իրականության մեջ անհիշելի ժամանակներից կարևորվել է մարդ և բնություն փոխհարաբերությունը, որի վառ ապացույցներն են «Խոսքովի անտառ» արգելոցը (այն հարուստ է բնության և պատմության հուշարձաններով, հաշվառված է 312 հուշարձան, որոնցից 29-ը՝ վանքեր, եկեղեցիներ, մատուռներ, 19-ը՝ բնակատեղի, 2-ը՝ ամրոց, 222-ը՝ խաչքարեր և տապանաքարեր, 40-ը՝ այլ բնույթի միջնադարյան հուշարձաններ), ինչպես նաև աշխարհի ամենահին արհեստական անտառներից Սոսյաց անտառը, որի մասին հիշատակել է Մովսես Խորենացին [2]:

Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է ազգային պարկերի զբոսաշրջային ներուժի գնահատման, էկոզբոսաշրջային երթուղիների կազմման հնարավորությունների ուսումնասիրման և զբոսաշրջային նպատակներով հատուկ պահպանվող տարածքների օգտագործմամբ: Զբոսաշրջային ներուժի բացահայտման կարևորագույն տարրը արդյունավետ պլանավորումն է, որի արդյունքում էլ ստեղծվում են բավականին մեծ հնարավորություններ էկոզբոսաշրջության զարգացման համար:

Նոդվածի **նպատակն** է ուսումնասիրել ՀՀ ազգային պարկերի էկոզբոսաշրջային ներուժը՝ դրանց ավելի հասանելի կապերը, կազմել էկոզբոսաշրջային առավել մատչելի և գրավիչ երթուղիներ:

Այդ նպատակին հասնելու համար ուսումնասիրել ենք առավել մեծ հաճախելիություն ունեցող ազգային պարկերը, անցկացրել ենք սոցիոլոգիական հետազոտություններ՝ հարցումների տեսքով՝ պարզելու համար պոտենցիալ զբոսաշրջիկների նախասիրությունները, հետաքրքրվածությունը ազգային պարկերի նկատմամբ, կատարել ենք հետազոտություններ՝ գնահատելով ՀՀ ազգային պարկերի ընձեռած հնարավորությունները էկոզբոսաշրջային տուրեր կազմակերպելու համար, ինչը և համարում ենք մեր ներկա աշխատանքի գիտական **նորույթը**, ինչպես նաև կազմել ենք էկոերթուղի ազգային պարկի տարածքում:

Մտազնային ենք համարում էկոզբոսաշրջության և ազգային պարկերի արդյունավետ կառավարման համար տարածքի զբոսաշրջային երկարաժամկետ կայունության ուսումնասիրությունը, որն առանց «Զբոսաշրջության լուծման տեխնիկայի պլանավորման, կազմակերպման և կիրառման» անհնար է պատկերացնել [1, 3]: Այն հայտնի է որպես նպատակալետի կայուն կառավարում: Այս տեխնիկան նվազագույնի է հասցնում տարածքի բնական ռեսուրսներին հասցվող վնասը՝ միաժամանակ օգնելով այցելուներին և բնակիչներին այն-

տեղ իրենց ժամանակն առավելագույնս արդյունավետ անցկացնելուն: Տարածքի զբոսաշրջության կառավարումը կարևորագույն գործիք է պետական և մասնավոր հատվածների ջանքերը կենտրոնացնելու, այցելուների թվի նվազման պատճառները պարզելու, զարգացման մեջ ակտիվ ներդրումներ կատարելու, զարգացման արդյունավետ պլանավորում և օժանդակ միջոցառումներ ձևավորելու համար [3, 4]:


Ազգային պարկերում պահպանության գործունեությունը ներառում է բազմաթիվ բաղադրիչներ, օրինակ, այցելուների կառավարում, համագործակցություն բնիկ ժողովուրդների և տեղական համայնքների հետ, պահպանվող տարածքներում կենսաբազմազանության պահպանում, ռեսուրսների կառավարում, որոնք օգնում են հաշվի առնել այս բոլոր կարիքները կայուն կառավարում իրականացնելու համար:

Անդրադառնալով էկոզբոսաշրջային հոսքերի կառավարմանը՝ կարող ենք ասել, որ ազգային պարկերում զբոսաշրջային հոսքերի ավելացումը հատկապես խոցելի են դարձնում էկոհամակարգերի հավասարակշռության պահպանության խնդիրները: Այդ տեսանկյունից առաջնահերթ նշանակություն է ձեռք բերում ազգային պարկի կայուն կառավարման պլանների կազմումը, որը լուծում է բնապահպանական բացասական ազդեցությունների չեզոքացման խնդիրը: Կարևոր ենք համարում նաև այցելուների կրթադաստիարակչական ծրագրերի մշակումն ու իրականացումը, ենթակառուցվածքների խելամիտ բաշխումն էկոլոգիապես զգալուն տարածքներում և պարկ մուտք գործող այցելուների ամենօրյա թվի վերահսկումը, այգու տարածքում հոսքերի բաշխման և վերաբաշխման խնդիրների լուծումը: Դա պայմանավորված է էկոհամակարգերի վրա բացասական մարդածին սահմանային ազդեցություններից խուսափելու խնդրով [4]:

Այնուամենայնիվ ազգային պարկերի վրա հիմնված զբոսաշրջությունը կարող է օգնել երկրներին հասնել իրենց զարգացման նպատակներին, միաժամանակ կարող է նպաստել կենսաբազմազանության պահպանմանը: Հարուստ բնական ֆոնդով, բայց սահմանափակ տնտեսական հնարավորություններով երկրներում ազգային պարկերի վրա հիմնված զբոսաշրջությունը կարող է աշխատատեղեր ստեղծել և դիվերսիֆիկացնել գյուղական տնտեսությունները: Զբոսաշրջիկների կողմից միջոցառումների, տրանսպորտի, սննդի և կացարանի վրա ծախսվող գումարները կարող են դրական տնտեսական աճի աղբյուր հանդիսանալ տեղական համայնքներում: Խթանելով ներդրումներն ու տնտեսական ակտիվությունը պահպանվող տարածքներում և շրջակայքում՝ զբոսաշրջությունը օգնում է բերում տեղական համայնքներին և ուժեղացնում է պահպանությունն աջակցելու և ներգրավվելու խթանները, ինչը հակառակ դեպքում կարող է ստեղծել հնարավոր ծախսեր նրանց համար [5]:


Կարևորելով պոտենցիալ զբոսաշրջիկների կարծիքը՝ կազմակերպել ենք ընտրանքային սոցիալական հարցում, որն իրականացվել է 2024 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին: Հետազոտել և գնահատել ենք զբոսաշրջությունը ազգային պարկերում («Արևիկ» ազգային պարկ, լիճ «Արփի» ազգային պարկ, «Դիլիջան» ազգային պարկ, «Սևան» ազգային պարկ): Ընտրանքային սոցիալարցման մասնակցել է հանրապետության տարբեր մարզերից 101 մարդ, ովքեր պատկանում են տարիքային տարբեր խմբերի, սեռական պատկանելության և կրթության: Հարցման մասնակիցների 70,3 %-ը գյուղաբնակներն են, իսկ 29,7 %-ը քաղաքային բնակիչները, ըստ որում՝ գերակշռող 78,2 %-ը կանայք են, իսկ մնացած 21,8 %-ը՝ տղամարդիկ:

Սոցիալարցման մասնակիցների մեծ մասը մինչև 25 տարեկան երիտասարդներ են, որոնց տոկոսային հարաբերությունը կազմում է 45,5 %, իսկ 26-45 տարեկաններինը՝ 43,6 %, դիագրամը ցույց է տալիս, որ մասնակիցների 9,9 %-ը 46-65 տարեկաններն են, իսկ 1 %-ը բաժին է ընկնում 66 և բարձր տարիքային խմբին:




Գծապատկեր 1. Հարցման մասնակիցների տարիքը

Հետազոտության համար կարևոր ենք համարել նաև հարցվողների կրթական մակարդակը, ըստ որի՝ մասնակիցների գերակշռող մասը՝ 67,3 %-ը, բարձրագույն կրթություն ունեն, 27,7 %-ը՝ միջնակարգ, իսկ մնացած 5 %-ը՝ կազմում են միջնակարգ մասնագիտական կրթություն ունեցողները:



Գծապատկեր 2. Հարցման մասնակիցների կրթությունը


Անդրադառնալով ազգային պարկերի գրավչությանը՝ այն հարցին, թե դիտում եք ազգային պարկերը որպես զբոսաշրջային վայրեր, ունենք հետևյալ պատկերը:



Գծապատկեր 3. Որպես զբոսաշրջային վայրեր Ազգային պարկերի դիտումը


Մասնակիցների 84,2 %-ը ազգային պարկերը դիտարկում են որպես զբոսաշրջային վայրեր, 5,9 %-ը՝ կարծում է, որ դրանք զբոսաշրջային վայրեր չեն, իսկ 9,9 %-ը՝ դժվարանում է պատասխանել:

4-րդ հարցը վերաբերում է մասնակիցների հաճախելիությանը դեպի ազգային պարկեր: Նշենք, որ մասնակիցների մեծ մասը այցելել են «Դիլիջան» ազգային պարկ, 2-րդ տեղում «Մեհան» ազգային պարկն է, հետո այցելվածների թվով «Արփի լիճ» ազգային պարկն է, և վերջում միայն շատ քչերն են այցելել «Արևիք» ազգային պարկ:




Գծապատկեր 4. Մասնակիցների հաճախելիությունը դեպի ագգային պարկեր

Այն հարցին, թե ի՞նչն է նրանց գրավում ագգային պարկերում, ունեցանք հետևյալ պատկերը. հարցման մասնակիցների 52,5 %-ը գերադասում է հանգստությունը, 30,7 %-ը մաքուր օդը, կենսաբազմազանությունը գրավել է նրանց 12,9 % ին, իսկ 3,9 %-ը ունեին այլ նախասիրություններ:



Գծապատկեր 5. Հարցման մասնակիցներին գրավելու գործոնները


Մասնակիցները, ունենալով տարբեր նախասիրություններ և ագգային պարկերը համարելով զբոսաշրջային վայրեր, նախապես ծանոթանում են ագգային պարկերի ձևավորման պատմությանը:



Գծապատկեր 6. Հարցման մասնակիցների հետաքրքրությունը ագգային պարկերի ձևավորման պատմությանը

Մասնակիցների 45,5 %-ը նախապես ծանոթանում է ազգային պարկերի ձևավորման պատմությանը, 32,7 %-ը՝ ոչ, իսկ 21,8 %-ը չի կարևորում այցելությունից առաջ ազգային պարկերի ձևավորման պատմության մասին ծանոթացումը:


Այն հարցին, թե զբոսաշրջության որ ձևերը կարելի է զարգացնել ազգային պարկերում, տրվել են հետևյալ պատասխանները.



Գծապատկեր 7. Ի՞նչ եք կարծում, զբոսաշրջության որ ձևերը կարելի է զարգացնել ազգային պարկերում՝

Մասնակիցների մեծամասնությունը կարծում է, որ ազգային պարկերում կարելի է զարգացնել էկոզբոսաշրջությունը (50 %), հաջորդիվ արկածային զբոսաշրջությունն է (25 %), առողջարանայինը՝ (15 %), ռեկրեացիոնը (7 %) և ագրոտուրիզմը (3 %):

Հետազոտելով մասնակիցների կարծիքները՝ զբոսաշրջային ձևերի զարգացման համար ներկայացվել է նաև հետևյալ հարցը՝ արդյո՞ք զբոսաշրջային ակտիվությունը կարող է վնասել պարկերի էկոհամակարգերին, և ստացել ենք հետևյալ պատասխանները




Գծապատկեր 8. Ի՞նչ եք կարծում, Ազգային պարկերի զբոսաշրջային ակտիվությունը կարո՞ղ է վնասել պարկերի էկոհամակարգերին

41,2 %-ը կարծում էր, որ զբոսաշրջային ակտիվությունը չի կարող վնասել պարկերի էկոհամակարգերը, 31,4 %-ը դժվարացել է պատասխանել, իսկ 27,5 %-ի կարծիքով՝ այո:

ակտիվությունը կվնասի պարկերի էկոհամակարգերը:

Իսկ այն հարցին, թե ՀՀ որ ազգային պարկն ունի ամենամեծ ներուժը զբոսաշրջության զարգացման համար, մասնակիցների հարցման արդյունքը հետևյալն էր.




Գծապատկեր 9. Հստ ձեզ ՀՀ որ ազգային պարկը ունի ամենամեծ ներուժը զբոսաշրջային զարգացման համար

Հարցման մասնակիցների 42,6 %-ը կարծում է, որ զբոսաշրջության զարգացման համար ամենամեծ ներուժն ունի «Դիլիջան» ազգային պարկը, քանի որ ունի գեղեցիկ բնություն, մաքուր օդ, մատչելիություն, հարուստ և յուրօրինակ կենսաբազմազանություն, անտառային լանդշաֆտ, բնության հուշարձաններ, բնապահպանական, գիտաճանաչողական, առողջապահական և ռեկրեացիոն բարձր արժեքներ:

Երկրորդը խումբը՝ 34,7 %-ը, «Սևան» ազգային պարկն է համարում ավելի մեծ ներուժ ունեցող, քանի որ մասնակիցները կարծում են, որ զբոսաշրջության զարգացման համար Սևանա լիճը ունի մեծ ներուժ, հասանելիություն և զբոսաշրջիկների մեծ հոսք:

Հարցվածների 18,8 %-ի կարծիքով «Արփի լիճ» ազգային պարկն ունի զարգացման ամենամեծ ներուժը՝ տրանսկովկասյան ճանապարհին գտնվելու պատճառով: Հարցվողները դրական հատկանիշներից առանձնացնում են հատկապես մաքուր օդը, բազմազան բնությունը, գեղեցիկ բնապատկերները, կենսաբազմազանությունը: «Արևիկ» ազգային պարկի զբոսաշրջային ներուժը նշել է հարցվողների ընդամենը 3,9 %, որը վկայում է ազգային պարկին նրանց ծանոթ չլինելու մասին, քանի որ լրացուցիչ հարցումները վկայեցին, որ նրանցից ոչ ոք երբեք չի այցելել «Արևիկ» ազգային պարկ: Նշողները հատկապես ընդգծում են պարկի եզակի բուսական և կենդանական աշխարհը, ուղղաձիգ բնական գոտիները և լանդշաֆտները:

Եվ վերջին կարևոր հարցը, որը նույնպես շատ կարևոր է ազգային պարկերում զբոսաշրջության զարգացման համար, դա պարզելն էր, արդյոք մասնակիցները օգտվում են ազգային պարկերի պաշտոնական կայքէջերից՝



Գծապատկեր 10. Օգտվո՞ւմ եք ազգային պարկերի պաշտոնական էջերից

Ունենք ավելի շատ՝ 65,3 % բացասական պատասխան, և միայն 34,7 %-ը դրական, որը արդեն իսկ ազդում է ազգային պարկերի վերաբերյալ մարդկանց տեղեկացվածության,

հետևաբար այնտեղ այցելելու ցանկությունների վրա: Վերջինս էլ իր հերթին խոչընդոտում է այստեղ էկոգրոսաշրջության զարգացմանը:

Ելնելով կատարված սոցիալոգիական արդյունքների վերլուծությունից՝ հանգել ենք այն եզրակացության, որ մեր հետազոտության արդյունքները կարելի է կիրառել ազգային պարկերում էկոգրոսաշրջային երթուղիներ կազմելիս: Մեր կողմից փորձ է արվել կազմել ճանաչողական, էկոլոգիական, քայլարշավային երթուղի՝ «Արփի լիճ ազգային պարկ» ՊՈԱԿ-ում: Նշենք, որ մեր կազմած էկոգրոսաշրջային երթուղին իր մեջ ներառում է ոչ միայն բնական հուշարձաններ, այլ նաև մշակութային կոթողներ, որոնք մեծ ճանաչում չունեն Հայաստանում ներկայումս գործող զբոսաշրջային կազմակերպությունների կողմից, անգամ ներառված չեն տուր փաթեթներում:

Առաջին կանգառը նախատեսել ենք վարչական շենքում: Այն ունի իրազեկման բնույթ, այսինքն՝ երթուղու մասնակից զբոսաշրջիկները, հատուկ սահմանված կարգով, կգրանցվեն այցելուների մատյանում, ըստ այդմ իրավունք կունենան գտնվելու ազգային պարկի տարածքում և կծանոթանան ազգային պարկի կանոններին, իրենց իրավունքներին ու պարտականություններին, որից հետո հաջորդ կանգառը կլինի «Գայլի երախ» տանող ճանապարհին, որտեղ մինչև նշանակակետ հասնելը կան հատուկ սահմանված էկոձկնորսային կանգառներ:

Այսպիսով, երթուղին քայլարշավով կշարունակվի դեպի «Գայլի երախ» կոչվող վայրը, որտեղ կսենք արդեն տարիներ շարունակ տեղացիների կողմից պատմվող լեգենդներ և տեղանկան ստուգաբանությունը: Այնուհետև 4-րդ կանգառը նախատեսված է կատարել դեպի Ձորակերտ տանող ճանապարհին, որտեղ զբոսաշրջիկները հնարավորություն կունենան տեսնել տարածքի միակ բնական անտառը և լճի բնական այն մասը, որը եղել է մինչև արհեստական պատենշ կառուցելը, ապա երթուղին ուղղվում է դեպի Արդենիս գյուղ, որտեղ հնարավորություն կունենան զբաղվել թռչնադիտարմամբ, տեսնել Հայաստանում այս տարածաշրջանի իրենց միակ բնադրավայրը հանդիսացող թռչունների, օրինակ՝ գանգրափետուր հավալունին, որի համար Արդենիս լճակը ամենասիրելին է: 6-րդ կանգառը նախատեսում ենք կատարել Բերդաշենում կառուցված ձիարշավարանի մոտ, որտեղ հնարավորություն կա ձիավարությամբ զբաղվելու, ապա երթուղին շարունակվում է դեպի Ղազանչի գյուղը, որտեղ գործում է «Արփի լիճ» ազգային պարկի թանգարանը: Այստեղ հնարավոր է տեսնել ազգային պարկի ֆլորան և ֆաունան, ինչպես նաև իմանալ նրա կազմավորման պատմությանը: 8-րդ կանգառը Մեծ և Փոքր Սեպասար գյուղերի մեջտեղում գտնվող անտառն է, որտեղ միախառնվում են Ախուրյան գետի հին և նոր հուները, և որոնց վրա կա 17-րդ դարում կառուցված գործող կամուրջ: Վերջին կանգառն այս տարածքում գտնվող Սբ. Հովհաննես մատուռն է, որը շրջապատված է բնական ջրվեժով և գտնվում է անառիկ վայրում:

Այս զբոսաշրջային երթուղու տևողությունը 1 օր է, յուրաքանչյուր կանգառ կարող է տևել մինչև 1 ժամ: Երթուղու ընթացքում նախատեսում ենք հատուկ հատկացված տրանսպորտից օգտվելու հնարավորություն:

Եզրակացություններ

Կատարված հետազոտության արդյունքները մեզ թույլ են տալիս կատարել մի քանի եզրահանգումներ:

1. Հայաստանում էկոզբոսաշրջությունը դեռևս թույլ է զարգացած, որը պայմանավորված է ազգային պարկերի էկոզբոսաշրջային դեստինացիոն հնարավորությունների բացահայտման անբավարար ջանքերով:
2. Ապահովելով զբոսաշրջային հոսքեր և ներդրումներ՝ էկոզբոսաշրջությունը էապես կարող է նպաստել տարածքի սոցիալ-տնտեսական զարգացմանը՝ նվազագույնի հասցնելով բնության և շրջակա միջավայրի վնասները:
3. Ներկայումս շատերին են ձգում բնության գեղեցիկ և անաղարտ անկյունները, որոնցում հնարավոր է հեռանալ ծանրաբեռնված աշխատանքից: Նման տարածքները հիմնականում գտնվում են ազգային պարկերում և արգելոցներում, որտեղ էլ պետք է կազմակերպվեն էկոզբոսաշրջային երթուղիները:
4. Այսպիսով, կարող ենք ասել, որ մասնավորաբար երիտասարդների շրջանում կասեր և հետաքրքրություն բնության՝ հատուկ պահպանվող տարածքների հանդեպ, որն օրեցօր աճում է՝ անկախ նրանց բնակության վայրից, տարիքից և սեռից:
5. Միաժամանակ ազգային պարկերը կարող են հանդիսանալ մարդ-բնություն փոխհարաբերությունների ամրապնդման, բնության մեջ ճիշտ պահվածքի դաստիարակության ձևավորման կարևորագույն բաղադրիչներից:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-202>

Գրականություն

1. «Արփի լիճ» ազգային պարկի 2011-2015 թվականների կառավարման պլան, 147 էջ (ղիտվել է 23. 10. 2024):
2. Khosrov Forest State Reserve [Էլեկտրոնային ռեսուրս] // URL: <https://armland.am/hy/2018/10/am-khosrov-forest-state-reserve> (ղիտվել է 09. 14. 2024):
1. Նախագծային մեթոդի կիրառման համար մասնակիցների պատրաստվածության բացակայություն	Նախագծային մեթոդի արդյունավետ կիրառումը ենթադրում է, որ ուսուցիչներն ու սովորողները պետք է ունենան բավարար գիտելիքներ և հմտություններ նախագծերով աշխատանք կատարելու համար:	- Ուսուցիչների համար կազմակերպել շարունակական մասնագիտական զարգացում՝ հատկապես նախագծային մեթոդի կիրառման հարցում: - Իրականացնել սովորողների նախապատրաստական դասընթացներ, որոնք ընդգրկում են թիմային աշխատանք, նախագծային մեթոդի հիմնական սկզբունքները և գործիքները: - Մեկնարկել պարզ նախագծերով՝ հմտությունների և գիտելիքների զարգացում ապահովելու նպատակով:
2. Գնահատման և արժևորման խնդիրներ	Նախագծերի արդյունքների գնահատումն ու որոշումը կարող է լինել բարդ, քանի որ դրանք հաճախ ընդգրկում են ընթացիկ աշխատանքներ և բազմաշերտ գործընթացներ:	- Գնահատման համակարգի ներդրում՝ հաշվի առնելով ոչ միայն վերջնական արդյունքը, այլ նաև աշխատանքների գործընթացը: - Օգտագործել բազմամեթոդ գնահատման գործիքներ՝ ներառելով ինքնագնահատում, համախմբված գնահատում (կարգավորման մեթոդներ): - Ստեղծել հստակ գնահատման չափանիշներ, որոնք համապատասխանում են նախագծի բովանդակությանը:
3. Ժամանակի կառավարում	Նախագծային մեթոդի կիրառումը պահանջում է ժամանակային ռեսուրսների լուրջ կառավարում, քանի որ նախագծերը կարող են ունենալ երկարաժամկետ և բազմաֆազային կառուցվածք:	- Նախագծերի փորձացում՝ ավելի կառավարելի դարձնելու համար: - Կարճաժամկետ նախագծեր՝ որոնց իրականացումը հնարավոր է տեղայնացնել ուսումնական ժամանակացույցում: - Ժամանակի կառավարման արդյունավետ գործիքների կիրառում՝ նախագծերի ընթացքն ու ավարտը ժամանակին և պատշաճ կերպով կազմակերպելու համար:

Դժվարություն	Նկարագրություն	Հաղթահարման ուղիներ
4. Հաղորդակցման դժվարություններ	Սովորողների միջև կարող են առաջանալ հաղորդակցման խոչընդոտներ, հատկապես տարբեր գիտելիքների մակարդակների և լեզվատառնդության	- Հաղորդակցման հմտությունների զարգացմանն ուղղված ծրագրերի կազմակերպում՝ ներառելով նաև թիմային փոխգործակցություն: - Ակտիվ հաղորդակցման մեթոդների կիրառում՝ համաձայնեցված խնդիրների և գործառնությունների շուրջ: - Համագործակցային ուսուցում, որը կնպաստի հաղորդակցման սահմանափակումների վերացմանը:
5. Նախագծերի բարդության և ծրագրերին նյութին անհամապատասխանություն	Նախագծերը կարող են լինել բարդ և դուրս գալ ուսումնական ծրագրի շրջանակներից՝ դժվարացնելով դրանց ինտեգրումը դասավանդման ընդհանուր գործընթացին:	- Նախագծերի ընտրությունը պետք է լինի համահունչ դասագրքային ծրագրերին առանց սկզբնական կրթական նպատակների և առաջադրանքների խախտման: - Նախագծերի թեմատիկայի համադրման գործընթաց՝ դասընթացների բովանդակության և նպատակների հետ: - Ուսուցչի օգնություն և խորհրդատվություն նախագծերի դասավանդման սկզբնական փուլերում:
6. Սովորողների մոտիվացիայի պակաս	Որոշ սովորողների մոտ կարող է բացակայել ներգրավվածությունը և հետաքրքրությունը նախագծերի նկատմամբ, ինչը բացասաբար կարող է անդրադառնալ արդյունավետության վրա:	- Մոտիվացիոն մեթոդների կիրառություն ուղղված սովորողների ներգրավվածության բարձրացմանը: - Նախագծերի թեմաները պետք է լինեն սովորողների հետաքրքրությունների ու կարիքների հետ համահունչ՝ նրանց մոտիվացիան բարձրացնելու համար: - Արժևորել յուրաքանչյուր սովորողի ջանքերը՝ թիմային և անհատական հաջողություններն ընդգծելու միջոցով:
7. Ռեսուրսների բացակայություն կամ սահմանափակություն	Նախագծերի իրականացումը կարող է բարդանալ, եթե անհրաժեշտ ռեսուրսները (ծրագիր, նյութեր, տեխնոլոգիական միջոցներ) սահմանափակված են կամ անհասանելի:	- Նախատեսել ռեսուրսներ ըստ նախագծերի պահանջների և ժամանակի: - Ռեսուրսների արդյունավետ օգտագործում՝ հաշվի առնելով դրանք նախապես տրամադրելու հնարավորությունը - Դասընթացներում կիրառել թվային և տեխնոլոգիական հարթակներ՝ ընդլայնելով նյութերի և ռեսուրսների հասանելիությունը:

Ստորև ներկայացնում ենք նախագծային աշխատանքների իրականացման քայլաշար, որը կօգնի ուսուցիչներին ավելի արդյունավետ և կառուցողական կազմակերպել ուսումնական գործընթացն այս մեթոդի օգնությամբ (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Նախագծային աշխատանքների իրականացման քայլաշար

Քալ	Նպատակ	Միջոցներ և Ռեսուրսներ	Ռիսկեր և Կանխարգելման Միջոցներ	Ժամանակահատված	Պատասխանատուներ
1. Նախագծի թեմայի բնութագրում	Շնորհի հետաքրքիր, նշանակալի թեմա սովորողներին ներգրավելու համար:	Գիտական հոդվածներ, ակադեմիական գրքեր Թեմայի վերաբերյալ հետազոտական տվյալներ -Ուսուցիչների թիմ	Ռիսկ: Թեմայի ոչ համահունչ բնութագրում կամ կարճամասկետ չափարկում: Կանխարգելում: Հետաքրքրությունների հարցում սովորողներին ներգրավելու հարցում:	1 շաբաթ	Ուսուցիչներ, խմբի
2. Նախագծի պլանավորում	Սահմանել նախագծի պատասխանը, թայլերն ու ժամանակային շրջանակները	Ուսուցողական պլաններ Սահմանված ժամանակացույց - Տեխնոլոգիական և ծրագրային գործիքներ (Google Classroom, Trello)	Ռիսկ: Պլանավորման սխալներ, սովորողների ակնկալիքների ու ժամանակի բացթողումներ: Կանխարգելում: Քայլերի մանրամասն պլանավորում ու տարածքային գնահատումներ:	1 շաբաթ	Ուսուցիչներ, սովորողներ
3. Հետազոտման վեպ	Սովորողները հավաքում են անհրաժեշտ տվյալներ ու տեղեկություններ:	Գիտական գրքեր, հոդվածներ Տեխնոլոգիական ռեսուրսներ (Google Scholar, Zotero) - Շնորհություն տալիքը մեթոդներին	Ռիսկ: Արժեքավոր տվյալների բացակայություն կամ սխալ օգտագործում: Կանխարգելում: Տեղեկատվության ճշտում, ուսուցչի աջակցություն:	2 շաբաթ	Սովորողներ, ուսուցիչներ
4. Նախագծի իրագործում	Նախագծի հիմնական աշխատանքների իրականացում՝ ըստ պլանավորման	Համագործակցային աշխատանքային գործիքներ (Google Drive, Microsoft Teams) -Տեխնիկական ապրքեր, համակարգչային ծրագրեր	Ռիսկ: Նախագծի ամբողջականության կորուստ կամ անպաշտ իրականացում: Կանխարգելում: Միջանկյալ գնահատումներ, քննարկումներ խմբերի հետ:	3 շաբաթ	Սովորողներ, խմբի
5. Նախագծի ներկայացում	Սովորողները ներկայացնում են իրենց լուծումները՝ դասընկերներին և ուսուցիչներին	Ներկայացումներ (PowerPoint, Canva) -Վիդեոյալ կուրսեր (պարեններ, վիդեոներ) -Վերլուծական ամփոփումներ	Ռիսկ: Անհաջող ներկայացում կամ ստացված անբավարար:	1 շաբաթ	Սովորողներ, ուսուցիչներ, դասընկերներ
6. Հետադարձ կապ և գնահատում	Քննարկել նախագծի արդյունքները, առաջարկել բարելավումներ:	Հետադարձ կապի հարցաշարեր -Գնահատման ցուցանիշներ -Ուսուցողական խորհրդատվություն ու վերանայում	Կանխարգելում: Խմբային քննարկում, ուսուցչի աջակցություն:	1 շաբաթ	Ուսուցիչներ, սանկավարժական աշխատողներ,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սովորողների գնահատման գործընթացն առավել բարդ և խրթին է, այդ թվում՝ նախագծային աշխատանքի իրականացման ժամանակ, ստորև ներկայացնում ենք նախագծային աշխատանքների՝ բովանդակային բոլոր բաղադրիչների գնահատման մեխանիզմները, որոնք կօգնեն ուսուցիչներին ուսումնական գործընթացն առավել արդյունավետ դարձնելու համար:

1. Գիտելիքի ձեռքբերում և սովորողի մասնագիտական զարգացում

Նպատակ՝ գնահատել գիտելիքների կիրառման խորությունը և դրանց ճիշտ օգտագործումը նախագծում:

▪ **Բովանդակային ցուցանիշ.** նախագիծը ամբողջությամբ համադրում է տեսական գիտելիքները և դրանց գործնական կիրառումը՝ խորը վերլուծության և կոնկրետ օրինակների միջոցով:

▪ **Թվային ցուցանիշ.**

- ✓ **100 %**՝ Նախագծում ընդգրկված են բոլոր տեսական ու գործնական բաղադրիչները: Սովորողը կիրառել է ուսուցողական նյութը և դրա հիման վրա ձևավորել կոնկրետ լուծումներ (օրինակ՝ հետազոտական աշխատանքներ, վերլուծություն):
- ✓ **75 %-100 %**՝ Նախագծում առկա են հիմնական գիտելիքները, սակայն դրանք չեն տրամադրվել ամբողջությամբ կամ դեռևս կարող են ընդգրկել բացթողումներ (կամ որոշ մանրամասներ չեն օգտագործվել, կամ որոշակի սխալներ կան տեսական մասում):
- ✓ **50 %-75 %**՝ Նախագիծը ընդգրկում է միայն որոշակի տեսական նյութեր, որոնց մեծ մասը չի համակցվում իրական կամ պրակտիկ կիրառման հետ:
- ✓ **<50 %**՝ Նախագծում բացակայում է հիմնական տեսական բովանդակությունը կամ այն չի համապատասխանում նախագծի պահանջներին:

2. Համագործակցություն և թիմային աշխատանք

Նպատակ՝ գնահատել սովորողների համագործակցության արդյունավետությունը և թիմային աշխատանքի մակարդակը:

▪ **Բովանդակային ցուցանիշ.** թիմը ակտիվորեն համագործակցում է, օգնում միմյանց, հարցեր քննարկում, և միասին են լուծում նախագծի խնդիրները: Հետաքրքրվածությունը բարձր է, և բոլոր անդամները կատարում են իրենց պարտականությունները:

▪ **Թվային ցուցանիշ:**

- ✓ **100 %**՝ Թիմը արդյունավետ և ամբողջական համագործակցություն է ցուցաբերել, բոլոր անդամները եղել են ներգրավված՝ իրենց դերի համաձայն: Սովորողներն ակտիվորեն մասնակցել են քննարկումներին ու խնդիրների լուծմանը:
- ✓ **75 %-100 %**՝ մասնակցությունը ակտիվ է, բայց մեկ-երկու անդամներ ունեցել են ավելի քիչ ներգրավվածություն կամ էլ ավելի քիչ են ներդրել:
- ✓ **50 %-75 %**՝ սովորողները հիմնականում ներգրավված են, բայց շատ անդամներ ակտիվորեն չեն աշխատել միասին:
- ✓ **<50 %**՝ թիմը չի համագործակցել կամ շատ մեծ մասով աշխատանքը եղել է անհատական՝ ոչ կազմակերպված:

3. Ստեղծագործականություն և նորարարություն

Նպատակ՝ գնահատել նախագծում կիրառված նորարարական գաղափարների ու ստեղծագործական մոտեցումների աստիճանը:

▪ **Բովանդակային ցուցանիշ.** Նախագծում նկատելի է նորարարական մոտեցում, որը ներառում է անսովոր լուծումներ, ստեղծագործական մտածելակերպ և հնարամտություն: Սովորողը ստեղծել է եզակի լուծումներ կամ նորարարական գաղափարներ:

▪ **Թվային ցուցանիշ:**

- ✓ **100 %**՝ Նախագծում օգտագործվել են միայն նորարարական, ստեղծագործական

գաղափարներ, որոնք արտացոլում են նոր մոտեցումներ, տեխնոլոգիական կամ գործնական լուծումներ (օրինակ՝ նոր ծրագրեր, ստեղծագործական մեթոդներ):

- ✓ **75 %-100 %**՝ Նախագծում կան որոշ նորարարական լուծումներ, բայց մեծ մասամբ այն օգտագործում է ավանդական մոտեցումներ կամ սովորական գաղափարներ:
- ✓ **50 %-75 %**՝ ստեղծագործական մոտեցումներն ու նորարարությունը սահմանափակված են որոշ մասերով, նախագիծը չի արտացոլում բոլորովին նոր գաղափարներ:
- ✓ **<50 %**՝ Նախագծում բացակայում են նորարարական մոտեցումները, այն հիմնականում կառուցված է ստանդարտ մեթոդներով:

4. Ժամանակի կատարում և պլանավորում

Նպատակ՝ գնահատել սովորողների կողմից ժամանակի արդյունավետ օգտագործումը և պլանավորման հետ համընկնումը:

▪ **Բովանդակային ցուցանիշ.** Նախագծի յուրաքանչյուր փուլ կատարվում է ըստ նախապես պլանավորված ժամանակացույցի՝ ամեն քայլի ժամանակն ու ռեսուրսները վերահսկված են: Թիմը գործում է առանց ուշացումների:

▪ Թվային ցուցանիշ:

- ✓ **100 %**՝ Նախագծի յուրաքանչյուր փուլ կատարվել է ըստ նախնական պլանավորման, առանց ցանկացած փոփոխության:
- ✓ **75 %-100 %**՝ Նախագիծն իրականացվել է ժամանակացույցի մեջ, սակայն ունեցել է որոշակի ուշացումներ կամ շեղումներ պլանավորած ժամկետներից:
- ✓ **50 %-75 %**՝ շեղումներ եղել են, իսկ նախագծի մի քանի փուլեր ուշացել են (օրինակ՝ հետաձգված մոտեցումներ կամ փուլերի ավարտման ձգձգում):
- ✓ **<50 %**՝ Նախագիծը շեղվել է պլանավորման ժամանակից, շատ ուշացումներ են եղել կամ որոշ փուլեր չեն ավարտվել:

5. Ներկայացման մակարդակ

Նպատակ՝ գնահատել նախագծի արդյունքի արդյունավետ և կազմակերպված ներկայացումը:

▪ **Բովանդակային ցուցանիշ.** Նախագիծը ներկայացվում է ուշադիր, բարձր մակարդակով, ներառում է բոլոր մանրամասները, որոնք անհրաժեշտ են թեմայի լիարժեք ներկայացման համար: Կան համապատասխան աջակցության նյութեր (տեսանյութեր, պաստառներ, թվային ներկայացումներ և այլն):

▪ Թվային ցուցանիշ:

- ✓ **100 %**՝ Նախագիծը ներկայացված է խիստ կազմակերպված ձևով՝ բոլորը ներկայացված են հստակ, ու լուսաբանված են բոլոր հիմնական դրույթները (հատկապես հետաքրքիր է տեսանյութի կամ այլ ինտերակտիվ լուծումների կիրառումը):
- ✓ **75 %-100 %**՝ Նախագիծը ներկայացված է լավ, բայց բացակայում են որոշ մանրամասներ կամ օգտագործված են միայն տարրական ներկայացման մեթոդներ (օրինակ՝ միայն դասախոսության տեսքով գեկուցում, առանց պատկերների կամ գործիքների):
- ✓ **50 %-75 %**՝ Նախագծի ներկայացումը բավարար է, սակայն այն կազմակերպված չէ ճիշտ կամ չի կիրառել նորարարական միջոցներ:
- ✓ **<50 %**՝ Նախագիծը ներկայացված է անբավարար կամ ոչ հստակ ձևով, բացակայում են տեսողական և գործնական միջոցներ:

Ամփոփիչ գնահատում իրականացնելու համար առաջարկում ենք օգտվել եզրափակիչ միավորային գնահատման աղյուսակից (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Եզրափակիչ միավորային գնահատման աղյուսակ

	Բովանդակային ցուցանիշներ	Բարձր (10)	Միջին (7-9)	Ցածր (4-6)
Գիտելիքների կիրառման արդյունավետություն	Բոլոր տեսական և գործնական բաղադրիչները ներառված են, կիրառվում են համակցված:	100% գիտելիքների օգտագործում	75%-100% գիտելիքների օգտագործում	<50% գիտելիքների կիրառություն
Համագործակցություն	Սովորողները ակտիվորեն աշխատում են միմյանց հետ՝ կատարելով իրենց պարտականությունները:	100% համագործակցություն	75%-100% համագործակցություն	<50% համագործակցություն
Ստեղծագործականություն	Նախագծում կիրառվել են բացառիկ և նորարար լուծումներ:	100% նորարարություն	75%-100% նորարարություն	<50% նորարարություն
Ժամանակի կառավարում	Նախագծի յուրաքանչյուր փուլ կատարվել է ըստ պլանավորման:	100% համաձայնություն	75%-100% համաձայնություն	<50% շեղումներ
Ներկայացում	Նախագծը ներկայացված է բարձր մակարդակով՝ բոլոր հիմնական դրույթներով:	100% ներկայացում	75%-100% ներկայացում	<50% ներկայացում

Եզրակացություն

Հայաստանի հանրակրթական համակարգում ավանդական մեթոդների կիրառումը դեռևս լայն տարածում ունի, սակայն նորագույն ուսուցման մոտեցումները աստիճանաբար մեծացնում են իրենց ազդեցությունը: Խմբային աշխատանքը, նախագծային ուսուցումը և թվային տեխնոլոգիաները դարձել են կարևոր մաս ուսումնական գործընթացի մեջ՝ տալով սովորողներին ավելի շատ հնարավորություններ համագործակցելու, ստեղծագործելու և պրակտիկ գիտելիքներ ստանալու: Ավանդական մեթոդներն օգտագործվում են, բայց ուսուցիչները փորձում են դրանք համադրել նորարարական տեխնոլոգիաների և մեթոդների հետ՝ ապահովելով սովորողների բազմակողմանի զարգացումը:

Հայաստանի հանրակրթական համակարգը այժմ գտնվում է հետաքրքիր և կարևոր փոփոխությունների փուլում: Դասարանում կիրառվող մեթոդներն ու տեխնոլոգիաները ավելի ու ավելի շատ ներառում են ակտիվ ուսուցման մոտեցումներ՝ նպաստելով սովորողների գիտելիքների խորացմանը, ինքնուրույն մտածողության զարգացմանը և թիմային աշխատանքի հմտությունների ստեղծմանը: Սակայն որոշակի մարտահրավերներ կան, որոնք կապված են ինչպես ենթակառուցվածքների, այնպես էլ սովորողներին և ուսուցիչներին առաջադրված պահանջների հետ: Նոր մեթոդների և տեխնոլոգիաների առավելագույն կիրառությունն ու արդյունավետությունն այս պահին բախվում է որոշակի սահմանափակումների, սակայն այն ակնհայտորեն իր տեղն է գտնում կրթության կայուն զարգացման մեջ: Շարունակելով ակտիվ ներդրումներ և կիրառելով նորարարական մեթոդները, մենք կարող ենք ակնկալել կրթական համակարգի լիակատար բարելավում և իրական առաջընթաց, որը կնպաստի մեր հասարակության և երկրի ապագային:

Գրականություն

1. Հարությունյան Ն. և ուրիշներ, Մանկավարժական բառարան, Երևան, Զանգակ, 2018, 248 էջ:
2. ՀՀ ԿԳՄՍ նախարարի 11 մարտի 2024 թ. N 08-Լ հրաման, նախագծային ուսուցման հայեցակարգը և ուսուցիչների վերապատրաստման մոդուլը հաստատելու մասին:
3. Котова С. С., Хасанова И. И. Самостоятельная работа студентов: проектный подход, учебное пособие, Екатеринбург, 2018. 194 с.
4. Мандель Б. Р. Основы проектной деятельности: учебное пособие для обучающихся в системе СПО, М., Берлин: Директ-Медиа, 2018, - 293 с.
5. Петрова Н.П., Реализация метода проектов в подготовке педагога (на примере гуманитарных дисциплин) Ставрополь, 2015, 196 с.
6. Шихваргер Ю. Г. Метод проектов в профессиональном обучении педагогов, Новосибирск, 2013, 142 с.
7. Career Centers: Types, Benefits and Tips for Using One [Էլեկտրոնային ռեսուրս] // URL: https://www.evalcommunity.com.translate.goog/career-center/what-is-evaluation/?_x_tr_sl=en&_x_tr_tl=hy&_x_tr_hl=hy&_x_tr_pto=sc (դիտվել է 24.11.2024):

Подходы к проектному обучению и механизмы их оценки в контексте реформ образовательной системы

Эминя Гегик

Резюме

Ключевые слова: образование, метод, проект, школа, учитель, ученик, технологии, знания, оценка

Статья исследует концепцию проектного обучения (PBL) и механизмы его оценки в рамках образовательных реформ. PBL — это метод обучения, ориентированный на учащихся, который фокусируется на изучении реальных проектов. Этот подход способствует более глубокому обучению, побуждая студентов исследовать сложные вопросы и сотрудничать с другими, а также развивать такие навыки, как решение проблем, критическое мышление и креативность. В статье рассматриваются различные подходы к внедрению PBL в школах с акцентом на его интеграцию в современные образовательные системы. Существенная часть обсуждения посвящена методам оценки работы студентов в условиях проектного обучения, где оценка выходит за рамки традиционных тестов и оценок и фокусируется на процессе, сотрудничестве и индивидуальном росте. Рассматриваются проблемы и стратегии оценки PBL, в частности, важность создания рубрик, предоставления конструктивной обратной связи и измерения как академических результатов, так и личностного развития. Также рассматривается роль технологий в улучшении проектного обучения, подчеркивая, как цифровые инструменты могут поддерживать сотрудничество, исследования и коммуникацию. В статье обсуждается влияние образовательных реформ на внедрение PBL в Армении, подчеркивая необходимость подготовки учителей, профессионального развития и институциональной поддержки для успешного внедрения. В заключение утверждается, что проектное обучение, при правильной реализации и оценке, может стать мощным инструментом для улучшения качества образования и вовлеченности студентов.

Project-Based Learning Approaches and Their Assessment Mechanisms in the Context of Educational System Reforms

Eminyan Gagik

Summary

Key words: *education, method, project, school, teacher, learner, technology, knowledge, assessment*

The following paper examines the concept of Project-Based Learning and the assessment mechanisms associated with it within the context of educational reforms. PBL is a student-centered teaching method that focuses on learning through real-world projects. The approach promotes deeper learning by encouraging students to explore complex issues and collaborate with others, while also developing such skills as: problem-solving, critical thinking, and creativity. A significant part of the discussion is dedicated to the methods of evaluating students' work in project-based settings, in which the assessment moves beyond traditional tests and grades to focus on process, collaboration, and individual growth. The challenges and strategies of assessing PBL are examined, particularly the importance of creating rubrics, providing constructive feedback, and measuring both academic outcomes and personal development. The article also discusses how technology can improve project-based learning by helping students collaborate, do research, and communicate more effectively. In addition, it highlights the impact of educational reforms on the adoption of PBL in Armenia, emphasizing the need for teacher preparedness, professional development, and institutional support for successful implementation.

In conclusion, it argues that Project-Based Learning, when properly implemented and assessed, can be a powerful tool for improving the quality of education and student engagement.

Ներկայացվել է 09. 12. 2024 թ.

Գրախոսվել է 16. 12. 2024 թ.

Ընդունվել է տպագրության 05. 06. 2025 թ.

**Կառավարման գործընթացի հոգեբանական ասպեկտները և
հայեցակարգային մոտեցումները**

Լաշինյան Լիլիթ

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-236>

Հանգուցային բառեր. *կառավարում, որոշումների ընդունում, մոտիվացիա, կոմունիկացիա, լիդերություն, հուզական ինտելեկտ, կազմակերպչական վարք*

Նախաբան

Հետազոտության նպատակն է բացահայտել կառավարման գործընթացի հոգեբանական առանձնահատկությունները և ուսումնասիրել դրանց ազդեցությունը կառավարչական գործունեության արդյունավետության վրա: Այն ուղղված է կառավարման համակարգերի հոգեբանական բաղադրիչների վերլուծությանը՝ հիմնվելով ժամանակակից տեսությունների և հայեցակարգերի վրա:

Հետազոտությունն իր առջև դնում է հետևյալ խնդիրները.

1. Կառավարման հոգեբանական գործոնների վերլուծություն, ներառյալ մոտիվացիան, հույզերի կառավարումը և փոխգործակցությունը:
2. Կառավարման հոգեբանական հայեցակարգերի ուսումնասիրություն:
3. Կազմակերպությունում առաջնորդության և խմբային դինամիկայի հոգեբանական բնութագրերի բացահայտում:

Հետազոտության նորույթը հետևյալն է.

1. Կառավարման հոգեբանական ասպեկտների համալիր վերլուծություն՝ հիմնված հոգեբանության նորագույն տեսությունների և հայեցակարգերի վրա:
2. Հոգեբանական գործոնների ինտեգրումը կառավարման համակարգային, իրադրային, գործառնության և վիճակագրական հայեցակարգերում:
3. Կառավարման գործընթացում անձնակազմի մոտիվացիայի և կազմակերպչական մշակույթի ազդեցության նոր մոտեցումների վերլուծություն:

Հետազոտության արդիականությունը այն է, որ կառավարման գործընթացների արդյունավետությունը կապված է կազմակերպություններում սոցիալ-հոգեբանական մթնոլորտի բարելավման և մարդկանց վարքագծի ուսումնասիրման հետ: Ժամանակակից կազմակերպությունները կանգնած են հույզերի, կոնֆլիկտների, սթրեսի կառավարման և գործունեության փոփոխություններին հարմարման մարտահրավերների առջև, ինչն ընդգծում է կառավարման հոգեբանական տեսությունների կիրառման անհրաժեշտությունը:

Հետազոտության տեսական նշանակությունը այն է, որ վերջինս համալրում է կառավարման հոգեբանական տեսությունների գիտական բազան՝ նպաստելով հետևյալ ուղղությունների զարգացմանը.

1. կառավարման հոգեբանության և կազմակերպչական վարքի միջև կապերի ուսումնասիրություն,
2. հոգեբանական գործոնների ներգործության գնահատում կառավարչական որոշումների և ռազմավարությունների մշակման վրա,
3. կառավարման ժամանակակից հոգեբանական հայեցակարգերի հարստացում:

Հետազոտության գործնական նշանակությունը և կիրառական արժեքը դրսևորվում է հետևյալով.

1. հոգեբանական գործոնների վրա հիմնված կառավարչական ռազմավարությունների մշակման համար առաջարկությունների տրամադրում,
2. հոգեբանական գրագիտության բարձրացման միջոցով կազմակերպություններում արդյունավետ լիդերության և փոխգործակցության խթանում,

3. կառավարման հոգեբանական մեթոդների կիրառման միջոցով խմբային դինամիկայի և աշխատանքի արտադրողականության բարելավում,
4. կոնֆլիկտների և սթրեսների կառավարման մեխանիզմների ներդրում, ինչը նպաստում է բարենպաստ աշխատանքային միջավայրի ձևավորմանը:

Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել ինչպես կառավարման տեսության զարգացման, այնպես էլ կազմակերպչական պրակտիկայում՝ մարդկային ռեսուրսների կառավարման գործընթացների օպտիմալացման համար:

Հոգվածի բովանդակությունը

Կառավարման գործընթացի հոգեբանական բնորոշումը և հայեցակարգային մոտեցումները ժամանակակից հոգեբանության և կառավարման ուսումնասիրության կարևոր խնդիրներից են: Կառավարման գործընթացն իր մեջ ընդգրկում է մի քանի հոգեբանական կողմեր՝ որոշումների ընդունում, կառավարչական մոտիվացիա, փոխազդեցություն և հաղորդակցում, լիդերություն, հուզական ինտելեկտ, կազմակերպչական վարք և այլն: Հայեցակարգային մոտեցումները կառավարման նկատմամբ կարող են տարբերվել կախված նրանից, թե կառավարման ինչ կողմեր են ընդգծվում՝ ռացիոնալ ասպեկտները (օրինակ՝ ռացիոնալ ընտրության տեսությունները) կամ սոցիալ-հոգեբանական ասպեկտները (օրինակ՝ լիդերության և խմբային դինամիկայի տեսությունները):

Ժամանակակից կառավարման հոգեբանական տեսական հիմքը դրվել է Է. Մեյոյի, Ա. Մալուրի, Պ. Դաքերի աշխատություններով, որոնք ելակետ ծառայեցին աշխատանքի հումանիզացման և կազմակերպության կառավարման նոր ձևերի գործնական մշակումների համար, հիմք դարձան հատուկ կառավարչական գործառնության համար, ինչը ստացավ «անձնակազմի կառավարում» կամ ավելի լայն «մարդկային ռեսուրսների կառավարում» անվանումը և գրեթե նույնական է «սոցիալական մենեջմենթ» անվանման հետ [6, 35]:

Կառավարման հայեցակարգը հիմնարար տեսություն է, որում առանձնացվում են ժամանակակից կառավարման չորս հայեցակարգեր՝ գործառնական, համակարգային, իրադրային և վիճակագրական [1, 34]:

Կառավարման համակարգային հայեցակարգը կազմակերպությունը դիտարկում է որպես փոխկապակցված տարրերից բաղկացած համակարգ: Այդ համատեքստում կառավարումը դիտարկվում է ոչ միայն կոնկրետ խնդիրների կատարման տեսանկյունից, այլև որպես համակարգի տարբեր բաղադրիչների փոխհամաձայնեցման և ընդգրկման միջոց ընդհանուր նպատակներին հասնելու համար: Համակարգային հայեցակարգի հոգեբանական ասպեկտները կարևոր դեր են խաղում կազմակերպությունում աշխատակիցների վարքի, մոտիվացիայի և փոխգործողության ճանաչողության գործում:

Կառավարման համակարգային հայեցակարգի ինտեգրելով՝ հոգեբանական ասպեկտները թույլ են տալիս ավելի խորը հասկանալ և կառավարել կազմակերպության մարդկային ռեսուրսները, ինչը նպաստում է ավելի ներդաշնակ և արդյունավետ աշխատանքային գործընթացների ձևավորմանը: Ուստի կարևոր է հաշվի առնել անհատական և խմբային հոգեբանական բնութագրերը կառավարչական ռազմավարությունների մշակման դեպքում: Համակարգային հայեցակարգի հոգեբանական մոտեցումն իր մեջ ընդգրկում է մարդկային վարքի, մոտիվացիայի, խմբային դինամիկայի և կազմակերպչական մշակույթի ընկալումները, քանի որ մարդը ցանկացած կազմակերպության առանցքն է [2; 4; 5]:

Համակարգային հայեցակարգի հոգեբանական ասպեկտը այն է, որ ղեկավարը պետք է հստակ իմանա համակարգի շարժիչ ուժերը, փոխգործողության մեխանիզմները: Նա պետք է հստակ պատկերացնի՝ ինչպես ներգործել համակարգի տարրերից մեկի վրա, որ անհրաժեշտ հակազդում առաջացնի նրա մյուս մասերում կամ ամբողջ համակարգում ընդհանրապես:

Իրադրային հայեցակարգը մեննաբանվում է որպես կառավարման կոնկրետ իրադրությունը համարժեք միջոցառումների համախումբ: Կախված ստեղծված հանգամանքներ-

րից մշակվում և իրագործվում են այնպիսի միջոցառումներ, որոնք թույլ են տալիս արդյունավետ կերպով ներգործել կառավարման օբյեկտի վրա:

Կառավարման իրադրային հայեցակարգը հիմնվում է այն գաղափարի վրա, որ արդյունավետ ղեկավարումը կախված է իրադրությանը համապատասխանող կառավարման ոճից: Այդ մոտեցումն ուշադրությունը կենտրոնացնում է կազմակերպության վրա ազդող արտաքին և ներքին գործոններից՝ կախված ղեկավարների ճկունության և հարմարվողականության վրա:

Իրադրային հայեցակարգի հոգեբանական էությունը կապված է ղեկավարի վերլուծական ընդունակություններից: Ցանկացած իրադրության մեջ նա պետք է տեսնի հիմնական «թիրախը», կարողանա ձեռնարկել անրաժեշտ միջոցներ օպտիմալ ներգործելու համար և շտկի իրադրության հետագա ընթացքը: Իրադրության կառավարման համապատասխանող կառավարման ոճի ընտրության ղեպքում անհրաժեշտ է հաշվի առնել ղեկավարի հուզական ինտելեկտը, աշխատակազմի մոտիվացիան և կազմակերպության հոգեբանական մթնոլորտի նշանակությունը [22; 24; 28; 30; 32; 55; 57]:

Կառավարման իրադրային հայեցակարգի հոգեբանական ասպեկտներն ընդգծում են կառավարման ճկուն մոտեցման անհրաժեշտությունը: Արդյունավետ կառավարումը պահանջում է ոչ միայն արտաքին և ներքին գործոնների իմացություն, այլև գործընթացի մասնակիցների հոգեբանական բնութագրումների հաշվի առնում, ինչը հնարավորավորություն կտա մշակել արդյունավետ կառավարչական ռազմավարություններ, որոնք ընդունակ կլինեն հարմարվել գործունեության փոփոխվող պայմաններին ու բավարարել և՛ կազմակերպության, և՛ նրա առանձին աշխատակիցների պահանջույթները:

Վիճակագրական հայեցակարգը ենթադրում է համակազմի քանակական ու որակական բնութագրերի կառավարում՝ տվյալների որոշակի համակազմի հաշվառման և վերլուծության հիման վրա: Ցուցանիշների դինամիկայի հետ գործառնությունները թույլ են տալիս նկատել փոփոխությունները, միջոցներ ձեռնարկել դրական միտումների պահպանման ու բացասական միտումների արգելափակման համար:

Կառավարման վիճակագրական հայեցակարգն օգտագործում է մեթոդների ու մոտեցումների համակազմ, որոնք օգտագործում են վիճակագրական գործիքներ՝ կազմակերպությունում գործընթացների և որոշումների բարելավման համար: Այն սերտորեն կապված է որակի կառավարման և Դեմինգի մեթոդաբանության հետ [18; 33; 34; 36; 46; 48]: Կառավարման վիճակագրական հայեցակարգն առաջարկում է գործիքներ կազմակերպություններում գործընթացների բարելավման և որակի բարձրացման համար, սակայն այդ մեթոդների ներդրման հաջողությունը կախված է հոգեբանական ասպեկտների՝ փոփոխությունների ըմբռնման, մոտիվացիայի և խմբային դինամիկայի հաշվառման հետ:

Գործառնության մոտեցումը կառավարումը դիտարկում է որպես հաջորդաբար փոփոխապակցված գործողությունների կամ գործառնությունների գործընթաց: Այն կառավարումը դիտարկում է որպես կազմակերպության նպատակներին ուղղված ղեկավարության գործողությունների հաջորդականություն: Կառավարման գործընթացն սկսվում է կառավարման օբյեկտի և սուբյեկտի միջև փոխադարձ կապի հաստատման պահից և ավարտվում այդ կապի վերացման հետ:

Կառավարման գործառնության հայեցակարգը կազմակերպությունների կառավարման համակարգված մոտեցումն է, որտեղ հիմնական ուշադրությունը կենտրոնացվում է կառավարման առանցքային գործառնությունների՝ պլանավորման, կազմակերպման, մոտիվացիայի և վերահսկողության վրա:

Գործառնության հայեցակարգի շրջանակներում վերը նշված կառավարման բոլոր հայեցակարգերից առավել շատ ներառված է հոգեբանական ասպեկտը: Կառավարման գործառնության հայեցակարգի հոգեբանական ասպեկտների վերլուծությունը ցույց է տալիս, որ կառավարչական գործառնությունների հաջող կատարումը պահանջում է հաշվի նստել ան-

հատական և խմբային հոգեբանական գործոնների հետ: Ղեկավարը պետք է հասկանա, թե աշխատակիցների հոգեբանական բնութագրերն ինչպես են ազդում նրանց վարքի, մոտիվացիայի և կազմակերպության ներսում նրանց փոխգործակցության վրա [17; 20; 31; 35; 41; 45]:

Հոգեբանական ասպեկտները նաև կարևոր դեր են խաղում կազմակերպությունում փոփոխությունների ու կոնֆլիկտների կառավարման գործում: Ղեկավարների հոգեբանական գրագիտությունը նպաստում է բարենպաստ աշխատանքային մթնոլորտի ձևավորմանը, աշխատակիցների մոտիվացիայի ու բավարարվածության բարձրացմանը, նաև կոնֆլիկտների ու սթրեսների նվազեցմանը:

Կառավարման գործառնության հայեցակարգի հոգեբանական ասպեկտները կարևոր դեր են խաղում կազմակերպության նպատակներին հասնելու մեջ: Ղեկավարներին անհրաժեշտ է հաշվի առնել հոգեբանական ասպեկտները՝ պլանավորման, կազմակերպման, մոտիվացիայի և վերահսկողության, կազմակերպության արդյունավետ կառավարման և կայուն զարգացումն ապահովելու համար:

Հոգեբանության համատեքստում կառավարման գործընթացը վերաբերում է կազմակերպության կամ խմբի մեջ որոշակի նպատակներին հասնելուն ուղղված գործողությունների և որոշումների համակարգին: Այդ գործընթացն իր մեջ է ներառում մի քանի առանցքային փուլեր, որոնցից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկություններն ու պահանջները: Կառավարման գործընթացն իր մեջ ընդգրկում է բազմաթիվ հոգեբանական ասպեկտներ, որոնք ազդում են ղեկավարի և աշխատակիցների արդյունավետ փոխգործակցությանը: Ներկայացնենք դրանցից հիմնականները.

1. *Հաղորդակցում*: Արդյունավետ հաղորդակցումը ղեկավարի և ենթակաների միջև, նաև կազմակերպության ներսում, լավ կառավարման հիմք է: Բաց, թափանցիկ և հստակ հաղորդակցումն օգնում է խուսափել թյուրմեբնություններից և կոնֆլիկտներից: Հաղորդակցման հոգեբանական տեսությունները կառավարման մեջ առանցքային դեր են խաղում կազմակերպության ներսում տեղեկատվության փոխանցման եղանակների վրա: Ներկայացնենք մի քանի հիմնական տեսություններ և հայեցակարգեր, որոնք հաճախ են դիտարկվում տվյալ ոլորտում:

«Սոցիալական նույնականության» տեսության համաձայն (Social Identity Theory) Հ. Թեջֆելը և Ջ. Թյորները նշում են, որ մարդիկ իրենց և ուրիշներին դասակարգում են տարբեր սոցիալական կարգավիճակներում՝ էթնիկական խմբերի, աշխատանքային խմբերի, կազմակերպությունների մեջ և այլն: Դա թույլ է տալիս բացատրել, թե ինչպես է սոցիալական նույնականությունն ազդում աշխատանքային միջավայրում վարքի և փոխգործողության վրա [52]:

«Տրանզակտ վերլուծության» տեսությունը (Transactional Analysis) կենտրոնանում է մարդկանց միջև փոխգործողությունների վրա և ենթադրում, որ հաղորդակցումը կարող է կատարվել «էգո»-ի երեք վիճակներով՝ ծնող, մեծահասակ և երեխա: Այդ վիճակների ընկալումն օգնում է բարելավել միջանձնային հաղորդակցումն ու կոնֆլիկտների կառավարումը [14]:

«Գոգնիտիվ դիսոնանսի» տեսության համաձայն (Cognitive Dissonance Theory) Լեոն Ֆեստինգերը բացատրում է, թե ինչպես են մարդիկ ձգտում նվազեցնել անբարեհարմարությունը՝ հակասող համոզմունքներից ու գործողություններից: Կառավարման մեջ դա կարող է արտահայտվել սեփական պարտականությունների կամ կազմակերպությունում փոփոխությունների նկատմամբ աշխատակիցների վերաբերմունքի փոփոխության մեջ [21]:

«Ինքնորոշման» տեսության (Self-Determination Theory) համաձայն մոտիվացիան և հաղորդակցման արդյունավետությունը բարձրանում են, երբ բավարարված են երեք հիմնային հոգեբանական պահանջմունքներ՝ ինքնուրույնությունը, կոմպետենտությունը և փոխկապակցվածությունը: Կառավարման մեջ դա նշանակում է, որ պահանջմունքների բա-

վարարումն աշխատակիցների մոտ կարող է բարելավել գործունեության արդյունավետությունը և աշխատակիցների բավարարվածությունն աշխատանքից [17]:

Մեդիահնարավորությունների հարստության տեսության (Media Richness Theory) համաձայն հեղինակներ Ռիչարդ Լ. Դաֆթը և Ռոբերտ Հ. Լենգելը պնդում են, որ հաղորդակցման արդյունավետությունը կախված է օգտագործվող մեդիաների «հարստությունից»: Ավելի «հարուստ» մեդիաները, օրինակ՝ անմիջական շփումն ավելի արդյունավետ է բարդ և երկիմաստ խնդիրների համար, իսկ «քիչ հարուստ» մեդիաները, օրինակ՝ էլեկտրոնային փոստը, հարմար է ավելի պարզ ու քիչ կառուցակարգված խնդիրների համար [13]:

«Իրականության սոցիալական կառուցակարգման» տեսության համաձայն հեղինակներ Պ. Բերգերը և Թ. Լուկմանը պնդում էին, որ սոցիալական իրականությունը ստեղծվում և պահպանվում է հաղորդակցման միջոցով: Մարդիկ, փոխգործողության միջոցով, համատեղ ստեղծում և պահպանում են իրականության մասին հասկացություններ ու պատկերացումներ: Կառավարման մեջ դա օգնում է հասկանալ, թե ինչպես են կոլեկտիվ համոզմունքները և մշակույթը ձևավորվում ու ազդում աշխատակիցների վարքի վրա [15]:

«Տեղեկատվական խոչընդոտների» տեսության համաձայն Ջ. Մ. Միչելը դիտարկում է այն խոչընդոտները, որոնք կազմակերպություններում առաջանում են տեղեկատվության հոսքի ճանապարհին: Միչելն առանձնացնում էր խոչընդոտների երեք հիմնական տեսակ՝ տեխնիկական (տեղեկատվության փոխանցման և մշակման համար տեխնոլոգիաների ու համակարգերի կիրառության հետ կապված խնդիրները), գործընթացային (կազմակերպչական գործընթացների և ընթացակարգերի հետ կապված խնդիրներ, որոնք կարող են խոչընդոտել տեղեկատվության արդյունավետ փոխանակմանը), կոգնիտիվ (առանձին աշխատակիցների կողմից տեղեկատվության ըմբռնման և մեկնաբանության հետ կապված խնդիրներ): Միչելը քննարկում է այդ խոչընդոտների հաղթահարման մեթոդները. տեխնիկական համակարգերի բարելավում, գործընթացների բարելավում, աշխատակիցներին տեղեկատվական գրագիտության ուսուցում [43]:

«Հաղորդակցական ալիքների ընդլայնման» տեսության (Channel Expansion Theory) համաձայն Ջ. Կարլսոնը և Ռ. Ջոնսոնը բացատրում են, թե ինչպես են կոնկրետ հաղորդակցական ալիքի մասին օգտատիրոջ փորձը և գիտելիքներն ազդում տվյալ ալիքի օգտակարության մասին նրա ըմբռնման վրա: Հիմնական գաղափարը այն է, որ որքան շատ է մարդն օգտագործում որոշակի ալիքներ հաղորդակցման համար, այնքան ավելի արդյունավետ է այն դառնում նրա համար: Դա կապված է նրա հետ, որ օգտատիրոջ փորձը մեծացնում է հաղորդագրությունները մեկնաբանելու և մշակելու նրա ընդունակությունը: Տեսության մեջ առանձնացնում են փորձի չորս հիմնական ոլորտներ, որոնք ազդում են ալիքների ըմբռնման վրա՝ փորձ ալիքի հետ, փորձ հաղորդակցման կողմի հետ, փորձ քննարկման թեմայի հետ, փորձ կազմակերպչական համատեքստի հետ [23]:

Հիմնվելով հաղորդակցման հոգեբանական տեսությունների վրա, դեկավարը կարող է ձևավորել ավելի արդյունավետ թիմեր, բարելավել հոգեբանական մթնոլորտը կոլեկտիվում: Հաղորդակցական հոգեբանական տեսությունները արդյունավետ կառավարման անբաժանելի մաս են, քանի որ հարստացնում են մարդկանց միջև փոխգործողությունների ըմբռնումը ու նպաստում ներդաշնակ ու արդյունավետ աշխատանքային հարաբերություններին:

2. Լիդերություն: Լիդերության հոգեբանական տեսությունները մեծ դեր են խաղում կառավարման մեջ և դասակարգվում են ըստ տարբեր չափորոշիչների ու մոտեցումների: Ներկայացնենք դրանցից մի քանիսի համառոտ վերլուծությունը, դրանց հեղինակներին ու հիմնական գաղափարները:

«Հատկանիշների» տեսությունը (Trait Theory), որում Գ. Օլպորտը և Ռ. Մթոգդիլը լիդերության հատկանիշների տեսությունը ներկայացնում են լիդերության ճանապարհին որոշակի անձնային հատկանիշների ու որակների կարևորությունը: Այդ հատկանիշներն

են՝ վճռականությունը, ինքնավստահությունը, ազնվությունը, հաղորդակցվելու ունակությունը և այլն: Հեղինակները նշում էին, որ այդ հատկանիշները կարող են լինել բնածին կամ զարգանալ կյանքի ընթացքում [51]:

Վարքաբանական տեսության (Behavioral Theory) հեղինակներ Կ. Լևինը և Ռ. Լայքթերը ուշադրությունը կենտրոնացնում են լիդերի վարքի վրա, այլ ոչ թե անձնային հատկանիշներին: Տեսության համաձայն, արդյունավետ լիդերությունը կանխորոշվում է ենթակաների հետ լիդերի փոխգործողության եղանակով: Առանձնացվում են նման փոխգործողության երկու հիմնական ոճեր՝ խնդիրներին կողմնորոշված և հարաբերություններին կողմնորոշված [37]:

Լիդերության իրադրային տեսության (Situational Theory) հեղինակներ Փ. Հերսին և Զ. Բլանչարդն այն կարծիքին են, որ գոյություն չունի լիդերության միակ ոճ, որն արդյունավետ կլինի բոլոր իրադրություններում: Լիդերներն իրենց ոճը պետք է հարմարեցնեն կախված ենթակաների հատկությունից ու պատրաստականությունից, նաև իրադրության յուրահատկությունից [29]:

Փոխակերպող լիդերության տեսության հեղինակներ (Transformational Leadership Theory) Զ. ՄաքԳրեգորի և Բ. Բասսի կարծիքով փոխակերպող լիդերները մոտիվացնում և ներշնչում են աշխատակիցներին բարձր նպատակներ նվաճելուն ու անձնային աճին: Այդ տեսակի լիդերները ձևավորում են ապագայի տեսլական ու իրենց հետևորդներին խթանում այդ տեսլականին հասնելուն [12]:

Լիդերության խարիզմատիկ տեսության (Charismatic Leadership Theory) հիմնադիր Մ. Վեբերը համարում էր, որ խարիզմատիկ լիդերությունը հիմնված է անձնական գրավչության, ձգողականության և սեփական խարիզմայի հաշվին ենթականերին ներշնչելու ու նրանց վրա ազդելու ընդունակության վրա: Նման լիդերները հաճախ ըմբռնվում են որպես հերոսներ կամ բացառիկ անհատներ [53]:

Ծառայող լիդերության տեսության (Servant Leadership Theory) հեղինակ Ռ. Գրինիֆը ենթադրում է, որ լիդերն առաջին հերթին ծառայում է իր ենթականերին՝ օգնելով նրանց զարգանալ և հասնել հաջողության: Նման մոտեցումն ուշադրությունը կենտրոնացնում է ապրումակցման, հոգատարության և աջակցության վրա [26]:

Լիդերության վերաբերող ժամանակակից մոտեցումները հաճախ ներառում են տարբեր տեսությունների տարրեր՝ ընդունելով և՛ անձնային հատկանիշների, և՛ իրադրային գործոնների կարևորությունը: Արդյունավետ կառավարման համար շատ կարևոր է լիդերության ոճը կոնկրետ պայմաններին ու խնդիրներին հարմարեցնելու կարողությունը:

3. Նպատակադրում և պլանավորում: Նպատակադրումը և պլանավորումը անձնային և մասնագիտական զարգացման կարևոր գործընթացներ են: Հոգեբանական համատեքստում այդ գործընթացները կարևոր դեր են խաղում հաջողության և բարեկեցության հասնելու մեջ: Հստակ, հասանելի նպատակներ առաջադրելու և դրանց հասնելու ուղիները պլանավորելու ղեկավարի ընդունակությունը կառավարման կարևոր կողմն է: Նպատակները պետք է լինեն կոնկրետ, չափելի, հասանելի, համապատասխանող և ժամանակի մեջ սահմանափակ (SMART): SMART-նպատակները (Specific, Measurable, Achievable, Relevant, Time-bound) օգնում են հստակ ձևակերպել խնդիրները, ինչը մեծացնում է դրանց հասնելու հավանականությունը [39]: Իրենց հողվածում հեղինակները վերլուծում են նպատակադրումը և նրա գործնական նշանակությունը, դիտարկում արդյունավետ նպատակների հիմնական բաղադրիչները՝ նրանց հստակությունը, բարդությունը և նպատակների ընդունումը: Այստեղ քննարկվում են նաև մոտիվացիոն կողմերը և նպատակներին հասնելու հետադարձ կապի ազդեցությունը:

Նպատակները պետք է լինեն բավականին բարդ զարգացումը խթանելու համար և ոչ շատ ծանր՝ դեմոտիվացիայից խուսափելու համար [11, 33-52]: Ա. Բանդուրան իր այդ աշխատության մեջ ուսումնասիրում է ինքնավստահության դերը նպատակադրման և պլանա-

վորման գործընթացում: Նա քննարկում է, թե ինչպես է սեփական ընդունակությունների նկատմամբ վստահությունն ազդում նպատակների ընտրության, դրանց հասնելու համառության և անհաջողություններին հակազդման վրա: Կոնկրետ և դժվար հասանելի նպատակները նպաստում են ավելի մեծ արտադրողականության՝ անորոշ և հեշտությամբ հասանելի նպատակների համեմատությամբ [40]:

Կ. Մ. Շելդոնը և Ա. Ջ. Էլիոտը համեմատում են նպատակադրման ինքնուրույն և վերահսկվող մոտիվները և դրանց ազդեցությունը գործադրած ջանքերի և նպատակին հասնելու վրա: Հեղինակները հանգում են այն եզրակացության, որ ներքին մոտիվներով պայմանավորված ինքնուրույն նպատակներն ավելի արդյունավետ են ու հանգեցնում են առավել մեծ բավարարվածության [47]:

Ե. Լ. Դեսին և Ռ. Մ. Ռայանը ուսումնասիրել են, թե անձի հիմնական հոգեբանական պահանջմունքների (ինքնուրույնություն, կոմպետենտություն, կապակցվածություն) բավարարումը ինչպես է ազդում նպատակադրման ու նպատակներին հասնելու վրա: Նրանք պնդում են, որ նպատակների մոտիվների ընկալումը նպաստում է առավել արդյունավետ պլանավորման ու իրագործման [17]:

Պլանավորման գործընթացի հոգեբանական կողմի առավելությունը այն է, որ այն օգնում է կառուցակարգել գործունեությունը և կառավարել ժամանակը, ինչը նվազեցնում է սթրեսի մակարդակը և մեծացնում արդյունավետությունը [10]: Գործողությունների հստակ պլանն օգնում է խուսափել պրոկրաստինացիայից և պահպանում մոտիվացիայի բարձր մակարդակը [50]:

Պ. Մ. Գոլվիցերը քննարկում է մտադրությանների իրագործման հայեցակարգը, որը մարդկանց օգնում է պլանավորել կոնկրետ գործողությունները սեփական նպատակներին հասնելու համար: Նա ուշադրություն է դարձնում պարզ պլանների կարևորության և խնդիրների կատարման արդյունավետության վրա դրանց ազդեցությանը [25]:

Գրականության մեջ հանդիպում ենք, որ պլանավորման գործընթացի մեջ հանդիպող հիմնական հոգեբանական խոչընդոտներն են անհաջողության վախը և պերֆեկցիոնիզմը [27], ցածր ինքնագնահատականը և սեփական ուժերի նկատմամբ վստահության պակասը կարող են առաջացնել խուսափում պլանավորումից կամ ընդհակառակը՝ չափից ավելի պլանավորման հակվածության [11]:

Նպատակադրման ու պլանավորման գործընթացներում կարևոր են հետևյալ հոգեբանական ասպեկտները՝ նպատակների հստակություն և բարդություն, հետադարձ կապ, իրագործման մտադրություններ, ինքնարդյունավետություն, ինքնուրույն մոտիվների առկայություն, հիմնական հոգեբանական պահանջմունքների բավարարում:

4. Որոշումների ընդունում: Որոշումների ընդունման գործընթացն իր մեջ ընդգրկում է տեղեկատվության հավաքում և վերլուծություն, այլընտրանքների գնահատում և լավագույն տարբերակի ընտրություն: Հոգեբանական ասպեկտն այստեղ ընդունված որոշումների համար պատասխանատվության հետ կապված անորոշության և սթրեսային վիճակի հաղթահարման կարողության մեջ է: Որոշումների ընդունման հոգեբանական կողմն իր մեջ առհասարակ ընդգրկում է հույզերի, ինտուիցիայի և ըմբռման դերի դիտարկումը կառավարչական որոշումների ընդունման մեջ: Որոշումների ընդունումը կառավարման մեջ կապված է մի շարք հոգեբանական գործընթացների հետ, որոնք ազդում են այլընտրանքի ընտրության, ռիսկերի գնահատման և ռազմավարությունների ձևավորման վրա: Շատ կարևոր է հասկանալ, որ հաճախ որոշումներն ընդունվում են ոչ միայն օբյեկտիվ տվյալների հիման վրա, այլև կառավարիչների սուբյեկտիվ ըմբռնմամբ և հուզական վիճակով:

Դ. Կանեմանը և Ա. Տվերսկին ուսումնասիրել են, թե ինչպես կարող են տարբեր կոգնիտիվ աղավաղումներ ազդել որոշման ընդունման գործընթացի վրա: Նրանց ուսումնասիրություններն ընդգրկում են դատողություններում որոշումների ընդունման ժամանակ էվրիստիկաների և սխալների վերլուծությունը: Նրանք բացահայտել են, որ մարդիկ հաճախ դի-

մում են էվրիստիկաների (կոգնիտիվ կանոն կամ պարզ ռազմավարություն, որը պարզեցնում է բարդ որոշումների ընդունումը), ինչը դատողություններում և որոշումների ընդունման մեջ կարող է հանգեցնել համակարգային սխալների: Նրանք նաև բացահայտել են մի շարք հոգեբանական խոչընդոտներ՝ պարզեցման հակում և ռիսկերի անբավարար գնահատում, որոնք կարող են աղավաղել իրականության գնահատումը և ազդել որոշումների ընդունման վրա [3]: Նրանց աշխատանքները նաև ընդգծում են, որ կոգնիտիվ աղավաղումների իմացությունը կարևոր է որոշումների ընդունման որակը բարելավելու համար:

Խմբային դինամիկան և շրջապատող մարդկանց ազդեցությունը նույնպես մեծ դեր են խաղում որոշումների ընդունման վրա: Ի. Յանտյի և Ջ. Բերոնի ուսումնասիրություններն ընդգծում են կազմակերպչական միջավայրում որոշումների ընդունման վրա սոցիալական միջավայրի և կոնֆորմության ազդեցությունը: Ի. Յանտյի և Ջ. Բերոնի աշխատանքում վերլուծվում են այն մեխանիզմները, որոնց միջոցով խմբային նորմերն ու սպասելիքները կարող են հանգեցնել կոնֆորմ վարքի և անհատական նախընտրությունների փոփոխության: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվում կազմակերպության ներսում ձևավորվող խմբերի լիդերների ազդեցության, իշխանության կառուցվածքին և սոցիալական դինամիկային [56]:

Դ. Գոուլմանը և նրա գործընկերները դիտարկում էին հույզերի և հուզական ինտելեկտի ազդեցությունը որոշումների ընդունման գործընթացի վրա: Նրանց աշխատություններն ընդգծում են ռազմավարական որոշումների ընդունման ժամանակ սեփական հույզերի կառավարման կարողության կարևորությունը: Գոուլմանի հիմնական գաղափարները և եզրակացություններն ընդգծում են, որ հուզական ինտելեկտն իր մեջ ընդգրկում է սեփական, նաև այլ մարդկանց հույզերը ճանաչելու, հասկանալու և կառավարելու կարողություն: Ռազմավարական որոշումների ընդունման ժամանակ կարևոր է ոչ միայն փաստերը և թվերը վերլուծելու կարողությունը, այլև հուզական տեսանկյունը հաշվի առնելը: Հուզական ինտելեկտը նպաստում է միջանձնային փոխգործողության, թիմային աշխատանքի և կոնֆլիկտների կառավարման արդյունավետության բարձրացմանը: Գոուլմանը նաև ուշադրություն է դարձնում նրան, որ հուզական ինտելեկտի զարգացումը նույնքան կարևոր է, որքան կոգնիտիվ ընդունակությունների զարգացումը [24]: Գոուլմանի դասական ուսումնասիրությունները և աշխատությունները հիմք հանդիսացան հուզական ինտելեկտի ոլորտում բազմաթիվ հետազոտությունների և կառավարման բնագավառում դրանց կիրառության համար:

Որոշումների ընդունումը կառավարման մեջ բարդ գործընթաց է, որն ընդգրկում է և՛ ռացիոնալ, և՛ հուզական բաղադրիչներ: Հոգեբանական ասպեկտները՝ հույզերի ազդեցությունը, կանխակալությունը և ռիսկերի գնահատման ընդունակությունը, առանցքային դեր են խաղում կառավարիչների վերջնական որոշումների ձևավորման վրա: Հույզերը կարող են և՛ դրական, և՛ բացասական ներգործություն ունենալ որոշումների ընդունման վրա՝ ազդելով իրադրության ըմբռնման և ռիսկի պատրաստականության վրա: Այդ ասպեկտների իմացությունը և կառավարումը որոշումների արդյունավետ և հիմնավորված ընդունման անհրաժեշտ պայմաններ են:

5. *Մոտիվացիա*: Աշխատակիցների մոտիվացիան արդյունավետ կառավարման առանցքային բաղադրիչներից է: Անձնակազմի աշխատանքային գործունեության մոտիվացիան անհրաժեշտ է դիտարկել որպես կազմակերպության նպատակներին հասնելու համար աշխատակիցների վրա արտաքին և ներքին գործոնների համալիր ներգործության համակարգ: Չնայած կազմակերպության ակնհայտ շահագրգռվածությանն անձնակազմի բարձր մոտիվացիայի մեջ, դա նաև անձնական նպատակներին հասնելու աշխատակիցների խթանման գործընթաց է՝ աշխատանքային գործունեության միջոցով սեփական պահանջ-մանքները բավարարելու համար: Այսպիսով, անձնակազմի մոտիվացիան ունի երկկողմանի էֆեկտ և ուղղակիորեն կապված է սոցիալական բարեկեցության մակարդակի բարձրացման հետ [7, 5]:

Կառավարման մոտիվացիոն տեսություններն ընդգրկում են մոտեցումների լայն սպեկտր և մեկնաբանում աշխատանքի խթանման և արտադրողականության բարձրացման մեխանիզմները: Ներկայացնենք դրանցից մի քանիսը:

Այսպես, Ա. Մաալուուի՝ պահանջմունքների հիերարխիայում հեղինակն առանձնացնում է պահանջմունքների հինգ մակարդակներ՝ ֆիզիոլոգիական, անվտանգության, սոցիալական, հարգանքի և ինքնիրացման: Հեղինակը պնդում էր, որ պահանջմունքները պետք է բավարարվեն հաջորդաբար՝ փուլային ձևով՝ սկսած հիմնային ֆիզիոլոգիական պահանջմունքներից [41]:

Ք. Ալդերֆեյերի ERG (Existence, Relatedness, Growth) մոտիվացիոն տեսությունը Ա. Մաալուուի պահանջմունքների հիերարխիայի տեսության զարգացման և պարզեցման հետևանք է: Նա առանձնացնում էր երեք պահանջմունքներ՝ գոյության (Existence needs), մարդկանց հետ շփվելու (Relatedness needs) և աճի ու զարգացման (Growth needs): ERG տեսության հիմնական տարբերությունը Մաալուուի մոտիվացիոն տեսությունից այն է, որ Ալդերֆեյերը համարում էր, թե պահանջմունքները կարող են բավարարվել միաժամանակ մի քանի մակարդակներում, այլ ոչ հաջորդաբար՝ ներքևից վերև: Նաև, եթե որևէ պահանջմունք չի կարող բավարարվել, մարդը կարող է վերադառնալ ավելի հիմնային պահանջմունքների բավարարման (ֆրուստրացիա-ռեգրեսիա) [9]:

Բ. Ֆ. Սկինների ուժեղացման տեսությունում հեղինակը պնդում էր, որ մարդկանց վարքը կարելի է վերահսկել դրական կամ բացասական ամրապնդման միջոցով: Ամրապնդումը կիրառվում է ցանկալի վարքի կրկնության հավանականությունը մեծացնելու համար [49]:

Դ. ՄաքԿլեյանդի պահանջմունքների տեսության համաձայն՝ մարդիկ ունեն երեք հիմնական պահանջմունքներ, որոնք մոտիվացնում են նրանց վարքը՝ հաջողության, իշխանության և մասնակցության: Մարդկանց պահանջմունքները կարելի է չափել և օգտագործել տարբեր աշխատանքային իրադրություններում նրանց վարքի կանխատեսման համար: Պահանջմունքները կարող են փոխվել ժամանակի ընթացքում փորձի և ուսուցման ազդեցությամբ [42]:

Ֆ. Հերցբերգի երկու գործոնների տեսության մեջ հեղինակը առանձնացրել է մոտիվացիոն (բավարարող) և հիգիենիկ (չբավարարող) գործոններ: Նա պնդում էր, որ մոտիվացիոն գործոնները (նվաճումներ, ճանաչում) բարձրացնում են բավարարվածությունը, իսկ հիգիենիկ գործոնները (աշխատավարձ, աշխատանքի պայմաններ) միայն կանխում են անբավարարվածությունը [31]:

Վ. Վոումի սպասելիքների տեսության համաձայն մոտիվացիան կախված է երեք գործոններից՝ սպասելիքներից, վալենտությունից (արժեքականությունից) և խթանումից: Մարդիկ մոտիվացված են, եթե հավատում են, որ իրենց ջանքերը կհանգեցնեն սպասվող արդյունքի [54]:

Ջ. Ս. Ադամսի արդարության տեսության համաձայն մարդիկ համեմատում են իրենց ջանքերն ու պարգևատրումներն ուրիշների ջանքերի և պարգևատրումների հետ: Անարդարությունն առաջացնում է դեմոտիվացիա և կարող է հանգեցնել արտադրողականության նվազման կամ կազմակերպությունից հեռանալուն, իսկ արդարությունը մոտիվացնում է ավելի բարձր արտադրողականության [8]:

Պորտեր-Լոուլերի մոտիվացիոն տեսությունը հիմնվում է երկու կարևոր բաղադրիչների վրա՝ սպասելիքների և արդարության: Պորտեր-Լոուլերի տեսությունն աշխատակիցների մոտիվացիայի գործընթացը բացատրում է հինգ առանցքային փոփոխականների միջոցով՝ ջանքեր, անձի ընդունակություններ և հատկություններ, դերի ընկալում, արդյունքներ և պարգևատրումներ: Տեսության կարևոր ասպեկտը այն է, որ պարգևատրումը հանգեցնում է բավարարվածության, որն իր հերթին ազդում է աշխատակիցների հետագա ջանքերի ու մոտիվացիայի վրա: Այս տեսությունը նաև ուշադրություն է դարձնում աշխատակիցների կող-

մից պարզևատրումների արդարության ընկալման կարևորության վրա [44]:

Է. Լոկի նպատակադրման տեսության համաձայն հստակ առաջադրված և բարդ նպատակները հանգեցնում են ավելի լավ արտադրողականության: Կարևոր բաղադրիչներն են յուրահատկությունը, նպատակների բարդությունը և հետադարձ կապը [18]:

Կառավարման մոտիվացիոն տեսություններն ընդգրկում են տարբեր մոտեցումներ կառավարչի կողմից աշխատակիցների մոտիվացիայի խթանման և կառավարման եղանակների նկատմամբ: Նրանք օգնում են հասկանալ, որ աշխատակիցների մոտիվացիան կախված է բազմազան գործոններից՝ ներքին պահանջմունքներ, արտաքին ազդակ, աշխատանքի պայման և անձնային առանձնահատկություններ: Այդ տեսություններն ընդգծում են անհատական մոտեցման և արդյունավետ աշխատանքին ու կազմակերպության նպատակներին հասնելուն նպաստող պայմանների ստեղծման կարևորությունը:

6. Արդյունքների վերահսկողություն և գնահատում: Կազմակերպության աշխատանքի արդյունքների կանոնավոր վերահսկողությունը և գնահատումը թույլ են տալիս ժամանակին շտկումներ մտցնել և բարելավել հետագա գործունեությունը: Աշխատակիցների գործունեության արդյունքների վերահսկողությունը և գնահատումը կառավարչական գործունեության անբաժանելի մասն են: Այդ գործընթացները թույլ են տալիս դեկավարին հետևել ու մշտադիտարկել աշխատակիցների գործունեության արդյունավետությունը, բացահայտել նրանց ուժեղ և թույլ կողմերը, անհրաժեշտության դեպքում շտկել նրանց աշխատանքը, նաև մոտիվացնել նրանց ավելի բարձր արդյունքների:

Սակայն բացի տեխնիկական կողմերից, անձնակազմի գործունեության վերահսկողությունը և գնահատումն ունի մի շարք կարևոր հոգեբանական ասպեկտներ, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել դեկավարի կողմից: Այդ գործընթացների իրագործման եղանակից մեծապես կախված է աշխատակիցների մոտիվացիան, վերաբերմունքն աշխատանքի նկատմամբ և կազմակերպության արդյունավետությունը:

Շատ կարևոր է նաև, որ վերահսկողությունը, գնահատումը չստեղծեն աշխատակիցների համար սթրեսային իրադրություններ, քանի որ այն կարող է ազդել նրանց հոգեբանական վիճակի և արտադրողականության վրա:

Արդյունքների գնահատումը կարող է ազդել աշխատակիցների ինքնագնահատականի վրա՝ ձևավորելով նրանց մոտ վստահություն սեփական ուժերի նկատմամբ կամ կասկածներ [19; 39]:

Այսպիսով, անձնակազմի և կազմակերպության գործունեության արդյունքների վերահսկողության և գնահատման արդյունավետ գործընթացը դեկավարից պահանջում է ոչ միայն մասնագիտական կարողություններ, այլև կոլեկտիվի հետ փոխգործողության հոգեբանական ասպեկտների իմացություն:

Կառավարման ժամանակակից հայեցակարգերում ուշադրություն է դարձվում նաև կազմակերպչական մշակույթի և մթնոլորտի կարևորության վրա: Դրական կազմակերպչական մշակույթը նպաստում է աշխատակիցների հավատարմության, կադրերի հոսունության անվազման և համախմբված թիմի ձևավորմանը: Արժեքների և բարոյական նորմերի վրա հիմնված կազմակերպչական մշակույթն ազդում է աշխատակիցների վարքի և աշխատանքի նկատմամբ նրանց վերաբերմունքի վրա: Դրական մշակույթի ներդրումն ու պահպանումը նպաստում են աշխատանքային կոլեկտիվում բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորմանը:

Մեծ կարևորություն է հատկացվում նաև փոփոխությունների կառավարմանը: Մշտապես փոփոխվող արտաքին միջավայրի պայմաններում դեկավարները պետք է պատրաստ լինեն փոփոխությունների, կարողանան հմտորեն կառավարել կազմակերպության ներսում փոփոխվող գործընթացները: Ոչ պակաս կարևոր է նաև սթրես-մենեջմենտ ժամանակակից աշխատանքային միջավայրի պայմաններում, որտեղ ներկայացվող պահանջները և աշխատանքային ռիթմը կարող են հանգեցնել մասնագիտական այրման: Այդ պատճառով ներկա

պայմաններում շատ կարևոր են հոգեկան առողջության պահպանման ծրագրերի ներդրումը և անհրաժեշտ աջակցության ցուցաբերումը:

Կառավարման հոգեբանական ասպեկտներն իրենց մեջ են ընդգրկում են նաև աշխատակիցների մոտ ինքնակազմակերպման և ինքնակարգավորման կարողությունների զարգացում: Աշխատակիցները պետք է կարողանան օպտիմալ կառավարել ժամանակը և առաջադրված խնդիրներին տան լուծում, պահպանեն մոտիվացիան և արդյունավետ աշխատանքի սկզբունքները նույնիսկ աշխատանքային սթրեսի պայմաններում:

Այսպիսով, կառավարման ժամանակակից հայեցակարգերի և գործառնությունների հոգեբանական ասպեկտների տեսական վերլուծության արդյունքում հանգեցինք այն եզրակացության, որ դրանք իրենց մեջ ընդգրկում են հիմնարար հոգեբանական ասպեկտներ, որոնք մեծ դեր են խաղում արդյունավետ կառավարման և կառավարչական գործառնությունների իրագործման մեջ: Անհրաժեշտ է ընդունել մարդկային գործունի կարևորությունը կառավարման գործընթացում: Մարդիկ կազմակերպության հիմնական ռեսուրսն են, և նրանց հոգեվիճակներն ու հոգեբանական պատրաստվածությունն ուղղակիորեն ազդում են արտադրողականության և գործունեության արդյունավետության վրա:

Եզրակացություն

Կառավարման գործընթացի հոգեբանական ասպեկտների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հոգեբանական գործոնները էական ազդեցություն ունեն կառավարչական գործունեության արդյունավետության վրա, ինչպես նաև հնարավոր դարձավ հասկանալ կառավարման գործընթացի տարբեր կողմերը: Այսպես՝

1. Հոգեբանական գործոնները, ինչպես մոտիվացիան, հույզերի կառավարումը և փոխգործակցությունը, մեծ ազդեցություն ունեն կառավարման գործընթացների վրա: Հոգեբանական գործոնների ընկալումը և կառավարումը թույլ են տալիս բարելավել կազմակերպություններում գործունեության արդյունավետությունը:

2. Կառավարման հայեցակարգերի վերլուծությունը, ներառյալ համակարգային, իրադրային, գործառնության և վիճակագրական մոտեցումները, ցույց տվեցին, որ կառավարման գործընթացում հոգեբանական ասպեկտների ընդգրկումը էական նշանակություն ունի գործունեության արդյունավետության բարձրացման համար:

3. Կազմակերպության առաջնորդության և խմբային դինամիկայի հոգեբանական բնութագրերը մեծ ազդեցություն ունեն աշխատակիցների մոտիվացիայի և կազմակերպչական մշակույթի վրա: Նշված սոցիալ-հոգեբանական գործոնների վրա հիմնված մոտիվացիայի և մշակույթային մոտեցումների կիրառումը նպաստում է կազմակերպության աշխատանքային նպատակների իրագործմանը:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-236>

Գրականություն

1. Володько В.Ф. Психология управления: учебно-методическое пособие: в 2 т., Минск: БНТУ, 2012, т. 1: Психология объекта и субъекта управления, - 428 с.
2. Герчикова И.Н. Менеджмент. – М.: Юнити, 2006, - 499 с.
3. Канеман Д., Словик П., Тверски А.. Принятие решений в неопределенности: Правила и предубеждения /Пер. с англ. Изд-во Институт прикладной психологии «Гуманитарный Центр», 2005, - 192 с.
4. Маслоу А. Мотивация и личность. 3-е изд. /Пер. с англ. Санкт Петербург, 2019, - 400 с.
5. Мескон М., Альберт М., Хедоури Ф. Основы менеджмента. М.: Дело, 1998, - 800 с.
6. Гладышев А.Г., Иванов В.Н., Патрушев В.И. Основы социального управления: Учебное пособие / Под ред. В.Н. Иванова, М.: Высш. шк., 2001, - 271 с.

7. Токарева Ю.А. Мотивация трудовой деятельности персонала: комплексный подход: монография, 2021, – 216 с.
8. Adams J.S. Inequity in Social Exchange/ L. Berkowitz (Ed.), *Advances in Experimental Social Psychology* (Vol. 2). New York: Academic Press, 1965, pp. 267-299.
9. Alderfer C.P. An empirical test of a new theory of human needs. *Organizational Behavior and Human Performance*, 4(2), 1969, pp.142-175.
10. Allen D. *Getting Things Done: The Art of Stress-Free Productivity*. Penguin Books, 2001.
11. Bandura A. *Self-efficacy: The Exercise of Control*. 1997.
12. Bass B. *Leadership and Performance Beyond Expectations*. New York: Free Press, 1985.
13. Berger P. & Luckmann T. *The Social Construction of Reality: A Treatise in the Sociology of Knowledge*. Anchor Books, 1966.
14. Berne E. *Games People Play: The Psychology of Human Relationships*. New York: Grove Press, 1964.
15. Daft R.L. & Lengel R. Organizational information requirements, media richness and structural design. *Management Science*, 32(5), pp. 554-571.
16. Deci E.L. & Ryan R.M. *Intrinsic Motivation and Self-Determination in Human Behavior*. New York: Plenum, 1985.
17. Deci E.L. & Ryan R.M. The "What" and "Why" of Goal Pursuits: Human Needs and the Self-Determination of Behavior. *Psychological Inquiry*, 2000, pp 227-268.
18. Deming W.E. *Out of the Crisis*. Cambridge, MA: MIT Press, 1986.
19. Dessler G. *Human Resource Management*. Pearson Education, 2019.
20. Fayol, H. *General and Industrial Management*. Pitman Publishing, 1949.
21. Festinger L. *A Theory of Cognitive Dissonance*. Stanford, CA: Stanford University Press, 1957.
22. Fiedler F.E. *A Theory of Leadership Effectiveness*. McGraw-Hill, 1967.
23. Carlson J.R., & Zmud R.W. Channel expansion theory and the experiential nature of media richness perceptions. *Academy of Management Journal*, 1999, pp. 153-170.
24. Goleman D. *Emotional intelligence: Why it can matter more than IQ*. Bantam Books, 1995.
25. Gollwitzer P.M. Implementation intentions: Strong effects of simple plans. *American Psychologist*, 1999, pp. 493-503.
26. Greenleaf R.K. *Servant Leadership: A Journey into the Nature of Legitimate Power and Greatness*. New York: Paulist Press, 1977.
27. Flett G.L., & Hewitt P.L. *Perfectionism: Theory, Research, and Treatment*. American Psychological Association, 2002.
28. Hackman J.R., Oldham G.R. Motivation through the Design of Work: Test of a Theory. *Organizational Behavior and Human Performance*, 1976, pp. 250-279.
29. Hersey P. & Blanchard K.H. Life cycle theory of leadership. *Training and Development Journal*, 1969, pp. 26-34.
30. Hersey P., Blanchard K.H. *Management of Organizational Behavior: Utilizing Human Resources*. Prentice Hall, 1977.
31. Herzberg F., Mausner B., & Snyderman B. B. *The Motivation to Work*. John Wiley & Sons, 1959.
32. House R.J., Mitchell T.R. Path-Goal Theory of Leadership. *Journal of Contemporary Business*, 1974, pp. 81-97.
33. Ishikawa K. *What is Total Quality Control? The Japanese Way*. Englewood Cliffs, NJ: Prentice Hall, 1985.
34. Juran J.M. *Juran on Quality by Design: The New Steps for Planning Quality into Goods and Services*. New York: Free Press, 1992.

35. Kotter J.P. *Leading Change*. Harvard Business Review Press, 1996.
36. Liker J.K. *The Toyota Way: 14 Management Principles from the World's Greatest Manufacturer*. New York: McGraw-Hill, 2004.
37. Likert R. *New Patterns of Management*. New York: McGraw-Hill, 1961.
38. Locke E.A. Toward a theory of task motivation and incentives. *Organizational Behavior and Human Performance* 1968, pp. 157-189.
39. Locke E.A., & Latham G.P. Building a Practically Useful Theory of Goal Setting and Task Motivation: A 35-Year Odyssey. *American Psychologist*, 2002, 705 p.
40. Locke E.A., & Latham G.P. New Directions in Goal-Setting Theory. *Current Directions in Psychological Science*, 2006, pp. 265-268.
41. Maslow A.H. A Theory of Human Motivation. *Psychological Review*, 1943, pp. 370-396.
42. McClelland, D.C. *The Achieving Society*. Princeton, NJ: Van Nostrand, 1961.
43. Mitchell, Joseph M. The Information Barrier Theory: Analyzing and Managing Information Flow in Organizations. *Journal of Organizational Behavior*, vol. 28, no. 5, 2007, pp. 623-642.
44. Porter L.W., & Lawler E.E. *Managerial Attitudes and Performance*. Homewood, IL: Richard D. Irwin, 1968.
45. Robbins S.P., & Judge T.A. *Organizational Behavior*. Pearson Education, 2017.
46. Senge P.M. *The Fifth Discipline: The Art & Practice of The Learning Organization*. New York: Doubleday, 1990.
47. Sheldon K.M., & Elliot A.J. Not all personal goals are personal. *Personality and Social Psychology Bulletin*, 1998, pp. 546-557.
48. Shewhart W.A. *Economic Control of Quality of Manufactured Product*. New York: D. Van Nostrand Company, 1931.
49. Skinner B.F.. *Science and Human Behavior*. New York: Macmillan, 1953.
50. Steel P. The Nature of Procrastination: A Meta-Analytic and Theoretical Review of Quintessential Self-Regulatory Failure. *Psychological Bulletin*, 2007, pp. 65-94.
51. Stogdill R.M. Personal factors associated with leadership: A survey of the literature. *Journal of Psychology*, 1948, pp. 35-71.
52. Tajfel H., & Turner J.C. *An integrative theory of intergroup conflict*. Monterey, CA: Brooks/Cole, 1979, pp. 33-47.
53. Weber M. *The Theory of Social and Economic Organization*. New York: Oxford University Press, 1947.
54. Vroom V.H. *Work and Motivation*. New York: Wiley, 1964.
55. Vroom V.H., & Yetton P.W. *Leadership and Decision-Making*. University of Pittsburgh Press, 1973.
56. Yano I., & Baron J. Social Influence in Organizations. *Handbook of Social Psychology* (5th ed., Vol. 2), 2018, pp. 1293-1331.
57. Yukl G. *Leadership in Organizations*. Pearson Education, 2013.

Психологические аспекты управленческого процесса: концептуальные подходы

Лачинян Лилит

Резюме

Ключевые слова: управление, принятие решений, мотивация, коммуникация, лидерство, эмоциональный интеллект, организационное поведение

В статье рассматриваются и анализируются психологические особенности управленческого процесса и их влияние на эффективность управленческой деятельности. В рамках исследования были проанализированы психологические факторы, влияющие на управленческие процессы, такие как мотивация, управление эмоциями и взаимодействие. Также проанализированы как психологические концепции управления, так и управленческие теории в контексте психологических аспектов.

В результате исследования определены психологические характеристики лидерства и групповой динамики в организации. Основные результаты теоретического исследования показали, что психологические факторы имеют важное значение для повышения эффективности управленческой деятельности. Анализ концепций управления выявил, что системный, ситуационный, функциональный и статистический подходы могут быть интегрированы в управленческий процесс, обеспечивая его эффективность.

Психологические аспекты управления включают способности сотрудников к самоорганизации и саморегуляции. Сотрудники должны уметь оптимально управлять временем и решением поставленных задач, сохраняя мотивацию и производительность труда даже в условиях стресса.

Теоретический анализ психологических аспектов современных управленческих концепций и функций позволил прийти к выводу, что они раскрывают множество психологических аспектов, которые играют важную роль в эффективном управлении и реализации управленческих функций. Таким образом, в центре управленческой деятельности находится человек со своими личностными особенностями, психоэмоциональными состояниями, влияющими на производительность труда и эффективность деятельности.

Psychological Aspects of the Management Process: Conceptual Approaches

Lachinyan Lilit

Summary

Key words: *management, decision-making, motivation, communication, leadership, emotional intelligence, organizational behavior*

The article examines the psychological dimensions of the management process and their influence on the effectiveness of managerial activities. It analyzes key psychological factors that shape management processes, such as motivation, emotion regulation, and interpersonal interaction. Additionally, the article explores both psychological perspectives on managerial activities and foundational theories in management psychology.

As a result of the study, psychological characteristics of leadership and group dynamics in the organization were determined. The findings of this article underscore the crucial role of psychological factors in enhancing managerial effectiveness. An analysis of management principles reveals that integrating systemic, situational, functional, and statistical approaches into the management process can significantly improve its efficiency.

The psychological aspects of management include employees' abilities in self-organization, self-regulation, work motivation, and sustained productivity, even under stressful situations. At the core of management activities is the individual, whose personal traits, mental state, and psychological processes significantly influence workplace productivity and overall effectiveness.

By conducting a theoretical analysis of the psychological aspects embedded in modern management principles and functions, the article identifies a range of psychological factors and personal features that are instrumental in effective management and successful execution of managerial functions.

Ներկայացվել է 04. 01. 2025 թ.

Գրախոսվել է 10. 01. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 05. 06. 2025 թ.

**Կառավարման գործընթացի սոցիալ-հոգեբանական
մեխանիզմները և մեթոդները**

**Լաչինյան Լիլիթ,
Մարգարյան Լևոն**

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-251>

Հանգուցային բառեր. կառավարչական գործունեություն, միջանձնային փոխազդեցություն, փոխգործողություն, աշխատակիցների մոտիվացիա, կոնֆլիկտների կառավարում, խմբային դինամիկա

Նախաբան

Հետազոտության նպատակն է ուսումնասիրել կառավարման գործընթացի սոցիալ-հոգեբանական մեխանիզմներն ու մեթոդները, ինչպես նաև դրանց տիպաբանությունը և դասակարգումը՝ ի նպաստ կառավարչական գործունեության արդյունավետության բարձրացման:

Հետազոտության խնդիրներն են.

1. Սոցիալ-հոգեբանական մեխանիզմների բացահայտում. ուսումնասիրել այն գործընթացներն ու գործիքները, որոնք ապահովում են կազմակերպություններում աշխատակիցների վարքի կառավարումը:

2. Մեթոդների վերլուծություն. վերհանել կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդների առանձնահատկությունները և գործնական կիրառման ուղիները:

3. Տեսական և գործնական կապերի ուսումնասիրություն. հետազոտել կառավարչական գործունեության մեխանիզմների և մեթոդների փոխազդեցությունն ու դրանց ազդեցությունը կառավարման ընդհանուր արդյունավետության վրա:

4. Դասակարգման մշակում՝ մշակել սոցիալ-հոգեբանական մեխանիզմների և մեթոդների տիպաբանություն՝ հիմնված կառավարման ոլորտի, մակարդակի և ներգործության բնույթի վրա:

Հետազոտության նորույթը կառավարման սոցիալ-հոգեբանական մեխանիզմների և մեթոդների բազմակողմանի ուսումնասիրության մեջ է՝ ներառելով դրանց կիրառման յուրահատկությունները կազմակերպություններում:

Հետազոտության արդիականությունը. այսօր կազմակերպություններում սոցիալ-հոգեբանական մեխանիզմների արդյունավետ կիրառումն առանցքային է՝ պայմանավորված խմբային դինամիկայի, մարդկային ռեսուրսների կառավարման և սոցիալական փոխգործողությունների աճով: Թեմայի ուսումնասիրությունն արդիական է՝ կազմակերպությունների մրցակցային միջավայրում փոփոխվող պահանջների և բարդ խնդիրների լուծման անհրաժեշտության պայմաններում:

Հետազոտության տեսական նշանակությունը այն է, որ այն լրացնում է սոցիալ-հոգեբանական մեխանիզմների և մեթոդների տեսական հիմքը՝ նոր մոտեցումներով և դասակարգման չափորոշիչներով: Այն նպաստում է գիտական աշխարհում քննարկվող հարցերի հստակեցմանը և նոր գաղափարների ձևավորմանը կառավարման ոլորտում:

Հետազոտության գործնական նշանակությունը. սոցիալ-հոգեբանական մեխանիզմների և մեթոդների վերլուծությունը հնարավորություն է տալիս մշակելու ղեկավարների և կազմակերպությունների համար կիրառելի լուծումներ, որոնք կբարելավեն աշխատակիցների մոտիվացիան և համախմբվածությունը, կոլեկտիվի մթնոլորտը: Այս մեթոդները կարող են դառնալ հուսալի գործիքակազմ արդյունավետ կառավարման կառուցման համար:

Հետազոտությունն իր տեսական և գործնական մոտեցումներով ուղղված է լավարկելու հատկապես կառավարման հոգեբանության կիրառական ոլորտի գործունեությունը:

Հիմնական բովանդակություն

Կառավարման գործընթացը համալիր գործունեություն է, որն իր մեջ ընդգրկում է բազմաթիվ ասպեկտներ և մեխանիզմներ՝ ապահովելով կազմակերպությունների և նրանց ստորաբաժանումների արդյունավետ գործառնությունը: Սոցիալ-հոգեբանական մեխանիզմները կարևոր դեր են խաղում այդ գործընթացում, քանի որ կանխորոշում են փոխգործողությունը մարդկանց միջև, աշխատանքում կոլեկտիվ գիտակցության ձևավորումը և որոշումների ընդունումը:

Սոցիալ-հոգեբանական տեսանկյունից կառավարումը յուրահատուկ գործունեություն է: Այն ուղղված է դեպի մարդը, ազդեցությունն այլ մարդկանց, փոխազդեցությունը: Այսպիսով, կառավարումը միջանձնային փոխազդեցության յուրահատուկ ձև է [1, 102]:

Ա. Վ. Կարպովը նշում է, որ կառավարչական գործունեության համադրական բնույթը կանխորոշում է ոչ միայն նրա պատկանելությունը գործունեության առանձնահատուկ տեսակին, այլև պայմանավորում նրա մոտ մի շարք հիմնական հոգեբանական առանձնահատկություններ [9, 43]:

Կառավարման սոցիալ-հոգեբանական մեխանիզմներն իրենց մեջ ընդգրկում են տարբեր մեթոդներ և հնարքներ, որոնք ուղղված են կազմակերպության մեջ մարդկանց վարքի և գործունեության կառավարմանը, մասնավորապես մարդկանց կոլեկտիվ վարքի հոգեբանության ճանաչողությանը, ինչը թույլ է տալիս ղեկավարներին մոտիվացնել աշխատակիցներին, կառավարել կոնֆլիկտները և ձևավորել բարենպաստ սոցիալ-հոգեբանական մթնոլորտ:

Կառավարչական գործունեությունն ըստ էության ենթադրում է ներգործություն այլ մարդկանց վրա՝ նրանց համատեղ գործունեությունը կազմակերպելու նպատակով: Կառավարչական գործունեության յուրահատկությունը այն է, որ նրա առարկան, ներգործության օբյեկտը մարդիկ են: Բնականաբար, նրանք բնութագրվում են բարդության որակապես այլ մակարդակով, քան գործունեության բազմաթիվ այլ տեսակներում, օրինակ՝ կատարողական, որտեղ գործ ունեն «անշունչ» օբյեկտների հետ: Դրա հետ կապված անհրաժեշտ է նշել կառավարչական գործունեության հետաքրքիր առանձնահատկություն. նրանում աշխատանքի սուբյեկտը և օբյեկտը ոչ միայն նման են իրենց բարդ կազմակերպվածությամբ, այլև նույնական են հոգեբանական առանձնահատկություններով: Բացի դրանից՝ ղեկավարը միաժամանակ գործ ունի աշխատակիցների հետ, որոնց միջև ձևավորվող դինամիկ սոցիալ-հոգեբանական հարաբերությունները հանգեցնում են կառավարչական գործունեության ավելի բարդ սուբյեկտ-սուբյեկտային հարաբերությունների ձևավորմանը [9, 43-44]:

Ինչպես տեսնում ենք, կառավարչական գործունեությունը ենթադրում է փոխգործողություն սուբյեկտների հետ, որոնց բնորոշ կամքը, գիտակցության առանձնահատկությունները, հուզական ոլորտը կառավարումը դարձնում են գործունեության բարդ և հատուկ պահանջներ ներկայացնող բնագավառ:

Կառավարչական հարաբերություններում ղեկավարը մշտապես գտնվում է սոցիալ-հոգեբանական փոխազդեցության մեջ: Այդ հարաբերությունները ձևավորում են կառավարման մեխանիզմները և ղեկավարից պահանջում վերահսկել խմբային դինամիկան, աշխատակազմի տրամադրությունը, միջանձնային կապերը և կոնֆլիկտների կառավարումը:

Սակայն, մինչ կառավարման գործընթացի սոցիալ-հոգեբանական մեխանիզմների մանրամասն դիտարկմանն անցնելը, անհրաժեշտ ենք համարում համառոտ ներկայացնել, թե ինչ են իրենցից ներկայացնում սոցիալ-հոգեբանական մեխանիզմներն ընդհանրապես:

Հոգեբանական գիտության մեջ առկա են մի շարք մոտեցումներ «սոցիալ-հոգեբանական մեխանիզմ» հասկացության վերաբերյալ:

Գոյություն ունի սկզբունքային տարբերություն սոցիալ-հոգեբանական մեխանիզմի և հոգեբանական մեխանիզմի միջև: Վ. Ն. Վորոնինի, Մ. Վ. Իոնցևայի կարծիքով, սոցիալ-հոգեբանական մեխանիզմները հանդես են գալիս որպես հանրության մեջ յուրօրինակ հատուկ

կազմակերպված պայմաններ, որոնց իրագործման ընթացքում կատարվում է նպատակա- ուղղված ներգործություն մարդու վարքի վրա: Տվյալ գործընթացի արդյունքն է խմբում անձի կամ ընդհանրապես խմբային վարքի արդյունավետ մոդելների ձևավորումը [4]: Հեղինակ- ները պնդում են ոչ թե առանձին անհատի մասնակցության կարևորությունն աշխատան- քում, այլ անհատի փոխգործողությունը հանրության մեջ: Դրանում է սոցիալ-հոգեբանա- կան մեխանիզմի տարբերությունը հոգեբանական մեխանիզմից:

Վ. Գ. Կրիսկոն տալիս է «սոցիալ-հոգեբանական» մեխանիզմ հասկացության հետևյալ սահմանումը. «... փոխակերպումներ են, որոնց միջոցով դրսևորվում են գործառնության օրինաչափությունները, իրագործվում սոցիալ-հոգեբանական համակարգայնությունը»: Փոխակերպում ասելով հեղինակը հասկանում է անհատի վարքի օրինաչափությունների փոփոխությունը՝ կախված այն նորմերից և կանոններից, որոնք բնորոշ են տվյալ խմբին, սո- ցիալական շերտին կամ հասարակությանը, որոնք առանձնահատուկ ձևով կապված են գործունեության որոշակի տեսակների հետ: Հեղինակը համարում է, որ սոցիալական հոգե- բանության մեջ մեխանիզմներ ասելով հասկանում են վարակումը, ընդօրինակումը, խմբա- յին ճնշումը, նույնականացումը, նաև սոցիալական դիրքորոշումների գործառնության յու- րահատկությունը [12]:

Ինչպես գիտենք, խումբը էական ազդեցություն է գործում անհատի հոգեբանության և վարքի վրա: Խմբի հոգեբանական ազդեցությամբ առաջացող փոփոխությունների մի մասն անհետանում է այն պահից, երբ մարդը դուրս է գալիս խմբի ներգործությունից, իսկ որոշակի փոփոխություններ շարունակում են գոյություն ունենալ թողնելով նկատելի հետք անձի վրա՝ որոշակի պայմաններում վերափոխվելով անձնային հատկանիշների: Կարելի է որոշակի վերապահումներով ընդունել այն փաստը, որ մարդը բազմաթիվ խմբային մնա- ցորդային ազդեցությունների կրողն է (բացառությամբ գենետիկորեն և ֆիզիոլոգիապես պայմանավորված առանձնահատկություններից): Սոցիալական մեծ և փոքր խմբերում գոր- ծունեության ազդեցությամբ պայմանավորված ձևավորվում և ամրապնդվում են վարքի և անհատական տարբեր առանձնահատկություններ [16, 573]:

Գ. Մ. Անդրեևայի կարծիքով, հիմնական սոցիալ-հոգեբանական մեխանիզմներն են՝ վարակումը, ընդօրինակումը, ներգործությունը, խմբային ճնշման երևույթը, նույնականա- ցումը, ռեֆլեքսիայի և մոտիվացիայի գործընթացները, զանգվածային ուժի մեխանիզմը, սո- ցիալական ֆապիլիտացիան, սոցիալական ազդեցությունը՝ համոզումը, ներշնչումը, զուգա- կցված դերերը [2]:

Սոցիալ-հոգեբանական մեխանիզմները թաքնված են ուղղակի դիտումից, սակայն դրանց ազդեցությունն արտահայտվում է սոցիալ-հոգեբանական երևույթներում՝ լիդերու- թյուն և ենթակայություն, խմբային համախմբավածություն, կոնֆորմություն, սոցիալական ազդեցություն, միջխմբային հարաբերություններ [12]: Այսինքն, սոցիալ-հոգեբանական մեխանիզմները հոգեկանի կայուն փոխկապակցված գործընթացներ և երևույթներ են, որոնք պայմանավորում են մարդկանց փոխգործողությունը խմբերում, նաև խմբերի ազդեցու- թյունն իր անդամների վրա:

Սոցիալ-հոգեբանական մեխանիզմների ուսումնասիրությունը կարևոր նշանակու- թյուն ունի խմբերում մարդկանց միջև փոխգործողությունը և դրա եղանակները հասկա- նալու համար: Այդ գիտելիքները օգտագործվում են տարբեր ոլորտներում գործնական խնդիրների լուծման համար, այդ թվում կառավարման գործընթացում:

Կառավարման գործընթացի սոցիալ-հոգեբանական մեխանիզմներն այդ գործընթաց- ների, գործիքների և մեթոդների հանրագումարն են, որոնց միջոցով ներգործություն է իրա- գործվում սոցիալական խմբերի և առանձին անհատների վրա, նրանց վարքը, դիրքորո- շումները, մոտիվները և արժեքները կազմակերպության կամ ընդանուր առմամբ հասա- րակության նպատակներին ու խնդիրներին համապատասխան փոփոխության ենթար- կելու նպատակով: Այդ մեխանիզմներն իրենց մեջ ընդգրկում են հաղորդակցումը, ազդե-

ցությունը, ներշնչումը, սոցիալականացումը, լիդերությունը և փոխգործողության այլ ձևերը, որոնք ուղղված են խմբի անդամների գործողությունների համակարգմանն ու կարգավորմանը [18]:

Կառավարման սոցիալ-հոգեբանական մեխանիզմներն ընդգրկում են հետևյալ գործընթացները՝ սոցիալական ըմոռում, սոցիալական փոխգործողություն, խմբային նորմեր, լիդերություն, վստահություն, սոցիալական աջակցություն և խմբային դինամիկա: Այդ մեխանիզմները կանխորոշում են կառավարչական ներգործությունների ըմբռնման և դրանց հակազդման եղանակներն անհատների և խմբերի կողմից:

Կառավարման սոցիալ-հոգեբանական մեխանիզմների տիպաբանությունն իր մեջ ընդգրկում է այդ մեխանիզմների դասակարգման տարբեր մոտեցումներ: Հիմնականներից մեկը կառավարման մեխանիզմները բաժանում է երեք խմբի՝ մոտիվացիոն, կոմունիկատիվ և կոգնիտիվ: Մոտիվացիոն մեխանիզմները կապված են աշխատակիցների խնդիրների կատարման խթանման գործընթացների հետ: Կոմունիկատիվ մեխանիզմներն ընդգրկում են կոլեկտիվի անդամների միջև փոխգործողության միջոցներն ու հնարքները: Կոգնիտիվ մեխանիզմներն ընդգրկում են կառավարչական գործունեության մեջ տեղեկատվության ըմբռնման, մշակման և կիրառության մեխանիզմները:

Կառավարման սոցիալ-հոգեբանական մեխանիզմների դասակարգումը թույլ է տալիս ավելի խորը հասկանալ դրանց կիրառության բազմազանությունը և յուրահատկությունը: Այն կարող է ընդգրկել տարբեր չափորոշիչներ՝ կառավարման մակարդակը (անհատական, խմբային, կազմակերպչական), կիրառության ոլորտը (արտադրական, սոցիալական, կրթական), նաև ներգործության բնույթը աշխատակիցների վարքի վրա (ուղղակի կամ անուղղակի):

Սոցիալ-հոգեբանական մեթոդների և մեխանիզմների միջև փոխադարձ կապը կայանում է նրանում, որ կառավարման մեթոդները հիմնվում են այդ մեխանիզմների ճանաչողության և կիրառության վրա: Օրինակ, աշխատակիցների սոտիվացիայի բարձրացման համար օգտագործվում են դրական ամրապնդման մեխանիզմները, իսկ կոնֆլիկտների հանգուցալուծման համար՝ սոցիալական փոխազդեցության և հաղորդակցման մեխանիզմները:

Անձնակազմի կառավարման բոլոր մեթոդները պայմանականորեն կարելի է բաժանել նրա կողմից կատարվող գործառնությունների՝ պլանավորման, մոտիվացիայի, վերահսկողության և կարգավորման հիման վրա: Ժամանակակից գիտական գրականության մեջ գոյություն ունի անձնակազմի կառավարման մեթոդների դասակարգում, որն իր մեջ ընդգրկում է կառավարման մեթոդների հետևյալ խմբերը՝ տնտեսական, կազմակերպչական-վարչական, սոցիալ-հոգեբանական [8]:

Մեր ուսումնասիրության շրջանակներում հատուկ հետաքրքրություն են ներկայացնում կառավարման գործընթացի սոցիալ-հոգեբանական մեթոդները, որոնց չի կարելի դիտարկել կառավարչական մյուս մեթոդներից մեկուսացած, քանի որ դրանց միջև գոյություն ունի որոշակի փոխադարձ կապ: Այդ պատճառով համառոտ կանգ առնենք դրանց հիմնական բնութագրերի վրա: Նշենք, որ կառավարման գործընթացի մեթոդներից յուրաքանչյուրն իր մեջ ընդգրկում է խրախուսանքի և պատժի առանձին հնարքը:

Կառավարման գործընթացի տնտեսական մեթոդները հիմնականում բնութագրվում են կազմակերպությունում ձևավորված տնտեսական հարաբերություններով և աշխատակազմի ֆինանսական շահերով: Կառավարման մեթոդների տվյալ խմբին ցանկացած կազմակերպության կառուցվածքում հատկացվում է առավել կարևոր դեր, քանի որ ֆինանսական միջոցները, որ ամենակարևորն են ցանկացած աշխատակցի համար, այդ պատճառով տնտեսական կայունության գործոնը բավականին ծանրակշիռ է յուրաքանչյուր մարդու կյանքում [19]: Օ. Ա. Կորգինան նշում է, որ աշխատանքի վարձատրությունը թույլ է տալիս

կազմակերպության աշխատակիցներին մոտիվացնել աշխատանքային պարտականությունների ավելի որակյալ կատարումը [11]:

Կառավարման կազմակերպչական-վարչական մեթոդների խմբի համար հիմք են ծառայում ղեկավարության ուղղակի դիրեկտիվ ցուցումները, որոնք ուղղված են կազմակերպության աշխատակազմի կողմից աշխատանքային կարգապահության ապահովմանը: Տվյալ մեթոդները հիմնված են կազմակերպության ղեկավար կազմի իշխանության և հեղինակության վրա: Կառավարման կազմակերպչական-վարչական մեթոդների էությունը կազմակերպության աշխատակազմի վրա ուղղակի ներգործության իրականացման մեջ հրամանների, կարգադրությունների, դրանց կատարման վերահսկողության, վարչական միջոցներով աշխատանքային կարգապահության պահպանման և այլնի մեջ է: Անձնակազմի կառավարման կազմակերպչական-վարչական մեթոդները հիմնվում են աշխատանքային օրենսդրության օրենսդրական-իրավական ակտերի վրա [14]: Կառավարման կազմակերպչական-վարչական մեթոդները կազմակերպության աշխատակազմի վրա ազդեցության և կառավարչական ներգործության առաջատար մեթոդներն են: Այստեղ նույնպես կարևոր գործոն է հանդիսանում հոգեբանական բաղադրիչը, քանի որ մեթոդների այս խմբի կիրառությունը պետք է հաշվի առնի կոլեկտիվի հակազդեցությունը և վերաբերմունքը դրանց նկատմամբ:

Կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդները թույլ են տալիս հաշվի առնել անձնակազմի գործունեության ակտուալ մոտիվները և պահանջմունքները, տեսնել կազմակերպության կադրային դինամիկան, ընդունել համապատասխան կառավարչական որոշումներ:

Կառավարման մեթոդների դասակարգումը ենթադրում է, որ սոցիալ-հոգեբանական մեթոդների հիմքում ընկած են երկու ոլորտների օրենքներ. հոգեբանությունն ուսումնասիրում է մարդու վարքը, նրա գործողությունների փոփոխությունը և անհատի վրա ազդող պայմանների բացահայտման եղանակները, իսկ սոցիոլոգիան ընդլայնում է անհատի մասին պատկերացումները՝ միավորելով մի քանի մարդկանց միասնական կոլեկտիվի մեջ: Ուստի, կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդները ներգործության եղանակներ են, որոնք հիմնված են սոցիալ-հոգեբանական մեխանիզմների ու գործոնների կիրառության վրա: Մարդկային ռեսուրսների արդյունավետ կառավարումը ենթադրում է և՛ սոցիոլոգիական, և՛ հոգեբանական մեթոդների իմացություն:

Ռ. Ռ. Բայտասովը նշում է. «Սոցիոլոգիական մեթոդները կարևոր դեր են խաղում անձնակազմի կառավարման մեջ, օգնում են պարզել կոլեկտիվում աշխատակիցների կարևորությունը և դերը, բացահայտել լիդերներին, աջակցել նրանց, կապել մարդկանց խթանումը արտադրության վերջնական նպատակներին, ապահովել արդյունավետ հաղորդակցում և կոնֆլիկտների լուծում:

Հետազոտության սոցիոլոգիական մեթոդները կազմում են անձնակազմի հետ աշխատանքի գործիքակազմը, դրանք ներկայացնում կադրերի ընտրության, գնահատման, բաշխման և ուսուցման համար, օգնում ընդունել հիմնավորված կառավարչական որոշումներ:

Հոգեբանական մեթոդները նույնպես կարևոր նշանակություն ունեն անձնակազմի հետ աշխատանքում, քանի որ ուղղված են առանձին աշխատակցի անձին և որպես կանոն բավականին անհատականացված են: Դրանց հիմնական առանձնահատկությունը այն է, որ ուղղված են դեպի մարդը, նրա անձը, ինտելեկտին, պատկերացումներին, վարքին՝ նպատակ ունենալով կողմնորոշելու աշխատակցի ներուժը կազմակերպության կոնկրետ խնդիրների լուծմանը» [3 80-86]:

Կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդներն իրենց մեջ ընդգրկում են կոլեկտիվի ձևավորման ու զարգացման, նրա ներսում ընթացող գործընթացների վրա ներգործությունների եղանակներ և հնարքներ: Տվյալ մեթոդները հիմնված են կոլեկտիվում գործող սոցիալ-հոգեբանական մեխանիզմների կիրառության վրա: Տվյալ կոլեկտիվի մեջ մտնում են

փոխհարաբերություններով և սոցիալական պահանջմունքներով պայմանավորված ֆորմալ և ոչ ֆորմալ խմբերը, անհատներն իրենց դերերով ու կարգավիճակներով: Կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդները հիմնականում տարբերվում են իրենց մոտիվացիոն բնութագրով, որը կանխորոշում է ներգործության ուղղությունը: Մոտիվացիայի եղանակների մեջ առանձնացնում են համոզումը, ներշնչումը, ընդօրինակումը, ներգրավումը, պարտադրումը, հարկադրումը, դրդումը և այլն: Սոցիալ-հոգեբանական մեթոդների կիրառության նպատակներն են անձի սոցիալական պահանջմունքների ապահովումը, նրա բազմակողմանի ներդաշնակ զարգացումը և դրա հիման վրա աշխատանքային ակտիվության ու կոլեկտիվում արդյունավետ գործունեության բարձրացումը [17, 51]:

Կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդների ներգործությունն ուղղված է կոլեկտիվին և առանձին անհատներին՝ կազմակերպության որոշակի նպատակներին հասնելու համար: Այդ մեթոդներն ընդգրկում են բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորման ու պահպանման, աշխատակիցների մոտիվացման, կոնֆլիկտների կառավարման, կոլեկտիվի ներսում հաղորդակցության և փոխազդեցության բարելավման:

Կառավարման գործընթացի սոցիալ-հոգեբանական մեթոդներն են կառավարչական հաղորդակցումը, խմբային քննարկումները, թիմերի ձևավորումը, հաղորդակցման և համագործակցության կարողությունների զարգացմանն ուղղված թրենինգները: Այդ մեթոդները դեկավարներին օգնում են ավելի լավ հասկանալ ենթակաների պահանջմունքները, մոտիվացիան և վարքը, ինչը նպաստում է կոլեկտիվի առավել արդյունավետ կառավարմանը:

Վ. Դ. Դորոֆեևը հետևյալ կերպ է ձևակերպում կառավարման գործընթացի սոցիալ-հոգեբանական մեթոդները. «Սոցիալ-հոգեբանական մեթոդները՝ անձնային հարաբերությունների և կապերի, սոցիալական գործընթացների վրա ազդեցության առանհատուկ եղանակների հանրագումար է, որոնք ընթանում են աշխատանքային կոլեկտիվներում: Այդ մեթոդներն ուղղված են և՛ աշխատանքային խմբին, և՛ առանձին անհատներին» [6, 90-92]:

Այս մասին Ա. Յա. Կիբանովը տալիս է հետևյալ մեկնաբանությունը. «Կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդները հիմնվում են աշխատակիցների վարքի և նրանց աշխատանքային ակտիվության բարձրացմանն ուղղված ներգործությունների վրա: Դրանք ուղղված են կոլեկտիվում սոցիալ-հոգեբանական մթնոլորտի ձևավորման, նրա անդամների միջև բարյացակամ հարաբերությունների զարգացման, ղեկավարի դերի փոփոխության, աշխատակիցների անձնային ընդունակությունների բացահայտման: Վերջին հաշվով ներգործության մեթոդները հանգեցնում են աշխատակիցների ինքնիրացման, նրանց արտադրողականության բարձրացման: Կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդները հիմնված են կառավարման սոցիալական մեխանիզմի (կոլեկտիվում փոխհարաբերությունների համակարգի, սոցիալական պահանջմունքների և այլն) կիրառության վրա: Այդ մեթոդների յուրահատկությունը աշխատանքային կոլեկտիվի կառավարման գործընթացում ոչ ֆորմալ գործոնների, անձի, խմբի, կոլեկտիվ շահերի օգտագործման գերակշռության մեջ է» [10, 88-94]:

Ե. Մ. Եգորովան համարում է, որ կառավարման գործընթացի սոցիալ-հոգեբանական մեթոդների կիրառությունը կանխորոշվում է կազմակերպության ղեկավար կազմի մասնագիտական պատրաստվածության մակարդակը անձնակազմի կառավարման ոլորտում: Նա ենթադրում է, որ անձնակազմի վրա սոցիալ-հոգեբանական ներգործության առանցքային մեթոդներ են կազմակերպության հասարակական զարգացման պլանավորման մեթոդները, համոզումը և տնտեսական մրցակցությունը [7]:

Ա. Մովսատարովայի կարծիքով, կառավարման գործընթացի սոցիալ-հոգեբանական մեթոդներն իրենց մեջ ընդգրկում են.

- սոցիալ-հոգեբանական վերլուծություն,
- սոցիալ-հոգեբանական պլանավորում,
- կոլեկտիվում ստեղծագործական մթնոլորտի ձևավորում,

- աշխատակիցների մասնակցությունը կազմակերպության կառավարման գործընթացում,
- աշխատակազմի սոցիալական և բարոյական մոտիվացիան ու խթանումը,
- աշխատակազմի մշակութային և հոգևոր պահանջմունքների բավարարում,
- կոլեկտիվում աշխատանքային խմբերի և թիմերի ձևավորում,
- կոլեկտիվում առողջ հոգեբանական մթնոլորտի ձևավորում,
- կոլեկտիվում աշխատակիցների մասնագիտական մոտիվացիայի զարգացում,
- աշխատակիցների պատասխանատվության զարգացում,
- բարոյական պատժամիջոցների ու խրախուսանքների ներմուծում [15]:

Կառավարման գործընթացի սոցիալ-հոգեբանական մեթոդները հիմնվում են կազմակերպության անձնակազմի մոտիվացիայի և բարոյական խթանման վրա: Այդ խթանները կարելի է դասակարգել հետևյալ կերպ՝ նյութական, բարոյական, անհատական, կոլեկտիվ և հասարակական: Աշխատակիցների նյութական մոտիվացիայի մեթոդները կարող են ունենալ և՛ դրական, և՛ բացասական ուղղվածություն:

Լ. Վ. Մակարովայի աշխատություններում կարելի է հանդիպել մի փոքր այլ մոտեցում անձնակազմի կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդների տեսակների և բնութագրերի վերաբերյալ [13]:

Վ. Դ. Դորոֆենը նշում է, որ կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդները անմիջական ազդեցություն են գործում անձնակազմի վրա. «Կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդները սերտորեն կապված են աշխատակիցների և կոլեկտիվի կառավարման նպատակների իրագործմանը նպաստող որակների ձևավորմանն ուղղված կառավարման դաստիարակչական մեթոդների հետ: Արտադրության մասնակիցների գիտակցության վրա ակտիվ ներգործությունը, կոլեկտիվի անդամների միջև փոխհարաբերությունների կարգավորումը, կադրերի շարունակական ուսուցումը և նրանց որակավորման բարձրացումը արտադրության արդյունքների բարձրացմանն ուղղված դրական ներգործության կարևոր կողմեր են: Այդ մեթոդների նպատակն է կոլեկտիվում դրական սոցիալ-հոգեբանական մթնոլորտի ձևավորումը, ինչի շնորհիվ առավելագույնս կարող են լուծվել դաստիարակչական, վարչական և տնտեսական խնդիրները: Այսինքն՝ կոլեկտիվի առջև դրված նպատակներին կարելի է հասնել աշխատանքի արդյունավետության և որակի կարևորագույն չափորոշիչներից մեկի՝ մարդկային գործունի օգնությամբ: Այդ հանգամանքը հաշվի առնելու կարողությունը թույլ կտա նպատակաուղղված ձևով ներգործել կոլեկտիվի վրա և վերջին հաշվով ձևավորել ընդհանուր կոլեկտիվ նպատակներ ու խնդիրներ:

Կառավարման մեջ սոցիալ-հոգեբանական մեթոդների կիրառության անհրաժեշտությունն ակնհայտ է, քանի որ դրանք թույլ են տալիս ժամանակին հաշվի առնել աշխատակիցների գործունեության մոտիվները և պահանջմունքները, նկատել կոնկրետ իրադրության փոփոխության հեռանկարները, ընդունել արդյունավետ որոշումներ» [6, 90-99]:

Կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդներն ընդգրկում են.

- աշխատանքային կոլեկտիվների ձևավորում,
- վարքի սոցիալական նորմերի հաստատում,
- սոցիալական կարգավորման համակարգի ներմուծում,
- սոցիալական խթանում,
- սոցիալական պահանջմունքների բավարարում,
- բարենպաստ սոցիալ-հոգեբանական մթնոլորտի ձևավորում և պահպանում [5, 49]:

Կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդները կապված են կառավարչական այլ մեթոդների հետ՝ բարոյական խրախուսում, սոցիալական պլանավորում, անձնական օրինակ և այլն:

Կառավարման գործընթացի սոցիալ-հոգեբանական մեթոդների օգնությամբ կատար-

վում է աշխատակազմի ընտրությունն ու հարմարման գործընթացը, կադրային ռեզերվի թեկնածուների ընտրությունը, աշխատանքային կոլեկտիվի զարգացումն ու ուսուցումը: Մոցիալ-հոգեբանական մեթոդները կարևոր նշանակություն ունեն կոլեկտիվում բարենպաստ մթնոլորտի ձևավորման և պահպանման, կոնֆլիկտային իրադրությունների և վիճելի հարցերի լուծման, անձնակազմի ու առանձին աշխատակցի հետ շփումների հաստատման մեջ:

Հոգեախտորոշիչ մեթոդիկաները կիրառվում են անձնակազմի ընտրության համար, օգնում լուծել աշխատակիցների հարմարման, մասնագիտական զարգացման, խթանման և միջանձնային հարաբերությունների խնդիրները, թույլ է տալիս բացահայտել արդյունավետ աշխատանքին խանգարող գործոնները: Մոտիվացնող և ապամոտիվացնող գործոնների ախտորոշման մեթոդիկաները կազմակերպությանն օգնում են վերլուծել աշխատանքային կոլեկտիվների հոգեբանական վիճակի և շահույթի միջև կապը, հիմք են հանդիսանում կազմակերպչական մշակույթի ձևավորմանն ուղղված գործողությունների պլանի համար:

Կառավարման գործընթացի սոցիալ-հոգեբանական մեթոդները նպաստում են կորպորատիվ արժեքների՝ հարգանքի, պատասխանատվության, օրինականության, արհեստավարժության, որակի, զարգացման և ինքնակատարելագործման, արդյունավետության, համագործակցության, անկեղծության և հեղինակության ձևավորմանը: Կորպորատիվ արժեքների հիման վրա ձևակերպվում են յուրաքանչյուր պաշտոնի համար կիրառվող կորպորատիվ կարողունակությունները:

Այսպիսով, կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդները կազմակերպության նպատակների իրագործմանը կողմնորոշված բարոյական և հոգեբանական ներգործությունն է մարդկանց վրա: Այդ մեթոդների օգնությամբ կարելի է հասնել կազմակերպության նպատակներին: Սոցիալ-հոգեբանական կառավարումը մարդկանց հոգեբանության վրա ներգործության մեջ է՝ նրանց գործողությունները կառավարման սուբյեկտի որոշումներին համապատասխան կազմակերպչական խնդիրների կատարմանն ուղղորդելու նպատակով:

Այսպիսով, կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդները և մեխանիզմները սերտորեն փոխկապակցված ու միմյանցից կախված են: Կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդները հիմնվում են մեխանիզմների իմացության վրա, իսկ մեխանիզմները կանխորոշում են, թե ինչպես են այդ մեթոդներն ըմբռնվելու և ինչպես դրանք կարող են առավել արդյունավետ իրագործվել կազմակերպչական միջավայրում:

Եզրակացություն

Կառավարման գործընթացի սոցիալ-հոգեբանական մեխանիզմներն ու մեթոդները կարևոր դեր են խաղում կազմակերպություններում գործունեության արդյունավետության ապահովման գործում: Այս մեխանիզմներն ուղղված են աշխատակիցների և խմբային վարքի, հարաբերությունների և մոտիվացիայի կառավարմանը, ինչը հնարավորություն է տալիս ձևավորել բարենպաստ աշխատանքային միջավայր, խթանել աշխատակիցների ներգրավվածությունը, բարձրացնել կազմակերպչական արդյունավետությունը:

Կառավարման գործընթացի հիմնական մեխանիզմներն ընդգրկում են սոցիալական փոխազդեցության, միջանձնային հաղորդակցության, ներշնչման, սոցիալականացման և խմբային զարգացման դինամիկայի գործընթացները: Դրանք հիմք են հանդիսանում սոցիալ-հոգեբանական մեթոդների կիրառման համար, որոնք էլ ներառում են միջանձնային հաղորդակցման, թիմային աշխատանքի, գործունեության մոտիվացիայի, ինչպես նաև կոլեկտիվի բարոյահոգեբանական մթնոլորտի ձևավորման և պահպանման միջոցներ:

Կառավարման սոցիալ-հոգեբանական մեթոդներն ու մեխանիզմները սերտ փոխկապակցված են: Մեխանիզմների իմացությունը և դրանց արդյունավետ կիրառումը հնարավորություն է տալիս մշակել հարմարեցված մեթոդներ՝ կազմակերպչական խնդիրներին առավել նպատակահարմար լուծումներ գտնելու համար: Դրանց դասակարգումն ու տիպա-

բանությունը նպաստում են մեթոդների բազմազանության և գործնական կիրառության հնարավորությունների առավել հստակ ըմբռնմանը:

Տեսագործական առաջարկություններ

1. Հետազոտական ուղղություններ

- Մշակել գործնական ուղեցույցներ, որոնք հիմնված կլինեն սոցիալ-հոգեբանական մեխանիզմների և մեթոդների կիրառման լավագույն փորձի վրա:
- Վերլուծել կոնկրետ դեպքեր (case studies), որտեղ կիրառվել են սոցիալ-հոգեբանական մեթոդներ և գնահատել դրանց արդյունավետությունը:

2. Գիրառական քայլեր

- Ներդնել հոգեբանական վարժանքներ և թրենինգներ՝ դեկավարների և աշխատակիցների համար:
- Ստեղծել աշխատանքային մոտիվացիայի և գնահատման համակարգեր, որոնք հիմնված կլինեն սոցիալ-հոգեբանական մեխանիզմների վրա:

3. Տեսական զարգացումներ

- Լրացնել դասակարգման չափանիշները՝ հաշվի առնելով նորարարական տեխնոլոգիաների ազդեցությունը կառավարման գործընթացի վրա:
- Ուսումնասիրել կառավարման մեթոդների և մեխանիզմների կիրառման տարբերություններն ըստ մշակութային և ազգային առանձնահատկությունների:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-251>

Գրականություն

1. Եղիգարյան Վ., Կառավարում, սոցիալ հոգեբանական ասպեկտ, Երևան, Դար, 2004, 208 էջ:
2. Андреева Г. М. Социальная психология: Учебник для высших учебных заведений, М.: Аспект Пресс, 2008, - 363 с.
3. Байтасов Р.Р. Управление персоналом: конспект лекций. Ростов-на-Дону: Феникс, 2014., - 351 с.
4. Воронин В. Н., Ионцева М. В., Довжик Г. В. и др. Подходы к определению социально-психологических механизмов. //Вестник Университета (Государственный университет управления). 2012, N2, с. 263-273.
5. Десслер Г. М. Управление персоналом. М.: БИНОМ, 2016, - 183 с.
6. Дорофеев В. Д., Шмелева А. Н., Шестопал Н. Ю. Менеджмент: Учеб. пособие. М.: ИНФРА-М, 2012, 440 с.
7. Егорова Е. М. Методы управления персоналом //Бюллетень медицинских интернет-конференций, 2016, т. 6. №5, 844 с.
8. Исаева Н. Ф. Методы управления персоналом: экономические, административные, социально-психологические //Международный журнал гражданского и торгового права, 2019, № 2, с. 11–18.
9. Карпов А. В. Психология менеджмента. М.: Гардарики, 2005, - 584 с.
10. Кибанов А. Я. Основы управления персоналом: Учебник, 3-е издание, перераб. и доп, М.: ИНФРА-М, 2015, - 440 с.
11. Коргина О. А. Социально-психологические технологии в управлении персоналом организации //Вестник Академии знаний, 2022, №48 (1), с. 125-131.
12. Крысько В. Г. Социальная психология. СПб., 2007. - 432 с.
13. Макарова Л. В. Особенности управления персоналом организации //Вестник Московского университета МВД России, 2019, №1, с. 242-244.

14. Мусиенко С. А. Анализ современных методов управления персоналом хозяйствующего субъекта как фактор его развития // Вестник ИМСИТ, 2021, №1 (85), с. 60-64.
15. Мухтарова А. Методы и принципы управление персоналом //Актуальные научные исследования в современном мире, 2017, №1-1 (21), - с. 17-22.
16. Немов Р. С. Психология: Учеб. для высш. пед. учеб. заведений. ВЛАДОС, кн. 1: Общие основы психологии, 2003, - 688 с.
17. Гладышев А. Г., Иванов В. Н., Патрушев В. И. и др. Основы социального управления: Учебное пособие // М.: Высш. шк., 2001, - 271 с.
18. Петренко В.В. Психология управления: Учебное пособие для вузов. М.: Академический Проект, 2006, с. 45-67.
19. Родина Н.П. Социально-психологические методы и технологии управления персоналом организации //Экономика и предпринимательство, 2020, №1 (114), с. 1129-1131.

Социально-психологические механизмы и методы управления

*Лачинян Лилит,
Саргсян Левон*

Резюме

Ключевые слова: управленческая деятельность, межличностное взаимодействие, мотивация сотрудников, управление конфликтами, динамика группы

В статье мы приходим к выводу, что социально-психологические механизмы в управлении играют значительную роль в психологическом изучении деятельности личности. Эти механизмы включают инструменты и методы, предназначенные для регулирования поведения сотрудников, их мотивации, развития межличностных отношений, а также организации управленческой деятельности команды. Основываясь на психологических механизмах группового поведения, эти механизмы позволяют руководителям создавать благоприятную рабочую среду, повышать эффективность труда и продуктивно управлять конфликтами.

Социально-психологические механизмы управления можно классифицировать на мотивационные, коммуникативные и когнитивные группы, а также по их уровню применения, характеру и сфере действия. Они являются важным инструментом для мотивации сотрудников, улучшения профессиональной коммуникации и поддержания гармоничной трудовой атмосферы.

Такие методы, как убеждение, вдохновение и социально-психологическое взаимодействие, опираются на моральное и психологическое воздействие, для повышения производительности сотрудников, обеспечения позитивной атмосферы и роста эффективности в коллективе.

В данном исследовании выявляются и оцениваются ряд социально-психологических механизмов и методов управления. Их применение в трудовых коллективах способствует эффективному решению организационных задач и обеспечению управленческой эффективности.

Social-Psychological Mechanisms and Methods in Management

*Lachinyan Lilit,
Sargsyan Levon*

Summary

Key words: *managerial activity, interpersonal interaction, employee motivation, conflict management, group dynamics*

Social-psychological mechanisms in management play a significant role in the psychological study of an individual's activities. These mechanisms encompass tools and methods used to regulate employee behavior, enhance motivation, foster interpersonal relationships, and organize effective team management. Grounded on the psychological mechanisms of group behavior, these mechanisms enable leaders to create a favorable work environment, enhance work efficiency, and effectively manage and resolve conflicts.

The social-psychological mechanisms of management can be categorized into motivational, communicative, and cognitive groups, as well as by their application level, nature, and scope. They play a key role in motivating employees, improving professional communication, and fostering a harmonious work environment.

Such methods as persuasion, inspiration, and social-psychological interaction rely on moral and psychological influence to enhance employee performance, ensure a positive team atmosphere, and boost productivity growth.

This article identifies and evaluates a set of social-psychological mechanisms and methods in management. Their application within workgroups contributes to effectively tackling organizational challenges and ensuring managerial efficiency.

Ներկայացվել է	12. 01. 2025 թ.
Գրախոսվել է	17. 01. 2025 թ.
Ընդունվել է տպագրության	05. 06. 2025 թ.

Անձի ինքնագիտակցության հիմնախնդիրը, տեսական մոտեցումները և բնորոշումները հոգեբանության մեջ

Հովակիմյան Գարիկ

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-262>

Հանգուցային բառեր. «Ես», «Ինքնություն», «Ես-հայեցակարգ», «Ես-համակարգ», «Ես-կերպար», ինքնաճանաչում, հոգեկան, վարք, հուզական-արժեքային վերաբերմունք

Անձի ինքնագիտակցության ուսումնասիրության առանձնահատկությունները կարելի է բնութագրել մեթոդաբանության տարբեր մակարդակներից, սակայն դրանցից յուրաքանչյուրն ընդգծում է ինքնագիտակցության հոգեբանական օրինաչափությունների ուսումնասիրության արդիականությունը: Ինքնագիտակցությունը հոգեկանի կարևոր երևույթ է և հոգեբանության հիմնարար հասկացություններից է:

Ինքնագիտակցության հիմնախնդրի հոգեբանական հարցերի ուսումնասիրության նկատմամբ մոտեցումը մշտապես գտնվել է անմիջական կախվածության մեջ այս կամ այն հոգեբանական հայեցակարգի փիլիսոփայական դիրքորոշումից:

Անձի ինքնագիտակցության տեսական մոտեցումների ընթացքում մենք առանձնացրինք նրա կենսաբանական պայմանավորվածությունը (Ջ. Ֆրոյդ), սոցիալական պայմանավորվածությունը (Ա. Ադլեր, Է. Էրիքսոն, Գ. Օլպորտ, Ջ. Միդ, Է. Դյուրքեյմ, Պ. Ժանե), էթնոմշակութայինը (Կ. Յունգ), սոցիալականացման ընթացքում սեփական անձի ընկալման վրա ձևավորումը (Ռ. Բերնս, Կ. Ռոջերս, Ա. Մասլոու, Վ. Ֆրանկլ), նաև երեխայի մտաձողության, ըմբռնման, ճանաչողության զարգացումով պայմանավորումը (Ա. Վալլոն, Ժ. Պիաժե):

Սկզբնական շրջանում ինքնագիտակցության վերլուծությամբ զբաղվող հոգեբանական դպրոցները մեթոդաբանորեն կապված էին սուբյեկտիվ-իդեալիստական փիլիսոփայության, նաև գիտակցության խնդրի նկատմամբ ղեկարարյան ինտրոսպեկտիվ մոտեցման հետ:

Դեկարտյան մոտեցման համաձայն, հոգեկանի առկայությունը համընկնում է նրա գիտակցվածության հետ. հոգեկանը նույնացվում է գիտակցության հետ, գիտակցությունը՝ ինքնագիտակցության հետ, որն ուղղված է սեփական անձի, սեփական «Ես»-ի ճանաչման [5]:

Հոգեկան «Ես»-ը դիտարկվում է որպես արտաքին աշխարհից գատ, նրանից անկախ գոյություն ունեցող: Ինտրոսպեկցիոնիզմի տեսանկյունից ինքնագիտակցության էության բացահայտման միակ հնարավոր մեթոդը ինտրոսպեկցիան է:

Մի շարք հոգեբանական բառարաններում ինքնագիտակցությունը նույնացվում է Ես-հայեցակարգի հետ [12, 352]: Ես-հայեցակարգը սեփական անձի մասին պատկերացումների դիմամիկ համակարգ է, որն ապահովում է արտաքին գործոնների ներգործության ընկալումը, նաև կանխորոշում է վարքի չափորոշիչները, կանոնները և սցենարները:

Հոգեբաններից առաջինը Ու. Ջեյմսն էր, որն սկսեց խորությամբ զբաղվել Ես-հայեցակարգի հիմնախնդրով: Նա գտնում էր, որ մարդու ինքնագիտակցությունը երկակի է, մարդը ցանկացած երևույթի կամ խնդրի մասին մտածելիս միևնույն ժամանակ որոշակի աստիճանով գիտակցում է ինքն իրեն, իր սեփական գոյությունը: Դրա հիման վրա, նա ինքնագիտակցության մեջ առանձնացնում էր միաժամանակ երկու մաս՝ գիտակցող և ճանաչող, «բուն Ես»-ը և «էմպիրիկ Ես»-ը: Ջեյմսը անձ էր համարում «էմպիրիկ Ես»-ը: Ես (SELF)= Ես (I)+ Ես՝ որպես օբյեկտ (ME) [6, 84]:

Ինքնագիտակցության հիմնախնդրի ուսումնասիրության զարգացման և նրա վիճակի

վրա անմիջական կարևորություն ունեցող 19-րդ դարավերջի բազմաթիվ հոգեբանական ուղղությունների մեջ անհրաժեշտ է ընդգծել հոգեվերլուծությունը:

Հոգեվերլուծության տեսանկյունից ինքնագիտակցության միջոցով մարդը ճանաչում է ինքն իրեն: Դա բարդ հոգեկան գործընթաց է, որի էությունը անձի կողմից իր բազմաթիվ կերպարների գործունեության և վարքի տարբեր իրադրություններում, այլ մարդկանց հետ փոխգործողության բոլոր ձևերի ընկալման մեջ է և այդ կերպարների միասնական կազմավորում, պատկերացում ձևավորելու մեջ, որը հետագայում ձևավորվում է սեփական Ես-ի մեջ որպես այլ սուբյեկտներից տարբերվող սուբյեկտ [2]:

Հոգեվերլուծական հայեցակարգերի շրջանակներում (Ջ. Ֆրոյդ, Կ. Յունգ, Ա. Ադլեր, Կ. Հորնի, Է. Ֆրոմ, Է. Բերն, Վ. Ռայխ) գիտակցությունը և ինքնագիտակցությունը հանդես են գալիս որպես հոգեկան կյանքի միասնական որոշակի ոլորտ, որը տարբերվում է անգիտակցականից: Դասական հոգեվերլուծության մեջ (Ջ. Ֆրոյդ, Կ. Յունգ) ինքնագիտակցությունը գտնվում է անգիտակցական մղումների «սպասարկողի» դերում, և նրա գործունեությունը ամբողջովին կանխորոշվում է այդ ոլորտի գոյությամբ ու դիտարկվում են որպես ինքնագիտակցության առաջատար գործոններ [16]:

Ջ. Ֆրոյդի հայեցակարգում անձի «Ես»-ի զարգացման աղբյուր է ծառայում ներքին հակասությունը՝ նրա իրական և իդեալական բաղադրիչների միջև՝ պայքարը «Ես»-ի և «Գեր-Ես»-ի միջև [13, 233]: Այդ հայեցակարգի շնորհիվ տարածվեց իդեալական «Ես»-ի մոտիվացիոն ազդեցությունը, այսինքն՝ «Գեր-Ես»-ը անհատին պարտադրում է, որ նա դառնա ավելի կատարյալ: Համապատասխանաբար, ինքնակատարելագործման ձգտումը դառնում է մարդու գործունեության կարևոր բաղադրիչներից մեկը [9, 53]: «Ես»-ը թույլ է տալիս նույնանականացվել սոցիալական իդեալներին և խմբային ձգտումներին: Այսինքն՝ ինքնագիտակցությունը նույնական է «Ես»-ին (Էգո-ին) և հանդես է գալիս որպես շրջապատող աշխարհին մարդու հարմարում:

Յունգի վերլուծական հոգեբանության մեջ ինքնագիտակցությունը ներկայացված է «ինքնություն» հասկացությամբ: Ինքնության արքեստիպը անձի կենտրոնն է, որի շուրջ խմբավորվում են բոլոր մնացած համակարգերը: Ինքնությունը այդ համակարգերը պահում է միասին և ապահովում է անձի միասնությունը, հավասարակշռությունը և կայունությունը: Դա անձի ամբողջականության կենտրոնական արքեստիպն է, որը միավորում է գիտակցականը և անգիտակցականը մարդու հոգեկանում: Կ. Յունգը «ինքնություն» հասկացությունը բնութագրում է որպես անձի իրական էություն, որը հաճախ թաքնվում է սոցիալական դիմակի՝ պերսոնայի տակ [19, 150-173]:

Նման մոտեցման համաձայն՝ «Ես»-ը ենթակա է ինքնության և հարաբերակցվում է նրա հետ՝ որպես մասը ամբողջի նկատմամբ: Գիտակցության դաշտի սահմաններում այն օժտված է կամքի ազատությամբ [20, 14-15]:

Այսպիսով, ըստ Կ. Յունգի, «ինքնություն» հասկացությունը նշանակում է մարդու իրական էություն ի տարբերություն «պերսոնայի»՝ սոցիալական դիմակի, այսինքն՝ «ինքնության» արքեստիպը մարդու անհատականության, ինքնատիպության, յուրահատկության գիտակցումն է: Մարդը հոգեկենսասոցիալական էակ է, իսկ ինքնության, այսինքն՝ ամբողջականության հասնել հնարավոր է միայն մարդու հակադիր բաղադրիչների համակցության շնորհիվ:

«Ես-հայեցակարգը» և շրջապատող աշխարհի մասին պատկերացումը որպես ինքնագիտակցության կառուցվածքային բաղադրիչներ սերտորեն փոխկապակցված են միմյանց հետ Կ. Յունգի վերլուծական հոգեբանության մեջ: «Ունենալ աշխարհայացք՝ նշանակում է ստեղծել աշխարհի և սեփական անձի պատկեր, իմանալ ինչ է աշխարհը և ինչ են ես» [18, 224]: «Իսկ ստեղծելով աշխարհի պատկեր՝ մտածող մարդը միաժամանակ վերափոխում է նաև ինքն իրեն» [18, 222-223]:

Նեոֆրոյդիստական մոտեցման մեջ (Ա. Ադլեր, Կ.Հորնի, Գ. Սալիվեն, Է. Էրիքսոն) ընդգծվում է սոցիալական փոփոխականների ազդեցությունը անձի զարգացման վրա՝ առաջին պլան մղելով գիտակցականի ոլորտը։ Նրանք ինքնագիտակցությունը դիտարկում են որպես անձի հատուկ պաշտպանական մեխանիզմ, որն ապահովում է նրա հարմարումը սոցիալական միջավայրին։ Ընդունելով ինքնագիտակցության կախվածությունը կյանքի պայմաններից ու միջանձնային հարաբերություններից՝ նրանք գերազանցապես էին կենսաբանական գործոնների դերը, որը հստակ դրսևորվում է Ես-հայեցակարգի մասին պատկերացումներում։ Նրանք այն դիտարկում են որպես մարդու էությանն ի սկզբանե բնորոշ, ելակետային կառուցվածք՝ «Կրեատիվ Ես»-ը Ադլերի մոտ, «Իրական Ես»-ը Կ. Հորնիի մոտ [16]։

Ա. Ադլերը կենսաառճը (նպատակին հասնելու առանձնահատուկ եղանակը) կապում էր «Ես-հայեցակարգի» և մարդու վարքը կանխորոշող աշխարհի անհատական հայեցակարգի հետ։ Նա «Ես»-ը դիտարկում էր որպես անհատի կենսաառճ, և այդ «Ես»-ը դրսևորվում է միայն շրջապատող աշխարհի հետ փոխգործողության մեջ [14, 131-139]։

Գ. Սալիվենը «Ես»-ը դիտարկում է որպես կազմավորում, որի գործառույթը մարդուն անհանգստությունից պաշտպանելու և այն հաղթահարելու մեջ է։ «Ես»-ը վերահսկողություն է վերցնում մարդու վարքի վրա [3, 245]։

Է. Էրիքսոնը Ես-հայեցակարգի խնդիրը դիտարկում է էգո-նույնականության տեսանկյունից, որը նա մեկնաբանում էր որպես կենսաբանական հիմքի վրա առաջացող տվյալ մշակույթի արդյունք։ Էրիքսոնի հայեցակարգի հիմքը մարդու զարգացման մոդելն է։ Նա մարդկային կյանքը դիտարկում է որպես զարգացման շարունակական գործընթաց, որը բաղկացած է ութ հաջորդական փուլերից, և դրանք համընդհանուր են ամբողջ մարդկության համար։ Յուրաքանչյուր փուլ հիմնվում է նախորդի վրա և իր մեջ ընդգրկում է կենսաբանական, հոգեբանական և սոցիալական բաղադրիչներ։ Է. Էրիքսոնի տեսության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում նույնականության սահմանումը՝ վերլուծությունը։ Այդ հասկացությունը միավորում է հոգեվերլուծության, կոգնիտիվ հոգեբանության, սոցիոլոգիայի և էգո-հոգեբանության մոտեցումները։ «Ես կարող եմ փորձել ավելի ակնհայտ ներկայացնել նույնականության էությունը, այն դիտարկելով միայն տարբեր տեսանկյուններից։ Մի կողմից, այն կարելի է հանգեցնել անհատական նույնականության գիտակցական զգացողության, մյուս կողմից դա անձնական բնույթի անգիտակցական ձգտում է ամբողջականության, երրորդ կողմից դա էգո-ի համադրության գործընթացի համար չափորոշիչ է։ Եվ, վերջապես, ներքին համերաշխությունը խմբային իդեալների և խմբային նույնականության հետ» [15, 180]։

Անձի ինքնագիտակցության ուսումնասիրության մեջ էական ներդրում ունեցան հումանիստական և էքզիստենցիալ հոգեբանության ներկայացուցիչները (Ա. Մասլոու, Կ. Ռոջերս, Գ. Օլպորտ, Լ. Բինսվանգեր, Մ. Բոսս, Ռ. Մեյ, Դ. Բյուչենթալ, Վ. Ֆրանկլ, Ի. Յալոմ)։

Կ. Ռոջերսը գտնում էր, որ անձի կառուցվածքում և նրա ձևավորման մեջ կենտրոնական կազմավորում է ինքնագիտակցությունը։ Անհատի ինքնագիտակցությունն առաջանում է երեխայի շրջապատող աշխարհի հետ փոխգործողության հիմքի վրա և հանդես է գալիս որպես այլ մարդկանց նկատմամբ պատասխան հակազդումների կարևորագույն դետերմինանտ։ Այլ մարդկանց հետ գնահատողական փոխգործողության արդյունքում երեխայի մոտ առաջանում է պատկերացում սեփական անձի և ինքնագնահատական որպես «Ես»-ի ընկալումների ուրվագծերի մասին [3, 242]։ Կ. Ռոջերսը, ինքնագիտակցության մասին խոսելով, շեշտը դնում է «Ես-հայեցակարգի» հասկացությունների վրա, որի տակ հասկանում է բարդ կառուցակարգված պատկեր, որն ընդգրկում է «Ես»-ը, հարաբերությունները, որոնց մեջ նա կարող է մտնել, «Ես»-ի ընկալվող հատկությունների և հարաբերությունների հետ դրական և բացասական արժեքները անցյալում, ներկայում և ապագայում։

Ա. Մալոուի մոտ ինքնագիտակցությունը հակասություն է անհատի ինքնաիրացման իրական մակարդակի և նրա հնարավոր մակարդակի միջև: Արդյունքում սուբյեկտը փնտրում է նրան ավելի շատ ինքնիրացվելու հնարավորություն ընձեռող վարքի նոր եղանակներ:

Տվյալ ուղղությունների տեսություններում բնորոշ առանձնահատկություն է ինքնագիտակցության սահմանումը որպես առողջ զարգացած անձնավորության կառուցվածքային տարր, որի զարգացման աղբյուրներն առկա են մարդու օրգանական էության մեջ, այսինքն՝ ինքնագիտակցությունն ի սկզբանե բնորոշ է մարդկային էությանը:

Ինքնագիտակցության էության վերաբերյալ մոտեցման մեջ էական քայլ էր կատարվել ֆրանսիական սոցիոլոգիական դպրոցի ներկայացուցիչների (Է. Դյուրքեյմ, Պ. Ժանե, Ժ. Նյուբեն) կողմից, որոնք առաջնահերթ էին համարում մարդու հոգեկանի սոցիալական պայմանավորվածությունը: Պ. Ժանեի հայեցակարգը հոգեբանության մեջ հայտնի է որպես «գործելաձևի հոգեբանություն»: Պ. Ժանեի կարծիքով, հոգեկանը զարգանում է շրջապատող մարդկանց հետ փոխգործողության մեջ, և անձի զարգացումը կատարվում է հաղորդակցման հիմքի վրա: Ինքնակարգավորման, սեփական վարքի միջնորդավորման ընդունակությունը Ժանեն համարում էր անձի զարգացման բարձրագույն չափորոշիչ [7]:

Ինքնագիտակցության սոցիալական պայմանավորվածության գաղափարներն իրենց շարունակությունն են գտնում ամերիկյան սոցիալ-հոգեբանական դպրոցի ներկայացուցիչների՝ Զ. Կուլիի, Ջ. Միդի, Մ. Կուլնի, Թ. Շիբուսանիի սիմվոլիկ ինտերակցիոնիզմի աշխատություններում: Սիմվոլիկ ինտերակցիոնիզմին բնորոշ է «Ես»-ի զարգացման արտաքին գործոնների բացարձականացում: Սոցիալական փոխգործողությունը մեկնաբանվում է որպես անհատի՝ սոցիալական շրջապատին հարմարում, այդ պատճառով «Ես»-ի ներքին բնութագրերը արտաքին դերային փոխգործողությունների ուղղակի արտացոլում են: Ինտերակցիոնիստները ենթադրում էին, որ անհատը և հասարակությունը մարդկանց միջև դերային փոխգործողության՝ ինտերակցիայի արդյունք են: Հասարակությունն ընդհանուր առմամբ դիտարկում էին որպես «Ես» և «Դու», «Ես» և «Ուրիշներ» միջանձնային փոխգործողությունների գումար:

Զ. Կուլին շեշտը դնում էր այլ մարդկանցից ստացվող հետադարձ կապի նշանակության վրա, որպես սեփական անձի մասին տվյալների հիմնական աղբյուր: Նա առաջ քաշեց «հայելային Ես»-ի հայեցակարգը, որտեղ հիմնավորում էր, որ մարդու պատկերացումները նշանակալից ուրիշների կողմից սեփական անձի գնահատման վերաբերյալ էական ազդեցություն են թողնում նրա ես-հայեցակարգի վրա [10, 218]:

Ջ. Միդը մշակել է մարդու կողմից այլ մարդկանց ըմբռնման կողմերը մեկնաբանող տեսություն և «ընդհանրացված ուրիշի» գաղափարը զարգացնող հայեցակարգ, որը զարգացնում և լրացնում էր Զ. Կուլիի «հայելային Ես»-ի տեսությունը: Ըստ Ջ. Միդի՝ մարդու Ես-հայեցակարգի զարգացումը նրա ներսում կատարվող սոցիալական գործընթաց է, որի արդյունքում առաջանում է «ճանաչող Ես»-ը և «Էմպիրիկ Ես»-ը: Սակայն Ջ. Միդը ամբողջական «Ես»- այդ կողմերը այլ կերպ էր մեկնաբանում, քան Ու. Ջեյմսը: Նա ենթադրում էր, որ «Լ»-ը չկանոնակարգված իմպուլսիվ և ավելի շատ անգիտակցական հոգեկան դինամիկա է, որից սկսվում է ցանկացած վարք: Սակայն հետագայում այն զարգանում և վերջանում է որպես «Մե», որն իրենից ներկայացնում է ուրիշների արժեքների և սոցիոմշակութային գործոնների դիրքորոշումների ազդեցության տակ ներքնայնացված համակարգ: «Մե»-ն ուղղորդում և սահմանափակում է «Լ»-ին որոշակի շրջանակներով, իսկ միասին նրանք կազմավորում են ամբողջական անձնային «Ես»՝ «SELF» [10, 219]:

Այսպիսով, Զ. Կուլին և Ջ. Միդը չեն առանձնացնում և չեն հակադրում «SELF»-ը և հասարակությունը՝ համարելով դրանք փոխներթափանցող գործընթացներ: Նրանք ենթա-

դրում էին, որ «Ես»-ի կառուցվածքը հասարակական գործընթացի արտացոլումն է, իսկ խմբի կազմակերպվածությունը նույնական է նրա մեջ մտնող «Ես»-ին:

Ինքնագիտակցության հիմնախորքի ուսումնասիրության մեջ առաջատար ուղղություններից է կոգնիտիվ հոգեբանությունը (Ջ. Քելլի, Լ. Ֆեստինգեր, Ս. Շելսթեր, Մ. Ռոզենբերգ և այլք), որոնց տեսությունները հիմնված են գիտակցության բովանդակությունների կոգնիտիվ անհամաձայնության վերաբերյալ մոտեցման վրա:

Լ. Ֆեստինգերի «սոցիալական համեմատության» հայեցակարգի համաձայն մարդն ունի իր անձնային հատկանիշները այլ մարդկանց հատկանիշների հետ համեմատելու պահանջմունք: Լ. Ֆեստինգերը մտցնում է նաև սոցիալական գործոն անձի մոտ իր մասին, իր հնարավորությունների և հատկությունների մասին պատկերացման ձևավորման գործընթացի մեկնաբանության մեջ: Ֆեստինգերի կարծիքով, երբ մարդը իր կողմից կատարված գործողությունների համար չունի հասկանալի արդարացում, առաջ է գալիս կոգնիտիվ դիսոնանս: Սեփական անձի մասին հստակ գիտելիք ունենալու պահանջմունքը հակասության մեջ է մտնում սեփական Ես-ի պահպանման պահանջմունքի հետ, ինչը նշանակալի կերպով ազդում է անհատի ինքնագնահատականի վրա ինքնագիտակցության հուզական մեխանիզմների միջոցով: Երկխոսությունը սոցիալական և անհատական Ես-ի միջև կարող է ավարտվել փոխզիջումով կոգնիտիվ գործընթացների մակարդակում: Խնդիրը այն է, որ մարդը որպես գիտակցությամբ օժտված էակ, կարող է ցանկանալ մի բան, գիտակցել մի այլ բան, ասել երրորդը, իսկ վարվել ընդհանրապես այլ կերպ [17; 21]:

Ջ. Քելլիի կոգնիտիվ տեսության հիմքում ընկած է եղանակ, որի օգնությամբ անհատները դրսևորում են վարք կամ մեկնաբանում են երևույթները կամ մարդկանց իրենց շրջապատում: Ջ. Քելլին իր մոտեցումն անվանել է անձնային կառույցների տեսություն՝ ուշադրությունը կենտրոնացնելով հոգեբանական գործընթացների վրա, որոնք թույլ են տալիս մարդկանց կազմակերպել և հասկանալ իրենց կյանքում կատարվող իրադարձությունները: Անձնային կառույցը գաղափար է կամ միտք, որը մարդն օգտագործում է սեփական փորձը գիտակցելու կամ մեկնաբանելու, կամ կանխատեսելու համար [8]:

«Ես-հայեցակարգի» հասկացության տեսական մշակման և համակարգման աշխատանքի մեջ մեծ ներդրում ունի անգլիացի հոգեբան Ռ. Բերնսը: Ըստ Ռ. Բերնսի, «Ես-հայեցակարգը» համակարգ է, որն իր մեջ ընդգրկում է անհատի պատկերացումները իր մասին, նաև իր սեփական գնահատականը այդ պատկերացումների մասին: Այսինքն, «Ես-հայեցակարգը»՝ նկարագրական բաղադրիչ (Ես-ի կերպար)+գնահատող բաղադրիչ (ինքնագնահատական): Այդ երկու բաղադրիչների՝ նկարագրական և գնահատողական, առանձնացումը թույլ տվեց «Ես-հայեցակարգը» դիտարկել որպես սեփական անձին ուղղված դիրքորոշումների հանրագումար, որի մեջ մտցրել էր կոգնիտիվ, հուզական և վարքային դիրքորոշումները: Ընդհանրացնելով և կառուցակարգելով տարբեր հոգեբանական տեսություններ՝ Ռ. Բերնսը առաջարկում է սխեմա, որն արտացոլում է «Ես-հայեցակարգի» կառուցվածքը, նաև կանոնակարգում է տարբեր տեսություններում ու հայեցակարգերում կիրառվող տերմինաբանությունը: Նա առաջարկում է «Ես-հայեցակարգը» ներկայացնել հիերարխիկ կառուցվածքի ձևով, որը միավորում է ինքնագիտակցության տարբեր տարրեր: Միևնույն ժամանակ նշելով, որ իրական հոգեկան կյանքում այդ տարրերը կազմում են միասնական ամբողջական կառուցվածք: «Ես-օբյեկտը», «Ես-սուբյեկտը», «Ես-ի պատկերը» և ինքնագնահատականը գոյություն ունեն միասին և անբաժան՝ ենթարկվելով միայն հայեցակարգային տարբերակման [1]:

Ընդհանուր առմամբ, ներկայացված հայեցակարգերի մեջ ինքնագիտակցությունը դիտարկվում է որպես սուբյեկտի շրջապատող միջավայրի հետ հավասարակշռող մեխանիզմ:

Ռուսական հոգեբանության մեջ անձի ինքնագիտակցության ուսումնասիրություններում կարելի է առանձնացնել երկու առաջատար ուղղություն.

1. Անձի զարգացման համատեքստում ինքնագիտակցության ձևավորման բնույթի և խնդիրների վերաբերյալ հարցերի քննարկում՝ Լ. Ս. Վիգոտսկու, Ս. Լ. Ռուբինշտեյնի, Ա. Ն. Լեոնտևի, Բ. Գ. Անանևի, Լ. Ի. Բոժովիչի, Վ. Վ. Ստոլինի, Ե. Վ. Շորոխովայի, Վ. Ս. Մերլինի, Ի. Ի. Չեսնոկովայի և այլոց ուսումնասիրությունները:

2. Ինքնագիտակցության օնոտգենետիկ առանձնահատկությունների և նրա տարբեր կառուցվածքների փորձարարական հետազոտություն:

Ռուսական հոգեբանության մեջ ինքնագիտակցության խնդիրների ուսումնասիրության հոգեբանական մոտեցումը սերտորեն կապված է փիլիսոփայականի հետ՝ մասնավորապես դիալեկտիկական-մատերիալիստական փիլիսոփայության, որն իրականացվում է մարդու հոգեկանի գործընթացների նկատմամբ գործունեությամբ միջնորդավորման մոտեցման իրագործման շրջանակներում: Այստեղ հիմնականում որպես վերլուծության գործիք մեծ կարևորություն ունեն գիտակցության և գործունեության միասնության, զարգացման, անձնային մոտեցման սկզբունքները [11]:

Ռուսական հոգեբանության մեջ ինքնագիտակցության էության և նրա աղբյուրների մասին ընդգծվում է նաև նրա սոցիալ-պատմական պայմանավորվածությունը: Լ. Ս. Վիգոտսկին հանգեց այն եզրակացության, որ սոցիալ-մշակութային միջավայրի և ինքնագիտակցության միջև կապը կայանում է ոչ թե միջավայրի ինքնագիտակցության զարգացման տեմպի վրա, այլ որ նրանով է պայմանավորված ինքնագիտակցության տեսակը և նրա զարգացման բնույթը [4]:

Այսպիսով, վերլուծելով անձի ինքնագիտակցության վերաբերյալ տարբեր տեսական մոտեցումները հոգեբանության մեջ՝ հանգեցինք այն եզրակացության, որ յուրաքանչյուր ուղղություն օգտագործում է հասկացությունների իր ապարատը, որոնք իմաստով միմյանց մոտ են, սակայն նույնական չեն («Ես», «Բնություն», «Ես- հայեցակարգ», «Ես-համակարգ», «Ես-կերպար» և այլն), ինչից էլ բխում է տերմինաբանական բազմազանությունը, հոգեկան կյանքի միևնույն ոլորտը նշելու համար, ինչն էլ անդրադառնում է ինքնագիտակցության հոգեբանության ուսումնասիրության ոլորտում հիմնական հասկացությունների ընկալման և մեկնաբանության բազմանշանակության: Ռուսական հոգեբանության մեջ նույնպես ինքնագիտակցությունը մեկնաբանվում է տարբեր կերպ՝ որպես գիտակցության առանձնահատուկ ձև, որն ուղղված է սեփական անձը որպես պրակտիկ և ճանաչողական գործունեության օբյեկտի գիտակցման, ձևավորված հարաբերությունների համակարգում սեփական տեղի, սեփական ներաշխարհի, ընդունակությունների և հնարավորությունների գիտակցման, որը ծառայում է շրջապատող աշխարհի և սեփական անձի նետ մարդու հարաբերությունների կարգավորման եղանակներից մեկը: Ժամանակային տեսանկյունից ինքնագիտակցությունը բարդ կազմավորում է, այն չի ֆիքսում անձը ստատիկ վիճակում, այլ արտացոլում է անընդհատ զարգացման գործընթացը: Մոտեցումների բազմազանությունը պայմանավորված է ինքնագիտակցության երևույթի բարդությամբ և հակասականությամբ:

Վերը նշվածի հիման վրա ինքնագիտակցության ուսումնասիրության հոգեբանական կողմի մեջ որպես մարդկային հոգեկանի հատուկ երևույթ կարելի է առանձնացնել այն, որ ուղղված է անձի կողմից վարքի ոլորտում սեփական գործողությունների, ինքնաճանաչման հիմքի վրա գործունեության և սեփական անձի նկատմամբ հուզական-արժեքային վերաբերմունքի ինքնակարգավորման:

Գրականություն

1. Бернс Р. Развитие Я-концепции и воспитание. М.: Прогресс, 1986, - 418 с.
2. Бодалев А.А. Общая психодиагностика. СПб.: Речь, 2002, - 440 с.
3. Божович Л.И. Личность и ее формирование в детском возрасте. М., 1968. – 464 с.
4. Выготский Л.С. Собрание сочинений в шести томах. Т.4. Детская психология. /Под ред. Д.Б. Эльконина, М.: Педагогика, 1984, 432 с.
5. Декарт Р. Избранные произведения, М., 1950. - 224 с.
6. Джемс У. Психология / Под ред. Петровской Л. А. М.: Педагогика, 1991, - 368 с.
7. Жане П. Психологическая эволюция личности / Пер. с фр. Н.Ю. Федуниной. М.: Академический Проект, 2010, - 399 с.
8. Келли Дж. Теория личности. Психология личных конструктов. СПб.: Речь, 2000, - 249 с.
9. Кирай-Деваи М. Формирование функций идеального Я в школьном возрасте // Психологические исследования познавательных процессов и личности. М., 1983, с. 51-56.
10. Курбатов В.И. Современная западная социология: Учебное пособие. Ростов-на-Дону: «Феникс», 2001, - 416 с.
11. Леонтьев А.Н. Деятельность. Сознание. Личность, М., 1975, – 190 с.
12. Психология: Словарь. М.: Политиздат, 1990, - 494 с.
13. Фрейд З. "Я" и "Оно". Тбилиси: изд-во «Мерани», 1991, - 830 с.
14. Фрейдджер Р., Фейдимен Д. Большая книга психологии. Личность. Теории, упражнения, эксперименты [Пер. с англ.] СПб.: Прайм-ЕВРОЗНАК, 2008, 704 с.
15. Фрейдджер Р., Фейдиман Дж. Личность. Теории, упражнения, эксперименты. СПб.: Прайм-ЕВРОЗНАК, 2004, - 608 с.
16. Хьелл Л., Зиглер Д. Теории личности. СПб., 2000, 608 с.
17. Шихирев П.Н. Об особенностях методов социально-психологических исследований в США // Методология и методы социальной психологии. М., 197, с.215-228.
18. Юнг К.Г. Проблема души нашего времени [Пер. с нем.] М.: «Прогресс», «Универс», 1993, 336 с.
19. Юнг К.Г. Сознание и бессознательное: Сборник [Пер. с англ.] СПб.: Университетская книга, 1997, 544 с.
20. Юнг К.Г. Эон: исследование о символе самости [Пер. с нем.] М.: Академический проект, 2009, 340 с.
21. Festinger L. Theory of Cognitive Dissonance. California, 1957, - 291 p.

Проблема самосознания личности в психологии, теоретические воззрения и определения

Овакимян Гарик

Резюме

Ключевые слова: «Я», «самость». «Я-концепция», «Я-система», «Я-образ», самопознание, психика, поведение, эмоционально-ценностное отношение

В статье представлены теоретические аспекты психологии самосознания человека. Каждое психологическое направление использует свои понятийные аппараты («Я», «усилие», «Я-самость», «Я-система», «Я-характер» и др.), которые в некотором смысле близки друг другу, но не тождественны. Терминологическое разнообразие возникает для обозначения одной и той же сферы психической жизни, которая относится к семиотике восприятия и интерпретации основных понятий в области психологии самосознания. В российской психологии самосознание трактуется по-разному. Его рассматривают как особую форму сознания, направленную на осмысление собственного "Я"; как осознание себя в качестве объекта практической и познавательной деятельности, позволяющее понять своё место в системе социальных отношений и свой внутренний мир. Также самосознание понимается как способность, с помощью которой человек регулирует свои отношения с окружающим миром и с самим собой. Исходя из вышеизложенного, в психологическом аспекте изучения самосознания, как особого феномена психики человека, можно связать с тем, что оно направлено на саморегуляцию собственных действий в сфере поведения, деятельности, которая основана на самопознании и эмоционально-ценностном отношении к себе.

The Problem of a Person's Self-Awareness, Theoretical Approaches and Definitions in Psychology

Hovakimyan Garik

Summary

Key words: "Self", "Identity", "Self-concept", "Self-system", "Self-character", Self-knowledge, psyche, behavior, emotional-value attitude

The article presents various theoretical approaches to the self-awareness of a person in psychology. Each approach uses its own apparatus of concepts, close in meaning to each other, but not identical ("Self", "Identity", "Self-concept", "Self-system", "Self-character", etc.) from which terminological variety derives, to indicate the same sphere of mental life, which refers to the multi-meaning of perception and interpretation of basic concepts in the field of psychology of self-awareness. In Russian psychology, self-awareness is interpreted in different ways. It is considered as a special form of consciousness aimed at understanding one's own "Self"; as awareness of oneself as an object of practical and cognitive activity, allowing one to understand one's place in the system of social relations and one's inner world. Self-awareness is also understood as an ability with which a person regulates one's relations with the surrounding world and within oneself. Based on the above, from a psychological perspective, self-awareness—as a unique phenomenon of the human psyche – can be understood as a form of self-regulation. It manifests in the ability to control one's behavior and actions through self-knowledge and through an emotional-value attitude toward oneself.

Ներկայացվել է 23. 12.2024 թ.

Գրախոսվել է 24. 12. 2024 թ.

Ընդունվել է տպագրության 05. 06. 2025 թ.

Гештальт терапия с пациентами с диагнозом рак молочной железы

Мирзоян Вананэ

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-270>

Введение

Ключевые слова: рак, гештальт терапия, химиотерапия, мастэктомия, алопеция

Рак молочной железы является одним из самых распространенных диагнозов. Диагноз оказывает мощное психологическое воздействие на пациентов, вызывая широкий спектр эмоциональных и психосоциальных проблем. С момента постановления диагноза до полной реабилитации женщина проходит долгий, мучительный путь. Жизнь начинается меняться коренным образом, что вызывает бурю негативных эмоций. Даже самый сильный человек не способен справиться с ними.

Гештальт терапия, с ее фокусом на осознанности, целостности и эмоциональной интеграции, может предложить эффективные стратегии для работы с этими переживаниями, помогая пациентам справиться с эмоциональными трудностями, связанными с болезнью, и улучшить качество жизни. Гештальт-терапия предлагает мощные инструменты для работы с эмоциональными и психологическими переживаниями пациенток с раком груди. Этот подход помогает им осознать и интегрировать свои переживания, улучшить контакт с собой и окружающими, а также найти внутренние ресурсы для справления с болезнью и улучшения качества жизни.

Целью статьи является оказание психотерапевтической помощи женщинам с диагнозом рак молочной железы.

Для достижения указанной цели были определены следующие **задачи** исследования:

1. представить стадии принятия болезни,
2. представить техники гештальт терапии,
3. провести исследование с онкобольными и проанализировать результаты.

В ходе исследования были использованы **метод** наблюдения, сбор психологического анамнеза и беседа.

Основная часть

Рак молочной железы занимает первое место среди всех видов рака в мире. Это заболевание возникает в результате мутации клеток. Болезнь начинается безболезненно и практически бессимптомно, именно поэтому и редко диагностируется на ранних стадиях.

Одним из самым трудным этапом является принятие диагноза. Никто не готов услышать свой диагноз, тем более если он предполагает длительное лечение, неопределенный исход и агрессивное вмешательство. Узнав о диагнозе рак, многие люди испытывают сильный страх и тревогу. Это нормальная реакция на такое серьезное известие. Человек испытывает шок, отрицает диагноз, считает, что это ошибка или что диагноз не соответствует его ожиданиям. На этом этапе происходит резкое осознание того, что жизнь изменилась, и это может вызывать ощущение потери контроля. После начального шока может возникнуть гнев, связанный с ощущением несправедливости и вопросами: "Почему я?", "Почему это произошло именно со мной?". Это состояние подробно описала Е. Кюблер-Росс.

Е. Кюблер-Росс установила, что большинство больных проходит через пять основных стадий психологической реакции:

1. Отрицание или шок. Она очень типична: человек не верит, что у него есть

потенциально смертельная болезнь. Больной начинает ходить от специалиста к специалисту, перепроверяя полученные данные, делает анализы в различных клиниках. В другом варианте он может испытывать шоковую реакцию и вообще больше не обращается в больницу. В этой ситуации нужно эмоционально поддержать человека, но не нужно менять эту установку, пока она не мешает лечению.

2. Гнев. Характеризуется выраженной эмоциональной реакцией, агрессией, обращенной на врачей, общество, родственников, гневом, непониманием причин болезни: «Почему это случилось именно со мной?» «Как это могло произойти?». В этом случае необходимо дать больному выговориться, высказать все свои обиды, негодование, страхи, переживания, представить ему позитивную картину будущего.

3. Торг. Для этой стадии характерны попытки «выторговать» как можно больше времени жизни у самых разных инстанций, резкое сужение жизненного горизонта человека. В течение этой фазы человек может обращаться к богу, использовать разные способы продлить жизнь по принципу: «если я сделаю это, продлит ли мне это жизнь?». В этом случае важно предоставить человеку позитивную информацию. Так, хороший эффект в этот период дают рассказы о спонтанном выздоровлении. Надежда и вера в успех лечения являются спасательным кругом для тяжело больного человека.

4. Депрессия. На этой стадии человек понимает всю тяжесть своей ситуации. У него опускаются руки, он перестает бороться, избегает своих привычных друзей, оставляет свои обычные дела, закрывается дома и оплакивает свою судьбу. В этот период у родственников возникает чувство вины. В этой ситуации нужно дать человеку уверенность, что в этой ситуации он не один, что за его жизнь продолжается борьба, его поддерживают и за него переживают. Можно вести разговоры в сфере духовности, веры, а также психологически поддерживать и родственников пациента.

5. Принятие. это наиболее рациональная психологическая реакция, хотя до нее доходит далеко не каждый. Больные мобилизуют свои усилия, чтобы несмотря на заболевание, продолжать жить с пользой для близких [2].

Вышеперечисленные стадии не всегда идут в установленном порядке. Больной может остановиться на какой-то стадии или даже вернуться на предыдущую. Однако знание этих стадий необходимо для правильного понимания того, что происходит в душе человека, столкнувшегося с тяжелой болезнью, и выработки оптимальной стратегии взаимодействия с ним.

Психологическая помощь необходима пациенту на каждой стадии. Пациент может «застрять» на одной из этих стадий, что значительно затрудняет осуществление его дальнейшего лечения и плохо сказывается на психоэмоциональном состоянии.

Гештальт-терапия помогает выявить и проработать эти вопросы, что может привести к значительному облегчению эмоционального состояния. На этом этапе необходимо обеспечение пациентом информацией о заболевании, методах лечения, диетических рекомендациях и возможностях реабилитации.

Основными техниками гештальт-терапии являются:

1. Диалог с частями себя. Пациенты могут участвовать в диалоге с различными частями себя, такими как "здоровая часть" и "болеющая часть". Это помогает интегрировать противоположные аспекты своего опыта и найти внутреннюю гармонию.

2. Работа с проекциями. Пациенты могут исследовать свои проекции на других людей или на болезнь, чтобы понять, какие внутренние конфликты или страхи они отражают. Это помогает снизить уровень тревожности и стресса.

3. Пустой стул. Техника пустого стула используется для работы с внутренними конфликтами или незавершенными делами. Пациенты могут вести диалог с воображаемыми фигурами или аспектами своей личности, чтобы выразить подавленные эмоции и найти решение конфликтов (например, с самой собой до болезни или с теми, с кем у нее нерешенные конфликты). Можно также задать вопросы своему телу или болезни, высказать все накопившиеся чувства, что помогает выйти из подавленных эмоциональных состояний и осознать свои истинные потребности.

4. Эксперименты. Эксперименты в гештальт-терапии помогают пациентам попробовать новые способы поведения или выражения эмоций в безопасной обстановке. Это может включать ролевые игры, телесные упражнения или творческие задания.

5. Осознание и выражение чувств. Пациенты поощряются к полному осознанию и выражению своих чувств. Это может включать в себя вербализацию эмоций, работу с метафорами или использование искусства для самовыражения [4].

Чтобы понять, какие психологические проблемы возникают у женщин с диагнозом рак молочной железы и с какими переживаниями они сталкиваются, мы провели исследование среди пациенток в медицинском центре «Эребуни» и в Национальном центре онкологии имени В.А. Фанарджяна. В исследовании приняли участие 42 женщины различных возрастных групп. Проведение психологического исследования с онкобольными является сложным процессом: многие респонденты не идут на контакт, отказываются отвечать на вопросы или проявляют агрессию. Средний возраст участниц составил 32 года. Участницы находились на разных стадиях лечения: кто-то проходил курс химиотерапии, кто-то находился в послеоперационном периоде, а кто-то проходил радиотерапию. Основными методами исследования стали сбор анамнеза, беседа и наблюдение.

Сбор психологического анамнеза помог глубже понять суть проблемы и составить психологический портрет пациента. На основе полученных данных можно утверждать, что в группе риска находятся женщины старше 40 лет. Однако это не означает, что молодые женщины в возрасте от 20 до 40 лет не подвержены риску развития рака. Во-вторых, рак молочной железы может возникать не только у женщин, которые рожали и кормили грудью, но и у тех, кто не имел детей и не кормил. Это подчеркивает важность систематического обследования для женщин независимо от их возраста и репродуктивного статуса.

Целью наблюдения было выявить закономерности поведения пациенток. Молодые женщины и женщины среднего возраста, как правило, настроены более оптимистично. Они с позитивом воспринимают лечение, беспрекословно выполняют все указания врачей, не проявляют конфликтности и не сомневаются в диагнозе и назначениях. Они не перепроверяют действия врачей, даже если меняют специалистов. В отличие от них, женщины пожилого возраста зачастую настроены более пессимистично, иногда даже враждебно. Им трудно смириться с тем, что в их зрелом возрасте им выпали такие испытания. Они испытывают сложности в том, чтобы справляться с болью и переживаниями, а также физически могут быть более ослаблены.

Беседа с пациентками, страдающими от рака груди, требует чуткости, эмпатии и соблюдения этических принципов. В ходе общения было выяснено, что женщины на разных этапах болезни испытывают различные страхи. Это могут быть страхи не вылечиться, изменения внешности, выпадения волос, мастэктомии, рецидива, а также потери женственности, сексуальности, статуса, активности и дееспособности.

Лечение рака может приводить к долгосрочным изменениям в теле, включая лимфедему (отек), хроническую боль и другие физические проблемы. Каждая женщина уникальна,

и степень эмоционального стресса варьируется в зависимости от индивидуальных особенностей личности, семейной и социальной поддержки, а также собственных ресурсов справляться с трудностями. Женщины, которые уже раньше были психически менее выносливыми, имели сложности в межличностных отношениях, в сексуальной и профессиональной сферах, что обнаруживается в беседах или при психологическом тестировании, проявляют более выраженные и дольше сохраняющиеся аффективные реакции с депрессивной и тревожной переработкой [1, 113].

Диагноз «рак» может привести к депрессии, особенно если пациентка сталкивается с длительным и изнуряющим лечением. Чувство потери, постоянная тревога, изменения в социальном взаимодействии и физическое восстановление могут вызвать эмоциональное выгорание, апатию и даже отказ от социальной жизни.

Выпадение волос (алопеция) — одно из наиболее распространённых и заметных побочных эффектов химиотерапии. Выпадение волос вследствие химиотерапии или других медицинских процедур может быть эмоционально тяжелым испытанием для многих людей. Оно может затронуть самооценку и восприятие собственного тела, так как волосы часто играют важную роль в самооценке и восприятии внешнего облика. Это особенно касается женщин, для которых волосы часто ассоциируются с женственностью и привлекательностью. Принятие себя после выпадения волос требует работы с эмоциональными, когнитивными и телесными аспектами переживаний.

Гештальт терапия может помочь пациентам принять эти изменения и укрепить свою самооценку.

Мастэктомия (потеря груди) вызывает сильные эмоции у женщин. Для многих женщин молочные железы ассоциируются с женственностью, материнством и сексуальной привлекательностью. Утрата одной или обеих грудей может привести к чувству потери своей женственности, снижению уверенности в себе и даже депрессии. Женщины могут ощущать, что их тело стало «неполноценным», что может влиять на самооценку и образ тела. Пациентки могут испытывать гнев и чувство несправедливости по поводу заболевания, особенно если они сильно меняются. Работа с женственностью после операции на груди и химиотерапии может быть особенно важной, так как эти процедуры могут серьезно повлиять на чувство собственной женской идентичности и самооценки, сексуальность. Хотя сексуальная функция сама по себе обычно не нарушена, но психологические барьеры, связанные с самооценкой, могут вызывать сложности в интимных отношениях. Примерно треть больных ещё испытывают трудности, они избегают разглядывать себя обнажёнными в зеркале или показываться в таком виде своему партнёру. Каждая третья женщина считает, что партнёр подавлен её болезнью, но старается быть внимательным. Целью терапии является помощь клиентке в принятии своего тела и новое восприятие себя.

Гештальт терапия в работе с больными предполагает:

1. повышение уверенности в себе и принятие собственного тела,
2. разработка способов адаптации к изменённому имиджу,
3. поиск новых способов выражения близости и сексуальности,
4. работу с партнером, обсуждение с ним интимных вопросов.

Гештальт-терапия помогает пациентам осознанно подходить к процессу принятия решений, связанных с лечением и жизнью после диагноза, что способствует укреплению их чувства контроля и уверенности. Для того чтобы помочь им в этой нелегкой задаче, мы, прежде всего, пытаемся противопоставить существующим в обществе отрицательным установкам относительно рака систему положительных представлений. Эти два вида установок приведены в приведенной ниже таблице [3].

Таблица 1.

Положительные и отрицательные установки относительно рака

Отрицательные установки	Положительные установки
▪ Рак - это смертельное заболевание. ▪ Рак нападает извне, и с ним бороться невозможно. ▪ Любое лечение болезненно и неэффективно, причем часто возникают нежелательные побочные эффекты.	▪ Рак не обязательно смертелен. ▪ Собственные внутренние ресурсы организма могут бороться с раком, чем бы он не был вызван. ▪ Лечение может быть союзником внутренних ресурсов организма.

Психологическое состояние женщины и процесс восстановления очень сильно зависит от социальной и профессиональной поддержки. Гештальт-терапия не только поддерживает больных, но и способствует улучшению качества контакта с окружающими. Это особенно важно для тех, кто может чувствовать себя изолированными или оторванными от социальной поддержки. Наличие сильной социальной поддержки играет ключевую роль в эмоциональном благополучии пациентов. Отсутствие поддержки может усугубить чувство изоляции и беспомощности.

Важно обучение членов семьи, как лучше поддерживать больную, справляться с их собственными эмоциями и решать возникающие проблемы.

Необходимо конкретно научить членов семьи и окружающих правил поведения с пациентом. В таблице представим основные правила поведения.

Таблица 2.

Правила поведения с больными раком молочной железы

Что нужно делать	Чего нельзя делать
Не оставлять одну.	Не упрекать, что вовремя на обследовалась.
Слушать и проявлять сострадание.	Не давать советы как держать себя.
Сопровождать во время процедур.	Не давать ложных надежд.
Сохранять эмоциональное равновесие.	Не обесценивать болезнь, говоря, что это обычная болезнь.
Помогать соблюдать привычный распорядок дня.	Не минимизировать переживания.
Помогать финансовым вопросам.	Постоянно не говорить о болезни.
Обеспечить комфорт и удобство в доме.	Не делать комментарии по поводу внешности.
Помогать с домашними делами.	Не заставлять делать что-то, чего женщина не хочет.

Таким образом, гештальт терапия в работе с онкобольными фокусируется на интеграции всех аспектов человеческого опыта: мыслей, чувств, телесных ощущений и поведения. Она помогает пациентам:

1. осознать и принять свои переживания, что способствует улучшению качества жизни,
2. найти внутренние ресурсы для справления с болезнью и адаптации к новым обстоятельствам,
3. развивать осознанность, что способствует их эмоциональному и психологическому благополучию,
4. осознать и выразить страх, тревогу, гнев и чувство утраты, так как именно с этими

- эмоциями часто сталкиваются пациенты с диагнозом рак,
5. установить более глубокую связь с собой и окружающими, что может помочь в процессе исцеления,
 6. научиться справляться с неопределенностью и изменениями, связанными с заболеванием, что способствует повышению устойчивости и внутренней силы.

Гештальт-терапия предоставляет пациентам пространство для исследования своих чувств и переживаний, что может быть важным шагом на пути к принятию и исцелению.

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-270>

Литература

1. Бройтигам В., Кристиан П., Рад М. Психосоматическая медицина: Кратк. учебн. / Пер с нем. Г.А. Обухова, А.В. Бруенка; Предисл. В.Г. Остроглазова. М.: ГЭОТАР МЕДИЦИНА, 1999, - 376 с.
2. Кюблер-Росс, Элизабет. К. О смерти и умирании. М.: Издательство АСТ, 2022, - 480 с.
3. Малкина-Пых И. Г. Психосоматика. М.: Эксмо, 2008, 1024 с.
4. Старак Я., Кей Т., Олдхейм Д. Техники гештальт-терапии на каждый день. Рискните быть живым. Издательство Института Психотерапии, 2014, -176 с.

Գեշտալտ թերապիա կրծքագեղձի քաղցկեղ ախտորոշված հիվանդների հետ *Միրզոյան Վանանե*

Ամփոփում

Հանգուցայի բառեր. քաղցկեղ, գեշտալտ թերապիա, քիմիաթերապիա, մաստէկտոմիա, ալոպեկիա

Կրծքագեղձի քաղցկեղը ամենատարածված ախտորոշումներից մեկն է: Ախտորոշումը հոգը հոգեբանական ազդեցություն ունի հիվանդների վրա՝ առաջացնելով հուզական և հոգեւոյնական խնդիրների լայն շրջանակ: Ախտորոշման պահից մինչև ամբողջական վերականգնումը կինը անցնում է երկար, ցավոտ ճանապարհով: Կյանքը սկսում է արմատապես փոխվել, ինչը բացասական հույզերի փոթորիկ է առաջացնում: Նույնիսկ ամենաուժեղ մարդը չի կարողանում գլուխ հանել դրանցից: Գեշտալտ թերապիան օգնում է հիվանդներին հասկանալու և արտահայտելու հիվանդության և բուժման հետ կապված ճնշված զգացմունքները, նվազեցնել հիվանդության հետ կապված անհանգստության, դեպրեսիայի և անօգնականության զգացումները, բարելավել հիվանդների կյանքի որակը՝ ինտեգրվելով և զգալով դժվար զգացմունքները, զարգացնել հիվանդների իրազեկման և ինքնորոշման հմտությունները: Սա աջակցություն է, որը կօգնի նրանց հաղթահարել հուզական դժվարությունները: Հողվածում ներկայացված են քաղցկեղով հիվանդների հոգեբանական բնութագրերը, բուժման մեթոդները և դրանց հետևանքները: Հիմնական ուշադրությունը գեշտալտ թերապիայի տեխնիկայի վրա է: Գեշտալտ թերապիայի տեխնիկաների օգնությամբ հիվանդները սովորում են տեղյակ լինել իրենց զգացմունքների և վիճակների մասին, աշխատել ներկա պահի հետ՝ առանց մտածելու ապագայի կամ անցյալի մասին: Գեշտալտ թերապիան հնարավորություն է տալիս հիվանդներին բացահայտել իրենց զգացմունքներն ու փորձառությունները, ինչը կարող է կարևոր քայլ լինել դեպի ընդունման և ապաքինման ճանապարհ:

Gestalt Therapy with Patients Diagnosed with Breast Cancer

Mirzoyan Vanane

Summary

Key words: cancer, gestalt therapy, chemotherapy, mastectomy, alopecia

Breast cancer is one of the most common diagnoses. The diagnosis has a powerful psychological impact on patients, causing a wide range of emotional and psychosocial problems. From the moment of diagnosis to complete rehabilitation, a woman undergoes a long, painful period. Life begins to change radically, which causes a storm of negative emotions. Even the strongest person is not able to cope with those changes. Gestalt therapy helps patients to recognize and express suppressed feelings associated with the disease and treatment, reduce the feeling of anxiety, depression and helplessness associated with the disease. It also helps to improve the quality of patients' life by integrating and experiencing complex emotions, develop the skills of awareness and self-support that will help the patients to cope with emotional difficulties. The article presents the psychological characteristics of cancer patients, treatment methods and their consequences. The main focus is on the techniques of Gestalt therapy. With the help of Gestalt therapy, patients work with the present moment, without dwelling on the future or the past.

Ներկայացվել է 10. 01. 2025 թ.

Գրախոսվել է 15. 01. 2025 թ.

Ընդունվել է տպագրության 05. 06. 2025 թ.

Ալկոհոլիզմ ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական հարմարումը վարպետաց դասերի միջոցով

Պետրոսյան Քրիստինե

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-277>

Հանգուցային բառեր. արժեքային կողմնորոշումներ, հոգեբանական խորհրդատվություն, անգիտակցական ռոլորտ, հույզեր, զգացմունքներ

Ներածություն

Կախվածությունը շեղված վարքի ձևերից մեկն է: Կախվածությունների շարքին է դասվում նաև ալկոհոլիզմը:

Ալկոհոլիզմը այլ կերպ անվանում են նաև հարբեցողություն, որը բնութագրվում է օգտագործված ալկոհոլի քանակի նկատմամբ վերահսկողության կորստով, ալկոհոլի նկատմամբ հանդուրժողականության բարձրացմամբ (բավարարվածության հասնելու համար պահանջվող ալկոհոլի չափաբաժինների ավելացում): «Քրոնիկ ալկոհոլիզմ» տերմինն առաջին անգամ օգտագործվել է 1849 թվականին շվեդ բժիշկ և հասարակական գործիչ Մ. Հասսի կողմից, ով նշել է պաթոլոգիական փոփոխությունների մի շարք, որոնք տեղի են ունենում մարդու մարմնում ալկոհոլային խմիչքների երկարատև, չափից ավելի օգտագործման ժամանակ:

Այնուամենայնիվ, երկար ժամանակ տարբերություն չկար հարբածության (չափից շատ խմելու) և ալկոհոլիզմի (հիվանդություն) միջև: 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ալկոհոլային կախվածությունն ընդհանրապես կոչվում էր դիպսոմանիա, որի հեղինակն էր գերմանացի բժիշկ Հուֆելանդը 1819 թվականին, սակայն այժմ այս տերմինն այլ նշանակություն ունի [2, 3]:

Ալկոհոլիզմը ԱՀԿ-ի կողմից ճանաչվել է որպես հիվանդություն 1952 թվականին [2]: Բայց, չնայած այն ինքնագամանքին, որ հիվանդության մեխանիզմը ինքնին պարզ չէ, հիվանդության հիմնական աղբյուրը ալկոհոլ պարունակող ըմպելիքներն են և դրանց ազդեցությունը: Բացի այդ, շատ բան կախված է կենսաբանական, հոգեբանական և սոցիալական գործոններից:

Դեռևս 19-րդ դարում ապացուցվեց, որ բնակչության աճի հետ զուգահեռ ավելանում է ալկոհոլիզմի մակարդակը: Ալկոհոլային կախվածություն ունեցող տղամարդկանց 10 %-ը և ալկոհոլային կախվածություն ունեցող կանանց 50 %-ը ամուսնացած են ալկոհոլային կախվածություն ունեցող մարդկանց հետ: Շատ ավանդույթներ նպաստում են հարբեցողությանը, իսկ հետո՝ ալկոհոլիզմին: Մեռական փոքրամասնությունների կանայք ավելի հավանական է, որ զարգացնեն ալկոհոլային կախվածություն: Օրինակ, ալկոհոլի չարաշահումը լայնորեն տարածված է լեբուսիների և բիսեքսուալ կանանց շրջանում՝ համեմատած հետերոսեքսուալ կանանց հետ: Ընդհանուր առմամբ Միացյալ Նահանգներում ալկոհոլիզմը զգալիորեն ավելի բարձր է համասեռամուլների, հատկապես կանանց մոտ [7]:

Հարբեցողության կենսաբանական նախատրամադրվածությունը փոխանցվում է գեներով, որոնց տատանումները և մուտացիաները կապված են ալկոհոլի օգտագործման մակարդակի և ալկոհոլիզմի ռիսկի հետ: 2020 թվականին անցկացված 435 հազար մարդու գենետիկ ուսումնասիրությունն օգնել է բացահայտել ալկոհոլիզմին նախատրամադրող 29 գենետիկ գործոն [5]:

Հոգեբանական գործոնները: Որպես կենտրոնական նյարդային համակարգի ճնշող միջոց՝ ալկոհոլը մարդկության կողմից օգտագործվել է հնագույն ժամանակներից և, բացառությամբ որոշ կրոնների, նույնիսկ եղել է խորհուրդների կենտրոնում: Եթե մարդու կյանքի սկզբնական շրջանում անհատական հարբեցողությունն անհնար էր, ապա քաղա-

քակրթության առաջընթացով այն իր տեղն է գրավում: Ծանր ձև է ալկոհոլիզմը որոշակի հոգեբուժական հիվանդության ֆոնի վրա: «Ալկոհոլային փսիխոզ» տերմինը օգտագործվել է նախկինում, երբ դրա պատճառը համարվում էր ուղեղի վրա ալկոհոլի անմիջական ազդեցությունը: Այնուհետև դրանք վերանվանվել են մետաղական սպիրտ, քանի որ պարզվել է, որ դրանք էթանոլով մարդու օրգանիզմի երկարատև թունավորման հետևանք են:

Մետաղ-ալկոհոլային փսիխոզները հոգեկան խանգարումներ են, որոնք առաջանում են խրոնիկական ալկոհոլային թունավորումից: Հայտնի են ալկոհոլային փսիխոզների մի քանի տեսակներ՝ ալկոհոլային զառանցանք («զառանցանք tremens»), ալկոհոլային դեպրեսիա, ալկոհոլային հալյուցիոզ, ալկոհոլային պարանոիդ, ալկոհոլային էպիլեպսիա:

Ալկոհոլային զառանցանքը ամենատարածված ալկոհոլային փսիխոզն է, որը զարգանում է քրոնիկական ալկոհոլիզմի հետևանքով առաջացած նյութափոխանակության խանգարումների արդյունքում: Պսիխոզի ախտանիշները զարգանում են ալկոհոլ խմելը դադարեցնելուց ժամեր կամ օրեր անց:

Ալկոհոլային փսիխոզի և սուր թունավորման միջև միջանկյալ դիրք է զբաղեցնում պաթոլոգիական թունավորումը. հազվագյուտ վիճակ, մթնշաղի մի տեսակ, որը տեղի է ունենում չխմողների մոտ՝ ալկոհոլ օգտագործելիս և դրսևորվում է տարածության և ժամանակի ապակողմնորոշմամբ, շարժողական գրգռվածությամբ և պաթոլոգիական աֆեկտով [5, 6]:

Ալկոհոլիզմով տառապող անձանց սոցիալ-հոգեբանական հարմարումը

Սոցիալականացումը բարդ գործընթաց է, որի կենսագործունեությունը որոշվում է մեծ թվով արտաքին և ներքին գործոններով: Թուլկոթ Պարսունը սոցիումը սահմանում էր որպես մարդկանց միջև փոխհարաբերություն, որի հիմքը բարբերը և արժեքներն են:

Սոցիումը մարդկանց և իրենց պահանջմունքների, հմտությունների, գործունեության, հարաբերությունների և ինստիտուտների հետ ամբողջականություն է: Մարդը միակն է աշխարհում, որը ծնված պահից ունի սոցիալական խմբերի հետ անընդմեջ շփում: Հարմարումը որպես տերմին առաջացել է հեղինակ Խ. Հատբերտի կողմից 18-րդ դարի երկրորդ կեսին՝ Լուսային փոփոխության դեպքում զգայունության նվազման և բարձրացման շեմերը բնութագրելու համար: Սակայն այն կիրառվել է նաև հոգեբանության մեջ՝ կենդանի օրգանիզմների և միջավայրի փոխկապակցվածության նկարագրման համար, սոցիալական տարբեր միջավայրերում և գործընթացներում: Սոցիոլոգիայի մի ուղղության մեջ, որը պայմանականորեն անվանում են ինտերակցիոնալիզմ, սոցիալական հարմարվողականությունը (Լ. Ֆիլիպս), միջավայրերի փոխներգործությունը արտահայտում է երկու ձևով՝

1) անկախ տարիքից և սեռից ընդունված և էֆեկտիվ պատասխան հանդիպած սոցիալական սպասելիքներին,

2) Հկունություն և արդյունավետություն նոր, պոստեցյալ վտանգավոր պայմանների հանդիպելու ժամանակ: Հարմարման ժամանակ հասկանալի են դառնում մարդու սոցիալականացման առանձնահատկությունները, այն ոչ միայն գործընթաց է անձնային տեսանկյունից, այլ նաև կենսակերպի դրական դինամիկային ուղղված գործունեություն յուրաքանչյուրի համար: Հարմարվողականության տուբյեկտի և օբյեկտի փոխհարաբերությունները իրենց մեջ ներառում են բարդ հոգեբանական գործընթացներ: Ցանկացած տեսակի կախվածություն կարող է անձին օտարել հասարակությունից: Անձը սկսում է ունենալ հասարակության մեջ վերասոցիալականացման խնդիր, որն էլ իր հերթին կրում է խիստ անհատական բնույթ: Կախվածություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական հարմարման գործընթացն իրականանում է նեղ մասնագետների օգնությամբ, ովքեր հոգեբանական աշխատանքին զուգահեռ ուղղորդում են այցելուի կարիքների բավարարմանը տարբեր սոցիալական գործընթացներում: Հասարակությունը ևս անմասն չի կարող մնալ այս խնդրի կարգավորման շրջանակներում [1,4]: Սոցիալ-հոգեբանական հարմարումը ալկոհոլիզմով տառապող անձանց մոտ պահանջում է լուծման և ռեմիսիայի ձևավորման համար սոցիալական և անձնա-

կան ռեսուրսների համապատասխան մակարդակ, ինչպես նաև ճգնաժամային իրավիճակների հաղթահարման համարժեք ռազմավարություն: Սոցիալ- հոգեբանական հարմարման հիմնախնդիրներն ուսումնասիրելիս անհրաժեշտ է հաշվի առնել տարբեր սոցիալական համակարգերի (քաղաքակրթություններ, քաղաքական համակարգեր) գործունեության բնորոշ առանձնահատկությունները: Այն դրսևորվում է իրավիճակային ազդեցությունների, հարմարվողական ռազմավարությունների և պրակտիկայի հատուկ շարքում: Յուրաքանչյուր սոցիալ-մշակութային և սոցիալ-քաղաքական համակարգ ձևավորում է անհատականության իր հարմարվողական տեսակը, որն ունակ է ընկալելու այս համակարգի կողմից սահմանված հարմարվողական ռազմավարությունները: Է. Գիդգենսը կարծում է, որ աստիճանաբար ավարտվում են ժամանակները, երբ հասարակությունը կառավարվում էր սովորույթներով և ավանդույթներով: Կյանքը պահանջում է անընդհատ աճող սոցիալական ռեֆլեքսիվություն, բաց որոշումներ կայացնելու անհրաժեշտություն:

Սոցիալ հարմարման մեխանիզմներն իրենց մեջ ներառում են հետևյալ կետերը՝

- Հարաբերությունների լարվածություն և մեկուսացում՝ ալկոհոլային կախվածություն ունեցող անհատները հաճախ են ունենում կոնֆլիկտներ, վստահության խնդիրներ, հուզական լարվածություն անզգամ սեփական հարազատների հետ: Այս ամենը կարող է հանգեցնել սոցիալական մեկուսացման:

- Զբաղվածության մարտահրավերներ՝ կախվածության այս տեսակը կարող է ազդել մարդու աշխատունակության վրա՝ ստեղծելով նորանոր խնդիրներ անձի համար:

- Իրավական և ֆինանսական խնդիրներ՝ իրավական խնդիրները հիմնականում լինում են ալկոհոլի ազդեցության տակ որևէ հակաիրավական գործողության հիմքում, իսկ ֆինանսական խնդիրները նախորդիվ նշված կետերի հանրագումարն է: Ցանկալի է վերասոցիալականացման ծրագրեր ունենալ այս խնդիրների կարգավորման համար՝ հատուկ կառույցներում: Հոգեբանական հարմարման մեխանիզմներն հիմնականում ներառում են հետևյալ կետերը

- Ինքնագնահատական և ինքնություն՝ ալկոհոլիզմը կարող է խիստ ազդել անհատի ինքնագնահատականի և ինքնության վրա: Կախվածության ցիկլը հաճախ ներառում է մեղքի, ամոթի և ցածր ինքնաթմբի զգացում:

- Հաղթահարման մեխանիզմները և հոգեկան առողջությունը՝ ալկոհոլային կախվածությամբ տառապող շատ անհատներ նույնպես տառապում են հոգեկան առողջության հետ կապված խնդիրներից, ինչպիսիք են դեպրեսիան կամ անհանգստությունը: Հատկապես արդյունավետ կարող են լինել բուժման ինտեգրված մոտեցումները, որոնք վերաբերում են ինչպես ալկոհոլի օգտագործմանը, այնպես էլ հոգեկան առողջության խնդիրներին:



Նկար 1. Նկարում է կախվածություն ունեցող անձը

- Նպատակների սահմանում և մոտիվացիա՝ ալկոհոլային կախվածություն ունեցող անհատները պետք է հաստատեն հստակ, հասանելի նպատակներ իրենց վերականգնման ճանապարհորդության համար, որոնք կարող են ներառել անձնական, մասնագիտական և հարաբերական նպատակներ: Ալկոհոլիզմով տառապող մարդկանց սոցիալական և հոգեբանական ադապտացիան բարդ և շարունակական գործընթաց է: Այն ներառում է հարաբերությունների լարվածության, զբաղվածության մարտահրավերների, իրավական և ֆինանսական խնդիրներ, ինչպես նաև հոգեբանական ազդեցություններ, ինչպիսիք են ինքնագնահատականի և հոգեկան առողջությունը: Օգտագործելով մասնագիտական օգնությունը,

հասակակիցների աջակցությունը և համայնքային ռեսուրսները՝ ակտիվային կախվածություն ունեցող անհատները կարող են դիմակայել այս մարտահրավերներին և գնալ դեպի ավելի առողջ և լիարժեք կյանք: Այս հարմարվողական գործընթացների ըմբռնումը և դրանց լուծումը կարևոր է արդյունավետ բուժման և երկարաժամկետ վերականգնման համար:

Վարպետաց դասերի կազմակերպման սոցիալ-հոգեբանական ազդեցությունը

Վարպետաց դասերը վարում են հայտնի հոգեթերապևտներ, մասնագետներ, ովքեր պատրաստ են կիսվել իրենց փորձով: Հոգեբանության մեջ վարպետաց դասերը ամենից հաճախ ունեն երկու տեսակի ձևաչափ.

1. ուսումնական (դասախոսության ձևաչափ. երբ հոգեբանը կիսվում է իր գիտական և գործնական դիտարկումներով և մեթոդներով լսարանի հետ),

2. գործնական վարպետաց դասերը ներառում են հոգեբանի վերապատրաստման կամ զարգացման ծրագրի ցուցադրական տարբերակը: ՀՀ-ում գործում է Կախվածությունների բուժման ազգային կենտրոն, որտեղ իրականացվում է կախվածություն ունեցող անձանց բուժումը: Որոշել ենք այս ծառայություններին միացնել վարպետաց դասեր ծրագիրը՝ ամեն անգամ նոր արվեստի և արհեստի ճյուղ ընտրելով, որպեսզի վերականգնողական թերապիան ավելի արդյունավետ լինի: Կախվածություն ունեցող անձանց սոցիալ-հոգեբանական հարմարումը ենթադրում է սոցիալ-մանկավարժական, հոգեբանական խորհրդատվության ընդհանուր և հատուկ միջոցառումների համակարգ: Սոցիալ-մանկավարժական և հոգեբանական խորհրդատվության աշխատանքներն իրականացվում են կանխարգելիչ միջոցառումների շրջանակներում՝ կախվածություն ունեցող անձանց հետ: Անհրաժեշտ է հոգեբանական խորհրդատվության ժամանակ ներառել նաև այդպիսի գործունեության տեսությամբ և մեթոդաբանությամբ նվիրված բաժիններ: Սոցիալ-մանկավարժական միջոցառումներ իրականացնել և մշակել առանձին հատուկ դասընթացներ, որոնցում տվյալ անձիք հեշտ կներգրավվեն: Ուսուցումը պետք է իրականացվի միջոցիսցիալիկնար մոտեցման հիման վրա, քանի որ կախվածություն ունեցող անձի վարքագծի հաղթահարումը արդյունավետ է միայն այն դեպքում, երբ նրանք օգտագործում են սոցիալական մանկավարժությանն առնչվող այս խնդիրը ուսումնասիրող առարկաների ձեռքբերումները: ԱՀԿ-ն սահմանում է առաջնային, երկրորդային և երրորդային կանխարգելումները: Առաջնային կանխարգելումն ուղղված է այն անբարենպաստ գործոնների հեռացմանը, որոնք առաջ են բերում որոշակի անցանկալի երևույթներ, ինչպես նաև այդ գործոնների նկատմամբ անձի կայունության, դիմադրողականության բարձրացմանը:

Երկրորդային կանխարգելման նպատակը ռիսկի խմբերի հետ աշխատանքում հոգե-նյարդային և վարքագծային խաթարումների բացահայտումն ու հաղթահարումն է:

Երրորդային կանխարգելումը կարող է ուղղված լինել կայուն վարքագծային շեղումների նախագգուշացմանը:

Սոցիալ-հոգեբանական կանխարգելիչ միջոցառումները կարող են ընդգրկվել բոլոր երեք մակարդակների միջոցառումների համալիրում: Այն առավել արդյունավետ է այն պայմաններին և պատճառների վրա կենտրոնացման ժամանակ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով ազդում են կախվածությունների կազմավորման գործընթացի վրա, հատկապես դժվարությունների, խնդիրների առաջացման առավել վաղ փուլում:

Փորձարարական աշխատանքի ցուցանիշներ

Աշխատանքի կատարման ժամանակ բաժանմունքում եղել են միայն ակտիվիզմով տառապող բուժառուներ:

Ակտիվիզմի հաղթահարման սոցիալ-հոգեբանական հարմարման մեթոդ է համարվում սոցիալ-մանկավարժական գործունեության իրականացումը՝ վարպետաց դասի նկարչության միջոցով, քանի որ այն հնարավորություն է տալիս անհատին արտահայտել սեփական հույզերն ու զգացմունքները:

Հետազոտության օբյեկտը ակտիվիզմ ունեցող անձինք են:

Հետազոտության առարկան Վարպետաց դասերի ազդեցությունն է ալկոհոլիզմ ունեցող անձանց վրա: **Հետազոտության նպատակը** Վարպետաց դասերի արդիականության ուսումնասիրումն է ալկոհոլիզմ ունեցող անձանց հետ աշխատելու՝ բուժման ընթացքում: Նպատակից բխում են հետևյալ խնդիրները՝

- Ուսումնասիրել ալկոհոլիզմի սոցիալ-հոգեբանական մեխանիզմների վերաբերյալ գրականություն:
- Բացահայտել աղդիկտիվ վարքի հիմնական պատճառները, դրանց ձևավորմանը նպաստող գործոնները, հետևանքները:
- Պարզել սոցիալ-հոգեբանական գործունեության, դրա բովանդակության՝ նպատակի, մեթոդների, տեխնոլոգիաների առանձնահատկությունները ալկոհոլիզմ ունեցող անձանց մոտ:
- Վերոնշյալ մարդկանց ինտեգրել հասարակություն՝ ապահովելով նրանց առողջ սոցիալականացումը:

Հետազոտությունը իրականացնելիս կիրառվել են դիտման, առկա գրականության և փաստացի ՀՀ կախվածությունների բուժման ազգային կենտրոնում իրականացված վարպետաց դասի՝ նկարչության աշխատանքի վերջնարդյունքները, ինֆորմացիայի վերլուծություն:

Գործարարական աշխատանքը փաստացի իրականացվել է ՀՀ կախվածությունների բուժման ազգային կենտրոնում: Աշխատանքը ուղղված է եղել ալկոհոլիզմ ունեցող անձանց ներգրավմանը հասարակական աշխատանքներում: Աշխատանքը կատարելիս տրամադրվել են համապատասխան անհրաժեշտ միջոցներ, աշխատանքն իրականացվել է մասնագետի՝ նկարիչ Ս. Ոսկանյանի օգնությամբ՝ նպատակ ունենալով սոցիալականացման գործընթացն անկաշկանդ իրականացնել: Ծրագիրը կոչվել է՝ «Նկարիչ երագանքիդ նկարը»: Սոցիալ-հոգեբանական հարմարումը ուղղված է եղել աշխատանքի ընթացքում հասկանալ նկարի վերլուծության միջոցով ալկոհոլիզմ ունեցող անձի հոգեբանական առանձնահատկությունները, ինչպես նաև հնարավորություն տալ գնահատված լինել կատարած աշխատանքի համար: Վերջում նախատեսված է եղել պարգևատրել անանուն պատվոգրերով մասնակիցներին: Աշխատանքին մասնակցել են 10 բուժառու՝ արական սեռի ներկայացուցիչներ 35-50 տարեկան: Սկզբում նկատվել է կաշկանդվածություն, այնուհետև շփման արդյունքում ադապտացիա և ի գարմանս նախատեսված արդյունքի՝ մասնակիցները ցանկացան անվանական ստանալ իրենց պատվոգրերը և ցույց տալ հարազատներին: Անգամ սպասում էին հաջորդ այցելությանը և աշխատանքի իրականացմանը:



Նկար 2. Գատարված շխատանքները և նախատեսված պատվոգիրը

Եզրակացություն

Սոցիալ-հոգեբանական միջամտության առաջատար մեթոդներն են՝ վարպետաց դասերը, սոցիալ-մանկավարժական, հոգեբանական խորհրդատվությունը: Այս միջամտության տարատեսակներից է նաև ճգնաժամային նախազգուշացումն ու կանխարգելումը, որը հատկապես նպատակահարմար է կիրառել արտակարգ իրավիճակների սթրեսային ներգործության հետևանքով զարգացող վարքագծային խաթարումների հաղթահարման միջոցառումների ժամանակ: Ելնելով թեմայի բնույթից՝ պատճառականության շղթայում մեզ

առաջին հերթին հետաքրքրում էին այն պայմանները, որոնք, ներգործելով անձի վրա, խաթարել են նրա հոգեբանական կայունությունը՝ վերափոխելով նրա վարքի դրդապատճառային ոլորտում առկա արժեքային կոդմուրոշումների, համոզմունքների համակարգը:

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-277>

Գրականություն

1. Агеев В. С. Межгрупповое взаимодействие: социально-психологические проблемы. М., 1990, 162 с.
2. Епишкин Н. И. Алкоголь // Исторический словарь галлицизмов русского языка. М.: ЭТС, 2010.
3. Мирошниченко Л. Д. Алкоголизм / Большая Российская Энциклопедия (в 30 т.), М.: Научное издательство «Большая российская энциклопедия», 2004, т. 1, с. 499.
4. Налчаджан А. А. Социально-психологическая адаптация личности (формы и стратегии). Ереван: Изд-во АН АрмССР, 1988.
5. Тхостов А. Ш., Елшанский С. П. Психологические аспекты зависимостей. М.: Научный мир, 2005.
6. Diagnostic Criteria for Alcohol Abuse and Dependence, 1995.
7. Drabble L., Midanik L. T., Trotski K. Reports of Alcohol Consumption // Journal of studies on alcohol. 2005, 111 p.

Социально-психологическая реабилитация лиц с алкогольной зависимостью посредством проведения мастер-классов

Петросян Кристине

Резюме

Ключевые слова: *ценностные ориентации, психологическое консультирование, бессознательная сфера, эмоции, чувства*

В статье рассматривается понятие алкоголизма, а также особенности социальной и психологической адаптации людей, страдающих данной зависимостью. Особое внимание уделяется роли мастер-классов в процессе лечения и реабилитации. Предлагается использовать мастер-классы с участием различных специалистов как эффективный метод помощи, позволяющий зависимым выражать свои чувства и переживания через художественные формы, в том числе на бессознательном уровне. Это особенно важно, учитывая склонность лиц с алкогольной зависимостью к фантазиям об отношениях с окружающими, которые часто идеализируются или, напротив, драматизируются.

Ключевыми методами социально-психологической поддержки в работе с данной категорией пациентов названы мастер-классы, социально-педагогическое и психологическое консультирование. Одной из форм такой работы является профилактика и предупреждение кризисных состояний, что особенно актуально при коррекции поведенческих нарушений, возникающих в условиях стресса и травмирующих ситуаций.

В статье также уделяется внимание причинам, подрывающим психологическую устойчивость личности. В этом контексте анализируются факторы, влияющие на систему ценностей и убеждений, которые формируют мотивацию и поведение пациента.

Social and Psychological Rehabilitation of People with Alcohol Addiction through Master Classes

Petrosyan Kristine

Summary

Key words: *value orientations, psychological counseling, unconscious sphere, emotions, feelings*

The article explores the concept of alcoholism, as well as the social and psychological adaptation of individuals struggling with this addiction. Special attention is given to the role of workshops in the treatment process. It is proposed to use master classes involving various specialists as a method of rehabilitation. Such sessions help individuals express their emotions and inner experiences through art, often tapping into the unconscious. This is particularly important, as people with alcohol dependence often tend to fantasize about their relationships—frequently idealizing or dramatizing them. Key methods of social and psychological support include workshops, socio-pedagogical assistance, and psychological counseling. One important form of intervention is crisis prevention, which is especially relevant when addressing behavioral disorders that develop as a result of stress or traumatic events. The article also focuses on the underlying factors that undermine an individual's psychological resilience. It examines the conditions that influence a person's system of values and beliefs, which in turn shape their motivation and behavior.

Ներկայացվել է 24. 10. 2024 թ.

Գրախոսվել է 20. 11. 2024 թ.

Ընդունվել է տպագրության 05. 06. 2025 թ.

ԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ИСКУССТВОВЕДЕНИЕ

ART STUDIES

Ինչպես է «տեսնում» ժամանակը. Հակոբ Գյուրջյանի արվեստի անդրադարձը պարբերական մամուլում

Հարությունյան Աիդա

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-285>

Հանգուցային բառեր. *Ֆրանսահայ արվեստ, քանդակագործություն, դիմաքանդակ, լուսաբանում, աղբյուր, մշակութային լրագրություն*

Նախաբան

Պարբերական մամուլը արվեստի ուսումնասիրության համար տարակենտրոն աղբյուր է, որի դիտարկումը և քննությունը միայն ավելի մեծ նյութ կարող են տալ: Արվեստաբանական վերլուծությունները, գիտական հոդվածները, իհարկե, հիմնավորապես կարևոր են, սակայն մամուլը լուսաբանում է պարբերաբար, բաց չի թողնում իրադարձությունը, տալիս է տեղեկատվություն, որը բացառիկ է: Մամուլը ամենօրյա եղելությունների հայելային անդրադարձն է, իսկ մշակութային իրադարձությունները երբեք դուրս չեն մնում այդ գործընթացներից: Հաշվի առնելով այս ամենը՝ կփորձենք այս հոդվածում ներկայացնել Հակոբ Գյուրջյանի արվեստի անդրադարձը պարբերական մամուլում: Քանդակագործի ստեղծագործական կյանքին արձագանքում է հայկական, ռուսական, ֆրանսիական, ամերիկյան, իսպանական մամուլը:

Մեր երկու այլ գիտական հոդվածներում մանրամասնորեն քննել ենք մամուլի՝ հստակ թեմաների առնչվող նյութեր, քանի որ դրանք համընկնում են այն իրադարձությունների հետ, որոնք կապված են տվյալ հոդվածի թեմայի հետ: Այդպիսիք էին, օրինակ, Հակոբ Գյուրջյանի կենսագրությանը [7, 273-274], Լև Ն. Տոլստոյի հուշարձանի բացմանը [8, 80-86] և Խաչատուր Աբովյանի հուշարձանի մրցույթին [7, 274-277] վերաբերող հոդվածները: Այս հոդվածում համապարփակ կերպով կներկայացնենք հատվածներ մամուլի մնացյալ անդրադարձերից:

Զրույցի հեղինակի հետ

Գյուրջյանի ստեղծագործական կյանքում կարևոր իրադարձություններ էին նրա անհատական ցուցահանդեսները “Kingor Gallery”-ում և “Hotel Jean Charpentier”-ում: Առաջինը տեղի է ունեցել Ամերիկայի Միացյալ Նահանգներում՝ Նյու Յորքում, 1924 թվականին: Ժամանակի ամերիկյան մամուլը լուսաբանում է այս ցուցահանդեսը: Ստորև ներկայացնում ենք մի քանի հատվածներ տարբեր լրագրերից: Առավել մեծ, բայց կրկին հատվածական մեջբերում կանենք մեկ հարցազրույցից (հարցազրույցը վարել է արվեստի ամերիկացի պատմաբան և քննադատ Հելեն Էփլոն Բիդը), որը բավականին ուշագրավ մանրամասներ է բացահայտում.

«Նա մեկն է այն մեկուսացած օրինակներից, որոնք իրենց սեփական պատճառներն ունենալով, ինչպիսին էլ լինի դրդապատճառը, ապացուցում են, որ իրենք միգրացիայի մի մասն են: (...)

Գյուրջյանի դեպքում, ի հակադրություն Քիփլինգի փիլիսոփայությանը, արևելքը հանդիպում է արևմուտքին ավելին, քան անփութ ողջույնով: Հակոբ Գյուրջյանի քանդակում կարելի է գտնել ցեղային ախյանների այս հետաքրքրական խառնուրդը՝ օրինենտալիզմի պատվաստումը եվրոպական հիմնապաշարին: (...) Թե որքան դժվար էր հարցազրույց վարել Գյուրջյանի հետ, կարելի է պատկերացնել, քանի որ նա անգլերեն ոչ մի բառ չի խոսում, ոչ էլ հարմար գերմաներենը, որը ռուսական մտավորականության մեծ մասի հաղորդակցության հիմքն է, օգնեց այս դեպքում: Եթե չլիներ նրա ընկեր Գլեբ Դերյուժինսկու սիրալիր միջամտությունը, որը նույնպես քանդակագործ է և ռուս, որը կատարյալ տիրապետում է անգլերենին, ես գլուխ չէի հանի: Երբ Գյուրջյանը հասկացավ, որ ժեստերի լեզուն

անբավարար է քաղաքակիրթ հարցազրույցի համար, գանգահարեց Դերյուժինսկուն, որի արվեստանոցը մեկ հարկ վերևում էր, և նա եկավ օգնության:

1914 թվականին Գյուրջյանը զորակոչվում է ռուսական բանակ և ուղարկվում Կովկաս: Դա այն ժամանակն էր, երբ եկավ ստեղծագործական ընթացքի վերջը: Հետո սկսվեց հեղափոխությունը, և ընդհատվեց Գյուրջյանի զինվորական կարիերան: Այնուամենայնիվ, նա այն արվեստագետներից չէր, որին բուշևիկները ստիպեցին լքել երկիրը: Հակառակը, բուշևիկները որոշեցին, որ նա հասարակության աշխատանք անդամ է, որին կարող են օգտագործել: Նրանք թույլ տվեցին նրան արվեստանոց ունենալ, որը, անուամենայնիվ, մանրամասնորեն վերահսկում էին, քանի որ կարծում էին, որ լավագույն պայմաններում գտնվող արվեստագետներին չի կարելի ամբողջովին վստահել: Չնայած նրանք թույլ տվեցին Գյուրջյանին քանդակագործ լինել, սակայն ըստ իրենց պայմանների: Պարզվեց, որ Գյուրջյանը կարող էր շատ օգտակար լինել հանգուցյալ բուշևիկ առաջնորդների մահադիմակները ստեղծելու հարցում, այդպիսով նրան հաճախ արթնացնում էին զինջերվա կեսին՝ մահադիմակ կերտելու կամ մեկ այլ տարօրինակ աշխատանք անելու համար գտնելով, որ քանդակագործը հարմար է դրա համար: Մեկ անգամ կասկածներ ունենալով՝ նրանք խլեցին ծեփի տակառները, որոնք Գյուրջյանն օգտագործում էր կաղապարման համար, հայտարարելով, որ նա ալյուր է մթերում: (...) Ի պատասխան քաղաքի մասին տրված հարցին նա ասաց. «Նյու Յորքը տվել է ինձ բազմաթիվ նոր պլաստիկ գաղափարներ: Ճարտարապետությունը և ուղղահայացների դասավորությունը հիանալի են: Ես ինչ-որ կերպով պետք է մարմնավորեմ այն իմ աշխատանքում» [17, 4]:

Տարբեր լրագրեր արագորեն արձագանքում էին այս ցուցահանդեսին՝ տեղեկացնելով բացման օրվա, ներկայացված աշխատանքների մասին, նաև որոշակիորեն մեկնաբանելով Հակոբ Գյուրջյանի արվեստը.

«Հակոբ Գյուրջյանը, որի քանդակային աշխատանքները ներկայացված են “Kingor” պատկերասրահում մինչև մարտի 29, ամենավերջին ռուս արվեստագետներից մեկն է, որը հասել է Նյու Յորքի արվեստի պատկերասրահներ: Նրա արվեստում բյուզանդական լավատեսություն կա, որն ազնվորեն եկել է որպես մաս ցեղային ժառանգության և հնարավորություն է տալիս նրան օգտագործելու արխաիզմի առանց արհեստականության» [18]:

Երկու տարի անց՝ 1926 թ., Փարիզի՝ “Hotel Jean Charpentier” ցուցասրահում բացվում է Գյուրջյանի հաջորդ աճիստական ցուցահանդեսը (նկ. 1, 2), որի մասին մամուլը գրում է. «Գյուրջյանի ցուցահանդեսը, որը զբաղեցնում էր “Charpentier” հիանալի առանձնատան մի քանի դահլիճ և մի քանի շաբաթների ընթացքում գրավել էր ֆրանսիական և եվրոպական գեղարվեստական քննադատության համակ ուշադրությունը, օրերս փակվեց: «Тахъ» թերթը, որը վավերացնում է Գյուրջյանին որպես նորի և համարձակի որոնող, ասում է, որ Գոբլու դիմաքանդակի անկախ ռեալիզմից նա անցում կատարեց Տոլստոյի քնարական դիմաքանդակի ռեալիզմին, այստեղից նա բարձրացավ մինչև ռեալիզմի գաղղանկարչական մեկնաբանությունները, որտեղ կենսունակ արաբանախշերը իրենց սուր սահմաններով արտահայտում են կիրք առաջացնող մարմինների շարժում» [15]:

«Hotel Jean Charpentier-ի մեջ ծանօթ հայ արձանագործ Յակոբ Գյուրջյան իր գործերն էօթանասունի չափ ցուցադրած է: (...)»

Կիսթավ Քան, որ գրած է յալտագրին յառաջաբանը, կ'սէ.

«Արևելքի գեղեցիկ քանդակագործութեանց ծանոթութիւնը եկաւ յունական յղացման դէմը ուրիշ իտեալ մը ղնել: Այդ քանդակագործութեան մէջ, զարդարուեստական (decoratif) երեւոյթը աւելի կարեւորութիւն կը ստանայ քան դրապաշտական երեւոյթը: Թէ՛ յունական եւ թէ՛ արեւելեան քանդակագործական մեթոտները իբր նպատակ ունին մեհեանին զարդարումը, բայց յոյն արուեստը ամբողջութեանէ կ'անջատէ իր աստուածներն ու հերոսները իբր անձնատրութիւններ, իսկ Արեւելքը զանոնք քողերով կը պատէ ու շարժումներով կը պարուրէ. անիկա մասնատրապէս կը ձգտի ծէս մը արտայայտելու: Երկու դարանման

գեղեցկություններ են, երկուքն ալ իրական: Պ. Գիւրջեան խորապէս զգացած է արեւելեան արուեստի այդ ազդեցութիւնը, Հայ է ինք, արեւելեան հնագոյն ճիւղէն կը սերի, ծանօթ է արեւելեան արուեստի շքեղութեան եւ անոր կը հետեւի:

Իր կեանքին նախորդ մէկ շրջանին... պատուական կիսանդրին յօրինած է մեծ մասամբ ռուս գրականագետներու եւ արուեստագետներու եւ մասնատրապէս Թոլսթոյի իր գեղեցիկ կիսանդրին ցոյց կուտայ կեանքի ուղղակի թարգմանութեան իր գործօրինը: Այդ կիսանդրիները կը բաւեն ապացուցանելու իր գործադրողի արժեքը եւ կենդանի բնատիպարին ճշգրիտ ուսումնասիրութեան իր կարողութիւնը...» [10]:

Հետաքրքրական է, որ այս ցուցահանդէսից հետո՝ 1927 թ., Գյուրջեանի արվեստին անդրադառնում է նաև իսպանալեզու մամուլը՝ «Հայ արվեստագետը Փարիզում» վերնագրով մի հոդվածում. «Փարիզում հաջողություններ վայելող ռուս նկարիչների մեծաթիվ գաղութին այժմ պետք է ավելացնենք բանդակագործ Գյուրջեանին, ում վերջին ցուցահանդէսն այդ քաղաքի “Charpentier” պատկերասրահում գրավեց ամենամեծ հանրային եւ քննադատական ուշադրությունը: (...)»

Գյուրջեանը, ըստ էության, դեկորատոր է և, հետևաբար, ստեղծագործելիս նպատակ ունի հասնելու գալթակոյիչ ներդաշնակությունների՝ խառնելով հարթ եւ գնդաձև մակերեսները» [19]:

Քանդակագործի երկրորդ ծնունդը

Ռ. Պարսամյանը Հակոբ Գյուրջեանի մասին իր հոդվածը վերնագրել է «Քանդակագործի երկրորդ ծնունդը» [11, 4]: Արվեստագետն իսկապէս մահվանից հետո երկրորդ անգամ է ծնվում, արդէն առանց իր ֆիզիկական ներկայության, իր ընտանիքի անդամների, ժառանգների, մտերիմների, ուսումնասիրողների ջանքի շնորհիվ, սկզբնակետ ունեցող շարունակության, վերաներկայացման, վերամարմնավորման և վերադարձի արարքներով: Այդպիսի նշանակություն ունեցող մի հանձնախումբ է կազմակերպվում, որի նախագահն էր Արշակ Չոպանյանը, քարտուղարը՝ Աննա Բուդաղյանը, իսկ գանձապահը՝ բժիշկ Սմբատ Մելիք-Փարսադանյանը: Նրանց ջանքերով 1949 թվականի ապրիլի 6-ին տեղի է ունենում Հակոբ Գյուրջեանին նվիրված սգահանդէսը: Ահա մանրամասները.

«Չորեքշաբթի օր, 6 ապրիլի, տեղի ունեցաւ ծանօթ արձանագործ Յակոբ Գիւրջեանի յիշատակի նուրիւած սգահանդէսը, Փարիզի ռուսական Երաժշտանոցին մէջ: Ներկայ էր ընտրեալ բազմութիւն մը: Նախագահը, Պ. Շահիաթուհի Երանկայա յարգանքի հրաւիրելով ներկաները, բացատրեց թէ ողբացեալ արուեստագէտին ստեղծագործութիւնները արձագանգ տուին իր հայրենի լեռներէն մինչև Ռուսաստան, Եւրոպա եւ Ամերիկա: Օր. Զատավէն նոյն միջոցին կը նուագէր մահերգը, խոր լռութեան մէջ:

Առաջին խօսքը տրուեցաւ արուեստագէտին հայրենակից եւ ընկեր բժիշկ Մելիքի, որուն գրաւոր բանախօսութիւնը պիտի հրատարակենք երեքշաբթի օր:

Նախագահին Հրաւերով, Պ. Չոպանեանը ֆրանսերէն եւ հայերէն դրուատալից բառերով ներկայացուց արուեստագէտին տաղանդը: Տիկին Բուդաղեան Գիւրջեանի արուեստին մէջ գտաւ իր Հայրենի լեռներուն բարձունքները, ջինջ ու պայծառ բնութիւնը: Ռուս բժիշկ Չերունով ռուսերէն լեզուով ներկայացուց արուեստագէտը որպէս վաւերական տաղանդ մը, որուն թէ խմբական մեծ գործերը, թէ կիսանդրիները եւ թէ կենդանիներու արձանիկները ունեին ինքնուրոյն լոյս մը, խոր եւ իմացական: Օր. Ի. Պիլպիլեան մէջ ընդմէջ երգեց «Տէր ողորմեա՛ն, Կոմիտասի Անտունին եւ Մոցարթէն մեղեդի մը: Օր. Զատափեան նոյնպէս նուագեց օրուան պատշաճ կտորներ, իսկ Օր. Խորչեան արտասանեց Չարեմսկէ:

Ողբացեալ արձանագործին բարեկամներէն եւ «տիպարներ»էն Տիկին մը ֆրանսերէն նամակով մը իր հիացումը եւ յարգանքը կը յայտնէր, ցաւելով որ չէր կրցած անձամբ մասնակցել սգահանդէսին: Նամակը կարդաց օր. Խորչեան: Տաղանդաւոր նկարիչը, Պ. Գ. Շիլթեան ֆրանսերէն լեզուով իր յարգանքը յայտնեց Գիւրջեանին, առաջարկելով յաւերժացնել անոր յիշատակը Ալլամի մը հրատարակութեամբ: Վերջին խօսողն էր

ընկեր Շ. Բալուեան որ քանիցս այցելած ըլլալով Գիւրջեանի աշխատանոցը, խորապէս ազդուած էր ողբացեալ արուեստագէտին տաղանդէն, աշխատելու անսահման եռանդէն, պարզութենէն ու մանաւանդ անոր իւրաքանչիւր գործէն բխած գեղեցկութենէն: Այս առթիւ ներկայացուց սրահին մէջ ցուցադրուած քանի մը կիսանդրիներ. — Սերժ Լիֆարը, Ռախմանինովը եւ Կիլիկիոյ Գարեգին կաթողիկոսը: Այս վերջինը մանաւանդ որքան ցայտուն եւ գեղեցիկ արուեստով մը կ'արտայայտէր գիտուն մտածողը:

Փակման խօսքին մէջ, նախագահ մասնաւորապէս գնահատեց այն գեղեցիկ միտքը, Ալպոմի մը հրատարակութիւնը, յաւերժացնելու համար հանգուցեալ արձանագործին յիշատակը» [12, 1]:

Նշված ալբոմի հրատարակման աշխատանքները եւս հանձն է առնում «Գյուրջյանի բարեկամների հանձնախումբը», որը 1952 թվականին նաև Հայ Ազգային Տան թատերասրահում Գյուրջյանի հիշատակին նվիրված հավաքույթ է կազմակերպում՝ Գյուրջյանի մի քանի աշխատանքների ցուցադրությամբ: Ալբոմի առաջաբանը գրում է ֆրանսիացի արվեստաբան Մաքսիմիլիեն Գոթիեն, հայերենով ալբոմը լույս է տեսնում Արշակ Չոպանյանի թարգմանությամբ (1952 թ.):

«Յակոբ Գիւրջեան արձանագործը, որ վախճանեցաւ երկու տարի առաջ, մեր ժողովուրդին ծոցէն բխած ու Եւրոպայի եւ Ամերիկայի մէջ իր ցուցահանդէսներուն գտած փայլուն յաջողութիւններով մեր ցեղին մշակութային բարձր արժեքը ապացուցանող արուեստագէտներէն մին հանդիսացած էր:

«Գիւրջեանի Բարեկամներու Յանձնախումբ»-ս ուզեց անոր յիշատակը յարգել հրատարակելով ալպոմ մը որ կը պարունակէ վերադարձութիւնը մեր ողբացեալ հայրենակցին լաւագոյն գործերէն ոմանք եւ որուն յառաջաբանը յանձն առաւ շարադրել ֆրանսացի յայտնի գեղարուեստական քննադատ Պ. Մաքսիմիլիեն Կօթիէ:

Մեր Յանձնախումբը կազմակերպած է նաեւ Գիւրջեանի յիշատակին նուիրուած հաւաքոյթ մը որ տեղի պիտի ունենայ Յունիս 7ի շաբաթ օրը, ժամը 5էն 7, Հայ Ազգային Տան թատերասրահին մէջ, 32 ռիւ տը Թրելիզ: Գիւրջեանի գործերէն մէկ քանին պիտի ցուցադրուին այդ Հաւաքոյթին մէջ: Խօսք պիտի առնեն Պ. Մաքսիմիլիեն Կօթիէ եւ Պ. Չօպանեան:

Կը խնդրենք, յարգելի հայրենակից, որ հաճիք այդ հաւաքոյթին ներկայ գտնուի: Ի դիմաց Գիւրջեանի Բարեկամներու Յանձնախումբին՝ նախագահ Ա. ՉՕՊԱՆԵԱՆ, քարտուղար՝ ԱՆՆԱ ԲՈՒԴԱՂԵԱՆ եւ գանձապահ՝ Տօթ թ. Մ. ՄԵԼԻՔ: Յուցահանդէսը բաց է հանրութեան առջև մինչև 14 Յունիս, Շաբաթ ժամը 3էն 6» [1]:

Ալբոմը հրատարակելու ծախսերը հոգալու համար հանձնախումբը դիմում է նվիրատուների օգնությանը՝ պարբերական հայտարարություններով և հաշվետվություններով.

«Մեծանուն արձանագործ Յակոբ Գիւրջեանի յիշատակը յարգելու համար կազմուած Բարիգահայ Յանձնախումբը, Ապրիլ 4ի իր վերջին նիստին քննեց իր նիւթական հաշիւները, զոր Յանձնախումբի գանձապահը Տոթ թ. Մմբատ Մելիք Բարսառանեան ներկայացուց մանրամասնօրէն:

Գիւրջեանի գլխաւոր գործերուն լուսանկարները պարունակող ալպոմը, լոյս ընծալուած է գեղարուեստական ակնանւոր քննադատ Մաքսիմիլիեն Կոթիէի յառաջաբանով, ֆրանսերէն 350 օրինակ, իսկ 150 օրինակ ալ հայերէն, Պ. Արշակ Չօպանեանի թարգմանութեամբ:

Տպագրական եւ այլ ծախքերը հասած են 456 հազար ֆրանքի: Գանձապահ Տոթ թ. Մելիք ցարդ 125 հազար ֆրանք ստացած է: Քսան հազարական ֆրանքի նուիրատուութիւններ ըլրած են Պ. Պ. Վահրամ Պարկիճեան, Վահէ Թոսունեան, Չարքերթէն եւ Տիկ. Կորգանեան, որոնց Յանձնախումբը իր ջերմ շնորհակալութիւնները կը յայտնէ» [11]:

Նվիրաբերում և վերադարձ

1950 թ. Հակոբ Գյուրջյանի այրին Գյուրջյանի հեղինակած՝ Գարեգին կաթողիկոսի դիմաքանդակը նվիրաբերում է Անթիլիասի թանգարանին. Գարեգին Հովսեփյանի դասախո-

սությունն ընդմիջելով՝ շնորհակալություն են հայտնում նվերների համար՝ նշելով նաև Գյուրջյանի աշխատանքը.

«Ղադարի միջոցին Արտավազդ արք. յայտարարեց այն նուէրները որոնք եղած են Անթիլիասի թանգարանին, Գարեգին Կաթողիկոսի Փարիզ այցելութեան առթիվ.- Տիկին Յակոբ Կիրճեան նուիրած է նորին Ս. Օծութեան պղնձեայ կիսանդրին: Այս կարետոր նուէրը, քանդակուած 1935ին Փարիզ, գործն է ողբացեալ յայտնի արձանագործ Յակոբ Կիրճեանի» [4, 1]:

Զի ուշանում նաև Աննա Բուդաղյանի շնորհակալական արձագանքը՝ խմբագրությանն ուղղված նամակի տեսքով.

«Յարգելի պարոն խմբագիր, թոյլ տուէք երկտողով յայտնել Տիկին Գիրջեանին մեր անհուն երայխտագիտութիւնը եւ շնորհակալութիւնը այն սքանչելի քանդակի համար, որ Տիկինը այնքան սրտաբուխ կերպով ընծայեց մեր սիրելի Գարեգին Կաթողիկոսին: Յակոբ Գիրջեանը աշխարհահռչակ, մեր ազգին պատիւ բերող քանդակագործ է: (...)

Աւաղ, մահը վաղաժամ խլեց նրան մեզանից: 1935ին Յակոբ Գիրջեանը քանդակել էր Կաթողիկոսի դիմանկարը: Կաթողիկոսի այդ դիմաքանդակը գլուխ գործոց է: Այդ դիմաքանդակին նայելիս, զգում էք գաղափարի եւ ձեւի կոտ միասնութիւնը» [3]:

1958 թվականին, երբ Գյուրջյանի քանդակները և արխիվը նվիրաբերվում են Հայաստանի պետական պատկերասրահին (այժմ՝ Հայաստանի ազգային պատկերասրահ), մասնույլ ողողվում է Գյուրջյանին նվիրված հոդվածներով, որով նշանավորվում է քանդակագործի «վերադարձը»:

«Գրական թերթի» օգոստոսի 13-ի համարում «Վերադարձ հայրենիք» վերնագրով տպագրվում է Մարտիրոս Սարյանի հոդվածը՝ նվիրված Հակոբ Գյուրջյանին, որին հոդվածի հեղինակը անվանում է մեր ժամանակների խոշորագույն քանդակագործներից մեկը: Սարյանը տեղեկացնում է, որ ներկա պահին Երևանում տեղի է ունենում Գյուրջյանի ստեղծագործությունների ցուցահանդեսը: Ցուցահանդեսում ներկայացված են նրա ավելի քան 500 ստեղծագործություններ՝ Երևան բերված Փարիզից, որտեղ քանդակագործը ապրել է երկար տարիներ» [16]:

«Վերջերս Հայաստանի պատկերասրահում բացված քանդակագործի աշխատանքների ցուցահանդեսը նշանակալից երևույթ է մեր ռեսպուբլիկայի գեղարվեստական կյանքում: Այն հնարավորություն է տալիս ամբողջական գաղափար կազմելու Գյուրջյանի ստեղծագործական հարուստ ժառանգության մասին: Ցուցահանդեսը իրոք ապշեցնում է դիտողին քանդակագործի ստեղծագործական դիապագոնի մեծությամբ, կերպարման ձևերի բազմազանությամբ, քանդակային նյութի վիրտուոզ տիրապետմամբ» [13]:

Առաջին հայացք կամ վերաքննություն

Հայ իրականության մեջ սկսվում են Գյուրջյանին ուսումնասիրելու և հանրությանը ներկայացնելու գործընթացները:

1950 թ. քանդակագործ Մուրեն Ստեփանյանը Արվեստի աշխատողների տանը հանդես է գալիս Հակոբ Գյուրջյանի կյանքի և ստեղծագործության մասին զեկուցմամբ, որն ուղեկցվում է նրա նշանավոր աշխատանքների ֆոտոցուցահանդեսով.

«Մարտի 21-ին, Արվեստի աշխատողների տանը, մի հետաքրքրական երեկո: Հավաքվել էին քանդակագործներ, նկարիչներ, ուսանողներ, արվեստի և գրականության աշխատողներ՝ լսելու ժողովրդական նկարիչ, պրոֆեսոր Մուրեն Ստեփանյանի զեկուցումը Հակոբ Գյուրջյանի կյանքի ու ստեղծագործության մասին: (...)

Ս. Ստեփանյանը ներկաներին հանգամանորեն պատմեց վերջերս Փարիզից ստացված և մեր Պատկերասրահում ցուցադրված նրա գործերի մասին: Բովանդակալից զեկուցումից հետո ներկա եղողները դիտեցին Հակոբ Գյուրջյանի նշանավոր աշխատանքների ֆոտոցուցահանդեսը» [5, 59]:

1973 թ. հրատարակվում է Ռուբեն Դրամբյանի «Հակոբ Գյուրջյան» մենագրությունը.

«Հայկական ՄՍՀ գիտությունների հրատարակչությունը լույս է ընծայել Ռ. Դրամբյանի «Հակոբ Գյուրջյան» ռուսերեն մենագրությունը: Մենագրությունը անդրադառնում է Գյուրջյանի ստեղծագործության առաջին շրջաններին: Գեղարվեստորեն վերլուծված են արվեստագետի մի շարք գործեր, որոնք ստեղծվել են Գյուրջյանի շուրջ քառասունամյա ստեղծագործական գործունեության ընթացքում: Գրքում «Իմ մտքերը քանդակագործության մասին» խորագրի տակ տպագրված են Գյուրջյանի մտքերն ու նշումները արվեստի այս ճյուղի մասին: Գիրքն ընդգրկում է նաև վարպետի ստեղծագործությունների վերատպությունները» [9]:

1981 թ. Հայաստանի Պետական Պատկերասրահում Հակոբ Գյուրջյանի 100-ամյակի առթիվ բացվում է նրա անհատական ցուցահանդեսը

«Լրացավ հայ ականավոր քանդակագործ Հակոբ Գյուրջյանի 100 տարին: Հայաստանի Պետական Պատկերասրահում բացված անհատական ցուցահանդեսը հայ հաղիսատեսին ներկայացրեց Գյուրջյանի ստեղծագործական ժառանգության ընդհանուր պատկերը, որ իր ծավալով գերազանցում է մեծ արվեստագետի բոլոր ցուցահանդեսները» [2]:

2008 թ. Հայաստանի ազգային պատկերասրահում բացվում է Հակոբ Գյուրջյանի աշխատանքների արդեն մշտական ցուցասրահը.

«Երեկ Ազգային պատկերասրահում բացվեց 20-րդ դարի առաջին կեսի հայ քանդակագործության վառ ներկայացուցիչ Հակոբ Գյուրջյանի աշխատանքների մշտական ցուցասրահը: Պատկերասրահի՝ նախկինում պահեստ դարձած տարածքը, բազմաթիվ արվեստասերների մասնակցությամբ այսօր արդեն իր դռները բացեց ու ներկայացավ մեծ շուքով» [14, 6]:

2011 թ. Շուշիում մեկնարկում է Հակոբ Գյուրջյանի անունը կրող՝ քանդակի առաջին սիմպոզիումը, որը կրում էր պարբերական բնույթ, սիմպոզիումին մասնակցում էին քանդակագործներ Հայաստանից, Արցախից, Հնդկաստանից, Եգիպտոսից, Լեհաստանից, Իտալիայից, Բելգիայից, Ճապոնիայից, Մերբիայից և այլ երկրներից. «Հուլիսի 15-29 Շուշիում կանցկացվի «Հակոբ Գյուրջյան» քանդակի առաջին միջազգային սիմպոզիումը՝ ի հիշատակ շուշեցի մեծանուն քանդակագործի» [6]:

Եզրափակում

Պարբերական մամուլի էջերը առանձին-առանձին կառուցում են Գյուրջյանի արվեստի «պատմությունը», և երբ մասնավոր էջերը համախմբվում են, այդ տարակենտրոն կառույցը դառնում է կենտրոնացված և ամբողջական: Մամուլը վավերագրում է քանդակագործի ստեղծագործական տեսլականը, ճանապարհը, դիտարժան կանգառները և հետքը, որ նա թողել է: Միմյանց լրացնող և միահյուսվող տեքստերը, որոնք տարբեր հեղինակներ ունեն, կարծես, շարունակում են իրար և ի վերջո հանգում են մեկ նպատակի:



*Նկար 1. Հակոբ Գյուրջյանի անհատական ցուցահանդեսը
“Hotel Jean Charpentier” ցուցասրահում, Փարիզ, 1926 թ.*



*Նկար 2. Հակոբ Գյուրջյանի անհատական ցուցահանդեսը
“Hotel Jean Charpentier” ցուցասրահում, Փարիզ, 1926 թ.
(ցուցասրահի անկյունում կանգնած է Հակոբ Գյուրջյանը, ձախից)*

Գրականություն

1. Արձանագործ Գիւրջեանի յիշատակին // «Այսօր», Փարիզ, 07.06.1952:
2. Բադալյան Ի., Հակոբ Գյուրջյան. 100 // «Գրական թերթ», №. 24, 11.06.1982:
3. Բուդաղեան Ա. Նամակ խմբագրութեանը // «Ազատ խոսք», Փարիզ, 19.09.50:
4. Գարեգին կաթողիկոսի դասախօսութիւնը // «Յառաջ», Փարիզ, 17.09.1950, էջ 1-4:
5. Երեկո՝ նվիրված Հակոբ Գյուրջյանին // «Սովետական արվեստ», №. 5, Երևան, 1960 թ., էջ 59:
6. «Հակոբ Գյուրջյան» քանդակի առաջին միջազգային սիմպոզիում // «Ազգ», Երևան, 16.07.2011:
7. Հարությունյան Ա., Հակոբ Գյուրջյանի՝ հայ մտավորականների դիմաքանդակները (1910-ական թվականներ) // «Պատմություն և մշակույթ», Երևան, 2023, №. 1 (19), էջ 270-283:
8. Հարությունյան Ա., Հակոբ Գյուրջյանի՝ ռուս մտավորականների դիմաքանդակները (1910-ական թվականներ), «Գեղարվեստի ակադեմիայի տարեգիրք», Երևան, 2022, №. 2 (13), էջ 79-102:
9. Յակոբ Գիւրջեանի պլումը // «Այսօր», Փարիզ, 19.04.1952:
10. Յակոբ Գիւրջեանի ցուցահանդեսը (լրագրերի՝ Գյուրջյանին վերաբերող հատվածները կտրված են, այդ պատճառով երբեմն որոշ տվյալներ բացակայում են, ՀԱՊ, ֆ-48):
11. Մենագրություն քանդակագործի մասին // «Հայրենիքի ձայն», №. 49, Երևան, 03.12.1973:
12. Շրջուն թղթակից, Արձանագործ Յ. Գիւրջեանի յիշատակին // «Յառաջ», Փարիզ, 10.04.1949, էջ 1-4:
13. Պարսամյան Ռ., Քանդակագործի երկրորդ ծնունդը // «Սովետական Հայաստան», Երևան, 05.07.1959, էջ 4:
14. Քանդակի առաջին մշտական ցուցադրությունը // «Ազգ», Երևան, 11.09.2008, էջ 6:
15. Выставка Скульптура Гюрджана (պատասխիկ թերթից, ՀԱՊ, ֆ-48, թարգմ. ռուսերենից՝ Ա. Հ.):
16. Сарьян М. Возвращение на родину // Литературная газета. 13.08.1915, №. 100.
17. Read H. Appleton, Akop Gurdjen. Whose Sculpture Makes East Meet West! // The Brooklyn Daily Eagle, Brooklyn, New York, 21.03.1924, p. 4. (թարգմ.՝ Ա. Հ.):
18. Sculpture by Gurdjan // Art News, New York, 22.03.1924. (թարգմ.՝ Ա. Հ.):
19. Un artista armenio en París. la exposición del escultor Gurdjan // La Prensa, 05.06.1927. (թարգմ. իսպաներենից՝ Ա. Հ.):

Как «видит» время: Отражение искусства Акопа Гюрджяна в периодической печати

Арутюнян Аида

Резюме

Ключевые слова: *французско-армянское искусство, скульптура, портретный бюст, освещение, источник, культурная журналистика*

Акоп Гюрджян считается одним из крупнейших армянских ваятелей, чье творчество вывело современную армянскую скульптуру на уровень европейского искусства. В числе его работ – портреты множества известных личностей: пианиста Исайя Добровейна, писателя Максима Горького, певца Федора Шаляпина, композитора Сергея Рахманинова, актрисы Генриетты Паскар и других. Помимо портретной пластики, Гюрджян создавал сюжетные скульптуры, наиболее значимыми из которых являются «Пьета», «Победа» и «Саломея». Обширное творческое наследие мастера включает не менее пятисот произведений – пластик и набросков, которые хранятся в музеях мира, при этом около четырехсот находятся в Армении.

Периодическая печать выступает важным и децентрализованным источником изучения искусства, позволяя получать актуальные и эксклюзивные материалы. В отличие от научных статей и художественных анализов, которые представляют собой систематизированные исследования, пресса регулярно освещает события, не пропуская значимые моменты творческой жизни и культуры в целом.

Учитывая это, в данной статье предпринята попытка систематизировать и проанализировать упоминания о творчестве Акопа Гюрджяна в периодической печати Армении, России, Франции, США и Испании, что позволяет получить более полное представление о восприятии и откликах на творческий путь скульптора в разных культурных контекстах.

How Time “Sees”: Reflection of Hakob Gurdjian’s Art in the Periodical Press

Harutyunyan Aida

Summary

Key words: *French-Armenian art, sculpture, sculpture bust, coverage, source, cultural journalism*

Hakob Gurdjian is regarded as one of the greatest Armenian sculptors, whose work elevated modern Armenian sculpture to a European level. Among Gurdjian’s works are portraits of many famous personalities: pianist Issay Dobrowen, writer Maxim Gorky, opera singer Feodor Chaliapin, composer Sergei Rachmaninoff, actress Henrietta Pascal, etc. In addition to portraits, Gurdjian also worked on narrative sculpture. The most significant are "Pieta", "Victory", "Salome". Hakob Gurdjian left a rich legacy – at least five hundred works (sculptures and sketches) are stored in various museums around the world (e.g. four hundred of them are in Armenia).

The periodical press is a decentralized source for the study of art, the observation and examination of which can only provide greater material. Art analyses, scientific articles, of course, are fundamentally important, but the press covers regularly, does not miss an event, provides exclusive information. The press is a mirror reflection of everyday events: and cultural events are never left out of these processes.

Taking all this into account, we aimed in this article to highlight mentions of Hakob Gurdjian’s work in periodicals of Armenia, Russia, France, the United States, and Spain, focusing on aspects of his creative life.

Ներկայացվել է 27. 11. 2024 թ.

Գրախոսվել է 26. 12. 2024 թ.

Ընդունվել է տպագրության 05. 06. 2025 թ.

Խմբերգային ստեղծագործության սեղմագրում (աննոտացիա)

Պապանյան Նեյի

DOI: <https://doi.org/10.58726/27382915-2025.1hs-294>

Հանգույցային բառեր. դիրիժոր, ժողովրդական, ակադեմիական երգչախմբեր, շարադրանքի ոճ, տեմպ, ագոգիկա, ձայնատարություն, ներդաշնակություն

Երաժշտական արվեստը միշտ եղել է ուշադրության կենտրոնում: Այս ոլորտում առանձնահատուկ տեղ է գրավում դիրիժորությունը՝ որպես կատարողական արվեստի ամենաբարդ և միաժամանակ պայմանական բնագավառ: Կատարողական արվեստի այս տեսակը չունի իր «սեփական գործիքը», որի հետ կարող է ամենօրյա աշխատանք տանել, նրա արվեստի դրսևորողն է երգեցիկ կամ գործիքային համույթը: Իր «գործիքի» հետ շփվելու համար նա պետք է մշակի սեփական կատարողական «ժեստերի լեզուն»-ն, որն էլ դառնում է նրա կատարողական տեխնիկայի հիմքը: Տարբեր ժամանակներում հաճախ դիրիժորությանն են դիմել այլ մասնագիտությունների տեր փայլուն երաժիշտներ, բայց արդյունքը միշտ չէ եղել գոհացուցիչ... Անվանի ռուս դիրիժոր Եվգենի Սվետլանովը պնդում էր, որ լինել փայլուն երաժիշտ, դեռ չի նշանակում լինել նաև փայլուն դիրիժոր: Իսկ Սերգեյ Ռախմանինովը համարում էր, որ «դիրիժորությունն անհատական ձիրք է, շնորհ, որը չի կարող լինել ձեռքբերովի» [2]:

Diriger ֆրանսերեն բառ է, նշանակում է ուղղորդել, ղեկավարել, այսինքն՝ դիրիժորը՝ որպես կատարող, ղեկավարում է երաժիշտ-կատարողների խումբ՝ նվագախումբ, վոկալ կամ գործիքային համույթ, օպերային խումբ են: Հայերը հունարեն *χορός* (խորոս) բառը, որը նշանակում է ամբոյ, թարգմանել են՝ երգչախումբ, որն իրենից ներկայացնում է երգիչ-կատարողներից կազմված խումբ, որտեղ յուրաքանչյուր ձայնախումբ՝ բաղկացած ամենաքիչը 3 հոգուց, կատարում է միևնույն պարտիան: Երգչախմբի ղեկավարը կոչվում է դիրիժոր կամ խորմայստեր, իսկ եկեղեցական երգչախմբի ղեկավարը՝ ռեգենտ [2]:

Ըստ կատարողական կերպի՝ երգչախմբերը լինում են **ակադեմիական և ժողովրդական**: Պատմական, աշխատանքային փորձը, նորագույն գիտական հետազոտությունները հաստատում են, որ խմբակային երգեցողությունը մեծ ազդեցություն է ունենում երեխայի ոչ միայն հուզական-գեղագիտական տրամադրվածության վրա, այլև՝ մտավոր զարգացման վրա: Երգչախումբը եզակի «կենդանի» երաժշտական նվագարանն է, որի հնչողության հիմքն է կազմում վոկալ ունիտներին համույթը:

Երգչախմբային արվեստի ակունքները գալիս են դեռևս Հին Եգիպտոսից, Բաբելոնից, Հին Հունաստանից: Եգիպտոսում է ծնվել «խեյրոնոմիան»՝ ձեռքերի, մատերի, դիմախաղի և գլխի շարժումների միջոցով երգիչների ղեկավարման յուրօրինակ համակարգը: Երգչախմբային արվեստը կրում էր պաշտամունքային բնույթ:

Հին Հունաստանում երգչախմբային արվեստի կազմավորումը կապված էր թատրոնի, մասնավորապես տրագեդիայի (ողբերգության) հետ: Բուն գործողությունը ծավալվում էր հատուկ հարթակում՝ սքենայում (ժամանակակից բեմահարթակի նախատիպը), իսկ երգչախումբը տեղավորված էր առջևի մասում, որը կոչվում էր օրկեստրա: Երգչախումբը հանդես էր գալիս կամ հեղինակի անունից, կամ որպես գործող անձ: Անտիկ շրջանում Արիստոկսենին ասում էր, որ բժշկությունը մաքրագեղեցիկ է մարմինը, իսկ երաժշտությունը՝ հոգին: Այստեղ երգչախմբային երգեցողությունը պարտադիր էր, իսկ «անկիրթ» բառը մեկնաբանվում էր որպես «երգչախմբում երգելու անկարող» [2]:

Երգչախմբային արվեստն անցել է զարգացման վիթխարի ուղի՝ հասնելով բարձր նվաճումների, դարձել է նաև ուսումնական առարկա թե՛ քոլեջներում, թե՛ կոնսերվատորիայում և երաժշտամանկավարժական բուհերում: Մասնագետ-խմբավարի ձևավորման

կարևոր պահանջն է նաև ստեղծագործության ինքնուրույն վերլուծությունն ու աննոտացիան՝ սղագրությունը:

Նման աշխատանքը պետք է ունենա հետևյալ կառուցվածքը.

Ներածություն

- Ստեղծագործության պատմառճային վերլուծություն
- Տեղեկություններ ստեղծագործության հեղինակների մասին
- Գրական տեքստը

Հիմնական բաժին

- Երաժշտատեսական վերլուծություն
- Վոկալ-խմբերգային վերլուծություն
- Վոկալ-խմբերգային բարդություններն ու դրանց հաղթահարման ուղիները
- Կատարողական վերլուծություն

Եզրակացություն

Ուսումնասիրվող ստեղծագործության կարևորությունը ժամանակակից արվեստի տեսանկյունից

Գրականության ցանկ:

Դիտարկենք վերլուծական աշխատանքի ընթացքը՝ ըստ կազմված պլանի:

Պատմառճային վերլուծության մեջ ներկայացվում են կոնկրետ հասարակական-պատմական պայմանները, որում ընթացել են հեղինակների՝ կոմպոզիտորի և բանաստեղծի կյանքն ու ստեղծագործությունը, ձևավորվել են նրանց գեղագիտական հայացքները, ստեղծագործական հիմնական տարրերը [2]:

Ոճն արվեստում բնորոշվում է որպես կերպարային համակարգի, գեղարվեստական արտահայտչականության միջոցների և հնարների պատմականորեն ձևավորված ընդհանրություն՝ պայմանավորված գաղափարապատմական բովանդակության միասնությամբ: «Գեղարվեստական ոճ» հասկացությունն օգտագործվում է երկու իմաստով.

1. Արվեստի, ճարտարապետության, երաժշտության, պոեզիայի, գրականության, ուղղության, դարաշրջանի ստեղծագործության տարբերիչ և բնորոշ հատկանիշների ամբողջություն,
2. Աշխատանքի մեթոդ, հնար, կերպ:

Պատմաերաժշտական գիտության մեջ ձևավորվել է հասկացությունների և տեսությունների մի ամբողջական համակարգ՝ բաժանված որոշակի փուլերի՝ Անտիկ, Միջնադար, Վերածնունդ, բարոկկո, դասականություն, ռոմանտիզմ: 14-15-րդ դարերում «ոճ» եզրույթը կիրառվում էր բացառապես կերպարվեստի և գեղանկարչության ոլորտում: Երաժշտարվեստում այն կիրառելի դարձավ Վերածննդի շրջանում, երբ ձևավորվեցին նիդեռլանդական (Ժ. Դեյպեր), հոլմեական (Ջ. Պալեստրինա), վենետիկյան (Ա. Գաբրիելի) դպրոցները իրենց յուրօրինակ կատարողական կերպով, իշխող վոկալ պոլիֆոնիայով: 18-րդ դարում «ոճ» եզրույթի առավել դիպուկ բնորոշումն է տվել Ժ. Ռուսսոն կոմպոզիցիայի և կատարման տարբերիչ բնույթ: Ռոմանտիզմի դարաշրջանում կարելի է առանձնացնել ոճային երեք փուլ՝

- Վաղ շրջան՝ դասականության և ռոմանտիզմի միահյուսում (Կ. Մ. Վեբեր, Ֆ. Շոբերտ, 19-րդ դարի 10-20-ական թվականներ),
- Միջին՝ 19-րդ դարի 30-40-ական թվականներ, երբ ասպարեզ է դուրս գալիս փայլուն կոմպոզիտորների մի համաստեղություն՝ Հ. Բեռլիոզ, Ռ. Շուման, Ֆ. Լիստ, Ֆ. Շոպեն, Ռ. Վագներ, Ջ. Վերդի...
- Ուշ շրջան, երբ սկսում են ձևավորվել նոր ոճային միտումներ:

20-րդ դարում ծագում են բազմաթիվ նոր ուղղություններ և ոճային միտումներ, երաժշտական կոմպոզիցիայի, գեղագիտական հայացքների նոր սկզբունքներ՝ իմպրեսիոնիզմ, էքսպրեսիոնիզմ, նոր դասականություն, ատոնալ երաժշտություն, մոդեռնիզմի և ավանգարդիզմի ծայրահեղ դրսևորումներ [4]:

Պատմականորեն ձևավորված կատարողական ավանդույթների և կոմպոզիտորի ոճի իմացությունը հնարավորություն է տալիս կառուցել հետազոտման մեթոդները.

- Ծանոթություն մեկ կոմպոզիտորի տարբեր ժանրի՝ խմբերգային, դաշնամուրային, սիմֆոնիկ, կամերային, վոկալ ստեղծագործությունների հետ,
- Այդ կոմպոզիտորի մեկ ստեղծագործության օրինակով ուսումնասիրել նրա ոճի, երաժշտական լեզվի, նոտային տեքստի, հյուսվածքի, շարադրանքի, հեղինակային ցուցումների առանձնահատկությունները:

Պարտադիր տրվում է խմբերգային ստեղծագործության լրիվ անվանումը, խմբերգային ժանրը (ժողովրդական երգ, ժողովրդական երգի մշակված տարբերակ, երգչախմբային ռոմանս, պոեմ, խմբերգային շարքի, պոլիտի, կանտատի, օրատորիայի մաս կամ դրվագ օպերայից) և կատարման տեսակը (a` cappella կամ նվագակցությամբ): Կարևոր է դիտարկել կոնկրետ ստեղծագործության դերն ու նշանակությունը կոմպոզիտորի ստեղծագործության մեջ, նրա նախասիրած բանաստեղծական սկզբնաղբյուրները և անհատական վերաբերմունքը գրական տեքստի հանդեպ՝ փոփոխված թե ստույգ պահպանված:

- Եթե վերլուծվող խմբերգը խոշոր կտավի ստեղծագործության մաս է, ապա անհրաժեշտ է բնութագրել ողջ շարքը, նրա հիմնական գաղափարը:
- Եթե վերլուծվող երկը ժողովրդական երգի մշակում է, ապա պետք է բնորոշել բնօրինակը և ներկայացնել փոխադրման մեջ կատարված փոփոխությունները:
- Եթե կան նույն տեքստով գրված այլ կոմպոզիտորների գործեր, կարելի է կատարել համեմատություն մեկնաբանության տեսակետից:

Բանաստեղծական տեքստի վերլուծության մեջ բացահայտվում է բանաստեղծական հանգի և ինտոնացիոն առանձնահատկությունները, շարադրման ձևը, տների, քառյակների, տողերի քանակը... Ցուրաքանչյուր կոմպոզիտոր յուրովի է մեկնաբանում բանաստեղծական տեքստի բովանդակությունը՝ ընդգծելով իրեն առավել հոգեհարազատ մտքերը, ինչն արտահայտվում է մեղեդիական և խմբերգային շարադրանքի առանձնահատկություններում: Հայտնի են բազում դեպքեր, երբ հիանալի երաժշտություն է գրվում նաև ոչ բարձրարժեք տեքստի հիման վրա կամ հակառակը... Բանաստեղծական տեքստի վերլուծությունը պետք է նպաստի կոմպոզիտորական մտահղացման համակողմանի բացահայտմանը [2]:

Երաժշտատեսական վերլուծության մեջ ներկայացվում են ստեղծագործության ժանրային առանձնահատկությունները.

- Շարադրանքի ոճը՝ հոմոֆոն-հարմոնիկ, պոլիֆոնիկ, խառը,
- Տոնայնական պլանը, ներդաշնակման հնարները,
- Ձայնատարությունը,
- Մետր, չափ, ռիթմական պատկեր,
- Տեմպ, ազդեցիկա:

Վերը նշված երաժշտական ձևի չափանիշները հանդիսանում են ստեղծագործության գեղարվեստական կերպարի բացահայտման միջոցներ:

Տոնայնական պլանի մեջ պարտադիր նշվում են.

- Տոնայնական կայունությունը կամ անկայունությունը,
- Շեղումները՝ դեպի դոմինանտային տոնայնություններ որպես երաժշտական դինամիկ լարվածության սրում կամ սուբդոմինանտային ոլորտը՝ ավելի մեղմ լարվածության դրսևորում,
- Փոփոխական լադ,
- Մածոթի և մինոթի տարատեսակներ,
- Ազգային ավանդույթների բնորոշ լադեր:

Հարմոնիկ վերլուծությունը նպատակահարմար է սկսել տվյալ ստեղծագործության ընդհանուր բնութագրումից, քանզի հարմոնիայի գունեղային կողմը հանդիսանում է

կարևորագույն արտահայտչամիջոց: Հարմոնիկ լեզվի առանձնահատկություններից պետք է շեշտադրել՝

- շարադրանքի պարզությունը,
- հյուսվածքի թափանցիկությունը կամ հագեցվածությունը,
- դասական, ժամանակակից կամ նորագույն բարդացված ներդաշնակությունը,
- կադենցիաների տիպերն ու դերը:

Ձայնատարության բաժնում կարևորվում են՝

- հիմնական ձայնի մեղեդիական զարգացումը, շարադրանքի տիպը՝ աստիճանական, թռիչքաձև, սահուն, կտրտված...
- հարմոնիկ-ակորդային,
- մեղեդային-հարմոնիկ (մեղեդին և նվագակցող ձայներն ունեն միևնույն ռիթմիկ պատկերը),
- հոմոֆոն-հարմոնիկ (մեղեդին ունի ռիթմիկ ինքնուրույնություն, մնացած ձայները ստեղծում են ներդաշնակ ֆոն),
- պոլիֆոնիկ շարադրանք՝ կոնտրաստային, ենթաձայնային, իմիտացիոն (կանոն, ֆուգա, ֆուգատո...),
- կոմբինացված, երբ մեկ ստեղծագործության մեջ միավորված են խմբերգային շարադրանքի տարբեր ձևեր:

